

Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:



Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhlib.am/>

E-mail: info@artsakhlib.am

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhlib.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhelibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>

ԱՄՍՏՈՒՐ ԿԻՒՁԵԼԵԱՆ

ԿԸ ԽՕՄԻՆ ՆԱՄԱԿՆԵՐԸ

ՆԱՄԱԿԱՐՈՒԹՅՈՒՆ

Ասատուր Կիւզելեան-Սիմոն Սիմոնեան
ԵՆ
Ասատուր Կիւզելեան-Վահրամ Մալեան

ՊԵՅՐՈՒԹ 2014

ԱՄՍՏՈՒՐ ԿԻՒՁԵԼԵԱՆ

ԿԸ ԽՕՄԻՆ ՆԱՄԱԿՆԵՐԸ

ՊԵՅՐՈՒԹ 2014



ԱՍԱՏՈՒՐ ԿԻՒՁԵԼԵԱՆ

ԿԸ ԽՕՍԻՆ ՆԱՄԱԿՆԵՐԸ

ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

Ասատուր Կիւզելեան-Սիմոն Սիմոնեան
ԵՆ
Ասատուր Կիւզելեան-Վահրամ Մալեան

ՊԵՅՐՈՒԹ 2014





**Չօն՝
Միմոն Միմոնեանի անմեռ յիշատակին,
իբր ծննդեան 100ամեակին առթիւ:
Ասատուր Կիւզեւեան**



ՅԱՌԱՋԱԲԱՆ

Ասատուր Կիզելեանը համախմբելով նամակագրութիւնը ընդմէջ իր ուսուցիչ Սիմոն Սիմոնեանի եւ իր բարեկամ Վահրամ Մավեանի, այս անգամ հրապարակ կու գայ այս նամականի-հատորով, որ այնքան խօսուն է իր ժամանակի վիճակագրութեամբ:

Որքան ալ գիտութիւնն ու ժամանակակից ճարտարագիտութիւնը արշաւի ելլեն տպագիր գիրքի դէմ, դարձեալ ու դարձեալ տպագիր գիրքը վերադաս պիտի մնայ համակարգչային աշխարհէն:

Անկեղծութեամբ գրուած նամակը ժամանակի հարազատ արտացոլումը եւ միաժամանակ թարգմանն է հոգեկան իրաւ կացութիւններու:

Ինծի վիճակուեցաւ գրել բարեկամիս՝ Ասատուր Կիզելեանի տասնամեակներու վրայ երկարող այս նամականի-հատորին յառաջաբանը:

Որպէսզի կարենայի վկայակոչի խօսք ըսել այս հատորի երեք հերոսներուն՝ Ասատուր Կիզելեանին, Սիմոն Սիմոնեանին եւ Վահրամ Մավեանին մասին, Սիմոնեանի կրտսեր որդւոյն՝ Սասունին հետ այցելութիւն մը տուի ուսուցիչիս՝ Սիմոն Սիմոնեանի եւ գրական բարեկամիս՝ Վահրամ Մավեանի դամբարաններուն, մոմերու բոցկլտացող լոյսով ու խունկի բուրմունքով երկխօսելու անոնց հետ Պուրճ Համուտի հայոց գերեզմանատան մէջ:

Մեր երկխօսութիւնը լուռ ու թաքուն չէր, հակառակը՝ յստակ էր ու լսելի: Պատահական անցորդները պահ մը զարմանքով կը յամենային, փորձելով լսել այդ զրոյցը, որ տեղ-տեղ յիշատակներու բոցավառ քուրայէն բխելով՝ պոռթկումի կը հասներ:

Ջրուցակիցս եռամեծ ուսուցիչս՝ Սիմոն Սիմոնեանն էր, որ Սուրիոյ եւ Լիբանանի մէջ սերունդներ կրցաւ պատրաստել՝ զանոնք բոլորը զինելով ազգային ոգիով: Ինք ազգային արմատներու ծնունդ, այդ արմատներուն կառչիլ կը պատգամէր, որպէսզի կանգ չառնէր մեծագործ Խորենացիին՝ պատմութիւնը:





Անդիի դէմէն խօսակիցս մեր սփիռքեան գոյավիճակը գրականութիւն բերող Վահրամ Մավեանն էր, որուն մեկնումով մեր երկ-խօսութիւնը կիսատ մնացած էր...:

Այս յառաջաբանը գրելու համար ես ուրիշ պարտաւորութիւն մը եւս ունէի՝ պէտք էր մինչեւ վերջին տողը ծանօթանայի գրագետ Կիւզելեանի, արձակագիր Վահրամ Մավեանի եւ ողջ հայոց պատմութիւնը խուզարկած ու վերլուծած վիպագիր Սիմոն Սիմոնեանի նամակներուն:

Անշուշտ կարդացի:

Ամբողջ աշխարհ մը կը պարզէին այդ նամակները: Կարծես ուրիշ ժամանակներու պատկանող անկեղծութեան աղբիւր մը կը գլգլար տողերուն ընդմէջէն՝ թարմ մանուշակներով զարդարուն, անթաքոյց սէր ցոլացնելով եւ իմաստ տալով բարեկամութիւն բառին:

Սիմոնեան ուսուցիչին ուղղուած Կիւզելեանին խօսքերը աշակերտի իրաւ գեղումներ էին, իսկ կեանքին մէջ մօտիկ բարեկամութեան վերածուեցաւ աշակերտական կապը: Իսկ Կիւզելեանի խօսքերը Մավեանի նկատմամբ՝ իրաւ բարեկամի ապրումներ:

Միս կողմէ Սիմոնեանին կեցուածքը միշտ հայրական էր ու զգաստութեան հրաւիրող:

Իսկ Մավեանին ասաչը ապրիլ շարունակող Սփիռքի մասին հեռու էր դամբանական ըլլալէ՝ մեր կեանքի ցատտ վերքին առկայութեամբ:

Երեք հայեր, սփիռքեան լայնարձակ հորիզոնները չափած, Սփիռքը լաւ ճանչցած հայեր, իրենց նամակներով վկայութիւններ կու տան իրենց ժամանակի մասին:

Դուն ալ կարդա այս նամակները, սիրելի ընթերցող, որպէսզի ապրիս ու վերապրիս մեր կեանքի ժամանակը:

ԹՈՐՈՍ ԹՈՐԱՆԵԱՆ²





ԿԸ ԽՕՄԻՆՆ ԱՄՄԱԿՆԵՐԸ

Այսօր, 50-60 տարի առաջուան հասկացողութեամբ նամակագրութիւն գոյութիւն չունի: Օրը օրին կատարելագործուող հաղորդակցութեան գերարագ միջոցները շատոնց զրկած են մեզ, հարագատէ մը ստացուած համով հոտով նամակի մը ընթերցումին բերած հաճոյքէն:

Անցեալ օր, կը կարդայի հօրս գրել տուած նամակներէն մէկը (հայրս գրել-կարդալ չէր գիտեր), ուր ան կը խնդրէր Հնդկաստանի մէջ ուսուցչութեամբ պարապող իր որդիէն, որպէսզի անմիջապէս դրամ դրկէր, այլապէս՝

«Հոս ձգած գիրքերդ ստիպուած պիտի ծախես», կը սպառնար ան...:

Կեանքիս մէջ քիչ անգամ նամակ ոչնչացուցած եմ: Արխիւներու մէջ կայ հազարէ աւելի նամակ: Նամակագիրները եղած են ծնողքս, եղբայրներս, ազգականներս, ընկերներս, ուսուցիչներս, զրչեղբայրներս, զրականութեան, արուեստի, գիտութեան եւ մշակոյթի տարբեր բնագաւառներուն ծառայող մարդիկ, ինչպէս նաեւ՝ նախկին աշակերտներս:

Որքան յոյզ կայ այդ նամակներուն մէջ, որքան տխրութիւն, ու մանաւանդ՝ երազ ու յոյս ...:

Այս հատորով լոյս կը տեսնեն երկու մտերիմ բարեկամներու՝ Սիմոն Սիմոնեանի եւ Վահրամ Մավեանի ինծի գրած բոլոր նամակները: Ամբողջութեամբ կը հրատարակուին նաեւ իմ Սիմոն Սիմոնեանին գրած նամակներս, որոնց բնօրինակները պահուած էին Սիմոն Սիմոնեանի արխիւին մէջ: Վահրամ Մավեանի պարագային՝ կը հրատարակուին իմ իրեն գրած շուրջ հարիւր նամակներէն միայն ութը, որոնց պատճենները գտայ արխիւներու մէջ: Սիւսներուն պատճենները չեմ պահած դժբախտաբար: Գիտեմ որ բոլոր նամակներուն պատասխանած եմ, քանի որ ստացուած իւրաքանչիւր նամակին վրայ գրուած է իմ ձեռագիրով՝ «պատասխանուած»: Միայն վերջերս իմացայ որ Վահրամ Մավեանին արխիւը դրկուած է Հայաստան, Եղիշէ Չարենցի³





անուան Գրականության եւ Արուեստի Թանգարանը: Հետագային, եթէ յաջողիմ անոնց պատճենները ձեռք ձգել քանգարանէն, առանձին գրքոյկով մը կը հրատարակեմ, ամբողջացնելու համար նաեւ Մավեան-Կիզելեան նամականին:

Նշենք նաեւ որ այս նամակները չեն հրատարակուիլ իրենց գրական արժէքին համար, այլ լոյս կը տեսնեն, որովհետեւ անոնց մէջ կ'արտացոլայ առաջին հերթին՝ երկու անուանի գրողներու, Ս. Սիմոնեանի եւ Վ. Մավեանի նկարագրի ու անհատականութեան հարազատ պատկերը, յետոյ՝ սփիւռքահայ գրողի բազմաթիւ մտահոգութիւններով առլեւի առօրեան, ինչպէս նաեւ՝ մասնաւորաբար Միջին Արեւելքի հայ համայնքներու 1957-1985 տարիներու կրթական, մշակութային, քաղաքական ու կրօնական կեանքն իր հարազատ գոյներով: Ի դէպ կը նկատեմ, յետադարձ հակիրճ ակնարկ մը նետել նամակագիրներուն հետ ունեցած բարեկամութեանս վրայ:

Սիմոն Սիմոնեան եղած է Անթիլիասի Դպրեվանքին մէջ (1948-1955) հայագիտական նիւթերու իմ աննման, պաշտելու աստիճան սիրելի ուսուցիչս, մարդկային ազնուագոյն զգացումներով եւ բարձր սկզբունքներով հարուստ, հայ ժողովուրդի պատմութեան, մատենագրութեան, գրականութեան, արուեստներուն, մէկ խօսքով, մեր մշակութային արժէքներուն խորիմաց գիտնական մը (հայաստանեան հասկացողութեամբ), բառին ամենէն ճիշդ իմաստով՝ հայրենասէր հայ մը, իր ուսանողները ներշնչելու հագուագիտ տաղանդով օժտուած ուսուցիչ մը եւ ամենէն կարեւորը՝ մեծատառով՝ ՄԱՐԴ մը: Վերոգրեալ որակումները դեռ քիչ են Սիմոն Սիմոնեանը ճիշդ տարազատրելու համար:

1939ին, Ալեքսանտրեթի Մանճագի պարպումով, Կիզելեաններն ալ՝ երեսուն հազար միւս կիլիկեցիներուն հետ, տեղափոխուեցան Լիբանան եւ Սուրիա: Մենք կարճ շրջան մը Լիբանան ապրելէ ետք՝ վերջնականապէս հաստատուեցանք Հալէպ: Երբ Հալէպի Կիլիկեան Վարժարանն ասարտեցի, ուսումս շարունակելու համար դիմեցի Կիպրոսի Մելգոնեան Կրթական Հաստատութիւն:⁴

Միջանկեալ նշեմ, որ հայրս, ամէն տարի, Մայիս ամսուան սկիզբը, հանդերձ ընտանեօք կ'երթար Քիւրտ Տաղը,⁵ Աշխան գիւղը, ուր իր քիւրտ բարեկամը, Ապտոյ Ծմոն, «Կարապետ Աղա»-յին եւ անոր ընտանիքին յատկացուցած էր տուն եւ պարտէզ: Թէ ինչպէ՞ս սկսած էր հօրս եւ կաթնավաճառ Ապտոյին բարեկամութիւնը՝ այդ մասին





ուրիշ առիթով: Միայն ըսեմ որ Ապտոյին կեանքը փրկած էր մայրս Սովուզ Օլուզի⁶ մէջ, Սանճագի պարպումէն շուրջ մէկ ու կէս տարի առաջ:

Բացի մեզի տրամադրուած պարտեզը մշակելէ՝ գիւղացիներուն համար լուիկի եւ խաղողի ռուփ (արաբերէնէ փոխ առնուած բառ, որ կը նշանակէ պտուղէն քամած հիւֆ, մանաւանդ եփելով թանձրացուած) կը պատրաստէինք, ձիթապտուղ կը հաւաքէինք հարուստ քիւրտներու համար եւ Հոկտեմբերի վերջին շաբաթը, մեր վաստակած ապրանքը բերցուցած Եզեկելի *փոսպոյ*ին տանիքը, կը վերադառնայինք Հալէպ: Եզեկելը *օթուպիս* մը ունէր, որ ճամբորդներ կը տանէր Հալէպէն մինչեւ թրքական սահման: Ճամբորդներուն մեծ մասը կ'իջնէր Աֆրին,⁷ իսկ մնացեալ յաճախորդները կ'իջնէին զանազան գիւղերու մօտակայքը հաստատուած կանգառներ:

1948ի ձմեռնամուտին, երբ Աշխանէն վերադրածանք Հալէպ, Կիլիկեան Վարժարանի տնօրէն, Պրն. Երուանդ Պապայեանէն⁸ իմացանք, որ Մելգոնեան Հաստատութիւնը որոշած է 1948-1949 դպրոցական տարեշրջանին համար նոր ուսանող չընդունիլ: Պապայեան թելադրեց որ ուսումնա շարունակեն Անթիլիասի Դպրեվանքին մէջ, որ, ըստ իրեն, ունէր ուսումնական բարձր մակարդակ եւ անուանի ուսուցիչներ: Ե. Պապայեանի յանձնարարական նամակով զինուած՝ նոյեմբերեան առաւօտ մը ներկայացայ ուսումնապետ Բիւզանդ Եղիայեանին:⁹ Պարզուեցաւ որ Դպրեվանքի ուսումնական տարեշրջանն արդէն շատոնց սկսած էր եւ Կաթողիկոսարանը յաւելեալ ուսանող ընդունելու պիտոճէ չունէր:

Յաջորդ երկու օրերուն, երբ Եղիայեան զիս դարձեալ գտաւ նստած իր գրասենեակի աստիճաններուն վրայ, քաղաքավարօրէն դիտել տուաւ որ ըրածս ժամավաճառութիւն էր...:

Երրորդ օրը, երբ զիս անգամ մը եւս գրասենեակին առջեւ նստած գտաւ, իրեն յատուկ քաղաքավարութեամբ, առաջարկեց միասին ներկայանալ Գարեգին Յովսէփեանց¹⁰ Կաթողիկոսին որ արտակարգ կարգադրութիւններ ընելու լիազօր միակ անձն էր:

Գարեգին Կաթողիկոս ուշադրութեամբ լսելէ ետք ուսումնապետին ըսածները, խնդրեց Բ. Եղիայեանէն, որպէսզի մուտքի քննութիւն առնեն ինձմէ:

Ահա հոն էր, Անթիլիասի մէջ, 1948 թ.ի Նոյեմբեր ամսուան սկիզբը, երբ առաջին անգամ հանդիպեցայ Ս. Սիմոնեանին, որ քերա-





կանութեան վերաբերեալ կարգ մը հարցումներ տալէ ետք, խնդրեց որ երկու էջնոց շարադրութիւն մը գրեմ: Նիւթին ընտրութիւնը ձգեց ինձի: Քերականութեան վերաբերեալ բոլոր հարցումներուն պատասխանած էի անթերի: Ըստ երեւոյթին՝ գրած շարադրութիւնս ալ արժանացած էր Պրն. Սիմոնեանի հաւանութեան: Պէտք է ըսեմ որ, բացառաբար, բոլոր քննութիւններն ալ անցուցի յաջող եւ երբ Պրն. Եղիայեանին հետ երկրորդ անգամ ներկայացայ Վեհափառին, Նորին Սրբութիւնը քննութիւններու արդիւնքներուն ծանօթանալէ ետք, հրահանգեց որ յաւելեալ անկողին մը գնեն ինձի համար եւ կրթաթոշակս պակսեցնեն իր ամսականէն: Ուրեմն, ո՛չ միայն ընդունուեցայ Դպրեվանք՝ այլ ընդունուեցայ՝ իբրեւ Գարեգին Կաթողիկոս Յովսէփեանցի սանը...:

Դպրեվանքի ուսուցիչներս, քիչ բացառութեամբ, վրաս ձգած են մեծ տպաւորութիւն: Բայց Սիմոն Սիմոնեանին թողած ազդեցութիւնը մինչեւ այսօր պահած է իր գոյնն ու բոյրը, իր ներշնչող ոյժն ու մագնիսականութիւնը: Դեռ ուսանողութեանս առաջին տարին իսկ՝ հոգեհարազատութիւն մը ստեղծուեցաւ Սիմոնեանին եւ իմ միջեւ. հոգեհարազատութիւն՝ որ տարուէ տարի աւելի ամրապնդուեցաւ, վերածուելու համար՝ բարեկամութենէ աւելի՝ եղբայրական սիրոյ:

Տեղին կը նկատեմ կարեւորութեամբ նշել հոս, որ ուսանողութիւնը միշտ անհամբեր կը սպասէր Ս. Սիմոնեանի հայ մատենագրութեան պատմութեան նուիրուած դասերուն, զորս յափշտակութեամբ կը լսէր: Յիշեալ նիւթին նուիրուած դասագիրք գոյութիւն չունէր. դասագիրքն ինք՝ Սիմոնեանն էր...: Ուսանողութիւնը գրի կ'առնէր Սիմոնեանին տուած դասերը, որոնք 1954ին մեքենագրուեցան հետեւեալ խորագրով եւ գործածուեցան որպէս դասագիրք, «Հայ Մատենագրութեան Պատմութիւն, դասախօս՝ Սիմոն Սիմոնեան, Դպրեվանք, Անթիլիաս 1954», որմէ օրինակ մը պահուած է արխիւներուս մէջ:

Սիմոնեանի խառնուածքին յատկանշական գիծերէն մէկն ալ զուարճախօսութիւնն էր: Երգիծանքը, ինչպէս իր գրական ստեղծագործութիւններուն եւ նամակներուն՝ այնպէս ալ առօրեայ կեանքին մէջ միշտ առկայ էր: Օրինակ՝ իր 25/08/1974 թուակիր նամակին մէջ կը գրէ. «Քեզի գիրքեր դրկած է Տարօն Սիմոնեանը, մեր նոր Manager-ը»: «Մեր նոր Manager»-ը արտայայտութիւնը հպարտ հօր մը հոգեկան գոհունակութեան արտայայտութիւնը ըլլալով հանդերձ, իր մէջ կը պարունակէ փաղաքշական քննադատական մը, որ միաժամանակ սիմոն-





եանական չարաճիճի՝ բայց քաղցր երգիծանքով շարուած է:

1955ին աւարտեցի Դպրեվանքը: Մինչեւ 1957 Յունուարի առաջին շաբաթը մնացի Հալէպ, ապա՝ մեկնեցայ Հնդկաստան, հայագիտական առարկաներ դասաւանդելու Կալկաթայի Հայոց Մարդասիրական Դեմարանին¹¹ մէջ: 1964ի Դեկտեմբերին բնակութիւն հաստատեցի Լոնտոն: Միմոնեան ուսուցիչը, Միմոնեան հայագէտը, Միմոնեան գրողը, Միմոնեան հրապարակագիրը, Միմոնեան անադարտ հայրենասէրը, մանաւանդ Միմոնեան ՄԱՐԴԸ՝ մնաց ինձմէ անբաժան: Ո՛չ միայն կենդանութեանը հետեւեցաւ ինձի ամենուր, այլ մահէն ետքն ալ շարունակեց ընել նոյնը ...:

Միմոնեանին հետ ունեցած հանդիպումներու մասին կարելի է երկար գրել: Հետագային, յուշերու մէջ հանգամանօրէն կ'անդրադառնամ անոնց: Միայն ըսեմ որ այս հատորով լոյս տեսնող նամակները կենդանի վկաներն են Միմոնեանին եւ իմ միջեւ ստեղծուած հոգեհարազատութեան:

Վահրամ Մավեանին առաջին անգամ հանդիպեցայ 1954ին, Ազունիէի թոքախտանոցը,¹² ուր եկած էր բուժուելու: Եկեղեցականի մը գլխաւորութեամբ, Անթիլիասէն աշակերտներու խումբ մը կ'երթար, երբեմն Ազունիէ, երբեմն ալ՝ Դիպէյլի «Թռչնոց Բոյն»ը,¹³ կիրակնօրեայ եկեղեցական արարողութիւն մատուցելու: Վերոյիշեալ երկու հաստատութիւններու պատասխանատուներուն խնդրանքով, ես յաճախ մաս կը կազմէի այդ խումբին, որովհետեւ զուարթ պատմութիւններով կ'ուրախացնէի հիւանդներն ու որբերը: Վահրամին եւ իմ առաջին հանդիպումը եղաւ նաեւ մեր բարեկամութեան սկիզբը. բարեկամութիւն՝ որ շարունակուեցաւ մինչեւ անոր մահը: Մեր հեռաձայնային վերջին խօսակցութիւնը տեղի ունեցաւ 1982 տարուան Դեկտեմբերի աւարտին, մահուրէն մօտ երկու շաբաթ առաջ: Լիզպոն կը վերադառնար: Հեռաձայնեց Փարիզէն, յայտնելու համար որ թղթատարին յանձնած էր իր աւանդական երկտողը, ներփակելով հինգ սթերլին: Ըստ մեր միջեւ հաստատուած երկարամեայ աւանդութեան, Վահրամ, ամէն տարի, Դեկտեմբեր ամսու երկրորդ կիսուն, երկտող մը կը գրէր ինձի եւ կը խնդրէր որ Լոնտոնէն իրեն օրագրութեան գրպանի փոքրիկ տետր մը դրկեմ: Ուզածը Letts Diary 31A էր: Պահարանին մէջ կը ներփակէի օրագրութիւնն ու հինգ սթերլինը եւ կը դրկէի Վահրամին: Աւաղ, 1983էն, Վահրամ կրցաւ միայն 11 օր գողնալ. օրագրութեան մնացեալ 354 օրերը մնացին... այրի:





1960ին, Վահրամ Պելֆասթեն Լոնտոն եկած էր, ամառնային արձակուրդը Անգլիոյ մայրաքաղաքին մէջ անցընելու: Աներփօրս հրաւերով, տիկինս եւ ես ալ Կալկաթայէն արձակուրդով եկած էինք Լոնտոն: Գրեթէ երկու ամիս եղանք միասին: Կիրակի օր մը, մեր հերթական գրոյցի ընթացքին, Վահրամ յայտնեց ինձի, իբրեւ **մեծ գաղտնիք...** որ սկսած էր պատմուածքներ գրել, որոնց գրական արժէքի մասին այնքան ալ վստահ չէր: Քանի մը պատմուածք տուաւ, որպէսզի «անկէղծ» կարծիքս յայտնեմ անոնց մասին: Երբ յաջորդ օր՝ «**հրաշալի**», «**ինքնատիպ**» եւ նման ածականներով բնութագրեցի գնահատանքս, զարմացաւ եւ կարծիքս անգամ մը եւս լսելու համար՝ հարցուց. «Վստա՞հ ես»: Բնական է պատասխանս շեշտուած «**այո**» մըն էր: Թելադրեցի որ հրատարակէ զանոնք:

Շուտով Մավեանին արձակը սկսաւ լոյս տեսնել Անդրանիկ Ծառուկեանի¹⁴ «Նայիրի»ին¹⁵ մէջ, իսկ 1965ին՝ հրատարակուեցան *Հայրու Բեկորներ* խորագրուած հատորով:

Մեր Լոնտոն գտնուած շրջանին, Սովետ Միութենէն զրօսաշրջիկներու խումբ մը եկած էր Անգլիա, որուն մէջ կային նաեւ *կոմպոզիտոր* Էդգար Յովհաննիսեանը,¹⁶ գրականագէտ-թատերագէտ Լեւոն Հախվերդեանն¹⁷ ու ԱՕԲՄի¹⁸ մէջ աշխատող անձ մը, որոնց հետ անմոռանալի երեկոյ մը անցուցինք Վահրամն ու ես: Հոն ալ՝ սկիզբ առաւ Վահրամին եւ իմ բարեկամութիւնը Լեւոն Հախվերդեանին հետ:

1964ին, Հնդկաստանէն Անգլիա ճամբուս վրայ, ստիպուած երեք ամիս մնացի Փարիզ, Սեպտեմբերէն մինչեւ Դեկտեմբերի սկիզբը: Անգլիա մուտքի *վիզա* չունէի: Վահրամ յաճախ, գործի բերմամբ, կու գար Փարիզ եւ կը մնար իմ ապրած պանդոկս: Կը յիշեմ, զիշեր մը սկսանք ճեմել Շանգեյիզէի վրայ գրուցելով եւ վիճելով ազգային, քաղաքական եւ գրական հարցերու շուրջ: Առաւօտեան ժամը 5ին, անդրադարձանք որ մօտ ութը ժամ անընդհատ քալած էինք Շանգեյիզէի վրայ: Որոշեցինք վիճիլը դադրեցնել եւ ... խաշ ուտելու երթալ:

Անգլիա հաստատուելէս ետք, Վահրամին հետ կը հանդիպէի Լոնտոնի մէջ, ուր ան յաճախ կ'այցելէր գործով, որպէս Գալուստ Կիլպէնկեան Հիմնարկութեան¹⁹ հայկական բաժնի տնօրէն: Երբեմն ալ կը հանդիպէինք Փարիզ, գրող եւ նկարիչ Բիզանդ Թօփալեանին²⁰ «Արաքս» տպարանը, ուր կը տպուէր, իմ խմբագրութեամբ լոյս տեսնող «Արեգակ»²¹ ամսաթերթը: Լոնտոնի եւ Փարիզի հետ կապուած





բազմաթիւ յուշեր կան, որոնցմէ միայն մէկ հատին կ'ուզեմ անդրադառնալ հոս:

Երբ «Արեգակ»ի խմբագրութիւնը ստանձնեցի, այլ բարեկամ գրողներու կարգին, Վահրամէն ալ խնդրեցի որ աշխատակցի թերթին: Վահրամ մեծ համարում ունէր Թօփալեանի վրայ իբրեւ բանաստեղծ եւ նկարիչ, բայց անոր գրաշարական կարողութեան՝ հարիւրի վրայ միայն երեսուն կու տար...: «Բիզանդը միայն իր գրութիւնները անթերի կը տպէ», կ'ըսէր: Օր մըն ալ, երկար վիճաբանութենէ մը ետք, եկանք հետեւեալ համաձայնութեան: Վահրամ «Արեգակ»ին պիտի դրկէր նախապէս հրատարակուած՝ բայց քիչերուն ծանօթ, բանաստեղծութիւն մը. եթէ Բ. Թօփալեան քերթուածն առանց սխալի տպէր, Վահրամ կանոնատրաբար պիտի աշխատակցէր թերթին:

«Հայրենիք, Սերն Ես Այսօր» բանաստեղծութիւնը տպուեցաւ «Արեգակ»ի Փետրուար, 1965 թիւին մէջ... տպագրական սխալներով:

Վահրամէն ստացայ, 12-02-1965 թուագրեալ հետեւեալ հեռագիրը.

«Am infuriated by Topalian's negligence. At least have mistakes corrected in ink before distribution. Vahram».

Որ թարգմանի «Չայրացած եմ Թօփալեանի անփութութեան վրայ: Գոնէ սխալները մելանով սրբագրելիք, նախքան թերթի առաքումը: Վահրամ»:

Մարտ ամսուան թիով բանաստեղծութիւնը կրկին հրատարակեցինք, հետեւեալ ծանօթագրութեամբ.

«ԾԱՆՕԹ.- Նախորդ թիւին մէջ տպագրուած այս բանաստեղծութեան մէջ տպագրական սխալ մը սպրդած էր. կը վերհրատարակենք ուղղուած: ԽՍԲ.»

Անցան ամիսներ, բայց Վահրամին բարկութիւնը չմեղմացաւ: Վերջապէս, Դեկտեմբերին խոստացաւ «պզտիկ» բանաստեղծութիւն մը տալ Յունուար 1966 թիւին համար:

«Ուրը տողնոց բանաստեղծութիւն մըն է», գրած էր Վահրամ, «եթէ Բիզանդը ուզէ ալ՝ սխալ չի կրնար տպել»:

«Արեգակ»ը նոր հասած էր Փարիզէն, երբ Բ. Թօփալեան հեռախօսեց.

«Ասատուր, Վահրամին օրինակը չորկես. բանաստեղծութեան առաջին տունին վերջին տողը չէ տպուած...: Ես չորս օրինակ կը տպեմ որակաւոր թուրքի վրայ, Վահրամին բանաստեղծութիւնը մասնատուր շրջանակի մէջ դնելով: Թերթերը երկու օրէն քովդ կ'ըլլան.





ասոնք որկէ իրեն եւ Կիւլպէնկեան Հիմնարկութեան»:

Այդպէս ալ ըրինք:

Հեռագիր Լիզպոնէն.

«Ապրիք: Ասոր կ'ըսեն տպագրութիւն: Շնորհատրութիւններս: Վահրամ»:

«Արեգակ»ը փակուեցաւ 1966 Օգոստոսին: Տարի մը անց, Փարիզ ենք Վահրամին հետ: Մեր ժամադրավայրը Բիւզանդին տպարանն է: Վահրամը դարձեալ շնորհատրեց Բիւզանդը, իր բանաստեղծութիւնը գեղարուեստական բարձր ճաշակով տպած ըլլալուն համար: Մինչ այդ, ես տպարանին անկիւնէն գտած էի «Արեգակ»ին այն թիւը, ուր Վահրամին բանաստեղծութեան ութի փոխարէն՝ միայն եօթը տողերը տպուած էին: Երբ թերթը ցոյց տուի, Վահրամ աչքերուն չհաւատաց: «Գոնէ չտպուած տողը ձեռագիր անելցուցի՞ր», հարցուց:

Բնական է պատասխանս ծիծաղախառն «ոչ» մըն էր:

Երբ Վահրամ առաջին անգամ հրաւիրուեցաւ Հայաստան, նամակով մը հաստատեց, որ աշխարհի երեսին ազգական չունէր: Ի նպաստ ինծի կտակ մը շինած ըլլալը յայտնելէ ետք՝ խնդրած էր, որ արկածի մը զոհ երթալու պարագային, ինծի ժառանգ ձգուած գումարով, որ շուրջ 25-30 հազար տոլար էր, իր անունով գրական մրցանակ մը հաստատէի: Տարիներ անց, երբ տիկնոջ, Իվօն Գասարճեանին²² հետ եկած էր մեր տուն, նամակը վերադարձուցի իրեն:

Գրութեանս յուշագրութեան բնոյթ չտալու համար, այսքանը բարար կը նկատեմ: Թող նամակները խօսին մեր բարեկամութեան մասին:

* * *

Հարկ կը նկատեմ ընթերցողին ուշադրութեան յանձնել հետեւեալ բացատրութիւնները:

ա.- Բացի ինծի հասցեագրուած նամակներէն՝ այս հատորին մէջ ներառնուած են նաեւ Սիմոնեանէն երկու այլ նամակներ, մէկը ուղղուած Խաչիկ Մթրղպեանին,²³ ներփակուած նամակ 26ի մէջ, իսկ միւսը՝ Յարութիւն Այվազեանին՝²⁴ որկուած նամակ 51ին հետ: Սիմոնեանին ինծի ուղղած 7/10/72թ. նամակ 31ին մէջ գրած է նաեւ Վեհանոյշ Թեքեան,²⁵ իսկ 1/4/1973թ. նամակ 32ի վերջաւորութեան կայ կարճ յաւելում մը Երուանդ Պարսումեանէն:²⁶ Իմ Սիմոնեանին յղած 4





Գեկտենքեր 1970թ. նամակ 28ին մէջ քանի մը տող գրած են նաեւ Յովիկ Սիմոնեանին: Գիրքին մէջ տպագրուած է նաեւ Վահրամ Մավեանին 10 Հոկտեմբեր 1982թ. նամակը, նամակ 97, ուղղուած Ս. Սիմոնեանին:

բ.- Ս. Սիմոնեանին բոլոր նամակները, բացի Խաչիկ Մթրըպեանին հասցեագրուածէն, ձեռագիր են, իսկ Վ. Մավեանի պարագային՝ նամակներուն մեծ մասը մեքենագրուած է: Կասկած չկայ որ այս երեւոյթին գլխատր դրդապատճառը Վ. Մավեանի դժուար ընթեռնելի ձեռագիրն է: Այս առնչութեամբ պետք է նշել նաեւ որ Մավեանի ձեռագիր նամակներուն մեծագոյն մասը գրուած է արձակուրդի կամ պաշտօնական շրջագայութիւններու ընթացքին, երբ ան գրամեքենայ չէ ունեցած իր տրամադրութեան տակ. իսկ իմ պարագայիս բոլոր նամակները գրուած են ձեռագիր:

գ.- Կարգ մը նամակներ անթուակիր են: Այդ նամակներէն ոմանց թուականը կարելի եղաւ ճշդել պահարաններուն կամ բացիկներուն վրայ նամակատան կողմէ դրուած կնիքէն: Մնացածներուն տուինք պայմանական թուականներ, ուղեցոյց ունենալով նամակներուն բովանդակութիւնը: Նոյնպէս կարգ մը նամակներու ո՞ր գրուած ըլլալը ճշդեցիմք նամակատան կնիքէն կամ նամակներու պարունակութենէն: Մեր կողմէ ատելցուած թուականներն ու տեղանունները առնուած են ուղղանկիւն փակագիծերու [] մէջ:

դ.- Ս. Սիմոնեանին գրած վերջին նամակս կը կրէ Ապրիլ 1975 թուականը, իսկ Սիմոնեանին ինծի գրած վերջին նամակը թուագրուած է 7 Մարտ 1985, ուր կայ հետեւեալ նախադասութիւնը. «Արդեօք ե՞ս թէ դուն թերացանք տեղ մը, գրեթէ երկու տարի առաջ»: Ի դէպ է նշել, որ 1976էն սկսեալ իմ կապս այլ բարեկամներու կարգին՝ Ս. Սիմոնեանին հետ ալ վերածուեցաւ պարբերական հեռաձայնային խօսակցութեան: Մատնուած էի անորոշութեան. անգործութիւնը տրամադրութեանս հետ քանդած էր նաեւ՝ ինքնավստահութիւնս: Յիշեալ իրավիճակէն դուրս գալու վճռակամութեամբ, 1977ի սկիզբը որոշեցի հիմնել առետրական ընկերութիւն մը եւ յաճախորդ գտնելու համար ճամբորդել Միջին Արեւելք եւ արիւսկեան երկիրներ, ուր ունէի բազմաթիւ գործարար ընկերներ: Այդ տարիներուն գրականութեամբ եւ ազգային աշխատանքով պարապելու ոչ ժամանակ՝ ոչ ալ տրամադրութիւն ունէի:

ե.- Սիմոն Սիմոնեանի ինծի յղած նամակներուն մէջ բացիկներ





են թիւ 43, 46 եւ 52ը, իսկ 47 նամակը՝ գրուած է նամակագրի այցետոմսին վրայ: Ասատուր Կիւզելեանի Միմոն Միմոնեանին գրած նամակներուն մէջ բացիկներ են թիւ 21 եւ 24ը: Վահրամ Մավեանի թիւ 1, 11, 20, 21, 32, 40, 59 եւ 94 նամակները բացիկներ են, իսկ թիւ 8 նամակը հեռագիր է:

գ.- Նամակագիրներու կողմէ գլխագիր գրուած՝ ինչպէս նաեւ կարգ մը այլ բառերու ուղղագրութիւնը ընդհանրապէս պահած ենք անփոփոխ, իսկ կարգ մը յատուկ անուններու պարագային, ուղղագրութեան միօրինակութիւնը պահելու համար՝ զանոնք ենթարկած ենք փոփոխութեան:

է.- Նամակներու բաժինէն ետք դրուած են կարգ մը լուսանկարներ, որոնք կապ ունին նամակագիրներուն, նամակներու մէջ յիշուած անձերուն եւ հաստատութիւններուն հետ:

ը.- Նամակներուն մէջ գործածուած հայատառ եւ լատինատառ օտար բառերու հայերէն բացատրութիւնը տրուած է գիրքի վերջաւորութեան:

Կ'ուզեմ այսու շնորհակալութիւն յայտնել բոլոր անոնց, որոնք իրենց սիրայօժար աշխատանքով, թելադրութիւններով եւ խորհուրդներով աջակցեցան ինձի «Կը Խօսին Նամակները» գիրքի հրատարակութեան նախապատրաստական աշխատանքներուն մէջ:

Շնորհակալութիւն Միմոն Միմոնեանի զաւակներուն, որոնք ոչ միայն ինձի տրամադրեցին իրենց հօր գրած նամակներուս պատճենները, այլ նաեւ օգնեցին «Ծանօթագրութիւններ» բաժնի պատրաստութեան, նամակներուն մէջ յիշուած կարգ մը անձերու եւ իրադարձութիւններու մասին հայթայթելով հարկ եղած տեղեկութիւնները:

Շնորհակալութիւն Թորոս Թորանեանին, որ սիրով յանձն առաւ գրել իր սիրելի ուսուցիչ Միմոն Միմոնեանի եւ գրչեղբօր՝ Վահրամ Մավեանի նամակներուն նուիրուած այս գիրքին «Յառաջաբան»ը:

Շնորհակալութիւն Երուանդ Գոչունեանին,²⁷ որ սիրայօժար կարողաց գիրքին փորձերը, իրեն յատուկ բժախնդրութեամբ կատարեց հարկ եղած սրբագրութիւններն ու ըրաւ օգտակար թելադրութիւններ:

Շնորհակալութիւն գրաշար Անի Սարգիսեանին, որ համբերատար ոգիով եւ խղճնտօրէն կատարեց իրեն վստահուած աշխատանքը:

ԱՍԱՏՈՒՐ ԿԻՒԶԵԼԵԱՆ





Միմոն Միմոնեան ծնած է 1914ին Այնթապ: Դեկտեմբեր 1921ին, Կիլիկիոյ հայաթափման ընթացքին, Միմոնեան ընտանիքը կը տեղափոխուի Հալէպ: Նախակրթութիւնը կը ստանայ Հալէպի Հայկազեան, Կիլիկեան Գաղթականաց, Լատիններու, Ֆրեր Մարիստներու եւ Կրթասիրաց վարժարաններուն մէջ: 1930ին ան կ'ըլլայ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան նորարաց Անթիլիասի Դպրեվանքին առաջին ուսանողներէն: 1935ին ասարտելով ուսումը՝ Միմոնեան կը վերադառնայ Հալէպ եւ կը պաշտօնավարէ Հայկազեան եւ Կիլլլէնկեան վարժարաններուն մէջ, իբրեւ հայերէնի ու հայոց պատմութեան ուսուցիչ: 1939ին, երբ տակաւին 25 տարեկան էր, կը հրատարակէ իր *Հայոց Պատմութիւն* դասագիրքերու շարքին առաջին գիրքը, որ կ'արժանանայ Հ.Բ.Ը.Մ.ի Նուպարեան մրցանակին: 1941ին կը սկսի հրատարակել հայերէն լեզուի *Արագած* դասագիրքերու շարքը եւ կ'ամբողջացնէ հրատարակութիւնը *Հայոց Պատմութիւն* դասագիրքերու շարքին: 1944ին խումբ մը ուսուցիչներու հետ կը հիմնէ Հալէպահայ Ուսուցչական Միութեան «Սեւան» տպարանը: 1946ին կը խմբագրէ Հալէպահայ Ուսուցչական Միութեան «Սեւան» պարբերագիրքի երկու եւ միակ թիւերը: 1946ի աշնան կը հրատարակուի Անթիլիաս, որպէս Գարեգին Յովսէփեանց Կաթողիկոսի գիտական աշխատակիցը: Իր Անթիլիաս մեկնումով, կը դադրին Հալէպի տպարան «Սեւան»ն ու համանուն պարբերագիրքը:

1946ին Միմոնեան կ'ամուսնանայ Մարի Աճեմեանի հետ: Միմոնեան ամուլը կը բախտատորուի հինգ զաւակներով:

Անթիլիասի Դպրեվանքին մէջ պաշտօնավարած շրջանին, Միմոնեան կը խմբագրէ Գարեգին Յովսէփեանց Վեհափառի *Յիշատակարանը Ձեռագրաց* կոթողային գործի առաջին երկու հատորները (երկրորդ հատորը կը մնայ անտիպ): Միեւնոյն ժամա-





նակ կը վարէ խմբագրութիւնը «Հասկ» ամսագրին եւ «Հասկ Հայագիտական» պարբերագիրքին (Ա. շրջան): Դպրեվանքէն ներս կը դասաւանդէ գրաբար, աշխարհաբար եւ հայ մատենագրութիւն: 1954ին կ'ուղարկուի Սովետական Հայաստան, մասնակցելու Գեորգ Չ. Կաթողիկոս Չեօրէքճեանի²⁸ յուղարկաւորութեան, որպէս Կիլիկիոյ Կաթողիկոսութեան պատուիրակութեան անդամ: Սիմոնեանի կեանքին մէջ անկիւնադարձային կ'ըլլայ հայրենիք իր այս միակ այցելութիւնը: Ան կ'անդրադառնայ որ Սփիւռքի մէջ հայրենիքի մասին պատմուածը բոլորովին տարբեր է հայրենի իրականութենէն: Կը հիասթափուի ու ինքզինք կը զգայ խաբուած: Հայրենիքէն վերադարձին կը փորձէ համոզել իրեն մօտ եղող ու այդ օրերուն «հայրենասէր» կոչուած կուսակցութիւններն ու անհատները, որպէսզի խօսին հայրենիքի իրականութեան մասին: Իրեն կը յանձնարարուի լռել...:

1955ին կը հրաժարի Կիլիկիոյ Կաթողիկոսութեան իր բոլոր պաշտօններէն եւ կը հիմնէ իր սեպիական տպարանն ու հրատարակչատունը, երկուքն ալ «Սեւան»²⁹ անունով: Իր «Սեւան»էն լոյս կը տեսնեն հայոց պատմութեան, հայերէն լեզուի, քերականութեան, աշխարհագրութեան, գիտութեան, կրօնի, թուաբանութեան, երգի, զծագրութեան եւ գեղագրութեան 55 դասագիրքեր, որոնք կը գործածուին Արժանթինի, Աւստրալիոյ, Եգիպտոսի, Եթովպիոյ, Իրաքի, Լիբանանի, Կիպրոսի, Հայաստանի (Էջմիածին), Հնդկաստանի, Սիացեալ Նահանգներու, Յորդանանի, Յունաստանի, Պաղեստինի (Երուսաղէմ), Պրագիլի, Սուտանի, Սուրիոյ, Քանադայի, Քուէյթի եւ Ֆրանսայի ամէնօրեայ եւ միօրեայ վարժարաններուն մէջ: «Սեւան»ի տպագրական ու հրատարակչական բերքը կը կազմէ մօտաւորապէս 500 գիրք, բացի հոն տպուած շաբաթաթերթերէն, ամսաթերթերէն, պարբերաթերթերէն ու տարեգիրքերէն: Սիմոնեանի հրատարակած գիրքերն ու դասագիրքերը իրենց թիով մրցանիշ կը հաստատեն սփիւռքահայ տպագրութեան ու հրատարակչութեան պատմութեան մէջ:

1947-1960ին Սիմոնեան կը դասաւանդէ հայ մատենագրութիւն եւ գրաբար Հ.Բ.Ը.Մ.ի Դարուիի Յակոբեան եւ Յովակիմեան-Մանուկեան երկրորդական վարժարաններէն ներս:

1958-1974ին իր խմբագրապետութեամբ Սիմոնեան կը հրատար-





րակէ «Սփիւռք»³⁰ անկախ շաբաթաթերթը, ուր կը յայտնուին առաջին անգամ յղացուած գաղափարներ, մտածուած առաջարկներ ու պահանջներ, ինչպէս Ապրիլեան Եղեռնի յիսնամեակի ոգեկոչում, ներքին հողային պահանջքի վերարժարծում, Հայկական Դատ, հայկական դրամատուներու ցանց ու Համահայկական Կեդրոնական Գերագոյն Մարմին: Միմոնեան իր «Սփիւռք»ին մէջ հայրենի ու սփիւռքահայ իրականութիւններուն մասին կը խօսի անկաշկանդ ճշմարտախօսութեամբ ու մերթ անգուսպ քննադատութեամբ: Իր այս կեցուածքին պատճառով ան յաճախ հաշտ աչքով չի դիտուիր սփիւռքահայ կուսակցութիւններու, հայրենի պետութեան կարգ մը կեդրոններու եւ կարգ մը գրողներու կողմէ: Այդ պատճառով Միմոնեան կը դրուի Սովետական Միութեան՝ ինչպէս նաեւ կարգ մը սփիւռքահայ կուսակցութիւններու սեւ ցանկին վրայ: Հայրենիքէն ներս Միմոնեանի գրականութիւնը կը դառնայ գաղտնի ընթերցանութեան առարկայ եւ Միմոնեանի մուտքը կ'արգիլուի Սովետական Հայաստան: Երբ 1983ին Լոս Անճելըսի մէջ «Գրական Խմբակ»ի կողմէ կը նշուի Միմոնեանի մանկավարժական, բանասիրական, հրատարակչական, խմբագրական եւ գրական գործունէութեան յիսնամեակը, յորելեարը ցաւ կը յայտնէ որ իր պաշտած հայրենիքէն ամենահեռու վայրի մէջ կը տօնուի իր յորելեանը...:

«Սփիւռք» շաբաթաթերթը նոր սերունդէն կը պատրաստէ 30է աւելի հայ գրողներ եւ մտատրականներ:

«Սփիւռք»ը կ'ըլլայ իր ժամանակաշրջանի միակ իսկական անկախ շաբաթաթերթը:

1984ին, Արմէն Դարեանի,³¹ Գրիգոր Համամճեանի եւ Միմոն Բէսթէնեանի հետ Միմոնեան կը հիմնէ «Հայ Տիպ Քոմիիւկրաֆ» գրահրատարակչականը:

Առանձին հատորով լոյս տեսած Միմոնեանի գրական գործերն են 1- *Կը Խնդրուի... Խաչաձեւել* (Պէյրուք, 1965), 2- *Միփանայ Քաջեր* Ա. հատոր (Պէյրուք, 1967), 3- *Խմբակէր Ալլանին Աղջիկը* (Պէյրուք, 1967), 4- *Լեռնականներու Վերջալոյսը* (Պէյրուք, 1968), 5- *Միփանայ Քաջեր* Բ. հատոր (Պէյրուք, 1970), 6- *Լեռ եւ Ճակարկազիր* (Պէյրուք, 1972), 7- *Անժամանորոս** (Պէյրուք, 1978 եւ Երեւան, 1998):

* Այս վեպը թէւ առաջին անգամ տպուած է 1978ին, սակայն հեղինակին փափաքով հրատարակուած է յետ մահու՝ 1986ին:





Առանձին հատորով լոյս տեսած իր բանասիրական գործերն են 1- *Հին Հայ Մայրենագրութեան Պատմութիւն* (մեքենագրեալ, ապա խմորատիպ առնուազն երկու տպագրութիւն, Անթիլիասի Դպրեվանքէն ներս եւ իբրեւ դասագիրք գործածուած Անթիլիասի Դպրեվանքին ու Յովակիմեան-Մանուկեան երկրորդական վարժարանին մէջ:) 2- *Արեւելահայ Գրականութիւն* (Պէյրութ, 1965), 3- *Արեւելահայ Գրողներ* (Պէյրութ, 1965), 4- *Հին Հայ Մայրենագրութիւնը Որպէս Ենթահող Արդի Հայ Գրականութեան* (Պէյրութ, 1975), 5- *Սեւան Ընդարշակ Բառարան* Ա. Հատոր (Պէյրութ, 1970-1980), 6- *Նորայայտ Տաղասաց Մը՝ Սրտեփանոս Դաշտեցի եւ յաւելուած Նաղաշ Յովնաթանի Եօթը Անտիպ Տաղերը* (Պէյրութ, 1981), 7- *Հնդկահայ Կարեւոր Վաւերագիր Մը* (առանձնատիպ «Հասկ Հայագիտական»ի, Անթիլիաս, 1983-1984):

Միմոնեանի հեղինակած դասագիրքերուն թիւը 20 է: Նախակրթարանի համար պատրաստած է. 1- *Հայոց Պատմութիւն* վեց դասագիրքերու շարքը, 2- *Արագած* հայերէն լեզուի վեց դասագիրքերու շարքը, համահեղինակութեամբ Օննիկ Սարգիսեանի,³² 3- *Աշխարհագրութիւն* չորս դասագիրքերու շարքը, համահեղինակութեամբ Երուանդ Պապայեանի եւ Օննիկ Սարգիսեանի, 4- *Նոր Բերականութիւն* երկու դասագիրքերու շարքը, համահեղինակութեամբ Սարգիս Պալեանի: Իսկ երկրորդական վարժարաններու մէջ գործածուած իր դասագիրքերն են 1- *Հին Հայ Մայրենագրութեան Պատմութիւն* եւ *Արեւելահայ Գրականութիւն* հատորները:

1983ին Միմոնեան կը պատրաստէ «Պատմական Եւ Յաներժական Հայաստան»ի քարտէսը,* աշխատակցութեամբ Կայծակ Աթթարեանի, Ռաֆֆի Գոզաճեանի եւ Օշին Գրգեաշարեանի:³³

Անդամ կ'ըլլայ միայն Սասնոյ Հայրենակցական Միութեան:

Ունի մամուլի մէջ ցրուած էջեր ու անտիպ գործեր:

Միմոնեան կը մահանայ սրտի տագնապով, իր ծննդեան օրը՝ 24 Մարտ 1986ին, Անթիլիասի իր բնակարանին մէջ:

* Այս գունաւոր քարտէսը (200ս.մ. x 90ս.մ.) հրատարակուած է Լոզանի Դաշնագրին 60ամեակին առիթով, եւ կը կրէ հետեւեալ ձօնը. «ԶՕՆ/ՊԱՅԱՆՁԱՏԵՐ ԶԱՅՈՒԹԱՆ/ԼՈՂԱՆԻ ԱՆԱՐԴԱՐ/ՎԵՅԱԺՈՂՈՎԻՆ 60ԱՄԵԱԿԻՆ/ԱՌԹԻ, ԻԲՐԵՒ ԲՈՂՈՔ»:







ՍԻՄՈՆ ՍԻՄՈՆԵԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ ԱՍԱՏՈՒՐ ԿԻԲԶԵԼԵԱՆԻՆ

ՆԱՄԱԿ 1

Պեյրութ, 18 Նոյ[եմբեր]ի 1957

Սիրելի՛ Ասատուր,

Շա՛տ, շատ ուրախացայ երբ իմացայ նշանուիլդ:

Կը շնորհաւորեմ սրտանց եւ կը մաղթեմ երջանկութիւն, մշտադալար առողջութիւն եւ իմաստութիւն:

Ես մոռցեր էի. Միսաք Զեհեայեանը³⁴ յիշեցուց, թէ ես քու Յնդկաստան մեկնումիդ նախընթաց օրը, գիշերը, ըսած ըլլամ.

- Ասատո՛ւր, Յնդկաստանի Յայոց ամենէն գեղեցիկ ու հարուստ աղջիկը առնես...:

Ես մոռցեր էի այդ պատուերս. լաւ որ դուն չես մոռցած: Եւ ոչ միայն չես մոռցած, այլեւ զայն մարմնացուցած: Իրականացած երազները լաւ կ'ըլլան: Կը մաղթեմ, որ բոլոր երազներդ ալ այդպէս կատարեալ ու հարիւր առ հարիւր իրականանան: Իմ կողմէ, իբրեւ քու համեստ ուսուցիչէդ եւ ներկայ բարեկամէդ ընդունէ շնորհաւորանքներս եւ զանոնք սրտով, ինչպէս ես իմ խանդավառ թոպէներուս, փոխանցէ ազնիւ նշանածիդ: Յիշէ թէ գրաբարով կալուկապ ուսուցիչդ սանձարձակ հոգիով երջանկութիւն կը մաղթէ, յիշէ իրեն թէ Յնդկաստան գինք կը յուզէ «լալու չափ», իր հայադրոշմ պատմութեամբ: Օ՛, ժանգոտած գրիչս կ'ուզէ պարպուիլ իր ժանգերէն, եւ քեզի մէջբերել հնդկահայ Ստեփանոս Դաշտեցիի³⁵ իմաստուն տաղերէն.

- Ճանապարհ շա՛տ... եւայլն: (Օր մը կը դրկեմ հարազատ մէջբերումը):

Մէկ տարիէ ի վեր քեզի հինգ-վեց անգամ նամակ գրեցի ու չվերջացուցի: Կոտորակուած տրամադրութիւնս արգելք կ'ըլլայ ընելու շատ սիրելի բաներ, ինչպէս քեզի գրելու հաճոյքը:





* * *

Այս էջին վրայ՝ դժբախտաբար կը սանձեմ իմ զգացմունքներս եւ կ'ընեմ հետեւեալ թուումները.-

1- Մալխասեան³⁶ բառարանները օրին դրկած եմ **ապահովագրեալ**. կը զարմանամ որ չես ստացած: Բողոք բարձրացուցիկը նամակատան վարչութեան մօտ: Եթէ չստանաս, նոր շարք մը կը դրկեմ, զոր ստացած կ'ըլլաս մեղրալուսնէ դարձիդ:

2- Պրն. Վահան Փոլատեանի³⁷ մասին զեղումներդ ճիշդ չեն: Սխալ հասկացողութիւն կայ: Իրար հասկցէք եւ շէնցուցէք այդ հին հաստատութիւնը:

3- Հայր Ասողիկի [Ղազարեան],³⁸ որ հիմա եղած է Ասողիկ Սրբազան պատուեր տուի (խոնարհաբար), որ քեզ պսակե-Դեկտ[եմբեր]ի սկիզբը Կալկաթա պիտի ըլլայ:

4- Ասողիկ Սրբազանին ուղղուած նամակը կը բացատրէ ինքզինք: - **Քու դերդ կարելոր է.**- ա) Վկայել բ) Յիշեցնել գ) Իրագործել (ինչպէս քու երազներդ աւագագոյնը...) դ) Ձախողանքին պատասխանատու ես:

Նուպարը [Զէշիշեան],³⁹ խեղճ դրութեան մէջ է, իր կամքէն անկախ պատճառներով, որոնք քեզի ծանօթ են (հօրը անհայրական բնաւորութիւնը...): Չինք փրկելու է արտաշխարհելով: Օգտակար կ'ըլլայ, կը հաւատամ:

5- Հրայր Սիմոնեանը⁴⁰ մէկ անգամ միայն երեւցաւ ասուպի պէս ու ա՛լ չերեւցաւ: Իր հասցէն չեմ գիտեր. գրէ որ ինձի հանդիպի:

Նամակին սկիզբը նշանուիլդ շնորհաւորեցի. վերջաւորութեան՝ ամուսնութիւնդ, սրտանց՝ իմ եւ Տիկնոջս կողմէ: Նուպար Զէշիշեանը, Ներսէ Նալպանտեանը⁴¹ (Տէր Կարապետի տղան, որ հիմա տպարան այցելեց) նոյնպէս կը բարեւեն ու կը շնորհաւորեն քեզ:

Պրն. Վ. Փոլատեանը փակեց քու հաշիւդ բացի բառարաններէն (Մալխասեան), որոնց փոխարժէքը կը վճարես երբ ստանաս զանոնք... մանչ մը ունենալէդ առաջ:

Իրա՛ւ, մանչուդ համար անուն մը չե՞ս որոշած: Զըլլա՛յ որ *Անձնանուններու Բառարանը* փոխ ուզես:

Այս բոլորէն ետք, կրկին ու կրկին կ'ողջունեմ քեզ, Նարինէն [Ալեքսեան]⁴² եւ իր ծնողները ու համայն հնդկահայերը:

Սիրով՝ քոյդ՝
Ս. Սիմոնեան





[3.Գ.] Սրբազանը Հայաստանէն ինծի համար բերած պիտի ըլլայ «Ոգնի»⁴³ երգիծական թերթի հաւաքածոն. զայն դրկէ **օղանաւով եւ ապահովագրեալ:**

Ես չգրեցի **իմ ծրագիրերուս** եւ ըրածներուս մասին: Յաջորդիւ կը գրեմ:

Շաբաթաթերթը իրագործման ճամբուն մէջ է: Քու վրադ մեծ յոյսեր դրած եմ:

Կը գրեմ մանրամասն՝ յաջորդիւ:

Պատասխանէ **արագ...** պսակէն կէս ժամ առաջ կամ ետք:

Ս. Ս.

Ես քեզ կը նախընտրեմ իբրեւ աշխատակից ունենալ քան թէ... մեկենաս՝ իմ ծրագիրներուս, յատկապէս *Հայկական Համայնագիտարանի* համար: Կը ստանաս այս գործի տպագրեալ ծրագիրը:

Ս.Ս.

Վեհի [Վազգէն Ա. Պալճեան] *Ուղեւորութեան* գիրքէն, որ գրական ու պատմական մեծ արժէք կը ներկայացնէ, քեզի կը դրկեմ 10 օրինակ վաճառելու համար:

Ս. Ս.

ՆԱՄԱԿ 2

Պէյրուս, 3 Յունիսի 1961

Սիրելի՛ Նարինէ,

Աղջիկս ասեմ, քոյրս ասեմ քեզ, դու մի ազնուական ձուլուածք ես աղջկայ եւ քրոջ: Ես քոյր չեմ ունեցել. դու եղար իմ հարազատի կինը, ուրեմն եղար իմ հարսը:

Քեզ այնքան հարազատ եմ զգում ինձ, որ համարձակում եմ խնդրել քո ազնիւ ներողամտութիւնը իմ նամակ չգրելու մեղքին համար: Ես եւ Տիկինս ուղղակի մեղաւոր ենք զգում մեզ, որ չենք պատասխանել քո սրտամօտ նամակներին:

Ապա վստահ ենք, որ մեր աղջիկը, մեր քոյրը եւ մեր հարսը կը ների մեզ:

Մենք երբեք չենք մոռացել Ձեզ, քո սքանչելի հօրը, մօրը, քեզ եւ Ասատուրին: Երանի՛ թէ ծանօթացած լինեինք քո հիանալի եղբօրն էլ, որի մասին Ասատուրը այնքան լաւ բաներ է ասել:





Յովիկը, Մարալը, Վարդանը եւ Տարօնը⁴⁴ բոլորն էլ համբուրում են քեզ:

Տիկինս միշտ կարօտով յիշում է քեզ, եւ ասում է թէ լաւ հարազատները միշտ հեռու են կենում մեզնից:

Մի տարի առաջ էր, երբ բարի բախտը Ձեզ բոլորդ բերեց մեր ափերը: Ափսո՛ս, երազի պէս անցան այդ լաւ օրերը...:

Չգիտեմ ինչո՛ւ շատ բնական կերպով ուզեցի քեզ գրել Ձեր բարբառով: Սա կը լինի մի քննութիւն ինձ համար՝ արեւելահայ բարբառի վկայական ձեռք բերելու:

Խնդրում եմ, որ փոխանցէք իմ ջերմ բարեւները քո հարազատներին՝ հօրը, մօրը եւ եղբօրը:

Սիրով եւ համբոյրով՝
Ս. Սիմոնեան

ՆԱՄԱԿ 3

Պէյրուս, 3 Յունիս 1961

Սիրելի Ասատուր,

Երբ ես շատ յանցաւոր ըլլամ նամակ չգրելու մեղքին մէջ, կը ճամբորդեմ դէպի նամակագիրը եւ անձամբ կը հայցեմ ներողութիւն: Ասատուր ջան, մեղքս քաւելու համար չեմ կրնար մինչեւ... Յնդկաստան գալ:

Ուրեմն պիտի ներես, երիցս պիտի ներես նամակ չգրելուս: Լաբիրինթոս ինկող աստուածն իսկ կը գտնուի անկարելիութեան առջեւ: Բայց ես **գրեթէ ազատուած եմ**, վասնզի իմ լաբիրինթոսիս մէջէն կը տեսնեմ լոյսի շողեր, որոնք կրնան ուղեցոյց ըլլալ զիս դուրս բերելու: Յուսամ այս Յոկտեմբերին ազատիլ...:

Երազի պէս կը յիշեմ Ձեր անցեալ տարի, այս օրերուն, այցը: Ի՛նչ հաճելի եւ հոգեւորոգ օրեր էին ինձի համար: Մանկութենէս իմ երազած Յնդկաստանը քեզի վիճակեցաւ եւ Յնդկաստանի տղան դո՛ւն եղար:

Եւ գիտես, Ասատուր, դուն այն միակ տղան ես որ իրաւունք ունէր իմ երազս շարունակելու: Ես քեզմով ինքզինքս գոհացած կը զգամ Յնդկաստանի երազը իրագործած ըլլալու: Գիտե՞ս, երբ Յնդկաստան պիտի մեկնէիր, նախորդ գիշերը քեզի յայտնեցի իմ պատանութեանս չիրագործուած երազը:





Այս նամակը կը գրեմ պարզապես քեզի եւ Ձերիններուն յայտնելու որ նախ ողջ եմ եւ նոյն թափով կ'աշխատիմ, ապա ըսելու Ձեզի պէս թանկագին հոգիներու որ Ձեզ երբեք չենք մոռցած ես, Տիկինս եւ մեր չորս զաւակները: Ըսելու նաեւ թէ միշտ կը յիշենք Ձեզ եւ Ձեզի սրտագին մաղթանքներ ունինք՝ Ձեր երջանկութեան եւ ծլագարդման համար: Ձեզ այնքան սրտամօտ եւ հարազատ կը զգանք, որ մեր չգրելը կը հալեցնէք Ձեր ազնուութեան աւագանին մէջ:

Ասատուր ջան, ինչո՞ւ չես աշխատակցիր: Դուն ինչո՞ւ մոռցար մեզ. յօդուածներդ - մանաւանդ ակնարկներդ - մեր ընթերցողներուն կողմէ շատ լաւ ընդունելութիւն գտան: **Կը պահանջեմ** որ գրես: Մնացած գիրքերուդ համար հրահանգի կը սպասեմ: Ցարդ - եթէ չգրեցի - գեթ բոլոր խնդրանքներդ կետ առ կետ գործադրեցի, ղրկելով գիրքերէդ ուր որ կ'ուզէիր:

Յետոյ, **Հրաչեայ Աճառեանը**⁴⁵ մոռցած ես կ'երեւի. *Անձնանունների Բառարանի* բոլոր անունները, 25000 հոգիներ, ցոյց կազմակերպած են քեզի դեմ, մեծ ցոյց, զոր ոչ իսկ արցունքաբեր կազերը կրնան ցրուել. *Ֆեղմ քը՞ր* կ'ըսէ քիւրտը:

Կը սպասեմ **լաւ** լուրերուդ: Տարի մը անցաւ...

Քեզի մաղթելով լիալիր յաջողութիւն՝

Համբոյրով՝
Քոյդ՝ Ս. Սիմոնեան

[3.Գ.] Որոշած եմ հրատարակել Հ. Աճառեանի *Անձնանունների Բառարանը*:

Միւս բոլոր ուզած գիրքերդ ղրկած եմ: - Նոր ի՞նչ բան կ'ուզես:

[Մեսրոպ] Գույումճեանի⁴⁶ անգլերէնէ հայերէն բառարանը դեռ լոյս չտեսաւ:

ՆԱՄԱԿ 4

Պէյրուս, 6/6/1961

Սիրելի՛ Ասատուր,
Վերստին յաւելուած...

1- Նամակներէդ մեկուն մէջ կը յիշես Անոյշ Աբրահամեանի⁴⁷





եւ Խ[աչիկ] Սամուէլեանի⁴⁸ *Հայոց Պատմութեան* գիրքը (գիրքե՞րը): Ղրկէ օրինակ մը:

2- Ստացայ ղրկած գիրքերդ՝ Հայաստանեան եւ գրաբարի: Վերջիններէն շատ գոհ մնացի: Շնորհակալութիւն: Շարունակէ առաքել...:

3- Նոր ապսպրանքներ չկա՞ն Կալկաթայի Մարդասիրական ճեմարանէն:

4- Պրն. Վ[ահան] Փոլատեանին այսօրուան թուականով հաշուեցոյց ղրկեցի, 5 օրինակ: Եթէ formalité-ի պակաս կայ, Նարինէն թող 5 օրինակներուն վրայ ալ աւելցնէ:

Դրամը եթէ աւելի արագ ինծի հասցնելու կերպ ունիս, դուն գանձէ եւ ղրկէ՛: Եթէ այս կողմերը գումար ունիս, երկտողով մը հրահանգէ որ ես գանձեմ, իսկ դուն 420 լ. ոսկին այնտեղ դուն վար դիր:

Ճեմարանին Մալխասեան բառարանը ղրկե՞ր էի: Ստուգէ:
Քոյդ՝
Ս. Սիմոնեան

ՆԱՄԱԿ 5

Ատիս-Ապեպա, 30 Մարտ 1962

Շատ սիրելի Նարինէ եւ Ասատուր,
Սիրելիներ՛ր,

Ուշադրութեամբ նայեցեք գրոյս վայրին եւ թուականին...

Ատիս-Ապեպա... Քիչ մնաց որ ոստում մը ընէի եւ հասնէի
Հնդկաստան-Կալկաթա:

Չեղա՛ւ...

Ոյժերս տկար դուրս եկան:

Յատկապէս՝ ժամանակը ժլատ եղաւ առիթ ընծայելու:

Ի՞նչպէս է մանչուկը, համբոյրներ իր վահագնեան ճակտին:
Սրտագին բարեւներ պապային, մամային եւ աղբեր...:

20 օրէ ի վեր կը բացակայիմ: Ի մօտոյ կը սկսիմ *Անձնանուն-ների*, Լեոյի⁴⁹ եւ այլոց:

Սիրելի՛ Ասատուր, եղբօրդ ղրկեցի ուզած գիրքերը, ինչպէս նա-
եւ այլ յանձնարարութիւններդ: Գահիրէ պիտի հանդիպիմ՝ քանի
մը օրինակ վերցնելու [Մեսրոպ] Գույումճեանի նոր բառարանէն:





Հայաստանեան քանի մը կտոր գիրք միայն ստացայ:

Ղրկէ յատկապէս բոլոր ամսագիրները (Սով[ետական] Հայաստան, Գրականութիւն, Արուեստ, Մանկավարժ, Պիոներ), Գրական թերթ եւ Սով[ետական] Հայաստան օրաթերթը⁵⁰ - մաղելով եւ զտելով արտատպելիները:

Մամբրէ Սրբազանը [Սիրունեան]⁵¹ որ Ատիս-Ապեպա Է, հաղորդեց թէ Ասողիկ Սրբազանը [Ղազարեան] լքած է Ձեզ: Յաւալի Է:

Սոռցայ... չըլլա՞յ որ խորհիք թէ «միականի»ին⁵² ուխտի եկած եմ: Իրար չտեսանք ու պիտի չտեսնենք: Արդէն օդանաւին մօտեցած եմ:

Ինծի գրէ երկար: Ո՞ւր մնաց աշխատակցութիւնդ: Գրէ՛, գրէ՛, գրէ՛:

«Սփիւռք»ը հետզհետէ պիտի յաղթանակէ, եթէ ճշմարտութեան ճակատագիրը յաղթանակն է: Մէկ ճշմարտախօս կրնայ յաղթել մէկ միլիոն ստախօսներուն:

Ազգային ու գրական նոր եւ առողջ հիմունքներով վերակերտուելու եւ մեր ժողովուրդն ու իր գրականութիւնը:

Կարելորդ հաւատքը չկորսնցնելն է:

Սրտագին համբոյրներով՝

Քոյդ՝

Ս. Սիմոնեան

ՆԱՄԱԿ 6

Խարթում (Սուտան) 2 Ապրիլ 1962

Սիրելի՛ Ասատուր,

Ասիկա երկրորդ նամակն է զոր կը գրեմ ճամբորդութեանս ընթացքին: Առաջինը գրեր էի Հապեշիստանէն:

Կը գրեմ երկրորդը՝ ըսելու համար քեզի թէ հրատարակչական գործիս կրնա՞ս օգնել բարերար ապահովելով Ձեր գաղութէն:

Յետոյ, համայնագիտարանի ծրագիրը կը սկսի յաճախանք դառնալ. կարելի՞ է խումբ մը կազմել եւ այդ գործին սկսիլ:

Անձնանունների Բառարանը մեքենային տակ կը մտնէ 15 Ապրիլին: Լէոյի Ա. եւ Դ. հատորները նոյնպէս. վերջինը, ինչպէս գիտես, անտիպ է եւ ձեռագիր (վիմատիպ):





Ե՞րբ պիտի շարժիս: Գիտես որ ես Տոքթ. Շթոքմանը չեմ, ըսելու համար որ «մինակ եմ, որովհետեւ զօրաւոր եմ»:

[Խաչատուր] Աբովեանի⁵³ Վերջի յառաջաբանին մէջ ըսածին պէս, Կրետսի համր որդիին լեզուն բացուեցաւ...:

Կը սպասեմ **հրաշքիդ**:

«Սփիւռք»ին աշխատակցութիւնդ մոռցար:

Գրէ՛, գրէ՛, գրէ՛:

Կրկին ու կրկին ողջունելով Ձերինները, յատկապէս... սե՛ւ մանչուկդ իր բոլոր մանրամասնութիւններով:

Քոյդ՝ սիրով՝
Ս. Սիմոնեան

[Յ.Գ.] Այս գիշեր կը հասնիմ Գահիրէ:

ՆԱՄԱԿ 7

[Թեհրան] 12 Օգոստոս 1962

Սիրելի Նարինէ եւ Ասատուր,

Ամիսէ մը ի վեր հեռացած էի գործով, Պէյրութէն: Երեկ գիշեր Պէյրութէն ստացայ ծրար մը նամակներ՝ հասցէիս դրկուած, իմ բացակայութեանս: Կարդացի Ասատուրիդ նամակը, իր առջիննեկին անշունչ մարմնին առջեւ գրուած... Յնցուեցայ...

Բառ չունիմ Ձեզ մխիթարելու: Խօսքերս եւ բոլոր խօսքերը անզօր կը մնան Ձեզ մխիթարելու:

Երեւակայեցէք, Ձեզի ավելի մօտ կը գտնուիմ *ֆիզիք*ապէս եւ հոգեպէս, այստեղ Յազկերտի⁵⁴ երկրին մէջ: Որքան պիտի ուզէի թռիչք առնել իբրեւ Ստ[եփանոս] Դաշտեցի կամ [Մեսրոպ] Թաղիադեանց,⁵⁵ եւ Ձեր մօտ ըլլալ ու գրկել Ձեր վշտահար հոգիները...:

Երկու օրէն կը վերադառնամ Պէյրութ:

Աշխատանքը կը բուժէ Ձեզ:

Ասատուր, գրէ «Սփիւռք»ին:

Կը սպասեմ Ձեր նամակին:

Համբուրելով Ձեզ՝
Սիմոնեան





ՆԱՄԱԿ 8

[Պեյրութ], 19/11/63

Սիրելի՛ Ասատուր,

Յուսացի որ Յայաստանէն դարձիդ կ'անցնիս Պեյրութէն, մեր տղոց հետ: Չեկար:

Ինձի համար հաճելի եւ իմաստալից պիտի ըլլար քեզ լսել: Մեր տղաքը անոյշ բաներ ըսին քու մասիդ:

Տիկնոջդ, եւ Տեր եւ Տիկին Պետրոս Ալեքսեաններուն⁵⁶ համբոյրներս:

Իրապէս Ձեր քառեակը կարօտցայ: Ու չեմ կրնար հասնիլ Ձեզի:

Կը գրեմ - գիտես թէ շատ կարելոր ու պարտադիր պարագայ չըլլայ՝ չեմ կրնար գրել - հետեւեալները քեզի, զորս **մեծագոյն** կարելորութեամբ կը գործադրես, վասնզի իմ եւ քու շահերէդ վեր՝ հայ ժողովուրդի շահերուն վերաբերող բաներ են, ինչպէս կը նկատես: **Կը վստահիմ** քեզի, զի վստահութեան արժանի ես:

1- Ներփակ երեք նամակները **անձամբ** Վազգէն Կաթ[ողիկոս]ի [Պալճեան]⁵⁷ կը յանձնես: **Այլապէս կը վերադարձնես:** Անձամբ, այսինքն **ձեռքովդ:**

2- Երէկ, օդանաւով «Սփիւռք» դրկեցի հասցեովդ: Չանոնք եւս կը յանձնես Վեհին:

3- Յաշտութիւնը **եղաւ:** - Օր մը կ'իմանաս թէ ինչպէս եւ կ'ուրախանաս:

4- Աշխարհի մեծագոյն աւագակը Յարութիւն Սահակեան, հայ բոլոր գաղութները **կողոպտելէ ետք**, Յնդկաստան պիտի ժամանէ՝ **եղեր:** Չգո՛յշ...: Աշխարհական «քէօր»ն⁵⁸ է:

5- «Քէօր»ին երեսն ալ չնայեցայ: Ինձի դեմ մեծ վատութիւններ ըրած է: Օր մը կը պատմեմ:

6- Վեհին թելադրէ - եթէ ուշ չէ - [Ճավահարլալ] Նեհրուէն⁵⁹ ինդրել **1965**ը փառաւորել եւ նախաձեռնակ ըլլայ հայկ[ական] դատը հետապնդելու: **Կարելոր է:** [Պոկտան] Կեմպարսկին⁶⁰ կը յուսայ, ինչպէս կրնաս նկատել ներփակեալներէն: [Սունիթի Զումար] Չաթըրճին⁶¹ ընելիքներ ունի **քու շնորհիւ...**:

7- Տիկինս, Յովիկը, Մարալը, Վարդանը, Տարօնը եւ Սասիկը (վերջինը **իսկական** Սասունցի Դաւիթը)⁶² կը համբուրեն քեզ





Եւ Նարինէն, Նարինէի հայրն ու մայրը:

8- Ինչո՞ւ չես գրեր: Մոռցա՞ր: Գրէ՛, գրէ՛, գրէ՛...

9- **Արագ** պատասխանէ մեզի:

Համբոյրներով՝

Քոյդ՝

Ս. Սիմոնեան

ՆԱՄԱԿ 9

[Պէյրուս, Մայիս 1965]

Սիրելի Ասատուր,

Ուզեցի տաս էջնոց նամակ մը գրել քեզի եւ պարպուիլ, պատմել, թելադրել, զեղուլ, բացատրել, բացատրուիլ...

Չեղաւ:

Կը գրեմ *օթոյին* մէջ, օդակայանի ճամբուն վրայ, հասցնելու Ազատին [Աճեմեան]:⁶³

Ներողամիտ պիտի ըլլաս, գիտեմ թէ կ'ըլլաս քաջիմաց ըլլալուդ պայմաններուս:

Չմոռցած՝ կը համբուրեմ բալիկդ յանուն... Սասնիկիս, Նարինէն, Տէր եւ Տիկին Ալեքսիս⁶⁴ եւ իրենց հարազատները:

Մարին [Սիմոնեան]⁶⁵ Յովիկը, Մարալը, Վարդանը, Տարօնը եւ Սասնիկը կը համբուրեն Ձեզ:

Ապա դառնամ ի լոյս կամ խաւար:

* * *

Կարելոր կէտեր.-

Առաջին մեծ, մեծ խնդրանք մը.- Տողաշար մեքենայիս շարք մը կտորները պակսեցան: Չիս կը փրկես այս կտորները **գնելով** եւ դրկելով օդանաւով կամ յարմար ճամբորդով մը: Գումարը կը դրկեմ: *Արեւելահայ Գրականութիւնը* կը վաճառես համապատասխան գինով, եւ վար կը դնես:

Ուշադրութեամբ գնէ: Linotype-ի գործարանին հասցէն գիտես (ներբակ կայ):

Մեր (իմ) ունեցածը model 48 է, եւ մեր տողաշարի թիւն է 16203:





Մեր տողաշարը Hauteur américaine է (եւ **ոչ** թէ անգլիական), եւ կը շարեւ economic տողեր. ըստ այնմ կը գնես: Ուշադրութիւն ըրէ: Անպայման ներփակ ցուցակի կտորները կը գնես եւ կը դրկես:

բ) Կալկաթայի պահանջքս ի՞նչպէս կրնամ գանձել, որո՞ւն պէտք է դիմեմ:

գ) *Արեւելահայ Գրականութենէն* 10 օրինակ դրկեցի քեզի: Նուեր օրինակ մը դրկեցի՞: Վերցուր հատ մը: Քանի՞ օրինակ կրնաս վաճառել: - Կարծիքդ գրէ: **Տարածէ՛**:

դ) Գործաւոր ուզեր եւ Վահրամ Մավեանի միջոցաւ: Ի՞նչ տեսակ գործաւոր կ'ուզես եւ **ի՞նչ** կրնաս վճարել: **Գրէ՛**:

ե) Յուսամ հանդիպիլ քեզի եւ Ձեզի: Ե՞րբ, that is the question!

Համբոյրներով՝
Քոյդ՝ Ս. Սիմոնեան

ՆԱՄԱԿ 10

[Պէյրուս], 18/7/65

Սիրելի Ասատուր,

Ողջո՞յն՝ արեւելքէն ու մշտադալար մայրիներէն:

Կը գրեմ օդակայանին մէջ:

Քովդ կու գայ Սեզար Երիքեանը (մեր Յարութիւն Երիքեանի⁶⁶ հօրեղբօրորդին, հարազատ մը):

Սքանչելի նկարագիր եւ սքանչելի մեքենագետ տողաշարի:

Օգտուէ իրմէ՝ Ձեր Հրատարակչականի Տպարանը սարքաւորելու: **Չոհաբերող** տղայ մըն է, անսահման:

Ինծի պէտք եղող կտորները ինք պիտի գնէ: Եթէ պակսի, **օգնէ: Կը հասնիմ**, վստահ եղիր: Այդ գումարէն ալ տուր:

Ամէն կերպ իրեն օգնէ: Շատ գոհ պիտի մնաս իրմէ:

Իր մասին գրած եմ. կ'երեւի չես ստացած, կամ չես պատասխանած:

Կ'ուզեի Եւրոպա (եւ ընդ որս Լոնտոն) հանդիպիլ, չեղա՛ւ ու չեղաւ:

Լիտթիփի այս տեղուան «կլլեցուցի» թէ եւ Ձեր մեքենան նո՞յնիսկ... Լոնտոն յանձնարարած եմ, որպէսզի ընթացք տան.





անարժան ներկայացուցչութիւն մը ունինք հոս...: Այդպէս ըսէ
Linotype-ի գործարանին որ **Պէյրուբէն Ս[իմոն] Ս[իմոնեան]ը յանձ-
նարարած է...**

* * *

Լոյս տեսաւ մը դիր *Արեւելահայ Գրականութեան* մասին,
եւ... գրախօսական մը՝ **քեզմէ**. կը սպասեմ կարծիքիդ եթէ...
կարդացած կամ... թերթատած ես:

Կարօւցայ Ձեզ:
Շարժէ՛:

Ձերմ համբոյրներ
Ձեր բոլորին
Քոյդ՝
Ս. Սիմոնեան

ՆԱՄԱԿ 11

[Պէյրուբ], 24/2/[19]67

Սիրելի՛ Ասատուր,
Օդանաւով կը դրկեմ այս թիւը. յանձնէ զայն Փրոֆ. [Տէյվիտ
Մարշըլ] Լանկի,⁶⁷ իմ կողմէ զինք ողջունելով սրտագին:

Գրէ՛...
Ե՞րբ իրար պիտի տեսնենք:

Բակունցը⁶⁸ (Ակսել) իր այդ պատմութիւն մէջ (Ծիրանի փո-
ղը) կ'ըսէ. **«Երէկ տուման էր, էսօր պարզ ա»...** Պիտի պարզուի
շա՛տ բան...

«Ե՞րբ պիտի լուսնայ գիշեր դարի պէս» - կ'ըսէ հայ ժողովր-
դական առածը...

Սուրբին մէջ չմնաս...

Մեր ժողովուրդը խաբելը գիտութենէ եւ խճովտանքէ հեռու
մնալ պիտի ըլլայ...

Եզնիկեան՝ հրահանգով՝ «Յորժամ զաներեւութեն... պա՛րտ
է սրբել զբիժ աչացն»...:

Հերթական ու հերթապահ «բիժ»արարներէն հեռու կենալ...:
Նեղոսի պէս յորդած ենք...:

Բացառիկի մէջ տեսա՞ր Ձեր ճշդումը «Նայիրի»ի հերթական





«արարք»ներուն համար. հասա՞ւ այդ թիւը: Ողջունէ եւ համբուրէ Նարինէն, դուստրերդ գեղանի, մե՛ծ հայրիկն ու մայրիկը եւ արուարձանեայ եղողները:

Սիրով՝ քոյդ՝
Ս. Սիմոնեան

ՆԱՄԱԿ 12

[Պէյրութ, 1967]

Շատ սիրելի Ասատուր Կիւզելեան,
Ողջո՛յն:

Գիտեմ թէ երկար ատենէ ի վեր իրարու չենք գրած եւ իրար չենք տեսած: Ըսելիք շատ բան ունինք: Չըսե՞նք: Նախ՝

Սրտագին ողջոյններ եւ համբոյրներ Ձերիններուն: Ապա՝

Կը գրեմ օգտակար ըլլալու օրհորդ Անի Մանուկեանին,⁶⁹ որ Անգլիա կու գայ ուսանելու: Շրջանաւարտ Դարուհիէն: Զ.Բ.Ը.Մ.ի եւ Թէքէեանի անդամ (այս վերջին բաները կ'ըսեմ որպէսզի աւելի երագահաս ըլլաս):

Ամէն կերպ արժանի է օժանդակութեան: Աշխատասեր, ազգասեր, եռանդուն, ազնիւ նկարագրով:

Սիրելի՛ Ասատուր, ի՞նչ եղաւ «Արեգակ»ը. չկրցա՞ք հրատարակել: Ներելի չէր ինձմէ աւելի տկար ըլլալ քեզ եւ Պրն. [Յայկ] Գալուստեանի:⁷⁰

Խոր յարգանք մը կը ներգգամ Պրն. Յայկ Գալուստեանի հանդէպ, հեռուն լաւ մարդ կ'երեւայ: Ան եւս կրնայ օգտակար ըլլալ Օր. Անիին. լծե՛ գործի զինք:

Կարօտցայ քեզ, Նարինէն, դուստրերդ. հապա հայրի՞կդ, մայրի՞կդ եւ աներձագդ:

Ի՞նչ, ի՞նչ գրեմ ուրիշ:

Համբուրելով քեզ եւ Ձերինները՝
Ս. Սիմոնեան

[Յ.Գ.] Սիրելի՛ Ասատուր,

Կիւլպէնկեան *Ֆոնտի* հետ Ձեր այն կողմերէն կարգադրութիւն մը ըրէ Օր. Մանուկեանին համար, Պրն. Գալուստեանի միջոցաւ:



ՆԱՄԱԿ 13

Պեյրութ, 31 Մայիսի 1968

Շատ սիրելի Ասատուր,

Ողջո՛յն:

Ուրկե՛ սկսիմ եւ ո՛ւր վերջացնեմ:

Նամակներ չեմ գրած, նամակներուդ չեմ պատասխանած, որովհետեւ գրելիքները եւ պարպուելիք մտածումներն ու զգացումները այնքան շատ էին ու դիզուած, որ գիրը վերցնել չէր կարող... Այլապէս ալ չեմ հաւատար գիրին... Յուսացի որ օր մը կարելի կ'ըլլայ իրարու հանդիպիլ եւ խօսիլ... Չեղա՛ւ, ինչպէս չեղան ուրիշ լաւ բաներ: Մխիթարուեցայ Եր[ուանդ] Պարսումեանի հանդիպումներով:

Հիմա մեծ ու սքանչելի (ածականները կը պատկանին «Խոր-հուրդ Խորին») առիթ մը կը բանայ քեզի գրելու երկար ու սրտբաց ծորակը... Այլապէս ալ մեծ պատճառ ունէի քեզի գրելու. մեծ մանչս՝ Յովիկը՝ Օգոստոսի սկիզբը կը մեկնի Լոնտոն՝ ուսանելու...

Ուրեմն երկու «մանչերս» առիթ ու պատճառ են քեզի գրելու:

Յակոբ Կիւլոյեանը⁷¹ քեզի պէս հարազատ մըն է ինծի. շատ բաներով կը նմանի քեզի: Համակ սիրտ տղայ մըն է: Կ'ընես եղբայրական ընդունելութիւն՝ քեզի պէս թուիս, հայրենապաշտ (մանաւանդ ներկայ Հայաստանին սիրտով կապուած), ասմունք ընող, կրակոտ, լաւատես, ընկերապաշտ տղայ մը: Մնացեալը կը լրացնես անձնական շփումներէն ետք Լոնտոնի մէջ, անոր մշուշներուն ընդմէջէն:

Ապա միւս եւ անառակ մանչուս մասին, որ կը կոչուի Յովիկ - Դրաստամատ (ոչ... Դրոյէն,⁷² այլ Փաւստոսէն):⁷³

Կու գայ Լոնտոն՝ վճռական, առանց նկատի ունենալու հորը երկու պարագաները՝ 1) **ծերութի՛ւն**, որ իր *ֆիզիք* աջակցութեան պէտք ունի, 2) հորը *պրոլետարականութիւնը*, որ կրնայ ճգմուիլ անգլիական *կապիտալիստական* պայմաններէն... Դուն էիր կարծեմ *տայա՛ն*, *Ասլանը*մը առակապատմողը...

Ուրեմն կը սերտես ուսանողական բնակարանի հարցը: Պիտի յաճախէ այս դպրոցը, զոր լրացնելէ ետք «Սեւան»ը պիտի օժտէ գերարդիական *տեխնիկով*, եթէ... անգլիուհիները այլ *տեխնիկի* մը ճանկերը չխրեն ջուրը նուազիլ սկսող «Սեւան»ին



- Սիմոնեանին, զոր էր երբեմն կը ճանչնայիր:

London College of Printing

Elephant and Castle St.

London, S.E.1. - England.

Մուտքի դրամը եւ այլ բաներ ղրկուեր եւ արդէն:

Այս թաղը մօտ է ձեզի.- Գիշերօթի՞կ թէ *փանսիոնի* մը մէջ մնալու է:

Կիւլոյեանին հետ կը գրես:

Սկզբունքս է բեռ չըլլալ եւ չընել. մեծ երկիւղներ չապրիս: Չիս միակ մտահոգողը բարոյական կլիման է. Նոյի ագռաւ մը չդռնայ... Հոգեւոր հսկողութիւնը **միայն** քեզի կը վստահիմ. պարզապէս ըսեմ որ քու լոնտոնաբնակութիւնդ դէր ունի Յովի-կը Լոնտոն ղրկելուս մէջ, այլապէս ես՝ հէ՛ք յիմարս ու միամիտս, ուխտեր էի մինչեւ մահ **հինգ** գաւակներես ոչ մէկը հեռացնել քովես եւ միմիայն... Սասունցիներու հետ պսակել: «Սարսափ մեծ»ը հիմակուրնէ զիս թող տենդահարէ՞...

Գրէ՛, սիրելի Ասատուր, հակառակ այլ տրամադրութեամբ եւ *իւմուրով* սկսելուս, աչքերս կը թրջուին այս վայրկեանին...

Մնացեալը կը ձգեմ քեզի...:

* * *

Ի՞նչպէս է Նարինէն. համբուրէ իմ կողմես: Հապա սա աղջնակներ՞ոդ, որոնց մեծ գովքը կ'ընէր բախտաւոր Պարսումեանը... Համբուրէ իմ կողմես եւ Սասունի. Սասունը երկրամաս չէ, այլ հինգերորդ... մա՛նչս: Տեսնե՛ս...

Տիկնոջդ անմոռանալի հայրն ու մայրը եւ մանչը համբուրէ ու ողջունէ:

Սիրելի՛ Նարինէ, ողջոյն եւ համբոյր քեզ, մեծ Աֆինքսէն՝⁷⁴ Սիմոն:

* * *

Մարդերէն ետք կու գան մեքենաները, թերեւս երկուքին միջեւ՝ մարդամեքենաները...

Ուրեմն լսէ, կարեւորութեամբ, հետեւեալ հեքիաթը.- Կար ու չկար, մարդ մը կար, անունը Սիմոն Սիմոնեան. այս մարդը *լի-նորթիփ* մըն ալ ուներ: *Լիւնթիփը* կը շինէին Լոնտոնի մէջ... Կտորները դժուար էր գտնել Պէյրութի մէջ, փիւնիկեցի ներկա-





յացուցիչին **ահաւոր** ազահուրեան ու նորեր ծախելու նենգութեան պատճառով...

Յեքիաթին շարունակութիւնը հետեւեալն է.- Իմ «Սեւան»ի լիտոթիփին վրայ կը պակսին հետեւեալ չորս կտորները, որոնց նմոյշները կը ներփակեմ: Ըստ նմոյշներուն՝ եւ անոնց վրայ նշանակուած քանակութեան՝ կը գնես. դրամը կ'առնես: **Կարելոր** պարագայ.- *Լիտոթիփի* գործարանին վաճառորդին կ'ըսես՝ **հայկական լիտոթիփի** համար եւ ասոնք. **հայկական չափերը տարբեր եւ անգլիականէն: Հայկականը կարծեմ նոյն է ամերիկեանին հետ...:** Միայն թէ մի՛ ըսեր թէ **Պեյրուրի** համար կը գնես, այլ՝ Լոնտոնի, որովհետեւ հայկական չափի վրայ բան մը կ'ուզես շարել տալ... Յարմարցուր որ **անպայման գնես: Լիտոթիփի** գործարանին հասցէն է.

Linotype and Machinery Limited

Head office: Linotype House, 21 John St.

London, W.C.1: Tel. Chancery 6065

Telephone: ALTRINCHAM 2256

Works: ALTRINCHAM, CHESHI

Անգլիա տպագրիչ բարեկամի մը ձեռքով ալ կրնաս ընել, **անձամբ** նախընտրելի էր թերեւս.- Հայկական կամ Ամերիկեան ըլլալը կարելոր է միայն երկար կտորին համար (**liner**):

Ուրի՞շ.- Պետք ունէի քու... պէյրուրեանակութեանդ... Զու շատ բախտաւորութիւնդ եղաւ քու ստեղծագործական դժբախտութիւնդ, եւ ապա... Իմ: Բեզի հետ - «ամբոխները խելագարուած»ներու պէս - երկինքները վար կրնայինք իջեցնել...

Չեղա՛ւ...

Ի վերջոյ «Սփիւռք»ի գանձելիները.-

Ներփակ՝ *քարտերը*:

1- Կը գանձես անոնցմէ, որ կը վճարեն:

2- Կը ջնջես «ջնջելիները»:

3- Կը գտես:

4- Նոր բաժանորդներ եւս կ'արձանագրես:

Օր. Անիին [Մանուկեան] հետ խորհրդակցութիւն մը եւս ունեցիր:

Օրակայան կը վազեմ հասցնելու... այս նամակը:

Բայց կարելորագոյնը.-

Այս աշխարհի վրայ դեռ Պրն. [Խաչիկ] Մթրըպեանի պէս մարդ կա՞յ...





Ուրեմն շարունակենք մնալ մարդ եւ հայ...
 Կ'արժէ մէկ հոգիի համար՝ չայրել Նիսուէն:⁷⁵
 Այս տողերը իրեն կարդա եւ մեկնաբանէ:
 Ահա թէ ինչո՛ւ երեք ամիսներէ ի վեր **լռեցի** այդ մասին. որով-
 հետեւ իր *ժեստը* շատ անելի մեծ էր քան ստանալիքս:
 Զամբուրելով քեզ՝
 Ս. Սիմոնեան

ՆԱՄԱԿ 14

[Պէյրուս], 16/8/[19]68

Ասատու՛ր,
 Ողջո՛յն:

Դաւիթ Էվերեկլեանը⁷⁶ սքանչելի մարդ մըն է եւ բարեկամ
 «Սփիւռք»ին:

Ինչ որ հին օրերուդ դուն պիտի ընէիր, ինք յանձն առաւ ընել:
 Իրեն դիւրութիւններ եւ ճիշդ կողմնորոշումներ տուր:

Ողջունէ Ձերինները...

Փոքրիկ տուփը ճուտիկներուդ տուր՝ հեռաւոր մէկը յիշելու:

Յովիկը [Սիմոնեան] Սեպտեմբերի սկիզբը հոն կ'ըլլայ:

Ե[րուանդ] Պարսումեանը համբուրէ եւ **միասին** նամակ մը
 գրեցէք երկուքդ...

Գրէ՛...

Ամուլ դարձար, դուն որ Վանատուրի⁷⁷ որդին էիր...

«Ե՞րբ պիտի լուսնայ գիշեր՝ դարի պէս» - կ'երգեմ...

Ե՞րբ իրար պիտի տեսնենք:

Նարինէն ողջունէ՛ յաւելեալ:

Նոյնպէս իր պապան:

Սիրով՝ քոյդ՝
 Ս. Սիմոնեան





ՆԱՄԱԿ 15

ՊԵՂՐՈՒԹ, 27/4/1969

Շա՛տ սիրելի Ասատուր,

Ողջո՛յն:

Քեզի կը դրկեմ *Լեռնականներու Վերջալոյսը...*

Անթիլիաս, 1948ին սկսած էի տպագրութեան. կը յիշե՞ս...
[Յակոբ] Օշականի⁷⁸ ստիպումով եւ գրելիք յառաջաբանով: 21 տարի ետք լոյս կը տեսնէ...

Դժգոհ չեմ այս յապաղումէն. այն օրերուն, երբ Վեհանոյշ Թեքեանը լոյս կը տեսնէր, իմ գիրքս մամուլի տակ կը մտնէր. 21 տարի ետք, այդ օրերու Նորածինը բանաստեղծուհի եղաւ հատորով մը: Ուրեմն գիրքիս տպագրութիւնը Վեհանոյշի եւ Պետրոս Դուրեանի⁷⁹ այս աշխարհի կեանքին չափ տեւեց...

Կարդա՛...

Կրնաս արտայայտուիլ:

Քիչ բացառութիւններէ դուրս, այսօր չեմ հաւատար հայ արժեւորող միտքին (քննադատութեան): Կը մնայ որ մենք՝ գրեք ու անցնինք:

Նարինէն եւ աղջնակներդ համբուրէ կաթոգին՝ յանուն Սիմոնեանի եւ իր զարմին... դիւցազուն: Տարօնի եւ Սասունի նկարներէն կը դրկեմ Յովիկին. իրմէ կրնաս... առնել:

Համբուրելով քեզ կրկին՝
Սիմոնեան

[Յ.Գ.] Համբոյրներ Պրն. Պետրոս Ալեքսիին, իր Տիկնոջ եւ մանչուն ու իր զարմին:

Սիմոն

Գրէ՛

ա.- **Յովիկի** մասին: Կ՛ուզեմ **իր մասին քու կարծիքդ ունենալ:**

բ.- **«Սփիւռք»**ին... եթէ յիմար մտածումներ չունիս եւ զիս չճանչնալու մեղքին մէջ չես:





ՆԱՄԱԿ 16

ՊԵՂՐՈՒԹ, 5/6/1969

Շատ սիրելի Ասատուր,
Ողջո՛յն:

Ներփակ չէք ընդ հասցեովդ, որպեսզի **շուտով** հասցնես Յովհիկին: Հեռ[ածայն]ի թիւն է՝ ... չգտայ: Գտի՛ր *c/o* Վիկտոր Չամիչեան,⁸⁰ եթէ չունիս:

Կարօսցայ քե՛զ եւ... Յովհիկը: Վստահ եմ որ կը հսկես, առանց զգացնելու եւ առանց յայտնելու իմ թելադրած ըլլալս:

Սրտագին համբոյրներ ձերոնց, իսկ տաք համբոյրներ աղջնակներուն՝ արեւելքի հուր աչուկներով:

Չգրեցիր...

Ես եւս չկրցի, ծանրացած ըլլալով հոգերով եւ գործերով:

Գրէ՛:

Գրէ գէթ գիրքիս մասին:

Երուանդ Պարսումեանը համբուրէ:

Թող գրէ:

Ձերմ սիրով՝
քոյդ՝
Ս. Սիմոնեան

ՆԱՄԱԿ 17

ՊԵՂՐՈՒԹ, 10/11/1969

Շատ սիրելի Ասատուր,
Ողջո՛յն:

Ներփակ չէք՝ Յովհիկին կը յանձնես, կարծեմ 30ը քեզի պիտի յանձնէ. շնորհակալութիւն:

Չեմ գիտեր թէ ինչո՛ւ այս տարի կանոնաւոր չի գրեր...

Թելադրէ որ հերթական սամակներ գրէ՛: Յետոյ հասցէ եւ հեռածայնի թիւ դրկէ մեզի:

Կը խնդրեմ որ իր ներկայ կացութեան մասին գրես ինծի -
1) ընկերային շրջանակը, 2) ընկերները, 3) դասերը **ի՛նչ** վիճակ կը ներկայացնեն:





Շատ բաներէ հիասթափ եղած եմ, եւ չեմ ուզեր որ ինքն ալ գիս հիասթափ ընէ: Բնական է ոչինչ կ'ըսես իրեն. հայրական մտահոգութիւն է: Կ'ընեմ անկարելին...: [Վաղարշակ] Նորեմբեր⁸¹ հիմա նամակ մը առի, ուր կ'ըսէ. «Գերմաւը⁸² ո՛րը Լոնտոնը ո՛րը» Գերմաւը հորս գիւղին անունն է: Սքանչելի նամակ մըն է... օր մը կը տեսնես:

Դուն, Նարինէն, Երկու ձագուկներդ, Պրն. Փիթըր Ալեքսին, Տիկինը, մանչը եւ իւրայինները ողջունէ...

Յովիկին ականջէն քաշէ եւ ըսէ **նամակ գրէ** եւ հասցէդ ու հեռ[ածայն]ի թիւդ դրկէ հորդ: Վստահ եմ, որ եղբայրական ու... որդիական պարտականութիւն մը կ'ընես:

Քեզ համբուրելով եւ յուսալով որ կրնամ հանդիպիլ քեզի՝
Քոյդ՝
Ս. Սիմոնեան

[Յ.Գ.] Ինչո՞ւ չես գրեր. «չգրելը» իմ մենաշնորհս է լառ...
Ս. Ս.

Սա Երուանդը (Պարսումեանը) ինչո՞ւ չի գրեր. Երկրորդ...
Յովիկ մըն ալ ինքը եղած է. անոր ալ... «ականջէն» քաշէ:
Ս.

ՆԱՄԱԿ 18

Պէյրուս, 30/4/1970

Շատ սիրելի Ասատուր,
Ողջոյն:
Ի պատասխան 21/4/70 թուակիր նամակիդ՝ կը ներկայացնեմ հետեւեալ մանրամասնութիւնները.
1- Ուղղակի Լոնտոն-Պէյրուս նաւ չկայ.- կայ՝ Մարսէյլ-Պէյրուս, Պէյրուս-Մարսէյլ, երթուդարձ՝ 300 լ.ո.:
2- Օդանաւով՝ **ոչ-ուսանողի** (Յովիկը ուսանողի զեղջ առած է)
ա- Մէկ ամսուան համար՝ 575 լ.ո.
բ- Մէկ տարուան համար՝ 625 լ.ո.
Թե՛ պուկարականը (օր մը էջք Սոֆիա) եւ թե՛ Alia (Յորդա-





նանեան) նոյն գիւրը ունին՝ 625 լ.ն. որ $[625 : 7.85 = ?]$ 80 սթեր-
լին կ'ընէ:

Տոմար Telex-ով ուղղակի կրնան դրկել, կամ ինծի կու տան,
եւ ես քեզի կը դրկեմ:

Դրամը կը վճարես Յովիկին:

Օր. Սալբիին [Աճեմեան]⁸³ հետ պատասխանէ:

Յեռաձայնի թիւդ ալ դրկէ:

Ուզեցի քեզի պատասխանել Օր. Սալբիին հետ:

Եթէ ուսանողի թուղթ մը դրկես, **աւելի** գեղչ կրնաս ստանալ
– 560 լ.ն.:

Նամակս զուտ պատասխան է ճամբորդական հարցիդ:

Ուրեմն՝ ողջոյն **Ձերոնց**, մեծ սրտով:

Զգացուած եմ նախորդ նամակէդ:

Համբուրելով եւ քեզի անհամբեր սպասելով՝
Ս. Սիմոնեան

[Յ.Գ.] Մավեանը [Վահրամ] հոս է. ստացած է նամակդ via Lisbon:
Յովիկը թող նամակ գրէ:

ՆԱՄԱԿ 19

[Պէյրուս], 3/10/1970

Շատ սիրելի Ասատուր,

Ողջո՛յն,

Այսօր միայն առիթ եւ հարկադրութիւն կ'ունենամ քեզի գրելու:

Ճիշդ երեք ամիս առաջ ստացայ նամակդ:

Գոհ մնացի եւ **յուսադրուեցայ**:

Ո՞ւր մնաց - արդիւնքը:

Գրէ՛: Կարելոր է:

* * *

Ապա դառնամ «ի լոյս աստուածգիտութեան», այսինքն՝
սրտի բաներու:

Խոր շնորհակալութիւն քեզի, Վիվիին, Տէր եւ Տիկին Ալեք-
սիին՝ Յովիկի հանդէպ Ձեր ցուցաբերած հարազատի ազնուու-
թեան համար: Զիչ բառեր՝ բայց ովկիանոսային երախտագի-
տութիւն իմ, Մարիին եւ Յովիկի կողմէ: Յովիկը կը քաշուի գրե-





լու, կ'երեւի թէ բառերը անզօր կը գտնէ զգացածը անոնցմով բաբանահարելու...

Հասկցէք զինք:

Ինծի սկսաւ օգնել Յովիկը. իր ուզած կատարելութեամբ տպարան մը մէջտեղ բերելու համար ինծի պէս մտրուկը փիղ մը ծնելու է...:

Քաջութի՛ն... ինծի, 55էն ետք:

Ամէն ինչ լաւ կ'ընթանայ: Յարաբերութիւնները այնտեղի հետ բարելաւուիլ սկսան: Կը գրեմ առանձինս քեզի:

Իմ կողմէ համբուրէ Տէր եւ Տիկին Ալեքսին, Վիվին, երկու աղջնակներդ եւ դուն... զքեզ:

Ձերմ սիրով, կարօտով եւ համբուրի՛ւ՝

Ս. Սիմոնեան

Յ.Գ. Գ[եորգ] Պարտագճեանը⁸⁴ շատ լաւ տղայ է. լաւ կը ճանչնաս զինք, կարծեմ: Մինակն է որ պիտի ընէ այն ինչ որ ես ու դուն ըրած ըլլալու էինք եւ չկրցանք ընել:

Ս.

ՆԱՄԱԿ 20

Պէյրուս, 3 Հոկտ[եմբեր]ի 1970

Շատ սիրելի Ասատուր,
Ողջո՛յն,

Գործերս (որոնց դուն միայն ծանօթ ես) եւ մանաւանդ **չլրանալիք** բառարանը զիս հոր Վիրապին⁸⁵ ստորերկրեայ յարկը պահեցին: Քանի մը օրէն առաջին հատորը (Ա-Կ) կը լրանայ: Կարճ ատենի մը համար շունչ կը քաշեմ:

Գ[եորգ] Պարտագճեանի մեկնումը առիթ եւ հարկադրութիւն կ'ըլլայ քեզի գրելու:

Ատենին ստացայ նամակդ: Գոհ մնացի եւ **յուսադրուեցայ**: Երուանդ Պարսումեանն ալ կցկտուր բաներ մը ըսաւ՝ յատկապէս [Յովհաննէս] Չալըգեանի⁸⁶ առընչութեամբ:

9 Յուլիս 1970 թուակիր նամակիդ մէջ գրեր էիր. «Հաւանաբար յառաջիկայ Ուրբաթ հետը տեսակցութիւն մը ունենամ ([Խաչիկ] Մթորպեանի): Արդիւնքի մասին կը գրեմ քեզի»: Տեսուեցա՞ր...





թէ մոռցար: Կ'ուզեմ իմանալ: Ես գրե՞մ: Կը սպասեմ լսել քեզմէ:

Այս բառարանը, որ ինձի արժեց մինչեւ հիմա 45000 լ. ո., կարելի է իր ծնողաց յիշատակին նուիրել, եւ անկէ 2000 օրինակ նուիրել բոլոր հայ դպրոցներուն (թիւով 650 հատ արտասահմանի մէջ), հայ գրողներուն, հայ ուսուցիչներուն, գրադարաններուն, եւ 500-1000 հատոր՝ Հայաստանի:

Յարաբերութիւնները բարելաման ընթացքի մէջ են: Թերեւս երկու ամիսէն հրաւիրեն ըստ Կարիկի [Պասմաճեան]⁸⁷ նամակին:

Այս նամակը չուզեցի [Գեորգ] Պարտազճեանին հետ ղրկել. կը ղրկեմ *փոստով*: Ուստի, անելի յստակ, հարցնեմ.-

[Խաչիկ] Մթըրպեանի հետ տեսակցութեանդ արդիւնքը կ'ուզեմ իմանալ: Օգտակար կը գտնե՞ս Անգլիա այցա*:

Ջերմ բարեւներ Տէր եւ Տիկին Ալեքսիին, Վիվիին եւ սրտագին պաշիկներ աղջնակներուդ՝

Համբուրիւ՝
Ս. Սիմոնեան

[Յ.Գ.] Լրացուցիչ Գ. Պարտազճեանի հետ ղրկուած նամակին:
Ողջո՛յն՝ բոլորին: Ինչո՞ւ չես գրեր:

ՆԱՄԱԿ 21

Պէյրութ, 4/10/1970

Թանկագին Վիվի,

Ողջո՛յն եւ համբոյր քեզի եւ Կարինէին ու Արմինէին:⁸⁸

Սիմոն
Մ[արի] Սիմոնեան
Սասուն**
Ս. Սիմոնեան

* Բոլոր թաւ գիրերը, բառերը եւ նախադասութիւնները ընդգծուած են Սիմոն Սիմոնեանի բնագիր նամակներուն մէջ:

** Սասունի ստորագրութեան մօտ Սիմոն Սիմոնեան գրած է «վաւերական է» ու կրկին ստորագրած է «Ս. Սիմոնեան» վկայելու համար Սասունի ստորագրութեան վաւերականութիւնը: Սասուն ութ տարեկան էր այս թուականին:



ՆԱՄԱԿ 22

[Պեյրութ], 4/12/1970

Շատ սիրելի Ասատուր,

Ողջո՛յն: Ստացայ նամակդ: Շատ գոհ մնացի:

Այս Կիրակի պիտի գրեմ թե՛ Պրն. Յովհ[աննես] Չալըգեանին եւ թե՛ Խ[աչիկ] Մթրըպեանին, հանդարտ եւ **ազատ** ժամանակի մը մեջ:

Կարելոր.- Սալբիին [Աճեմեան] հետ **սեւագրութիւն** մը դրկէ այս երկուքին (Չալըգեանին եւ Մթրըպեանին) գրուելիք նամակներուն: **Անպայման**: Չմոռնա՛ս:

Ողջունե՛ Չալըգեանը, [Երուանդ] Պարսումեանը եւ **Ձերիկները** լրիւ:

Նկարիչ Յովհաննես Ասատուրեանի⁸⁹ կինն ու հրաշալի աղջիկը հոս են. հրաւիրեցինք եւ միասին եղանք. **կենացդ** խմեցինք: Սքանչելի հայուհի մը, նկարիչ Յովհաննեսին **լաւագոյն** իղանկարը...

Ձերմ համբոյրներով՝

Քոյդ՝

Ս. Սիմոնեան

Յ.Գ. Սալբիին հասցնելու համար արագ եւ **լակոնական** գրել ստիպուեցայ. օդանաւը 2 ժամ պիտի ուշանայ. ուստի՝ վերստին յաւելուած: **Սեւագրութիւնը անպայման** դրկէ. լրջօրէն պատրաստէ. դուն լաւագոյնս երկուքին հոգեբանութիւնը գիտես: Ես իմ ոճիս կը վերածեմ: Յետոյ աշխատակցէ - **լոնտոնահայ դեմքեր** շարք մը - լուսանկարներով, *իւմուրով*, ցայտքերով (այդ շարքին առաջին երկուքը կ'ըլլան Չալըգեանն ու Մթրըպեանը):

Գրե՛:

Քոյդ՝ Ս.Ս.

[Յ.Գ.] Ողջոյն պատուական [Պետրոս] Ալեքսիին, իր տիկնոջ (առողջութեան ջե՛րմ մաղթանքներով), որդւոյն, հարսին եւ զաւակաց, Նարինէին եւ քաղցրագոյն դստերց՝

Սիմոն



ՆԱՄԱԿ 23

ՊԵՂՈՒԹ, 9/3/1971

Շատ սիրելի Ասատուր,

Ողջոյն:

Պատահեցաւ արկածը, որովհետեւ ուզեց հայ գրականութեան եւ... «Սեւան»ին օգտակար ըլլալ:

Ուրիշ բացատրութիւն չունիմ:

Աւելցուր ասոր վրայ՝ Անգլիոյ թղթատարական պաշտօնէտներուն գործադուլը, որ պատճառ եղաւ **ճիշդ 40 օր** քեզի չգրելու: Հիմա, Սալբիին [Աճեմեան] անակնկալ մեկնումէն օգտուելով, կը գրեմ.- նամակները տունն եւ, քեզի ուղղուած:

1) Ինչո՞ւ դուն եւ Երուանդը [Պարսումեան] երբեք ձեռով մը չգրեցիք: Թղթակցութիւն կամ սեպիական արտայայտութիւն մեկնողին համար:

Գէթ զիս հետաքրքրող մասը:

Խնդրեմ Սալբիին հետ դրկէ քանի մը տող:

2) Գրե՞մ [Խաչիկ] Մթորպեանին. դուն պիտի կարենա՞ս մեկնողը փոխարինել:

Ինքնավստահ էիր:

Անպայման պետք է իրագործես: Մինչեւ 5 օր քեզի դրկած կ'ըլլամ: Մթորպեանին ուղղակի՞ դրկեմ, թէ **քու միջոցաւ**.- Եթէ ուղղակի, իր հասցեն դրկէ Սալբիին հետ:

Նորութիւններ.-

1) Կարիկը [Պասմաճեան] հոս է. իր գրքոյկը կը տպենք:

2) Մայիսին հրաւիրուած եմ Հայաստանի գրողներու 2. համագումարին, ըստ [Ստեփան] Ալաճաճեանի⁹⁰ եւ Կարիկի: Պիտի երթամ: (**Չյայտնես ո՛չ ոքի**): Մեկնի՞մ թէ ոչ: Կու գա՞ս դուն ալ:

3) Եղբայրդ չեկաւ ու չհանդիպեցաւ ինձի. ինչո՞ւ.- 35 լ.ո. ունիք այդ հաշուէն մօտս, **աւելցած**:

Համբուրէ Ձերիները եւ թող ներեն այս ծրագրային նամակի համար:

Համբուրելով քեզ եւս՝

Ս. Սիմոնեան:

[Յ.Գ.] Սիրելի Ասատուր, այս գիշեր Երուանդին հասցուր իր ծրարը, որպէսզի սրբագրէ եւ Սալբին հետը բերէ:

Կարելոր է: **Գտի՛ր**:

Ս.





ՆԱՄԱԿ 24

Պաղտատ, 6 Մայիսի 1971

Ողջո՛յն քեզի ա՛յն Պաղտատէն, որ երգուած է մեր կռունկէն՝
խապրիկ չունեցող կռունկէն...

Ողջո՛յն եւ Ձերոնց:

Նաեւ՝ Յամազասպ Մարթինէն,⁹¹ որուն հետ եղայ Թեհրան...

Քուէյթէն Թեհրան, Թեհրանէն՝ Պաղտատ, իսկ քիչ ետք՝ Պէյ-
րութ, 12 օր փախուստէ մը ետք իմ հոր Վիրապէն:

Ի վերջոյ հարցը կ'երեւի լրջութեամբ պետք է ներկայացնել.
Երուանդը [Պարսումեան] խօսած պետք է ըլլայ քեզի: Վերադար-
ձիս կը գրեմ երկար: Յամազասպ Մարթինը տեսայ ի Թեհրան, կը
բարեւէ Ձեզի:

Գրէ՛, Ասատուր...

Թերեւս մեկնիմ, գրողներու 2. Յամագումարին, եթէ... վերջին
ժամուն «խաղ» մը սարքուած չըլլայ: Ոչի՛նչ... կը մնամ ես ինծի պէս:

Համբուրտելով քեզ՝

Ս. Սիմոնեան

ՆԱՄԱԿ 25

Պէյրութ, 9/6/1971

Շատ սիրելի Ասատուր,

Ողջոյն: Կարօտցա՛յ:

Վերջապէս կրցի **գրել** այդ նամակը: Ներփակ՝ կը գտնես
պատճենը (ե-ով), copy-ն: Դուն ու Երուանդը [Պարսումեան] կը
կարդաք: Մայր օրինակը իրեն դրկեցի:

Ալ կը մնայ որ դուն ու Երուանդը փոխարինէք Յովհ[աննէս] Չա-
լըգեանը աւելի բարձր հասկացողութեամբ: Կը գրես արդիւնքը:

Նամակներուս չես պատասխաներ. այդ միակ մասնագի-
տութիւնն ալ (չպատասխանել նամակներու) կ'երեւի թէ ձեռքես
պիտի առնես...

Գրէ՛, ե՛ւ նամակ ե՛ւ գրութիւն: Գրելիք բաներ կան, բայց յոգ-
նեցայ: Ձերմագոյն բարեւներ Ձերոնց՝

Քոյդ՝

Ս. Սիմոնեան





[3.Գ.] Երուանդին հեռաձայնէ՝. ինչո՞ւ լուռ է:

Օսնիկ Սարգիսեանը գրեց քեզի. աղջիկը եւ փեսան Լոնտոնէն պիտի անցնին: Ողջունէ իմ ալ կողմէս բժշկապետը, որ շատ լաւ տղայ մըն է, եւ Սոնան:

Իսկ երբ այս տողերը կարդաս Սալբին [Աճեմեան] արդէն Ամերիկա անցած կ'ըլլայ:

ՆԱՄԱԿ 26

Պէյրուֆ, 14/6/1971

Շատ սիրելի Ասատուր,
Ողջո՛յն:

Կը հաստատեմ քեզի եւ Երուանդ Պարսումեանի ուղղած նամակներս:

Պիտի աւելցնեմ միայն երկու բաներ. ա) Պրն. Խաչիկ (Քէյ) Մթրըպեանի հասցեն ճիշդ է. գրեր էի եւ ղրկեր հետեւեալ հասցեով.

Mr. Kaye Mtrebian
26, Corston Rd.
London W.5
England

(Ասիկա առի Կաթողիկոսարանէն, c/o Եղիշէ [Վարդերեսեան]⁹²): Երուանդ Պարսումեանը տուած է նաեւ այս հասցեն, իր կողմէ թերթ սուիրելու ատեն.

Mr. K. Mtrebian
12 Blanford Road
Chiswish
London W.4-ENGLAND

Ասիկա տարբեր մէկն է եւ ոչ Խաչիկը, Kaye Mtrebian, կարծեմ: Գրեցէ՛ք, այլեւս:

Երկրորդ պարագայ.-

Եթէ կարելոր կամ անհրաժեշտ դատէք, կրնամ գալ Լոնտոն: Գրեցէք այս մասին եւս:

Սրտագին բարեւներ Ձերոնց, Երուանդին եւ քեզի համբոյրներ՝
Ս. Սիմոնեան

[3.Գ.] Վստահ եմ որ Դուն ու Երուանդը կ'իրականացնէք այս մեծ երազը - Արեւմտահայ Գրականութեան ողնայարը շտկելով եւ աւիշաւորելով:





Շեշտեցէք՝ «**Հանգուցեալ Յովհաննէս Չալըգեանը փափաքած էր որ Ձեզի ուղղուէր այս սամակը:** Ինք համոզուած էր որ Դուք կը ստանձնէք մեծ ու պատուաբեր այս մեկենասութիւնը»:
Ս.Ս.

Պէյրուս, 7 Յունիս 1971

Մեծարգոյ Պրն. Խ[աչիկ] Մթորպեան,
Լոնտոն,

Այս սամակը, Ձեզի ուղղուած, գրուած պիտի ըլլար բաւական առաջ, եւ զայն անձամբ Ձեզի պիտի յանձնէր Պրն. Յովհաննէս Չալըգեանը, մեր եւ Ձեր հանգուցեալ բարեկամը:

Անոր ներշնչած քաջութեամբ ու վստահութեամբ պիտի գրէինք Ձեզի եւ ներկայացնէինք ներկայ ծրագիրը. բայց ըսուած է՝ «Խորհուրդ մարդկան, Կամք՝ Աստուծոյ»: Մեր ազնիւ եւ հայրենասէր բարեկամ Չալըգեանը դժբախտ ճակատագրով մը բաժնուեցաւ մեզմէ: Իր ջերմ փափաքն էր ներկայացնել այս գրական ու ազգագուտ ծրագիրը, եւ ինք կը հաւատար թէ Դուք, հարուստ՝ մանաւանդ հոգիով ու մտքով, պիտի գնահատէք եւ Ձեր ազնուական մտքով ու հոգիով հովանաւորէք զայն:

Հիմա այս ծրագիրը Ձեզի պիտի ներկայացնեն Լոնտոնի իմ երկու բարեկամներս՝ Պրն. Ասատուր Կիւզելեանը, իմ նախկին աշակերտս, եւ բանաստեղծ Պրն. Երուանդ Պարսումեանը, որոնք միեւնոյն համարումը եւ վստահութիւնը ունին Ձեր անձին հանդէպ:

Հաւատք եւ համոզում ունենալով Ձեր ազգասիրութեան ու հայրենասիրութեան, Ձեր ազնուական ու քաջ հոգիին, բայց մանաւանդ Ձեր գրական բարձր հասկացողութեան մասին, գիտենք թէ Դուք եւս գրող եղած էք, կը ներկայացնենք մեր ներկայ ծրագիրը Ձեզի.-

Մեր ժողովուրդի եւ անոր մշակոյթին մեծագոյն գանձերէն մէկն է **Արեւմտահայ Գրականութիւնը**, որ 1915ին իր ժողովուրդին պէս նահատակութիւն կրեց: Աւելի քան 55 տարիներ ետք, դեռ կարելի չեղաւ Արեւմտահայ սքանչելի գրողներուն գործերը հրատարակել ամբողջական, գիտական ու ակադեմական ձեւով մը, եւ զանոնք յանձնել նոր սերունդին՝ ժառանգորդներուն, որոնք իբրեւ հայ երկրորդական բազմաթիւ վարժարաններու ուսանողներ, գրասէրներ, գրողներ եւ ընթերցողներ, պատկառելի թիւ մը կը ներկայացնեն, եւ աւելի քան երբեք





անհրաժեշտություն մը դարձած է անոնց հրատարակությունը:

Արեւմտահայ մեր բոլոր գրողներուն գործերը, 100 հատորներով, նոյն չափով, նոյն թուղթով, կազմով ու գեղեցիկ տպագրութեամբ, անգլիական Nelson հրատարակութեանց ձեռով, կենսագրություններով, մատենագիտութեամբ (bibliography), բառարանով, պիտի կազմեն իսկական **մատենադարան** մը եւ իրենց մեծ *թիրաժով*, պիտի մտնեն մեր բոլոր դպրոցներէն, գրադարաններէն, ակումբներէն, անհատական թէ միութենական գրադարաններէն ներս, եւ այսպիսով կարելի պիտի ըլլայ արեւմտահայ մեր ժողովուրդին հոգեւոր հարստութիւնը փրկել նահատակութենէ:

Դուք, մեծարգոյ Պրն. Մթըըպեան, իբրեւ մտաւորական ու գրող, վստահ ենք որ ամենէն աւելի պիտի գնահատէք այս ծրագիրը եւ պիտի ստանձնէք անոր մեկենասութիւնը՝ յաւերժացնելով Ձեր եւ Ձեր ազնիւ տոհմին անունը:

Մատենաշարը կրնայ կոչուիլ «ՄԹՐԸՊԵԱՆ ՄԱՏԵՆԱԾԱՐ» կամ Ձեզի սիրելի որեւէ անունով, որուն Դուք Հայու սրտով կապուած էք եւ որ Ձեզ կը կապէ Ձեր արիւնին:

Ներփակ ծրագիրը ինքզինք լիովին կը բացատրէ:

Դիմացող ու պատկառելի հրատարակութիւն մը պիտի ըլլայ այս Մատենաշարը, քարէ բարերարութիւններէ աւելի մնայուն:

Անիկա հոգեթոր փոխվրեժ մը պիտի ըլլայ Ապրիլ 24ին:

Անով մեր նոր գրականութիւնը հիմք պիտի ունենայ, աւելի պիտի բարգաւաճի եւ աւելի կենսունակ պիտի դառնայ:

Առանց զօրաւոր գրականութեան՝ դպրոց, եկեղեցի, լեզու եւ մշակոյթ զուրկ պիտի մնան **աւիշէ** եւ շատ բան պիտի կորսնցնեն իրենց իմաստէն:

Այս առաջարկը ներկայացնելու քաջութիւնը կու գայ Ձեր անձին ու հասկացողութեան հանդէպ զգացուած բարձր համարումէն, զոր մեզի փոխանցած է հանգուցեալ Յովհաննէս Չալըզեանը, եւ որ այժմ կը նորոգուի լոնտոնաբնակ մեր երկու սիրելի բարեկամներուն՝ Պրն. Ասատուր Կիւզելեանի եւ բաւաստեղծ Պրն. Երուանդ Պարսումեանի կողմէ:

Կ'ուզենք հաւատալ թէ Ձեր մէջ պիտի գտնենք Վռամշապուհ⁹³ արքայի արժանի շառաւիղ մը:

Յարգանքով՝
Ձերդ՝
Սիմոն Սիմոնեան





ՆԱՄԱԿ 27

ՊԵՂՐՈՒԹ, 21/8/1971

Ողջո՛յն Ասատուրին եւ իր զարմին,
 Յուսամ՝ լաւ էք:
 Կը սպասեմ որ գրես:
 Կոստան Չարեան⁹⁴ գրած է.
 «Պէտք է յուսալ, պէտք է լինել աստուածների թելերի պէս
 մետաքսածալ...»:

Ջերմ բարեւներով եւ համբոյրներով՝ քոյդ՝
 Ս. Սիմոնեան

ՆԱՄԱԿ 28

ՊԵՂՐՈՒԹ, 6/9/1971

Շատ սիրելի Ասատուր,
 Ողջո՛յն:
 Ահա՛ քեզի եղբայր մը, եւ **Հայ Դատի Զինուոր** մը: Կը ճանչ-
 նաս իր ստորագրութիւնը՝ **Հրանդ Սիմոնեան**:⁹⁵
 Հետը եղիր եւ ըրէ լաւագոյնդ: Ծանօթացուր անպայման Եր-
 ուանդ Պարսումեանին:
 Ներփակ նամակը Երուանդին տուր:

Համբուրելով քեզ՝
 Ս. Սիմոնեան

ՆԱՄԱԿ 29

ՊԵՂՐՈՒԹ, 30 Յուլիս 1972

Սիրելի՛ Ասատուր,
 Օրին ստացայ 31 Մայիս 1972 թուակիր նամակդ, եւ կրնայի
 անմիջապէս պատասխանել եւ նոյնիսկ սկսայ գրել, բայց անե-
 րեւոյթ ոյժ մը արգելք եղաւ: Կրնայի հեռաձայնով ալ ըսել,
 կրնայի Տիկ. [Լիոնի] Փիլաւճեանի⁹⁶ հետ ալ յղել պատասխանը...
 բայց ...





Ըսի՝ աներեւոյթ ոյժ մը արգելք եղաւ:

Ո՞յժ թէ ճակատագիր, թէ՞ մաղձ, սիապնտոյակա՞ն ծառա-
ցում *Ֆալաքի* դեմ, որուն հասարակ անունն է ճակատագիր:

Սիրելի՛ Ասատուր, կրտսե՛ր եղբայր, առնուազն հարազատ
որդեգիր, Սիմոն Սիմոնեանը պիտի չուզեր որ Ասատուրի հետ
Արեւմտահայ 100 Գիրքերու մեկենաս ճարելու մասին բանակ-
ցելէ ետք հաւանական մեկենասի մը համար, իր թանկագին
Ասատուրը իրեն չդիմեր 4 էջսոց թերթուկի մը գին հարցնելու...
Կ'ըմբռնե՞ս տրաման, ողբերգութիւնը...

Ասատուրը ի՞նքը Մթորպեաններուն դերին մէջ պետք է ըլ-
լար: Ո՞ւր ես...

Իսկ ես, յուսահատելէ ետք մարդերէ, ես իմ միջոցներովս պի-
տի կենսագործեմ Արեւմտահայ 100 Գիրքերը...

Թքնե՛մ բոլորին... այնքան քիչ են չթքնուելիքները:

Որպէսզի ազատիմ բեռէ մը քիչ անդին, արիւնտ այս թուղ-
թէն բոլորովին անջատ այլ թուղթի վրայ, (*Մսթըր Զայտէն Տոք-
թոր Ճեքիլ*⁹⁷ դարձած), կը գրեմ խելօք-կանոնաւոր եւ ամբարա-
կան նամակ մը:

Քեզ սրտանց համբուրելով՝
Ս. Սիմոնեան

Յ.Գ. Ողջունէ տիկինդ, ձագուկներդ, Տեր եւ Տիկ. Ալեքսին:

Ինկրիտը [Ալեքսի]⁹⁸ եկաւ, ինքը, Մարալը, Յովիկը, Տեր եւ
Տիկ. Անի-Roy-ը⁹⁹ Սուր գացին ձուկ ուտելու, իսկ ես՝ այս տողե-
րը գրելու...

Ինկրիտը աղուոր աղջիկ է. յուսամ լաւ օրեր կ'անցընէ ի Պէյ-
րութ: Ողջունէ իր ծնողքը:

Այսօր Շբ.[Շաբաթ], 5/8/72, հեռաձայն ալ բացի, ըսելու որ 30
սթերլինով կարելի է տպել:

ՆԱՄԱԿ 30

Պէյրութ, 30 Յուլիս 1972

Սիրելի Ասատուր,

Ողջոյն:

Ստացայ օրին 31/5/72 թուակիր նամակդ: Երկարատեւ ճամ-





բորդութիւնս, որուն խորութիւնը բացատրած եմ, արգելք եղաւ
աւելի արագ պատասխանելու:

Յարգանքներս նախ կը յայտնես Պրն. [Խաչիկ] Մթրնպեա-
նին, որ իր գործերու ովկիանոսին մէջ չի մոռնար Մետրոպեան
բանը: Իսկ հիացումս՝ Պրն. [Յայկ] Գալուստեանին:

Սիրով եւ քեզի ծանօթ բժախնդրութեամբ կը ստանձնեմ նոր
«Արեգակ»ի տպագրութիւնը: Ստորեւ նախահաշիւը, որ շատ
մատչելի է՝ հակառակ կեանքին ու տպագրական գործին ար-
ձանագրած երկամեայ սղութեանց.-

Ծաւալ, 4 էջ, «Սփիւռք»ի չափով, 1000 օրինակ, «Սփիւռք»ի
Նոր թուղթին պէս, **մեր** սրբագրութեամբ.- Իւրաքանչիւր թիւի՝
30 (երեսուն) սթերլին:

Քիչէներու եւ առաքման ծախքը՝ Ձեր վրայ (առանձինս):

Ձերմ սիրով՝ քոյդ
Ս. Սիմոնեան

ՆԱՄԱԿ 31

[Պէյրուք], 7/10/[19]72

Սիրելի Ասատուր,
Ինչո՞ւ ցարդ չպատասխանեցիր այս աղջկան այնքան կեն-
սական հարցին:

Կարելոր է:

Կարելոր չէ իմ նամակիս չպատասխանելը:

Իրեն համար **իտեալական** տուն մը (աժան, անաղմուկ, ան-
կռիւ), որպէսզի ուսանի, իբրեւ ազատ ունկնդիր ուսանող:

Համբոյրներ քեզի եւ Ձերոնց:
Ս. Սիմոնեան

[7 Հոկտեմբեր 1972]

Յարգելի Պրն. Ասատուր Կիւզելեան,

Այս նամակը Պրն. Սիմոն Սիմոնեանին տպարանէն կը գրեմ:
Վաղը Գ[էորգ] Աճեմեանը¹⁰⁰ Անգլիա պիտի գայ, իսկ ես դեռ
մտահոգ եմ: Ձեզմէ որեւէ պատասխան չեմ ստացած տակա-
ւին: Համալսարանը մէկդի: Հիմա տաքուկ հասցէի մը պետք ու-
նիմ, լաւ հայ ընտանիքի մը քով. պայմանաւ որ մանուկներ չու-





նենայ եւ Էրիկ-Կնիկ յաճախ չկռուին - հասկցաք անշուշտ աղմուկ չըլլայ, նիստուկացիս խառնուող չըլլայ: Աս վերջացաւ. հիմա՝ ո՞ր ժամանակաշրջանը ամենէն յարմարն է Անգլիա գալու եւ պտըտելու: Եթէ կարելի է այս հարցերուն քիչ մը շուտ պատասխանեցէք Պրն. Սիմոնեանին հասցեով եւ ո՛չ թէ նախկին նամակին վրայ գրած հասցեով:

Ես հոն չեմ այլեւս:
Շուտ պատասխանեցէք:
Համբերութիւնս հատաւ:
Շնորհակալութիւն...

Վ[եհանոյշ] Թեքեան

ՆԱՄԱԿ 32

[Պէյրուս], 1/4/1973

Շատ սիրելի Ասատուր, Նարինէ եւ դստերք քաղցրիկք,

Ողջոյն (թող ըլլայ Ձեր քաղքին անունը):

Ինչո՞ւ լուռ էք:

Չգրելու - նամա՛կ - մասնագիտութիւնը ձեռքես խլեցիք:

Ես եւս նախորդ 3-4 ամիսները ոչ-գովելի առողջութեամբ անցուցի: Հիմա քիչ մը լաւ եմ:

Կ'ուզեմ որ գրէք: Լուսանկարներ դրկէք:

Սիրելի՛ Ասատուր, Փրոֆ.-Դոկտ. Վահէ Պալատունիս¹⁰¹ նախկին եգիպտահայ է, Հայկ ժամկոչեանի¹⁰² խմբակէն ու ընկերներէն մտաւորական, գեղագետ, թարգմանիչ, բանին սպասարկու: 17 տարիներէ ի վեր՝ Ամերիկա, դասախօս համալսարանի - Լուիզիանա նահանգի Նիւ Օրլինզ քաղաքի նշանաւոր համալսարանի, ընկերային-քաղաքատնտեսական գիտութեանց: Իբրեւ նուրբ մանրամասնութիւն մը՝ Հմայեակ Շեմս¹⁰³ բանաստեղծի քրոջ որդին:

Մնացեալը՝ ինք կը պատմէ իր արագ անցքին:

Կը սպասեմ քու նորութիւններուդ եւ պատասխաններուդ: Հրատարակելիք թերթդ չի շահագրգռեր զիս, եւ թերեւս քեզ ալ պետք չէ որ շահագրգռե՛ք քու ստեղծագործական ակունքներուդ ծառայելու միջոց չըլլալուն:





[Երուանդ] Պարսումեանը, որ Կիրակի օրով հոս է, կ'ողջունէ քեզ, ահա՛

Ս. Սիմոնեան

Սիրելի Ասատուր, լռութիւնդ երկար եղաւ, որքան որ կը հասկնամ բազմազբաղ վիճակդ [է պատճառը] բայց կը յուսամ փոքրիկ քարտ-փոստ[ալ]ով մը երջանկանալ:

Բարեւներ ընտանիքիդ

Համբոյրներ քեզի
Երուանդ Պարսումեան

[Յ.Գ.] Պրն. Խաչիկ Մթընպեանին պարագան կը յիշեցնեմ:

Ս. Ս.

ՆԱՄԱԿ 33

Պէյրուս, 16 Յունիսի 1974

Շատ սիրելի Ասատուր, տխր՛ւր ողջոյն, մեղմաճայն:

Օրը Կիրակի է, եւ ես առանձնացած՝ տպարանի գրասենեակին մէջ, ինքնամփոփ՝ որոշած եմ գրել քեզի: Ողբ[ացեալ] Պետրոս Ալեքսեանի մահէն ի վեր պիտի գրեմ քեզի, ու **չեմ կրնար**. այս մահը, անդունդի խաւարին պէս, մտեր է իմ եւ քու միջեւ: Անհրաժեշտ գրելիքներ ունիմ ու չեմ կրնար. գործիս ու գործիդ ընթացքը կը պահանջէ որ գրեմ: Մեծ ճիգ ի գործ դնելով է որ կը գրեմ:

Նախ կրկին ու կրկին վշտակցութիւն քեզի, Տիկնոջդ, գաւակներուդ, Տիկ. [Ֆլորա] Ալեքսեանին, որդւոյն, հարսին ու իրենց գաւակներուն: Բազմաթիւ հեռաճայններով չկրցի կուշտ ու կուր ցաւս պարպել:

Ու ապա դառնանք գործին: Մահը պետք չէ մեզ կրկնակի հարուածէ: Դարձիր գործիդ, որպէսզի Անհետացողին ալ հոգին քիչ մը խաղաղի:

Կը թուեմ ըսելիքներս գործիդ՝ «Լոնտոն»ի համար, առանց ըստ արժեքի կարգաւորելու զանոնք, այլ նոթերուս կարգով.

1- Անգլիական երկու թերթերու - Telegraph¹⁰⁴ եւ Daily Mail¹⁰⁵- կտրօնները ուշ ստացայ, տարբեր մէկը դրկեր էր. ուստի անոնց ըլիշէները այս թիւով կը տպեմ:





2- Եղած ու **շարուած** սիւթերով, տպեր ու կազմեր եմ 4 էջ Յունիսէն (սերփակ տպուածը):

3- Տիրան Սրբազանի [Ներսոյեան]¹⁰⁶ հետ հարցազրոյցէն մաս մը ձգեցի Յունիսի թիւին.- Ատոնց փորձը կը դրկեմ, որպէսզի աչքէ անցընես. Եղիշէ Պատրիարքին [Տերտերեան]¹⁰⁷ դեմ եղածը աչքէ անցուր, մաս մը ջնջէ - **եթէ կ'ուզես**. կրակին մէջէն քու ձեռքովդ շագանակ թող չհանուի...: Տիրան Սրբազանը շատ աւելի լաւը չէ դժբախտաբար, եւ 23 տարիներէ ի վեր do nothing մը դարձած է, իր կեանքի ամենէն արդիւնաւոր շրջանին:

4- Պետրոս Ալեքսեանի մասին գրելիքդ դրկէ փութով. մինչեւ օրս չեմ ստացած:

5- Զօրեղբօրորդին 33.50 լ.ո. (մէկ կամ 2 բաժնեգին) վճարեց ինձի: Նկատի ունեցիր:

6- Տեր Աշոտի [Տեր Յարութիւնեան]¹⁰⁸ տղուն անգլերէնով գրածը դրկէ, սրբագրելէ ետք: Ղրկած եմ փորձը քեզի: Վերստի՞ն դրկեմ:

7- MEA-ը ուշ կը ստանայ եւ ուշ կը դրկէ (Լոնտոնի MEA-ի ներկայացուցիչին՝ [André] Kaydan-ի¹⁰⁹ ականջը քաշէ): Թող հրահանգ դրկէ որ առնեն...

8- *Անձնանուններու Բառարանէն* շարք մը դրկեր էի. ստացա՞ր. նորեր դրկե՞մ...

9- Վարչապետին յանձնուած յուշագրին պատճենը եւս այս թիւով (Յունիսի) լոյս կը տեսնէ:

10- Մոռցուած բան կա՞յ.- Յիշեցուր:

11- Մեր մօտ քանի մը կտորներ (սիւթեր) եւս կան «Լոնտոն»էդ, **շարուած**:

12- Յայտարարութիւնները իրենց վերջնական ձեւը գտան Մայիսի թիւով.- Առարկելիք կամ ըսելիք բան ունի՞ս այդ մասին:

13- Իմ մասին կը գրես.- Ես ի՞նչ սիւթ տամ: Յաջորդիւ... [Թորոս] Թորանեանը գրած է եւ... չեմ տպեր: Նայինք:

14- Ղրկած չէ՞րդ դեռ չստացայ: Կը ստանամ:

15- Նորը՝ Մայիսին պատրաստած էի եւ չէի դրկած: Ներփակ: Կը դրկեմ նաեւ Յունիսիւնը, որպէսզի յապաղում չըլլայ:

16- Պրն. [Զրանդ] Շիրումեանը¹¹⁰ եկած-գացած է. ես զինք չտեսայ, Յ[ակոբ] Կիւլոյեանի միջոցաւ լուր դրկեր է թէ դրկած ես (ի՞նչ...):





17- Յունիսի եւ Յունիսի ձեռագիրները շուտ դրկէ որպէսզի դասաւորեմ: Յունիսը եղածներով՝ +Պ[ետրոս] Ալեքսեանի մասին գրելիքներով կը փակուի:

Յունիսի թիւին մէջ ունիս մնացորդացը «Յարցագրոյց»ին եւ Տէր Աշոտի տղուն անգլերէնով գրածը. ան ալ գրեթէ կիսուած է:

Մի՛ մոռնար արեւմտահայ գրողները **Մթորայեանով**:

Ես քաջաբար կրնամ ըսել որ հանգուցեալ Պրն. Ալեքսեանի Յիմնադրամը անոր եթէ յատկացուեր, անելի յաւերժական ու պատուաբեր յիշատակ մը կ'ունենար: 2-3 սաներով ի՛նչ պիտի ըլլայ: Ազգը եւ Կիւլպէնկեանը այժմ 2000 համալսարանական ուսանող կը պահէ. ի՛նչ իւէյր: Ինծի եւ քեզի պէս վանքի չոր հաց ու չորպա կերած մարդիկն է որ կը ծառայեն. միւսները 90% օտար հարսնացուներ եւ օտար փեսացուներ դարձեր են:

Չկրցա՛ր կերտիչ ըլլալ, ա՛յ, իմ սել կաքաւիկ Ասատուր ջան...
Յամբուրելով քեզ՝
Ս. Սիմոնեան

[Յ.Գ.] Այս նամակին բոլոր կէտերուն պատասխանե... կէտ առ կէտ: Ժամանակ տուեր եմ:

ՆԱՄԱԿ 34

Պէյրուս, 17/7/1974

Շատ սիրելի Ասատուր, ողջո՛յն.

Կրնաս հրաշք նկատել, որ ամէն ինչ մէջը ըլլալով, օդային գծով, «Լոնտոն»դ այսօր ճամբայ ելաւ 90 լ.ո.ի, **լաւ ընկերութեան մը միջոցաւ**, շնորհիւ Կարոյ Բարսեղեանի:¹¹¹ MEA-էն **շատ անելի** լաւ:

Ներփակ՝ ընկալագիրները:

Ուրեմն դրկեցի **Յունիսի թիւը**, 8 էջերով:

Շատ նիւթեր կան, որոնք բոլորը լոյս կը տեսնեն Յունիսին:

+Ողբ. [Պետրոս] Ալեքսի մասը շարունակելի է հրաշալի ձեւով մը:

Անգլերէն **փորձը** (գրեթէ 2 էջ) դարձեալ դրկեցի, քեզի դրկուած 1 օրինակ «Լոնտոն»ի Յունիսի թիւին **մէջ**:





Սրբագրե եւ դրկէ:
 Ղրկէ **Յուլիսի** բոլոր սիւթերը:
 Տիրան Սրբ[ագան]ի [Ներսոյեան] հարցագրոյցէն «վատ»
 հատուած մը շարելէ ետք, վերցուցի: Մեղք ես:
 Գրե՛ քու եւ Ձերոնց մասին:
 Մխիթարութիւն կը մաղթեմ Ձեր բոլորիդ:
 Ափսո՛ս ինծի որ գէթ անգամ մը Լոնտոնի մէջ չկրցի վայելել
 պաշտելի Պետրոս Ալեքսը: Ալ, միւս աշխարհի մէջ, *իւշալլահ*:
 Կը դրկես փող, քիչ մը փութով, զի կարկինը լայն բացած
 ենք:

Ձերմ համբոյրներով՝
 Քոյդ՝
 Ս. Սիմոնեան

ՆԱՄԱԿ 35

Պէյրուս, 24 Օգոստ[ոս] 1974

Շատ սիրելի Ասատուր,

Պրն. Շանթ Ալեքսանտրեանի¹¹² անակնկալ ճամբորդութիւնը
 դէպի Լոնտոն ինծի հրաշալի առիթ կու տայ քեզի գրելու եւ
 արագօրէն հաղորդելու բաներ, որոնք կենսական են իր ճամ-
 բան գտած «Լոնտոն»ը ամուր ասֆալթի վրայ դնելու.-

Լսէ՛: Բայց նախ՝ բարի վերադարձած ըլլաք Իտալիայէն: Յու-
 սամ՝ նամակս Ձեզ կը գտնէ Կիրակի օրն իսկ (25 Օգոստ[ոս]):
 Ուրեմն.

ա) Անկարելի է թերթի 4 էջով հրատարակել, ... զի լրիւ 3.50
 էջ յայտարարութիւններ ունիս, զորս պարտիս դնել իւրաքան-
 չիւր թիւին: Առ սանթիմէթը ձեռքդ եւ հաշուէ՛ սկսելով «Լոն-
 տոն»էն (կապոյտ): Եթէ լման յայտարարութիւններով անշա-
 տաբար Յուլիս եւ Օգոստոս թիւերը տպէինք, **հազիւ** մէկական
 էջ գրութիւն պիտի կարենայինք դնել:

Հաշուէ, ուշիմ եղիր եւ հասկցիր:

բ) «Միացեալ» ըրի թիւը. ուրիշ **ճար չկար**: Դուն կը շահիս
 տարեկան 12 թիւի հաշուով:

գ) Ներկայ թիւը **փառաւոր** եղաւ, +Պետրոս Ալեքսին, Ալեք
 Մանուկեանը,¹¹³ Արթոյ Տ[եր] Յարութիւնեանը¹¹⁴ (անգլերէն),





Լուրերը եւ Յայտարարութիւնները լրիւ շահեցան:

դ) **Սեպտեմբերի** սիւթերը **դրկէ.- փութով.-** Առայժմ մեր քով աւելցան հետեւեալ **չնչին** բաները.- 1) [Շարլ] Ազնաւուր,¹⁵ 2) Ալեք Մանուկեանի սամակը, 3) *Հոքիի* խումբը (Իրաքի): 4) Գրախօսական մը (L.B. SOHN երկար-չդրուելիք), 5) Երկու շրջաբերականներ..., 6) Զեօթահիա¹⁶..., այսքան միայն (ոմանք սկարներով):

ե) 4 էջով ընելու համար **բոլոր քիչները՝ յայտարարութեանց՝** կիսելու կամ 1/3-ի վերածելու է:

զ) Չարեհ Ճերեճեանը¹⁷ հեռաձայնեց, խոստացաւ հանդիպիլ, բայց **կ'երեւի** չկրցաւ. ուրեմն բան չառի իրմէ:

Կրնաս դրկել Շանթի [Ալեքսանտրեան] հետ:

Թերեւս ես ալ հրաշքով մը Լոնտոն ըլլամ Սեպտ[եմբեր]ի մէջ օր մը:

Է) Լոնտոնի մէջ կ'ուզեմ հանդիպումներ ունենալ քանի մը անձերու հետ: **Լաւ** մտածէ, գաղտնի պահէ, վերջին փորձ մը կ'ուզեմ ընել: **Ռոո՛նց** հանդիպելու եմ:

Սեպտ[եմբեր]ի սիւթերը **արագ** դրկէ: 4° թէ 8 էջ: 4 էջ կ'ըլլայ, եթէ յայտարարութիւնները կրճատես կամ կիսես կամ գեղչես: Ստածէ:

ը) Վերջին անգամ [թերթը] շուտ հասա՞ւ, եւ աժա՞ն էր: Բշ. [Երկուշաբթի] կը դրկեմ նոյն միջոցաւ (Մամբրելեան, = Կ[արոյ] Բարսեղեանի բարեկամ-ընկերը):

Կը համբուրեմ ձեզ բոլորդ՝
Ս. Սիմոնեան

[Յ.Գ.] Պանդոկի մէջ տեղ մը ապահովէ, այլապէս Պրն. [Պետրոս] Ալեքսիի... տեղը կը պառկիմ: Ուշադրութի՛ն... կանո՞ւխ է:

Ս. Ս.

Դուն կազմէ Սեպտ[եմբեր]ի թիւը եւ դրկէ *Մաքթըր*: **Դո՛ւն**:
Ս. Սիմոնեան





ՆԱՄԱԿ 36

Պեյրութ, 25/8/1974

Շատ սիրելի Ասատուր,
Ողջոյն:

Այսօր իսկ Պրն. Շանթ Ալեքսանտրեանի ձեռամբ, որ Անգլիա կու գայ, քեզի երկար նամակ մը դրկեցի: Գտիր զինք Պրն. Սիմոն Ալեքսանեանի¹⁸ միջոցաւ, որուն մտերիմ բարեկամ է եւ պատասխանէ:

1) Կարելորդ.- այսքան յայտարարութիւններով 4 էջ թերթ չես կրնար հանել: Խելք գործածէ: Սանթիմէթր առ ձեռքդ եւ պիտի տեսնես որ ճի՛շդ 3 էջ յայտարարութիւն ունիս:

2) 4 էջ ընելու համար յայտարարութիւններուն կեսը մերժելու ես կամ սեղմելու (կամ կիսելու) ես գանոնք:

3) Ուզեցի վերստին պատուել +Պետրոս Ալեքսիս: Նմոյշը տեսա՞ր: Սքանչելի թիւ մը եղաւ:

4) Սեպտեմբերի թիւը դուն կազմէ եւ դրկէ: Ունեցածներս (մնացեալները) գիտես:

Յետոյ ցանկ պահէ դրկած սիւթերուդ եւ ինծի իմացուր պարտաւորիչները:

Չիս քեզմէ աւելի կը զբաղեցնես թերթովդ:

Ես իմ թերթես յոգներ էի եւ ազատիլ կ'ուզէի. հիմա եղաւ... 2 թերթ:

Ղրա՛մ դրկէ, ա՛յ մարդ եւ ոչ փող, որուն միւս իմաստը միայն գիտես կ'երեւի՝ այսինքն *ղաւալ, տիւտիւկ*:

Ջերմ ողջոյններ եւ համբոյրներ Ձերոնց,

Քոյդ՝
Ս. Սիմոնեան

Յ.Գ. Քեզի գիրքեր դրկած է Տարօն Սիմոնեանը*, մեր նոր manager-ը: Ստացա՞ր:

Թերեւս... Լոնտոն գամ... Գաղտնի պահէ:

Ս.

* Տարօնը 17 տարեկան էր այս թուականին:



ՆԱՄԱԿ 37

[Պեյրութ, Նոյեմբեր 1974]

Շատ սիրելի Ասատուր,
Ողջոյն:

Կը գրեմ արագ, Լեւոն Երկաթին¹¹⁹ հասցնելու այս երկտողը:
Լեւոն Երկաթ անձնական ներկայացուցիչն է Գուրգէն Եանիկեանին,¹²⁰ միակ հաւատարիմը: Իմ մանկութեան ընկերս է, դպրոցական ընկերը: Էջ մը կու տաս իրեն իբրեւ հարցազրոյց: Կ'ուզէ գեկուցում կամ դասախօսութիւն տալ: Կ'ընես հնարաւորը:

* * *

Ես քեզի գրած եմ: Կանոնաւոր չես: Դեկտեմբերի թիւին նիւթերը ստացայ («Լոնտոն»իդ). շարուած են. քանի մը օրէն կը ստանաս. պաշտօնական-պետական *փոստով* (լաւագոյնը այդ ձեւը գտայ, շատ տեսակը փորձելէ ետք):

Կրնաս ղրկել դրամ քու ստորագրութեամբդ, այսինքն *չէք*. մէկ անգամ ղրկեցիր, ստացայ, այսինքն կրցայ գանձել, անշուշտ, զեղչով. վնաս չունի: Դրկէ, ղրկէ՛, *չէք* ղրկէ:

Վերջին նամակիդ կը պատասխանեմ մանրամասն:

Չաշուեփակը կ'ընենք... անձամբ:

Կենդանացուր [Խաչիկ] Մթրըպեանը յարալիզաբար:

Պիտի գամ, միայն թէ դրամ ղրկէ (500 սթերլին մը) որպէսզի ճամբայ ելլեմ: Կը հաշուակցինք. աւելի պակաս, իրարու *հալալ* կ'ընենք:

Ներե արագութեան:

Ղազարոսը [Յակոբեան]¹²¹ վերջին անգամ դժբախտաբար չհանդիպեցաւ: Յիշեցո՛ւր իրեն:

Քեզ, Վիվիէնը եւ աղջնակներդ համբուրելով սրտագին, յանուն Սիմոնեան տոհմին,

Քոյդ՝
Ս. Սիմոնեան

ՆԱՄԱԿ 38

[Պեյրութ, 21 Յունուար 1975]

Սիրելի Ասատուր, ողջո՛յն.

Կը հաստատեմ... հեռաձայնային մեր խօսակցութիւնը:

Վաղը, 22/1/1975, օդանաւով կը դրկեմ «Լոնտոն»ները՝ **Դեկտեմբերի** թիւ:

Աւա՛ղ, կ'ուշացնես ի զուր չուշացուելիք թիւերը: Զիչ մը արագ շարժե, մեղք է, թերթին պարբերականութիւնը (= ամսական կանոնաւորութիւնը, Տէ՛ր, զիս փրկէ սրամտութենէ մը... դաշտանի կանոնաւորութիւնը) ապահովէ: Զու ձեռքդ է, շաբաթը 2 նամակ եւ հետը՝ նիւթեր: Մնացեալը ես անթերի կ'ընեմ:

Դեկտեմբերը բաղկացած է.-

Էջ 1- Վազգէն Կաթողիկոսի [Պալճեան] Ամանորի քարոզէն լաւագոյն հատուածներ, Յովհ[աննէս] Շիրազէն¹²² սքանչելի անտիպ մը.

Էջ 4- Իրլանտական թերթեր հայրենի «Արարատ»ի¹²³ մասին, +Ասատուր Օհանեան¹²⁴ եւ Լոնտոնահայ լուրեր:

Էջ 2 եւ 3ը... դար մը առաջ տպուած: Կարծեմ դրկեր եմ քեզի: («Բաց նամակը» **անպայման** դրուած, Տիկ. Անահիտ Կորկոտեանէ):¹²⁵

Ուրիշ ոչ մէկ նիւթ կայ քովս:

* * *

Դրկուած ծրար մը ուրեմն «ի վերուստ» եղած է:

Դրկէ *քոփի*ները, ըստ խոստմանդ:

Արագ:

Այս նամակը Լոնտոնի օդակայանէն բարեկամ մը *փոստ* պիտի յանձնէ:

Ուրի՞շ... Շատ բան:

«Սփիւռք»ը Գեորգ Աճեմեանին ձգեցի:

Յունուարը՝ Յունուարի վերջը պետք է մօտդ ըլլայ: Նիւթերը **շուտ** դրկէ:

Ես որոշած եմ ճամբորդել եւ յուսով եմ քեզ անձամբ ողջունելու:

Համբոյրներս Ձերոնց եւ քեզի՛
Քոյդ՝ Ս. Սիմոնեան



Յ.Գ. Անգլերենները հայերենի վերածել Ապրիլի թիվին համար:
Նոյն

ՆԱՄԱԿ 39

Պեյրութ, 22.2.1975

Շատ սիրելի Ասատուր, ողջոյն.

Ռուսիոյ մէջ մէկը կար, կը կոչուէր [Ալեքսէյ] Ստախանով.¹²⁶ Կ'ըսէին թէ անիկա լաւ կ'աշխատի. գայն իբրեւ սրճեփ բերի քովս. ըսի՝ «ես «Լոնտոն» թերթը շուտ պիտի լրացնեմ»...

Ղրկեցի Յունուարը: Պարզ օդային *փոստով*. ստացար, վստահ եմ:

Գրոյս հետ կը ստանաս Փետրուարի թիւը: Ամէն նիւթ, եկած ու չեկած, սպառեցի: Զովս կը մնայ ներկան, որ այս նամակին հետ կը ստանաս: Լաւ բան է. **պէտք է թարգմանես**: Այդպէս գրած եւ խոստացած էիր օրին: «Ապրիլեան» (24) նիւթ մըն է:

Յունուարին մէջ՝ «յաջորդիւ» մը խոստացած [էիր]. ատիկա գրէ եւ ղրկէ, որպէսզի տպուի Մարտի թիւին մէջ: Վերջապէս նախորդ թիւերը, եւ եթէ խոստացուած բաներ կան, գրէ եւ ղրկէ:

Հիմա տեղ մըն ես որ շնորհիւ... ինձի, ամէն յապաղում դարմանուած է, եթէ Մարտի նիւթեր ղրկես. **շուտով** ղրկէ:

Թօթափէ ծուլութիւնդ: Զիչ մը տեր եղիր թերթիդ, երեսի վրայ մի՛ ձգեր: Զիչ մը անելի աշխատանքով (այսինքն... նուազ ծուլութեամբ) թերթէն կրնաս շահիլ եւ 100/100 յաղթանակել: Զիչ մը քիչ խմէ, քիչ մը գրկուէ, այդ է ազգային ծառայութիւնը եւ հրապարակագրութիւնը:

Նիւթեր փութացուր...

Հիմա պիտի ըսես թէ Պրն. Սիմոնեանը կ'երեւի թէ գործ չունի...: Ասատուր, ոչ մէկ ատեն իմ linotype-ս այսքան խճողուած գործ չէ ունեցած, որքան այժմ, եւ ոչ [մէկ] ատեն տպագրական իրերը այսքան սուղ ու անգտանելի եղած են, որքան հիմա: Լոնտոն գալուս պատճառներէն մէկը տպագրական իրեր գնել է linotype-ի գործարանէն, բայց պայման է որ **անգլիացի տպարանատեր մը ըլլայ գնորդը**: Ունի՞ս այդ տեսակ մէկը, որ linotype-ի գործարանէն իրեր գնելու իրաւունք ունենայ: Հիմակուրնէ որոնէ, որպէսզի երբ հասնիմ մօտդ, **շուտ** վերջացնեմ գնումը:





Ինչպե՞ս ես դուն, Ձերիննե՞րը: Համբոյր բոլորին:

Համբուրի՜
Ս. Սիմոնեան

Յ.Գ. Ստացայ Արմէն Յարութիւնեանի¹²⁷ ձեռամբ 500 սթերլի-
նը: Շնորհակալութի՛ն:

Կորսուած բա՞ն կայ, Փետր[ուար]ը լոյս տեսնելէն ետք...

Կարելորագոյն.- Ի՞նչպէս է [Խաչիկ] Մթորպեանը կամ...

Արեւմտահայ Գրականութիւնը: Ատոր համար ձգեցի «Սփիւռք»ը:
Ս. Ս.

ՆԱՄԱԿ 40

Պէյրուս, 10 Մարտի 1975

Շատ սիրելի Ասատուր,
Ողջո՛յն:

Դարձեալ լռութիւն քու կողմէ: Նուազագոյն աշխատանքով
գործդ շատ աւելի արագ ու կանոնաւոր կը դառնայ, թերեւս
նաեւ՝ շահաբեր: Շարժե՛:

Յունուարի եւ Փետրուարի թիւերը ստացա՞ր, եւ շատ
արագ: Գրե՛:

Ո՛չ մէկ նիւթ իմ մօտ:

Դրկեցի նաեւ **անգլերէնը**, եթէ թարգմանելը շատ արագ ու
դիւրին պիտի չըլլայ, վերադարձուր, *քիչէ* ընել տանք: Կ'երեւի
թէ **Մարտ-Ապրիլը միացեալ** պիտի հանես:

Մինչ այդ, շատ կարելոր պատճառներէ զատ, *լիտթիփի*
(տողաշարի) **պակսող** կտորներ **գնելու** համար պէտք է գամ
Լոնտոն: Արդ, գնել կարենալու համար, ես իբրեւ լիբանանցի
իրաւունք չունիմ (քանի որ *լիտթիփի* ընկերութիւնը հոս ունի
ներկայացուցիչ, որ չի ներածեր եւ ներածածն ալ 15 անգամ
աւելի սուղ կը վաճառէ), պէտք էր Լոնտոնէն տպարան մը, որ
իր անունով եւ ինծի համար գնէ: Ունի՞ս ատանկ անգլիացի
տպարան մը կամ տպարանատեր մը. ես հետս կը բերեմ գնուե-
լիքներուն ցուցակը: Իմ (եւ ուրիշներու) մեքենային (*լիտթիփի*)
վրայ շատ պակասներ կան: Դուն թերթիդ անունով կարծեմ
կրնաս գնել: Հեռաձայնէ, գրէ կամ հեռագրէ, շուտով ճամբայ





կրնամ ելլել: Սերտէ, եւ «ականջի ետեւ մի նետեր», զի հայ լի-
նորթիկները, ուրեմն նաեւ տպարանները, այլ դժուարութեանց
կարգին, ունին նաեւ ասիկա, մեծ դժուարութիւն, որ հետզհետէ
կրնայ հայ տպարանները մինչեւ դադարեցում տանիլ:

Կարելոր պարագայ մըն է ասիկա:

* * *

Պրն. Միշա Գիւտեանիս¹²⁸ հետ քննիչ նշանակուած ենք Ալեք
Մանուկեան գրական մրցանակի. բան մը գրէ եւ քննենք:

Պրն. Գիւտեանին, տուր քու կողմէ նուէր մակագրելով, իմ
Լեռ եւ Ճակատագիրը: Կարդացած թող ըլլայ երբ Լոնտոն գամ:
Այս ալ կարելոր է:

Ձերոնց՝ համբոյրներ:

Քեզի՝ պաշիկ:

Քոյդ՝

Ս. Սիմոնեան

ՆԱՄԱԿ 41

[Պէյրուս, Յունիս 1975]

Սիրելի Ասատուր, - ողջո՛յն.

Կը հաստատեմ երկու օր առաջ գրուած նամակս, զոր քեզի
դրկեցի բարեկամի մը միջոցաւ, որ Փարիզէն թղթատարի պի-
տի յանձներ: Յուսամ՝ ստացած ես: Դրկեցի Գեորգ Պլքեանի¹²⁹
հասցեով: Պլքեանի հասցէին մէջ, զոր դուն դրկած ես, պակաս
մը չէ՞ «London» բառին չգտնուիլը, թէ ինքնին հասկնալի է որ
«HARROW MIDDX»ը ի Լոնտոն է...: Ինծի դրկէ ճշգրիտ ու վա-
ւերական հասցէն: Ինծի դրկածդ հետեւեալն էր.

K. Belikian

c/o «Ararad»

384, Station Road

Harrow Middx

U.K.

Կը տեսնես Լոնտոն բառը չկայ:

Եթէ հասցէի սխալմունքով, Գեորգ Պլքեանին ուղղած իմ կա-





րելոր (ինծի համար) նամակս իրեն չհասնի, ներփակ copy-ն կը
ղնեմ: Իրեն կարդա՛, կամ copy մը հանե՛ եւ իրեն ղրկէ:

Այսքանը իբրեւ հաստատում ու կրկնութիւն նախորդ նամակիս:

Կարելորը հետեւեալն է: Աղջիկս, Մարալը, որ հիմա դեղա-
գործ է, եւ ինծի նոյնիսկ aspro կու տայ, երեք ընկերուհիներով,
Օգոստոսին London պիտի այցելէ, արձակուրդ անցընելու: Եւ
դուն իբրեւ նախկին պանդոկատեր ու պանդոկագետ, պիտի
ապահովես 4 հոգիի համար՝ պանդոկ, յարմարագոյնը: Կը
սպասեմ քեզմէ պատասխանի:

Ուրիշ բան չմնալով գրելիք, կ'ողջունեմ Ձեզ ջերմ համբոյր-
ներով:

Ս. Սիմոնեան

Յ.Գ. Պիտի հանդիպիմ քեզի, հոս, հոն, կամ... վերը:

Ս.Ս.

Պէքեանը, որ հիանալի տղայ է, ստիպէ որ, ինծի պատաս-
խանէ եւ... շո՛ւտ:

Ս.Ս.

ՆԱՄԱԿ 42

Ասատո՛ւր, օդանաւի մէջ կարդա ասիկա: Իսկ միւսը արագ,
նոյնիսկ express *փոստ* նետե օդակայանէն:*

[Պէյրուիթ, 1976]

Ասատո՛ւր,

Ողջոյն, համբոյր եւ բարի ճանապարհ: Ողջունե՛ եւ համբուրե՛
մեր կողմէ Նարինէն եւ սիրասուն, քնքուշ եւ նազելի աղջկնակ-
ներդ, իմ կողմէ ալ մաղթելով որ գէթ մէկուն մականունը յաւեր-
ժանայ Սիմոնեանով:

Յաւս է, պէ՛տք է յայտնեմ, քեզի հետ չկարենալ ըլլալը **գէթ
մէկ գիշերով** հանդարտ, **միւսակ** եւ երկար:

Չեղա՛ւ: Երկրորդ, երրորդ անգամ ալ:

Ես ալ, (անիծուի՛մ), չկրցայ Լոնտոն հանդիպիլ: Ճակատագ-
րի՞ բերումով:

* Այս երկու տողերը գրուած են նամակի պահարանին վրայ:





Կ'ուզէի քեզի հետ խօսիլ **Արեւմտահայ Գրականութեան** մասին: Մասամբ ես յաջողուցած եմ Յարութիւն¹³⁰ եղբօրս խոստումով: Բայց **մասամբ** 50% ու: Պետք է օգնես ինձի 50%ով: Համազասպո՞վ [Մարթին], Լոնտոնի մէկէ աւելի Հիմնադրամներէն մէկո՞վ թէ բոլորով:

Շարունակելի:

Համբուրիւ՝
Ս. Սիմոնեան

[Յ.Գ.] Պահէ՛ այս նամակը մեր յաջորդ հանդիպումին հոս կամ հոն: Հո՛ն **երկանիչ:**

Ս.Ս.

ՆԱՄԱԿ 43

(Բացիկ)
[Փարիզ], 16/7/[19]76

Ողջո՛յն եւ համբոյր շատ սիրելի Վիվիէնին, Ասատուրին եւ թոռնիկներուս՝ Փարիզէն - Սիմոնեանէն եւ Կարիկէն [Պասմաճեան] (որ պիտի գրէ քեզի)...

«Ալ մօտ ըլլամ քեզի, Տէր» կ'ըսէ հոգեւոր երգը, եւ ես պիտի ուզէի ձեր կամ... Աստուծոյ մօտ ըլլալ:

Ս. Սիմոնեան
Կարիկ Պասմաճեան

ՆԱՄԱԿ 44

Փարիզ, 17/7/[19]76

Ասատո՛ւր, ողջոյն.

Այս գիրը կը գրեմ Կարիկ Պասմաճեանի տունէն:

Կը զարմանամ որ իրարու հետ չէք աւելի սերտ ու համադրուած գործակցութեամբ, դուն՝ իբրեւ Անգլիոյ, իսկ ինք իբրեւ Փարիզի Հայոց երիտասարդ մշակութային գործիչները: Երբ քու «Լոնտոն»ը կը մտնէ իր վերջալոյսին, Կարիկը կը ծրագրէ ծնունդ





տալ իր «Փարիզ»ին («Եւրոպա» անունով հաւանաբար):
 Բախտակիցներ՝ զուգահեռագիծ:
 Կարիկը եւս այժմ կը գալարուի քու տազնապներով:
 Մաղթենք որ հայ պուրժուազիան իր պարագային եւս չթե-
 րանայ:
 Դուն պետք է օգնես իրեն ամեն կերպ:
 Թերթին համար՝ յետոյ, այդ մասին ինք քեզի կը գրէ մանրա-
 մասն, կամ անձամբ կը հանդիպի քեզի:
 Այժմ ուսանելու հարց մը ունի.- Պիտի պաշտպանէ Սորպոնի
 մէջ «Բաղդատական Գրականութեան» գծով իր դոկտորական
 թեզը՝ «Յայկական մոտեմիզմը քսաներորդ դարու գրականու-
 թեան, յատկապէս բանաստեղծութեան մէջ»:
 Պետք ունի մէկ տարուան կրթաթոշակի:
 Շուտով իրեն կը գրես ինչ որ պետք է ընէ եւ ուր որ պետք է
 դիմէ: Իր հասցէն՝
 Garig Basmadjian
 89, Rue du General Lecierc
 92270 Bois-Colombes, France
 Զծուլանաս:
 Դեռ գիրքերս չստացայ... Յովիկը բարձր կարծիք ունի դան-
 դաղութեանդ մասին:
 Համբոյրներ Վիվիէնին եւ աղջնակներուդ, եւ քեզի:
 Այսօր կը վերադառնամ Պիէն:

Քոյդ՝
 Ս. Սիմոնեան

ՆԱՄԱԿ 45

Պիէն, Չուիցերիա,
 23 Յուլիսի 1976

Շատ սիրելի Ասատուր,
 Ողջո՛յն:
 Մեծագոյն շնորհակալութեամբ ստացայ գիրքերը:
 Յովիկի կատակը իբրեւ ամբաստանեալի շապիկ հազնելու
 չէիր:
 Տաս օր մը մնացի Փարիզ: Տեսայ անցեալ կատարեալներ եւ





անկատարներ, այսինքն հայ գրողներ: Ամբողջ երոպահայութիւնը յանձնուած է միակ թերթի մը («Յառաջ»)¹³¹ թանձր շուքին:

Կարիկը [Պասմաճեան] եւ այլք կը մտածեն թերթ մը հրատարակելու մասին, եւ զիս ալ ուզեցին այդ ցանցի մէջ ընդգրկել: Ուշ է ինծի համար, ոչ միայն տարիքի, այլեւ՝ այլ ծրագիրներու եւ Պէյրութի մէջ պարտաւորութիւններու պատճառաւ:

Դարձեալ սակայն կը մտածեմ, նոր ու... վերջին խենթութիւն մը գործելու համար:

Կա՞ս:

Ո՛չ, ո՛չ.- Չմտածեցք այդ մասին եւ գոչեցք «ետիս գնա, սատանայ...»

Պրն. [Միշա] Գիւտեանին տուի՞ր *Լեռ եւ ճակատագիր* մը եւ *Կը կնդրուի... կաջածելել* մը:

Թող կարդայ: Հետագային (ի մօտոյ) ձեռագիր գործիս [Անժամանորոս] մասին կը մտածեցք:

Արժանի կը գտնէ՞ թարգմանելու:

Կարելոր.- Իր առաջին տպաւորութիւնը յղէ ինծի:

* * *

Փարիզ տեսայ Վազգէն Վեհափառը [Պալճեան]. կէս ժամ մը զիս աջ կողմը բազմեցուց:

Տեսայ նաեւ [Ներսէս] Պոզապալեան¹³² Սրբազանը. հին օրերու յուշով՝ համբուրուեցանք:

Ողջագուրէ իմ կողմէ Վիվիէնը եւ աղջնակներդ:

Կ'երեւի թէ դարձեալ պիտի չկարենամ անձամբ տեսնել Ձեզ:

Համբուրիւ՝
Ս. Սիմոնեան

ՆԱՄԱԿ 46

(Բացիկ)

[Հռոմ-Փարիզ, 6-9-1976]

Շատ սիրելի Ասատուր, Վիվիէն եւ ձագուկներ.

Ողջոյն Հռոմէն:

Գիրքս տուի՞ր [Միշա] Գիւտեանին:





Կը սպասեմ որ գրես:
 Կարիկ Պասմաճեանի ուսանողական հարցը ո՞ր հասաւ:
 Կ'ուզեմ որ լրջօրէն զբաղիս եւ իրագործես՝ Նախորդ յանձնա-
 րարուածին մեղքը քաւելու համար:
 Ինծի գրէ հետեւեալ հասցէին.
 Simon Simonian,
 P.O.B. 102
 Amman, Jordan.

Համբոյրներով՝ քոյդ՝ Ս. Սիմոնեան

[Յ.Գ.] Հասցեդ չունենալուս՝ այս քարտը կը ստանաս Փարի-
 զէն:

ՆԱՄԱԿ 47

(Այցետոմս)
 16/6/[19]77

Ասատո՛ւր, ողջոյն եւ համբոյր.
 Ինչ որ կ'ընես երկուորեակներուն, կեանքիդ լաւ գործերէն
 մէկը կ'ըլլայ:
 Արժանի՛ ես:
 Հետզհետէ համարումդ պիտի բազմապատկուի: Բացառիկ
 տղաներ են:

Համբոյրներով՝
 Քոյդ՝ Ս. Ս.

ՆԱՄԱԿ 48

Պէյրուս, 23 Մարտի 1979

Շատ սիրելի Ասատուր,
 Ողջոյն եւ համբոյր, քեզի, տիկնոջդ եւ աղջնակներուդ, իմ,
 Մարիին եւ Մարալին կողմէ: Մանչերս, չորսն ալ, արտասահ-
 ման են:





Կարօւցայ քեզի: Չեմ գիտեր ինչո՛ւ Փարիզէն անդին չեմ կրնար քալել: Լոնտոնի կարօտով, կ'երեւի, պիտի չունեմ անդի դեմը:

Կարոյ Արմէնեանը¹³³ եկաւ եւ յայտնեց թէ գործադուլներու պատճառով չես կրցած գտնել տողաշարի այդ կտորը: Վերջ չգտա՞ւ այդ գործադուլը. կարծես ինծի դեմ փորձուած բան մը ըլլայ ան: Յամենայն դեպս Վարդգէս Տօնապետեանը¹³⁴ գիտէ կտորը (չափը, տեսակը եւայլն):

Իրեն ալ ներփակ գիր մը կ'ուղղեմ: Հասցէն չունիմ: (Չկրցայ կապուիլ եղբօր հետ. *ղանձաս* կայ, ու հեռաձայնի գիծերը անգոյ են):

Պիտի ներես այս անբովանդակ ու ան-սիրտ գիրին համար:

Ներփակ նամակները Պրն. Վարդգէս Տօնապետեանին հասցուր, if you please...

Համբոյրներով՝
Ս. Սիմոնեան

ՆԱՄԱԿ 49

Պէյրուս, 30-8-1979

Շատ սիրելի Ասատուր,

Ողջոյն եւ համբոյր՝ քեզի, Տիկնոջդ եւ դուստրներուդ:

Կը շարունակեմ ողջ մնալ, ստեղծագործել եւ գործել:

Կ'երեւի թէ տարին հեղ մը քեզ պիտի յոգնեցնեմ, այսինքն իրապէս մարդկային վեհ արարքի մղեմ:

Չեփիւռը, Օհաննէսեան,¹³⁵ իրապէս հայ ժողովուրդի եւ անոր մշակոյթին նուիրուած աղջիկ մըն է: Կը ծառայէ Հայ Գիրքին, նախ իմ քով, այժմ՝ Կաթողիկոսարան:

Կ'ուզէ այդ գծով - գրադարանավարութեան - բարձրագոյն ուսում ստանալ ի Լոնտոն:

Կրնա՞ս լոնտոնահայ *ֆոնտերեն* մէկուն մասին ցուցմունքներ տալ եւ միաժամանակ զինք յանձնարարել: Լաւ բան մը ըրած կ'ըլլաս եւ զիս երախտապարտ կը ձգես:

Համբոյրներով՝
Ս. Սիմոնեան





ՆԱՄԱԿ 50

[Պեյրութ], 16 Ապրիլ 1981

Շատ, շա՛տ սիրելի Ասատուր,
Վիվիեն
եւ

սիրասուն ձագուկներ.

Ողջոյն եւ համբոյր:

Եւրոպա վերջին ճամբորդութենէս վերադարձայ իմ կեանքի ամենէն գեղեցիկ եւ ամենէն տխուր բաները տեսնելէ ետք: Չեմ ուզեր զանոնք թուել, երանի՛ թէ տրամադրութիւն եւ ժամանակ ունենայի զանոնք նկարագրելու, վստահ եմ, որ հաճելի եւ մնայուն գրութիւն մը կ'ըլլար, 100 էջերու սահմանին մէջ:

Բայց ամենէն գեղեցիկ բաներուն մէջ մէկն էր իմ Ձեզի հանդիպումը Լոնտոնի Ձեր տան մէջ, որուն մասին չեմ կրնար հիմա չգրել: Ինծի համար Ձեր տունը Լոնտոնն էր, Յնդկաստանը, Պարսկաստանը, Սանճագը, Յալէպը, Անթիլիասը, Լատին Յոռմը, Արամ Խաչատուրեանը,¹³⁶ բնական է անոնց ազնիւ ու գտուած մասերը, կարագը կաթին: Իմ մանկութեան ստացած առաջին նուէրը (1919ին) անգլիացի զինուորի մը պուպրիկն էր, իսկ իմ բանասիրական երիտասարդութեան առաջին երազանքը Յնդկաստանի ջուրերն էին, ափերը...: Ձեր տան մէջ գտայ աշխարհը իմ երազանքներուն եւ չեղած բաներուն: Ափսո՛ս, միշտ ինծի հետ կը շրջէր սքանչելի մարդուն՝ Պրն. Փիթըր Ալեքսիի ազնուական պատկերը:

Լոնտոնը ձեր տունն էր: Կարծեմ այդ քանի մը օրերուն Ձեր տունէն գրեթէ դուրս չելայ:

Յիմա շնորհակալութիւն յայտնել, զիս հեռացնել պիտի ըլլար այն վեհ բարձունքէն, ուր եղայ:

* * *

Վերադարձիս - յոգնած ու դադրած - ինկայ գործերուս մէջ, «ծով կենցաղոյս հանապազ ալեկոծէ զիս»...: Ապա վրայ հասաւ Լիբանանի նորագոյն աղետը, 15 օրերէ ի վեր: Յաւանաբար Ձեր հեռատեսիլը աւելի բան ցոյց կու տայ քան ինչ որ մենք կը տեսնենք: Բայց, Ասատուր, մի՛ մոռնար որ իմ տպա-





րանս ո՛ր կը գտնուի...:

Ասատու՛ր, չմոռցած, անպայման պետք է գրես Արամ Խաչատուրեանի մասին բոլոր գիտցածներդ, յիշածներդ, առանց ածականի եւ մակբայի: Պարզ եւ անսեթեւեթ:

Փեսաս ամիսէ մը ի վեր չի ճամբորդեր: Այսօր իր մէկ ընկերը Լոնտոն կը մեկնի. օգտուելով անոր բարեացակամութենէն, պիտի փորձեմ ղրկել այս գիրերը:

Պրն. Յ[արութիւն] Այվազեանին ուղղուած գիրը կարդա. տես նաեւ աւարտած գիրքը հանգուցեալ [Գեորգ] Թահթային.¹³⁷ թութի տերեւը մետաքս եղա՞ծ է: Դուն իր ձեռագիրը եւ փորձերը տեսար: Շատ թոյլ կը շարժին: Մղէ՛ գիրենք: Այս նամակի երկրորդ էջին՝ հասաւ օդաչուն: Կը փակեմ՝ գրկելով Ձեզ:

Ս. Սիմոնեան

ՆԱՄԱԿ 51

16/9/1981

Շատ սիրելի Ասատուր,
Ողջո՛յն եւ համբո՛յր:

Իմ «դարդերս» մոռցած (որոնց մասին կը գրեմ գրիս վերջաւորութեան, եթէ տեղ մնայ), կը գրեմ քեզի, ինչպէս անցեալին, այս երկուորեակ եւ սասունցի մանչերէն մեկուն մասին՝ Յովիկին [Տոնապետեան]:¹³⁸

Ըրիր ցարդ լաւագոյնդ:

Երկու եղբայրները եւ իրենց ծնողքը յաւիտեան երախտապարտ են քեզի: Այս աշխարհի վրայ ըրած լաւագոյն գործերուդ շարքին մէջ է այս գերազնուութիւնդ: Ես եւս, իմ կարգիս, շնորհապարտ եմ:

Բայց, շա՛տ սիրելի Ասատուր, ծովեր ու գետեր անցնելէ ետք, կը մնայ վերջին անցք մը - երկուորեակներէն Յովիկին Master աստիճան շնորհելու անհրաժեշտութիւնը: Ամէն ինչ ընելու ետք այս եւս իրագործելու:

Փորձելու ես 1) Կիւլպէնկեան *ֆոնտը* (ես եւս հիմա կը գրեմ [Վահրամ] Մավեանին), 2) Պենլեան,¹³⁹ Աբգար,¹⁴⁰ Թահթա եւայլն եւ այլ *ֆոնտերը*, զորս դուն ինձմէ լաւ գիտես, 3) Սրբազանը,





[Ներսէս] Պոզապալեանը, որուն եւս կը գրեմ հիմա...:

Ուրի՞շ... նախորդին պէս - Յամազասպ Մարթին մը կը ստեղծես:

Յովիկը մօտդ կանչէ եւ իրեն ուղղութիւն տուր: Գիտեմ նոր առեւտրականի եւ հարստացողի պայմաններուդ մէջ ասիկա ծանր զոհողութիւն մը կ'ըլլայ: Աստուած յետոյ վարձահատոյց կ'ըլլայ քեզի:

Ասատու՛ր, յոգնած եմ, քիչէն շատ հասկցիր եւ գլուխ հանէ այս գործը:

* * *

Իսկ իմ «դարդեր»-ես մէկուն մասին գրելու փոխարէն, կը ներփակեմ Յար[ութիւն] Այվազեանին իմ ուղղած նամակին *Ֆոթո-քոփիին*: Այս պարագային եւս քիչէն շատ հասկցիր եւ ըրէ կարելիդ:

Կը համբուրեմ Նարինէն եւ երկու ձագուկներդ եւ քեզ՝ Ս. Սիմոնեան

15/Սեպտ[եմբեր]/1981

Սիրելի Պրն. Յարութիւն Այվազեան,

Ողջո՛յն:

Շուարած եմ ի՞նչ գրել Ձեզի, ճիշդ ամիսէ մը ի վեր: Կ'ուզեմ զսպել վրդովումս եւ չարտայայտել հիասթափութիւնս: Բարի եւ բարերար [Գեորգ] Թահթան այս աշխարհի վրայ միայն զիս գտաւ պատժելու եւ անիրաւելու: Ի՞նչ նուիրումով, սիրով եւ անչափելի զոհողութեամբ աշխատեցայ եւ թուրքի տերերը մետաքսի վերածեցի:

Շերամի՛ ճակատագիր:

Բայց ես ամենէն աւելի Ձեզի՛ վստահեցայ, Պրն. Այվազեան: Ձեր մէկ հեռաձայնի զարկով գործի սկսայ: Չեմ ուզեր ծանօթ ու կրկնուած բաներ կրկնել եւ թե՛ Ձեզ եւ թե՛ զիս ժամավաճառ ընել:

Կ'երեւի թէ գիրքին փոխարժեքին առաքումը դեռ պիտի ուշանայ:

Ներփակ ճանապարհածախքի հաշուեցոյցը - ուր չեն մտած այլ ծախքեր, փոխադրաչէք տեղէ տեղ, եւայլն:

Սանթիմ մը չստանալէ ետք, կատարել մէկ ճամբորդութիւն դէպի Լոնտոն, բազում ծախսալից հեռաձայններ, եւ առաքման այս ծախքը՝ 1050 լ.ո.:

Յուսամ ստացաք գիրքերը: 200 օրինակ: Օգոստոսի 11ին





դրկուեցան, ճիշդ ամիս մը 4 օր առաջ:

Պրն. [Կարոյ] Արեւեանը¹⁴¹ մերժելով մերժեց եւ յայտնեց թէ ինք երբեք խոստում չէ տուած Սրբազանին: Իսկ մեր փեսան՝ Չոհրապ Աթթարեանը¹⁴² օդէն իջաւ եւ այժմ գրասենեակ կ'աշխատի: Թէ՛ Դուք եւ թէ՛ ես փորձենք մեր կարելին, մնացեալները Լոնտոն հասցնելու:

Այլեւս կը ձգեմ Ձեր խղճմտանքին եւ պատասխանատուութեան զգացումին:

Այս գիրը կրնաք Ասատուր Կիւզելեանին կարդալ եւ իր աջակցութիւնը խնդրել, եթէ Ձեր ոյժերը առանձին չեն բաւեր բարերարին որդին գործի լծելու:

Ընդունեցէք իմ լաւագոյն մաղթանքներս,

Ձերդ՝
Ս. Սիմոնեան

ՆԱՄԱԿ 52

(Բացիկ)

[Չուիցերիա], 10/12/[19]81

Շատ, շատ սիրելի Վիվիէն, Կարինէ, Արմինէ եւ Ասատուր, Յազար ողջոյն եւ համբոյր: Միշտ պայծառ կը մնաք իմ (մեր) մտքին մէջ: Ափսո՛ւ, որ ծովերով բաժանուած ենք: Հայկական ազնուութեան կղզեակ մըն է Ձեր յարկը, որ օրհնուած է ազնուական Փիթըր Ալեքսիի հոգիով ու ոգիով:

Ապա խորունկ շնորհակալութիւն սասունցի ուսանող Յովիկ Տոնապետեանի Ձեր բերած (յատկապէս Վիվիէնի) գերազնի օժանդակութեան համար: Երկուորեակ եղբայրները արժանի են Ձեր ուշադրութեան: (Հոս՝ հեռաձայնդ հնչեց եւ խօսեցանք...):

Ի վերջոյ ամբողջ սրտով կը շնորհաւորեմ մօտեցող Նոր Տարին եւ Ս. Ծնունդը՝ մաղթելով ամենայն բարիք Ձեր տան:

Կարօտով՝
Ս. Սիմոնեան

[Յ.Գ.] Ասատու՛ր, գրէ յուշերդ՝ սկսելով մեծն Արամ Խաչատուրեանէ եւ Հնդկահայքէ...





ՆԱՄԱԿ 53

19/7/[19]83
Ի Յելվետիա

Շատ սիրելի Ասատուր,
Ողջոյն եւ համբոյր քեզի, Վիվիէնին եւ քաղցր դուստրերուդ:
Ահա՛ քեզի Յովիկը [Սիմոնեան] եւս, իբրեւ Պրոմէթէոս Ազա-
տագրեալ:

Սրտապնդէ զինք:

Ուղղակի անակնկալ մըն էր:

Չար աչք, պիտի ըսեր մայրդ կամ մայրս:

Չինք մխիթարէ ինծի պէս ըսելով. «Մի՛ ափսոսար կորսնցու-
ցածդ, այլ փառք տուր փրկուածին ու մնացածին»:

Արեւմտահայ Գրականութեան բախտն է - Ալէք Մանուկեա-
նը սրտի տագնապ ունեցաւ, իսկ Յովիկը՝ այս պատահարը:
Ամենէն աւելի այս երկուքին վրայ վերջին յոյսս դրած էի: Կ'երե-
ւի թէ իմ ոյժերուս միայն վստահելու եմ:

Ինծի կը դրկես «Մասիս»ները եւ այլ թերթեր, ինչպէս նաեւ (=
մանաւանդ) *քասեթը*:

Ներփակ՝ «100 հատորներով Արեւմտահայ Գրողները»:
Մտածէ: Գալիք յոբելեանները բան կը բերե՞ն:

Հոկտեմբեր 26ին Ձեր մօտ եմ:

Համբուրիւ՝ Ս. Սիմոնեան

[Յ.Գ.] Յոբելեանի 2 գիրքերէն մէկը Եղիշէ Սրբազանին [Կի-
զիրեան]¹⁴³ տուր, առնուազն... փոխ:

ՆԱՄԱԿ 54

[Անթիլիաս] 7/3/1985

Իմ սիրելի Ասատուր,
Ողջոյն եւ համբոյր քեզի, Վիվիէնին եւ չքնաղ դուստրերուդ:
Արդեօք ե՞ս թէ դուն թերացանք տեղ մը, գրեթէ երկու տարի
առաջ:

Օր մը, երբ բախտը մեզ իրարու մօտ բերէ, քեզի խօսելիք ու-
նիմ այս աշխարհէն չմեկնած:






Իմ աշակերտներս Գողգոթայի ծայրին զիս չճանչցան:
Կա՛ն յաւերժական ճշմարտութիւններ եւ կա՛ն ճշմարտան-
ման կրկներեւոյթներ: Ժողովուրդի մը ճակատագրական պա-
հերուն կան անյեղլի ճշմարտութիւններ եւ կեցուածքներ:
Հայկ նահապետէն աւելի կարելի չէ հայրենասէր ըլլալ:
Իմ հայրենասիրութիւնը կու գայ Հայկ նահապետի ակունք-
ներէն եւ Սասնայ մեծ անդունդէն:
Յուսամ՝ կրնաս վերծանել այս մեհենագրութիւնը:
Կրկին ողջագուրելով Ձեզ՝ նոյն սրտով՝
Ս. Սիմոնեան





Ասատուր՝ Կարապետ եւ Ռահել Կիզելեաններու հինգերորդ մանչ զաւակը, ծնած է հայկական Ամանոսեան Լեռներու Սովուդ Օլուխ կամ Սովուզ Օլուզ գիւղը (Ալեքսանտրեթէն մօտ տասը ք.մ. հեռու լեռնալանջի վրայ), 14 Մայիս 1932ին: 1939ին, երբ Ֆրանսա Ալեքսանտրեթի նահանգը դաւադրաբար «կը նուիրէ» Քեմալական Թուրքիոյ, նահանգին հայերը կը գաղթեն Լիբանան, իսկ Կիզելեանները Լիբանանէն կը տեղափոխուին Հալէպ, Սուրիա:



Ա. Կիզելեան իր նախակրթութիւնը կը ստանայ Հալէպի Կիլիկեան Վարժարանին մէջ, որուն ընթացքը երբ կ'աւարտէ 1948ին, իբրեւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Գարեգին Ա.ի սան, մուտք կը գործէ Կաթողիկոսարանի Դպրեվանք, Անթիլիաս: Հոս, Ասատուր բախտը կ'ունենայ ուսանելու եւ հասակ առնելու Գարեգին Ա. Կաթողիկոսի, Շահան Պերպերեանի,¹⁴⁴ Սիմոն Սիմոնեանի, Բիզանդ Եղիայեանի եւ Համբարձում Պերպերեանի¹⁴⁵ նման՝ իրենց մասնագիտութիւններուն մէջ քաջածանօթ հայագետներու եւ մանկավարժներու շունչին տակ: 1955ին շրջանաւարտ Անթիլիասի Դպրեվանքէն, ան կը մեկնի Հալէպ եւ ուսուցչական պաշտօն կը ստանձնէ տեղի Կիլիկեան Վարժարանին մէջ: 1957ին Ա. Կիզելեան հրաւեր կը ստանայ Կալկաթայի (Հնդկաստան) Հայոց Մարդասիրական Ճեմարանի Հոգաբարձութենէն, ստանձնելու ճեմարանի հայագիտական առարկաներու դասաւանդումը: Ան կ'ընդունի հրաւերը, եւ այդ պաշտօնին վրայ կը մնայ մինչեւ 1964, երբ ընտանեօք կը տեղափոխուի Լոնտոն: Հոս, նոյն տարին ան կը ստանձնէ «Արեգակ» ամսաթերթի խմբագրութիւնը (հրատարակութիւն պարսկահայ առետրական Հայկ Գալուստեանի): Ամսագիրը երկու տարիներու կեանք կ'ունենայ միայն: Ապա՝ ազատ աս-





պարեզեց ներս ոտք դրած Ա. Կիզելեան, 1974ին կը սկսի հրատարակել «Լոնտոն»¹⁴⁶ ամսագիրը, որ կը գոյատևէ մինչեւ 1976:

Ա. Կիզելեան 1960ին կը հրատարակէ *Համոյ Եւ Ֆարիկէ* (Տպ. Սեւան, Պէյրութ) չափածոյ սիրավէպը, որ իր երկրորդ հրատարակութիւնը կ'ունենայ 2009ին, Երեւան, որ իր կողքին տակ նաեւ կ'ընդգրկէ պոէմային անգլերէն թարգմանութիւնը, կատարուած Մանուկ Փրեանցի¹⁴⁷ կողմէ: 2009ին Երեւանի մէջ լոյս կը տեսնէ Ալբերտ Փարսադանեանի¹⁴⁸ *Յարապետող Բարեկամութիւն* հատորը (երկրորդ, լրացուած հրատարակութիւն), ուր հրատարակուած Ա. Կիզելեանի բազմաթիւ նամակները ուղղուած հատորի հեղինակին, եւ կարեւոր թիով այլ գրութիւնները զինք «հեղինակակից» կը դարձնեն: Հատորը հարուստ է նաեւ Ա. Կիզելեանի կենսագրական տուեալներով ու մեծաթիւ լուսանկարներով:

Իր խմբագրած թերթերուն ու սփիւռքահայ մամուլին մէջ լոյս տեսած գրութիւններուն մէկ մասը հատորով մը լոյս կը տեսնէ 2011ին, Պէյրութ, *Թերթելով Մամուլը* անուան տակ, խմբագրութեամբ Երուանդ Քասունիի:¹⁴⁹

Ասատուր Կիզելեան մշակոյթի ու հասարակական գործիչ է միաժամանակ: Սկսած Հալէպէն, անցնելով Կալկաթա եւ Լոնտոն, ան իր հրապարակային դասախօսութիւններով, երաժշտական ու թատերական գործունէութիւններու կազմակերպութեամբ, ընդհանրապէս արուեստի, բայց մանաւանդ հայ գիր ու գրականութեան եւ մշակութային կեանքի քաջալերողն է ու կենսագործողը: Այս նոյն ժամանակներուն, իր հրապարակագրութեամբ ու գործնական քայլերով ան Հայ Դատի աննկուն պաշտպանն է ու հետապնդողը: Այդ առումով, 1987ին «Պի.Պի.Սի.»ի կողմէ ձայնասփռուած իր ելոյթները կը մնան արժանի յիշատակութեան: 1988ին, հայրենիքի մահաբեր երկրաշարժի տարին, օգնութեան կոչով ան իր ձայնը լսելի կը դարձնէ անգլիական ձայնասփիւռի եւ հեռուստացոյցի կայաններէն: 18 Ապրիլի, 2005 թուակիր իր վաերագրական «Բաց Նամակ»ը՝ ուղղուած Մեծն Բրիտանիոյ, Ա.Մ. Նահանգներու եւ Հրէաստանի կառավարութիւններուն, անգամ մը եւս կը հաստատէ իր կեցուածքը Հայ Դատին հանդէպ:

Մարդամօտ եւ սրտբաց իր խառնուածքով, Ա. Կիզելեան յաջողած է բարեկամներու ընդարձակ շրջանակ մը կազմել եւ Սփիւռ-





քի մէջ, ե՛ր Հայաստանի: Իր բարեկամներու ցանկին մէջ են հնդիկ մեծանուն գիտնական Տոքթ. Սունիթի Քումար Չաթրըճի, Ուինսթըն Չըրչիլի դուստրը՝ Սարա Չըրչիլ,¹⁵⁰ Արամ Խաչատուրեան ու դեռ բազմաթիւ հայ եւ օտար գրողներ, մշակոյթի գործիչներ ու մտատրականներ:

Ա. Կիւզելեան առաջին անգամ Հայաստան կ'այցելէ 1963ին, մասնակցելու սփիւռքահայ ուսուցիչներու վերապատրաստման դասընթացներուն, ու այդ թուականէն ետք, տարբեր առիթներով ան քանիցս կ'այցելէ Հայաստան, վերադարձին՝ միշտ հետը բերելով քիչ մը ւաւելի խանդավառութիւն ու նուիրում հայրենիքին հանդէպ:

Ա. Կիւզելեան, տասնամեակներու իր մանկավարժական, գրական, հրապարակագրական, հասարակական ու եկեղեցանուէր գործունէութեան համար, 1982ին, Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Ա.ի կողմէ կը պարգեւատրուի «Սուրբ Ներսէս Շնորհալի» շքանշանով:

Մարտ 2012ին, Ա. Կիւզելեան կը պարգեւատրուի ՀՀ Սփիւռքի նախարարութեան «Ուիլիամ Սարոյեան», իսկ Մայիս 2012ին՝ ՀՀ Նախագահի «Մովսէս Խորենացի» շքանշաններով:

Ա. Կիւզելեան 1957ին կ'ամուսնանայ Վիվիէն-Նարինէ Ալեքսեանի հետ: Ան այսօր բախտաւոր է երկու դուստրերով եւ երեք մանչ թոռներով:







16. 9. 1965

Երեմի Գրեքստ.

Եւ յ. - ամ անխելոս ինչոքոց յգեղոյ
ջրոց Տո հուսոյ ինչոքոց:
Երեմի Գրեքստ. Ի. Լուսինացի անխելոս յգեղոյ:
անխելոս յգեղոյ Գրեքստ յգեղոյ
Եւ - Ի Եւ Եւ - Գրեքստ. Ի. Լուսինացի
Եւ:

Եւ յգեղոյ յգեղոյ Գրեքստ. Ի. Լուսինացի
Եւ յգեղոյ յգեղոյ: "Եւ յգեղոյ յգեղոյ յգեղոյ
Եւ յգեղոյ յգեղոյ յգեղոյ յգեղոյ յգեղոյ
Եւ յգեղոյ յգեղոյ յգեղոյ յգեղոյ յգեղոյ
Եւ յգեղոյ յգեղոյ յգեղոյ յգեղոյ յգեղոյ

"Եւ յգեղոյ յգեղոյ յգեղոյ յգեղոյ յգեղոյ
Եւ յգեղոյ յգեղոյ յգեղոյ յգեղոյ յգեղոյ
Եւ յգեղոյ յգեղոյ յգեղոյ յգեղոյ յգեղոյ
Եւ յգեղոյ յգեղոյ յգեղոյ յգեղոյ յգեղոյ
Եւ յգեղոյ յգեղոյ յգեղոյ յգեղոյ յգեղոյ

Եւ յգեղոյ յգեղոյ յգեղոյ յգեղոյ յգեղոյ
Եւ յգեղոյ յգեղոյ յգեղոյ յգեղոյ յգեղոյ
Եւ յգեղոյ յգեղոյ յգեղոյ յգեղոյ յգեղոյ
Եւ յգեղոյ յգեղոյ յգեղոյ յգեղոյ յգեղոյ
Եւ յգեղոյ յգեղոյ յգեղոյ յգեղոյ յգեղոյ

"Եւ յգեղոյ յգեղոյ յգեղոյ յգեղոյ յգեղոյ
Եւ յգեղոյ յգեղոյ յգեղոյ յգեղոյ յգեղոյ
Եւ յգեղոյ յգեղոյ յգեղոյ յգեղոյ յգեղոյ
Եւ յգեղոյ յգեղոյ յգեղոյ յգեղոյ յգեղոյ
Եւ յգեղոյ յգեղոյ յգեղոյ յգեղոյ յգեղոյ

Եւ յգեղոյ յգեղոյ յգեղոյ յգեղոյ յգեղոյ
Եւ յգեղոյ յգեղոյ յգեղոյ յգեղոյ յգեղոյ
Եւ յգեղոյ յգեղոյ յգեղոյ յգեղոյ յգեղոյ
Եւ յգեղոյ յգեղոյ յգեղոյ յգեղոյ յգեղոյ
Եւ յգեղոյ յգեղոյ յգեղոյ յգեղոյ յգեղոյ

Նմոյշ մը Ասատուր Կիւզելեանի ձեռագիրէն



ԱՍԱՏՈՒՐ ԿԻՒՋԵԼԵԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ ՍԻՄՈՆ ՍԻՄՈՆԵԱՆԻՆ

ՆԱՄԱԿ 1

[Կալկաթա], Յունուար, 1957

Սիրելի Պրն. Ս. Սիմոնեան,
Պէյրուբ

Անմիջապես չգրեցի, պարզապես անոր համար որ չէի ծանոթացած շրջապատիս: Հիմա որ որոշ գաղափար մը կազմած եմ Մարդասիրական ճեմարանի եւ կալկաթահայութեան մասին, կրնամ կանխել ձեր մտքին մէջ արթննալիք շատ մը հարցումներուն պատասխանները:

Փոքր ծանօթութիւն մը ճամբորդութեանս մասին:

Կիրակի առաւօտեան ժամը 4.45ին օդանաւը թռիչք կատարեց Պէյրութէն եւ Զարաչի հասաւ Լիբանանի ժամով 12.15ին, իսկ Փաքիստանի ժամով՝ 3.15ին: Զարաչի մնացիկը երեք ժամ: Կալկաթա հասայ գիշերուան ժամը 11.30ին:

Դամասկոսի K.L.M. ընկերութիւնը, որ խոստացած էր ճեմարան հեռագրել, ստած էր... ուստի ստիպուեցայ ընկերութեան *օթոպիւսով* երթալ քաղաք, որ մօտ տասը ք.մ. հեռու է օդանաւակայանէն: *Թաքսի* մը առի Grand Hotel-էն,¹⁵¹ որ հինգ վայրկեանուան մէջ զիս հասցուց ճեմարան... դանդաղ գնացքով: Վեց ռութի առաւ ինծմէ վարորդը: Յաջորդ օր պարզուեցաւ որ տասներկու անգամ խաբուած եմ...:

Քանի մը ծանօթութիւններ դպրոցի մասին:

Դրութիւնը բոլորովին տարբեր է հոս: Դպրոցը ունի ութ դասարան: Վերջին դասարանը կը ներկայանայ matriculation-ի քննութեան, Մելգոնեանի պէս: Ես կը դասաւանդեմ միայն վերջին երեք դասարաններուն, գրաբար եւ աշխարհաբար շաբաթը երեքական պահ, հայոց պատմութիւն՝ մեկական պահ, իսկ ութերորդ դասարանին գրականութիւն՝ մեկ պահ: Ընդամենը





քան պահ դաս ունիմ: Շատ հարեւանցի աւանդուած է հայերէնը: Ճեմարանի նախկին ուսուցիչը եղած է մի ոմն [Վիկտոր] Վարդանեան,¹⁵² կաթոլիկ չվարդապետ մը, ուսած Յոռմի *փրոփակակնտայի* դպրոցին մէջ: Կ'ըսեն թէ լաւ հայերէն գիտէ, բայց մէկ բան շատ յստակ է, աշակերտներուն ոչինչ սորվեցուցած է: Աշակերտները կը խօսին եւ կը գրեն արեւելահայերէն: Բոլոր դասագիրքերը հնաբանական արժէք ներկայացնող գիրքեր են: Դպրոցի պաշտօնական լեզուն անգլերէնն է: Դժբախտաբար, աշակերտութիւնը սովորութիւն ըրած է անգլերէն խօսիլ: Հոս ըսեմ որ բոլոր հայերը Կալկաթայի մէջ անգլերէն կը խօսին, շատերը նախապատուութիւն տալով անոր, ուրիշներ՝ մոռցած ըլլալով իրենց մայրենի լեզուն: Տասը օրուան ընթացքին հրաւիրուեցայ մէկէ աւելի *քոքթէյլ փարթիներու* եւ ցաւով նկատեցի որ բոլոր հայերը կը խօսեին անգլերէն, կ'երգէին անգլերէն, նոյնիսկ կը մտածէին անգլերէն: Հայութեան մեծամասնութիւնը, ներառեալ Ճեմարանի երկսեռ աշակերտութիւնը, ոչինչ գիտէ մեր արժէքներու մասին: Բարձրագոյն կարգի ուսանողներ հազիւ կը յիշեն արեւելահայ գրողներէն քանի մը հատ: Հայ գիրքով հետաքրքրուող ոչ իսկ մէկ հոգի կրնաք գտնել: Զանի մը օրէ ի վեր աչքէ կ'անցընեմ դպրոցին գրադարանը: Գիրքերը փոշիներու մէջ, անխնամ, ցեցակեր...: Կ'ենթադրեմ որ արժէքաւոր բազմաթիւ գիրքեր «շոգիացած» են: Մայր մտնող արեւէն լոյսի աղօտ քանի մը շողեր մնացած են միայն:

Գալով առասպելական հարուստներու հեքիաթին, բառին ճիշդ առումով «հեքիաթ» է միայն: Ըստ Պրն. Վահան Փոլատեանին, Ճեմարանը շատ աղքատ է, ամսական միայն եօթ հազար ռուբլի կը ստանայ եկեղեցիէն եւ անով կը պահէ իր գոյութիւնը: Ուսանողները ձրի կը կարդան: Պարսկաստանէն եւ Իրաքէն եկած ուսանողները ընդհանրապէս աղքատ են:

Զանի մը ծանօթութիւն ալ դպրոցական աշխատանքի ժամերու մասին:

Առաւօտեան ժամը 8.15-8.30 աշակերտութիւնը կը հաւաքուի սրահ աղօթելու: Երեքշաբթի եւ Ուրբաթ օրեր ուսուցիչներ եւ ուսուցչուհիներ հերթով կը բարոյախօսեն: Դասերը կը սկսին 8.30ին: Իւրաքանչիւր պահ կը տեսնէ քառասուն վայրկեան: Ժամը տասին ուսուցիչներ թէյ կ'ամենեն: Այն ուսուցիչները, որոնք սենեակ ունին դպրոցին մէջ, ծառաները անոնց թէյը կը բերեն





սենեակ, իսկ անոնք որ Կալկաթա կը բնակին իրենց թեյը կ'առնեն ուսուցչարանին մէջ: Կաթը միշտ ներկայ է թեյին քով...: Չորս պահ դասաւանդութենէ ետք, ժամը 11.30ին աշակերտները կը ճաշեն: Կեսօրէ ետք աշակերտները միայն երեք պահ դաս ունին, ժամը 12.30-2.30, որմէ ետք ուսուցիչները ազատ են մինչեւ յաջորդ առաւօտ: Ուսուցիչներն ու աշակերտները ժամը 2.30ին դարձեալ թեյ կ'առնեն: Այն ուսանողները, որոնք կը փափաքին՝ երաժշտութեան կը հետեւին ժամը 3-4ին: ժամը 4-5 պարտաւորիչ մարզախաղի պահն է: Աղջիկները ընդհանրապէս *պասքէթպոլ*, իսկ տղաքը՝ *ռակպի* եւ *հոքի* կը խաղան: Ժամը 7-9 ուսանողներու սերտողութեան ժամն է:

Կալկաթայի եւ հնդիկներու մասին յաջորդ նամակովս կ'աշխատիմ ընդհանուր պատկեր մը տալ:

Ամսականներս տակաւին չեմ ստացած: Զնդկական կառավարութիւնը չ'արտօսեր որ երկրէն դրամ դուրս ելլէ: Բայց պիտի աշխատիմ արտօսութիւն ձեռք ձգել: Դրամս պիտի դնեմ դրամատուն եւ պիտի դիմեմ կառավարութեան, որպէսզի դիւրութիւններ տայ ծնողքիս ապրուստը հոգալու: Ձեւ մը պիտի գտնենք:

Բարեւներ ձեր տիկինին: Նազարեթին [Էլմաճեան]¹⁵³ եւ տպարանի միւս աշխատողներուն բնական է հնդկական տաք յարգանքներս չէք մոռնար յայտնելու: Օդը հոս հիմա շատ հաճելի է. կը համապատասխանէ մեր գարնան:

Առ այժմ այսքան:

Սիրով՝
Ասատուր

ՆԱՄԱԿ 2

[Կալկաթա], 28 Զոկտ[եմբեր] 1957

Սիրելի Պրն. Ս. Սիմոնեան,

Ոչ մէկ երկտող ձեզմէ: Վստահ եմ անպաշտօն աղբիւրներէ լսած էք արդէն քանի մը ամիս տեւող հոգեկան փոթորիկէ մը ետք նշանուիլս կալկաթահայ Վիվիէն (Նարինէ) Ալեքսեանին հետ: Քայլ մըն էր այս, զոր որոշած էի գոնէ Կալկաթայի մէջ չառնել, բայց երբեմն սերը կը ծնի կարճ երկունքէ մը վերջ, ինչ-





պէս որ պատահեցաւ այս պարագային, Յունիս մէկին, յամի Տիառն մերոյ Յիսուսի Զրիստոսի 1957:

Սիրելի Պրն. Սիմոնեան, Նարինէն բազմակողմանի տաղանդով օժտուած աղջիկ մըն է, իսկ ընտանիքը՝ կալկաթահայ ամենայայտնի ընտանիքներէն մէկն է: Հայրը 1955ին Վազգէն Կաթողիկոսի [Պալճեան] ընտրութեան եւ օժման մասնակցող պատգամաւորներէն մին եղած է: Ունի առեւտրական ընկերութիւն մը, որ *կոմա լաքա*¹⁵⁴ կ'արտածէ: Ընկերութիւնը բազմաթիւ երկիրներու մէջ ներկայացուցիչ ունի: Հայր Շահէն [Աճեմեան]¹⁵⁵ այս ընտանիքի մասին լայն ծանօթութիւն կրնայ տալ ձեզի:

«Միականի»ին՝ Կալկաթայի եւ Աւստրալիոյ արկածախնդրութիւններուն մասին կը գրեմ յաջորդ նամակովս: Ամբողջ կալկաթահայութիւնը, ներառեալ Վահանին [Փոլատեան] բարեկամներէն շատեր, պժգանքով կը խօսին «Միականի»ի մասին: Քսան ազգայիներ նամակ գրած են եկեղեցւոյ վարչութեան ըսելով որ Դերենիկ Եպիսկոպոս [Փոլատեան]¹⁵⁶ շատ միջամուխ կ'ըլլայ իրենց ազգային-եկեղեցական գործերուն. լաւ կ'ըլլայ որ ինքզինք ծանր պահէ:

Որ մէկը ըսեմ... դրամ առնելը եկեղեցիէն, քրոջ հետ չորս հազար տոլար դրկելը, քահանային վրայ շղայնանալով խաչը գետին նետելը...: Նարինէի հօրը առաջարկեր է որ իր հինգ հազար տոլարը փոխանցէ Լիբանան: Անշուշտ մարդը մերժեր է: Երեւանի մէջ Կալկաթայէն գացած երեք պատգամաւորները, որոնց մէջ նաեւ Նարինէին հայրը՝ խաբեր է, իւրաքանչիւր սթերլինը քսան վեց ռուբլի արժողութեամբ գնելով: Յետոյ մարդիկ հասկցեր են որ սթերլինը յիսուն ռուբլի ամենապակաս արժէք ունի:

Լաւ կ'ըլլայ որ այս մարդը շուտով կանչեն. թէ՛ ինքզինք խայտառակեց եւ թէ՛ անկախ միաբանութեան անունը:

Ապագային աներհայրս, ես ալ իրենց հետ, միտք ունինք հաստատուելու Լոնտոն: Թէ այնտեղ ի՞նչ գործով պիտի զբաղիմ՝ յայտնի չէ. հաւանաբար իրենց գրասենեակին մէջ աշխատիմ:

1960ին, Նարինէին հայրը մտադիր է դարձեալ այցելել Հայաստան, այս անգամ տիկինը, Նարինէն եւ զիս ալ տանելով:

Ամուսնութիւնը հաւանաբար Դեկտեմբերի մէջ տեղի ունենայ.





ճիշդ թուականը որոշ չէ տակաւին:

Մալխասեան բառարանները չհասան. քարտէսները ստացած եմ, բայց չեմ ծախած. այս հարցերով հետաքրքրուողներ չկան այստեղ: Կարծեմ մէկ մասը պիտի վերադարձնեմ:

Կը յուսամ Վահանը ձեր հետ ունեցած հաշիւներս մաքրեց. այդ մասին հաճեցէք գրել:

Կը յուսամ տիկինն ու պզտիկները հանգիստ են: Բարեւներս բոլորին:

Սիրով՝
Ասատուր

[Յ.Գ.] Ներփակ նկարը վերցուած է Զնդկաստանի Ճալտա¹⁵⁷ կոչուած ամարանոցին մէջ, ուր հայեր *կոմա լաքայի* գործարաններ ունին: Դրախտի նման գեղեցիկ վայրեր կան Զնդկաստանի մէջ:

ՆԱՄԱԿ 3

[Կալկաթա, 1957]

Սիրելի Պրն. Սիմոն Սիմոնեան,
Պէյրուս

Վստահ եմ, որ հետաքրքրական լուրեր գտնելու տրամադրութեամբ բացիք պահարանը: Կը խոստանամ այդ մասին գրել նամակներուս պատասխանը ստանալէ ետք: Ժամը գիշերուան տասնմէկն է: Դուրսը անընդհատ կրակոցի ձայներ կը լսուին: «Չինական նոր տարի» կը տօնեն... տարօրինակ բան, քանի եկած եմ, չինացիք «Նոր Տարի» կը տօնեն: Այս բոլորը միջանկեալ:

Ժամ մը առաջ Պրն. Վահանին [Փոլատեան] հետ կը խօսեինք դասագիրքերու մասին: Գիտէք որ դպրոցի հայերէն լեզուն արեւելահայերէն է. ուստի բոլոր դասագիրքերը բերուած են Պարսկաստանէն. դասագիրք կ'ըսեմ, բայց դուք *Թափառական Զրեան* վէպը հասկցէք: Վահանին թելադրեցի, որ ձեր *Արագածներն* ու մանաւանդ *Յայոց Պատմութիւններու* շարքը գործածէ, որպէս դասագիրք: Խնդրեց որ գրեմ ձեզի ու մէկական օրինակ իբր նմոյշ ուզեմ: Մօտս ձեր հայոց պատմութեան շարքը ունիմ, բացի տարրական Ա. տարիէն. իսկ նոր շրջան Գ. տա-





րին պակաս է: Արագածի մանաւանդ 2. տարին անմիջապէս ղրկեցէ՛ք:

Տակաւին Մալխասեանց բառարաններս չեն հասած:

Պրն. Օ[ննիկ] Սարգիսեանին ըսէք Ատլասէն թող առ այժմ քսան օրինակ մը ղրկէ: Անմիջապէս որ արտօնութիւն ստանամ դրամ ղրկելու, առաջին հերթին կը վճարեմ: Կառավարութեան դիմած եմ արդէն:

Հայր Գիւտին [Նագգաշեան]¹⁵⁸ միջոցաւ վարդապետներուն «հայրական ողջոյններ»ս հաղորդեցէք. մօտ օրէն կը գրեմ իրենց... տակաւին դրամ չեմ ստացած...:

Բարեւներս Տիկին [Մարի] Սիմոնեանին:

Սիրով
Ասատուր

ՆԱՄԱԿ 4

Կալկաթա, 25 Փետր[րուար] 1958

Սիրելի Պրն. Սիմոն Սիմոնեան,
Պէյրուս

Գիտեմ որ զբաղած էք տպարանով, կը գրեմ առանց ձեզմէ լսած ըլլալու:

Քանի մը օր առաջ անգլերէն թերթի մը մէջ յայտարարութիւն մը կար հայերէն ձեռագիր Աստուածաշունչի մը մասին: Երէկ տրուած հասցէին գացի աներհօրս եւ տիկնոջս հետ: Ըստ թերթի մէջ հրատարակուած յայտարարութեան, ձեռագիրը (Նոր Կտակարանը միայն) ծաղկած է 1114 թ.ին: Բայց ես հաւանական չեմ գտներ տրուած թուականը: Հայկական տոմարի համաձայն պէտք է ըլլայ: Ձեռագիրի վերջին էջին վրայ գրուած է. «Եւ արդ՛ ես յետինս ի գրչաց եւ անարժանս ի կարգաւորաց՝ սուտ անուն յովանէս մշեցի երեցս Այլ յուսամ ի մարդասիրութիւն այ...»:

«Արդ՛ ծաղկեցաւ սք անետարանս ձեռամբ յովանէս երիցուցս: Ի թվն ռճժդ դարձեալ լի բերանով յիշեցէք ի մաքրափայլ **յաղօթս** (այս բառը յստակ չէ. Ա.Կ.) ձեր զեղիագար քննայն»:

Թուականի յիշատակութեան ժամանակ չէ ըսուած ի թուին Հայոց:





Մանրանկարները բաւական նուրբ են, թէւ չեմ կարծեր որ բացառիկ արժէք մը ունենան: Ձեռագիրը շատ կանոնաւոր ու մաքուր է:

Ձեզի կը դրկեմ ձեռագրի առաջին էջը եւ վերջին էջէն մաս մը: Հաճեցէք այս մասին գրել ինծի:

Շատ հետաքրքրական է, թէ ինչպէ՞ս ձեռագիրը 15ի կոտորածներէն ազատուելով հասեր է Հնդկաստան: Այդ ձեռագրի թափառական կեանքը մեր ժողովուրդի աստանդականութեան հետ նոյնն է: Տիկինը՝ որուն կը պատկանի ձեռագիրը, Mrs. Dutt, հայ մըն է՝ ամուսնացած հնդիկի մը հետ: Կոտորածներէն մազապուրծ փախած մայրը, տան բոլոր հարստութիւններէն միայն այս ձեռագիրը ազատեր է: Աւետարանը քանի մը օր ամանի մը մէջ մնացեր է ջուրի վրայ: Հայ տիկինը տակաւին կը խօսի հայերէն. մականունը չի յիշեր. անունը եղած է Նուէրուհի: Տիգրանակերտցի է: Ձեռագրի մասին գրեցի նաեւ Երեւան: Հազար հինգ հարիւր ռուբի կ'ուզէ: Այս մասին այսքան:

Կալկաթահայ համայնքը այս օրերուն իր խաղաղ նկարագիրը կորսնցնելով, մեծ տագնապի մէջ կ'ապրի: Չեմ գրեր այս տողերը միայն ձեզի համար: Կ'ուզեմ որ Խաղ Սրբազանը [Աշապահեան]¹⁵⁹ եւ պատասխանատու մարմիններ իմանան ըսածներս եւ անյապաղ Լիբանան կանչեն Դերենիկ Եպիսկոպոսը [Փոլատեան], քանի «անհաճո՛յ դէպքեր չեն պատահած» (այս քանի մը ազգայիններու խօսքն է): Հիմա «շնորհիւ Դերենիկ Եպիսկոպոսի քարոզներուն եւ հրապարակային ելոյթներուն», համայնքը երկուքի բաժնուած է: Եկեղեցւոյ վարչութեան եւ ժողովուրդի 90 տոկոսը կը պահանջեն, որ Դերենիկ Եպիսկոպոս [Դազարեան] անմիջապէս հեռանայ Կալկաթայէն կամ չմիջամտէ իրենց գործերուն, քանի որ ան ոեւէ հանգամանք չի ներկայացներ եւ իրենք ունին իրենց առաջնորդը, յանձինս Տէր Ասողիկ Եպիսկոպոսի [Ղազարեան]: Ես Սրբազանին այս աստիճան չարամիտ ու ոխակալ ըլլալը չէի գիտեր: Հաւանաբար չհաւատաք ըսածներուն: Բայց առանց դոյզն չափազանցութեան կը գրեմ ըսածներն ու ըրածները: Նախորդ նամակներուս մէջ գրած էի արդէն մի քանի «փոքր», բայց այստեղի ժողովուրդին համար մեծ նշանակութիւն ունեցող խնդիրներու մասին:

Անցեալ տարուան Մարտին երբ Սրբազանը Կալկաթա եկաւ,





զինք դիմաւորելու համար օդանաւակայան գացած էին եկեղեցւոյ վարչութեան անդամներուն մեծ մասը եւ բաւական ժողովուրդ: Ծայրագոյն Արեւելքէն երբ վերադարձաւ քանի մը շաբաթ առաջ, զինք դիմաւորելու համար օդանաւակայան գացած էին ի պաշտօնէ երկու քահանաներ, եղբայրը եւ երկու ուրիշ անձեր: Այս արդէն ժողովուրդի զգացումը ցոյց կու տայ իրեն հանդէպ: Այն մարդիկը, որոնք նոյնիսկ իր ճանապարհածախսը վճարած էին Ծայրագոյն Արեւելքի համար, չգացին զինք տեսնելու:

Ժողովուրդի գիտակից եւ կշիռ ունեցող մասը, հակառակ զինք առաջուց լաւ ճանչցած ըլլալուն, կը յարգէր զինք եւ կ'աշխատէր տրտնջացողները լռեցնել: Այս կացութիւնը շարունակուեցաւ մինչեւ այն ժամանակ, երբ ստացուեցաւ «Էջմիածին»¹⁶⁰ ամսագրի Յուլիս-Օգոստոս թիւը, որուն մէջ Դերենիկ Եպիսկոպոս] շատ խիստ ու բացարձակապէս անճիշդ յօդուած մը գրած էր: Այդ գրութեան մէջ, զոր հաւանաբար կարդացիք, հնդկահայերը ներկայացուած էին բացասական գոյներով, «Քահանաներ հոգեւոր գործ չեն կատարեր, այլ ժողովուրդի մէջ վեճեր ու կռիւներ կը յառաջացնեն ու այս բոլորին պատճառը իրենց տարիներով առանց առաջնորդի մնացած» ըլլալն է:

Այս յօդուածի իմաստը չկրցան հասկնալ հնդկահայեր: Իրենց գաղութը յատկանշուած է եղած միշտ իր խաղաղութեամբ եւ ահա կու գայ Եպիսկոպոս մը, որ հրապարակաւ «վեճ եւ կռիւ» կը վերագրէ իրենց:

Այս ուղղութեամբ ազգայիններ նամակներ գրեցին Ասողիկ Սրբազանին, Վեհափառին [Վազգէն Ա. Պալճեան] եւ «Էջմիածին» թերթին:

Անշուշտ ինծի համար հայելիի նման յստակ է թէ ինչո՞ւ Դերենիկ Եպիսկոպոս այդ յօդուածը գրեց: Այդ մասին նամակիս վերջաւորութեան:

Ուրեմն կացութիւնը այսպէս լարուած էր, երբ Սրբազանը հասաւ Կալկաթա Աւստրալիայէն: Անշուշտ իր ճամբու ընթացքին ամիսներով մնաց Ճաբոն, Յաւայեան Կղզիներ, Ֆորմոզա եւ Ծայրագոյն Արեւելքի միւս բոլոր մանր ու խոշոր երկիրներու մէջ:

Կալկաթա վերադարձին՝ Սրբազանը ուզեր է ժողովի կանչել եկեղեցւոյ վարչութիւնը եւ բացատրութիւն տալ իր ճամբորդութեանց մասին: Վարչականներ նախ չեն ուզած երթալ, յետոյ յանձն առեր են, պայմանաւ որ Սրբազանը ուրիշ խնդիրներու





մասին չխօսի: Այս համաձայնութեամբ անցեալ Չորեքշաբթի ժողով մը գումարուեցաւ:

Իր ճամբորդութեան մասին խօսելէ ետք, հարցը դարձուցեր է իր յօդուածի մասին եւ ինքնարդարացումի դիմելով ըսեր է. «Ինչ որ գրած եմ ձեզի համար չէ... ուրիշներու համար է» («Էջմիածին»ի յօդուածը կը թելադրեմ կարդալ): Ժողովի մէջ բուն կերպով քննադատած են զինք: Խնդիրը ընդհանուրէն մասնատորի փոխելով, հարց տուեր է այն երեք անձերուն, որոնք իրենց չէքերը զոհեր են Սրբազանի մեքենայութեան Յայաստանի մէջ:

- Սրբազան Յայր,- ըսեր է մէկը,- եթէ այդ մասին բացատրութիւն պահանջէք, ժողովը կը թողում:

Ի վերջոյ տեսնելով, որ իր դէմ գրգռուած են բոլորն ալ, ըսեր է.

- Յիմա իմ քովս ունիմ նամակներ, զոր ձեզմէ ոմանք գրած են ուրիշ տեղեր: Այդ նամակները, եթէ մէջտեղ հանեմ, ձեր համայնքը երկուքի պիտի բաժնուի: Ես պատասխանատու չեմ. եթէ չէք ուզեր որ այդ վաւերաթուղթերը մէջտեղ բերեմ, ուրեմն լաւ է որ այդ հարցերը մոռնաք եւ նոր գործի սկսինք:

Առջի օր, տեսնելով որ լարուածութիւնը կը շարունակուի եւ ոչ ոք կը բարեւէ զինք, սպառնացեր է «Լիբանանահայ թերթերու մէջ յօդուածներ գրել կալկաթահայերու մասին»:

Այն օրէն որ Ասողիկ Սրբազանը առաջնորդ նշանակուեցաւ Յնդկաստանի, պատարագի ընթացքին առաջնորդին անունը կը յիշատակուէր: Դերենիկը արգիլեց այդ քահանաներուն, ըսելով որ Ասողիկ Սրբազանը միայն նուիրակ է եւ ոչ առաջնորդ:

Յիմա կ'ուզէ երկու գլխաւոր գործեր կատարել.

1- Սարկաւագ մը ձեռնադրել,

2- Եկեղեցւոյ բոլոր նամակներն ու վաւերաթուղթերը աչքէ անցնել «Արեւելքի հայերու պատմութիւն»ը գրելու համար:

Եկեղեցւոյ վարչութիւնը մերժած է իր երկու խնդրանքներն ալ: Իրեն հասկցուցեր են որ Ասողիկ Եպիսկոպոսը Յնդկաստանի առաջնորդ նշանակուած է Վազգէն Կաթողիկոսի [Պալճեան] կողմէ եւ կենցաղավարութեան հակառակ է, իրեն համար Կալկաթա մնալով եկեղեցական գործերով զբաղիլ առանց հանգամանքի:

Այս բոլորով՝ տասէն մէկը չգրեցի ձեզի... տակաւին կան այնպիսի բաներ, զորս չեմ ուզեր նամակով գրել:

Սարդոց սթերլինը 26 ռուբլիով գներ է Երեւանի մէջ: Յաջորդ օր, ուրիշ եկեղեցական մը, 50 տուեր է. քանի մը օր ետք՝ Մոսկ-





ուայի մէջ, 70 են տուեր: Այս բոլորը ընելով հանդերձ՝ տակաւին երէկ *թելեֆոնի* վրայ ազգայիններէն մէկուն ըսեր է, թէ Յայաստանի կառավարութեան լուր պիտի տայ, եթէ այդ տարածայնութիւններուն վերջ չտան:

- Սրբազան,- ըսեր է մարդը,- մի մոռանաք որ Երեւանում դուք եկաք եւ առաջարկեցիք մեզ ռուբլի ծախել, եւ ինչ գին որ տուեցիք, ընդունեցինք:

Տեսնելով որ կացութիւնը շատ փափուկ է, ըսեր է.

- Այս բաները մոռնանք եւ աշխատինք եկեղեցւոյ պայծառութեան համար: Ես Լիբանան վերադարձիս ձեր մասին լաւ բաներ պիտի գրեմ:

- Չենք գիտեր թէ ի՞նչ էք գրելու մեր մասին, սակայն գիտենք որ «Էջմիածին» թերթում շատ վատ բաներ էք գրել:

Այս բոլոր մանրամասնութիւնները գրեցի ձեզի, որպէսզի ունէ ձեռով, վարդապետի մը միջոցաւ հասցնէք հոն, ուր պետք է: Իր այս անպատասխանատու գործունեութեան պատճառաւ պատուական Ասողիկ Եպիսկոպոսին շատ անշուք պատիւ տուին կալկաթահայեր, ըսելով որ ան ալ Միջին Արեւելքէն կու գայ: Կրնաք նոյնիսկ նամակս տալ պատասխանատու մարմին: Այս տեղի տագնապը կը խաղաղի միայն իր հեռացումով:

Ղրկուած տասը գիրքերէն ինը վերադարձուցի ձեզի, որովհետեւ, ինչպէս գրած էի, Յայաստանէն մօտ քսանհինգ օրինակ դրկած են, կանաչ կազմով (անկախ այն պարագայէն, որ այս տեղ հայերէն գիրքով զբաղուող չկայ): Վերադարձուցի նաեւ Յայաստանի քարտէսներու մէկ մասը:

Ընտանեկան կեանքիս մէջ շատ երջանիկ եմ: Այժմ ինքնաշարժ կը վարեմ արդէն: Զանի մը շաբաթէն կը ստանամ արտօնագիրս:

Շաբաթը երկու անգամ Նարինէին հետ *թենիս* կը խաղանք: Ինք Պենկալ նահանգի կանանց *թենիսի* ախոյեանն է:

Կը յուսամ գործերը լաւ կ'ընթանան: Տիկնոջս ու իմ բարեւները ձեզի, Տիկին Սիմոնեանին եւ պզտիկներուն:

Ուրիշ շատ հարցեր կան, որոնց մասին կը գրեմ, երբ ստանամ պատասխանս:

Նամակիս անխնամութեան համար ներողամիտ գտնուեցէք, կ'աճապարեմ տեղ մը երթալու համար:

Սիրով՝
Ասատուր





ՆԱՄԱԿ 5

Կալկաթա, 27 Մարտ 1958

Սիրելի Պրն. Սիմոն Սիմոնեան

Կը յուսամ տպարանի գործերը յաջող կ'ընթանան եւ տպագրիչ մեքենաներու երաժշտութիւնը ախորժելի կը հնչէ:

Անշուշտ «կը հաստատեմ ձեր... թուակիր նամակը» չեմ կրնար գրել, որովհետեւ այդպիսի հազուադէպ իրողութիւն մը չէ պատահած տակաւին:

Գործերս կը շարունակեմ եռանդով: Զիմա սկսած եմ ճեմարանի աւարտական դասարանի տղոց տալ մատենագրութեան պատմութեան ամփոփ նօթեր: Աշխարհաբարի ուսուցման համար կը հետեւիմ ձեր *Մեթոտին*. շաբաթը անպայման շարադրութիւն մը գրել կու տամ: Տղաներէն ոմանք տաղանդ ունին գրելու, մինչեւ 30 էջոց պատմութեան կը գրեն: Առաջ տարին մէկ կամ առաւելագոյնը՝ երկու շարադրութիւն գրել տուած են իրենց: Պետական քննութեան համար պետք է անցընեն 30 արեւելահայ գրողներ:

Զայոց պատմութեան պետք եղած կարելորութիւնը չէ տրուած. շաբաթը մէկ պահ է: Դասագիրք չունին գրեթէ, եթէ նկատի չունենաք մի ոմն Անոյշ Աբրահամեանի եւ Փրոֆ. Խ[աչիկ] Սամուէլեանի գիրքերը, որոնք նպատակայարմար չեն: Շատ աշխատեցայ մտցնել ձեր շարքը, չյաջողեցայ. նոյնիսկ յանձն առի դժուար մասերը արեւելահայերէնի վերածել եւ մեքենագրելով՝ տողերու վրայ փակցնել:

Ապրիլ 2էն Յունիս 2 դպրոցը փակ է:

Գալով անձնական կեանքիս, **ուրախ եմ եւ երջանիկ**, մանաւանդ որ կ'ապրիմ հայրենասեր ընտանիքի մը մէջ:

Ամսոյն 24ին քննութիւն անցուցի եւ ստացայ ինքնաշարժ վարելու արտօնագիր, որով դպրոց ինքնաշարժով կ'երթամ:

Ինչպէս ձեր նամակին մէջ ժամանակին գրած էիք Ասողիկ Սրբազանի [Ղազարեան] մասին, ես ալ նոյն բարձր կարծիքը կազմեցի **անշահախնդիր** Սրբազանի մասին: Ասողիկ Սրբազանը ձեր մասին բարձր խօսած է աներօրս, որ կալկաթահայերու ազդեցիկ ազգայիններէն մէկն է: Այս բոլորը անկապ պատմութիւններ չեն...: Սպասեցէք որ պատմեմ մեր «Միակա-նի»ի մասին:





Վրթանես] Փափագեանի¹⁶¹ *Ենիչերին* պատմուածքի հերոսներէն Տէր Մարտիրոսին դաս տալու կարողութեամբ ու խաբեական հնարագիտութեամբ օժտուած «եկեղեցականի մը մասին»՝ կարծեմ անցեալ նամակիս մէջ գրած էի ձեզի: Այդ եկեղեցականը ես կը կոչեմ «Միականի Ենիչերի»:

«Միականի Ենիչերի»ն զանազան մեքենայութիւններով այստեղ աշխատեցաւ Ասողիկ Սրբազանի պատուաւոր անունը արատաւորել: Սկսաւ սողալ գետնի վրայ, քահանաներուն նոյնիսկ գաղտնի հրահանգներ տուաւ: Ինչպէս գիտեք, Վեհի [Վազգէն Ա. Պալճեան] կոնդակով Ասողիկ Սրբազանը Ծայրագոյն Արեւելքի եկեղեցիներուն առաջնորդ նշանակուեցաւ: «Միականի Ենիչերի»ն Տէր Պօղոս Պետրոսեանի¹⁶² միամտութիւնը շոյելով, սկիզբը գաղտնի կերպով տէր հօր թելադրեր է, որպէսզի Ասողիկ Սրբազանի անունը չյիշէ եկեղեցւոյ մէջ, որովհետեւ ան միայն «կաթողիկոսական նուիրակ» է եղեր: Մի քանի շաբաթ Տէր Արամայիսը [Միրզայեան],¹⁶³ զոր Ասողիկ Սրբազանը իր անձնական ծախսով մինչեւ Աւստրալիա տարաւ, յիշեց Ասողիկին անունը: Տէր Պօղոս չյիշեց: Վարչութիւնը, որուն երկու եկեղեցականներէն մէկը աներհայրս է, հրահանգ կու տայ Տէր Պօղոսին, որպէսզի Տ[էր] Ասողիկ Սրբազանի անունը յիշէ:

Անշուշտ այս անմարսելի հարուած մըն էր «Միականի Ենիչերի»ին համար, ուստի ան կանչել կու տայ աներհայրս եւ կ'ըսէ անոր, որ սխալ եւ մեր եկեղեցւոյ կանոնագրութեան հակառակ հրահանգներ կու տայ վարչութիւնը քահանաներուն, ինչ որ բացարձակ իրաւունք չունի ընելու: Աներհայրս կ'ըսէ իրեն, որ Ասողիկ Սրբազանը Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմէ նշանակուած է առաջնորդ եւ հնդկահայեր Էջմիածնին կապուած են անքակտելի կապերով եւ չեն կրնար անոր կարգադրութեան դէմ գործել:

«Միականի Ենիչերի»ն խօսակիցին միտքը պղտորելու համար՝ կ'ըսէ որ առաջնորդ մը պէտք է ժողովուրդէն ընտրուի եւ ոչ թէ նշանակուի Վեհափառի կողմէ. Վեհափառը, կ'աւելցնէ ան, արդէն սխալ ըրած է նման կարգադրութիւն մը ընելուն համար:

Աներհայրս երկարը կարճ կապելու համար կ'ըսէ, թէ Վեհի հրահանգներէն դուրս չի կրնար ելլել վարչութիւնը, ըլլան անոնք ճիշդ կամ սխալ:





Երկու շաբաթ առաջ երկրորդ անգամ ըլլալով տեսայ զինք:
Կանչած էր իր մօտ. հետեւեալ խօսակցութիւնը անցաւ մեր միջեւ.

- Դուն գիտես Ասատուր, որ իմ դէմս Կալկաթայի մէջ հակա-
ռակութիւններ եւ ըսի-ըսաւներ կան:

- Այո, Սրբ[ագան]:

- Այդ բոլորին պատճառը դուն ես:

- Արդար չէք, Սրբ[ագան] ձեր գործունեութիւնն ու «Էջմիա-
ծիկ»ի մէջ ձեր կողմէ գրուած յօդուածն են:*

- Դուն այս մարդոց պատմած ես իմ մասիս գրուած գրքոյկին
մասին:*

- Ես չեմ պատմած:

Բացատրեցի իրեն որ «Արարատ»¹⁶⁴ կը ստանամ եւ աներ-
հայրս կը կարդայ: Թերթին մէջ յօդուած մը կար Եղիա Նաճար-
եանի¹⁶⁵ կողմէ ստորագրուած. այդ գրութեան մէջ ակնարկու-
թիւն մը կար գրքոյկին մասին: Այստեղ իջաւ անշուշտ:

- Ես չէի գիտեր այդ. ո՞ր է Եղիան հիմա:

- Չեմ գիտեր:

- Սուրիա՞ է:

- Չեմ գիտեր:

- Բայց դուն [Սիմոն] Սիմոնեանին հետ կը թղթակցիս, չէ՞:

- Մէկ նամակ ստացած եմ իրմէ:

- Այդ խանգարիչ մարդ է, քեզի հրահանգներ կու տայ, դուն
ալ ըստ այնմ կը գործես: Վանքի մէջ ինչեր չհանեց:

- Սիմոնեանը շատ բարի բնութիւն ունեցող կրթական մշակ է. ոչ
միայն եկեղեցականներու՝ այլ աշխարհականներու դէմ անգամ չէ
խօսած ինծի: Ան նամակ գրելու ժամանակ չունի. զբաղած է:

- Ի՞նչ բանով:

- Հայ մշակոյթը տարածելու գործով:

- Հիմա նայիր, Ասատուր, քեզի կ'ազդարարեմ. դուն այս բո-
լոր խնդիրները պետք է մաքրես. նախ տիկնոջդ կ'ըսես, որ
Սրբ[ագան]ը իմ տեսուչս եղած է. ականջէն կը բռնես, դասա-
խօսութիւններուս կը բերես: (Ինքնակոչ երեք դասախօսու-
թիւններ տուաւ. սրահը ճեմարանի տղաքն ու աղջիկները լե-
ցուցին: Յայտարարութիւններն անգամ եկեղեցւոյ վարչու-
թիւնը յանձն չառաւ ղրկել):

- Տիկիսս հօրը հետ կ'աշխատի, զբաղած է:

* Տե՛ս ծանօթագրութիւն 156, Դերենիկ Եպս. Փոլատեան, էջ 377:





- Լաւ մտիկ ըրէ եւ աներփօրդ ալ ըսէ, ես **խայտառակութենէ** չեմ վախնար. բոլորին ալ հաշիւը կը մաքրեմ. անամօթներ, ժողովուրդին մէջ լուր տարածեր են որ զիրենք խաբեր եմ Երեւանի մէջ... աշխարհի մէջ մարդու **բարիք** պէտք չէ ընես. (Ըրած բարիքը հետեւեալն է. Երեւանի մէջ երեք հնդկահայերու շուրջ դարձեր է եւ անոնց դրամատոմսերը գներ է, իւրաքանչիւր սթերլինին քսանվեց ռուբլի վճարելով. խեղճերը շատ գոհ մնացեր են այս բարիքէն եւ աղօթեր են իրեն համար, որովհետեւ պետական սակը միայն տասնմէկ եղած է: Յաջորդ օր, ուրիշ եկեղեցական մը, երբ հնդկահայերու ռուբլի ծախսելը տեսեր է, իսկոյն հարցուցեր է, թէ չըլլայ Դերենիկին ճանկը ինկած ըլլան: Եկեղեցականը, երբ խոստովանեցուցեր է զիրենք եւ հասկցեր՝ որ անոնց ձեռքէն անգլիական ոսկին 26ով առեր է «Ենիչերի»ն, ան առաջարկեր է եօթանասուն տալ մէկ անգլիական ոսկիին: Աներհայրս կ'ըսէ՝ բոլոր այն եկեղեցականները, որոնք իրենց ռուբլի ծախսելը տեսեր են, Նոյն հարցումը տուեր են. «Չըլլայ Դերենիկը խաբած ըլլայ ձեզ»: Այս է ըրած բարիքը):

Խօսակցութիւնը շարունակեց.

- Աստուր, դուն գիտես որ ճեմարանի քու գործդ կրնամ խանգարել (այսպէս բացէ ի բաց կը խօսեր մարդը):

- Այսօր կը թողում, եթէ ուսուցիչ մը գտնէք. բայց աս ալ ըսեմ որ այստեղ Դպրեվանք չէ, որ ձեր քմահաճոյքին համաձայն վարուիք հետս:

- Քաղաքավարութիւնն անգամ մոռցած ես:

- Դուք ձեր եպիսկոպոսի բարձրութիւնը կը մոռնաք:

Երբ տեսաւ թէ այդ կողմէն ալ պարտուեցաւ, շարունակեց.

- Դուն գիտե՞ս, որ դաշնակցականները քեզի դեմ գիրք պիտի գրէին, ես արգելք եղայ:

- Թող գրէին. դուք դաշնակցականներու հակառակ էք, ինչպէ՞ս համոզեցիք զիրենք:

Այստեղ «Ենիչերի»ն հասաւ իր աղտոտութեան գագաթնակետին:

- Ուրիշ կարելոր վաւերաթուղթ մըն ալ ունիմ քովս... գիտես ի՞նչ է:

- Ինչպէ՞ս կարող եմ:

- Խենթանցի բժիշկին տեղեկագիրը քու առողջութեանդ մասին... **դուն պիտի ուզէի՞ր որ այս բանը աներփօրդ ցոյց տայի...:**





- Սրբ[ագան], եթե դուք տեղեկագիր ունիք, ես ալ ունիմ. եւ անոր մէջ ըսուած է որ ես եկած օրես հիւանդանոց՝ քննուած եմ, եւ ոչ մէկ վնաս տեսած եմ վրաս: Այդ պատճառաւ ձեռակերպութիւնները վերջացնելով՝ իսկոյն ուրիշ հիւանդանոց փոխադրած եմ զիս: Երկրորդ, եթե այդ սպառնալիքով կը կարծէք զիս գործածել ձեր դէմ օր ըստ օրէ ծաւալող անախորժութիւնները կասեցնելու համար, կը սխալիք: Յետոյ՝ միշտ ի մտի ունեցէք որ դուք եկեղեցական էք, եւ եթե իմ մասիս աներիօրս այդպիսի բաներ ըսէք, ձեր բարձրութենէն կ'իջնէք:

Այստեղ սատանայական ժպիտ մը գծուեցաւ դէմքին վրայ. պարտ որս մը գտած ոճրագործի մը նայուածքով կը դիտեր զիս.

- Դուն գիտե՞ս որ այս բաները կրնան քու ընտանեկան երջանկութիւնդ քանդել:

Ալ կատղեցայ. յարգանքի վերջին շողն ալ մարեցաւ մէջս սատանայի կերպարանքով զիս դիտող սա սքեմաւոր սրիկային հանդէպ:

- Սրբագան նոյնիսկ աշխարհականի մը լեզուին տակ այդ խօսքերը **փողոցային լակոտներու** յատուկ են, իսկ եկեղեցականի մը...

«Ենիչերի» չթողուց որ շարունակեմ. ես կը դողայի ջղայնութենէս:

Նախքան ամուսնանալս՝ նախ նշանածիս, ապա հօրը՝ արդէն 1955ի պատահարներուն եւ խենթանոց տարուած ըլլալուս մասին ամէն բան պատմած էի, վստահ ըլլալով որ մէկը կրնար օր մը, չարամտութեամբ իրենց միտքը պղտորել:

Նոյն օրը նամակ մը տուաւ ինծի, որպէսզի աներիօրս տամ: Գրութեամբ կը խնդրեր տեսակցութիւն մը ունենալ երեք հնդկահայերու հետ (Պետրոս Ալեքսեան, Յովհ[աննէս] Միքայելեան,¹⁶⁶ Հայկ Նաճարեան,¹⁶⁷ երեքն ալ ծանօթ անձեր) Երեւանի դէպքի մասին խօսակցելու համար:

Շաբաթ մը ետք հանդիպեցան իրեն Նաճարեանին տունը: Եղելութիւնը պատմեր են իրեն եւ ըսեր են որ յաջորդ օրը ուրիշ եկեղեցական մը ուզեց 70 վճարել մէկ անգլիական ոսկիի դէմ: Բարկացեր է.

- Հայաստանի կառավարութեան կը գրեմ, Էջմիածին կը գրեմ. ամօթ են այս սուտ խօսքերը:

- Լաւ Սրբ[ագան], ըսեր է աներհայրս, դուք գրեցէք ուր որ





կ'ուզեք: Եթե ըսեն որ Սրբ[ագան]ը իրաւունք ունի, մենք ներողութիւն կը խնդրենք եւ տուգանք կը վճարենք ձեզի:

Առիթը յարմար նկատելով՝ տեղւոյն վրայ պայուսակէն քանի մը գիրք կը հանէ, [Մաղաքիա Արքեպիսկոպոս] Օրմանեանի¹⁶⁸ *Հայ Եկեղեցի*ին անգլերէն թարգմանութիւնը, Կալկաթա տպել տուած անգլերէն ժամագիրքերէն քանի մը հատը եւ կը ծախէ մարդոց... 100 օրինակ ալ եկեղեցւոյ ծախեր է այնտեղ: Մեկնելու ժամանակ աներօրս ըսեր է.

- Դո՛ւն քովս եկուր, քեզի երկու նամակ ցոյց պիտի տամ, տես, կարդա, կ'ուզես *Ֆոթոպատճեն*ն ալ հանէ... անշուշտ նախ պիտի տխրիս, յետոյ՝ ուրախանաս:

Աներօրս ըսի, որ իմ «Խենթանալուս» մասին պիտի պատմէ. հաւանաբար քանի մը կեղծ նամակներ ալ ցոյց տայ:

Ենթադրութիւնս ճիշդ էր: Պէյրութէն, 1958ի Յունուարին ստացած եւ Գրիգոր անունով անձէ մը ստորագրուած նամակ մը կը բերէ. եւ վաւերականութիւնը հաստատելու համար, ցոյց կու տայ Դպրեվանքի կնիքը վրան... Երեւակայէ, անձնական նամակ մը՝ կնիքով: Կարծեցեալ գրողը, իբր թէ իմ ժամանակիս Դպրեվանքի ուսանող եղած է: Բովանդակութիւնը. ես Դերենիկի մասին նամակներ գրեր եմ Պէյրութ: Գրողը Սրբագանին կը յիշեցնէ, որ ես «Խենթացած» եմ 1955ին եւ զիս խենթանոց տարած են (աներօրս դէմքին կը նայի զարմանք տեսնելու համար՝ քմծիծաղ կը տեսնէ): Դարձեալ, գրողը Սրբագանին կը յիշեցնէ որ ես Դպրեվանքի մէջ «համայնավարական գործունէութիւն ունեցած» եմ եւ «վտարուած եմ այդ պատճառաւ» 1948ին: (1948ին, նոր մտած էի Դպրեվանք): Գրողը Սրբ[ագան]ին կը յիշեցնէ, որ ինծի շատ բարիքներ ըրած է վերջինը...: Ի վերջոյ գրողը կ'ըսէ. «Ասատուրի մասին գիրք մը կը պատրաստենք, որուն մէջ պիտի ծանրանանք իր խենթ եւ համայնավար ըլլալուն վրայ»:

- Այդ բոլորը ես գիտէի արդէն Սրբ[ագան], եւ ինչո՞ւ կը կարդաք ինծի՝ այդ ալ չեմ հասկնար: Ասատուրը ամէն բան պատմած է մեզի: Դուք ալ գիտեք, որ դաշնակցականներու համար բոլոր էջմիածնասեր մարդիկ համայնավար են:

Երկրորդ վարագոյրը:

«Ենիչերի»ն կը կարդայ իր պատասխանը: Անուն չկայ. յայտնի չէ թէ որո՞ւ ուղղուած է: «Ենիչերի»ն կը թելադրէ իր նամակին մէջ, որպէսզի՝ Ասատուրին դէմ գիրք չգրեն, որովհետեւ ան





ամուսնացած Է Կալկաթայի ամենապատուական ընտանիքի աղջկան հետ, որուն հայրը իր (Սրբ[ազան]ին) ամենամտերիմ բարեկամն Է...:

Երրորդ վարագոյր:

Աներհայրս դեռ բերանը չբացած, «Ենիչերի»ն նամակը կը պատռէ եւ զամփիւղին մէջ կը նետէ:

- Բայց Սրբ[ազան], չէ՞ որ...
- Մոռնանք ամէն բան եւ հաշտուինք:

Եզրակացութիւն

Աւելորդ կը նկատեմ խօսիլ նամակի շինծու ըլլալու մասին:

Այս բոլորը կը պատմեմ որպէս հետաքրքրական տեղեկութիւն, որու մէջէն միաժամանակ կրնաք հասկնալ անհատին հոգին:

Աւստրալիայէն վերադարձին՝ անշուշտ իր մասին բաւական աննպաստ նամակներ եկան: Այդ ուրիշ երկար պատմութիւն Է, որու մասին յաջորդիւ: Այստեղ գալով [Կալկաթա], ուզեց Գասպարեան¹⁶⁹ անուևով տիրացուն ս[ա]րկ[աւազ] ձեռնադրել: Վարչութիւնը արտօնութիւն չտուաւ եւ թելադրեց իրեն, որպէսզի Ասողիկ Սրբ[ազան]ին արտօնութիւնը ստանայ:

- Վեհափառը արտօնած Է ինծի, ըսեր Է:

Վարչականները անդրդուելի մնացեր են: Ստիպուած, հետեւեալ հեռագիրը յղեց Ասողիկ Սրբ[ազան]ին եկեղեցւոյ միջոցաւ:

«Մարտ 23ին Գասպարեանը սարկ[աւազ] կը **ձեռնադրեմ:** Վեհը արտօնած Է. քու արտօնութիւնդ ղրկէ հեռագրով: Չատկէն ետք կը մեկնիմ:

Դերենիկ Եպ[ի]սկ[ոպոս]»

Երկու օր ետք, հետեւեալ հեռագիրը եկաւ Ասողիկ Սրբ[ազան]էն վարչութեան.

«Արգիլուած Է Դերենիկ Եպ[ի]սկ[ոպոս]ին ս[ա]րկ[աւազ]ի կամ ք[ա]հ[ա]ն[ա]յի ձեռնադրութիւն:

Ասողիկ Եպ[ի]սկ[ոպոս]»

Կատար Է. լսեցի որ մարդուն կծու նամակ մը գրեր Է: Աներհօրս ըսեր Է.

- Այդ ապերախտ **մարդ** մըն Է. որքան բարիք ըրած եմ իրեն. Աւստրալիա եւս զինք չէին ուզեր, ես պնդեցի որ ընդունին:

- Մենք Ասողիկ Սրբ[ազան]ից շատ լաւ տպաւորուած ենք. նոյնիսկ Պէյրութէն [Սիմոն] Սիմոնեանը, որ Ասատուրին ուսուցիչը եւ Գարեգին [Յովսէփեանց] Կթ. [Կաթողիկոս] գիտական





աշխատակիցը եղած է, շատ լաւ նամակ գրած է Ասատուրին իր մասին [ըսած է աներհայրս]:

- Սիմոնեանը ո՞վ է... Սիմոնեանը ամենամեծ խանգարիչն է... դուն զինք չես ճանչնար, հասարակ մարդ մըն է. ամբողջ Դարեվանքի անդորրութիւնը խանգարեց:

- Ես չեմ ճանչնար, բայց Ասատուրը կ'ըսէ որ պատուական մարդ է եւ ձեր դասընկերն ալ եղած է:

Առ ի տեղեկութիւն ըսեմ այստեղ, որ Ասողիկ Սրբ[ազան]ը Սիտնիի եկեղեցւոյ գնման համար կազմակերպուած հանգանակութեան մասնակցած է 500 անգլիական թղթոսկիով. ոչ ոք այդքան վճարած է անհատապէս: Այդ մասին ոչ մէկ նախադասութիւն:

Այս առաւօտ ճեմարանի մէջ Տէր Պօղոսը [Պետրոսեան] ինծի կ'ըսէր, թէ զինք կանչեր է դարձեալ եւ հասկցուցեր՝ որ Ասողիկ Սրբ[ազան]ին անունը չյիշէ պատարագի ընթացքին:

Եթէ իմ խոնարհ կարծիքս կ'ուզէք, ես այնպէս կը տեսնեմ որ Պէյրութի մէջ ջիղ ունեցող մարդ չէ մնացած. չկայ հեղինակութիւն մը, որ կարենայ այս «Ենիչերի»ն այստեղէն կանչել: Եթէ շուտով չհեռանայ այստեղէն՝ մարդիկ որոշեր են ծայրայեղ միջոցներու դիմել. լուրջ է այս:

Կիլիկեան Միաբանութեան եւ Միջ[ին] Արեւելքի եկեղեցականութեան անունը մէկ *փարայի* իջեցուց:

Հիմա պայուսակը ձեռքին՝ գրավաճառութեան սկսած է: Եղբոր բարեկամներէն երկու հոգի գտեր է, որոնց ծախսով, ժամանակին Ամերիկայի մէջ հրատարակած ժամագիրքը վերահրատարակեր է Մարտի սկիզբը այստեղ: Բերել տուած է նաեւ Օրմանեանի *Հայ Եկեղեցին* (անգլերէն): Պայուսակին մէջ կը պտտցնէ եւ գացած տեղը կը ծախէ: Աներհայրս կ'ըսէ որ հատ մը տուեր է իրեն եւ երկու ռուբի առեր է փոխարէնը:

Հիմա ուրիշ տարածայնութիւն մը հանած է, որ նոյն իսկ ճիշդ ըլլայ, անվայել է իրեն: Աներհօրս ըսեր է, որ Վահան Սրբ[ազան Կոստանեան]¹⁷⁰ Էջմիածնի մէջ գողութիւն ըրած է, այդ պատճառաւ Կաթողիկոսը պատժեր է զինք:

Կը յուսամ Տիկին Սիմոնեանը եւ փոքրիկները հանգիստ են: Տիկնոջս եւ իմ բարեւները ձեզի եւ տիկինին:

Սիրով՝
Ասատուր

Յ.Գ. Մալխասեան բառարանը չեմ ստացած:





ՆԱՄԱԿ 6

Կալկաթա, 29 Մայիս [1]958

Սիրելի Պրն. Սիմոն Սիմոնեան,
Պէյրուզ

Երեկ ստացայ «Արարատ»ի Ապրիլի թիւերէն մաս մը: Զաղաքական ու ազգային կրկնուող լուրերէն աւելի՛ զիս հետաքրքրեց «Սփիւռք» անունով շաբաթաթերթի մը հրատարակութիւնը, ձեր խմբագրապետութեամբ: Նման գրական-գեղարուեստական հրատարակութեան մը անհրաժեշտութիւնը պոռագող ճշմարտութիւն մըն էր տարիներէ ի վեր: Հաւանաբար «Սփիւռք»ը վտանգէ գոյութիւնը գրականութիւնը քիչ մը ամէն բանի հետ շփոթող կարգ մը ամսաթերթերու. հոն իսկ կը կայանայ իր կոչումը. մաքրել հրապարակը աժան ժողովրդականութիւն փնտռող գրչակներէ. դնել գրականութիւնը իր ճշմարիտ հունին մէջ: Յաջողութիւն կը մաղթեմ ձեզի:

Կը յուսամ արդէն հրատարակուած թիւերը դրկած էք հասցեիս. անհամբեր կը սպասեմ:

Ինծի դրկուած [Մեսրոպ] Գոյումճեան բառարանի փոխարժեքի մասին ոչինչ գիտեմ...: Խնդրեմ գրեցէք ձեզի ունեցած պարտքիս մասին:

Նոր գիրքերու մասին գաղափար չունիմ: Շատ գոհ կը մնամ եթէ ինծի Հայաստանէն ստացուած արժեքաւոր գրքերէն դրկէք: Հաշիւս պահեցէք... **«Աստուած ողորմած է»**, օր մը կը վճարեմ: Դրկեցէք նաեւ **«Սեւան»** հրատարակչութեան լոյս ընծայած գիրքերէն: [Մանուկ] Աբեղեանի¹⁷¹ Ա. Ե. Բ. հատորները ունիմ:

Լուրեր Հնդկաստանէն Եւ Ծայրագոյն Արեւելքէն

- Ճեմարանը կը բացուի Յունիսի 2ին:
- 34 տարի ետք, Մայիս 27ին, Կալկաթայի մէջ ջերմաչափը 43° ցոյց տուաւ: Այրող տաք ու քրտինք:
- «Նոր Ազդարար»ի¹⁷² գիրքը փոխադրուեցան Ճեմարան: Խմբագիրը Ջուղա կը վերադառնայ: Հաւանաբար աշակերտական պարբերաթերթի մը հրատարակութեան սկսուի: Պիտի ստանձնեմ գործը մէկ պայմանաւ. ոչ մէկ միջամտութիւն տեսչութենէն, այլապէս «մագիստրոսներ» կրնան այդ պարտականութիւնը վերցնել: Ճեմարանի մէջ լաւ ուժեր կան այս տարի:





- Ասողիկ Եպ[ի]սկ[ոպոս Ղազարեան] կը սպասուի շուտով: Պատուական եկեղեցական մըն է: «Միականի»ն շատ վատ տարածայնութիւններ ստեղծեց, բայց համեստ հոգեւորականին գործը հերքեց ըսուածները (500 անգլիական ոսկի Սիտնիի եկեղեցիին. 3000 ռուբի [Արամայիս] Միրզայեան Զահանայի ճանապարհածախսը դէպի Աւստրալիա եւ ետ՝ վճարուած է Ասողիկ Եպ[ի]սկ[ոպոս]ի կողմէ):

- Դերենիկ Եպ[ի]սկ[ոպոս Փոլատեան] Չատիկէն ետք մեկնեցաւ Փաքիստան: Այժմ կը գտնուի Տելիի. անկէ կ'անցնի Աքրա, Պենարես, Զաշմիր եւ Նեփալ:

- Անպաշտօն աղբիւրներու համաձայն՝ Փաքիստանի հայերու գլխին գդակ է դրեր. կ'աշխատի ինքզինք Տաքքայի¹⁷³ հոգեւոր հովիւ նշանակել տալ: Տաքքան Ասողիկ Սրբ[ազան]ի ենթակայ է:

- Խումբ մը ազգայիներ Վեհին [Վազգէն Ա. Պալճեան] բողոքագիր մը դրկած էին. 8 Ապրիլին պատասխան ստացան [Գերագոյն] հոգեւոր խորհուրդէն: Վեհը եւ խորհուրդը նկատի ունեցած են բողոքագիրը եւ խոստացած են պետք եղած միջոցները ձեռք առնել «Միականի»ն Հնդկաստանէն հեռացնելու համար: Անշուշտ աւելի քաղաքավար լեզուով մը ըսած են այս բոլորը:

- Երկրորդ նամակ մը գրուելու վրայ է այդ ուղղութեամբ: Պարունակութի՞ւնը: Դարձեալ բողոք:

- Մասեհ Բաբաջանեանի¹⁷⁴ կտակի հասոյթներու փոխանցման համար աշխատանքներ կը տարուին: Զառորդ միլիոն ռուբի պէտք է փոխանցուի Էջմիածնի հաշւոյն, Լոնտոն:

Ընտանեկան կեանքս կ'ընթանայ խաղաղ եւ ուրախ: Ամառուան արձակուրդներուն չկրցայ տիկնոջս հետ օդափոխութեան երթալ, որովհետեւ Նարինէն հօրը առաջին քարտուղարն է: Ուստի չէր կրնար գործը թողուլ: Հոկտեմբերին անպայման Տարճիլիկ¹⁷⁵ կ'երթանք. Հիմալայեան լեռնաշղթային վրայ ամարանոց մըն է, ուրկէ կարելի է **Եվերեսթի** գագաթը տեսնել:

Երբեմն քանի մը տող գրեցէք:

Ալեքսեան ընտանիքը եւ տիկինս սիրով կը բարեւեն ձեզի եւ Տիկին Սիմոնեանին:

Սիրով՝
Ասատուր





Յ.Գ. Մալխասեան բառարաններու գաղտնիքը կրցա՞ք լուծել: Կ'երեւի անոնց կարօտով պիտի մեռնիմ:

Նոյն

Յագիւ նամակս աւարտած էի, երբ ստացայ «Սփիւռք»ի առաջին չորս թիւերը: Տպաւորութիւններս կու տամ յաջորդիւ: Յայկական ամսաթերթի մը ծաւալը ունեցող «Սփիւռք» շաբաթաթերթը կոչուած է վիթխարի գործ տեսնելու:

Դերենիկի մասին «**կը փնտռուին**»ը լաւ էր գրուած: Կրնաք հետեւեալ բաց նամակը դնել, իբր պատասխան:

«Յարգելի խմբագրապետ «Սփիւռք» շաբաթաթերթի,
Պէյրուս»

Ծայրագոյն Արեւելքի, յատկապէս Աֆղանիստանի, Յնդկաստանի, Փաքիստանի, Յիմալայայի եւ Յարաւային Բելեռի թերթերը արտատպեցին «Սփիւռք»ի ազդը, որով կը խնդրուէր Դերենիկ Եպ[ի]սկ[ոպոս]ի ո՞ւր գտնուիլը գիտցողներէն՝ իմացնել Խադ Արք[եպիսկոպոս] Աջապահեանին:

Յիշեալ երկիրներու սեղանաւորները, մաքսային պաշտօնեաներն ու օդանաւային ընկերութիւնները բուռն բողոք բարձրացուցին բոլոր այն անհատներու, թերթերու եւ Միջին Արեւելքի սեղանաւորներու դէմ, որոնք կ'աշխատէին մեծ կարելորութիւն ունեցող գաղտնիք մը երեւան հանել:

Յաւաստի աղբիւրներու համաձայն, Դերենիկ Եպ[ի]սկ[ոպոս] Չատկին պատարագեց Կալկաթայի մէջ եւ պատարագագինն ու ճանապարհածախսը իբրեւ իրաւունք վարչութենէն գանձելէ ետք, մեկնեցաւ Փաքիստան: Տաքքայէն հասած լուրերու համաձայն, Սրբ[ազան]ը մեկնած է Տելիի եւ Աքրա, հայկական ոսկորներ փնտռելու համար: Կալկաթայի A.B.C.ի (Յայկական լրատու գործակալութիւն) համաձայն, այս տաք օրերուն (43°), Նորին սրբազնութիւնը Նեփալ գացած է ձիւնամարդը գտնելու, անոր «հոգեւոր մխիթարութիւն» տալու եւ ուսումնասիրելու ձիւնամարդու տնտեսական վիճակը:

Ծայրագոյն Արեւելքի, մասնաւորաբար Կալկաթայի եւ Տաքքայի հայերը կը խոստանան կարելոր նուէր մը տալ բարեսիրական հաստատութեան մը, եթէ Խադ Սրբ[ազան] յաջողի Դերենիկ Եպիսկ[ոպոս]ը վերադարձնել Պէյրուս:

Գործնական թելադրութիւններ զինք գտնելու.





- 1) Դիմել Ծայրագոյն Արեւելքի բոլոր օդանաւային ընկերութիւններուն
 - 2) Բոլոր հիւպատոսարաններուն
 - 3) Բոլոր դրամատուններուն
 - 4) Բոլոր հարուստ հայ եկեղեցիներուն եւ անձնաւորութիւններուն
 - 5) Բոլոր խաչ (ոսկի) պատրաստող ոսկերիչներուն:
- Խուզարկու

ՆԱՄԱԿ 7

[Կալկաթա, Յոկտեմբեր 1959]

Սիրելի Պրն. Սիմոնեան,
Ժամանակը շատ կարճ է. չեմ կրնար երկար գրել: Պրն. Լեւոն Էքմէքճեան այսօր կը մեկնի Պէյրութ: Բարի եղէք իր միջոցով կամ *փոստով* Մարդասիրական ճեմարանի հաշույն ղրկել հետեւեալ գիրքերը.-

- 30 օրինակ «Ընթացք ի գրոց բարբառ» Ա. տարի
 - 30 օրինակ «Բառագիտութիւն» Ե[ղիշէ] Դուրեան:¹⁷⁶
- Բարեւներ Տիկ. Սիմոնեանին եւ բարեկամներու:

Սիրով՝
Ասատուր

Յ.Գ. Մալխասեանց բառարաններուն շատ պէտք ունիմ: Ուեւէ ձեւով ղրկեցէք:

Նոյն

ՆԱՄԱԿ 8

[Կալկաթա], 16 Նոյեմբեր, [19]59

Սիրելի Պրն. Ս. Սիմոնեան,
Նամակս հեռագրի մը կարծութիւնը պիտի ունենայ այս անգամ, որովհետեւ ժամանակը շատ սուղ է, իսկ ես անպայման կ'ուզեմ post-ին յանձնել գրութիւնս:





Անյետաձգելիորեն պետք ունինք հետեւեալ դասագիրքերուն՝
 ա- Արագած Ե. տարի, 15 օրինակ
 բ- Հայկարան ? (ա՞րդ է անունը) հեղինակ Բ[ենիամին] Թաշ-
 եան,¹⁷⁷ 15 օրինակ

Համաձայն կազմուած նոր ծրագրին, յիշեալ երկու դասա-
 գիրքերը 1960ի Յունուարէն սկսեալ պետք է գործածուին ճե-
 մարանէն ներս:

Ձեր դրկած դասագրքերու հաշուեցուցակը դրկեցէք ճեմա-
 րան, իսկ Մալխասեան բառարաններունը՝ ինծի:

Հրատարակելի հատորի մը կապակցութեամբ գրած էի ձե-
 զի. պատասխան չեմ ստացած ցարդ: [Յակոբ] Նորունիի¹⁷⁸
*Սահմանազուլուի*էն ետք՝ կ'երեւի երդուած էք բանաստեղծա-
 կան գործեր չտպել: Եթէ այդպէս է, գոնէ ազդարարութեամբ մը
 տեղեակ պահեցէք զիս... բայց մի մոռնաք որ Հնդկաստան
 ներշնչումներու երկիր է, թէւ այստեղ ալ կարելի է հանդիպիլ
 մարդկանց, որոնք աւելի կ'արտաշնչուին, քան թէ կը ներշնչ-
 ուին:

Ազգ[ային] եկեղեցական խնդիրները շատ խառնակ վիճակի
 մէջ են այստեղ: Դերենիկեանները չափազանց վտանգաւոր
 շարժում մը սկսած են Ասողիկ Եպ[ի]սկ[ոպոս]ի եւ Էջմիածնի
 դէմ:

Այս մասին երկարօրէն կը գրեմ հետագային:

Բարեւներ եւ յաջողութեան մաղթանքներ:

Սիրով՝
 Ասատուր

ՆԱՄԱԿ 9

[Կալկաթա], 15 Մարտ, 1960

Շատ սիրելի Պրն. Ս. Սիմոնեան,

Չեմ յիշեր ե՞րբ վերջին անգամ գրեցի ձեզի, բայց լաւ կը յի-
 շեմ որ նամակներուս բոլորն ալ մնացին անպատասխան...
 այս սպաննիչ լռութիւնը խզելու ազնիւ մտահոգութեամբ, սե-
 ղանիս վրայ բլրացած դպրոցական եւ միութենական աշխա-
 տանքներս գոնէ մէկ ժամուան համար անթափանցիկ, սեւ





թուղթով մը ծածկեցի, որպէսզի ակնարկս անոնց բողոքող հայեացքին չհանդիպի եւ որոշեցի ձեր *հալն* ու *խաթըրը* հարցնել թղթիկովս:

Կը գիտակցիմ ձեր աշխատանքի ծանրութեան եւ մեղադրանքի խօսքեր չեմ ուղղեր ձեր եւ տպարան «Սեւան»ի հասցէին, որովհետեւ երկու անուններն ալ կը կատարեն մշակութային-ազգային վիթխարի աշխատանք, վստահ եմ, ի գին անսահման նիւթական դժուարութեանց: Միայն մեր երբեմնի յարգելի ուսուցիչը պիտի կրնար նման հոգեմաշ ու ծանր՝ բայց միաժամանակ պատուաբեր ու ազգաշէն ձեռնարկ մը յաջողցնել եւ յաջողցուց: Տպարան «Սեւան»ն ու «Սփիւռք» շաբաթաթերթը, մէկը իր երկաթեայ բազուկներով, միւսը՝ իր առողջ դատողութեամբ ու հայրենասէր կեցուածքով, կոչուած են յեղաշրջելու գաղթաշխարհի մեր ժողովուրդի մշակութային կեանքը եւ ինչո՞ւ չէ՛ նաեւ՝ անոր խաթարուած հոգեբանութիւնը: Այս հաստատումը կ'ընեմ ամենայն անկեղծութեամբ, ի պատիւ ձեզի եւ ձեր երիտասարդ աշխատակիցներուն:

Աննշան դիտողութիւն մը. «Սփիւռք» թերթը յաճախ Կալկաթա կը հասնի **«տանջուած»** վիճակի մը մէջ...: Վստահ եմ նոյն ճակատագրին կ'արժանանայ նաեւ հեռաւոր ուրիշ երկիրներ տանող ճամբաներուն վրայ: Պիտի թելադրէի որ նկատի առնուէր ճամբու երկարութիւնը եւ ըստ այնմ փաթթուէր թերթը, աւելի դիմացկուն ձեւով, որպէսզի անվնաս հասնի հասցէին: «Սփիւռք» բացառիկը չեմ ստացած տակաւին եւ վստահ եմ Յնդկաստանի եւ Իրաքի՝ կամ Յնդկաստանի եւ Պարսկաստանի միջեւ տեղ մը կորսուած է, անխնամ փաթթուած ըլլալուն հետեւանքով:

Ժամանակին գրաբար վաթսուն դասագիրքերու ստացումը յայտնեցի նամակով եւ խնդրեցի որ հաշուեցուցակը ուղարկուի դպրոցի հոգաբարձութեան: Նման ցուցակ մը ցարդ չէ ստացուած: Եթէ դասագիրքերը «բարեսիրական» նպատակներու համար ղրկեցիք, գոնէ այդ գիտնանք եւ ըստ այնմ՝ շնորհակալութեան գիր մը գրենք տպարան «Սեւան»ի տնօրէնութեան...:

Նախորդ նամակիս մէջ յիշած էի բանաստեղծութիւններու հատոր մը հրատարակելու ծրագրիս մասին եւ խնդրած էի, որպէսզի տպարան «Սեւան»ի մէջ տպագրել տալու կարելիու-





թիւներու մասին գրէք ինծի... ցարդ այդ մասին ալ որեւէ տեղեկութիւն չեմ ստացած: Խնդրեմ այս կապակցութեամբ քանի մը տող գրեցէք:

Այս Յունիսին Նարինէին հետ պիտի այցելենք Սուրիա եւ Լիբանան: Հաւանաբար ծանօթ է ձեզի որ հնդկական կառավարութիւնը միայն հինգ սթերլին կը տրամադրէ [երկրէն դուրս գացողներուն]: Ստիպուած եմ կանխաւ, անուղղակի միջոցներով, քիչ մը դրամ փոխանցել Պէյրութ, որպէսզի կարողանանք արձակուրդի մեր ծրագիրը իրականացնել: Կ'արտօնե՞ք արդեօք որ ձեր հաշւոյն ընեմ այդ փոխանցումը: Եթէ դրական է ձեր պատասխանը, ո՞ր դրամատան հետ կապ կը պահէք: Խնդրեմ այս մասին շուտափոյթ պատասխանեցէք, որպէսզի դրամ փոխանցելու կարելիութիւններու մասին մտածեմ: Նաւային ընկերութեան մէջ աշխատող յոյն բարեկամ մը ունինք, որ խոստացաւ այստեղ հնդկական դրամ ստանալ ինձմէ եւ փոխարէնը անգլիական թղթոսկի վճարել Պէյրութ որեւէ մէկուն, իմ հաւանութիւնս ստանալէ ետք: Պէյրութ ձեզմէ աւելի վստահելի բարեկամ չունիմ:

Սիրելի Պրն. Սիմոնեան, Հնդկաստանէն եթէ որեւէ մասնաւոր բանի պէտք ունիք, խնդրեմ գրեցէք, սիրով կը բերեմ: Աշակերտներէս մէկուն միջոցաւ փոքրիկ նուէր մը ղրկեցի ձեզի ամիսներ առաջ. արդեօք ստացա՞ք:

Անցնող վեց ամիսներու ընթացքին չափազանց զբաղուած էի դպրոցական աշխատանքներով: Ճեմարանի ուսումնական մակարդակը մէկ տարով բարձրացուեցաւ կրթական նախարարութեան որոշումով: Ասկէ գատ, համալսարան յաճախող հայ ուսանողներուն դասաւանդեցի Արեւմտահայ Գրականութեան Պատմութիւն եւ արեւմտահայ բանաստեղծներու գործերուն վերլուծումը: Հայերէնը ընդունուած ըլլալով որպէս քննութեան առարկայ՝ կարգ մը համալսարանական հայ ուսանողներ կը ներկայանան այդ նիւթի քննութեան: Ի դէպ է ըսել, որ շատ ալ դիւրին չէ արեւելահայերէն խօսող ուսանողներուն հասկցնել [Սկրտիչ] Պէշկիթաշլեանի,¹⁷⁹ [Պետրոս] Դուրեանի, [Միսաք] Մեծարեւցի,¹⁸⁰ Սիամանթոյի,¹⁸¹ [Դանիէլ] Վարուժանի¹⁸² եւ [Վահան] Թէքեանի¹⁸³ նման բանաստեղծներու ստեղծագործութեան հոգին: Յիշեալ ուսանողները ամսոյս 17ին պիտի ներկայանան պետական քննութեան:





Դպրոցական այս աշխատանքներուն վրայ եթէ աւելցնէք Հայկազեան Գեղարուեստական Միութեան¹⁸⁴ աշխատանքները, որոնց ծանրութիւնն ուսերուս վրայ կը կրեմ ամբողջութեամբ, այն ատեն կրնաք գաղափար մը ունենալ այն «թերեւ» գործի մասին, զոր կը կատարենք մենք, «բախտաւորներս», այս հեռաւոր ասփերու վրայ:

Հայկազեան Միութիւնը քանի մը ամիս առաջ գեղարուեստական հաւաքոյթով մը տօնեց Կոմիտաս Վ[ա]րդ[ապետ]ի¹⁸⁵ ծննդեան 90ամեակը. այդ առթիւ մեծ վարպետի կեանքի եւ երաժշտական վաստակի մասին խօսելու պարտականութիւնը անարժանաբար ինծի վիճակուեցաւ: Միութեանս անգլիախօս անդամներուն գոհացում տալու համար, դասախօսութեանս ամփոփումը կարդացի նաեւ անգլերէն լեզուով... մի ծիծաղիք, «հա՛րկ լուծանէ զօրէնս»ի սկզբունքով ստիպուած անգլերէնս քիչ մը զարգացուցի: Վաղը, նոյն այդ «անիծուած» լեզուով մեր անդամներուն դասախօսութիւն մը պիտի կարդամ հայ ժողովրդական բանահիւսութեան մասին:

Այս մանրամասնութիւնները գրեցի, ցոյց տալու համար այն «հայեցի» միջավայրը, որուն մէջ կ'ապրիմ: Բարեբախտաբար Վիվիէնը ինծի կ'օգնէ, որոշ ուսումնասիրութիւններ եւ լուրեր (ամիսը անգամ մը ունինք լրատու երեկոյ) թարգմանելու աշխատանքին մէջ:

Կալկաթայի մէջ կայ շատ նշանաւոր հնդիկ բանասէր մը, Dr. Suniti Kumar Chatterjee (Տոքթ. Սունիթի Քումար Չաթըրճի) անունով: Այս բազմաձայն գիտնականը, որ Անթուան Մէյէի¹⁸⁶ աշակերտներէն մէկը եղած է, այժմ կը պատրաստէ պենկալերէն լեզուով գիրք մը, կարգ մը ժողովուրդներու դիւցազնավեպերուն մասին: Dr. Chatterjee-ն խնդրեց ինձմէ, որ օգնեմ իրեն եւ «հայ ժողովուրդի դիւցազնավեպը» բաժնի կապակցութեամբ որոշ ծանօթութիւններ տամ: Դժբախտաբար տրամադրութեանս տակ ունեի միայն Մ[անուկ] Աբեղեանի *Հայոց Հին Գրականութեան Պատմութիւն* աշխատութիւնը, ուր Սասունցի Դաւիթի մասին բան չգտայ: Հարկ եղած տեղեկութիւնները քաղեցի ձեր պատրաստած *Հայոց Պատմութիւն* եւ Հայաստան հրատարակուած *Հայ Գրականութեան Պատմութիւն* գիրքերէն:

Dr. Chatterjee-ն իր տրամադրութեան տակ ունէր ձեր *Հայոց*





Պատմութիւնը. Երբ հարցուցի թէ ուրկէ՞ գտած է իմ ուսուցիչիս հրատարակած գիրքը, ըսաւ որ Լիբանանէն բարեկամ մը դրկած է իրեն: Ձեր դասագրքի նկարները կ'ուզէր օգտագործել իր գիրքին մէջ: Կը յուսամ հեղինակի իրաւունք չէք պահանջեր...: Գիրքը երբ լոյս տեսնէ, օրինակ մը կը դրկեմ ձեզի, հայոց դիւցազնավէպի մասին գրուածը թարգմանել տալով ու կցելով աշխատասիրութեան:

Բաւական անկապ հարցերով զբաղեցայ կարծեմ. այժմ գիշեր բարի ըսելու ժամանակը եկաւ:

Բարի գտնուեցէք Նարինէին եւ իմ յարգանքները հաղորդելու Տիկ. Սիմոնեանին:

Սիրով եւ յաջողութեան բարեմաղթանքներով,

Ձեզ միշտ յիշող՝

Ասատուր

Յ.Գ.

- 1) Դրամական փոխանցում
- 2) Գրքիս հրատարակութեան հարցը
- 3) Հաշուեցուցակ

Շուտով քանի մը տող կը սպասեմ ձեզմէ երեք հարցերու մասին:

Նոյն

Եթէ մէկը Անգլիա դրամատան մը մէջ հաշիւ ունենայ, կրնա՞ր իր *չէքը* արել Լիբանանի մէջ... **Շատ կարեւոր:**

ՆԱՄԱԿ 10

[Հալէպ, Յունիս 1960]

Սիրելի Պրն. Սիմոնեան,

Նախ Նարինէին եւ իմ կողմէս շնորհակալութիւն կը յայտնեմ այն ուշադրութեան համար, որով պատուեցիք մեզ: Նարինէն շատ լաւ տպաւորուեցաւ Պէյրութի իմ շրջանակէս, մասնաւորաբար ձեզմէ եւ Տիկին Սիմոնեանէն:

Դժբախտաբար չկրցանք՝ հակառակ մեր ցանկութեան, անգամ մը եւս տեսնուիլ, նախքան մեր Հալէպ մեկնումը:

Խոստացած էի տպագրուելիք *պոէմայիս* վերջերգը Հալէպէն դրկել ձեզի. խոստումս չկրցայ յարգել եւ չեմ ալ կարծեր որ կա-





րենամ յարգել, պարզ այն պատճառաւ որ ազգականներ, բարեկամներ, ծանօթներ եւ «հետաքրքրամոլ» անծանօթներ կը գողնան մեր ամբողջ ազատ ժամանակը: Ամէն պարագայի տակ, այսօր, մինչեւ իրիկուն պիտի աշխատիմ **վերջերգ** մը պատրաստել. եթէ չկրցայ, ուրեմն կրնաք ձեզի յանձնած ձեռագիրս նոյնութեամբ տպել: Շատ գոհ կը մնամ, եթէ Հալեպ գտնուած միջոցիս *Համոյ եւ Ֆատիլէին*¹⁸⁷ տպագրութիւնը կարենաք աւարտել եւ այստեղ դրկուելիքները ուղարկել, որպէսզի կարենամ սպառումը դիւրացնել բարեկամներու միջոցաւ:

Հաւանաբար Յուլիս 6ին վերադառնանք Պէյրութ եւ հոն մէկ շաբաթ մնալէ ետք՝ մեկնինք:

Գրքիս մեքենագրուած օրինակը աչքէ անցուցի այստեղ եւ տեսայ որ բաւական ուղղագրական եւ կետադրութեան սխալներ սպրդած են: Կը խնդրեմ որ սրբագրէք զանոնք: Շնորհակալութիւն:

Նարինէն եւ ես կարօտով կը բարեւենք ձեզի, Տիկին Սիմոնեանին եւ փոքրիկներուն:

Սիրով՝
Ասատուր

ՆԱՄԱԿ 11

[Լոնտոն], 26 Յուլիս, 1960

Շատ սիրելի Պրն. Ս. Սիմոնեան,

Լոնտոնէն կը գրեմ այս նամակը: Խոստումս չեմ մոռցած. «Սփիւռք»ի համար «Ճամբորդի Նօթեր»ու շարք մը պատրաստելու վրայ եմ, որ իր մէջ պիտի ընդգրկէ Հռոմ ([Ժիրայր] Օրագեանի¹⁸⁸ հետ տեսակցութիւն), Իսթանպուլ (Պատրիարքին [Շնորհք Գալուստեան] հետ տեսակցութիւն):

Քանի մը օր առաջ գիրքէն եօթն օրինակ դրկեցի Երեւան, զանազան թերթերու եւ *նատիոյի*ն: Անհամբեր կը սպասեմ պատկերազարդ հրատարակութեան. 50 օրինակ շուտով դրկեցէք ինծի: Պրն. Ն. Յակոբեանը վստահ եմ յանձն կ'առնէ գիրքերս բերելու զոհողութիւնը: Թե՛ Նարինէն եւ թե՛ ես՝ մեծապէս տպաւորուեցանք «Երգի Անսամպլ»էն. շատ տաղանդա-





ւոր եւ խոստմաւից երգիչներ կան անոր մէջ: Գալով Պրն. Յակոբեանին՝ ան կազմակերպութեան գարդն է: Վստահ եմ բռնորն ալ հպարտ եմ նման խանդավառ եւ զոհուող նախագահ մը ունենալնուն համար: Կը սպասեմ զինք Լոնտոն, որպէսզի միասին երթանք Այտա [Իտա] Զարին¹⁸⁹ քով:

Իսթանպուլ գտնուած միջոցիս, չկրցայ տեսնել Այվազեանը: Բարեբախտաբար պատահմամբ հանդիպեցանք գրողի մը, Գարուն Նաթանեանին,¹⁹⁰ որ խոստացաւ ձեր պատգամը հաղորդել իրեն: Արա Ակիւնեան¹⁹¹ ու Գարունը խոստացան աշխատակցիլ «Սփիւռք»ին:

Երկու անգամ ներկայ գտնուեցանք Ս[ուրբ] պատարագի արարողութեան: Լոնտոնի մէջ հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ Գ[ալուստ] Կիւլպէնկեանի¹⁹² հոգիին համար. ներկաներու մէջ կար նաեւ հանգուցեալ բարերարին տղան, Նուպարը,¹⁹³ որուն ցաւակցութիւն յայտնեցի պատարագէն ետք: [Պսակ] Թումայեան Սրբազանին¹⁹⁴ հետ երկարօրէն տեսակցելու առիթ չունեցայ տակաւին: Ասատուր Ամատունին,¹⁹⁵ որուն հետ ազգականական կապ ունինք, յայտնեց որ «Սփիւռք» կը ստանայ: Խնդրեցի իրմէ որ աշխատի գոնէ տասնէն տասնհինգ բաժանորդներ ապահովել շաբաթաթերթին համար: Խոստացաւ:

Ամսոյս 17ին, Ալպերթ Յոլի¹⁹⁶ մէջ Մոսկուայի հռչակաւոր պալէի խումբէն 18 հոգիներ ունեցան իրենց վերջին ելոյթը, որուն ներկայ գտնուեցանք: Պարողներու մէջ էր նաեւ ոստումի աշխարհահռչակ վարպետ, Գեորգ Ֆերմանեանցը,¹⁹⁷ որ արժանացաւ յաղթանակի դափնեպսակին: Շատ յուզիչ էր տեսնել փոքրիկ անգլիացի աղջիկ մը, որ բեմ բարձրացաւ եւ դէպի մեր հայրենակիցը վազելով, անոր յանձնեց դափնեպսակը: Յաջորդ օր գացի իրենց պանդոկը եւ մօտ տասը վայրկեան տեսակցեցայ Ֆերմանեանցին հետ: Միասին նկարուեցանք: Իրեն հարցուցի թէ «Սփիւռք» թերթի միջոցաւ ի՞նչ պատգամ ունէր տալու սփիւռքահայութեան:

«Առողջութիւն, յաջողութիւն, երջանկութիւն եւ իրարհասկացողութիւն կը մաղթեմ հայրենակիցներուս. թող հաւատարիմ քաղաքացիներ ըլլան իրենց ապրած երկրին եւ մնան հայ», ըսաւ:

Հայերէն չէր կրնար խօսիլ դժբախտաբար. ռուսերէն գիտ-





ցող անգլիուհի մը թարգմանի դեր կատարեց: Այս մասին մանրամասն կը գրեմ: Կային երկու պարեր, մէկը «Գայանէ»ն, Արամ] Խաչատուրեանէն, միւսը՝ ագրպէյճանական պար:

Վիվիէնին հայրն ու մայրը մասնաւոր կը բարեւէն ձեզի եւ Տիկին Սիմոնեանին: Նարինէն եւ ես կարօտով կը համբուրենք ձեզ:
Համբոյրներով՝
Ասատուր

ՆԱՄԱԿ 12

[Կալկաթա], 6 Դեկտեմբեր 1960

Սիրելի Պրն. Ս. Սիմոնեան,

Ներփակ նամակը կը դրկեմ ձեզի, իսկ ընտրութեան հարցը՝ Գեորգին [Աճեմեան] կը թողում: **Չմոռնաք անգլերէնէ հայերէն բառաւորան մը դրկել անձնապէս ինձի:** Անհրաժեշտօրէն պետք ունիմ:

Երէկ, «Ասիական Ընկերութեան»¹⁹⁸ սրահին մէջ, Տոքթ. Սուսիթի Զումար Չաթըրճին խօսեցաւ հետեւեալ նիւթի շուրջ. «The Armenian Hero Legends and the Epic of David of Sasoun»: Իր կատարած ուսումնասիրութեան մէկ ամփոփումն էր այս. ամբողջութիւնը պիտի տպուի «Ասիական Ընկերութեան» պարբերաթերթին մէջ: Հրաւիրած ենք հնդիկ գիտնականը, որպէսզի Յունուարի կեսերուն հայերուս խօսի նոյն նիւթին շուրջ:

Անգամ մը եւս յիշեցնեմ ձեզի. **Ժամանակին գրաբար դասագիրքեր դրկեցիք ճեմարան. հաշիւը ներկայացուցեք, որպէսզի վճարեն փոխարժեքը... Չմոռնաք այս անգամ:**

Տրամադրութեանս տակ ունիմ հայաստանեան քանի մը կրկնուած գիրքեր. սովորական *փոստով* կը դրկեմ ձեզի. ծախեցեք կամ պահեցեք. ես պետք չունիմ: Տոքթ. [Չարլզ] Տաուսէթին¹⁹⁹ [Մանուկ] Աբեղեանի առաջին հատորը դրկեցէ՛ք: Կարելոր է, մի ուշացնեք:

Կարելոր: «Սփիւռք»ը շատ բարակ թուղթի մէջ փաթթուած ըլլալուն՝ յաճախ հասցէին չի հասնիր, երբեմն ալ՝ պատռուած դրութեան մէջ կու գայ: «Հայաստանի Կոչնակ»ին²⁰⁰ պէս եթէ դրկուի, բան չի կորսուիր: Խնդրեմ այս պարագան սկստի ունեցեք. յօդուածներ կան, որոնց շարունակութիւնը կը սպասես եւ... երբեք չես ստանար:





Աներհայրս, աներմայրս, Նարինէն եւ ես սիրով եւ կարօտով
կը բարեւենք Մարիին եւ ձեզի:

Համբոյրներով՝
Ասատուր

ՆԱՄԱԿ 13

[Կալկաթա], 8 Յունիս, 1961

Սիրելի Պրն. Սիմոն Սիմոնեան,

Յատկապէս «Սփիւռք»ին համար կը դրկեմ Տոքթ. Սունիթի Քումար Չաթըրճիի «Հայկական Հերոսական Առասպելներն ու Սասունցի Դաւիթ Դիւցազնավէպը» յօդուածը, որ ինչպէս պիտի տեսնէք, ներկայացուած է Արեւելագետներու Միջազգային 25րդ Համաժողովի Կովկասեան բաժնին, Մոսկուա, եւ որպէս դասախօսութիւն կարդացուած՝ «Ասիական Ընկերութեան» մէջ:

Ներփակ կը դրկեմ նաեւ հեղինակին ինծի գրած Յունիս 5 թուակիր նամակը, որով հնդիկ գիտնականը փափաք կը յայտնէ իր ուսումնասիրութիւնը տպուած տեսնել ժողովրդականութիւն վայելող հայ պարբերաթերթի մը մէջ, պատկերազարդումներով: «Սփիւռք»ը յարմարագոյն թերթը նկատեցի այս առնչութեամբ, նաեւ անոր համար որ ժողովրդական թերթ մըն է, յետոյ՝ ունի խմբագրապետ մը, որ ո՛չ միայն հեղինակութիւն մըն է պատմական, բանասիրական եւ *ֆոլկլորագիտական* հարցերուն մէջ, այլ մանաւանդ հոգիով կապուած է մեր մշակութային արժէքներուն: Տոքթ. Չաթըրճիի ուսումնասիրութիւնը, իր բոլոր թերութիւններով հանդերձ (որոնք անխուսափելի են նման պարագաներուն), կը մնայ արժէքաւոր գրութիւն մը, մէկէ աւելի պատճառներով: Հեղինակը ծանօթ անուն մըն է միջազգային լեզուաբանական-բանասիրական շրջանակներուն մէջ եւ յօդուածի մը տակ դրուած իր ստորագրութիւնը՝ ինքնին այդ յօդուածի կարեւորութեան գրաւականն է: Ուրիշ կարեւոր պարագայ մը եւս պետք է նկատի ունենալ ուսումնասիրութիւնն արժեւորելու ատեն. ցարդ անգլերէն լեզուով նման յօդուած մը լոյս չէ տեսած «Ասիական Ընկերութեան» պաշտօնաթերթի որակով, հռչակաւոր պարբերականի մը մէջ: Վերջա-





պէս, Տոքթ. Չաթըրճին առաջին հնդիկ գիտնականն է, որ երբե-
կիցէ ուսումնասիրած ըլլայ ո՛չ միայն մեր առասպելներն ու դի-
ցազնավէպը, այլ մեր մշակոյթի որեւէ մէկ երակը:

Հնդիկ գիտնականին աշխատասիրութիւնը, բացի վերոյիշ-
եալ արտաքին կարելորութենէն, ունի նաեւ ներքին, այսինքն
լոկ որպէս գիտական գործ, արժէք: Տոքթ. Չաթըրճին քաջա-
ծանօթ ըլլալով արեւելեան եւ եւրոպական բազմաթիւ ժողո-
վորդներու դիցաբանութեանց, առասպելներուն եւ դիցազ-
ներգութեանց յաջողած է մերինները արժեւորել միջազգային
ենթահողի վրայ, պարագայ մը, որուն կարելորութիւնը կարելի
չէ անտեսել:

Յօդուածին հետ կը դրկեմ նաեւ ծանօթագրութիւն մը, որուն
նպատակն է ընթերցողին ներկայացնել հնդիկ գիտնականը:

Գալով ուսումնասիրութիւնը թարգմանելու հարցին, վստահ
եմ Գեորգ Աճեմեանը կամ Լեւոն Վարդանը²⁰¹ սիրով յանձն պի-
տի առնեն կատարել: Դժբախտաբար անձնապէս այդ պար-
տականութիւնը կատարել դժուար է ինծի համար, նախ որ
տրամադրութեանս տակ անգլերէնէ հայերէն բառարան չու-
նիմ, յետոյ՝ չափազանց ծանրաբեռնուած եմ որոշ աշխա-
տանքներով: «Ասիական Ընկերութիւն»ը հրաւիրած է զիս
անգլերէն լեզուով դասախօսութիւն մը կարդալու իր անդամ-
ներուն, «Արդի Հայ Գրականութիւնը» նիւթին շուրջ: Բաւական
դժուար հարց մըն է ինծի համար այս, նախ որ տրամադրու-
թեանս տակ հարկ եղած աղբիւրները չունիմ, երկրորդ՝ անգլե-
րէն թէեւ կը խօսիմ բաւական սահուն, բայց նման լուրջ դասա-
խօսութիւն մը, նոյնքան լուրջ կազմակերպութեան մը անդամ-
ներուն ներկայացնելու չափ տիրապետած չեմ լեզուին: Ասկէ
առաջ քանի մը առիթներով անգլերէնով դասախօսութիւններ
կարդացած եմ հնդիկ եւ հայ շրջանակներու մէջ, բայց անոնք
համեմատաբար անելի դիւրին նիւթեր եղած են, ինչպէս օրի-
նակ «Կոմիտաս Վարդապետ», «Հայ ժողովրդական Երաժշ-
տութիւնը» եւայլն: Ամէն պարագայի տակ, պէտք է գլուխ հա-
նեմ այս գործը. արդեօք ձեր տրամադրութեան տակ թարգմա-
նական հայ գրականութեան մասին որեւէ աղբիւր ունի՞ք, մա-
նաւանդ [Ռապինտրանաթ] Թակորն²⁰² ու հայ գրականութիւնը
նիւթին շուրջ: Եթէ ունիք, կը խնդրեմ որ անմիջապէս ուղար-
կէք. կրնաք Մայտա Զեօմիւրճեանին²⁰³ յանձնել (P.A.A.) որ-





պէսզի եկողի մը միջոցաւ հասցնէ ինծի:

Պէյրուս գտնուած միջոցիս խօսած էի ձեզի անգլերէնէ հայերէն բառարանի մը մասին. **շատ կարեւոր է:**

Ձեր հասցէին ղրկած հայաստանեան գրքերուն ստացումը չէք յայտնած: Աւելորդ օրինակներ են, որոնց պէտք չունիմ, կրնաք ձեր ուզած ձեւով օգտագործել (ծախել կամ պահել): Բանի մը ուրիշ հատորներ եւս ունիմ, անմիջապէս որ ղրկուածներուն ստացումը յայտնեք, կը յղեմ ձեզի:

Երկար ատենէ «Սփիւռք» չէի ստանար. վերջերս քանի մը թիւեր եկան: Հեռաւոր երկիրներ ղրկուած թիւերը անհրաժեշտ է լաւ ծրարել. յաճախ պատռտած ձեւով կը հասնին եւ շատ անգամ ալ՝ կը կորսուին:

«Լոնտոնեան Տպաւորութիւններ» յօդուածաշարքս պարունակող թիւերը չեմ ստացած. ինդրեմ ղրկեցէք: Կ'ուզեմ նոյնպէս Ս[տեփան] Շահպազի²⁰⁴ *Գրիգոր Չօրասպ* գրքէն օրինակ մը ունենալ:

Եթէ Տոքթ. Ս. Բ. Չաթըրճիի յօդուածը չէք ուզեր տպել, բարի գտնուեցէք վերադարձնել, որպէսզի Ռումանիա՝ «Նոր Կեանք»-ին²⁰⁵ ղրկեմ, յատկապէս մասնաւոր նամակով մը ուզած էին: Եթէ յանձն առնէք տպագրել, Տոքթ. Չաթըրճին չորս-հինգ օրինակ կ'ուզէ ունենալ. այդ ուղղութեամբ գրած նամակին պատճենը կը ներփակեմ:

Նարինէն եւ Ալեքսեան ընտանիքը սրտագին բարեւներ կը ղրկեն Տիկին Սիմոնեանին, ձեզի եւ փոքրիկներուն: Յատուկ բարեւներ Գեորգին [Աճեմեան], Լեւոնին [Վարդան], Օսնիկ Սարգիսեանին եւ [Երուանդ] Զասունիին:

Սիրով՝
Ասատուր Կիւզելեան

ՆԱՄԱԿ 14

Կալկաթա, 23 Յունիս, 1961

Սիրելի Պրն. Սիմոն Սիմոնեան,

Տոքթ. Չաթըրճիին յօդուածն ու վերջին նամակս ղրկելէ ետք միայն ստացայ ձեր համով-հոտով զոյգ նամակները, ուղղուած ինծի եւ Նարինէին, որմէ աւելի՛ ես հիացայ ձեր արեւելահայե-





րենով արտայայտուելու վարժութեան վրայ: Եթէ ճակատագրի քամին օր մը ձեզ եւս ինծի պէս Կալկաթա նետէ, ճեմարանէն ներս հայոց լեզու դասաւանդելու նախնական այն դժուարութիւններուն՝ որոնց ես ենթարկուեցայ, դուք չէք հանդիպիր...: Ամէն պարագայի տակ, բախտի արծիւին թելը հիմակուընէ կոտրեցէք, որպէսզի օր մը, սխալմամբ Գանկեսի ափերը չփոխադրէ ձեզ, յատկապէս կրթական-գրական աշխատանքի համար:

Ձեր նամակները, մանաւանդ Նարինէինը, չափազանց յուզեց բոլորս եւ նորոգեց մեր հոգիներուն մէջ անցեալ տարուան կարճ՝ բայց քաղցր օրերու յիշատակը: Այո՛, Նարինէն ձեր քոյրն է, ձեր հարսն ու աղջիկն է միաժամանակ: Միթէ պայման է արեւակցական կապը, որպէսզի մարդիկ, որպէս հարազատներ իրար կապուին: Ոչ. կայ աւելի մեծ, աւելի զօրաւոր կապ մը, որ կը կամրջէ՝ այս անգամ հոգիները, կը միացնէ սրտերը իրար: Թէ ի՞նչ անուն պետք է տալ անտեսանելի, զգացումի եւ յուշերու թելերէն գոյացած այդ կապին՝ չեմ գիտեր, չեմ ալ ուզեր գիտնալ. էականը այն է, որ կա՛յ այդ կապը, որով իրար կը մօտենան մարդիկ, եղբայրներէ աւելի հարազատութեամբ:

Պրն. Վ[ահան] Փոլատեանին դրկած ձեր ցուցակը միասին աչքէ անցուցիկը: Մեզի յայտնի չէ թէ ուրկէ՞ պատրաստած էք այդ ցանկը. այս հարցումը անոր համար, որ ցանկին մէջ ներկայացուած գրքերէն ճեմարանը ստացած է միայն 30 օրինակ *Ընթացք ի Գրոց Բարբառ* Ա. եւ Բ. տարի, 30 օրինակ ալ՝ *Բառագիտութիւն*:

Փոլատեանին հետ աչքէ անցուցիկը 1957ի ստացագիրները եւ գտանք, որ Վահանը Պէյրութ գտնուած միջոցին կատարեր է որոշ ապսպրանքներ, որոնց համար վճարեր է ձեզի: Այս պարագան յիշեցի, ենթադրելով որ կրնաք առաջին եւ երկրորդ ապսպրանքները շփոթած ըլլալ իրարու հետ: Ամէն պարագայի տակ կացութիւնը հետեւեալն է.

Ստացուած գրքեր ճեմարանի կողմէ.

1- 30 copies Armenian Classical Language 75.00 L.P.

2- 30 copies Classical Arm. gramr. 75.00 L.P.

Չենք ստացած

1- 15 copies Arm. Modr. Language (Arakadz)

2- 15 copies Arm. Modr. Language (Arakadz)





Գալով *Առլամներու* հարցին, ես անձնապես ապսպրած էի կարծեմ քսան օրինակ, որմէ տասը օրինակ պահեցի եւ միւս տասը օրինակները վերադարձուցի ձեզի ժամանակին:

Ճեմարանի բոլոր դասագրքերը կը պահուին գրենական պիտոյից սենեակին մէջ. ամբողջ գրքերը աչքէ անցուցինք, մտածելով որ կրնանք սխալած ըլլալ, բայց՝ ի բաց առեալ գրաբարները՝ ձեր ցանկին մէջ յիշուած միւս գրքերը չգտանք:

Պրն. Փոլատեանը խնդրեց, որ ես գրեմ ձեզի այս մասին եւ ըսեմ որ նոր ստացագիր դրկելու կարիք չկայ, կրնաք երկտողով մը ձեր համաձայնութիւնը յայտնել եւ յիշել միաժամանակ, թէ քանի՞ լիբանանեանը մէկ սթերլին կ'արժէ, որպէսզի հոգաբարձութիւնը հարկ եղածը կարգադրէ:

Ճեմարանին Մալխասեանց բառարան չէք դրկած:

Կը **պահանջէք** որ աշխատակցիմ «Սփիւռք»ին: «Ժամանակ չկայ» (ականջը խօսի [Պօղոս] Սևապեանին):²⁰⁶ Կ'աշխատիմ բաւական ընդարձակ վեպի մը վրայ: Աւարտած եմ արդէն ձեռագիր 400 էջեր. երբ վերջնական ձեւ մը տամ գործին, քանի մը հատուած կը դրկեմ «Սփիւռք»ին, նախքան լոյս տեսնելը:

Նարինէն պիտի գրէ ձեզի: Պրն. եւ Տիկին Ալեքսեանները, Նարինէին եղբայրն ու ընտանիքը սրտագին բարեւներ կը դրկեն ձեզի եւ Սիմոնեան ընտանիքին: Նարինէն եւ ես կարօտով կը համբուրենք բոլորդ:

Ասատուր

ՆԱՄԱԿ 15*

[Կալկաթա, 1962]

... «Սփիւռք»ի մէջ կարդացի Ա[րտաշէս] Տէր Խաչատուրեանի²⁰⁷ տուած դասախօսութիւնը «Յնդկահայոց Նպաստը Հայ Մշակոյթին» նիւթին շուրջ: Ուսումնասիրութիւնը որոշ շահեկանութիւն ներկայացնելով հանդերձ, գերծ չէ թերութիւններէ: Հնդկահայ գաղութի ուսումնասիրութեան կապակցութեամբ, կարելի եւ ճիշդ չէ լռութեամբ անցնիլ եւ չյիշել այն վիթխարի աշխատանքը, զոր կատարած է մեծանուն պատմաբան, Մես-

* Այս նամակը չէ պահուած Սիմոն Սիմոնեանի արխիւներուն մէջ: Չայն կ'արտատպենք անշեղով «Սփիւռք» շաբաթաթերթի 1 Մարտ 1962ի համարէն:





րոպ Սէթեան:²⁰⁸ Ըստ երեւոյթին թէ՛ Զայաստանի եւ թէ՛ արտասահմանի պատմաբանները շատ քիչ բան գիտեն այս մեծ գիտնականի մասին, որ ամբողջ 50 տարիներ ուսումնասիրած է Զնդկահայ Գաղութի հետ առնչութիւն ունեցող պատմական տուեալները, ինչպէս նաեւ Զնդկաստանի մէջ գտնուող հայկական բոլոր յուշարձանները (գերեզմանաքարեր, արձանագրութիւններ, եկեղեցիներու մէջ պահուած վաւերաթուղթեր, եւայլն): Մեսրոպ Սէթեան մանրագլխին ուսումնասիրութեան ենթարկած է նաեւ հնդկական եւ անգլիական այն աղբիւրները, որոնք լոյս կը սփռեն Գանկէսի ափերուն բնակութիւն հաստատած հայերուն պատմութեան վրայ, ինծի այնպէս կը թուի՝ որ արտասահմանի եւ Զայաստանի մեր պատմաբաններն իրենց տրամադրութեան տակ չունին Մ. Սէթեանի *Armenians in India* մեծարժէք գիրքը: Այս հաստատումը կ'ընեմ, հիմնուելով այն իրողութեան վրայ որ ուսումնասիրութիւնները վերոյիշեալ գիրքը չեն յիշատակեր յառաջ բերուած աղբիւրներու շարքին:

Կալկաթայի եկեղեցւոյ վարչութիւնը տրամադրութեանս տակ դրած է իր թղթածրարներուն մէկ մասը, որպէսզի տեղեկագիր մը պատրաստեմ այդ մասին: Ճեմարանի հայ ուսուցչուհիներէն մէկը կաթուած իջեցուցած ըլլալուն՝ իր աշխատանքին կարելոր մէկ մասը իմ ուսերուս է բարդուած, որով ժամանակ չունիմ թղթածրարներով զբաղելու: Յոյս ունիմ Մայիսին, երբ ամառնային արձակուրդները սկսին, վերջացնել այդ աշխատանքը: Կարելոր վաւերաթուղթերու մասին կը գրեմ ձեզի: Մ. Սէթեանի կեանքին եւ գործերուն մասին ալ հետագային կը գրեմ «Սփիւռք»ին:

Զաւանաքար երաժիշտ Ս[արգիս] Բալասանեանի²⁰⁹ եւ Զայաստանի մարմնամարզիկներու մասին գրած յօդուածներս կարդացած էք եւ այսպէս զիս՝ որ «Սփիւռք»ին չեմ աշխատակցիր: Անկեղծ ըլլալու համար ըսեմ որ գրուածներն աւելի օրաթերթային բնոյթ ունենալուն չեմ դրկած ձեզի:

Ժամանակին կարծեմ գրած էի ձեզի որ այժմ կ'աշխատիմ վէպի մը վրայ, դժբախտաբար դպրոցական աշխատանքներով ծանրաբեռնուած ըլլալուս, վերջին հինգ ամիսներու ընթացքին անաւարտ այդ գործով պարապելու առիթ չեմ ունեցած:

Յոկտեմբերին բաւական շուքով տօնուեցաւ Կալկաթայի մէջ Մեսրոպ Մաշտոցի²¹⁰ ծննդեան 1600ամեակը: Այդ առթիւ բանա-





խօսելու պարտքը, անարժանաբար ինծի վիճակուեցաւ: Այժմ կը պատրաստեմ դասախօսութեանս վերամշակուած մէկ անգլերէն թարգմանութիւնը, զոր պիտի կարդամ քաղաքիս Ասիական Ընկերութեան անդամներուն (The Asiatic Society): Ուսումնասիրութեանս մէջ կը ծանրանամ Փրոֆէսէտօր Ա[շոտ] Գ. Աբրահամեանի²¹¹ այն տեսակետին վրայ, ըստ որում, հայկական «նշանագիրք իմաստոց» կոչուած պատկերագրերու եւ Մահանճատարոյի²¹² մէջ յայտնաբերուած հնդկական հին պատկերագրելու միջեւ կայ սերտ կապ մը: Քաղաքիս հռչակաւոր Ազգային Մատենադարանին մէջ կրցայ գտնել հնդկական այդ պատկերագրերը պարունակող շարք մը շահեկան հրատարակութիւններ. հայկական եւ հնդկական պատկերագրերու նմանութիւնը, աւելի ճիշդ պիտի ըլլար ըսել՝ նոյնութիւնը, ապշեցուցիչ է: Այս հարցը մեծ շահեկանութիւն կը ներկայացնէ հնդիկ գիտնականներուն համար, քանի որ Մահանճատարոյի մէջ յայտնաբերուած պատկերագրերը չեն վերծանուած տակաւին, մինչդէռ ըստ Աբրահամեանի, հայկականներուն իմաստը պահուած է մեր ձեռագրերուն մէջ: Այս առթիւ պիտի անդրադառնամ նաեւ Չենոբ Գլակի²¹³ Գիսանէ եւ Դեմետրէ²¹⁴ իշխաններու մասին աւանդած պատմութեան, որուն մասին պատմաբան Ս. Սեթեան ժամանակին դասախօսութիւն մը կարդացած է արդէն նոյն ընկերութեան անդամներուն, «Յնդիկներ Յայաստանի մէջ» խորագրով: Եթէ «նշանագիրք իմաստոց»ները չկարենան լուծել նախամետրոպէան գրականութեան առեղծուածը, կրնան գոնէ, որոշ չափով լուծել հնդիկ գիտնականներու առջեւ դրուած Մահանճատարոյի պատկերագրերուն վերծանման հարցը:

* * *

Ուրախ եմ որ ձեռնարկած էք *Անձնանունների Բառարանի* հրատարակութեան: Կը յուսամ գործի նիւթական ծանրութիւնը ամբողջութեամբ Ձեր ուսերուն վրայ չէք վերցուցած: Տրուած պայմաններուն մէջ ինծի կը մնայ յաջողութիւն մաղթել Ձեզի, Ձեր այս եւ ուրիշ յանդուզն, բայց պատուաբեր ձեռնարկներուն համար:

Ասատուր Կիւզելեան





ՆԱՄԱԿ 16

Կալկաթա, 25 Մայիս, 1962

Սիրելի Պրն. Սիմոնեան,

Ժամանակին ձեր գոյգ նամակները - Ատիս-Ապեպայեն եւ Խարթումեն -, իսկ քանի մը օր առաջ ալ՝ [Մեսրոպ] Գույումճեանի անգլերէնէ հայերէն բառարանը ստացայ, որոնց համար կը յայտնեմ մասնաւոր շնորհակալութիւն:

Աճառեանի *Անձնանունների Բառարանի* հրատարակութեան համար պահանջուած քաջութեան համազօր՝ յանդգնութիւն ալ պէտք է ունենայ հայ մտաւորական մը, կարենալ դէպի Զիւսիսային Ափրիկէ ճամբորդութեան մը ձեռնարկելու համար...: Ծափահարելի այդ յանդգնութեան վրայ եթէ պճեղ մը վճռականութիւն աւելցուցած ըլլայիք, օդանաւը ձեզ՝ առաւելագոյնը վեց ժամէն կը հասցնէր [Մահաթմա] Կանտի²¹⁵ հայրենիքը: Յաջորդաբար ձեզմէ երկու նամակ ստանալը ինքնին անակնկալ մըն էր, իսկ անոնց Ատիս-Ապեպայեն եւ Խարթումեն յղուած ըլլալու պարագան՝ աւելի մեծ անակնկալ էր. իսկ եթէ յաջողէիք Կալկաթա հասնիլ՝ այդ կ'ըլլար անակնկալներու տուշէշը:

Զիմա մեզի կը մնայ սպասել, որ յետաձգուած ձեր ծրագիրն իրագործէք ձմրան ամիսներուն, երբ Գանկեսեան երկինքը պայծառ է եւ եղանակը՝ հաճելի: Մեր տունը մեծարեւոյցեան «ու մեղր ու կաթ ու գինի» խոստացող «հիւղ»ին պէս, բաց թելերով ձեզ կը սպասէ: Դուք աւելի խոնջած էք, քան [Միսաք] Մեծարեւոյցի սպասած ճամբորդը, այն պարզ պատճառով, որ հայ գրողը, խմբագիրը, հրատարակիչը - որոնց համագումարին կենդանի խորհրդանիշն է Ղալղուլ²¹⁶ փողոցի մէկ անկիւնը նետուած տպարան «Սեւան»ի մէջ մաշուող **Սիմոնեանը**-, Էվերեսթ նուաճող [Էտմընտ] Զիլըրիի²¹⁷ կամքը պէտք է ունենայ, անփորձ ու ապահով՝ ոչ թէ Էվերեսթ՝ այլ ամենէն հասարակ բլուրին իսկ հասնելու համար:

Ձեր հրատարակչական պատուաբեր ձեռնարկներուն համար Զնդկաստանէն բարերար գտնել անկարելի է տրուած ներկայ պայմաններուն մէջ: Զաստատումս թող ենթադրել չտայ ձեզի որ Կալկաթայի մէջ հարուստ հայեր չկան: Կան, թէեւ ոչ հին ըմբռնումով:





Յնդկասկանի կառավարութիւնը չի թոյլատրեր որ մարդիկ իրենց ունեցած դրամը երկրէն դուրս հանեն, բացի այն պարագայէն, երբ ենթակաները կ'ուզեն Յնդկաստանէն արտագաղթել: Այն ատեն կ'արտօսուի իւրաքանչիւր ընտանիքին 50,000 ռուբլի (շուրջ 10,000 տոլար) միայն տանիլ:

Տնտեսական նման իրադրութեան մը մէջ, դժուար է ունէ հարուստի մօտենալ եւ հրատարակչական նպատակի մը համար դրամ ուզել: Եթէ Յնդկաստան **ազատ շուկայի** դրութիւն որդեգրած ըլլար, ինչպէս Ամերիկան կամ Լիբանանը, դիւրութեամբ կարելի էր բարերարներ գտնել հրատարակչական, կրթական եւ այլ ազգային-գրական նպատակներու համար:

Տիրող կացութեան մասին դոյզն գաղափար մը տալու համար ըսեմ, որ աներհօրս հետ որոշեցինք Մետրոպ Մաշտոցի ծննդեան 1600ամեայ յոբելինական հանդիսութեանց ներկայ գտնուելու համար, այս ամսուան կեսին Յայաստան երթալ: Սովետական հիւպատոսարանը իսկոյն *վիզա* կու տայ, եթէ tourist coupon-ներ ունենաս տրամադրութեանդ տակ: Այդ coupon-ները գնելու համար (հակառակ անոր որ վճարումը ռուբլով կը կատարուի), անհրաժեշտ է Պետական Դրամատունէն արտօնագիր ստանալ: Դիմեցինք եւ խնդրեցինք որ իրաւունք տան մեզի 5,000 ռուբլի արժողութեամբ coupon գնելու: Մերժուեցանք: Կրնաք այս պատահարէն հետեւցնել թէ երկիրը տնտեսական ինչպիսի կացութեան մէջ կը գտնուի:

«Յայաստանեան քանի մը կտոր գիրք միայն ստացայ», գրած էք, մինչդեռ հետեւեալ տասներկու հատորները դրկած եմ ձեր հասցէին:

- 1- *Վահան Թորթվենց* - Ս[արիբեկ] Մանուկեան²¹⁸
- 2- *Երկերի ժողովածու* - Ս[իսաք] Մեծարենց
- 3- *Պարտիզպանը, Գիթանճելի* - Ռ[ապինտրանաթ] Թակոր
- 4- *Յակոբ Կոչոյեան* - Ե[ղիշէ] Մարտիկեան²¹⁹
- 5- *Յակոբ Կոչոյեան* - Ե[ղիշէ] Մարտիկեան
- 6- *Դանիէլ Վարուժան* - Յ[եկտոր] Ռշտունի²²⁰
- 7- *Սովետահայ Գրականութեան Պատմութիւն* Ա. հատոր
- 8- *Երկերի ժողովածու* - 8 հատոր, [Ալեքսանդր] Շիրվանզադէ²²¹
- 9- *Սովետական Յայաստանի Պատմական Յուշարձանները*
- 10- *Դանիէլ Վարուժան* - [Յովհաննէս] Ղանալանեան²²²
- 11- *Բանաստեղծութիւններ* - Դ[անիէլ] Վարուժան





12- Երկեր - Ս[մբատ] Շահագիզ²²³

Հատ մը ինծի համար գտնելէ ետք, հատ մըն ալ ձեզի համար ապահոված եմ, վերջերս Հայաստանի մէջ հրատարակուած անգլոգական *Առլասէն*: Չեմ ուզեր մեծարժէք այդ գործը վստահիլ *փոստատարին*: Վստահելի ճամբորդի մը հետ կը դրկեմ:

Հաճոյքով կարդացի Ե[րրուանդ] Քասունիի յօդուածը Տոքթ. Չ[արլզ] Տաուսէթի *Պատմութիւն Աղուանիցի* անգլերէն թարգմանութեան մասին: Շուտով «Սփիւռք»ին կը դրկեմ անգլիացի հայագետին կենսագրութիւնն ու լուսանկարը:

Վստահ եմ պիտի ուրախանաք լսելով որ Յունիս 4ին, քաղաքիս «Ասիական Ընկերութեան» մէջ (The Asiatic Society) պիտի կարդամ անգլերէն լեզուով ուսումնասիրութիւն մը՝ «Some Notes on Ancient Armenia», որ հետագային պիտի տպագրուի նոյն ընկերութեան պաշտօնաթերթին մէջ, ուր լոյս տեսաւ նաեւ Տոքթ. Սունիթի Քումար Չաթըրճիի «The Armenian Hero-Legends and the Epic of David of Sasoun» յօդուածը: Ուսումնասիրութեանս սկզբնական խորագիրն էր «The Invention of the Armenian Alphabet», զոր փոխեցի Տոքթ. Չաթըրճիի թելադրութեամբ: Վստահ եմ կ'ուզէք իմանալ նաեւ դասախօսութեանս բովանդակութիւնը, որուն բաժանումներն ու ստորաբաժանումները կու տամ ստորեւ.

I- Նախաբան

II- Հայերէն տառերու գիւտը - Մեսրոպ Մաշտոցի կենսագրութիւնը

III- Նախամաշտոցեան շրջանի հայ գրականութեան գոյութեան հարցը

IV- Հայերէն գաղափարագրային գրականութիւնն ու հնդկական պատկերագիրերը

V- Հին հնդկա-հայկական յարաբերութիւնները

Խիստ կարեւոր

Քանիցս յայտնած եմ ձեզի, որ «Սփիւռք»ի տասը թիւերէն հազիւ հինգը կը ստանամ: Եւ այս դժբախտ իրողութեան միակ պատասխանատուն թերթը ծրարող ձեր պաշտօնեան է: Կը խնդրեմ որ այսուհետեւ հեռու երկիրներ առաքուող թիւերը աւելի տոկոսն թուղթով մը ծրարեք:

Մինչդեռ ուրիշ երեխաներ տարով կը մեծնան, Վահէն [Կիւզէտեան],²²⁴ Սասունցի Դաւիթի պէս, օրով կը մեծնայ: Կը ներ-





փակեմ իր երկու լուսանկարները:

Նարինեն եւ Ալեքսեանները շերմագին կը բարեւեն ձեզի, Տիկին Սիմոնեանին եւ կրտսեր Սիմոնեաններուն:

Համբոյրներով՝
Ասատուր

ՆԱՄԱԿ 17

13/7/1962, Կալկաթա

Սիրելի Պրն. Սիմոնեան,

Գրած պահուստ արցունքներս առատօրէն կը հոսին թուղթին վրայ: Տխուր լուր մըն է հաղորդելիքս, սիրելի Սիմոնեան. իմ անուշիկ Վահէս, առաւօտեան այս պահուն, անշարժ՝ յաւիտեանական քուն մտած է ճիշդ քովս: Մահը տեղի ունեցաւ երէկ գիշեր: Այսօր սեւազգեստ մարդիկ պիտի գան ու հողին պիտի յանձնեն այն՝ զոր սիրեցի անհունօրէն եւ որ միայն հինգ ու կէս ամիս ապրեցաւ (հինգ ու կէս ամսական էր միայն), հրեշտակի պէս անմեղ: Այսօր չկայ այլեւս Վահէս... մեռաւ, Պրն. Սիմոնեան:

Սգակիր՝
Ասատուր

ՆԱՄԱԿ 18

Կալկաթա, 11 Յունուար, 1963

Սիրելի Պրն. Ս. Սիմոնեան,

Թեհրանէն գրած ձեր ցաւակցական նամակը՝ բազմաթիւ որիշ նամակներու հետ՝ կը մնայ դեռ սեղանիս վրայ, անպատասխան: Շնորհակալութիւն ձեր զգացումներուն եւ խրատներուն համար: Ժամանակը որոշ չափով թեթեւցուցած է մեր վիշտը թէեւ՝ բայց մեր երկուքին սիրտն ալ տակաւին կը մնայ ճնշուած, մանաւանդ անոր համար որ Նարինեն Վահէի մահուրէն ետք՝ վիժում եւ գործողութիւն ունեցաւ յաջորդաբար: Հիմա առողջութիւնը վերագտած է արդէն:

Այս նամակը կը գրեմ կարելոր ինդրի մը մասին: Կալկաթա-





հայ Տեր եւ Տիկին Ալեք Կրեկըրիները (Գրիգորեան), կ'ուզեն զաւակ մը որդեգրել: Այդ մասին ժամանակին գրեցի Յայր Գեորգին [Կարապետեան],²²⁵ որմէ ցարդ պատասխան չեմ ստացած: Գրիգորեան ամուլը երիտասարդ է տակաւին, բայց կնոջ արգանդը գործողութեամբ հանուած է, որով ա՛լ զաւակ ունենալու կարելիութիւն չկայ: Ըսեմ նաեւ որ Գրիգորեաններու նիւթական վիճակը լաւ է, առ նուազն քանի մը հարիւր հազար լիբանանեանի տէր են: Որդեգրուելիք երեխան կրնայ որեւէ սեռի պատկանիլ. նախընտրաբար երկու տարեկանէն աւելի ջըլլայ:

Կը ինդրեմ ձեզմէ որ այս մասին յայտարարութիւն մը դնէք «Սփիւռք»ի մէջ: Ըսեմ նաեւ որ որդեգրումը պետք է ըլլայ պաշտօնապէս, իրաւական բոլոր ձեւակերպութիւններով: Եթէ ուզուած երեխան գտնուի (պետք է հայ ըլլայ), Գրիգորեանները պիտի գան Պէյրութ եւ տեղւոյն վրայ վերջացնեն ձեւակերպութիւնները: Արդեօք «Թռչնոց Բոյն»ին մէջ յարմար երեխայ մը կա՞յ:

Ճեմարանը վերաբացուեցաւ ամսոյս 8ին: Երեք շաբաթ տեւող ձմեռնային արձակուրդը անցուցինք Կալկաթայի մէջ: Օգտուելով առիթէն՝ շարք մը պատմուածքներ գրեցի, որոնք կը ձգտին ներկայացնել հնդկահայ կեանքի տարբեր երեսները, յատկապէս երիտասարդութեան այլասերումը:

Հայաստանեան շարք մը գիրքեր ունիմ տրամադրութեանս տակ, որոնց մէկ մասը կը դրկեմ ձեզի հետագային: 1892-95 թուականներուն Կալկաթայի մէջ հրատարակուած «Ara»²²⁶ (անգլերէն) թերթի հաւաքածոն ձեռք անցուցի եւ Ասողիկ Սրբ[ազան]ին [Ղազարեան] հետ դրկեցի Պետ[ական] Մատենադարանին: Հոն չունին եղեր:

Շուտով աւելի ընդարձակօրէն կը գրեմ: Ալեքսեաններն ու Նարինէն սրտագին կը բարեւեն ձեզի, Տիկին Սիմոնեանին եւ ընտանիքի կրտսեր անդամներուն: Սրտագին կը շնորհաւորենք ձեզ Սասունի ծննդեան առթիւ (լաւ է ուշ՝ քան երբեք):

Համբոյրներով՝
Ասատուր



ՆԱՄԱԿ 19

[Կալկաթա], 31.12.[19]63

Սիրելի Պրն. Ս. Սիմոնեան,

Աւելի կանուխ հնարաւորութիւն չունեցայ գրելու ձեզի: Վեհափառին [Վազգէն Ա. Պալճեան] հետ կը շրջէի Հնդկաստանի զանազան քաղաքները: Ձեր նամակը ստացայ Կալկաթա վերադարձիս, 3 Դեկտեմբերին: Ներփակ երեք նամակները անձամբ յանձնեցի Վեհափառին, որ խնդրեց ինձմէ, որ կարդամ եւ գրութեանց բովանդակութեան ծանօթացնեմ զինք: «Սփիւռք»ներն ալ յանձնեցի:

Յարութիւն Սահակեան անունով ցարդ որեւէ մէկը չէ ժամանած Կալկաթա: Շնորհակալութիւն զգուշացումին համար:

Դերենիկ Եպիսկոպոսի մահուան լուրը ստացանք Զոթթա-յամի²⁷ մէջ (Հարաւային Հնդկաստան): Եղիշէ Սրբազանը [Տէր-տէրեան] Պոմպէյի մէջ հետեւեալ ձեւով խօսեցաւ ժողովուրդին, Հայոց եկեղեցիին մէջ. «Հայ եպիսկոպոս մը սպաննուած է հայ սարկաւազի մը դաշոյնով: Որո՞նք վրայ պետք է ողբանք ու աղօթենք, անոր՝ որ մեռա՞ւ, թէ անոր, որ բանտի մը երկաթեայ ձողերուն ետեւ կը տանջուի»:

[Ճավահարլալ] Նեիրուին հետ Վեհափառը տեսնուած էր արդէն, երբ նամակը հասաւ:

[Սունիթի Բումար] Չաթըրճին կրնայ օգնել գործին: Թելադրեցէք [Պոկտան] Կեմպարսկիին ուղղակի յարաբերութեան մէջ մտնել Չաթըրճիին հետ, որ բացի յայտնի գիտնական մը ըլլալէ՝ մեծ վարկ ունի պետական շրջանակներէն ներս: Չմոռնանք որ ան Պենկալի խորհրդարանի նախագահն է: Ես իմ կողմէս ջանք չեմ ինայեր:

Կարելի է հետեւեալ հասցեով կապ պահել հնդիկ գիտնականին հետ.

Dr. Suniti Kumar Chatterji
Chairman Legislative Council
West Bengal
Calcutta, India

Տոքթ. Չաթըրճին առանձին տեսակցութիւն մը ունեցաւ Վեհափառին հետ, որուն միայն ես ներկայ գտնուեցայ: Հնդիկ գիտնականը շատ լաւ տրամադրուած է դէպի հայ ժողովուրդը:



Ան Վեհին հետ խօսեցաւ հայկական եղեռնի մասին: Վեհը Չաթըրճիէն լաւ տպաւորուեցաւ եւ փոխադարձաբար: *Պանքէթի* մը ընթացքին, որուն ներկայ էին քաղաքապետը, պետական այլ անձնաւորութիւններ եւ դիւանագիտական մարմնի ներկայացուցիչներ՝ Վեհափառի խօսքերուն պատասխանեց Չաթըրճին իմաստալից ճառով մը:

Կեմպարսկիին պետք է թելադրել **անպայման** կապ պահել Չաթըրճիին հետ հայկական դատի պաշտպանութեան կապակցութեամբ:

Հայկական դատի պաշտպանութեան առնչութեամբ ձեր կատարած աշխատանքը խիստ գնահատելի է: Թելադրութիւն մը սակայն. Հայաստանի կառավարութիւնը առ այժմ դուրս պահել դատի հետ կապուած վիճաբանութիւններէն: «Սփիւռք»ի կեցուածքը Սովետական Հայաստանի նկատմամբ, հայրենիքի մէջ, սխալ կը հասկցուի...: Իմ համեստ կարծիքովս, որոշ հարցերու մէջ Հայաստանի կառավարութիւնը թիրախ դարձնել՝ դժուար թէ կարենայ օգտակար ըլլալ համազգային մեր շահերուն: Մի քանի առիթներով, շարք մը մտաւորականներու հետ ձեր եւ «Սփիւռք»ի մասին գաղափարներու փոխանակութեան առիթ ունեցայ Հայաստանի մէջ: Ըսի իրենց որ ճիշդ չեն հասկնար ձեզ եւ «Սփիւռք»ի ոգին: Հայկական դատի պաշտպանութեան գործը հարազատ է հայրենիքի ո՛չ միայն մտաւորականութեան, այլ նաեւ՝ պետական մարդոց սրտին: Ասոր բացարձակապէս համոզուած եմ ես: Իրենց լռութիւնը ունի տրամաբանական եւ հասկնալի պատճառներ:

Կը խնդրեմ որ նամակս ամբողջութեամբ եւ անոր մասերը մնան միայն ձեր սեպհականութիւնը եւ չիրատարակուին կամ չիրապարակուին:

Կը ծրագրեմ շուտով հնդկահայ գաղութը ներկայացնող յանձնախումբ մը ժողովի կանչել, հայկական դատի պաշտպանութեան կապակցութեամբ: Յառաջադրութիւնս է հնդկահայութեան անուկով նամակ մը յղել Ազգերու ժողովին. նոյն նամակին պատճենը յղել տարբեր պետութեանց ներկայացուցիչներուն: Այս ծրագիր է միայն: Տեսնենք հնդկահայութիւնը պիտի համաձայնի՞ նման քայլ մը առնելու յառաջադրութեան:

Ջերմ բարեւներ Տիկին Սիմոնեանին, ձեզի եւ հնգեակին՝ Տեր եւ Տիկին Ալեքսեաններէն, եւ համբոյրներ՝ Նարինէն, Կարի-





նեն (կարդալ Գարինէ) եւ ինձմէ:

Սիրով՝
Ասատուր

Յ.Գ.- «Սփիւռք»ները անկանոն կը հասնին: Տոկուն թուղթի մէջ պէտք է ծրարել: «Սեւան»ի նոր հրատարակութիւններէն ղրկեցէք:

Ջնդկահայութեան կեանքին նուիրուած վէպս պատրաստ է: Պատրաստ է նաեւ պատմուածքներու շարքը: Յառաջիկայ տարուան կետերուն կ'այցելեմ Պէյրութ եւ այնտեղ հրատարակելու մասին կը մտածենք:

Նոյն

ՆԱՄԱԿ 20

[Կալկաթա], 10.4.1964

Սիրելի Պրն. Ս. Սիմոնեան,

Այսօր միայն ստացայ «Սփիւռք»ի այն թիւը, ուր ձեր թանկագին մօր մահուան գոյժը տպուած է: Նման տխուր առիթներով դժուար է խօսքեր գտնել, որոնք կարենան սփոփել վշտահար սիրտ մը:

Ընդունեցէք արդ, Ալեքսեաններուն, տիկնոջս եւ իմ խորին ցաւակցութիւնները եւ բարի գտնուեցէք նոյնը փոխանցել ձեր եղբօրն ու ընտանեկան պարագաներուն:

Սիրով՝
Ա. Կիւզելեան

ՆԱՄԱԿ 21

(Բացիկ)
[Միւնիխ, 5.9.1964]

Սիրելի Պրն. Սիմոնեան,

Նիկոսիա, Աթենք, Վիեննա այցելելէ ետք՝ երեկ հասայ Միւնիխ: Վիեննա հանդիպեցայ Յայր Մեսրոպին [Գրիգորեան].²²⁸





Յոս առաջին հերթին այցելեցի հայկական ակումբ: Յետաքրքրական շատ բան տեսայ ճամբորդութեանս ընթացքին: Վաղը կը մեկնիմ Պրիւքսել:

Կը գրեմ դարձեալ:

Բարեւներ տղոց՝
Ասատուր

ՆԱՄԱԿ 22

[Լոնտոն], 10.6.[19]65

Սիրելի Պրն. Ս. Սիմոնեան,

Ձեր ապսպրանքներուն մասին այսօր Նորէն խօսեցայ լիսնթիփի ներկայացուցիչին հետ: Ձեր դրկած կտորներու ցուցակը ունին իրենց տրամադրութեան տակ եւ կը սպասեն ապսպրանքին: Ներկայացուցիչը այն համոզումը ունի որ իրենց Պէյրութի *աժանսը* ձեր մասերը հաւանաբար ապսպրած եւ աւելի շահով՝ ուրիշի ծախած է: Ամէն պարագայի տակ՝ կտորները ստանալու ամենէն արագ ձեւը ուղղակի իրենց դիմելն է: Կը ցաւիմ որ, այս կապակցութեամբ չեմ կրնար գործնականապէս օգտակար ըլլալ ձեզի:

Արեւելահայ Գրականութեան մասին գրախօսական մը պատրաստած եմ «Արեգակ»ի համար, բայց տեղի չգոյութեան պատճառով՝ ցարդ չեմ կրցած հրատարակել: Գրքէն միայն կրցայ երեք օրինակ վաճառել մինչեւ այսօր... հետաքրքրուողները դրամ չունին, իսկ դրամ ունեցողները՝ չեն հետաքրքրուիր: Արդեօք հետաքրքրուող՝ բայց դրամ չունեցողները պատահի որ օր մը դրամ ունենան, դրամ ունեցող հետաքրքրուող պիտի մնա՞ն՝ թէ պիտի միանան միւս դասակարգին... հարցին լուծումը ձեզի կը ձգեմ:

Ազատը [Աճեմեան] կ'ըսեր թէ Լոնտոն գալու միտք ունիք. առարկայական թուական մը որոշած էք, թէ այս ալ «Յնդկաստան գալու» պէս բան մըն է:

«Արեգակ» բացառիկը լաւ ընդունելութիւն գտաւ: Թերթի ներկայ վիճակէն շատ գոհ չեմ. շատ մը դժուարութիւններու առջեւ կը գտնուիք, պարզապէս անոր համար՝ որ թերթը կը





տպուի Փարիզ: Լոնտոնի մէջ տպարան հաստատելու ծրագիրը դեռ վերջնական ձեւ չէ ստացած:

Մերինները սրտագին բարեւներ կը դրկեն ձեզի, Մարիին եւ «Սիմոնեան բանակի» բոլոր գինուորներուն, որոնց պաշիկներ կը դրկէ Կարինէն (աւելի յարմար պիտի ըլլար Շուշանիկ անունը հոս...):

Համբոյրներով՝
Ա. Կիւզելեան

Յ.Գ. Ջերմ բարեւներ Գեորգին [Աճեմեան], Երուանդին [Քասունի], Լեւոնին [Վարդան], Օսնիկին [Սարգիսեան] եւ մասամբ նորին...:

Նոյն

ՆԱՄԱԿ 23

[Թորքի, Անգլիա, 23 Ապրիլ 1968]

Սիրելի Պրն. Սիմոնեան,

Այս երկրորդ նամակս է: Քանի մը շաբաթ առաջ առաջինը գրեցի: Կ'ենթադրեմ որ գրութիւնս չհասաւ ձեզի:

Խնդիրը հետեւեալն է.

Պրն. [Յովհաննէս] Չալըգեանին եւ ինծի դրկած ձեր գիրքերը, Պրն. Չալըգեանի խնդրանքով՝ Պրն. Խաչիկ Մթորպեան խոստացած է նուիրել կարգ մը գրադարաններու: Չալըգեանը խնդրեց ինձմէ, որ գրեմ ձեզի, որպէսզի շնորհակալութեան նամակ մը գրեք Մթորպեանին, քանի որ ցարդ նման գրութիւն մը չէ ստացած: Կ'ենթադրեմ որ առաջին նամակս կորսուած է: Արդ, կը խնդրեմ որ Չալըգեանին ուզած նամակը գրեք Մթորպեանին, որպէսզի առաջինը՝ դրամը գանձէ Մթորպեանէն եւ [Յակոբ] Կիւլոյեանին հետ՝ որ Մայիսին Լոնտոն պիտի գայ՝ դրկէ ձեզի:

Մթորպեանի հասցէն է.

Mr. K. Mtrebian
Brentford Nylons Ltd.,
Great West Road,
Brentford Middx.
England





Ընտանեօք ջերմ ողջոյններ ձեր բոլորին:

Սիրով եւ կարօտով՝
Ա. Կիւզելեան

Յ.Գ. Համոյ եւ Ֆատիլէն եթէ օրինակներ ունիք՝ բարի գտնուեցէք դրկել:

Նոյն

ՆԱՄԱԿ 24

(Բացիկ)

[Թորքի, 2 Սեպտեմբեր, 1969]

Ողջոյն Անգլիոյ գեղեցկագոյն անկիւններէն՝ Torquay-էն: Քանի մը օրէ ի վեր հոս եմ հանդերձ ընտանեօք: Ասծ. [Աստուած] բոլոր գեղեցիկ ու շահաւետ անկիւնները տուած է այլոց, իսկ մեզի՝ լոկ խոստում: Ձերմ բարեւներ Տիկին Սիմոնեանին եւ ձեր «բանակին»:

Ասատուր

ՆԱՄԱԿ 25

[Լոնտոն], 16/4/70

Սիրելի Պրն. Սիմոնեան,

Շնորհակալութիւն «Սփիւռք»ի վրայ՝ հասցէիս տակ գրուած բազմաթիւ «ողջոյն»ներուն համար:

Քանի մը օր առաջ Յովիկը հեռաձայնեց.

- Հայրիկս զարմուհիիս միջոցաւ հետեւեալ պատգամը դրկած է ձեզի. անմիջապէս նամակ պետք է գրէք հօրս...:

Նման պատգամ մը անտեսել անշուշտ կարելի չէ:

Շատ բան կայ գրելիք, մանաւանդ՝ խօսելիք: Յոյս ունիմ բոլոր գրուելիքները՝ ըսուելիքներուն հետ համատեղ կ'ըսեմ, երբ մօտ ապագային Պէրյուք գամ:

Սինչ այդ՝ ի գիտութիւն յայտնեմ, որ հանդերձ ընտանեօք լաւ ենք: Բոլորս անխտիր կը յղենք ջերմ ողջոյններ Տիկին Սիմոնեանին, ձեզի եւ «Սիմոնեան բանակին»:





Վստահ եմ ձեր մտածումները յաճախ կը կեդրոնանան Լոնտոնի վրայ: Չէ՞ որ Յովիկը հոս է:

[Երուանդ] Պարսումեանին ըսի օր մը.

- Պարսում, գիտե՞ս Սիմոնեանին գլուխ-գործոցը ո՞րն է:

- Դժուար հարցում:

- Յովիկը...:

Չկարծեք որ այս գնահատանքը կ'ընեմ, որովհետեւ մերոնք, մեծէն ցփոքր, մանաւանդ Կարինէն եւ Արմինէն՝ պաշտելու աստիճան կը սիրեն Յովիկը, այլ անոր համար, որ ան օժտուած է այնպիսի մարդկային բարձր յատկութիւններով, որոնցմէ զուրկ է հայ երիտասարդութիւնը մեծաւ մասամբ այսօր: Իր հաղորդականութեամբ, ընկերասիրութեամբ, զոհաբերութեան ոգիով՝ շուտով Յովիկը կազմեց ընկերային լայն շրջանակ մը հայ համայնքէն ներս, ուր բոլորը կը սիրեն զինք:

Բազմիցս Վիվիէնն ու ես ըսած ենք իրեն, որ մեր տունը նկատէ նաեւ իր տունը. առանց քաշուելու գայ, երբ որ ուզէ: Երբ քանի մը շաբաթ չերեւայ, պզտիկները կը հարցնեն.

- Ո՞ւր է Յովիկը:

Այս բոլորը չեմ գրեր մտահոգ հօր մը մտահոգութիւնները փարատելու ճիգէն թելադրուած, այլ անոր համար որ՝ ըսուածները կը համապատասխանեն ճշմարտութեան: Յովիկը հասուն երիտասարդ մըն է: Կրնաք վստահ ըլլալ, որ նոյնիսկ Լոնտոնի նման քաղաք մը չի կրնար խաթարել անոր նկարագիրը:

Գալով ինծի՝ կ'ապրիմ սովորական, միօրինակ որակուելու աստիճան՝ պարզ կեանք մը: Լոնտոնի մէջ գրականութեամբ զբաղիլը շատ դժուար է: Գրական մթնոլորտ բացարձակապէս չկայ: Վերջին հինգ տարուան ընթացքին՝ ոչինչ գրած եմ...: Կալկաթա գտնուած շրջանիս պատմուածքներ եւ վէպ մը գրած էի, եթէ ժամանակ գտնեմ վերամշակելու՝ հետս Պէյրուս կը բերեմ:

Պարսումեանը Պէյրուսէն վերադարձին անգամ մը միայն հեռաձայնեց: Առաջ յաճախ կու գար, կը զրուցէինք: Կարծեմ դատական հարցերով չափազանց զբաղած է:

Կը ծրագրեմ Մայիսի երկրորդ կիսուն գալ ձեր կողմերը: Գրուելիքներն ու ըսուելիքները կը հաղորդեմ, երբ գամ:

Ձերմ ողջոյններ եւ համբոյրներ մեր բոլորէն ձեր բոլորին:

Սիրով՝
Ասատուր





Յ.Գ. Չափազանց շնորհակալ եմ Յովիկին միջոցաւ դրկուած թանկարժէք նուէրին համար:

Նոյն

ՆԱՄԱԿ 26

[Լոնտոն], 21-4-[19]70

Սիրելի Պրն. Ս. Սիմոնեան,

Քանի մը օր առաջ գրեցի ձեզի: Յուսամ նամակս ստացած էք:

Երկու օր առաջ Յովիկն [Սիմոնեան] ու [Երուանդ] Պարսումեանը քովս էին: Երկար խօսեցանք զանազան զարմանազան հարցերու շուրջ, ի միջի այլոց նաեւ՝ Լոնտոն-Պէյրուօ՝ Պէյրուօ-Լոնտոն **աժան** տոմսակ ապահովելու մասին...: Այդ առնչութեամբ՝ Յովիկը խոստացաւ գրել ձեզի: Հարցը հետեւեալն է:

Մայիսի կեսէն ետք՝ կ'ուզեմ 6-7 շաբաթով գալ ձեր կողմերը: Կը ծրագրէի նաևով ճամբորդել, Յովիկը յայտնեց որ Պէյրուօէն կարելի է աժան օդանաւի տոմսակ ապահովել յորդանանեան եւ ռումանական ընկերութիւններէն: Կը նախընտրեմ ճամբորդել ռումանականով՝ եթէ գիտերու մէջ մեծ տարբերութիւն չկայ: Շնորհակալ կ'ըլլամ, եթէ շուտափոյթ գրեք ինծի թէ՛

1) Առանց ամսուան մը պայմանաժամի՝ Լոնտոն երթ ու դարձի տոմսը ի՞նչ կ'արժէ (**միայն 1 ամսուան համար ի զօրու տոմսակ չեմ ուզեր**):

2) Եթէ նաևով Պէյրուօ գամ եւ օդանաւով վերադառնամ՝ Պէյրուօ-Լոնտոն տոմսը ի՞նչ կ'արժէ:

3) Եթէ որոշեմ օդանաւով ճամբորդել՝ կրնա՞ք տոմսակս գնել հոն. եթէ այո՝ կ'ուզէ՞ք դրամը հոս Յովիկին տամ, թէ Պէյրուօ հասնելու՝ ձեզի վճարեմ:

Ձեր հաղորդելիք տեղեկութիւններուն վրայ, երբ որոշեմ օդանաւով գալ՝ իսկոյն **կը հեռագրեմ ձեզի**:

Ձերմ բարեկեցութեան սիրով՝
Ա. Կիւզելեան





ՆԱՄԱԿ 27

[Լոնտոն], 9 Յուլիս, 1970

Սիրելի Պրն. Սիմոնեան,

Ամսոյս ճին հասայ Լոնտոն: Ստիպուած մէկ շաբաթ մնացի Սոֆիա: Անկարելի եղաւ օդանաւին մէջ տեղ «ապահովել»: Յիմա միայն կը հասկնամ, թէ **«օդանաւի մէջ տեղ չկայ»** բացատրութիւնը պուկարներուն համար բոլորովին այլ իմաստ մը ունի... Կը նշանակէ՝ «քեզ Պուկարիա պիտի պահենք քու ցանկութեանդ հակառակ, որպէսզի **տողար** ծախսես»: Գիւտ մը չէ որ կ'ընեմ, այլ ընդհանրացումս կը հիմնեմ առարկայական տուեալներու վրայ: Սոֆիա-Պրիւքսել-Լոնտոն գծով թռչող օդանաւին մէջ, ամսոյս վեցին, հազիւ 30 ճամբորդ կար...:

Բարեբախտաբար Տիրայր Սրբազանը [Մարտիկեան]²²⁹ Վարդավառի առիթով Սոֆիա եկած էր Ռումանիայէն եւ գիս փրկեց ձանձրոյթ: Պարկեշտ եկեղեցական մըն է, նիւթէն վեր, խօսելէ առաջ խորհող ու խորհելէ ետք ալ՝ եկեղեցականի մը վայել արտայայտութիւններ միայն ունեցող:

Երբ Լոնտոն հասայ, Յովիկը մեկնած էր արդէն: Ամիջապէս հեռաձայնեցի իր ապրած տունը, ուր նոյն առաւօտ հասած էր ձեր հաստափոր նամակը: Իսկոյն՝ ըստ Յովիկի ցանկութեան, նամակը դրկեցի Վիեննա, Յայր Մեսրոպին [Գրիգորեան]:

Այս առտու հասաւ նաեւ Պրն. Ալեքսիին դրկուած չէքը (125 սթերլին): Յաւանաբար քանի մը գիշեր անքուն մնացիք մտածելով դրամը տեղ հասցնելու մասին...:

Այսօր Լոնտոն կը հասնի նաեւ Վանտան [Կիւզելեան],²³⁰ Ծովինարը: Քանի մը օր կը մնայ ու կը մեկնի Ամերիկա:

Վերադարձիս Վիվիէնը, Կարինէն ու Արմինէն գտայ առողջ: Աներմայրս միայն հիւանդ է. շուտով հիւանդանոց պիտի մտնէ ընդհանուր քննութեան մը համար: Չինք գտայ շատ նիհարած ու տկարացած:

[Խաչիկ] Մթրըպեանին հետ խօսեցայ հեռաձայնով: Յառաջիկայ Ուրբաթ հաւանաբար հետը տեսակցութիւն մը ունենամ: [Յովհաննէս] Չալըգեանը քովս էր երէկ. ան ալ կ'ուզէ խօսակցութեան ներկայ գտնուիլ: Խօսակցութեան արդիւնքի մասին կը գրեմ ձեզի:

Անգամ մը եւս կ'ուզեմ ձեզի, Մարիին եւ Սիմոնեան ընտա-





նիքի բոլոր անդամներուն յայտնել խորին շնորհակալութիւն՝ այն գուրգուրոտ վերաբերումին համար, զոր ցուցաբերեցիք ինծի հանդէպ, Պէյրութ գտնուած օրերուս:

Արմինէն անտեղիտալի պնդումով կը պնդէ, որ պիտի ամուսնանայ Սասունին հետ:

«Յով արեք սարեր ջան, հով արեք,

Արմինէի դարդին դարման արեք...»:

Յաջորդիւ կը դրկեմ Կարինէին եւ Արմինէին լուսանկարները. թերեւս Սասունին սիրտը փափկանայ՝ ի տես սեւաչեայ «եղնիկին»... այլապէս՝ ես ալ Գարեգին Կաթողիկոսի [Յովսէփեանց] պէս պիտի ըսեմ. «Գրիշան պահանջում է որ Մարգարեթա իշխանուհու ձեռը խնդրեմ, Մովսէսն էլ...» (մնացածը գիտեք):*

Պրն. [Պետրոս] Ալեքսիս եւ Վիվիէնը կը յայտնեն խորին շնորհակալութիւններ, այցետոմսերուն համար եւ կը յղեն ջերմ ողջոյններ Սիմոնեան ընտանիքի բոլոր անդամներուն:

Կը գրեմ շուտով:

Համբոյրներով՝
Ասատուր

ՆԱՄԱԿ 28

[Լոնտոն], 4 Ղեկտ[եմբեր] 1970

Շատ սիրելի Պրն. Սիմոնեան,

Սալբին [Աճեմեան] քիչ առաջ հեռախօսեց: Գացի պանդոկէն տուն բերի զինք: Նստած է դիմացս եւ կը զրուցէ Վիվիէնին հետ:

Միշտ անկարելին կը պահանջէք ինձմէ: Սեւագրութիւն չեմ կրնար պատրաստել այսքան կարճ ժամանակուան մէջ: Կարելորդը նամակին մէջ **սրտի խօսք ըսելն է:**

Շեշտել նամակին մէջ գործին **կարելորդութիւնը**, թէ՛ արտասահմանի եւ թէ՛ **հայրենիքի հայութեան** համար: Ընդգծել նաեւ թէ **անյետաձգելի** այդ աշխատանքին սատարող հայրենասէր հայ մարդը՝ երախտագիտութեամբ պիտի յիշուի մեր գրակա-նութեան պատմութեան մէջ: (Նման բաներ): Եթէ դժուարու-

* Տես ծանօթագրութիւն 10, Գարեգին Ա. Կաթողիկոս Յովսէփեանց, էջ 355:





թեան հանդիպիք, Պրն. Օ[ննիկ] Սարգիսեանը կրնայ ձեզի օգնել... (կը յուսամ սխալ չէք հասկնար զիս):

Կարինէն եւ Արմինէն կ'աղմկեն անդին. այլազան նիւթերու մասին կը զրուցեն: Դժուար է այս պայմաններու տակ կեդրոնանալ:

Աներմայրս հիւանդանոց կը գտնուի երկու շաբաթ է վեր: Վիճակը քիչ մը բարելաւուած է: Կը յուսանք շուտով բոլորովին կ'ապաքինի, վերադարձնելով ժպիտը՝ Պրն. Ալեքսիի դէմքին...:

Այս աղմուկին մէջ ա՛լ չեմ կրնար շարունակել:

Համբոյրներ կը դրկեն ձեր բոլորին Արմինէն, Կարինէն, Վիվիէնը: Ձերմ ողջոյններ Պրն. Ալեքսիէն հանդերձ ընտանեօք:

Համբոյրներով՝
Ասատուր

Յ.Գ. Խորին շնորհակալութիւն օղիին համար:

Նոյն

Սիրելի Յովիկ [Սիմոնեան],

Սիսաքն [Թերզեան]²³¹ այսօր հեռախօսեց քննութեան արդիւնքին առնչութեամբ: Այդ արդիւնքը ես շատոնց դրկած եմ քեզի: Կ'երեւի կորսուեցաւ: Ըսի իրեն որ նիշերուդ պատճենը առնէ դպրոցէն եւ դրկէ քեզի:

Սիրով՝
Ասատուր

ՆԱՄԱԿ 29

[Լոնտոն], 30 Մայիս, 1972

Շատ սիրելի Պրն. Սիմոնեան,

Նախ անկեղծ շնորհակալութիւններս կ'ուզեմ յայտնել ձեզի եւ Յովիկին, եղբօրս՝ Մարտիկին²³² վաղաժամ ու անսպասելի մահուան առթիւ ձեր ըրած օժանդակութեան, արտայայտած վշտակցական զգացումներուն համար, թէ՛ անձնապէս ինծի հեռախօսով, թէ «Սփիւռք»ի միջոցով:

Ատենին ձեր վճարած դրամը հեռագրով փոխանցեցի ձեր հասցէին, կը յուսամ ստացած էք:

Յունուարին, 33 Egerton Gardens-ը²³³ ծախեց աներհայրս, որուն հետեւանքով մինչեւ Ապրիլի վերջը մնացի անգործ: Հա-





լանաբար [Երուանդ] Պարսումեանը խօսած է ձեզի Լոնտոնի մէջ տպարան հիմնելու եւ շաբաթաթերթ հրատարակելու ծրագրի մասին: Դեկտեմբերին Խ[աչիկ] Մթրըպեան իր համաձայնութիւնը տուաւ հիմնելու տպագրական ընկերութիւն մը, որպէս Brentford Nylons-ի²³⁴ կողմէ հովանաւորուելիք առեւտրական ձեռնարկ մը: Համոզած էի զինք, որ Լոնտոնի մէջ մնալուն շաբաթաթերթ ունենալու նախապայմանը՝ տպարան ունենալն էր: Իսկ տպարան ունենալու նախապայմանը՝ տպագրական գործ ունենալն էր: Ըսած էի իրեն, որ իր իսկ հաւաստիացումին համաձայն՝ Brentford Nylons-ի տարեկան տպագրական ծախսը 250,000 սթերլինէն աւելի է: Եթէ Brentford Nylons-ը իր տպագրական գործերուն կեսը միայն տայ իր կողմէ հովանաւորուելիք տպարանին, այդ տպարանին զուտ շահը տարեկան նուազագոյն 50,000 սթերլին կ'ըլլայ:

Մթրըպեան իր սրտին մօտ գտած էր նաեւ յառաջադրուած շաբաթաթերթին ուղղութիւնը. անկախ, ձախին ու աջին տուրք չվճարող, հայ ժողովուրդի միասնականութեան *փրոփականտին* նուիրուելու կոչուած, հայ ժողովուրդի մնալուն արժէքները փառաբանող, համահայկական կեդրոնական մարմին մը ստեղծելու գաղափարը դարբնելու կոչուած օրկան մը, աշխարհի կարեւորագոյն կեդրոններէն մէկուն սրտին մէջ:

Դժբախտաբար այդ շրջանին Մթրըպեան շուրջ ութ շաբաթով բացակայեցաւ Լոնտոնէն: Վերադարձին Nylons-ի իր «կայսրութեան» հետ կապուած հարիւրաւոր կարեւոր հարցեր իրեն կը սպասէին. նոր գործարաններու հիմնադրութիւն, նոր կեդրոններու հաստատում, ընկերութիւնը հանրային (Ltd.) դարձնելու խնդիր, եւայլն: Բնական է տպարանի ծրագիրը իր 16րդ տեղը պիտի զիջէր ուրիշ կարեւոր ծրագիրներու եւ գրաւէր 61րդ տեղը (ականջը... ոչ, հոգին խօսի [Պենճամին] Տիգրայելիի...):²³⁵

Առ այժմ ուրեմն, տպարանի ծրագիրը արձանացած է 61րդ յօդուածին պէս՝ թուղթի վրայ...: Յուսանք որ 61րդ յօդուածին պէս յաւերժ արձանացեալ վիճակի մէջ չի մնար:

Մարտին՝ հեռաձայնով յայտնած էի Մթրըպեանին, որ՝ տրուած ըլլալով որ տպարանի ծրագիրը յետաձգուած էր, գործ մը կարգադրէր ինծի համար: Կարգադրած էր որ իր Լոնտոնի կեդրոններէն մէկուն «manager»-ի պաշտօնը տրուի ինծի: Մայիս 8էն ի վեր կը վարեմ այդ պաշտօնը: Վստահ եմ կ'ուզէք





գիտնալ, թե ի՞նչ է ըրած գործս: Տեսակ մը պատուաւոր խանութպանութիւն: Brentford Nylons-ի գործարաններէն մէկը կը գտնուի Լոնտոնի հիւսիսային շրջաններէն մէկուն՝ Tottenham-ի մէջ: Գործարանին կից կայ վաճառքի կեդրոն մը, ուր կ'աշխատին 10 աղջիկ եւ 5 երիկ մարդ: Ասոնք «հովուելու» պարտականութիւնն ահա ինծի յանձնուած է: Այս կեդրոնին մէջ միայն տարեկան շուրջ 450,000 սթերլինի ապրանք կը վաճառուի: Վաճառատան հետ կապուած դրամական եւ այլ հարցեր (գործաւոր վարձել, պաշտօնէ արձակել, կեդրոնը կազմակերպել, ելլն.) ամբողջութեամբ իմ կողմէ կը կարգադրուին: Գործս բաւական ծանր է: Առտուան ժամը 8ին կ'երթամ, կը վերադառնամ երեկոյեան ժամը 8ին: Պաշտօնիս հետ կապուած գլխաւոր դժուարութիւնն այն է առ այժմ, որ յիշեալ կեդրոնն ունի անկազմակերպ վիճակ մը: Երբ գործի սկսայ, ինչպէս պարսկահայերը կ'ըսեն, «շունը տիրոջը չէր ճանաչում»: Յոյս ունիմ քանի մը շաբաթէն լրիւ կազմակերպուին աշխատանքները եւ գործը մտնէ սահուն հունի մը մէջ:

Դեկտեմբերին, երբ վերջին անգամ դեմ-դիմաց Մթըըպեանին հետ խօսելու պատեհութիւն ունեցայ, յայտնեց ինծի, որ ձեզմէ նմակ մը ստացած է արեւմտահայ գրողներու գործերը հրատարակելու առնչութեամբ: Ըսի իրեն որ նման աշխատանք մը անյետաձգելի անհրաժեշտութիւն մըն էր մեր իրականութեան մէջ, եւ թէ ինք ունէր նիւթական կարելիութիւնը, ինչպէս նաեւ՝ նման աշխատանքի մը իրականացման գրաւականը եղող՝ հայու մեծ սիրտը: Խոստացաւ մտածել այդ մասին լրջօրէն եւ խորհրդակցիլ հետս հետագային...: Խոստացաւ...: Բայց Խաչիկ Մթըըպեան, որ իսկապէս մեծ սրտի տէր, համեստ, առատաձեռն հայ մըն է, ոստայնի մէջ ինկած սարդի մը կը նմանի: Վերջին քանի մը տարիներուն գործն այնքան ընդարձակուեցաւ, որ հոգիով բանաստեղծ այս տղան՝ իր խոստումներն իրագործելու (տրամադրութիւնը ունի) ժամանակ չունի: Ինչպէս գիտէք, առեւտրական կայսրութիւն ունեցող մարդիկ ընդհանրապէս պատրաստ դրամ չեն ունենար: Բարեբախտաբար, Մթըըպեան որոշած է մօտ ապագային՝ հաւանաբար 1973ի վերջերը, Brentford Nylons-ը վերածել հանրային ընկերութեան, այլ խօսքով ընկերութեան բաժնետիրութեանը հրապարակով վաճառել, որուն իբրեւ հետեւանք, շուրջ 20-25 միլի-





ոն սթերլին գումար մը պիտի անցնի ձեռքը, այն ատեն, յուսանք, որ իրագործուին իր խոստումները:

Կարելոր կետ մը. կը խնդրեմ որ գրածներս որեւէ ձեռով «Սփիւռք»ին մէջ չհրատարակէք: Կարելոր կետ մը եւս. բարեհաճեցէք այսուհետեւ «Սփիւռք»ը եւ ձեր նամակները յղել մեր տան հասցէին միայն:

20, Hans Crescent,
London, S.W.,

[Վահրամ] Մավեանը քանի մը օր Լոնտոն մնալէ ետք՝ վերադարձաւ իր «աքսորավայրը», Լիզպոն: Պատմեց ձեր մասին: Այս անգամ քիչ մը ընկճուած գտայ զինք: Ռամկավարի փորն ալ՝ քիչ մը աւելի մեծցած ըլլար կարծես:

[Երուանդ] Պարսումեանէն երկու նամակ ստացայ: Ան ալ մնաց թափառական «հայ-առեւտրական-բանաստեղծը»: Քուէյթ-Լոնտոն-Պէյրուս-Քուէյթ օդանաւային ճամբորդութեան ծախսած դրամովը հաւանաբար 3 տպարան կարենայինք հիմնել...: Ան ալ՝ ձեր օրինակին հետեւելով՝ իր նամակներուն մէջ կը հրահանագէ. **գրէ:** Ի՞նչ գրեմ, ե՞րբ գրեմ: Շրջան մը անորոշութեան մատնուած էի: Անորոշութեան մատնուած մարդը ամենէն շատ ժամանակ կ'ունենայ, բայց գրելու տրամադրութիւն չունենար: Զիմա որ անորոշութենէն դուրս ելած եմ (շնորհիւ խանութպանութեան), այս անգամ ժամանակ չունիմ: Ինծի այնպէս կը թուի, որ վերջ ի վերջոյ մօտ ապագային, վերջին անգամ ըլլալով, ամուր պիտի սեղմեմ գրականութեան ձեռքը եւ հրաժեշտ առնեմ անկէ:

Չմոռցած սա ալ ըսեմ. եթէ հետագային (տարի մը ետք) տպարանի ծրագիրը իրագործուելու հունին մէջ մտնէ, արդեօք Յովիկը Լոնտոն կու գա՞յ տպարանին որպէս տնօրէն, նիւթապէս շատ լաւ վարձատրուելու պայմանով անշուշտ: Այս մասին ալ օգտակար է այժմէն գիտնալ:

Պրն. եւ Տիկին Ալեքսեանները, Վիվիէնը, Կարինէն, Արմինէն եւ ես կարօտով կը համբուրենք ձեր բոլորը: Մասնաւոր պաշիկներ Արմինէն Սասունին: Բազմաթիւ ծրագիրներ եւ երազներ թաղեցինք, գոնէ Արմինէ-Սասուն երազը վառ պահենք...:

Ձեզի կը մաղթեմ ամենէն առաջ քաջառողջութիւն, յետոյ ձեր բոլոր ծրագիրներուն յաջող իրականացում:

Անկեղծ ու ջերմ զգացումներով ու կարօտով՝
Ասատուր



ՆԱՄԱԿ 30

[Լոնտոն], 31 Մայիս, 1972

Սիրելի Պրն. Սիմոնեան,

Երկու օր առաջ երկար նամակ մը գրած էի ձեզի, ուր ի միջի այլոց գրականության հրաժեշտ տալու ակնարկություն մը ըրած էի:

Այսօր, 48 ժամ յետոյ, կը գրեմ, «Արեգակ» ամսաթերթը վերհրատարակելու առնչութեամբ կարգ մը տեղեկություններ քաղելու համար ձեզմէ:

Երէկ Պրն. Յայկ Գալուստեանին հետ հանդիպում մը ունեցայ, իր խնդրանքով: Կ'ուզէ «Արեգակ»ը վերհրատարակել անմիջապէս:

ա) Ծաւալ - **4 էջ**, «Սփիւռք»ի ծաւալով (խօսքը կը վերաբերի էջի մեծութեան):

բ) *Թիրաժ* - **1000** օրինակ

գ) Թուղթ - նոյն որակը, որ ունի «Սփիւռք»:

դ) Ամսաթերթ - հրատարակելի իւրաքանչիւր ամսուան սկիզբը:

ե) Փորձերու սրբագրությունը կատարել տեղւոյն վրայ, տպարանին մէջ:

Բարի գտնուեցէք անմիջապէս գրել, թէ վերոգրեալ տուեալներուն վրայ հիմնուած, ի՞նչ ծախս կը նախատեսէք թերթը ձեր տպարանին մէջ տպագրելու համար: Անշուշտ *քլիշէ*ներուն ծախսը կը վճարուի առանձին, փոխադրութեան ծախսին հետ:

Համաձայնություն տուի թերթը խմբագրել, պայմանաւ որ «Արեգակ» ունենայ բոլորովին անկախ կեցուածք, ո՛չ աջին, ո՛չ ալ ձախին ըլլայ հարկատու, դառնայ տեսակ մը օրկան՝ համահայկական կեդրոնական մարմին մը գոյացնելու գաղափարին ու աշխատանքին, շէշտը ղևէ հայութեան տարբեր հատուածները միացնող ազդակներու վրայ:

Ասիկա յաւելեալ գործ մը պէտք է ըլլայ ինծի համար. այլ խօսքով՝ պիտի զբաղիմ միայն թերթի բովանդակութեան հետ կապուած աշխատանքներով, վարչական գործը ձգելով Գալուստեանին: Գիշերները պիտի աշխատիմ:

Կը խնդրեմ որ անմիջապէս պատասխանէք նամակիս, քանի որ առաջին համարը թերթին կը նախատեսուի լոյս ընծայել Յուլիսի սկիզբը:

Սիրալիր ողջոյններով՝
Ասատուր



ՆԱՄԱԿ 31

[Լոնտոն], 20.10.[19]72

Սիրելի Պրն. Սիմոն Սիմոնեան,
Օր. Վ[եհանոյշ] Թեքեանին համար չկրցայ հայ ընտանիք մը
գտնել:

Յնցիչ դեպք մը պատահեցաւ երկու օր առաջ (Յոկո[եմբեր] 20)
ընտանիքին մէջ: Պրն. [Պետրոս] Ալեքսիին թոռը, Թանիան,²³⁶
Ինկրիտին 16 տարեկան քոյրը, ինքնաշարժի արկածի մը զոհ
գնաց: Մահը եղած էր վայրկեանական: Յովիկը կը ճանչնայ
զինք: Այնպիսի դժուարին ու սրտաճմլիկ վիճակ մը ստեղծուած է
ինծի համար, որ ընտելիքս չեմ գիտեր: Աստուած (եթէ գոյ է), պետք
է կարգադրէ, որ նախ ծնողք մեռնին, ապա՝ զաւակունք:

Գալով Վեհանոյշի հարցին, բոլոր այն ընտանիքները, որոնք յա-
ւելեալ վարձու սենեակ ունին ուսանողական, վարձած են արդէն:

Արդ, Վեհանոյշը ինք պետք է որոշէ Լոնտոն բնակելու հար-
ցը: Թերեւս ծնողքը հաւանին, եթէ Վեհանոյշը յանձն առնէ աղ-
ջիկներու Hostel-ի մը մէջ բնակիլ:

Սա վշտի փոթորիկը մեղմանայ թող, ապա կը գրեմ երկար:
Համբոյրներով՝
Ասատուր

ՆԱՄԱԿ 32

[Լոնտոն], 7 Յունուար, 1974

Սիրելի Պրն. Սիմոնեան,
Աւելի լաւ է ուշ՝ քան երբեք...:

Այս նամակը շատոնց գրած պետք է ըլլայի ձեզի, շնորհակա-
լութիւն յայտնելու համար այն սրտբաց ընդունելութեան հա-
մար, զոր ինչպէս անցեալին՝ այս անգամ եւս ցուցաբերեցիք
ինծի հանդէպ: Յատուկ շնորհակալութիւններս հաճեցէք փո-
խանցել նաեւ Յովիկին եւ [Երուանդ] Պարսումեանին:

Զմոռցած ըսեմ, որ Պրն. [Պետրոս] Ալեքսիին անպայման այս
տարուան ընթացքին ձեզ կ'ուզէ տեսնել Լոնտոն, որպէս իր
հիւրը: Անշուշտ այդ «ձեզ»ին մէջ կայ նաեւ Մարին:





Շարաթէ մը կը դրկեմ «Լոնտոն» ամսաթերթի առաջին թիւին սիւթերը: Շնորհակալ կ'ըլլամ, եթէ մինչեւ Փետրուարի վերջը կարենաք ակարտել տպագրութիւնը: Տպարանի ծրագիրը կը հետապնդեմ: Դժբախտաբար ցարդ չեմ կրցած լուրջ տեսակցութիւն մը ունենալ [Խաչիկ] Մթրըպեանին հետ: Անուղղակիօրէն սակայն՝ բաւական ենթահող պատրաստած եմ:

Բաւական թիւով մարդիկ խանդավառ են թերթի ծրագրով: Զանի մը առեւտրական հաստատութիւններ խոստացած են մնայուն յայտարարութեամբ օգնել թերթի *ֆինանս* աւորման:

Թերթի ձեւաւորումը ձեզի կը ձգեմ: Վստահ եմ Յովիկին հետ համատեղ՝ յաջող տեսք մը կու տաք «Լոնտոն»ին: Արդեօք «Լոնտոն»՝ թէ «Լոնդոն» պետք է գրել...:

Մերոնք բոլորն ալ լաւ են եւ կը յղեն ջերմ ողջոյններ, իսկ Կարինէն եւ Արմինէն՝ պաչիկներ՝ մանաւանդ Յովիկին եւ Սասունին: Եթէ Սասունը մերժէ ընդունիլ համբոյրները՝ այն ատեն իր բաժինն ալ կրնայ Յովիկն առնել:

Շուտով կը գրեմ նաեւ Պարսումեանին: Մինչ այդ՝ ջերմ ողջոյններս եւ խորին շնորհակալութիւններս իրեն:

Շնորհաւոր Նոր Տարի:

Համբոյրներով՝
Ասատուր

ՆԱՄԱԿ 33

[Լոնտոն], 24 Յունուար, 1974

Սիրելի Պրն. Սիմոնեան,
«Ողջո՛յն»:

Կը դրկեմ «Լոնտոն»ի առաջին թիւին սիւթերը: Հաւանաբար 4 էջը շատ նեղ ըլլայ այդ բոլորը պարունակելու համար: Եթէ հարկ կը տեսնեք՝ գոնէ այս թիւը վեց էջով հրատարակելու՝ հրատարակեցէք:

Թերթին ձեւաւորումը, յօդուածներուն դասաւորումն ու յայտարարութիւններուն վայրը՝ կը ձգեմ ձեզի:

Դրկուած սիւթերուն կարեւորութիւնը, ներկայ կացութեան մէջ, ակելորդ կը նկատեմ շեշտել:





Կը խնդրեմ որ անպայման մինչեւ Փետր[ուար]ի վերջը «Լոնտոն»ը Լոնտոն դրկուած ըլլայ: Սա Պրն. [Պետրոս] Ալեքսիին խնդրանքն է: Թերթին հետ բարեհաճեցէք դրկել նաեւ հաշուեցոյցը:

Ինծի այնպէս կը թուի, որ ստիպուած թերթը վեց էջի պիտի վերածենք, որովհետեւ բաւական թիւով յայտարարութիւն տալ ուզողներ կան: Միայն այդ ձեւով կարելի կ'ըլլայ ծախսը հասել:

Առայժմ այսքան: Յո՛ւ, տպարանի հարցը կը շարունակեմ հետապնդել:

Ձերմ ողջոյններ բոլորին:

Սիրով՝
Ասատուր

ՆԱՄԱԿ 34

[Լոնտոն, 13 Մարտ 1974]

Սիրելի Պրն. Սիմոնեան,

Ինչպէս կը տեսնէք, գործը մեծցուցիւք: Հիմա ստիպուած ենք արդէն թերթը 8 էջի վերածել...:

Այս յայտարարութիւնն ու **կոչը** անպայման պետք է մինչեւ Ապրիլ 8 Լոնտոն հասնին:

Հետագային կը մտածենք յայտարարութեան բաժինը հոս տպելու մասին: Առ այժմ, ինծի հետ դուք ալ ստիպուած պիտի տառապիք...: Անմիջապէս որ ստանաք՝ կը խնդրեմ որ Յովիկը գործի լծէք:

MEA-ի յայտարարութիւնը շատ կարեւոր է: Փորձերը շուտափոյթ կը խնդրեմ որ դրկէք:

Թերթին հանդէպ հետաքրքրութիւնը մեծ է:

Տպարանի հարցով զբաղելու ժամանակը մօտեցած է:

Համբոյրներով՝
Ասատուր



ՆԱՄԱԿ 35

[Լոնտոն], 14/3/[19]74

Սիրելի Պրն. Սիմոնեան,

Մինչեւ հիմա Յովիկը վերադարձած պետք է ըլլայ:

Կը դրկեմ թերթին նիւթերը՝

1- Խմբագրական - Սուրով մահազդ չի գրուիր

2- Անտիպ մը Դ[անիել] Վարուժանէն

3- Դարտ - բանաստեղծութիւն, Ներվարդ

4- Պիտի ըսենք Աստուծոյ - Վ[ահան] Թէքէեան

5- Լրատու

6- Մեր բաժանորդներուն ու անանուն ու անհասցէ ընթերցողներուն...

7- Նամակ խմբագրութեան

8- Հարագատներ կը փնտռեն (անգլերէն ARTO DER HAROUTUNIAN)

Եթէ մէկ թիւով դժուար է բոլոր այս նիւթերը հրատարակել՝ անգլերէն գրութեան կեսը յաջորդ թիւով կրնաք լոյս ընծայել: Եթէ դժուարութիւն ունիք անգլերէնով շարելու, այդ պարագային բարի եղէք վերադարձնել գրութիւնը: Գրութեան հեղինակը՝ ի միջի այլոց, մեր Աշոտ Քին.ին տղան է: Հայկական ճաշարանն ալ իրեն կը պատկանի: Արուեստագետ երիտասարդ մըն է, որ շուտով նկարչական ցուցահանդէս մըն ալ պիտի տայ: Իր ճաշարանով շատ անելի հայկական *փրոփականտ* կ'ընէ, քան մեր բոլոր եպիսկոպոսները միասին:

Երկու օրէն պիտի դրկեմ նաեւ Ապրիլ 24ի ծանուցումը եւ հաւանաբար 2 փոքրիկ յայտարարութիւններ:

Յաջորդ թիւին նիւթերը մինչեւ Ապրիլի սկիզբը կը դրկեմ. նիւթերու ուշացումին պատճառը ես չեմ. ենթադրած էի, որ վազ անցաք «Լոնտոն»ը տպելէ:

Այս թիւին համար Պարսումէն [Երուանդ Պարսումեան] ալ գրութիւն մը ուզեցէք: Քանի մը տող ալ դուք գրէք... վատ չի լինի:

Յոյս ունիմ շուտով երկու թիւերու փոխարժէքը փոխանցել ձեզի:

Այս թիւը անպայման 6 կամ 8 էջ պետք է ըլլայ: MEA-ին այդպէս ըսինք: Եթէ կարենաք 6 էջնոց ընել՝ 5րդ էջը պետք է տրամադրուի MEA-ին:



Երեկուան նամակովս խնդրած էի ձեզմէ, որ MEA-ի փորձերը կարելի փութով դրկէք ինծի. այդպէս կը պահանջեն:

Բացառիկ բարիք մը ըրած պիտի ըլլաք Ալան Յովհաննէսին²³⁷ եւ լոնտոնահայութեան, եթէ այս թիւը մինչեւ Ապրիլ 5 հասցնէք Լոնտոն: Յովիկը ըսաւ որ 12-15 օր կը տեւէ տպագրութիւնը... ճիշդ է:

Վաղը կը գրեմ դարձեալ... մոռցուած կետերու մասին:

Սիրով՝
Ասատուր

Յ.Գ. Ղրկուած յայտարարութիւնները մնայուն են, բոլոր թիւերուն համար: ARMAND եւ BRENTFORD NYLONS-ն ալ մնայուն են: ARMAND-ին շատ տեղ տուած էք. կրնաք քիչ մը փոքրացնել:

ՆԱՄԱԿ 36

[Լոնտոն], 19.3.[19]74

Սիրելի Պրն. Սիմոնեան,

Յուսամ «Լոնտոն»ի նիւթերը ստացած էք: Նաւասարդեան Կոմիտէն²³⁸ կ'ուզէ որ լուրերու բաժինին մէջ ներփակ գրութիւնը տպուի: Բարեհաճեցէք խոյն դասախօսութեան մասին ղրկուած գրութիւնը վերցնել եւ այս դնել տեղը... Նախապաշարում չստեղծելու համար: Ըսած եմ իրենց, որ Փետրուարեան Յեղափոխութեան մասը չեմ տպեր:

Նախորդ նամակիս մէջ նշած էի որ այս թիւը ստիպուած ենք բարձրացնել 6 կամ 8 էջի: Եթէ որեւէ դժուարութիւն ունիք՝ հաճեցէք գրել ինծի:

Վաղը դարձեալ կը գրեմ:

Հաճեցէք ներփակ երկու գրութիւններն անպայման հրատարակել:

Սիրով՝
Ասատուր





ՆԱՄԱԿ 37

[Լոնտոն], 26-3-74

Սիրելի Պրն. Սիմոնեան,

Սրբագրուած յայտարարութիւնը կը վերադարձնեմ MEA-ով:

MEA տնօրէնութիւնը կարելորութեամբ շեշտեց, որ **բոլոր MEA-ները** պետք է ներփակ *ըլիշէով* տպուին. ատիկա իրենց Trade Mark-ն է: Այնպէս որ, այս պարագան կը խնդրեմ որ չմոռցուի: Իրենք փորձ մը եւս ուզեցին, սակայն ես համոզեցի զիրենք, որ բոլոր MEA-ները ներփակ նմոյշին համաձայն կը տպուին: Պրն. Ա[նտրէ] Գայտանը պիտի փորձէ գոնէ այս եւ յաջորդ 2 թիւերը Լոնտոն բերել տալ MEA-ով: Ամէն պարագայի տակ՝ ես ձեզի կը հեռագրեմ այս մասին: Այլապէս՝ MEA-ով որպէս ապրանք պիտի ղրկուի:

Սիրով՝
Ասատուր

[Յ.Գ.] Սիրելի Պրն. Սիմոնեան,

Որեւէ պատգամ կամ լուր եթէ ուզեք ղրկել՝ հաճեցէք Պրն. Զարիմ Զարճեանին հետ ղրկել Պրն. Անտրէ Գայտանին:

Նոյն

ՆԱՄԱԿ 38

[Լոնտոն], 16 Ապրիլ, [19]74

Սիրելի Պրն. Սիմոնեան,

Քիչ առաջ MEA-ը հեռագրով յայտնեց որ թերթը հասած է Լոնտոն:

Ներփակ կը գտնեք Մայիս ամսուան սիւթերուն մէկ մասը: Մնացեալ սիւթերը Ապրիլ 24ի հանդիսութենէն անմիջապէս յետոյ կը ղրկեմ:

Անցեալ օր Յայկական ճաշարանին մէջ հանդիպեցանք Շարլ Ազնաւուրին. նկարուեցանք միասին: Ասոր համար ալ անկիւն մը պահեցէք:





Հաշիւը անգլերէնով եւ սթերիլիսով ղրկեցէք ինծի, որպէսզի պաշտօնապէս դրամը փոխացնեմ ինն:

Յովիկէն լուր չելաւ:

Կ'աճապարեմ: Թերթը տեսնելէ ետք կը գրեմ: Բարեւներ [Երուսաղէմ] Պարսումեանին: Ջերմ համբոյրներ **Սիմոնեան** բանակի բոլոր զինուորներուն:

Սիրով՝
Ասատուր

ՆԱՄԱԿ 39

[Լոնտոն], 30 Ապրիլ, 1974

Սիրելի Պրն. Սիմոնեան,

Պրն. Վ[ահէ]-Վահեանի²³⁹ միջոցով ղրկեցի՝

ա) Brentford Nylons-ի կողմէ յատկապէս «Լոնտոն»-ի համար պատրաստուած *քլիշէ*: Այսուհետեւ **կը պահանջեն** որ միայն այդ *քլիշէ* տպուի:

բ) Ապրիլ 24ի տողանցքի ընթացքին առնուած լուսանկարներ. կը խնդրեմ որ ներփակ յօդուածին հետ տպէք:

Առանձին թղթատարով Հ[այաստան] Վարդանեան խոստացաւ ձեզի ղրկել՝

ա) Վարչապետին յանձնուած յուշագրին պատճենը: Փափաքելի է որ անգլերէն բնագիրը հրատարակէք այս թիւով:

բ) «Telegraph» եւ «Daily Mail» թերթերու կտրօնները, որոնց *քլիշէ* հաճեցէք տպել:

Անձնանունների Բառարանի մասին ղրկուած թռուցիկները ներփակեցի եւ ղրկեցի թերթին հետ: Մօտ երկու հարիւր հատ մնացած է. կը ղրկեմ ընթերցողներուն՝ յաջորդ թիւին մէջ ներփակ:

Ներփակ բոլոր գրութիւնները հաճեցէք յաջորդ թիւով հրատարակել (**Մայիս 74**): Ի պահանջել հարկին, Տիրան Սրբ[ագան]ի [Ներսոյեան] հետ ունեցած հարցազրոյցէն փոքրիկ մաս մը միայն հրատարակեցէք այս թիւով:

Յունիս ամսուան նիւթերը շուտով կը ղրկեմ: Ապրիլ 24ի պատճառով այս թիւը ուշացաւ քիչ մը:

Յուլիս կամ Օգոստոս թիւին մէջ կ'ուզեմ անդրադառնալ ձեր գրական ու հրատարակչական վաստակին: Հաճեցէք կարգ մը ծանօթութիւններ եւ նիւթեր ղրկել:





Ապրիլ 24ը «թիւ 2-3» մկրտած էիք... ընթերցողներէն ոմանք դիտողութիւն ըրին: Յիմա ալ ստիպուած եմ թերթը 8 էջով լոյս ընծայել, այնպէս որ Սայիսը կրնաք անվրդով՝ «3» մկրտել...:

Կը սպասեմ հաշուեցոյցին՝ կանոնաւոր դրամական փոխանցումի համար. անհրաժեշտ է անգլերէնով եւ սթերլինով հաշուեցոյց մը:

Երբ թերթը յանձնէք MEA-ին, հաճեցէք հեռագրով իմաց տալ ինծի: Ապրիլի թիւը 6 օր օդանաւակայան մնացած էր հոս:

Ապրիլեան սգատօսի յօդուածները շատ աճապարանօք գրուեցան: Հարկ եղած սրբագրութիւնները ըրէք:

Սիրալիիր ողջոյններով՝
Ասատուր

[3.Գ.] Նոր յայտարարութիւններ չկան այս թիւով: Ապրիլի թիւի բոլոր յայտարարութիւնները պետք է մնան: Չմոռնաք B. Nylons-ի *ըլիշէն*:

Կարելոր. Նաւասարդեան Կոմիտէի հրաւերով, Սարգիս Չէյթեան դասախօսութիւն մը տուեր է հոս. վաղը կարճ գրութիւն մը պիտի բերեն. անոր ալ անկիւն մը պահեցէք:

ՆԱՄԱԿ 40

[Լոնտոն, 29 Յունիս 1974]

Սիրելի Պրն. Սիմոնեան,

Դուրսը մօտ 500 յաճախորդներ ապրանք կ'ուզեն, ասոր համար միայն երկտող մը կը գրեմ: Իրիկունը, երբ տուն երթամ, մանրամասն կը գրեմ:

Ներփակ նիւթերը յաջորդ երկու թիւերուն համար են: Յունիսի եւ Յունիսի թիւերը պիտի ուզէի որ իրարմէ մէկ շաբաթ տարբերութեամբ տպուին: Միացեալ ընելը յայտարարութիւններու տեսակետէն ձեռնտու չէ...:

Այս թիւին մէջ լոյս պետք է տեսնեն բոլոր յայտարարութիւնները: Յունիսի մէջ ալ MEA-ի յայտարարութիւնը պետք չէ լոյս տեսնէ:

Փոխադրութեան մասին իրիկուան նամակին մէջ կը գրեմ:

Սիրով՝
Ասատուր:

[3.Գ.] Եթէ հիմա չղրկեմ, post-ը կը փակուի:



ՆԱՄԱԿ 41

Լոնտոն, 29 Յունիս, 1974

Շատ սիրելի Պրն. Սիմոնեան,

Այս առտու աշխատավայրես արագ երկտող մը ղրկեցի կարգ մը նիւթերու հետ: Կարելորութեան կարգով հետեւեալ կետերը կ'ուզեմ ձեր ուշադրութեան յանձնել:

1- Չարեհ Ճերեճեանի հետ £200 ոսկի ղրկեցի: Դրամատան միջոցով դրամ ղրկելը կարգ մը դժուարութիւններու հետ կապուած է տակաւին:

Սի' մոռնաք, որ երկրին տնտեսական վիճակը (օտար դրամանիշերու արտահանումը սահմանափակ է) այնքան ալ փայլուն չէ: Ամէն պարագայի տակ՝ ձեւեր կան: Կը յուսամ շուտով դարձեալ ղրկել:

2- «Լոնտոն»ի փոխադրութեան հարցը **ամենէն մտահոգիչն է:** Ապրիլի թիւը եկաւ MEA-ով, որուն համար առին £22: Մայիսը եկաւ Alitalia-ով, որուն համար վճարեցի £38: Ճիշդն ասած, MEA-ը զիս խաղի բերաւ: Նախ խոստացան թերթը ձրի փոխադրել, յետոյ իրենց որոշումը յետս կոչեցին: Այնպէս որ՝ այսուհետեւ փոխադրութեան յարմարագոյն ձեւ մը պէտք է գտնենք: Այս հարցին մէջ վստահ եմ Կարոյ Բարսեղեանը կրնայ օգնել մեզի: Ամէն պարագայի տակ, այսուհետեւ թերթին բոլոր թիւերը օդանաւով ղրկելու պէտք չկայ: Կրնաք 200 օրինակ օդանաւով ղրկել՝ իսկ մնացեալը՝ ծովային ճամբով:

3- Առ այժմ 1000 օրինակը շատ կը թուի ըլլալ: Յաջորդ թիւերէն միայն 700 օրինակ հաճեցէք տպել: Մինչեւ հիմա թերթը վնասով կը հրատարակուի: Վճարովի միայն 50 հոգի ունիմ: Հիմա կ'ուզեմ անդրադառնալ ձեր նամակին:

1- Թերթին միջուկը ստացայ: Լաւ է:

2- Անգլիական երկու թերթերու *քիչ*ները եթէ պատրաստած էք՝ անպայման տպեցէք՝ այլապէս՝ **վազ անցէք:**

3- Տիրան Սրբազանի [Ներսոյեան] հարցազրոյցին այն մասը, որ կը վերաբերի **Եղիշէին**՝ [Տէրտերեան] չեմ ստացած: Համաձայն եմ ձեզի եւ բացարձակ ազատ կը ձգեմ ձեզ ջնջելու այն մասերը, որոնք վիրաւորական են եւ ոչ մէկ օգուտ կրնան բերել: Շատ աշխատեցայ որ չանդրադառնայ այդ խնդիրներուն: Եզրակացութիւն: Մկրատեցէք, ձեր կարծիքով աւելորդ մասերը:



4- Պետրոս Ալեքսի մասին ղրկած յօդուածիս հետ կան սկարներ. եթէ անհնար է բոլորը դնել՝ դրէք մէկ հատ մը գոնէ:

5- Զօրեղբօրս տղուն ձեզի յանձնած դրամը «Սփիւռք»ի *ֆոնտին* նուէր՝ իմ կողմէս: Ես թերթով արդէն շնորհակալութիւն յայտնած եմ իրեն:

6- **Տէր Աշոտի** [Տէր Յարութիւնեան] **տղուն յօդուածին փորձերը չեմ ստացած**: Զանցեք ղրկել կամ տեղւոյն վրայ լաւ անգլերէն գիտցողի մը սրբագրել տուէք (օրինակ Գ[եորգ] Աճեմեան):

7- MEA-ով ղրկել պայման չէ թերթը: Այս առնչութեամբ ըսեմ, որ MEA-ի յայտարարութիւնը **Յունիսի թիւով կը վերջանայ**:

8- *Անձնանուններու Բառարանին* շարքը ստացայ: Փոխարժեքը կը ղրկեմ: Նորեր մի՛ ղրկէք առայժմ: «Լոնտոն»ի մէջ կրնանք «Լոնտոն»ի անունով հակիրճ «գրախօսական մը» դնել՝ աւելցնելով տակը, որ ստանալու համար դիմեն ինծի: Դժբախտաբար մինչեւ հիմա ուզող չէ եղած:

9- Բոլոր յայտարարութիւնները նոյնութեամբ պետք է տպուին Յունիսին մէջ: **Յուլիսին** մէջ բոլորը պետք է տպուին՝ **բացի MEA-էն**:

- 10- ա) «Ամօթալի եւ դատապարտելի արարք մը»,
- բ) «Ապօրինի արարք մը»
- գ) Խորհուրդի ընտրութիւնը
- դ) Պետրոս Ալեքսի ոչ եւս է

Անպայման պետք է լոյս տեսնեն Յունիսի մէջ: Ի պահանջել հարկին՝ կրնաք Տիրան Սրբազանի հարցազրոյցի կարեւոր մէկ մասը ձգել Յուլիսի թիւին:

11- Գալով Ալեքսիի հիմնադրամին, համաձայն եմ ձեզի հետ: Զայ հարուստներուն խելք հասցնելը շատ դժուար բան է: Միթէ մեր ամբողջ պատմութեան ընթացքին հայ հարուստներուն քանի՞ տոկոսը իր դրամը ճիշդ օգտագործած է...:

12- **Կարեւոր**: Չարեհ Ճերեճեանին հետ լուր ղրկած էի որ Յունիս-Յուլիս միացեալ պիտի հրատարակեմ: Ինչպէս նշած եմ, այս՝ ելեւմտական անկիւնէն դիտած՝ վնասակար է: Միացեալին մէջ յայտարարութիւնները երկու անգամ չեն դրուիր: Արդեօք էջերուն քանակը 10ի բարձրացնելով միացեալ Յունիս-Յուլիս տպելը աւելի նպաստաւոր է: Որպէս տարիներու փորձառութեամբ հարուստ հրատարակիչ (սխալ չհասկնանք փոր-





ձառութեամբ միայն հարուստ...) դուք որոշեցեք, թե ո՞րն է նպաստաւոր:

13- Մինչեւ հիմա լոնտոնահայութիւնը փոխանակ դրական աշխատանքներու վրայ կեդրոնացնելու իր ուշադրութիւնը, **անայեւ** Եպիսկոպոսով մը եւ եօթ ու կէս Ռամկավարներու գաւաթ մը ջուրի մէջ ստեղծած փոթորիկով զբաղեցաւ: Հիմա որ ընտրութիւնները վաւերացուած են Վեհափառէն՝ [Վազգէն Ա. Պալճեան] կը յուսամ լոնտոնահայութիւնը **խորհուրդի** խողովակով կը զբաղի՝

ա) Հայ դպրոց հիմնելու հարցով,

բ) Հայ գրականութիւնը (արեւմտահայ) **վերակենդանացնելու** հարցով,

գ) Լոնտոնի մէջ մշակութային կեդրոն մը ստեղծելու հարցով,

դ) Անգլիացի գրողներն ու մտաւորականները մեր **փրոփականտին** լծելու հարցով,

ե) Հայկական տեղեկատու գրասենեակ մը հիմնելու հարցով,

զ) Տպարան ունենալու հարցով:

Կարելոր.- [Թորոս] Թորանեանին յօդուածը ձեր մասին՝ անպայման տպեցեք «Լոնտոն»ի Յուլիս եւ յաջորդ համարներուն մէջ՝ եթէ երկար է գրութիւնը. ան չի վշտանար, ընդհակառակը՝ կ'ուրախանայ:

* * *

Երբ ցաւը գայ, կու գայ միշտ երկուքով: Ալեքսիի մահուընէն 3 շաբաթ ետք՝ Տիկին [Ֆլորա] Ալեքսիին ինկաւ եւ զիստին ոսկորը կոտրեց: Հիւանդանոց փոխադրեցին եւ գործողութեան ենթարկեցին: Դեռ չորս շաբաթ եւս հիւանդանոց պիտի մնայ: Դուրս գալէն յետոյ ալ՝ քալելը կասկածելի է: Ահա քեզի բարդութիւն: Ընտանիքի միւս անդամները լաւ են: Կարինէն եւ Արմինէն քանի մը օր առաջ մասնակցեցան իրենց դպրոցական համերգին: Կարինէն մենակատարեց ջութակի, դաշնամուրի եւ սրինգի *տոլոներ*, իսկ Արմինէն՝ դաշնամուրի եւ թաւջութակի: Հայրը Սովուզ Օլուզի լեռներուն մէջ ծնած՝ աղջիկները Լոնտոնի մէջ երաժշտական գործիք կը նուագեն... ահա քեզի հայոց պատմութիւն:

Կը յուսամ ձեր ճակատին վրայ ամէն ինչ լաւ կ'ընթանայ: Սի-





րալիր ողջոյններ բոլորին:

Ներփակ կը դրկեմ կարգ մը նիւթեր եւս:

Աշխատեցէք լուրի բնոյթ ունեցող գրութիւններուն տալ նախապատուութիւն:

Համբոյրներով՝
Ասատուր

Յ.Գ. Վրեժ Ներսեսեանի²⁴⁰ գրախօսականը [Ճոն] Զարսուելի²⁴¹ գրքի մասին վաղը կը դրկեմ:

Նոյն

ՆԱՄԱԿ 42

[Լոնտոն], 3 Օգոստոս, 1974

Սիրելի Պրն. Սիմոնեան,

Չարեհ Ճերեճեանի միջոցով կը դրկեմ կարգ մը նիւթեր:

1- Դրամական հարց.- ա) Չարեհը exchange control-ի պատճառով չկրցաւ դրամ տանիլ Պէյրուս բ) Brentford Nylons-ը յանձն առաւ յայտարարութիւններուն փոխարժէքը մինչեւ Դեկտեմբեր 74՝ այժմէն վճարել: Անմիջապէս որ ստանամ՝ կը դրկեմ ձեզի **մեծկակ** գումար մը գ) Մինչեւ հիմա պարտքս որքա՞ն է:

2- Թերթը մինչեւ հիմա լոյս կը տեսնէ վնասով: Ստիպուած ծաւալը 4 էջի պէտք է իջեցնենք: Ուրեմն **Յուլիս**էն սկսեալ «Լոնտոն»ը տպել 4 էջով:

3- **Յայտարարութիւններ** ա) Ա՛լ MEA-ի յայտարարութիւնը չդնել: բ) Պահել Յուլիսի թիւին համար բոլոր միւս յայտարարութիւնները: գ) Դնել յաւելեալ 3 յայտարարութիւնները, անոնց տրամադրելով կարելի եղածին չափ **նեղ միջոց**: *Ֆիլմի* յայտարարութիւնը, Ա[րթոյ] Տեր Յարութիւնեան իր անգլերէն գրութեան փորձին հետ՝ դրկած է ձեզի արդէն:

4- Շարլ Ազնաւուր Սեպտեմբերին երգահանդեսներ պիտի տայ Լոնտոնի մէջ. լաւ կ'ըլլայ որ դրկուած նկարը Օգոստ[ոս]ի կամ Սեպտ[եմբեր]ի թիւին մէջ տպուի:

5- Վաղը թղթատարով կը դրկեմ քանի մը գրութիւն եւս: Ներկայ եւ առաքուելիք նիւթերը պէտք է բաւական ըլլան Յուլիս,





Օգոստոս եւ Սեպտեմբեր թիւերուն համար:

6- Լաւ կ'ըլլայ, եթէ մինչեւ Սեպտ[եմբեր] 15ը՝ Յուլիս, Օգոստ[ոս] եւ Սեպտ[եմբեր] թիւերը Լոնտոն հասնին: Եթէ մինչեւ Օգոստոս 20ը Յուլիսը հասնի, Սեպտեմբերի սկիզբը Օգոստոսը՝ իսկ Սեպտեմբեր 15ին՝ Սեպտեմբերի թիւը՝ այնուհետեւ թերթը կը կարենանք լոյս ընծայել իւրաքանչիւր ամսուան 15ին:

Դժբախտաբար հանգուցեալ Պետրոս Ալեքսի մահուան հետեւանքով՝ թերթին կանոնաւորութիւնը խանգարուեցաւ:

7- Եթէ սիւթի պակաս ունենաք՝ [Յովհաննէս] Շիրազէն քանի մը հայրենասիրական բանաստեղծութիւն կրնաք դնել:

8- Շուտով կը դրկեմ շարք մը խիստ կարեւոր վաւերագրեր, որոնք լոյս տեսած են *International Protection of Human Rights* ծաւալուն հատորին մէջ: Գիրքը գրախօսած է Վրեժ Ներսէսեան:

9- Նիւթերուն մէկ մասը չկրցայ մեքենագրել. գրամեքենասաւրուած է:

10- Օգոստ[ոս] 13ին, երկու շաբաթով Իտալիա կը մեկնինք արձակուրդով: Վիվիէնը հանգիստի պէտք ունի: Վրեժ Ներսէսեանը պիտի բնակի մեր տունը: Խնդրած եմ իրմէ, որ թերթը երբ հասնի, բարի գտնուի դրկել զայն բաժանորդներուն: Այնպէս որ, դուք որքան կրնաք շուտ դրկեցէք Յուլիսի թիւը:

Ջերմ ողջոյններ եւ համբոյրներ մեր բոլորէն ձեր բոլորին:
Սիրով՝
Ասատուր

Յ.Գ. Մինչեւ հիմա միայն մէկ հոգի հետաքրքրուած է բառարանով:

Կ'աճապարեմ, որովհետեւ կ'ուզեմ ծրարը հասցնել Չարեհին:
Նոյն

ՆԱՄԱԿ 43

Լոնտոն, 25 Սեպտեմբեր 19]74

Շատ սիրելի Պրն. Սիմոնեան,

Փորձեցի քանի մը անգամ հեռախօսել: Լոնտոն Պէյրուք գիծը միշտ զբաղած է: Չաւենին [Մալրուեան]²⁴² հետ ուզեցի դրամ





դրկել՝ չտարաւ: Թերեւս ալ իրաւունք ունէր. վերջերս սկսած են խուզարկել ճամբորդները. օրէնքով £30 աւելի դուրս հանելու իրաւունք չունի ճամբորդ մը (խօսքը կը վերաբերի թղթադրամին):

Ներփակ կը դրկեմ £100 չէք մը (անձնական): Ըսուեցաւ ինծի, որ Պէյրոսի լումայափոխները կը գնեն նաեւ անձնական չէք: Եթէ այս ձեւը յաջողի՝ դրամական փոխանցումի հարցը գոնէ լուծած կ'ըլլանք:

Եթէ կարելի է անձնական չէքը արել՝ անմիջապէս գրեցէք ինծի, որ պարտքս լրիւ վճարեմ:

Լոնտոն գալու ծրագիրը ի՞նչ եղաւ: Անգլիացին ասացուածք մը ունի՝ «It is too good to be true!»:

Սեպտեմբերի թիւին մէջ «Այցելեցէք Հայաստան» յայտարարութիւնը պէտք չէր ալ լոյս տեսներ...

Յայտարարութիւնները այսուհետեւ հաճեցէք տպել կարելի եղածին չափ փոքր: Բացի Brentford Nylons-էն՝ կարելի է կիսել միւս յայտարարութիւններուն ծաւալը:

Ներփակ կը դրկեմ ծաւալներուն նմոյշը:

Հոկտեմբերի թիւին մէջ լոյս տեսնելիք յայտարարութիւններ.

ա) Brentford Nylons

բ) Arm[enian] Restaurant

գ) Armand Shop

դ) Acton Park Hotel

ե) Վշտակցութիւն «Տէր եւ Տիկին....»

Հոկտեմբերի նիւթերը կը դրկեմ ներփակ.

ա) Խմբագրական «Թուրքերն անցած են ասկէ»

բ) «Ա՛լ ուրիշ տեղ չմնա՞ց»

գ) «Զ[աւէն] Սսըրլեանի արժէքաւոր հարցազրոյցը»

դ) «Կոչ հայ ժողովուրդին»

ե) «Նամակ Վ[արդգէս] Համագասպեանէն»²⁴³

զ) «Ոչ եւս է դերասան Ասատուր Օհանեան»

է) «Ապրիլ 24ի Միացեալ յանձնախումբը»

* Granada Hotel-ը Tohel տպուած է. բարի եղէք սրբագրել:

Անձնանունների Բառարանէն մինչեւ հիմա մէկ օրինակ ծախած եմ: «Լոնտոն»ի մէջ հաճեցէք քանի մը տող դնել բառարանի մասին: Չմոռնաք գրելու որ ստանալու համար դիմեն





«Լոնտոն»ին: Այս ժողովուրդը (մեր ժողովուրդի սփիւռքի թելը), գիրքին դրամ տալ չսորվեցաւ: Երբեմն մարդ կը խանդավառուի հայութեամբ՝ երբեմն ալ «*սեղէտ* քեզի պէս ազգին», ըսել կ'ուզէ:

*Չէք*ին ստացումը իսկոյն յայտնել:

Առտուան ժամը երեքն է արդէն եւ աչքերս կը փակուին: Կ'ուզեմ նամակը առտու *փոստ* նետել: Համբոյրներ Վիվիէնէն, Կարինէն, Արմինէն եւ ինձմէ ձեր բոլորին: Ձեզ կը սպասենք Լոնտոն: Ասատուր

ՆԱՄԱԿ 44

[Լոնտոն], 20-11-[19]74

Սիրելի Պրն. Սիմոնեան,

Ներփակ կը գտնէք Նոյեմբերի թիւին նիւթերը:

Ձեզի £100 *չէք* մը դրկած էի, խնդրելով որ յայտնէք ինձի իսկոյն՝ անձնական *չէք*ով դրամ փոխանցելու կարելիութեան մասին: Եթէ այդ ձեւը ընդունելի չէ՝ ուրիշ ձեւ մը պետք է գտնել: Ամսոյս 28ին, Թեհրանէն Համագասպ Մարթինը պիտի գայ Լոնտոն գործողութեան մը ենթարկուելու համար: Իրմէ պիտի խնդրեմ որ հաշիւները մաքրելու համար իր **արտաքին** հաշիւէն դրամ փոխանցէ ձեզի, Պէրյուր: Այս ձեւով գոնէ առկախ մնացած պարտքս լրիւ կը վճարեմ: Բարի գտնուեցէք հաշուեցոյց մը դրկել: Մինչեւ հիմա (եթէ չեմ սխալիր) £350 վճարած եմ ձեզի:

Ձեր Լոնտոն գալու ծրագիրն ի՞նչ եղաւ: Կը յուսամ առողջութեամբ լաւ էք հիմա: Խորհրդապահաբար ըսեմ որ, Պրն. Խ[աչիկ] Մթրըպեանը մօտ 3 ամիսէ ի վեր հիւանդ է: Ծշուկներէ կ'իմանամ որ կաթուած իջեցուցած է: Այս մասին որեւէ մէկուն բան չըսել: Մեր բախտին նայիր դուն, երբ տարիներով ծրագրուած գործ մը յաջողցնելու վրայ էինք՝ մարդը հիւանդացաւ: Պարսիկը կ'ըսէ որ, երբ մարդու մը բախտը սկսի ծուռ երթալ, այն աստիճան ծուռ կ'երթայ, որ մեղրալուսնի գիշերը հարսը կոկով կ'ունենայ... (*Արուս շավէ ավալին ներ քերտ*):

Այս թիւը քիչ մը ուշացաւ, բայց ոչի՛նչ (ինչպէս հայաստանցին պիտի ըսեր):





Եթե անգլերեն փաստաթուղթերը չեն շարուած՝ պիտի նախընտրէի վերապահել զանոնք 60ամեակի բացառիկին:

Քանի մը օրէն կը դրկեմ նաեւ Դեկտ[եմբեր]ի նիւթերը, որոնք պատրաստ են արդէն: Կրնայի Նոյեմբեր-Դեկտ[եմբեր] միացեալ թիւ մը ընել, բայց նկատի ունեցայ որ այդ ձեւով յայտարարութիւններէն գալիք եկամուտը պիտի կորսնցնեմ: Եթէ յարմար կը տեսնեք, Նոյեմբերի եւ Դեկտ[եմբեր]ի թիւերը **առանձին** տպեցէք, բայց միասին դրկեցէք. որոշումը կը ձգեմ ձեզի: Ժամանակ ինչայելու տեսակետէն՝ թերեւս լաւագոյն ձեւը պիտի ըլլար:

Տիկին [Անահիտ] Կորկոտեանի բաց նամակին պատասխանը անպայման **Դեկտ[եմբեր]ի** թիւին մէջ **պետք** է լոյս տեսնէ: Այնպէս որ՝ ան ալ կը դրկեմ քանի մը օրէն:

Յայտարարութիւնները կը մնան նոյնութեամբ:

*Անձնանունների Բառարան*էն մէկ օրինակ միայն ծախուած է ցարդ: Ծիգ կ'ընեմ քանի մը օրինակ ալ ծախելու:

Կը յուսամ Սիմոնեան բանակի բոլոր զինուորներն ալ հանգիստ են: Բոլորին համբոյրներ Վիվիէնէն, Կարինէն եւ Արմինէն:

Համբոյրներով՝

Ասատուր

ՆԱՄԱԿ 45

[Լոնտոն], 3.2.[19]75

Սիրելի Պրն. Սիմոնեան,

Լոնտոնի օդանաւակայանէն դրկուած նամակը ստացայ: Ուրախ եմ որ «Սփիւռք»ը յանձնած էք Գեորգին [Աճեմեան]. ուրախ եմ անոր համար, որ հիմա կրնաք ձեր ժամանակը տրամադրել գրական աշխատանքի:

Կարելորութեան կարգով.

1- Արմէն Յարութիւնեանի միջոցով £500 դրկեցի ձեզի: Ցարդ ստացած պետք է ըլլաք:

2- Դարձեալ Յարութիւնեանի միջոցով՝ դրկեցի Անահիտի [Կորկոտեան] բաց նամակին «Բաց Պատասխան»ը եւ «Ապօրինի Կարգադրութիւն Մը» յօդուածը, որ պետք է լոյս տեսնէ նոյն թիւին մէջ (երկրորդ անգամ ըլլալով):





3- Այսու կը դրկեմ՝

ա) Մահ եւ յուղարկաւորութիւն Մայր Թագուհի Մանուկեանի:²⁴⁴

բ) Գահակալութիւն Զենթապըրոյի սոր արքեպիսկոպոսի [Տոնըլտ Զոկըն]:²⁴⁵

գ) Ա. Յարութիւնեան Լոնտոնի մէջ:

դ) Լոնտոնահայ կեանք:

ե) Ցաւակցութիւն:

Առանձին թղթատարով կը դրկեմ Փրոֆ. [Տէյվիտ Մարշըլ] Լանկի հետ ունեցած հարցազրոյցս, որ անգլերէնով պէտք է լոյս տեսնէ: Հարցազրոյցը ելեկտրական գրամեքենայով պատրաստեցի, որպէսզի՝ ի պահանջեալ հարկին, լուսապատճենով տպէք:

«Լոնտոն»ի համար թղթածրար մը անպայման ունիք. այսուհետեւ տեւապէս գրութիւններ պիտի դրկեմ՝ «Թղթածրարը» միշտ լեցուն պահելու համար:

Մանուկեանին յանձնեցի *Անձնանունների Բառարան*էն շարք մը:

Կարելոր. Յունուարի սկիզբը շաբաթով մը որսի գացած էի: Ժայռի մը վրայ ինկայ եւ ձախ ձեռքս վիրաւորեցի: Այդ է պատճառը որ գրամեքենաս դեռ չեմ կրնար գործածել, որով նիւթերը ձեռագիր կը դրկեմ:

Թերթը դրկելու յարմարագոյն միջոցը գտանք վերջապէս: Ժամանակին կը հասնի... անվնաս:

Քանի մը օրէն սոր նիւթեր եւս կը դրկեմ, որով Փետրուարն ալ շուտով կը հասցնէք: Ամբողջ ծրար մը նիւթերու կորուստը պատճառ դարձաւ, որ թերթին հերթականութիւնը խանգարուի:

Սիրալիր ողջոյններ եւ համբոյրներ բոլոր Սիմոնեաններուն: Ջերմ ողջոյններ Գեորգին [Աճեմեան] եւ [Երուանդ] Պարսումեանին: Թերթին մէջ Պարսումեանէն բանաստեղծութիւն մըն ալ դրէք, իր հաւանութիւնը ամենլէ ետք:

Սիրով եւ համբոյրներով՝
Ասատուր





ՆԱՄԱԿ 46

[Լոնտոն], 8.2.[19]75

Սիրելի Պրն. Սիմոնեան,

Ներփակ կը գտնեք Փրոֆ. [Տէյվիտ Մարշըլ] Լանկի հետ հարցազրոյցը, որ անպայման անգլերէն պետք է լոյս տեսնէ: Մասնաւոր ելեկտրական գրամբենայով մեքենագրել տուի, որպէսզի ուղղակի լուսապատճենով տալէք:

Յունուարը կարելի եղածին չափ շուտ հասցուցէք: Փետրուարի համար շուտով յաւելեալ նիւթեր կը դրկեմ, որպէսզի Մարտի սկիզբը Փետ[րուար]ի թիւն ալ Լոնտոն հասած ըլլայ: Մտադիր եմ Մարտ-Ապրիլ միացեալ թիւ մը հանել: Այս մասին վերջնական որոշում չեմ տուած: Կը գրեմ:

Կ'ուզեմ պահարանը *փոստին* յանձնել: Զիչ ետք կը գոցուի:
Համբոյրներով՝
Ասատուր

ՆԱՄԱԿ 47

[Լոնտոն], 5.4.[19]75

Սիրելի Պրն. Սիմոնեան,

Շնորհակալութեամբ ստացայ Մարտի թիւը: Ապրիլի թիւը պիտի տպուի հոս, Լոնտոն, «Արարատ» տպարանին մէջ: Նիւթերուն մեծ մասը անգլերէն է:

«Արարատ»ի տպարանատերը Գեորգ Պլզեանն է, որ Հալէպի մէջ ձեզի աշակերտած է: Շրջան մը կարծեմ Սուտան կ'ապրեր: Ձեր *լինթօփի*ի հետ կապուած խնդրի մասին խօսեցայ իրեն: Սիրով պատրաստ է օգտակար ըլլալու: Խնդրեց որ ուղղակի գրէք իրեն՝ յայտնելով անհրաժեշտ մանրամասնութիւնները, հետեւեալ հասցեով.

K[evork] Belikian
c/o «ARARAD»
384, STATION ROAD,
HARROW MIDDX.
U.K.





Խաչիկը [Մթորպեան] կը շարունակէ մնալ տունը: Խօսքը մեր մէջ մնայ, ընկերութեան ելեմտական վիճակը պայծառ պատկեր մը չի ներկայացներ ներկայիս: Համաձայն անգլիական թերթի մը՝ Brentford Nylons-ը Պետական Դրամատունէն պատկառելի փոխառութեան մը համար դիմում ներկայացուցած է: Վերջին մէկ ամսուան ընթացքին աշխատանքէ ազատ կացուցուցան ավելի քան հինգ հարիւր գործաւորներ: Հաւաստի աղբիւրներէ կ'իմանամ, որ ընկերութիւնը իր խոշորագոյն գործարաններէն մէկը փակելու վրայ է: Որոշուած է այսուհետեւ դադրեցնել կանանց վերաբերեալ արտադրութիւնները:

Ինչպէս կը տեսնէք, կացութիւնը շատ մութ կը թուի ըլլալ: Ընկերութեան բարգաւաճումը վերջին 14 տարիներու ընթացքին պայմանաւորուած էր Մթորպեանի հանճարեղ առեւտրականութեան հետ. հիմա որ մարդը գործին գլուխը չէ եւ չունի զինք փոխարինող միտք մը՝ սկսած է «կայսրութիւնը» խախտիլ:

Այս ալ մեր բախտը...


Գոհ կը մնամ, եթէ «Լոնտոն»ի վերաբերեալ ամբողջական հաշուեցոյց մը դրկէք՝ ներառնելով փոխադրական ծախսը սկիզբէն մինչեւ Մարտի թիւը: Այդ հաշուեցոյցը պետք է ինծի՝ Income Tax-ի համար:

Հիմա որ «Սփիւռք»ը Գեորգին [Աճեմեան] յանձնած էք, դժուար պետք չէ ըլլայ ձեզի այցելել Լոնտոն: Պլզեանը երբ ապահովէ ձեր ուզածները, կրնաք գալ եւ անձնապէս ստանձնել ապրանքները:

Ձերմ ողջոյններ բոլորին՝

Սիրով՝
Ասատուր





Միակ զուակը զէյթունցի Տէր Յակոբ Քին. Մավեանի՝ Վահրամ ծնած է Երուսաղէմ, 1926ին: Իր որդւոյն ծնունդէն քանի մը ամիս ետք, Տ. Յակոբ Քին. կը նշանակուի Հայֆայի հայոց հոգեւոր հովիւ: Վահրամ իր կեանքի առաջին եօթ տարիները կ'անցընէ Հայֆայի մէջ, ուր կը յաճախէ Ազգային Վարժարանի մանկապարտէզը:

1939ին, երբ կը վախճանի Տէր Յակոբ Քահանայ, այրի երիցուիի Եղիսաբէթ Մավեան կը տեղափոխուի Երուսաղէմ, ուր Վահրամ նախնական ուսումը կը ստանայ Թարգմանչաց Վարժարանին մէջ, իսկ երկրորդականը՝ անգլիական Պիշոպ Կոպաթ Քոլեճէն (Bishop Gobat College) ներս, 1940-1944ին: Նիւթական միջոցներու չզոյութեան պատճառով, դեռ 18 տարեկան՝ Վահրամ կը ստիպուի կիսատ թողուլ ուսումն ու աշխատիլ անգլիական հաստատութեան մը մէջ, ապահովելու համար իր եւ մօր ապրուստը:

1948ին Մավեան կը հաստատուի Կիպրոս, ուր ուսուցչութեան պաշտօն կը վարէ Նիկոսիոյ Մելիքեան Ազգային Վարժարանին մէջ: 1950ին կը հրաւիրուի Մելգոնեան Կրթական Հաստատութիւն, ուր կը պաշտօնավարէ մինչեւ 1958, երկու տարուան ընդմիջումով:

1954ին կը յայտնուին թոքախտի նշանները, որուն հետեւանքով, նոյն տարին Վահրամ կը մեկնի Լիբանան եւ 11 ամիս Ազունիէի Ազգային Հիւանդանոցին մէջ բուժուելէ ետք՝ կը վերադառնայ Կիպրոս, շարունակելու համար իր նախկին պաշտօնը Մելգոնեան Կրթական Հաստատութենէն ներս:

Վ.Մ. 1958ին կը մեկնի Հիւսիսային Իրլանտա եւ Պելֆասթի Քուինզ Համալսարանին մէջ կը հետեւի իմաստասիրութեան, հոգեբանութեան եւ անգլիական գրականութեան դասընթացքներուն: 1961ին համալսարանէն պսակատր արուեստից տիտղոսը ստանալէ ետք, կը վերադառնայ Կիպրոս եւ կը շարունակէ դասաւանդել Մելգոնեանի մէջ:

1963ին Վ.Մ. կը նշանակուի Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան Հայկական Բաժնի պաշտօնատար եւ կը հաստատուի Լիզ-





պոն, ուր կ'ապրի քսան տարի, մինչեւ կեանքին վերջը:

Իր պաշտօնին բերումով կատարած հերթական շրջագայութիւններու ընթացքին, Վ.Մ. կը ծանօթանայ Սուրիոյ, Լիբանանի, Եգիպտոսի, Իրաքի, Պարսկաստանի եւ Թուրքիոյ հայկական հաստատութիւններու գործունէութեանց եւ անոնց մասին կը պատրաստէ տեղեկագիրներ, զորս կը ներկայացնէ Հիմնարկութեան Հայկական Բաժնի տնօրէնութեան:

Վ.Մ. որ Արեւմտեան Եւրոպայի եւ Միջին Արեւելքի հայկական կեանքին քաջատեղեակ էր, քանի մը անգամ կ'այցելէ նաեւ Հայաստան եւ կը ծանօթանայ հայրենի իրականութեան: Կը ճամբորդէ նաեւ Միացեալ Նահանգներ: Իր շրջագայութեանց ընթացքին, ան ամէնուր կը փնտռէ «հայու բեկորներ», որոնք հետագային կը դառնան իր պատմութեան հերոսները:


Վ.Մ. գրական ասպարէզ կը մտնէ 50ական թուականներուն, երբ առաջին անգամ իր բանաստեղծութիւնները լոյս կը տեսնեն սփիւքահայ պարբերական մամուլի մէջ: 1956ին Երուսաղէմի մէջ կը հրատարակուի անոր բանաստեղծութիւններու հաւաքածոն՝ *Յամեցող Վերադարձ* խորագրով: 1965ին կը հրատարակուի, դարձեալ Երուսաղէմի մէջ, *Հայու Բեկորներ* պատմութեան գիրքը, որ իր հայաստանեան հրատարակութիւնը կ'ունենայ 1967ին, Թորոս Թորանեանի խմբագրութեամբ: 1968ին լոյս կը տեսնէ Մավեանի երկրորդ արձակ գործը՝ *Անկապ Օրագիրը*, իսկ 1977ին՝ *Ամէն Տեղ Հայ Կայ* պատմութեան երրորդ եւ վերջին հատորը: Նոյն տարին Հայաստանի մէջ լոյս կը տեսնէ *Միացող Հոգիներ* խորագրով Մավեանի հայրենի երկրորդ գիրքը, ուր ամփոփուած են գրողի լաւագոյն պատմութեան գիրքերը: Մավեան ունի նաեւ կիսատ մնացած *Հայկական Պաղեստինը* գրական ստեղծագործութիւնը, որ հաւանաբար պիտի ըլլար գրողին առաջին վէպը:

1 Նոյեմբեր 1976ին Վահրամ Փարիզի մէջ կ'ամուսնանայ Իվօն Գասարճեանի հետ, որուն սէրն ու գորգուրանքը կը վայելէ ցմահ:

Վահրամ սրտի առաջին տագնապը կ'ունենայ 1982 Յունիսին, իսկ երկրորդ եւ մահացուն՝ 11 Յունուար 1983ին, առաւօտեան ժամը 5ին, Լիզպոնի մէջ:

Մարմինը կը փոխադրուի Պէյրութ եւ համաժողովրդական յուղարկարութեամբ կ'ամփոփուի Պուրճ Հանուտի Ազգային Գերեզմանատան մէջ, մօրը կողքին:







پارک هتل
park hotel



۲۴ شهریور ۱۳۷۲

بزرگواران،
پارک هتل در تمام سالها پذیرای شماست. ما در تهران، تبریز، مشهد، اصفهان و سایر شهرها هتلها، آپارتمانها و مراکز خدماتی داریم. ما در تمام این مراکز خدماتی با شما هستیم. ما در تمام این مراکز خدماتی با شما هستیم. ما در تمام این مراکز خدماتی با شما هستیم.

برای اطلاعات بیشتر (در صورت نیاز) با ما تماس بگیرید. ما در تمام این مراکز خدماتی با شما هستیم. ما در تمام این مراکز خدماتی با شما هستیم. ما در تمام این مراکز خدماتی با شما هستیم.

معاونت هتل
پارک

تهران، ایران، تلفن ۳-۴۹۱۰۱-۵-۴۴۱۲۱-۵، تلگراف: پارک هتل - تهران، تلکس ۲۵۴۹-۲۴۴۶
Tehran, Iran; Telephones: 44121-5; 49101-4; Cables: Parkotel, Tehran; Telex. 2466-2549
ما در تمام این مراکز خدماتی با شما هستیم. ما در تمام این مراکز خدماتی با شما هستیم. ما در تمام این مراکز خدماتی با شما هستیم.

Նոյն և՛ր Վահրամ Մա՛վեանի ծեռագիրէն





ՎԱՀՐԱՄ ՄԱՎԵԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ ԱՍԱՏՈՒՐ ԿԻԲԶԵԼԵԱՆԻՆ

ՆԱՄԱԿ 1

(Բացիկ)

20 Սեպտ[եմբեր] [19]60, Պելֆասթ

Գիշերուան մը խաղաղ ճամբորդութենէն վերջ, նաւը մեզ նե-
տեց ծովափ՝ ճիշդ... Յովնան Մարգարէն կլլող կետ ձուկին
պէս: Բնակարանի հարցը վերջապէս կարգադրեցի երէկ: Աշ-
խատանքի սկսայ արդէն՝ արձակուրդի երեք ամիսներուն բե-
րած քաղցր շեղումէն վերջ: Կը յուսամ թէ հանգիստ էք բոլորդ:
Սիրալիր յարգանքներ Տէր եւ Տիկ. Ալեքսիներուն եւ Վիվիէնին:

Սիրով՝

Վ. Յ. Մավեան

Հասցէս՝
V. MAVIAN
21 Wellesley Ave.
Belfast 9, Northern Ireland

ՆԱՄԱԿ 2

21 Wellesley Ave.
Belfast 9
Յունիս 27, 1961

Սիրելի Ասատուր,

15 Մայիսի նամակդ հասաւ ճիշդ աւարտական քննութիւն-
ներուն նախօրեակին՝ երբ կը պատրաստուէի երեք տարուան
աշխատանքիս արդիւնքը դնել նժարին մէջ: Պետք էր անցնիլ
գետը առանց խեղդուելու: Կեանքին մէջ՝ ամէն բան ժամանա-
կին պետք է ընել եղեր: Ուշ մնացած յիմար կոյսերուն կը նմա-





նիմ, այն տարբերությամբ միայն որ ես որոշած եմ չհեռանալ դրան առջեւէն մինչեւ որ բանան գայն: Ուրախ եմ որ մի քանի օր առաջ հրապարակուած արդիւնքներուն համաձայն քննութիւններս բոլոր անցուցած եմ յաջողութեամբ:

Բարեգործականի Ամերիկայի Կեդրոնին փափաքն է որ վերադառնամ Մելգոնեան [Կրթական Զաստատութիւն]: Շատ հաւանական է որ ընեմ այդպէս, երբ սրտիս ալ ամենէն շատ խօսողն այդ է: Յուլիսի 9ին, վկայականներու բաշխման հանդիսութենէն ետք կ'ելլեմ ճամբայ, ուրեմն դեպի Արեւելք:

Արտաքին աշխարհին հետ կապս գրեթէ կտրուած էր անցնող մի քանի ամիսներուն: Զասնող թերթերն անգամ թղթատելու ժամանակ չունեցայ յաճախ: Պետք է թէեւ այստեղ ցած ձայնով աւելցնել նաեւ, թէ մեր թերթերուն շրջան մը հետեւելէ ետք, ամենէն հետաքրքրական - առնուազն միշտ թարմ - մնացող գրութիւնները մահազդներն ու ամուսնութեան յայտարարութիւններն են:

Մեր Անգլիա ուսանող վարդապետներէն Զայր Չաւէնն [Արգումանեան]²⁴⁶ ու Զայր Վազգէնը [Թէշիշեան]²⁴⁷ տեսայ կարճ պահ մը Չատիկին: Մետրոպը [Վարդապետ Գրիգորեան] ժամանակը կ'անցընէ - ես պիտի ըսէի տարեշրջանը կը բոլորէ - Վիեննա երթալ-գալով: Կեցցէ հայ ժողովուրդը: «Չարթօնք»ին²⁴⁸ մէջ հանդիպեցար անշուշտ Զայր Գեորգին [Կարպիսեան] յօդուածին: Յայտնի է որ մարդը ներկայէն վեր՝ գալիքն է որ կ'ապրի եւ իր ժամանակակից սերունդէն անդին կը տեսնէ շարքը գալիք սերունդներուն, երբ կը գրէ միայն «պատմութեան համար»:

Յէ՛յ կիտի հայ ժողովուրդ:

Լոնտոնի ազգային կեանքը խաղաղ է սոր տարուան Youth Society-ին²⁴⁹ կազմակերպած party-էն ի վեր, որուն ընթացքին տղաքը փառաւոր կերպով ծեծած էին [Յովհաննէս] Չալըգեանը, քիթն ու բերանը արիւնով ծածկելով: Թէեւ այս մարդիկը ծեծե՛ն ալ, ծեծ ուտեն ալ՝ հերոսը միշտ իրենք կ'ըլլան:

Այսքան սիրելի Ասատուր: Բարի եղիր ջերմագին բարեւներս փոխանցել Պրն. Պետրոսին [Ալեքսեան], Տիկ. [Ֆլորա] Ալեքսեանին եւ Վիվիէին՝ որուն՝ 16րդ դարու երգերուն դաշնակի ընկերակցութեան քաղցր յիշատակը տակաւին թարմ է մտքիս մէջ:

Իսկ դո՛ւն, յաջորդ կիսամեայ քննութիւններուն սպասելու





պէտք չունիս գրելու համար: Մելգոնեանի հասցէն՝
Melkonian Educ[atational] Institute
P.O.Box 407
Nicosia
Cyprus

Սիրով՝
Վահրամ Մ.

ՆԱՄԱԿ 3

25 Մարտ, 1962
Նիկոսիա

Սիրելի Ասատուր,

Չեմ փնտռեր «յարգելի պատճառներ» նամակիս ուշացումը արդարացնելու համար: Հայկական, գիշերօթիկ, երկրորդական, երկսեռ վարժարանի մը աշխատանքներն են որ կը գողնան ցերեկուան հետ գիշերուան ալ ժամերուս մեծ մասը, այնքան՝ որ մօրս հետ ինդիր կ'ունենամ յաճախ՝ տունը իբրեւ «պանդոկ» գործածած ըլլալուս համար: Դժուար չըլլար հետեւցնել ուրեմն տխուր ճակատագիրը հեռաւոր սիրելիներէ հասած նամակներուն՝ որոնք սեղանին վրայ ամէն օր կը սպասեն «վաղուան»: Ու երանելի շա՛րքը այդ «վաղը»ներուն:

Ինչ որ կը ստիպէ սակայն որ միւս բոլոր աշխատանքները ձգեմ մէկ կողմ եւ այս մի քանի տողերը դնեմ թուղթին՝ կարճ յայտարարութիւն մըն է - կարծեմ «Սփիւռք»ին մէջ - գահաժառանգին գալուստը աւետող: Իմ կողմէ աչքը լուսէ նաեւ Նարինէին: Թող Աստուած «հօրով մարով մեծօցնէ», ինչպէս կ'ըսէ մեր ժողովուրդը:

Նամակներէդ կ'առնեմ այն տպաւորութիւնը թէ Հայրենիքէն միշտ ալ մէկը ունիք Հնդկաստան այցելող: Թերթերէն իմացած ըլլալու ես, որ Մերձաւոր Արեւելք ալ հանդիպողներ եղան այս տարի: Կայ նաեւ ծրագիրը ներգաղթի մը՝ Կիպրոսէն ալ, յառաջիկայ ամառ: Մեծ թիւով ընտանիքներ արձանագրուած են արդէն ու կը սպասեն: Քաղաքական վերջին դէպքերուն առիթով արդէն հազարի շուրջ հայեր գաղթեցին դէպի Անգլիա. դէպի Հայրենիք գաղթ մը աւելի պիտի նիհարցնէ «շարքերը»: Բայց «ինչ արած», գացո՛ղը կը փրկուի գոնէ:





Անգլիայէն լուր չունիմ երկար ատենէ ի վեր: Ձայն չկայ նաեւ «Փափագէն»:²⁵⁰ Կը լսեմ թէ [Յովհաննէս] Չալըզեանն ու իր մարդիկը յաջողած են ձեռք առնել «*Եութ Սոսայէթի*»-ն: Եւ նորին Սրբազնութիւնը [Թումայեան Պսակ Եպիսկոպոս] վրաս կը խնդար երբ կը նախատեսէի ասիկա առջի տարի՝ որպէս արդիւնք իր սառն անտարբերութեան: Կարելի չեղաւ համոզել զինք՝ թէ *ուխտի*ն ամէն հարց չի կրնար լուծել: Ի վերջոյ, ի՛նչ կարելի է ակնկալել մէկէ մը՝ որ 20րդ դարու մէջ... 16րդ դարը կ'ապրի տակաւին:

Այսքան այս առիթով սիրելի Ասատուր: Բարի եղիր սիրալիր յարգանքներս փոխանցել պատուական աներպապայիդ ու մամային, ինչպէս նաեւ Նարինէին:

Գրէ եթէ գտնես ազատ ժամեր, գոհ կը մնամ:

Սիրով՝
Վ. Յ. Մավեան

ՆԱՄԱԿ 4

Լիզպոն, 29 Նոյեմբեր, 1964

Սիրելի Ասատուր,

Կը գրեմ առանց վստահ ըլլալու թէ Փարիզ ես տակաւին: Թեւեւ շատ ալ անհաւանական չէրեւիր որ առտու կանուխ հեռաձայնը պզգայ յանկարծ եւ միւս կողմէն Պրն. [Սեդրակ] Գարակեօզեանը²⁵¹ իր քաղցր ձայնով հաղորդէ քեզի թէ նամակ մը ունիս Լիզպոնէն: Կա՞ն նորութիւններ *վիզայի*դ առնչութեամբ: Եթէ յայտնի ըլլայ որոշապէս թէ շրջան մը տակաւին ստիպուած պիտի ըլլաս սպասել եւ տրամադրութիւն ունենաս այս կողմերը գալու, աւելորդ է անշուշտ կրկնել թէ *մահալնա մահալքում*, ինչպէս կ'ըսեն... կարծեմ արաբները: Ամէն դիւրութիւն ունիմ այստեղ, Նոյնիսկ... բաղնիք:

Շաբաթ մըն է վերսկսած եմ առօրեայիս՝ թեւեւ անձնական աշխատանքներով լեցուն շաբաթ մը եղաւ անցնողը: Վերջին «Նայիրի»-ին մէջ տեսայ թէ [Անդրանիկ] Ծառուկեանը սկսած է արդէն հրատարակել *Անկապ Օրագիրս*՝ որ առած էր ասկէ շուրջ տարիուկէս առաջ: Բաւական բաներ կան յաջորդ էջերուն մէջ որ պիտի ուզէի վերամշակած ըլլալ: Մի քանի օր աշ-





խատեցայ ուրեմն ատոր վրայ եւ կը յուսամ հասցնել զայն գոնէ յաջորդ թիւերուն: Այսօր-վաղը պետք է սկսիմ նաեւ «Չարթօնք»ին հրատարակելիք *Յուշամատեն*ին²⁵² համար խոստացած կտորիս: Քիչ յետոյ պիտի գրեմ նաեւ Երուսաղէմ Արային՝ [Գալայճեան]²⁵³ որ սկսին շարել *Յայու Բեկորներ*ս: Այս առթիւ կրնամ խնդրել քեզմէ որ առաջին առիթով հանդիպիս Բիւզանդին [Թօփալեան] եւ խնդրես իմ կողմէ որ փութացնէ կողքը՝ որ կը մտածեմ տպել տալ այստեղ: Կարելիութիւններով հետաքրքրուելու համար սակայն պայման է որ գործը ունենամ միասին: Թող դրկէ Յիմնարկութեան հասցեովս եւ ոչ թէ տունիս: Գոհ կ'ըլլամ եթէ մի քանի տողով բարի ըլլաս զիս պահել տեղեակ կացութենէն:

Պէրյութի, քու բացատրութեամբդ *Խայմախէն* քանի մը տող հասաւ առջի օր: Ըստ երեւոյթին տակաւին չէ ստացած *քարտ*: Գրած է կարճ՝ որովհետեւ ինչպէս ինք կ'ըսէ, տակաւին չէ սթափած Փարիզի փոթորիկէն: Յիլտային [Գալֆայեան]²⁵⁴ ղրկեցի գիրքէս օրինակ մը, կը յուսամ թէ առանց կորսուելու կը հասնի ձեռքը:

Ի՞նչ լուր քեզմէ. նորութիւն մտա՞ւ առօրեայիդ մէջ թէ կը շարունակես նոյն ձեւով օրդ փակել, ձանձրոյթդ փարատել... «կատու»ին քսկոտուելով: Բեզ ձգելէ ետք անցեալ Կիրակի՝ ճամբորդութեան մնացեալ մասը անցաւ առանց մասնաւոր արկածի կամ անհաճելի դէպքի, եթէ անշուշտ նկատի չունենաս 35 ֆրանքը որ վճարեցի ակելորդ հինգ քիլօ ծանրութեան համար: Մատրիտ մնացի մօտաւորապէս երեք ժամ: Քաղաք չիջայ հակառակ ծրագրիս, որովհետեւ յայտնի եղաւ որ Բրատօն եւ միւս թանգարանները Կիրակի օրերը բաց կ'ըլլան մինչեւ կէսօրուան ժամը երկուքը միայն: Իսկ աննպատակ փողոցները թափառելու համար ալ օգակայանէն քաղաք երկար այդ ճամբան կտրել խորհեցայ թէ չէր արժեր:

Մասնաւոր բարեւներ Յայր Գիւտին [Նագգաշեան], Բիւզանդին, ծովսերուն եւ ձերիսներուն՝ երբ գրելու ըլլաս յաջորդ անգամ:

Անկեղծօրէն քոյդ՝
Վահրամ Մ.





ՆԱՄԱԿ 5

Լիզպոն, 19 Դեկտեմբեր, 1964

Սիրելի Ասատուր,

Կ'ուզեի գրել անելի կանուխ, առաջին նամակդ ստանալու ետք. չեղաւ սակայն, նախ՝ որովհետեւ վստահ չէի Փարիզէն մեկնած ըլլալուդ եւ երկրորդ՝ ու մանաւանդ կար քանդուած տրամադրութիւնս անցնող ութ-տասը օրերուն՝ մօրս անակնկալ մահը գուժող հեռագրին հասնելէն ի վեր: Յաւեցայ խորապէս, մասնաւորաբար անոր համար, որ առիթը չտրուեցաւ ինծի քովը ըլլալու գոնէ իր վերջին օրերուն, վերջին օրը: Եւ ատիկա՝ գիտեմ թէ անելի՛ ցաւ պատճառած պետք է ըլլայ իրեն՝ քան կեանքը կորսնցնելու գիտակցութիւնը: Դժբախտ սերունդ մը եղաւ մեր ծնողներունը այդ տեսակէտէն, կեանքի պայմաններուն բերումով զրկուեցան նոյնիսկ իրենց ամենէն տարրական իրաւունքներէն. ու մենք, զաւակները դժբախտ այդ սերունդին, կապուած ձեռքերով դիտեցինք ու... տառապեցանք միայն, մինչեւ որ օր մըն ալ շրթունքները խածած զիրենք յանձնեցինք հողին, օտա՛ր հողին: Առջի շաբաթ, անձրեւոտ օր մը թաղած են զինք: Ներկայ եղած են մեր տղաքը բոլոր.- [Սիմոն] Սիմոնեան, [Օննիկ] Սարգիսեան, [Վարուժան] Պետիկեան,²⁵⁵ Լեւոն Վարդան եւայլն: Հայր Գեորգը [Վարպիսեան] նոյնիսկ դամբանական խօսած է: Չեմ գիտեր սակայն թէ այդ բոլորը ի՞նչ չափով պիտի կարենան լեցուցած ըլլալ ի՛մ բացակայութիւնս: Ինչ արած, կեանքը այս է կ'երեւի, եւ մեզի - մարդկային խեղճ արարածներ - չէ տրուած, գոնէ մինչեւ հիմա, անոր հոսանքին ուղղութիւնը փոխել կարենալու կարողութիւնը:

* * *

Երկրորդ նամակեդ ուրախ եմ լսելով որ աքսորդ վերջ գտած է արդէն եւ վերադարձած ես սիրելիներուդ մօտ: Կը յուսամ թէ շուտով կը կարգադրուի նաեւ գործիդ հարցը վերջնականապէս եւ նպաստաւոր ձեւով: «Արեգակ»ի վերջին թիւը եկաւ անցեալ շաբաթ: Ընդվզեցուցիչ է պարզապէս: Այս մարդիկը չե՞ն գիտեր որ իրաւունք չունին չարչարելու մեր լեզուն, թէ հայ ըլլալը արտօնութիւն մը չէ՛ ատոր համար: Ի վերջոյ ո՞վ է





իրենցմէ թերթ ուզողը՝ եթէ ի վիճակի չեն գայն հրատարակելու՝ առանց մեր մեծագոյն նուիրականութեան, Մեծասքանչին դէմ մեղանչելու: Տխուր ներկայութիւն մը ասիկա թերթին անցեալ գրեթէ բոլոր թիւերուն մէջ ալ: Յետոյ, իբրե՛ւ թէ քօղարկուած՝ բայց խղճալիօրէն թափանցիկ ճիգը՝ Շէյքսպիրի²⁵⁶ հանդիսութեանց մասին գրուածներուն առիթով շեշտը Շէյքսպիրէն աւելի դնելու... [Շաւարշ] Նարդունիին²⁵⁷ վրայ: Մանաւանդ երբ իբրեւ պաշտօնական հաղորդագրութիւն պիտի դրկուի բոլոր արտասահմանի թերթերուն, գարմանալի է որ Մշակութային Յանձնախումբին միւս անդամները - Պրն. [Յարութիւն] Այվազեան, Օրդ. [Լուիզ] Վարդուկեան,²⁵⁸ Եղլուարդ] Կիւլպէքեան²⁵⁹ - աչք մը չեն նետեր, կամ նետելէ ետք՝ ունեցած իրենց դիտողութիւնները ընելու չեն համարձակիր: Եւ ի՛նչ հայերէն, Աստուած իմ:

Գալով «Արեգակ»ին, գործի անցնելէդ վերջ կը խոստանամ ամէն թիւի բան մը դրկել: Կ'արժէ որ ծաւալն ու ընդհանուր դասաւորումն ալ բարեփոխութեան մը ենթարկելու մասին մտածես: Ներկայ վիճակով անճաշակ է շատ: Կարելի է թերեւս մեծցնել իւրաքանչիւր էջի ծաւալը քիչ մը եւ այնպէս մը ընել որ շարուած էջին շուրջ պարապ շրջանակ մը մնայ: Ներկայ վիճակով՝ էջերը Արեւելեան սափրիչներու խճողուած *վիթրիններուն* երեւոյթը ունին: Կասկած չունիմ թէ որոշ թիւով գրողներու աշխատակցութիւնը կրնաս ապահովել արտասահմանէն եւ Զայրենիքէն: Առջի օր նամակ մը ստացայ [Լեւոն] Չորմիսեանէն:²⁶⁰ Որոշած են «Բիւրակն»ը²⁶¹ վերածել շաբաթաթերթի եւ կ'ուզէ որ աշխատակցիմ անպայման, նկատելով որ «արտասահմանի կարգ մը արժէքաւոր գրողներու պարբերական աշխատակցութիւնը մեծապէս կրնայ նպաստել թերթի արժէքին, վարկին եւ հետեւաբար նաեւ անոր ժողովրդականացման եւ տարածումին»: Չեմ պատասխանած տակաւին, բայց հաւանական է որ, հակառակ Չորմիսեանը գոհացուցած ըլլալու տրամադրութեանս խուսափողական պատասխան մը տամ, գոնէ մինչեւ որ առիթ ունենամ տեսնելու թէ ինչ արժէք կը ներկայացնէ ընդհանրապէս բովանդակութիւնը թերթին նոր ձեւին:

Անտեղի չեմ գտներ այստեղ յիշեցնելու քեզի որ թերթին խմբագրութիւնը ստանձնելու պարագային կրնաս ուշադրութեան առարկաներէն մէկը ըլլալ «աղբարիկ»ներուն, մանա-





լանդ երբ պիտի փոխարինես մեկը՝ որ մասնաւոր առաքելութեամբ մըն ալ կը վարէր այդ պաշտօնը: Պետք է շրջահայեաց ըլլալ ուրեմն՝ առանց զիչող ըլլալու, մանաւանդ կարելոր, սկզբունքային հարցերու պարագային: Մեր արտասահմանը դժբախտաբար հասած է տեղ մը ուր հատուածական շահերու, անձնական մանր հաշիւներու համար մարդիկ դիւրաւ կը զոհեն իրենց ազգային նուիրականութիւնները՝ որոնց համար մեզմէ առաջ սերունդներ տուած են առնուազն իրենց... կեանքը: Ինչ արած, ամենէն գեղեցիկ պարտեզներուն մէջ ալ վնասակար բոյսեր կամ անպետ խոտեր կը բուսնին. մաքրել պետք է՝ առանց շուրջի ծաղիկները կամ... ձեռքդ վիրաւորելու:

Հետաքրքիր եմ գիտնալու թէ ինչպէ՞ս անցաւ համերգը անցեալ շաբաթ, տպաւորութիւնները մանաւանդ [Աւետիս] Մեսումենցին²⁶² գործին մասին: Ե՛ս ալ տակաւին առիթ չեմ ունեցած զայն մտիկ ընելու: Վերջին հաշուով կտորին ծնողներէն մէկն ալ ես եմ չէ՞: Առիթ ունեցա՞ր Մեսումենցին հանդիպելու:

Փարիզի մէջ տուած դասախօսութեանդ մասին կարդացի «Աշխարհ»ին²⁶³ եւ «Խթան»ին²⁶⁴ մէջ: Վերջինը յիշած էր նաեւ - եւ զարմանքով - դուռին գոց ըլլալն ու ելեկտրական հոսանքին կտրուած ըլլալը: Մեր բարեկամ [Գրիգոր] Ադամեանը²⁶⁵ ի՞նչպէս բացատրեց արդեօք պատահածը:

Հիլտան [Գալֆայեան] ոչ իսկ տող մը գրեց՝ առ նուազն ըսելու համար թէ ստացած է ճամբած հատորս: Գիրքը մակագրած չըլլալս - որ մոռացումի արդիւնք էր միայն - պատճառ չէր որ չյարգէր տարրական պատշաճութիւն մը: Ոչինչ, վերջը լաւ կը լինի:

Մասնաւոր բարեւներս բարի եղիր հաղորդել Վիվիէնին եւ Ալեքսեաններուն: Լոնտոն գտնուած միջոցիս Պրն. Պետրոսը [Ալեքսեան] եւ անելի վերջ դուն յիշեցիք մի քանի առիթներով որ Մարդասիրական ճեմարանին եղած յատկացումները անելի արդար կ'ըլլայ որ տրամադրուին անելի կարիք ունեցող վարժարաններու: Յաջորդիւ գրե ինծի քիչ մը անելի մանրամասնութեամբ այս մասին եւ տուր պատճառները յայտնուած այդ կարծիքը պաշտպանող: Օգտակար կ'ըլլայ մեզի:

Գրե երկար, կը սպասեմ լուրերուդ:

Լաւագոյն մաղթանքներով եւ սիրով՝
Վ. Յ. Մավեան





Յ.Գ. Հակառակ յստակ կերպով գրած ըլլալուս՝ երկու նամակներուդ ալ հասցէները ճիշդ չէին: Հիմնարկութեան հասցէով ճամբուածին վրայ դրուած էր Հիմնարկութեան... 7 տարի առաջուան հասցէն: Իսկ բնակարանիս ուղղութեամբ ճամբու դրուածին վրայ մոռցած էիր կարեւոր թիւ մը:

Արդ, կրկին անգամ:

Vahram Mavian
Calouste Gulbenkian Foundation
Dept. of Armenian Affairs
Lisbon, Portugal
կամ՝
Vahram Mavian
Av. Oscar Monteiro
Torres 53, 2º D
Lisbon, Portugal.

որ թարգմանի՝ թիւ 53 երկրորդ յարկ աջակողմեան յարկաբաժին. եղա՞մ:

ՆԱՄԱԿ 6

Լիզպոն, 7 Յունուար, 1965

Սիրելի Ասատուր,

31 Դեկտեմբեր թուակիր նամակդ կարդացի հետաքրքրութեամբ: Ուրախ եմ որ «Արեգակ»ի հարցը կարգադրուած է վերջնականապէս: Հետզհետէ աճող այդ գաղութին մէջ ճակատագրական դեր մը կրնայ ունենալ եթէ գործածուի պէտք եղած ձեւով: Կասկած չկայ թէ խաղող ուտել պէտք է ըլլայ մեր նպատակը, պայմանաւ անշուշտ որ մեր ուտելու ախորժակին դէմ չկենայ... պարտիզպանը: Չարմանալի է որ մեր ժողովուրդը որ հեղինակն է այս առածին, չէ մտածած միւս կարելիութեան մասին՝ երբ պարտիզպանը ծեծելու կ'ելլէ մեզ: Ոչինչ, հիմա տակաւին դէպի այգի առաջին քայլերդ է որ պիտի առնես, շատ չանցած յայտնի կ'ըլլայ պարտիզպաններուն տրամադրութիւնը: Թերթը պէտք է քարոզէ - այս բառը՝ պատուելիական իր տարազէն տարբեր իմաստով - կողմերէն վեր, Հայու-





թեան ամբողջականութեան գաղափարը: Ներփակ այդ ուղղութեամբ կարճ գրութիւն մը: Ալ նայէ յարմարութեան: Կրնաս տպել որպէս խմբագրական, առանց ոեւէ անունի: Այլապէս դիր տակը **ԼՈՆՏՈՆ ԵՒ... ՎԱՅՐԻՃ ՄԱՆՈՒԿԵԱՆ:**²⁶⁶ Երկրորդ պարագային՝ այս անունը կը պահես քեզի՝ միայն, հետագային պետք կրնայ ըլլալ որովհետեւ ուրիշ ալ յօդուածներու համար: Կը ներփակեմ նաեւ քերթուած մը որ ասկէ 4-5 տարի առաջ լոյս տեսած է «Յուշարար»ին²⁶⁷ մէջ: Այլ խօսքով տեսնելու - չեմ ըսեր կարդալու - առիթ ունեցած են Բարեգործականի քանի մը վեթերան անդամներ միայն: Կը կարծեմ թէ յաջող քերթուած մըն է եւ «Արեգակ»ի ընթերցողներէն ոչ ոք առիթ ունեցած է զայն տեսնելու: Եթէ «Տուն Յայրենի»ն արդէն չես ճամբած տպարան, նախընտրելի է թերեւս որ ասով փոխարինես զայն: Իսկ **Ապրիլի** թիւին համար կը դրկեմ արձակ մը. միայն թէ թիւը տպարան յանձնելէդ մի քանի շաբաթ առաջ յիշեցուր ինծի: Նկատի կ'ունենամ նաեւ արտատպումի համար յարմար կտորներ, այժմեական եւ գրական արժէքով: Սքանչելի կտոր մըն է Դերենիկ Դեմիրճեանի²⁶⁸ «Հայը»: Ծանօթ էս, չեմ գիտեր: Ծաւալն ալ յարմար է «Արեգակ»ին: Գալով գրողներուն՝ որո՞նք կրնան աշխատակցիլ, չեմ գիտեր թէ որոնք է որ ունիս նկատի, մե՞ր սերունդէն տղաք թէ... [Պետրոս] Չարոյեանին²⁶⁹ - կամ Չրոյեանին, ինչպէս կը կոչեին զինք տղաքը [Մելգոնեան կրթական] Հաստատութեան մէջ: Կը կարծեմ թէ երկու պարագային ալ ինծի ծանօթները ծանօթ են նաեւ քեզի: Իսկ եթէ ունիս մասնաւորներ միտքիդ մէջ որոնց իմ կողմէ գրուիլը կը կարծես թէ կրնայ աւելի արդիւնաւոր ըլլալ՝ պահէ զիս տեղեակ, կ'ընեմ սիրո՛ւ: Իրատես ըլլալով, պետք է գիտնաս սակայն որ յոյս չկայ սերունդէ մը որուն լաւագոյն ներկայացուցիչը... մեր սիրելի Բիւզանդն [Թօփալեան] է: Ի դէպ, գիրքիս կողքը պիտի գայ տակաւին: Պիտի չհետապնդեմ սակայն այլեւս եւ մտածեմ ուրիշ կարգադրութեան մը մասին:

Հետաքրքրութեամբ կարդացի նաեւ համերգին մասին գրածդ: Ուրախ եմ որ «Երկու Աշուն»ին մասին նպաստաւոր է երաժշտութենէ հասկցողներու կարծիքը: [Աւետիս] Մեսումենցը կը գրեր թէ մտիկ ընողները - ոչ համերգին մէջ - հաւնած են նաեւ Փարիզ գտնուած միջոցիս աւարտած իր Նոր գործը կարճ քերթուածներու մէկուն վրայ: Ես չեմ լսած անշուշտ ոչ մէկը եւ ոչ միւսը:

Հիլտան [Գալֆայեան] *քարտ* մը ճամբած էր Նոր Տարուան





առիթով, կ'ըսեր թե վշտացած էր շատ՝ գիրքը մակագրած չըլլալու համար: Կ'առաջարկեր վերադարձնել զայն՝ պայմանաւ սակայն որ այստեղէն մակագրուած օրինակ մը դրկէի իրեն, առնուազն... Աստուածահաճոյ բան մը ըրած ըլլալու համար տօնական օրերու առթիւ: Չէ՞ որ բարեկամ մը ցաւցնելը Աստուածահաճոյ բան մը չէր: Պոլսեցիական հաշիւ մը որ ներկայացուած է համակրելի ձեւով:

Իմ կեա՞նքս: Կը դառնայ ինքն իր վրայ նոյն անհամ ձեւով: Եթէ ծրագիրը չփոխուի՝ Փետրուարի մէջ կը սպասենք Վեհափառն [Վազգէն Ա. Պալճեան] ու Եղիշէն՝ [Պատրիարք Տէրտերեան] իրենց... շքախումբով: Անհաւանական չէ նաեւ որ Մայիսի մէջ, այստեղ Կիւլպէնկեան *ֆէսթիվալ*ին մասնակցի նաեւ Պէյրութի Հայկական Երգի եւ Պարի խումբը: Հարցը տակաւին «բանակցային» վիճակի մէջ է: Տեսնենք թէ ե՞րբ պիտի կարենամ կարգադրել եւ ելլել շրջապտոյտի մը նորէն: Ներկայ տրամադրութեամբ պէտք ունիմ փոփոխութեան մը անպայման:

Մասնաւոր, ջերմ բարեւներ Վիվիէնին եւ Ալեքսեաններուն իսկ պաշիկներ Կարինէին: Մի ուշացներ գիրդ ու պահէ գիս տեղեակ «Արեգակ»էն:

Յաջողութեան սրտաբուխ մաղթանքներով եւ սիրով՝
Վ. Յ. Մավեան

[Յ.Գ.] Եթէ առիթ ունենաս հետաքրքրուելու, գոհ կ'ըլլամ եթէ մեկական օրինակ կարենաս ձեռք ձգել եւ ճամբել ինծի Շէյքսփիրի հանդիսութեան առթիւ առնուած այն նկարներէն՝ որոնց մէջ կ'երեւիմ նաեւ ես, անշուշտ... անարժանաբար:

ՆԱՄԱԿ 7

Լիզպոն, 31 Յունուար, 1965

Սիրելի Ասատուր,

Յունուար 20 թուակիր նամակդ ստացայ հաճոյքով: Ուրախ եմ որ գործդ կը քալէ ծրագիրներուդ համաձայն:

Նախ՝ քանի մը տող ճամբած քերթուածիս եւ «Հաւատամք»ին մասին:

Եթէ քերթուածը չէ տպուած արդէն, կ'ուզէի որ երկրորդ տունին երկրորդ տողը ենթարկուէր պզտիկ փոփոխութեան մը՝





ասկէ՝ Մեզ՝ սահմանուած իրարու, բաժնել
 երբեմն իրարմէ,
 վերածուէր ասոր՝ Մեզ - սահմանուած իրարու - բաժնել
 երբեմն իրարմէ,

Եթէ տպուած է արդէն, ինդիր չէ, կրնաս մոռնալ, շատ ալ
 աղետալի սխալ մը չէ՝ եւ ըսել ուզուածը կրնայ նոյնքան հաս-
 կնալի ըլլալ:

Իսկ գալով «Յաւատամք»ին անպայման յառաջիկայ թիւին
 համար չէ՛ր որ ունեցած էի գայն նկատի. կրնայիր գործածել
 Մարտ-Ապրիլի թիւէն ետք: Հասկնալի է որ [Գրիշ] Դաւթեանը²⁷⁰
 կասկածի որ ես եմ գրողը, երբ նոյն գրամեքենայով գրուած եր-
 կու կտորները կը տեսնէ միասին, միեւնոյն ժամանակ: Այս
 Հայր Գեորգ [Կարպիսեան] գործ մը տեսած ես, բայց ինչ որ է:

Յունուարի խմբագրականիդ ոգին լիովին բաժնելով հանդերձ
 պէտք է ըսեմ թէ ոճը գտայ քիչ մը շատ... զգացական: Լոնտոնէն
 հասնող ձայն մը մանաւանդ՝ պէտք է ըլլայ աւելի զուսպ՝ ու սիր-
 տին պէտք է հասնի միտքի՛ն ճամբով: Պէտք չէ մոռնալ որ այսօր
 մեր խօսքերը տարագրութենէն նոր ազատած, անապատներէն
 հաւաքուած, որբանոցներու մէջ իրենց աչքերը բացած բազմու-
 թիւներու չէ որ կ'ուղղուին, եւ թէ «ճիւղ, չորցած գանկ,
 պղպջացող արիւն, արիւնարբու թշնամի, դահիճի ժահրոտ
 ծաղր, արեան պղպջոց» բացատրութիւնները մեր ակնկալած
 անդրադարձը չեն տար այն սերունդին կողմէ՝ որ տարբեր եր-
 կինքներու ու պայմաններու տակ իր աչքերը բացած, յարաբե-
 րաբար իմացական աւելի լայն պատրաստութիւնով՝ այդ բոլո-
 րին կը մօտենայ առաւելաբար մտածող մարդ որպէս, հա՛յօրէն
 մտածող: Վերի արտայայտութեան կերպերը կրնային անկաս-
 կած յուզել Ապրիլ 24ի հանդիսութեան մը համար հաւաքուած
 բազմութիւնը ասկէ... 30 տարի առաջ: Եւ այն ատեն անխուսա-
 փելի էր այդ հոգեկան խռովքը, յուզումը՝ որուն նոյնիսկ պէտք
 ունէինք թերեւս «պարպելու» համար մեր վիշտը: Այսօր սակայն
 կը կարծեմ թէ ուրիշ պէտք է ըլլայ տօնին բերելիք պատգամը
 մեզի, եւ այդ պատգամը որպէսզի ըլլայ հաղորդական եւ համո-
 զիչ ներկայ սերունդին համար, պէտք է սիրտերուն հասնի միտ-
 քի՛ ճամբով, տրամաբանութեան գիծով, եթէ կ'ուզես:

Յետոյ, Համահայկական Կեդրոնական Միութեան հարցը՝
 որուն խոստացած ես «հանգամանօրէն» անդրադառնալ: Այս





մասին ամեն գլուխէ ելլող զանազան ձայներով լեցուն է արդէն հրապարակը: «Արեգակ»ին համար կը կարծեմ թէ կանուխ է տակաւին նման «ՄեՆժ» ծրագիրներով զբաղելու: Արդէն ոչ ոք կը սպասէ այդ «հանգամանք»ը «Արեգակ»էն: Պետք է ձգել որ այլ գաղութներ, որոնք ունին թե՛ մարդը եւ թե՛ միջոցները, զբաղին այդ կարելիութիւններով: Միւս կողմէ, օրինակ, սքանչելի աշխատանք մը ըրած կ'ըլլաս եթէ օտար - հնդիկ կամ անգլիացի - մտաւորականներ կարենաս կարգադրել որ արտայայտուին այդ ուղղութեամբ: «Արեգակ»ը, գոնէ առայժմ, պետք է ունենայ մի քանի որոշ առաքելութիւն: Նախ՝ արտասահմանը հաղորդ պահել Լոնտոնի գաղութի կեանքին: Ապա, տիրող ձայն մը ըլլալ նոյնինքն Լոնտոնի գաղութին մէջ՝ Հայութեան ամբողջականութեան գաղափարի մը շուրջ հաւաքելու համար զանոնք - եւ ասիկա արդէն բաւական դժուար եւ ապերախտ գործ է: Իսկ այս տարին նկատի ունենալով, գաղութին ամեն մէկ անդամը հաղորդ պահել ԵՂԵՆԻ ոգիին: Կարելի է նոյնիսկ առանձին խմբագրական մը գրել այդ ուղղութեամբ ամեն թիւի, բայց խոշոր ծրագիրներ յղանալէ աւելի՝ խորհրդածութիւններ ընելով, մտածումի մղելով իւրաքանչիւր հայ՝ թէ իր հայ ըլլալու հանգամանքը արդէն լուրջ պատասխանատուութիւններ կը դնէ իր ուսերուն՝ որոնց հանդէպ չի՛ կրնար, իրաւունք չունի անտարբեր մնալու:

Ինչ կը վերաբերի Արեւելահայերէնի կամ Արեւմտահայերէնի գործածութեան կը կարծեմ որ թերթը պետք է խմբագրուի Արեւմտահայերէնով՝ չնայած գաղութին մաս կազմող որոշ թիւով Պարսկահայերուն, գլխաւորաբար այն պատճառով որ Լոնտոնը... Արեւմտահայ գաղութ է: Հասկնալի է անշուշտ որ արեւելահայ բարբառը կը պահուի երբ Հայաստանեան գրողներու յօդուածներն է որ լոյս կը տեսնեն այնտեղ, բնականաբար ուղղագրութիւնը վերածելէ ետք մերինին: Այլապէս ծիծաղելի է, օրինակ, «Բրիտանահայք»ին մէկ մասը գրել արեւմտահայերէնով - Գարեգին Եպ[ի]ս[կոպոս]ին [Սարգիսեան]²⁷¹ այցը եւ «Ինչ որ կ'ուզէ...»ին նկարագրութիւնը - իսկ միւս մասը - Փրոֆ. [Արտաշէս] Առաքելեանին²⁷² այցը - արեւելահայերէնով: Լոնտոն գտնուած միջոցիս, եթէ չեմ սխալիր թերթին արեւելահայերէնով խմբագրուելուն մասին իր դժգոհութիւնը յայտնեց նաեւ [Հայկ] Գալուստեանը: Տուր իրեն մասնաւոր, ջերմ բարեւներս: Թող գիտնայ որ թերթով կը հետաքրքրուիմ մօտէն եւ թէ





պատասխանատուութիւնը ստանձնելէդ ի վեր սկսած եմ նաեւ աշխատակցիլ: Այդպէս խոստացած էի իրեն՝ շեշտելու համար խմբագրութեան վերակազմութեան անհրաժեշտութիւնը: Այս առթիւ պետք է ըսեմ որ Յունուարի թիւին մէջ զգալի էր մթնոլորտի փոփոխութիւնը. առ նուազն մաքուր հայերէն էր գործածուածը: Պատուհանները չափով մը բացուած էին կարծես եւ քիչ մը մաքուր օդ մտած էր ներս: *ԱՖերիմ*: Շնորհակալութեամբ ստացայ իմ հասցէիս ճամբուած օրինակը, միայն, Աստուծոյ սիրոյն, ինչո՞ւ հասցէն պակաս տուած ես դարձեալ, նայէ որ սրբագրեն խնդրեմ: Ի դէպ, ի՞նչ ձեւով կը ցրուէք թերթը. բոլոր հայ թերթերուն կը դրկէ՞ք, օրինակ: Զանի՞ օրինակ կ'երթայ Յայաստան: Արտասահմանի մեր միւս թերթերը կը ստանա՞ք: Ի՞նչ է թերթին տպաքանակը: Կրցա՞ք մեր գրողներէն ոմանք կապել թերթին:

Բիւզանդէն [Թօփալեան] լուր չկայ: Նախքան նամակդ ստանալս, ասկէ աւելի քան երեք շաբաթ առաջ «Անդաստան»ին²⁷³ համար քերթուած մը դրկեցի: Ինք՝ կողքը պիտի պատրաստէ՞ տակաւին: *Բեկորներուն* բնագիրը դրկած եմ արդէն Երուսաղէմ եւ հաւանաբար այսօր վաղը ստանամ առաջին 4-5 պրակներուն վերջին փորձը: Քիչ առաջ երկու տող մը գրեցի Բիւզանդին խնդրելով որ բարի ըլլայ տեղեկացնելու ինծի թէ ի վերջոյ պիտի գծէ՞ սա կողքը թէ ոչ, որպէսզի ես ալ ըստ այնմ գլխուս ճարին նայիմ՝ հիմա որ դանակը հասած է արդէն կոկորդին:

Շնորհակալ եմ Շէյքսփիրի հանդիսութեան միջոցին առնուած նկարներով հետաքրքրուելուդ համար. կը սպասեմ: [Աւետիս] Մետումենցին՝ վերջին քերթուածներես մէկուն վրայ դրած երաժշտութիւնը կրնաս կարծեմ գտնել Երջանիկին [Միսիրեան]²⁷⁴ կամ Տոքթ - կամ Դոկտ. - Յասմիկ Թադեսեանին²⁷⁵ մօտ: Յետաքրքիր եմ գիտնալու թէ Վիվիէնը ինչպէս պիտի գտնէ զայն որպէս երգչուհի:

Մեր ստացած վերջին տեղեկութեան համաձայն Վեհափառը [Վազգէն Ա. Պալճեան] պիտի չընկերանայ Եղիշէ Պատրիարքին՝ [Տէրտերեան] երբ այս վերջինը Փետրուարի կեսերուն, Շահե Վարդապետին [Աճեմեան] եւ հաւանաբար Սերովբէ Սրբազանին [Մանուկեան]²⁷⁶ հետ այցելէ Լիզպոն: Մինչեւ Յունուարի վերջը երկուքն ալ - Վեհափառ եւ Եղիշէ - պիտի մնային Ատիս-Ապեպա: Անկէ ետք Եղիշէն պիտի վերադառնար Երուսաղէմ: Թէ ինչ պիտի ընէ Վեհափառը՝ չեմ գիտեր, կամ չենք գիտեր:





Պէյրութի Երգի եւ Պարի խումբին Լիզպոն այցելութիւնը Մա-
յիսի կեսերուն վերջնական կարելի է համարել: Պիտի գան չար-
թըրտ օդանաւով. դէպի Անգլիա շեղում մը շատ մեծ ծախս մը
կ'ենթադրէ: Գիտեմ թէ մտածեցին իրենց ճամբուն վրայ գիշեր
մը Փարիզ մնալ մէկ ներկայացումի համար. կը կարծեմ սա-
կայն որ ստիպուած պիտի ըլլան - կամ եղան ալ արդէն - հրա-
ժարիլ ծրագրէն, նկատի ունենալով որ ճանապարհածախսին
վրայ 20 առ հարիւր յաւելում մը պիտի նշանակեր ատիկա.
ծախս մը որ իրենք ի վիճակի չէին, բնական է, իրենց միջոցնե-
րով փակելու: Ըսեմ որ շուրջ 100 հոգի պիտի ըլլան եկողները:

Ուրախ եմ *Համոյ եւ Ֆատիլէին* մասին տուած լուրերուդ հա-
մար: Շուտ ըրէ, անգլիերէն* հրատարակութիւնը գլուխ հանէ
որպէսզի խոստումիս համաձայն... հայերէնի թարգմանեմ:

Ջերմագին բարեւներ Վիվիէնին, Ալեքսեաններուն եւ պաշիկ-
ներ Կարինէին: Գրէ աւելի կանուխ:

Անկեղծօրէն քոյդ՝
Վ. Յ. Մավեան

ՆԱՄԱԿ 8

Charges to pay: _____
s. d.
RECEIVED

POST OFFICE TELEGRAM

No. _____ OFFICE STAMP

Prefix. Time handed in. Office of Origin and Service Instruction. Words.

From M156/620 RA1420 LISBON 22 12 1452

To _____

By _____

ELT GUZELLAN 33 EGERTON GARDENS LONDONS W3

AM INFURIATED BY TOHALIAN S NEGLIGENCE AT
LEAST HAVE MISTAKES CORRECTED IN INK BEFORE
DISTRIBUTION VAHRAM

For free repetition of doubtful words at office of delivery. Other enquiries should be accompanied by this form, and, if possible, the envelope.

COL 33 3 TS 45/109 LN

* Նկատի ունենալով որ Մավեան իր բոլոր նամակներուն մէջ գործածած է «անգլիերէն» փոխանակ «անգլերէն»ի, գիրքին մէջ պահած ենք իր նախասիրութիւնը:





[Թարգմանութիւն] Լիզպոն, [12.2.1965] Չայրացած եմ [Բիւզանդ] Թօփալեանի անփութեան վրայ: Գոնէ սխալները մելանով սրբագրեիք, նախքան թերթի առագումը: Վահրամ

ՆԱՄԱԿ 9

Լիզպոն, 14 Մարտ, 1965

Սիրելի Ասատուր,

5 եւ 10 Փետրուար թուակիր նամակներդ ստացած եմ ատենին: Ասոնցմէ առաջինին մէջ՝ իմ նախորդ նամակիս առիթով արտայայտած կարծիքներուդ մասին ունիմ բաւական բան ըսելիք. չունիմ սակայն տրամադրութիւնը բայց մանաւանդ ժամանակը ընելու ատիկա: Կը յուսամ մօտերս պատեհութիւնը կ'ունենանք հանդիպելու դարձեալ: Կը խօսինք այն ատեն երկար: Երկրորդ նամակդ՝ անելորդ է անշուշտ ըսել, զայրացուց զիս պարզապէս: Կասկած չունիմ քու բծախնդրութեանդ վրայ, բայց, ներկայ պայմաններու տակ, այնքան ատեն որ ի վիճակի չես պէտք եղած չափով հսկելու կատարուած աշխատանքին վրայ՝ տասը *փարա* չ'արժեր այդ բծախնդրութիւնդ: Պէտք պիտի ըլլայ կ'երեւի սպասել մինչեւ որ ունենաք ձեր սեփական տպարանը:

Այս երկու տողը՝ մասնաւորաբար շնորհաւորելու համար Պրն. Պետրոսը [Ալեքսեան] Ս[սուրբ] Գր[իգոր] Լուսաւորչի շքանշանը ստացած ըլլալուն առիթով: Արժանի գնահատանք մը՝ որուն համար շնորհաւորելի է նաեւ Վեհափառը [Վազգէն Ա. Պալճեան]: Արտասահմանի մեր տարտղնուած, անկազմակերպ այս վիճակին մէջ ինչ որ մեզի կը պակսի՝ շօշափելի թիւ մըն է «առողջ, անշահախնդիր, զուտ» հայերու: Այդ բարեմասնութիւններով մեզի ներկայացողները այսօր բոլորն ալ գրեթէ իրենց գունաւոր պոչերուն կապուած ունին երեւելի կամ աներեւոյթ նկատումներ՝ որոնք կը բխին անձնական կամ հատուածական հետաքրքրութիւններէ: Կացութիւն մը ասիկա՝ որ հրապարակը գրաւող ազգասիրութիւնը կը վերածէ... մէջը ջուր խառնուած կաթի: Պրն. Պետրոսը այն քիչերէն է՝ որուն համար հայութիւնը ճակատագրին կողմէ իրեն սահմանուած վիճակ





մը ըլլալէ անդին եւ անելի՛ ապրում է, եթէ կարելի է ըսել, գոյութեան անհրաժեշտ ազդակ մը: Այդպէս են բոլոր իրաւ հայերը, անոնք չեն կրնար ըմբռնել թէ ինչպէ՞ս կարելի է ապրիլ առանց Յայ ըլլալու:

Այս ամսու 27ին ճամբայ կ'ելլեմ դարձեալ քննական շրջապտոյտի մը դէպի Արեւելք, մասնաւորաբար Լիբանան եւ Սուրիա: Այս անգամ եթէ կարենամ յարմարցնել կ'ուզեմ երթալ մինչեւ Գամիշլի եւ Տեր Չօր: 5-6 օրուան համար կը ծրագրեմ հանդիպիլ նաեւ Երուսաղեմ՝ ուր տրուած խոստումին համաձայն իբրեւ թէ անարտած պիտի ըլլայ *Բեկորներուն* տպագրութիւնը: Ամսուն 27ին, Շաբաթ առաւօտ Մատրիտի վրայով պիտի անցնիմ Փարիզ. այստեղ մնամ հաւանաբար 4-5 օր մը, մինչեւ Ապրիլ 1: Պրն. [Յայկ] Գալուստեանէն երեկ ստացած նամակիս մէջ ակնարկութիւն մը կար «Արեգակ»ի Ապրիլի թիւին տպագրութեան հսկելու համար Փարիզ մեկնելուդ մասին: Գրէ ինձի թէ ճի՞շդ է ասիկա: Եթէ այո՛ լաւ կ'ըլլայ եթէ զուգահեռիկ Նոյն շրջանին: Առաջին հերթին պահէ զիս ուրեմն տեղեակ թէ ի՞նչ է կացութիւնը: Եթէ կարելիութիւն ըլլայ հանդիպելու կու տամ յաւելեալ մանրամասնութիւններ:

Եղիշէին [Պատրիարք Տէրտերեան] եւ Սերովբէ Սրբազանին [Մանուկեան] հետ հաճելի 5 օր մը անցուցիւք այստեղ անցեալ ամիս: Քանի մը օր առաջ այստեղ էր նաեւ Պերճ Թիւլպեանը²⁷⁷ Կիպրոսէն: Ի դէպ, Փարիզէն կ'ուզեմ 2-3 օրուան համար անցնիլ Կիպրոս նախ եւ ապա Պէյրութ: Լիզպոն վերադարձած պիտի ըլլամ Մայիսի վերջը միայն:

Ձերմ բարեւներ Կիվիէնին, ինչպէս նաեւ Տեր եւ Տիկին Ալեքսեաններուն: Կարիւնէի՞ն. պաշիկներ անշուշտ:

Սիրով՝
Վ. Յ. Մալեան

ՆԱՄԱԿ 10

Լիզպոն, 22.3.[19]65

Սիրելի Ասատուր,

18 Մարտ թուակիրդ ստացայ քիչ առաջ: Կը պատասխանեմ իսկոյն՝ որպէսզի գրածս ատենին հասնի ձեռքդ:

Յառաջիկայ Շաբաթ առաւօտ - 27 Մարտ - կ'ելլեմ ճամբայ եւ կ'եսորին կ'ըլլամ Փարիզ: Երեկ քանի մը տող ճամբեցի Գիւտ Ճայ-





րագոյն Վարդապետին՝ [Նագգաշեան] խնդրելով որ բարի ըլլայ նոյն պանդոկին - Լոզան - մէջ սենեակ մը ապահովել ինծի համար: Եթէ որոշ ըլլայ մեկնումիդ թուականը - նման կարգադրութիւն մը կրնաս թերեւս ընել նաեւ դուն: Կ'ըսես թէ 29-30ին Փարիզ կ'ըլլաս: Ինչո՞ւ Շաբաթ օրուընէ չես անցնիր ուղղակի. չեմ կարծեր որ Կիրակի օր մասնաւոր ընելիք մը ունենաս Լոնտոնի մէջ: Փարիզ պիտի մնամ 3-4 օր, ամենէն ուշ հաւանաբար մինչեւ ամսուն 31, եթէ մինչ այդ գալու ըլլաս, կրնամ քեզմէ խնդրել որ միասին բերես նաեւ *տախըմցու* կտոր մը՝ որ Լոնտոն գտնուած շրջանիս գնած եւ ձգած էի Երուանդ Նիկողոսեանին²⁷⁸ մօտ: Եթէ հեռախօսելու ըլլաս իրենց - TUD 8895 - կտորը իրենց տղոցմէ մէկուն հետ կրնան հասցնել քեզի: Իսկ եթէ Փարիզ պիտի ըլլաս իմ մեկնելէս ետք՝ արդէն ծառայութիւնդ... օգտակար չըլլար: Կրցա՞յ հասկցնել:

«Արեգակ»ի բացառիկին համար գրուածը չկրցայ դրկել որովհետեւ ժամանակ չունեցայ պատրաստելու: Չափազանց զբաղած էի վերջին շրջանին: Իսկ հիմա մեկնումիս նախորդող քանի մը օրերուն աշխարհ մը «home work» ունիմ պատրաստելիք: Այս է նաեւ պատճառը Պրն. [Յայկ] Գալուստեանին հետաքրքրական նամակին ալ տակաւին պատասխանած չըլլալուս: Ամէն պարագայի տակ պիտի փորձեմ անպայման գրել իրեն ճամբայ չելած: Իսկ եթէ կարենամ յօդուած մը կամ քերթուած մըն ալ հասցնել մինչ այդ եւ ուշ չըլլայ բացառիկին մէջ հրատարակելու համար, կը յանձնեմ այդ մէկը եւս երբ հանդիպինք: Կարգադրե՛ եւ Փարիզ եղիր 27ին. կը գրուցենք մի քիչ:

Մասնաւոր բարեւներ Ալեքսեաններուն, Վիվիէնին եւ Կարինէին:

Սիրով՝

Վ. Յ. Մավեան

ՆԱՍԱԿ 11

(Բացիկ)

Հալէպ, 30.4.[19]65

Ողջոյն հայրենիքէդ: Հասայ երէկ: Կիրակի պիտի անցնիմ Քեսապի շրջանը իսկ աւելի վերջ ճեզիրէ: Մայիսի կեսերուն





կ'ըլլամ Երուսաղէմ եւ 24ին ետ աքսորիս:

Ի դէպ, համեստ, իր առաքինութիւններո՛ւն իսկ համար արհամարհուած սա կենդանին - Էշը* - կը տեսնե՞ս թէ ինչ գործեր կրնայ ընել: Եւ մտածել թէ իրեն հետեւողները աւելի «ազնուական» ծագում ունին:

Բարեւներ տնեցիներուն:

[Վահրամ]

ՆԱՄԱԿ 12

Լիզպոն, 3 Յունիս, 1965

Սիրելի Ասատուր,

Երկու ամսուան բացակայութենէ մը ետք անցեալ շաբթու վերջաւորութեան վերադարձայ աքսորիս: Զետաքրքրական, յոգնեցուցիչ եւ օգտակար շրջապտոյտ մը եղաւ ըրածս: Այդ մասին կը գրեմ աւելի երկար աւելի վերջ երբ գլուխս ազատեմ քիչ մը անյետաձգելի կարգ մը աշխատանքներէս:

Ասկէ երկու շաբաթ առաջ, Երուսաղէմ գտնուած միջոցիս *Յայու Բեկորներս* ելաւ լոյսին: Օրինակդ ստացած կ'ըլլաս քանի մը օրէն: Ատկէ զատ, փափաքիդ համաձայն հասցէիդ դրկուած պիտի ըլլայ նաեւ 30 օրինակ: Կը յուսամ թէ դժուար չըլլար գանոնք տեղաւորել: Դուն անձամբ վաճառելու պետք չունիս, քանի մը գործունեայ տիկիներ եւ օրիորդներ կրնան ընել այդ աշխատանքը... հաճոյքով: Եթէ պետք ունենաս աւելի օրինակներու՝ գրէ: Գինը պիտի ըլլայ 10 շիլին: Կոկիկ տպագրութիւն մը եղաւ: Ծրարին հասնելէն ետք «Արեգակ»ին մէջ ալ կրնաս ԼՈՅՍ ՏԵՍԱԿ մը դնել եւ ըսել թէ փափաքողները ուրկէ կրնան ստանալ:

Լոնտոնի գաղութին վերջին անցուդարձերուն հազիւ՝ հեռուէ հեռու կրցայ հետեւիլ միայն՝ ճամբորդութիւններուս ու զբաղումներուս բերումով: Գրէ ինձի վերջին կացութեան մասին կարելի մանրամասնութիւններով: Զետաքրքրութիւնս անձնական է զուտ:

Ո՞րք հասաւ ձեր հրատարակչականի ծրագիրը: Պէյրութ

* Դրկուածը բացիկ մըն է: Նկարին մէջ *Ֆելլաիը* նստած էշի մը վրայ, որուն կը հետեւի ուղտերու երկար կարաւան մը:





գտնուած միջոցիս հետաքրքրուեցայ գրաշարի մը հարցով: [Անդրանիկ] Ծառուկեանը՝ տպարանի բոլոր գործերէն լաւագոյնս հասկցող գրաշար մը - *լինթայփիսթ* - յանձնարարեց: Տարիներով տպարանի աշխատանք վարած է: Ըսուեցաւ թէ կը հետաքրքրուի եղած առաջարկով: Տղուն անունն ու հասցէն ղրկեցի՝ չեմ յիշեր Պէյրութէն թէ Զալէպէն, Պրն. [Զայկ] Գալուստեանին ճամբած *քարտիս* վրայ: Լաւագոյնը պիտի ըլլար անշուշտ յարաբերութեան մէջ մտնել ուղղակի ենթակային հետ՝ որուն հասցէն ալ տուած էի: Առի՞ք ոեւէ քայլ արդեօք:

Վերադարձիս «Արեգակ»ի բացառիկէն օրինակ մը տեսայ այստեղ. հազիւ ժամանակ եղաւ թղթատելու, չեմ գիտեր թէ ի վերջոյ ինչպէ՞ս վերջացուց մեր Բիւզանդը [Թօփալեան]: Կ'ենթադրեմ թէ հիմա տերն ու տիրականն ես թերթին: Ե՞րբ լոյս կը տեսնէ յաջորդ թիւը:

Արեւելք գտնուած միջոցիս բաւական հաճելի ժամեր անցուցիւք բարեկամներու հետ եւ յիշեցիւք քեզ մէկէ աւելի անգամներ: Ձերինները բոլոր հանգիստ են կը յուսամ: Մասնաւոր բարեւեր Ալեքսեաններուն եւ Վիվիէնին՝ ու պաշիկներ Կարինէին:

Գրէ, կը սպասեմ լուրերուդ:

Սիրով՝

Վ. Յ. Մավեան

ՆԱՄԱԿ 13

Լիզպոն, 18 Յուլիս, 1965

Սիրելի Ասատուր,

Նամակդ հասաւ ճիշդ ժամանակին ու փրկեց քեզ «լուացողական» երկար նամակէն զոր կը պատրաստուէի գրել անբացատրելի լռութեանդ առիթով: Ոչինչ, բախտաւոր դուրս եկար դարձեալ:

Ուրախ եմ որ *Բեկորներուն* ծրարները հասեր են ողջ: Ինչպէս պիտի նկատես, 30ի փոխարէն ղրկած են 28 օրինակ միայն՝ եօթնոց ծրարներու յարմարութեան համաձայն: Ինչպէս վստահ եմ որ պիտի տեսնես դո՛ւն ալ, դժուարութիւն պիտի չունենաս տեղաւորելու զանոնք: Գրե՞մ Արայիս [Գալայճեան] - որ ընդհանուր գործակալն է - գոնէ 21 յաւելեալ օրինակներու հա-





մար եւս: Ասիկա պէտք է ընենք շուտով՝ որովհետեւ 3-4 շաբաթ կ'առնէ մինչեւ ծրարները հասնին Երուսաղէմէն Լոնտոն: Ուրախ եմ որ գործին հանդէպ ընդհանուր տրամադրութիւնը նպաստաւոր է շատ: Խանդավառ տողեր կը հասնին թէ ընթերցող հասարակութեան եւ թէ գրական շրջանակներու կողմէ: Առաջին գրողներէն մէկը [Շահան] Շահնուրը²⁷⁹ եղաւ: «Պայքար»ի²⁸⁰ անցեալ շաբթուան երեք թիւերուն մէջ երկար գրախօսական մը կար Նուպար Ակիշեանին²⁸¹ կողմէ ստորագրուած: Քանի մը թափթփած տողեր կային նաեւ «Չարթօնք»ին մէջ: Կը լսեմ թէ պիտի արտայայտուին նաեւ «Շիրակ»,²⁸² «Յուսաբեր»,²⁸³ «Մշակ»,²⁸⁴ «Սփիւռք», «Բագին»,²⁸⁵ «Նայիրի» եւայլն: Լաւ է նաեւ սպառումը: Քալիֆորնիայէն բարեկամ մը 100 օրինակ կ'ուզէր վերջերս: Հայերէն կարդալու չափ «յետամնաց» մարդեր կան ըսել է տակաւին լոյսի այդ աշխարհին մէջ:

Ինչպէս գրած էի՝ շրջապտոյտս հետաքրքրական էր շատ: Սուրիոյ այցելութեանս շրջանին ամէն տեղ միասին էր նաեւ [Գեորգ] Ներսոյեանը,²⁸⁶ որ մեր Սուրիոյ Խորհրդատու Մարմինին վարչական քարտուղարն է: Ինչ կը վերաբերի «էշու եւ ուղտի պատմութեան» պէտք է խոստովանիմ որ յետին նպատակով եղած ակնարկութիւն չէր ըրածս. երեւոյթն էր որ գրաւեց ուշադրութիւնս եւ ուզեցի քեզ եւս բաժնեկից ընել «վայելք»իս: Սուրիա եւ Լիբանան գտնուած շրջանիս այնքան զբաղած էի պաշտօնական այցելութիւններով եւ զանազան պարտականութիւններով որ ժամանակ գրեթէ չեղաւ աչք բանալու: Յետոյ կար անշուշտ պաշտօնական հանգամանքը՝ որ ինչպէս կ'երեւի, ոմանց մտածել կու տայ թէ այլեւս չենք հետաքրքրուիր... պատարագներով՝ միաձայն կամ քառաձայն: Նկատի չունիմ անշուշտ կարճ ժամերգութիւնները՝ որոնք որքան ալ լաւ երգուին, կրնան անպայման ընդունելի չըլլալ Աստուծոյ կողմէ:

Ռ[ուբէն] Չարեանին²⁸⁷ Շէյքսփիրի մասին գրած գիրքը չեմ տեսած: Մինչեւ հիմա լոյս տեսած հայերէն հրատարակութիւնները նկատի ունենալով կրնայ հետաքրքրական ըլլալ. չեմ գիտեր սակայն թէ ինչ չափով պիտի կարենայ պահել այդ արժանիքը երբ փոխադրուի անգլիերէնի՝ ուր բազմահարիր ուսումնասիրութիւններ կան շատ մասնագիտական *բլաշի* վրայ: Այսուհանդերձ կարելի է թարգմանութիւն մը նկատի ունենալ գործը տեսնելէ ետք: Ռ. Չարեանը ինծի ալ նամակ մը գրած էր





ասկէ ամիս մը առաջ - ըստ երեւոյթին Արտաշես [Տէր] Խաչատուրեանին թելադրութիւնով - եւ կ'ուզէր որ իրեն ղրկէի Լոնտոնի մէջ խօսածս ինչպէս նաեւ Շէյքսպիրի գործերուն փորթուկալերէն թարգմանութիւններ: Չեմ պատասխանած:

Ներփակ կտրոնը Պոսթոնի «Յայրենիք»էն:²⁸⁸ Կը կարծեմ թէ շատ ալ կարելոր չէ թէ թերթին ճակատին ով նշանակուած է որպէս խմբագիր: Ունի՞ս ազատութիւն թերթը վարելու ճիշդ եւ յարմար տեսած ձեւովդ. կարելորը այդ է: Կասկած չկայ թէ զգալի փոփոխութիւն կայ թերթին լեզուին ու տիրող ընդհանուր մթնոլորտին մէջ. աւելորդ է ըսել անշուշտ թէ դէպի լաւն է այդ փոփոխութիւնը:

Ազգային-եկեղեցական տագնապին մասին թերթերուն մէջ երեւցածները կը տեսնեմ: Իրական պատկերն է ատիկա արդեօք՝ թէ այդ բոլորին ետեւ կան տարբեր դրդապատճառներ - հաւաքական կամ անձնական - տագնապը խորացնող:

Կը յուսամ տնեցիները հանգիստ են բոլոր: Մասնաւոր բարեններ: Նամակդ մի ուշացներ դարձեալ: Գրէ մանաւանդ *Բեկորներու* յաւելեալ օրինակներուն մասին: Եղուարդ Կիւպէքեանը գրած էր անցեալները եւ կը հարցնէր թէ ուրկէ՞ կրնայ երեք օրինակ գնել:

Սիրով՝

Վ. Յ. Մավեան

ՆԱՄԱԿ 14

[Լիզպոն], 1 Օգոստոս, 1965

Սիրելի Ասատուր,

Շնորհակալ եմ 27 Յուլիսի գիրիդ համար: Կը պատասխանեմ իսկոյն՝ օգտուելով Կիրակի օրուան ազատ ժամերէս:

Երէկ, փափաքիդ համաձայն, երկու ծրարով 10 օրինակ *Բեկորներ* յանձնեցի թղթատարին: Դրկեցի այստեղէն ուղղակի՝ որովհետեւ ինձի ճամբուելիք ծրարները հասան անցեալ շաբաթ: Վստահաբար աւելի թիւով հետաքրքրուողներ ըլլան «Արեգակ»ի յառաջիկայ թիւին մէջ յայտարարութեան երեւնալէն ետք: Հալեպի մէջ 110 օրինակ տեղաւորած են՝ [Նուպար] Ակիշեանին բացատրութեամբ «տաք հացի պէս»: Աստղիկ Զիւփէլեա-





նին²⁸⁹ օրինակ մը խոստացած էի... նախքան հատորին լոյս տեսնելը: Չղրկեցի սակայն՝ որովհետեւ գիտէի թէ պիտի փոխեր հիւանդանոցը եւ հետեւաբար հասցէն: Եթէ բարի ըլլայ քանի մը տողով ըսել թէ ուր է ներկայիս՝ կը հատուցանեմ քաղցր պարտքս:

Պոլսոյ թերթերէն կ'իմանամ թէ Գիւտը [Ծայրագոյն Վարդապետ Նազգաշեան] այնտեղ է: Ուրախալի երեւոյթ է երեք նորընծաներու ձեռնադրութիւնը Ս. Խաչ Դպրեվանքի ընծայարանէն: Մեղք որ Եղիշէն [Պատրիարք Տերտերեան] չկրցաւ Երուսաղէմը ձեւի մը դնել անցնող 4-5 տարիներուն: Շատ ալ յոյս չունիմ որ կարենայ ընել ատիկա նոյնիսկ երբ ունենայ արդիական բոլոր յարմարութիւններով նոր ժառանգաւորաց Վարժարանը: Այդ բոլորը՝ նիւթական մթնոլորտի հարց ըլլալէ աւելի արդիւնքն են հաւատաւոր մարդերու պակասին: Թերթերուն մէջ տեսար հաւանաբար որ Յակոբ [Վարդանեան],²⁹⁰ Շահէ [Աճեմեան] եւ Կիւրեղ [Գաբրիէան]²⁹¹ Վարդապետները Եպիսկոպոս պիտի ձեռնադրուին ի մօտոյ: Այս ընթացքով մեր եկեղեցին առանց զինուորի հրամանատարութեան պիտի վերածուի: Երբեմն կը տարուիմ մտածել թէ ցաւալի է որ արտասահմանի մեր կեանքը պարագաներու բերումով մտած է այնպիսի տարագի մը մէջ որ եկեղեցին դարձած է, դարձուցած ենք մեր գոյութեան կարեւորագոյն ազդակներէն մէկը: Ես պիտի աւելցնեմ՝ թերեւս անտեղի կերպով: Ատիկա արդարացուցիչ ըլլար թերեւս տարիներ առաջ, հաւաքականութիւններու համար՝ որոնք իրենց ազգային դիմագիծը կը պահէին «հաւատքով» քան թէ գիտակցութեամբ, կռթնելով ազդակներու՝ որոնք իրենց աւիշը կ'առնեն սիրտին չափ նաեւ միտքէն: Անդրադարձա՞ծ ես որ ազգային մեր բոլոր տագնապները ծնած են եւ աճած մեր եկեղեցիներուն շուրջ եւ եկեղեցականներուն կողմէ.- Անթիլիաս, Երուսաղէմ, Լոնտոն, Մարսիլիա, Ամերիկա եւայլն:

Իմ կեանքս «յայս կողմն աշխարհի» կը քալէ նոյն կշռոյթով սովորաբար, այս շրջանին յաճախ գունաւորուած պատահական այցելուներով՝ աշխարհի գանազան կողմերէն: Ուրեմն՝ երբեմն պատարագ, ժամերգութիւն կամ...հսկում: Հին օրերուն կամրջող քաղցր պահեր բոլորն ալ:

Ձերմ բարեւներով տնեցիներուն,

Սիրով՝
Վ. Յ. Մավեան





ՆԱՄԱԿ 15

Լիզպոն, 6 Նոյեմբեր, 1965

Սիրելի Ասատուր,

Նամակի մը պատասխանելու համար երբ պետք կ'ունենաս ավելի քան երեք ամիսներու, չես ակնկալեր բնականաբար որ գրածներուդ պատասխանը յետ այսու հասնի նախկին կանոնաւորութեամբ: Այս մէկուն բացառաբար այսքան կանուխ գրուիլը սակայն կը պարտիս... Արմինէին՝ որուն բարի ժամանումը կ'ուզեմ ողջունել իսկոյն եւ մաղթել որ Աստուած, ինչպէս հիները պիտի ըսէին, մեծցնէ զինք հօրն ու մօրը շուքին տակ: Թող մեծնան առողջ ու երջանիկ: Ատոր համար ունին գոնէ հիմնական տուեալները.- ապահովութիւն, ինչպէս նաեւ խաղաղ, երջանիկ, գուրգուրալի ընտանեկան մթնոլորտ: Իմ կողմէ աչքը լուսէ նաեւ Վիվիէնին: Այս առթիւ տեղին է մաղթելու՝ որ ձագուկներուն եւ ձեր վրայէն անպակաս ըլլայ միշտ արմենաւանդ օրհնութիւնը Տեր եւ Տիկին Ալեքսեաններուն:

* * *

Նամակդ՝ ինչպէս միշտ, կարդացի հաճոյքով: Ասկէ քանի մը շաբաթ առաջ ստացած էի նաեւ «Արեգակ»ի Հոկտեմբերի - անգլիացի ընթերցողներուն համար Սեպտեմբերի - թիւը: Գրախօսականդ լաւն էր - ակնարկութիւնս «նպաստաւոր» ըլլալուն չէ անշուշտ: Կրցած էիր ըսուելիքներուն կարեւորագոյնները գատել նուազ կարեւորներէն եւ արտայայտել զանոնք աղուոր ձեւով: Չեմ գիտեր թէ ցարդ երեւցած ավելի քան 17 գրախօսական-ակնարկներէն քանի՞ն տեսնելու առիթ ունեցար: Ոմանք, ինչպէս կ'ակնկալուի, մեկնած էին գրական-գեղարուեստական մտահոգութիւններէ եւ ըրած նկատողութիւններ եւ հաստատումներ: Երեւացին նաեւ քանի մը թափթփած ակնարկներ՝ որոնք հակառակ իրենց նպաստաւոր բաներ ըսելու այնքան ազնիւ տրամադրութեան, չեմ գիտեր ինչո՞ւ ինծի յիշեցուցին մարդիկ՝ որոնք ներկայ կ'ըլլան անծանօթներո՞ւ ալ յուղարկաւորութեան եւ կու լան... իրենց մեռելները յիշելով: Որպէս գրական քննադատութիւն հետաքրքրական էր մանաւանդ Միլաս Թեօլեօլեանին²⁹² գրածը «Հայրենիք» օրաթերթի 5 եւ 8





Սեպտեմբեր թիւերուն մէջ: Գրուածները, մերձեցման եղանակի, ոճի եւ կարգ մը այլ տարբերութիւններէն անկախ, բոլորն ալ համաձայն էին իրենց գնահատանքին մէջ՝ որ «դրական» էր, ինչպէս դիտել կու տաս դուն ալ նամակիդ մէջ: Թեօլեօլեանը կ'ըսէր նոյնիսկ թէ «Քիչ անգամ այսքան կենդանի, արագ բայց խոր ու հանդարտ սուզումի թելադրականութեամբ մը գրի առնուած վկայութիւններու հանդիպած ենք մենք՝ վերջին քսանէ աւելի տարիներու մեր գրական վաստակին մէջ»: Այս բոլորէն ետք, կը կարծեմ սակայն թէ ճշմարտութեան բաժին մը կայ Օսկար Ուայլտի²⁹³ մէկ արտայայտութեան մէջ՝ որուն համաձայն երբ քննադատները համաձայն ըլլան արուեստի գործի մը իրենց դատումին մէջ, ատիկա կը նշանակէ թէ արուեստագետը «ներդաշնակ չէ» - *իզ ին տիսքորտ* - ինքզինքին հետ: Ահա թէ ինչո՞ւ տարածամու յայտնուած բարեկամիս այնքան թանկագին կարծիքը կու գայ... ճիշդ ժամանակին՝ փրկելու կացութիւնը եւ ազատելու գիտ Ուայլտեան աններդաշնակութենէն: Յամենայնդէպս, այդ երանելիին - որուն ինքնութիւնը կը կարծեմ թէ դժուար չէ գուշակել - կրնաս ըսել թէ երբ «ես այդ բոլոր տիպարները գիտեմ» կ'ըսէ, անպարկեշտ կ'ըլլայ դիտումնաւոր կերպով - կը հասկնաս անշուշտ որ սուտ կը խօսի ըսելուն քաղաքավար ձեւն է ասիկա - այն շատ հասկանալի պատճառով որ՝ անոնք, տիպարները, այնպէս ինչպէս ներկայացուած են գիրքին մէջ, գոյութիւն չունին պարզապէս՝ իր սովորական ըմբռնումով: Ասոնցմէ Պասմանն²⁹⁴ է միայն որ կրնայ «գիտցած» ըլլալ - եւ եթէ ճիշդ է գուշակութիւնս՝ այս վերջինին այցելութեան նշանաւոր տետրակին մէջ ալ բաներ մը գրած է ատենօք - ան ալ, դժբախտաբար, բոլոր *Բեկորներուն* մէջ միակն է որ հարազատ է իր... բնագրին: Կայ անշուշտ աւելին, ամենէն կարեւորը՝ որ դուն ալ ուրախ եմ որ դիտել տուած էիր գրախօսականիդ մէջ: Իմ նպատակս եղած է «լուսանկարելէ հեռու՝ կեանքը վերարտադրել նկարիչի վրձինով»: Տիպարներս, գլխաւոր այդ պատճառով՝ ապրող էակներ են բոլոր, աւելի՛ իրական քան գանազան նմոյշները՝ որոնց բազմերես կեանքին, ապրումներուն, մտածումներուն յատկանշական մասերով կառուցուած՝ այս կամ այն անձը մարմնաւորելէ աւելի կը ներկայացնեն խտացած կացութիւն մը ամբողջ: Պասմանի մը, Պաուլոյի մը, Ջուդայեցիի մը կամ Կապուելիք Խենթի





մը «լուսանկար»ները ոչինչ պիտի ունենային հետաքրքրական... իրենց ընտանիքի, ծանօթներու անմիջական շրջանակէն դուրս գտնուողներու համար: Նոյնիսկ ասոնք, իրենց հետաքրքրութիւններէն հետզհետէ շատ բան պիտի զիջէին ժամանակին՝ լուսանկարներուն տերերուն մահանալէն, անցնելէն շրջան մը ետք: Նկատա՞ծ ես երբեք թէ ինչ տխրութեամբ կ'անշքանան հիւրանոցներու պատէն կախուած... հարսանեկան լուսանկարները: ՆԿԱՐը սակայն, ուր երեւան բերուած է ու դրոշմուած՝ Ջուղայեցիէն աւելի Ջուղայեցիութիւնը, կապուելիք խենթէն աւելի անոր խենթութիւնը, որոշապէս կը դիմանայ երկար աւելի՝ նոյնիսկ երբ Ջուղայեցին կամ այդ խենթութիւնը գործողները որպէս անհատ այլեւս դադրին գոյութիւն ունենալէ: Կրնայ պատահիլ - եւ անհաւանական չէ ասիկա - որ Սփիւռքը կամաց կամաց օր մըն ալ ամբողջութեամբ հալի՝ ալ՝ եւ ժամանակին հետ մոռցուին բոլոր Մարկոսներն ու Պօղոսները որոնք զայն կազմեցին, պահեցին տարիներով: Ինչ որ պէտք է փրկենք սակայն՝ ապրումներն են մասնաւոր շրջանի մը պատկանող մասնաւոր տեսակի այս հայուն՝ որ աչքերը բացաւ ու ամբողջ կեանք մը օտար ափերու վրայ պանդուխտ ապրելէ ետք՝ զանոնք փակեց օր մըն ալ, սիրտին աշխարհ մը ցաւ ու կարօտ, ու վերադարձաւ նոյն օտար հողին: Արուեստի գործի մը տիպարները, վերջին հաշուով եթէ բան մը կ'արժեն՝ իրենց հոգեկան աշխարհներով է առաւելաբար: Եւ ներկայացուած այս հոգեկան աշխարհները որքան աւելի լայն հաւաքականութիւն մը կարենան յաջողութեամբ ընդգրկել, որքան աւելի մարդոց կարենան պատկանիլ, այնքան աւելի մեծ կ'ըլլայ ստեղծուած գործը: Այդ չէ՞ արդէն մեծութեան գաղտնիքը Շէյքսպիրին, օրինակ, որուն գործերուն մէջ տրուած ներքին աշխարհները չեն սահմանափակուիր մասնաւոր հաւաքականութեան մը կեանքով՝ այլ կը պատկանին ամբողջ մարդկութեան եւ բոլոր ժամանակներու: Վերադառնալով մեր արտին, առնուազն միամտութիւն պիտի ըլլար նման անհամեմատ վերագրումներ ընել *Բեկորներուն*՝ որուն աշխարհը կը մնայ համեստ, ազգայինին սահմաններէն ներս միայն: Ատոր համար չէ՞ արդէն որ թարգմանուելու պարագային այնտեղ երեւցող կտորները գրեթէ ոչինչ կ'ըսեն օտարի մը որ ոչ միայն գաղափար չունի մեր Սփիւռքին մասին, այլ բացատրելու պարագա-





յին անգամ չի կրնար ըմբռնել զայն՝ հոգեկան զանազան երեսներով: Բայց գացինք շատ հեռուները դարձեալ:

Հիլտան [Գալֆայեան] ատենօք գրած էր ինծի թէ գրախօսական մը ղրկած է քեզի «Արեգակ»ին համար: Այդ ծաւալով ու առաքելութեամբ թերթի մը համար անտեղի կ'ըլլայ նոյն գիրքին մասին երկու գրախօսական: Անձնապէս ուրեմն, չեմ փափաքիր որ ընես ատիկա: Կրնա՞յ Հիլտան ցաւիլ. չեմ կարծեր: Յօդուածը չեմ տեսած անշուշտ, բայց եթէ գրուած է գրական հասկացողութեամբ, արտայայտութեան հաճելի եղանակով եւ հայեցողութեամբ - բան մը որմէ այնքան շատ ունի ինքը, Հիլտան -, որպէս միջին ճամբայ, կրնաս թերեւս թելադրել որ ղրկէ ուրիշ թերթի մը, «Սփիւռք»ին օրինակ, որ վստահաբար շատ գոհ պիտի մնայ: Այդ առիթով Սիմոնին [Սիմոնեան] ներկայացուցած կ'ըլլաս նաեւ նոր աշխատակից մը: Գիտեմ, թէ «Մարմարա»ն²⁹⁵ է իր թերթը, բայց այնտեղ գրախօսական մը երեւցաւ արդէն: Այլապէս ալ, իր պոլսեցի ըլլալը եւ օր մը դարձեալ Պոլիս վերադառնալու հաւանականութիւնը նկատի ունենալով՝ խոհեմութիւն պիտի չըլլար երեւիլ «Մարմարա»ին մէջ՝ մանաւանդ եթէ գրածին մէջ ուղղակի կամ անուղղակի որեւէ ակնարկութիւն կայ իր «հայրենակիցներուն»... տկար կողմերուն:

Այստեղէն՝ քանի մը ամիս առաջ ղրկած երկու ծրարներս - 10 օրինակ - կը յուսամ հասան ապահով: Քանի՞ օրինակ կարելի եղաւ արդէօք տեղաւորել մինչեւ հիմա: Գոհ կ'ըլլամ եթէ քանի մը տողով պահես զիս տեղեակ յաջորդիւ: Մոռցած էիր նաեւ ղրկելու Աստղիկ Քիւփէլեանին հասցէն: Եթէ աւելի դիւրին է ըստ թող ինք գրէ ինծի:

Փրոֆ. Ռ[ուբէն] Չարեանին նամակը ատենին ստացած եմ հաճոյքով: Իրեն մինչեւ հիմա չգրելս անփութութեան հետեւանք չէ երբեք: Մեր Հիմնարկութեան պէս Հաստատութեան մը մէջ - պաշտօնեաններուն թիւը հիմա կ'անցնի 600ն ալ - ուր հարց մը ողջ դուրս գալու եւ գործադրուելու համար պետք է անցնի ժողովներէ եւ ձեւակերպութիւններէ, հասկնալի է որ կարգադրութիւնները առնեն քիչ մը ժամանակ: Ուրախ եմ որ մօտ ատենէն, հաւանաբար յառաջիկայ շաբթուան մէջ, ուղղակի Փրոֆեսորին հասցեով թղթատարին կը յանձնենք Շէյքսփիրի ամբողջական գործերուն լրիւ երկու շարքերը եւ կարգ մը





այլ հատորներ փորթուկալերեն լեզուով:

Հատորները նուր կը ղրկուին Հիմնարկութեան կողմէ Երեւանի Շէյքսփիրի Նորակազմ գրադարանին: Փրոֆէսորին երբ գրելու ըլլաւ բարի եղիր թելադրել իմ կողմէ որ հատորները ստանալէ ետք շնորհակալական իր երկտողը յղէ Պրն. Ռոպեր Կիւլպէնկեանին²⁹⁶ ուղղակի: Այդ առիթով կրնայ պաշտօնապէս կարգ մը տեղեկութիւններ տալ գրադարանին մասին եւ միեւնոյն ատեն ներկայացնել նոր ցանկ մը գիրքերու՝ որոնց պէտք ունին կամ կը փափաքին ունենալ: Կարելոր է սակայն մանրամասնութիւններ տալ - հատորի եւ հեղինակի անուն, հրատարակիչ եւլն.- այլապէս դժուար է մեզի համար պրպատել եւ ընտրութիւն կատարել երբ պարզապէս կ'ըսուի որ ղրկենք ինչ որ կապ ունի Շէյքսփիրի հետ: Ճիշդ է թէ Մաշտոցի անուան Մատենադարանին եւ Գիտական Ակադեմիային գիրքեր կը ղրկենք արտասահմանէն, բայց նախ այնտեղէն մեզի կը ղրկեն ցանկը բոլոր մանրամասնութիւններով: Յետոյ, նախընտրելի է անշուշտ որ մեզի ներկայացուածները ըլլան հազուագիւտ կամ սուղ հատորներ, այլապէս միւս մանր-մուր գործերը կրնան անհատներու կողմէ որեւէ գրավաճառէ գնուիլ եւ ղրկուիլ:

* * *

Արդ, սիրելի Ասատուր, վերի տեղեկութիւնները՝ **որոնք ոեւէ ձեւով պէտք չէ հրապարակուին**, գրեցի քեզի որպէսզի յաջորդ նամակովդ փոխանցես Չարեանին, նախընտրաբար ուղղակի ջակերտելով վերի երկու պարբերութիւնները: Ես թեւ քանի մը տող կը գրեմ իրեն երբ գիրքերը յանձնուին թղթատարին, բայց վերի թելադրութիւնները, հասկնալի պատճառներով, չեմ ուզեր պաշտօնապէս իմ նամակիս մէջ ըրած ըլլալ: Կրնաս այս ալ ձեւով մը հասկցնել իրեն:

Հայաստանէն՝ Հիմնարկութեան հասցեով ղրկուած նամակները կը հասնին ողջ. չեմ գիտեր սակայն թէ ինչ կ'ըլլայ ճակատագիրը այստեղէն ղրկուած անձնական նամակներուն: Գեղամ Սեւանը²⁹⁷ նամակ մը գրած էր անցեալները եւ ներփակած՝ «Հայրենիքի Ձայն»ին²⁹⁸ մէջ իր գրած մէկ գրախօսականը *Բեկորներուն* մասին: Գործին մասին իր խանդավառութիւնը յայտնելէ ետք Գեղամը կ'ըսէր նաեւ թէ մեծ յոյս ուներ որ շատ





չանցած «կը լինէի Յայրենիքում»: Չեմ գիտեր թէ ինչ ըսել կ'ուզեր ատով: Գրեցի իրեն քանի մը տող:

Կը տեսնես թէ նամակս վերածուեցաւ յօդուածի եւ տակաւին տրամադրութիւն ունիմ խօսելու: Երկու շաբաթ է գրեթէ առանձին եմ նաեւ գրասենեակին մէջ: Պրն. [Միքայէլ] Եսայեանն²⁹⁹ ու [Կորիւն] Քէշիշեանը³⁰⁰ արձակուրդի են իսկ Պրն. Կիւլպէնկեանը գործով կը գտնուի Փարիզ: Աշխարհէն, մանաւանդ հայ կեանքէն այսպէս ուղղակի կտրուած ըլլալը երբեմն անհանդուրժելի կը դառնայ, բայց ըստ երեւոյթին պէտք է համբերել սորվինք: Վերջին շրջապտոյտես հինգ ամիս եղաւ վերադառնալուս եւ... աչքս դուրսն է արդէն: Չեմ գիտեր թէ ուր կ'երթամ յաջորդ շրջապտոյտիս՝ հաւանաբար յառաջիկայ Ապրիլ-Մայիսի մէջ: Կարելիութիւններ են Յարաւային Ամերիկան, Թուրքիան եւ Պարսկաստանը: Այդ առիթով պիտի ուզեմ արձակուրդիս մէկ մասը գոնէ Լոնտոն անցընել, եթէ անշուշտ ուրիշ անակնկալներ չպատահին:

«Արեգակ»ին համար մասնաւորաբար ի՞նչ տեսակ յօդուած է որ կ'ուզես. «Յաւատամք ի մի Յայութիւն»ին նկարագրով եւ հասակով բաներ մը կրնամ դրկել եթէ փափաքիս: Տուր եթէ ունիս որոշ նիւթերու նախընտրութիւն:

Այսքան այս առիթով, սիրելի Ասատուր: Կը սպասեմ լուրերուդ: Մինչ այդ սակայն տուր մասնաւոր բարեւներս Վիվիէնին, Ալեքսեաններուն եւ պաշիկներ՝ Կարինէին ու Արմինէին լուսաշող ճակատներուն:

Սիրով՝
Վ. Յ. Մավեան

Յ.Գ. Չարեանին գիրքը չեմ ստացած տակաւին:

ՆԱՄԱԿ 16

26 Նոյ[եմբեր] 1965
Լիզպոն

Սիրելի Ասատուր,
Վերջին հետաքրքրական նամակիդ պատասխանը չէ ասիկա. այդ մասին կը յուսամ ի մօտոյ:





Երկու այս տողերը՝ խնդրելու համար որ բարի ըլլաս ներփակ նամակը առաջին առիթով հասցնել Գրիգոր Չագմագճեանին՝³⁰¹ որուն հասցէն չունիմ: Կ'ապաւինիմ հետեւաբար ազգասիրական եւ ծառայասիրական ազնիւ ոգիիդ: Կը ճանչնաս զինք կը յուսամ: Այլապէ՛ս ալ Սրբազանը [Պսակ Թումայեան] կրնայ օգտակար ըլլալ, առնուազն գիտէ Գրիգորին գոհարավաճառ, անգլիացի աներիօր խանութին ուր ըլլալը: Ձեռով մը հեռաձայնէ Գրիգորին եւ ըսէ թէ կարելոր նամակ մը ունի ինձմէ քովդ: Կ'ըլլա՞յ:

Շատ սիրով՝
Վ. Յ. Մավեան

ՆԱՄԱԿ 17

Լիզպոն, 2 Յունուար, 1966

Սիրելի Ասատուր,

Կը տեսնեմ թէ աւելի քան մէկուկէս ամիս անցած է արդէն 15 Նոյեմբեր թուակիր նամակեդ ասդին: Տարեվերջի աշխատանքները, ինչպէս նաեւ մեր *Պորտին* վերջին ժողովները, այս շրջանին մեզ չափազանց զբաղած պահեցին դարձեալ: Սեղանիս վրայ, առանց չափազանցութեան, աւելի քան 45 նամակ կայ պատասխանի սպասող: Պայմանները՝ որոնց մէջ կը թաւալին մեր ժամերը գործէն դուրս, այնպիսի ծոյլ տրամադրութիւն մը ստեղծած են մէջս ատենէ մը ի վեր՝ որ նուազագոյն ճիգ եւ շարժում պահանջող աշխատանքէն - կարդալէն - զատ կարծես ոչինչ կ'ուզեմ, կրնամ ընել: Առջի օր բազկաթոռիս մէջ նստած կը կարդայի երբ քայլ մը անդին, սեղանիս վրայի *ռատիոյն* սփռուող երաժշտական կտորը աւարտեցաւ: Յաջորդ յայտագիրը՝ կէս ժամ տեւող քաղաքական մեկնաբանութիւն մըն էր փորթուկալերէն լեզուով: Կը հաւատա՞ս եթէ ըսեմ թէ նախընտրեցի հանդուրժել այդ աղմուկը քան թէ ելլել տեղէս եւ մատի թեթեւ հպումով մը շարժել *ռատիոյն* սլաքը: Յամենայնդէպս այսօր որոշեցի նամակներէն մէկ քանիին պատասխանել անպայման: *Սիֆթաի*ը կը սկսիմ ուրեմն քեզմով:

Նախորդ նամակէս քանի մը օր ետք Շէյքսփիրի գրադարանին ղրկուելիք հատորները գացին: Նկատի ունենալով Շէյքսփիրի փորթուկալերէն լեզուով լոյս տեսած գործերուն համե-





մատաբար փոքր թիւը, բաւական ճոխ հաւաքածոյ մը եղաւ ճամբուածը: Անցեալ շաբաթ [Ռուբէն] Չարեանը հեռագրած էր ծրարներուն ապահով հասած ըլլալը հաղորդելու համար: Երէկ անձնական նամակ մըն ալ ստացայ իրմէ ուր կ'ըսէր թէ պաշտօնապէս ալ պիտի գրէր՝ քու միջոցաւ թելադրուած ձեւով, անմիջապէս որ պատրաստ ունենար ներկայացուելիք նոր գիրքերու ցանկ մը: Երբ ստանանք զայն կը կարծեմ թէ կրնամ կարգադրել որ ճամբուին ատուք եւս: Երկու առանձին ծրարներով Չարեանին ղրկեցի նաեւ *Բեկորներէն* օրինակ մը, ինչպէս նաեւ, իր փափաքին համաձայն, անցեալ տարի - պետք է ըսէի առջի տարի - Լոնտոնի մէջ տեղի ունեցած Շէյքսփիրի հանդիսութեան առիթով կարդացած զեկոյցս: Կը յուսամ թէ ողջ կը հասնին երկուքն ալ: Արդէն ստացած եմ իր *Աղամեանի Շէյքսփիրը* գործը: Ժամանակ չունեցայ տակաւին կարդալու:

Քու վերջին նամակեդ շաբաթ մը ետք էր կարծեմ որ քանի մը տող ստացայ նաեւ [Թորոս] Թորանեանէն: Ներփակած էր Գ[արեգին] Սեւունցին³⁰² *Բեկորներուն* մասին գրած մէկ գրախօսականը՝ «Գրական Թերթ»ի³⁰³ Նոյ[եմբեր]ի 19ի թիւէն: Չեմ գիտեր առիթ ունեցա՞ր տեսնելու: Թորանեանը վստահաբար քեզի ալ ղրկեց օրինակ մը իր ոտանաւորներուն նոր ժողովածուէն: Երանի թէ բանաստեղծութեան փոխարէն կեդրոնական արձակին վրայ՝ որուն մէջ աւելի շնորհալի է անկասկած:

Հաւանական հրաւերի մը մասին գրածդ կարդացի հետաքրքրութեամբ: Ինչպէս կարծեմ կ'ըսէի նախորդ նամակիս մէջ, յաջորդ շրջապտոյտս շատ հաւանաբար ըլլայ դարձեալ Մարտին կամ Ապրիլին: Նախորդ տարիներուն շրջապտոյտիս միացուցած եմ նաեւ տարեկան արձակուրդս - ամիս մը: Շատ հաւանաբար նոյնը ընեմ նաեւ այս տարի՝ եթէ մինչ այդ պատճառ մը չունենամ - եւ ասիկա յայտնի պետք է ըլլայ գոնէ մինչեւ Մարտ - արձակուրդս յետաձգելու տարուան մէջ ուրիշ յարմար շրջանի մը: Յարմար կ'ըսեմ, որովհետեւ տարուան մէջ որոշ ամիսներ մանաւանդ՝ Լիզպոն գտնուիլս անհրաժեշտ է օրինակ կրթաթոշակներու բաշխման շրջանին կամ երբ մեր միւս երկու պաշտօնակիցներէն մէկը կամ միւսը բացակայ է արձակուրդով: Այս նկատումներուն համար է որ մեր բոլոր կարգադրութիւնները այդ ուղղութեամբ կը նախատեսուին եւ կը ծրագրուին բաւական կանուխէն: Այս առթիւ **խորհրդապա-**





հաբար - գոնե մինչեւ մեր պաշտօնական գեկոյցին հրատարակուիլը - քեզի ըսեմ որ մեր *Պորտի* վերջին ժողովին կրցանք 100,000 - հարիւր հազար տոլարի - նոր յատկացում մը վաւերացնել տալ ի նպաստ Հայրենիքի գիտական եւ մշակութային հաստատութիւններուն: Մանրամասնութիւնները - տրամադրուելիք նպատակին - պիտի որոշենք հետագային: Մեզի համար կարելորդ սկզբունքային հարցն է: Կը յուսանք թէ ասիկա դուռը բացած կ'ըլլայ ամէն տարի ըլլալիք նոր, կարելորդ յատկացումներու:

Առջի օր բաւական երկար նամակ մը ստացայ Փրոֆ. Մանասէ Սեւակէն:³⁰⁴ Նախքան Հայրենիքի եւ Լոնտոնի իր այցելութիւններուն մասին մանրամասնօրէն պատմելը, կը թելադրեր որ 1-2 օրինակ *Բեկորներ* դրկեմ... Մոսկուա, Փրոֆ. Էզրաս Հասրաթեանին³⁰⁵ - ո՞վ է, ծանօթ է անունը քեզի - որ, իրենց հանդիպումին ընթացքին «Խանդավառութեամբ» յիշած է *Բեկորներուն* մասին կարդացած իր մէկ գրախօսականը եւ ուզած է գիտնալ Սեւակէն թէ ուրկէ՞ կրնայ օրինակ մը երկու ձեռք ձգել:

Արամայիս Զահանան [Միրզայեան] եկաւ, մնաց 2-3 օր ու մեկնեցաւ: Չիրար կը ճանչնայինք արդէն Երուսաղէմէն: Հակառակ անոր որ իր այցելութիւնը զուգադիպեցաւ մեր ամենէն զբաղած մէկ շրջանին, կարգադրեցի որ պաշտօնական հանդիպում մը ունենայ մեր Հայկական Բաժնի Վարչութեան - այսինքն մեզի - հետ: Իրմէ առաջ, [Բաբգէն] Ապատեան Սրբազանը³⁰⁶ դէպի Էջմիածին՝ իսկ Թորգոմ Սրբազանը [Մանուկեան]³⁰⁷ Էջմիածինէն դարձի իրենց ճամբուն վրայ հանդիպած էին Լիգայոն: Հին բարեկամներ ենք երկուքին հետ ալ: Հաճելի քանի մը օրեր անցուցինք միասին:

Կը ցաւիմ որ «Արեգակ»ին համար ճամբել խոստացած յօնուած տակաւին կարելի չեղաւ գրել՝ նամակիս սկզբնաւորութեան յիշած պատճառներու համար: Կը յուսամ թէ Նոր Տարին աւելի բարեացակամ կ'ըլլայ այս ուղղութեամբ: Երկարատեւ է աշխատակցած չունիմ նաեւ «Նայիրի»ին, «Շիրակ»ին եւ «Պայքար» եռամսեային: Ամէն պարագայի տակ, մեղքս գոնէ չափով մը քուած ըլլալու համար, ներփակ կը դրկեմ պզտիկ ոտանաւոր մը՝ որ անտիպ է տակաւին: Եթէ կը յիշես, [Աւետիս] Մետումեցին՝ անցեալ տարի դաշնաւորած կտորն է: Կրնաս յառաջիկայ թիւերէն մէկուն մէջ օգտագործել զայն... Եթէ յար-





մար տեսնես: Կը ցաւիմ անշուշտ, որ խմբագրի մտահոգութիւնդ - տեղ լեցնելու - փարատել չկարենալու չափ կարճ է: Կը յուսամ միայն, թէ ասիկա պատճառ չի դառնար՝ որ անփոյթ դասաւորումով մը կորսուի իրեն հասակակից «մահազդ»ներու, «լոյս տեսաւ»ներու կամ «րեքլամ»ներու մէջ: Ասոր առաջ-քը թերեւս կարելի ըլլայ չափով մը առնել՝ շուրջը գիծ մը դնելով:

Ծախուած *Բեկորներուն* փոխարժէքը թող մնայ քովդ - կը յուսամ թէ ապահով է - մինչեւ որ տեղաւորուին նաեւ մնացեալ քանի մը օրինակները: Եթէ յառաջիկայ մէկ-երկու ամիսներուն յայտնի ըլլայ Լոնտոն հանդիպիլս, ճամբելու պետք չի մնար արդէն, վար կը դնես, կու գամ եւ հայ գրականութեան կենացը մի լաւ *քէյֆ* կ'անենք: Այլապէս ոեւէ ատեն կարելի է կարծեմ *չէ-քով* մը փոխանցել զայն յայս կողմն աշխարհի:

Տնեցիները կը յուսամ առողջ ու հանգիստ են բոլորն ալ: Պրն. Պետրոսը [Ալեքսեան] վստահաբար քիչ մը աւելի երիտասարդացած վերադարձաւ Էջմիածնի իր այցելութենէն: Տուր ջերմագոյն բարեւներս բոլորին: Կարիւնէին ու Արմինէին պաշիկներս մի մոռնար:

Սիրով՝
Վ. Յ. Մավեան

ՆԱՄԱԿ 18

Լիզպոն, 16 Յունուար, 1966

Սիրելի Ասատուր,

12 Յունուար թուակիրդ ստացայ երէկ: Կը պատասխանեմ իսկոյն՝ մասնաւորաբար առաջին պարբերութեանդ մէջ յիշած հարցիդ - Շէյքսփիրեան հրատարակութիւններու ցանկերը պարունակող երեք հատորներուն - համար:

Շատ բնական է որ այդ հատորները չգտնես սովորական գրատուններու մօտ՝ որքան ալ ճոխ ըլլան անոնք: Նման հրատարակութիւններով - 30, 40, 50 տարի առաջ լոյս տեսած եւ մասնագետներ միայն հետաքրքրող - զբաղող մասնաւոր գրախանութներ կան որոնց ծախածը «հազուագիւտ» գիրքեր են միայն - *րէր պուքս*: Լոնտոնի եւ Օքսֆորտի մէջ մէկէ աւելի են ասոնք: Եթէ անմիջապէս պատրաստ չունին իսկ՝ կրնան գտնել





քեզի համար քանի մը օրէն: Կրնայ հաւանաբար օգտակար ըլլալ նաեւ Դոկտ. [Չարլզ] Տաուսէթը: [Ռուբէն] Չարեանին՝ նախ այս գիրքերը մեզմէ ուզելը անտեղի է: Ատիկա պիտի տայ այն տպաւորութիւնը թէ տակաւին... ուզելիքը չի գիտեր: Մինչդեռ երբ մեզի ցանկ մը կը ներկայացուի, կը նշանակէ թէ այդ հատորներուն կարիքը ունի գրադարանը որոշապէս: Չեմ գիտեր կ'ըմբռնե՞ս նրբութիւնը: Կ'ըսեմ ասոնք որովհետեւ գիտեմ թէ ինչպէս կը վերլուծենք հասնող դիմումները ամէն կողմէ: Անկէ զատ [Գալուստ Կիւլպէնկեան] Զիմնարկութիւնը, սկզբունքով, նման մանրամասնութիւններով զբաղելու ոչ ժամանակը եւ յաճախ՝ ոչ ալ դիրութիւնը ունի: Դրկուած Փորթուկալեան Շէյքսփիրներուն փնտրոտուքը - նախ ցանկին եւ ապա գիրքերուն - այստեղ բացառաբար եւ կատարած եմ անձամբ՝ գործի ժամերու ներս կամ դուրս՝ ասդին անդին իյնալով: Իրականութեան մէջ այդ բոլորը - ցանկ եւայլն - պատրաստելէ ետք է որ հարցը պաշտօնապէս ներկայացուցի մեր ժողովին՝ որպէսզի մենք ցանկ պատրաստելով չենք կրնար զբաղիլ չըսեն: Ամէն պարագայի տակ, նոյնիսկ այդ երեք հատորները այդտեղէն գտնելու պարագային՝ բաւական ժամանակ պիտի առնէ ըստ երեւոյթին մինչեւ զանոնք Չարեանին ղրկելը, ընտրութիւն կատարելը եւ մեզի ղրկելը: Թէեւ շնորհակալական հեռագիր մը ղրկած էր Չարեանը, այսուհանդերձ կը կարծեմ թէ որպէսզի աւելի ուշի մնացած չըլլայ, աւելի յարմար է որ առաջին հերթին պաշտօնական նամակով մը շնորհակալութիւնը յայտնէ, ըսէ թէ շատ կարեւոր յաւելումներ եղան ղրկուածները իրենց հաւաքածոյին վրայ, եւայլն, եւայլն, եւ աւելցնէ միեւնոյն ատեն թէ պատրաստելու վրայ է նաեւ նոր ցանկ մը որ պիտի ղրկէ ի մօտոյ, խնդրելով որ հայթայթենք զանոնք եւս: Անկէ ետք ցանկը կրնայ ղրկել ոեւէ ատեն, գետինը չափով մը պատրաստուած կ'ըլլայ արդէն: Կ'ընեմ անկէ անդին ինչ որ պետք է:

Անգլիայէն կրթաթոշակի համար կատարուելիք դիմումները պետք է ըլլան մեր Լոնտոնի գրասենեակին խողովակով: Եթէ Մարտի մէջ ներկայանալու ըլլան այնտեղ կրնան ստանալ հարցարանները: Մայիս 31էն ետք ներկայացուած դիմումները նկատի չեն առնուիր:

Զիլտային [Գալֆայեան] գրախօսականը տեսայ: Լաւ էր: Շատ խանդավառ էր մանաւանդ [Սիմոն] Սիմոնեանը այդ մա-





սին իր վերջին նամակին մեջ: Ըստ երեւոյթին Էգրաս Յասրաթեանը - որ Մոսկուայի *Նիւրոֆիսիոլոճի Ինստիթիւտին* տնօրէնն է - շփոթած եւ պատմաբան Մօրուս Յասրաթեանին³⁰⁸ հետ որ Պէյրութ է երկու տարիէ ի վեր որպէս այցելու դասախօս Յայկազեան Զուլեճի եւ [Երուանդ] Յիւսիսեան Յիմնարկի մեջ: Կը ճանչնամ անձամբ. պատուական մարդ մը. մաս կը կազմէ նաեւ «Յայրենիքի Չայն»ի խմբագրութեան:

Առջի օր յայտնի եղաւ որ յաջորդ շրջապտոյտս պիտի ըլլայ դէպի Պարսկաստան, Թուրքիա եւ Իրաք - եթէ փոփոխութեան չենթարկուի հետագային-: Ժամանակը ճշդելը ձգուեցաւ ինծի: Ծամբայ ելլեմ հաւանաբար Փետրուարի վերջը կամ Մարտի սկիզբը: Եթէ համաձայն ըլլան պիտի փորձեմ չառնել տարեկան արձակուրդս: Պետք է ըսեմ որ շրջապտոյտէն վերադառնալէս ետք 10-11 ամիս մէկ կտոր այս աքսորը... վայելելը դժուար կ'ըլլայ շատ: Չայն կիսելը կրնայ քիչ մը աւելի տանելի դարձնել կացութիւնը: Մտադիր եմ, ինչպէս կ'ըսէի, արձակուրդիս քանի մը շաբաթները անցընել Լոնտոն եւ Փարիզ: Յաւանական հրաւերի մը հանդէպ ցոյց տուած գործնական հետաքրքրութեանդ համար շնորհակալ եմ. կը յուսամ միայն՝ թէ մարդիկը որոնց կը գրես՝ չեն ունենար այն տպաւորութիւնը թէ կ'ընես ասիկա իմ թելադրութեամբ:

Սիրալիր բարեկեցութեամբ՝
Վ. Յ. Մավեան

[3.Գ.] Գրէ շրջապտոյտիս ելլելէ առաջ: Դրկէ նաեւ նոր հասցեդ՝ երբ փոխադրուիս:

ՆԱՄԱԿ 19

Լիզպոն, 6 Փետրուար, 1966

Սիրելի Ասատուր,

Յիմա որ ճամբորդութեանս թուականը որոշուած է այլեւս, կ'ուզեմ սա մնացեալ քանի մը օրերու ազատ ժամերէս օգտուելով՝ մաքրել սեղանիս վրայ, կարգ մը պարագաներու աւելի քան 6-7 ամիսներէ է վեր, առկախ մնացած հաշիւները եւ կը սկսիմ քեզմէ դարձեալ - միշտ հաճելիին տալով նախընտրու-





թիւնը - հակառակ անոր որ քուկդ վերջնագոյններէն մէկն է հասած նամակներուն:

Նախ քանի մը խօսք «Արեգակ»ի վերջին թիւին մասին որ հասաւ առջի օր: Խմբագրականդ կարդացի հաճոյքով. թելադրական էին արտայայտուած գաղափարները, լեզուն մաքուր եւ ըսուածները դասաւորուած: *Աֆերիմ*: Լաւ ըրած ես [Պենճամին] Պրիթընին³⁰⁹ յօդուածէն մասեր հայացնել տալով: Ատենին կարդացած էի գայն «Սանտէյ Թէլէկրաֆ»ին³¹⁰ մէջ եւ աւելի ետք զարմացած՝ որ մեր թերթերէն ոչ մէկը արտատպեց գայն: Զանի՞ խմբագիր ունինք արդէն որ կանոնաւոր կերպով կը հետեւի օտար մամուլին: Յետոյ անշուշտ կայ նաեւ գայն թարգմանելու պատմութիւնը: Վստահաբար շատեր հետաքրքրական պիտի գտնեն նաեւ Վաչէին [Սեմերճեան]³¹¹ տեսակցութիւնը [Մանուկ] Բարիքեանին³¹² հետ: Չհասկցայ միայն թէ յօդուածին առաջին երկու տողերը Բիւզանդիոն [Թօփալեան] զոհն են նորէն թէ Վաչէին... երկու տարիներէ ի վեր Արեւմուտք ապրած ըլլալուն: Ես, բարեբախտաբար, այս անգամ առանց լուրջ աղետի մը կրցած եմ ազատիլ Բիւզանդիոն ձեռքէն: Թէեւ պէտք է խոստովանինք թէ քերթուածը այնքա՛ն կարճ էր որ սխալ ընելու... ժամանակ չկար: Գովելի աշխատանք մըն է որ կ'ընէ «Արեգակ»ը՝ մեր ժողովուրդին, մեր պատմութեան ու մշակոյթին հետ կապ ունեցած կամ ունեցող անգլիացիներ գտնելով եւ ներկայացնելով զանոնք մեր ընթերցողներուն: Տեղեկատուութեան բաժինէն յայտնի կ'ըլլայ որ Լոնտոնի հայութիւնը... կեանք չէ ունեցած անցեալ ամիս: Ճի՞շդ է արդեօք ենթադրութիւնս:

Շրջապտոյտիս համար ճամբայ կ'ելլեմ Շաբաթ առաւօտ, Փետրուար 19ին: Անկէ երկու օր ետք, ամսուն 21ին կ'ըլլամ Պէյրութ: Բաւական երկար պիտի ըլլայ կատարելիք ճամբորդութիւնս այս անգամ: Պիտի հանդիպիմ Պէյրութ, Յալէպ - երեք օր միայն -, Իրաք - Պաղտատ, Պասրա, Զերքուկ եւ Մուսուլ. վերջին երկուքին պարագային կատարելու համար նաեւ բացումը երկու նոր վարժարաններու՝ մեր յատկացումներով կառուցուած, Պարսկաստան եւ Պոլիս: Ժամանակիս կարելորագոյն մասը պիտի յատկացնեմ Պարսկաստանին՝ հաւանաբար երեք շաբաթ: Պաշտօնական շրջապտոյտս պիտի տնէ վեց շաբաթ: Պիտի առնեմ նաեւ տարեկան արձակուրդէս - չորս շաբաթ - երեք օր մը՝ որ Աւագ Յինգշաբթիին եւ Ուրբաթին հետ ինծի





տուած պիտի ըլլայ յաւելեալ շաբաթ մը... յարտասահման: Գործի վերադարձած պիտի ըլլամ Ապրիլ 11ին: Մինչեւ մեկնումս երկու շաբաթ կայ տակաւին: Եթէ Արեւելք գտնուած շրջանիս կրնամ ուել ձեռով օգտակար ըլլալ՝ գրէ ինդրեմ մինչ այդ:

Մոռցայ ըսելու որ Շաքէ Վարսեանէն³¹³ նամակ մը ստացայ առջի օր: Կը գրէ որպէս վարիչ «Յայրենիքի Ձայն» շաբաթաթերթին Սփիւռքի բաժնին: Կ'ըսէ թէ իրենց թերթին մէջ երեւցած է գրախօսական մը Գ[եղամ] Սեւանին կողմէ, երկու արտատպումներ վերջինը Յունուար 1ի թիւին մէջ - գոր չեմ տեսած-, եւ թէ արտասահմանի հայերի համար կատարուած «հաղորդումներու խմբագրութիւնը յատկացրել է մի ամբողջ ժամ» *Բեկորներուն*: «Մշտական աշխատակցութիւն»ս կը ինդրէ թերթին համար եւ կ'ուզէ նաեւ որ նկար մը դրկեմ եւ ըսեմ թէ «ստեղծագործական ինչ ծրագիրներ ունիմ եւ ինչի՞ վրայ եմ աշխատում այժմ»: Այս մարդիկը կը կարծեն թէ արտասահմանի գրողներն ալ իրենց պէս ծրագիր կը կազմեն եւ կ'աշխատին կանոնաւոր կերպով՝ տարին կամ երկու տարին անգամ մը նոր գիրք մը նետելով հրապարակ: Ճամբայ չեւած պիտի պատասխանեմ իրեն եւ ճամբեմ մէկ - երկու կարճ, անտիպ կտորներ:

Սիրալիր բարեւներ տնեցիներուն եւ Վաչէին՝ որուն հետ, ուրախութեամբ կը լսեմ, թէ լաւ բարեկամներ էք արդէն:

Սիրով՝
Վ. Յ. Մավեան

ՆԱՄԱԿ 20

(Բացիկ)

[Թեհրան, Փետրուար կամ Մարտ 1966]

Սիրելի Ասատուր,

Բարեդէպ գուգադիպութեամբ մը Յայկին (Գալուստեան) հետ Թեհրան ենք նոյն շրջանին: Մեզի հետ ես ուրեմն յաճախ: Յիմա խմեցիք կենացդ: Մեղք որ մեզի հետ չես նաեւ *Ֆիզիքական* ներկայութեամբ:

Կարօտով՝
Վահրամ
[եւ] Յայկ





ՆԱՄԱԿ 21

(Բացիկ)

Պաղտատ, 23.3.[19]66

Ողջոյններ «հազար ու մէկ գիշերներ»ու աշխարհէն: Այստեղ եմ 3 օրէ եւ Պէյրութ կ'անցնիմ Մարտ 26ին: Պարսկաստան այցելութիւնս անցաւ հետաքրքրական: Պրն. Յ[այկ] Գ[ալուստեան]ը պատմած ըլլալու է մեր կարճ հանդիպումին մասին:

Լաւ էք կը յուսամ: Բարեւներ բոլորին: Վերջին երկտող ստացայ Լիզայոնը ձգելէս անմիջապէս առաջ: Վերադարձած կ'ըլլամ Ապրիլ 10ին եւ կը գրեմ: Մէկէ աւելի առիթներով յիշեցինք քեզ Պէյրութ եւ Պարսկաստան:

Սիրով՝

Վ. Յ. Մավեան

ՆԱՄԱԿ 22

Լիզայոն, 9 Յուլիս, 1966

Սիրելի Ասատուր,

Երկար այս լռութեան համար... Ե՛ս արդեօք քեզ թէ դո՛ւն գիս կը... մեղադրենք աւելի: Դէպքերու դասաւորո՛ւմը դարձեալ: Շրջապտոյտ, տեղեկագրի պատրաստութիւն, ընթացիկ՝ անյետաձգելի աշխատանքներ, այցելումներ, ինչպէս միշտ, առիթ չտուին աչք բանալու. եւ գիտես թէ նման պարագաներու ինչ կ'ըլլայ հետեւանքը եթէ այլապէ՛ս ալ... աչքդ բաց չէ: Մօտ ատենէն կը սկսինք համալսարանական կրթաթոշակներու բաշխման ժողովներուն՝ որոնք կրնան տեսել մինչեւ Սեպտեմբերի սկիզբները: Որպէսզի մինչեւ այն ատեն զրկուած չըլլամ քեզի գրելու հաճոյքէն՝ որոշած եմ նստիլ եւ կամուրջը նետել դարձեալ օգտուելով *ուիքէստի* յարաբերաբար ազատ ժամերէս:

Շրջապտոյտս, աւելորդ է ըսել, թէ ինչպէս միշտ, հետաքրքրական էր շատ: Եղայ Լիբանան, Սուրիա, Պարսկաստան, Իրաք եւ Պոլիս: Այս անգամ գացի մինչեւ Ուրմիոյ Լիճի շրջանը, Սալմաստ եւայլն: Տպաւորութիւններուս մասին արտայայտուիմ հաւանաբար՝ *Անկապ Օրագիրի*ս տակ, «Նայիրի»ին մէջ: Պոլիս շաբաթ մը մնացի միայն՝ պարզապէս մեր ազգային





ընդհանուր մթնոլորտը հոտուղտալու: Անհաւանական չէ որ աւելի երկար այցելութիւն մը տամ տարին չլրացած:

Պէյրութ գտնուած միջոցիս օր մը ամբողջ անցուցիւք միասին Մատենադարանի [Լեւոն] Խաչիկեանին³¹⁴ եւ [Սեն] Արեւշատեանին³¹⁵ հետ: Շատ հաճելի, բայց մանաւանդ օգտակար հանդիպում մը եղաւ: Խաչիկեանը կը զարմանար որ չէի փափաքեր անգամ մը այցելել Յայրենիք - հաւանաբար զիս նշանաւոր *կապիտալիստ* նկատելով: Իսկ Մօրուս Յասրաթեանը, որուն հետ շատ լաւ բարեկամներ ենք հիմա, կը քաջքէր զիս՝ գրեթէ նման տրամադրութիւնով մը.- «Դո՛ւք արդէօք երբ պիտի բարեհաճի՞ք Յայրենիք այցելել անգամ մը»: Նորութիւն կա՞յ համագումարի ծրագիրէն: Չեմ կրցած պատասխանել տակաւին շրջապատյոտիս նախօրեակին Ռ[ուբէն] Չարեանէն, իսկ Ապրիլի վերջերը [Թորոս] Թորանեանէն ստացած նամակներու: Այս վերջինին մէջ շատ ջերմ քանի մը տող դրած էր նաեւ Ռաֆայել Արամեանը:³¹⁶ Մեր Արան - Գալայճեանը - 1 Յուլիս թուակիր նամակի մը մէջ կը գրեր թէ Սեպտեմբերի վերջաւորութեան ապահովաբար Յայաստան երթայ «Սիոն»ի³¹⁷ կողմէ, «Էջմիածնի մէջ գումարուելիք խմբագիրներու ժողովին մասնակցելու»: Որպէս խմբագիր ի՞նչ է քո՛ւ կացութիւնդ այս առթիւ. ՉԵՆԷ «բուն» խմբագիրն է որ կը ներկայացնէ թերթդ նման ժողովներու:

Լաւ միտքս ինկաւ, պիտի մոռնայի քիչ մնաց: Նոր Ջուղա գտնուած միջոցիս հետաքրքրուեցայ այնտեղ գտնուող «Ազդարար»ի³¹⁸ հաւաքածոներով: Երկու օրինակ ունին - դժբախտաբար թէւ երկուքն ալ պակասաւոր - մէկը Վանքի գրադարանին՝ իսկ միւսը թանգարանին մէջ: Զանի մը առիթներով եղայ նաեւ Դոկտ. Կարօ Մինասեանին³¹⁹ հետ՝ որմէ, ի միջի այլոց, տեղեկացայ նաեւ թէ Սեթ Մեսրոպեանի* ունեցած հաւաքածոյին ճակատագիրէն տեղեակ կրնաք ըլլալ Պրն. Պետրոսը [Ալեքսեան] կամ... նուաստդ: Ինք կ'ենթադրէր թէ Սեթին մահուընէ ետք իր «Ազդարար»ի հաւաքածո՞ն եւս իր ունեցած միւս գիրքերուն հետ կրնար ծախուած ըլլալ քրոջը կողմէ՝ որ հիմա կարծեմ մահացած է արդէն: Պիտի խնդրեմ քեզմէ որ առաջին հերթին պահես զիս տեղեակ կացութենէն՝ եթէ ունիք որեւէ յաւելելալ ծանօթութիւն: Խորհրդապահաբար ըսեմ թէ ներկայիս

* Պետք է ըլլայ Մեսրոպ Սեթեան:





կ'ուսումնասիրենք կարելիութիւնները ամբողջ հաւաքածոն վերահրատարակելու *Ֆոթոմէքսիք* միջոցով:

Ես լաւ եմ էլի: Ամիս մը առաջ շաբթուան մը համար ճիպարալթար եւ Սպանիա գացի: Եթէ չեմ սիւալիր, կարծեմ քանի մը տող ղրկեցի քեզի անկէ՝ ըսելու համար պարզապէս թէ... միտքս ես: Պիտի հաւատա՞ս եթէ ըսեմ թէ կարօտցած եմ Լոնտոնն ու... քեզ: Երկար ատեն է՝ պաշտօնական հանդիպումներու մէջ կորսնցուցած եմ հաճոյքը մտերմիկ մթնոլորտներու: Կը յուսամ թէ քանի մը ամիսէն կը տեսնուինք անպայման: Ամէն պարագայի տակ Օգոստոսէն վերջ միայն կարելի պիտի ըլլայ ամնել արձակուրդս. ալ տեսնենք թէ ինչպէս կարելի կ'ըլլայ յարմարցնել ժամանակը: Արձակուրդէս մնացած 24 օրերուն մեծ մասը մտադիր եմ անցընելու Լոնտոն եւ թերեւս ալ քանի մը օր Փարիզ՝ միխթարելու համար այնտեղի անտէր մնացած... ծովները:

Տեսեցիներն ու դուն լաւ էք կը յուսամ: Ձերմ բարեւներ բոլորին եւ պաշիկներ անուշիկ ձագուկներուդ:

Միշտ սիրով՝
Վ. Յ. Մավեան

[Յ.Գ.] Դրկէ ձեր նոր բնակարանի հասցէն:

ՆԱՄԱԿ 23

Լիզայն, 4 Սեպտեմբեր, 1966

Սիրելի Ասատուր,

Վերջին նամակդ, 13 Յուլիս թուակիր, ինչպէս միշտ, կարդացի հաճոյքով: Ամիս մըն է արդէն սկսած ենք կրթաթոշակի բաշխման ժողովներուն եւ գլուխ քերելու ժամանակ չունինք: Առ նուազն երկու շաբաթ մը եւս կ'ուզենք աւարտելու համար քննութիւնը աւելի քան 600 նոր դիմումներու: Այս շրջանին անպակաս են նաեւ այցելուները՝ որոնց հետ ստիպուած կ'ըլլանք անցընել երեկոյեան ազատ քանի մը ժամերը: Անձնական աշխատանքի ժամանակ չկայ պարզապէս. եւ օրերը լուռ, ոտքի մատներու վրայ կ'անցնին իրարու ետեւէ՝ այնքան նման իրարու՝ որ զանազանե՛լն անգամ դժուար կ'ըլլայ յաճախ: Գալ շա-





բաթ երեք տարի կ'ըլլայ ճիշդ՝ Լիզպոն փոխադրուելու: Անհամ երեք տարիներ: Կ'ընդվզիմ երբեմն՝ երբ անդրադառնամ թե մեկ, միայն մե'կ անգամ է որ պիտի անցնինք այս ճամբէն՝ եւ թէ ինչ որ կը մեկնի իւրաքանչիւր տարիքի հետ՝ ետ չի՛ դառնար ալ բնաւ:

Հայրենիքէն ձայն չկայ տակաւին: Եթէ ճիշդ է թէ Սեպտեմբերի վերջաւորութեան տեղի պիտի ունենայ համագումարը, քանի մը շաբաթ մնաց միայն: Մեր պաշտօնակիցներէն մեկը կը պատրաստուի Հոկտեմբերին առնել տարեկան իր արձակուրդը: Գիտես թէ Հայկական Բաժնի վարչութեան մէջ երեք հոգի ենք միայն եւ կարգադրութիւնները սովորաբար կ'ըլլան այնպէս մը որ մեզմէ երկուքը գոնէ այստեղ ըլլան անպայման: Անշուշտ ես ոչինչ ըսած եմ մերիներուն իմ հաւանական մեկնումիս մասին. հարսը չգտած կարգուելու ելլելու պէս բան մը պիտի ըլլայ ատիկա:

[Թորոս] Թորանեանը Փարիզէն գրեց քանի մը անգամ՝ ըսելու համար թէ Պետհրատը որոշած է արձակ հատոր մը հրատարակել ինձմէ: Կ'աւելցնէր նաեւ թէ իրեն յանձնած են խմբագրական աշխատանքը: Կ'ուզէր հետեւաբար որ իրեն դրկէի *Բեկորներէն* դուրս գտնուող ուրիշ ալ կտորներ՝ մամուլին մէջ լոյս տեսած կամ անտիպ: Այսօր հասաւ «Սովետական Գրականութիւն»ի 7րդ համարը՝ ուր յօդուածի մը մէջ՝ Պետհրատի որոշումին ակնարկութիւն մը կ'ընէ Ստ[եփան] Կուրտիկեանը:³²⁰ Ինչպէս կ'երեւի, ծրագրին մէջ է նաեւ [Անդրանիկ] Ծառուկեանի բանաստեղծական գործերուն մեկ հաւաքածոն:

«Ազդարար»ի մասին տուած տեղեկութիւններուդ համար շնորհակալ եմ: Սկսած ենք հետապնդել ամբողջ հաւաքածոյին հրատարակութեան ծրագիրը:

Վաչէն [Սեմերճեան] երկու *քարտ* ստացայ Գերմանիայէն. հաւանաբար արդէն հասաւ Ատիս-Ապեպա: Կը սպասեմ իր նոր լուրերուն:

[Համբար] Զեքիկեանը³²¹ ըսել է զիս «խայտառակեց» այդպէս. գրականութիւն ըրեր է պարզապէս: Կը պատմեմ երբ հանդիպինք: Իր գրական ճաշակին կամ ըմբռնումներուն շատ մակերեսային ըլլալուն մասին գրած եմ կարծեմ Վաչէին, ասկէ երկու տարի առաջ: Կը յիշեմ ասիկա՝ ցոյց տալու համար թէ իր արձակած «վճիռ»էն գոյացած նախատրամադրութիւն մը չէ





ունեցածս: Երկու տարի առաջ, մեր հանդիպումին *Բեկորները* մեջտեղ չկար տակաւին, եւ այն ատեն ալ նոյն յայտարարութիւնը ըրաւ ինձի.- «Անցնող 50 տարիներուն Սփիւռքի մէջ գրական արժեքաւոր որեւէ գործ չունեցանք»: Զարցուցի իրեն թէ հետեւա՞ծ էր անցնող յիսուն տարիներուն լոյս տեսած բոլոր գործերուն: Պատասխանը ոչ էր անշուշտ, նախ՝ որովհետեւ, ինչպէս ինք կ'ըսէր, զանոնք ձեռք անցընելու պատեհութիւնը չունի, երկրորդ՝ զանոնք կարդալու ժամանակը: Բժշկական իր համբաւին կոթնած՝ ընդհանրացումներ, յայտարարութիւններ կ'ընէ գրական հարցերու մասին՝ որոնց ոչ պատրաստութիւնը, ոչ ծանօթութիւնը եւ հաւանաբար ոչ ալ ճաշակը ունի: Իր գրագետ-քննադատի համբաւը ամբողջ Ծառուկեանին յօրինած առասպելն է՝ որուն չի հաւատար նոյնիսկ ինք: Յամենայնդէպս, իր գրական պատրանքներէն մերկացած՝ շատ հաճելի մարդ է Տոքթորը: Աղուոր գիշեր մը անցուցինք այստեղ միասին ասկէ երկու տարի առաջ:

Չեմ գիտեր, Վաչէն՝ որուն կարծեմ գրած էի խորհրդապահաբար, ըսա՞նք քեզի թէ վերջին այցելութեանս, Պոլսէն միասին բերի... Պետրոս Դուրեանին ակռաներէն երկուքը եւ պզտիկ կտոր մը գանկէն: Այո, Պետրոս Դուրեանին հարազատ երկու ակռաները եւ մէկ կտոր գանկէն: Զէք Դուրեան, կրնա՞ր երեւակայել արդեօք թէ 80-90 տարի ետք իրմէ մասեր արքայի պիտի ելլէին այսպէս՝ հայ գիրով խանդավառ հա՛յ տղու մը հետ մինչեւ հեռաւոր այս ասիերը: Թէ ինչպէս ձեռք անցուցի զանոնք՝ կը պատմեմ երբ հանդիպինք:

Շրջապտոյտէն վերադառնալուս հինգ ամիս եղաւ արդէն եւ աչքս դուրսն է արդէն: Կը յուսամ կը տեսնուինք ի մօտոյ: Կուտակուած կարօտ մը ունիմ սիրելիներու, բարեկամներու, հայերու: Ըստ երեւոյթին մեր հանդիպումը Լոնտոն պիտի ըլլայ դարձեալ: Ամէն պարագայի տակ եթէ Զայաստան երթալո՞ւ ալ ըլլաս՝ կ'ենթադրեմ թէ վերադարձած կ'ըլլաս մինչեւ Զոկտեմբերի վերջը: Իսկ մինչ այդ եթէ դեպքերու ընթացքը առնէ անակնկալ ուղղութիւն, զգեստները կը պատրաստենք՝ սլաւական ծեսով պատարագներու համար: Շարժումներէդ պահէ զիս տեղեակ անպայման, մանաւանդ եթէ վերջնական ըլլայ մեկնումդ:

Տեսայ «Արեգակ»ի վերջին թիւը. բովանդակութիւնը պահ մը ենթադրել տուաւ թէ Թորանեանը խմբագրած էր զայն: Թէեւ



մէկ-երկու առիթներով՝ կարծես մոռցած առժամեայ խմբագրի իր հանգամանքը, կը խօսէր յօդուածագրի մը շէշտով: Լաւ կ'ըլլայ եթէ կարելի ըլլայ յաջողցնել տպարանի հարցը: Բաւական լայն կարելիութիւններ ունեցող ձեռնարկ մը կրնայ ըլլալ եթէ մատակարարուի ճիշդ ձեւով:

Տնեցիները կը յուսամ հանգիստ են բոլոր: Տուր ջերմ բարեւներս բոլորին: Կը սպասեմ լուրերուդ:

Միշտ սիրով՝
Վահրամ Մ.

ՆԱՄԱԿ 24

Լիզպոն, 4 Զոկտեմբեր, 1966

Սիրելի Ասատուր,

Երկար լռութիւնդ պահ մը ենթադրել կու տայ ինծի թէ ասկէ ճիշդ ամիս մը առաջ գրած նամակս կրնայ ձեռքդ անցած չըլլալ՝ նկատի ունենալով որ այդ օրերուն փոխադրուած պիտի ըլլայիք ձեր նոր բնակարանը: Չեմ գիտեր հետեւաբար թէ այս երկտողս պիտի հասնի՞ քեզի: Զիչ մնաց որ *խոճային* պէս ես ալ խնդրէի որ զիս պահէի տեղեակ՝ եթէ պատահեր որ կորսուեր նաեւ ա՛յս երկտողս:

Երկու շաբաթ է արձակուրդի է [Կորիւն] Զէշիշեանը. կը վերադառնայ յառաջիկայ երկուշաբթի օր: Առ այժմ որոշած եմ իմ արձակուրդս առնել Նոյեմբեր 1-էն սկսեալ: Չեմ որոշած տակաւին թէ ասկէ Փարիզ թէ Լոնտոն պիտի անցնիմ նախ: Անհաւանական չէ որ գործով շաբաթ մը երկու Պոլիս հանդիպելու պատմութիւն մըն ալ ելլէ Նոյն շրջանին: Ամէն պարագայի տակ պահէ զիս տեղեակ եթէ այդ օրերուն Լոնտոնէն դուրս ելլելու ծրագիրներ ունիս: Փարիզ չե՞ս հանդիպիր ԿՈՐ: Եթէ նախ Լոնտոն գամ՝ միասին կ'անցնինք անդին: Ամէն պարագայի տակ եթէ նոր տուն փոխադրուած էք արդէն ճամբէ նոր հասցեդ՝ որովհետեւ հիմա «Արեգակ»ի հասցեով ալ չեմ կրնար գրել կ'ենթադրեմ թէ:

Հայաստանէն նորութիւն չկայ. ե՛ս չունիմ գոնէ: Բեզլարին [Նաւասարդեան]³²² անձնասպանութեան անդրադարձող չեղաւ





տակաւին մեր թերթերէն: Բոլորն ալ գոհացան լուրը տալով միայն: «Նայիրի»ն յաջորդ - Զոկտեմբեր 9ի - թիւին մէջ յօդուած մը պիտի ունենայ ըստ յայտարարութեան: Ձայն չելաւ նաեւ [Թորոս] Թորանեանէն՝ որ խոստացած էր իր վերջին նամակին մէջ՝ գրել Երեւան վերադառնալէ յետոյ:

Կը գրեմ երկար երբ լսեմ քեզմէ եւ գիտնամ վստահ թէ գրածս կը հասնի ԿՈՐ ձեռքդ: Ձերմագին բարեւներ տնեցիներուն:

Սիրով՝
Վահրամ Մ.

ՆԱՍԱԿ 25

Լիզպոն, 22 Զոկտ[եմբեր] 1966

Սիրելի Ասատուր,

Յաջորդաբար ստացայ վերջին անթուակիր նամակիդ երկու *ինսթումընթները*: Առաջին էջերուն հասնելէն ետք դժուար չեղաւ ենթադրել մնացեալներուն գլխուն եկածը:

Երկար պիտի չխօսիմ: Երկու այս տողերը ըսելու համար պարզապէս թէ յառաջիկայ Շաբաթ - Զոկտ[եմբեր] 29 - ճամբայ կ'ելլեմ առտուան ժամը 8.45ին, ՄԵՐ՝ ազգային օդանաւով - TAP 450 -, Լոնտոն ըլլալու համար ձեր ժամով՝ կարծեմ 11.05ին. եթէ անշուշտ առանց փորձանքի ելլենք եւ իջնենք մանաւանդ: Տրամադրութեանս տակ պիտի ունենամ չորս լման շաբաթ: Կեցցէ... ազատութիւնը: Կը ծրագրեմ 3-4 օր մը հանդիպիլ Պելֆասթ - հինգ տարիներէ ի վեր անմխիթար մնացած ծուխերուն - իսկ վերջին շաբաթն ալ Փարիզ:

Շաբաթ օրուան օդանաւին մէջ տեղս ապահոված եմ արդէն, այնպէս որ կարգադրութիւնս վերջնական կարելի է նկատել: Եթէ պատահի սակայն որ ստիպուած ըլլամ անակնկալ կերպով փոփոխութեան ենթարկել ծրագիրս, կը պահեմ քեզ տեղեակ հեռագրաւ:

Մինչեւ մեր հանդիպումը՝ ջերմ բարեւներ ուրեմն տնեցիներուն:

Կարօտով՝
Վահրամ Մ.



ՆԱՄԱԿ 26

18 Նոյ[եմբեր] 1966, Փարիզ
Առաւօտ - ժամը 10.30

Սիրելի Ասատուր,

Երեկ, Լոնտոնի օդակայանին մէջ երկուսքի լուրջ պահեր ապրելէ ետք վերջապէս ողջ հասանք այստեղ: Ինծի ընկերացող տիկինին պայուսակը «left luggage»-էն դուրս բերելը առաւ ակնկալուածէն շատ աւելի երկար ժամանակ եւ մազ մնաց որ փախցնէինք օդանաւը: Աչքը չե՞ս սիրեր առանձնութեան, նոյնիսկ ճամբորդութեան մէջ: Վազնիվազ ի վերջոյ հազիւ նետուեցանք օդանաւէն ներս եւ... Ելանք օդը, ինչպէս կ'ըսէ Խաչեր Գալուստեանը:³²³ Զայր Գիւտը [Նագգաշեան] զբաղած էր երեկ գիշեր. տեսնուեցանք կարճ պահ մը: Պիտի հանդիպի քիչ յետոյ դարձեալ: Գիշերը անցուցի ուրեմն Սրբազանին [Սերովբէ Մանուկեան] հետ: Խօսեցանք երկար: Trustee-ները ճիշդ է որ պատասխանած են գրաւոր կերպով, ճիշդ չէ սակայն թէ մերժած են համաձայնութեան ամէն բանածեւ: Ըսած են պարզապէս, թէ չեն կրնար ընդունիլ «նահատակ» Սրբազանին պաշտօնը անորոշ ժամանակով երկարաձգելու պայմանը, աւելցնելով միեւնոյն ատեն թէ պատրաստ են միշտ համաձայնութեան մը գալու: Ըստ երեւոյթին սիսալ չէ այդտեղ ոմանց ենթադրութիւնը, թէ ոմանք մասնաւոր ջանք կը թափեն որեւէ համաձայնութիւն ձախողեցնելու համար: Յամենայնդէպս նամակը անձամբ տեսնելու առիթ չունեցայ տակաւին տողերուն ետեւ գտնուող տրամադրութիւններն ալ հետեւցնելու համար:

Բիւզանդը [Թօփալեան] լաւ է: Տպարանէն է որ կը գրեմ հիմա: «Արեգակ»ի հաշիւը չէ մաքրուած տակաւին, ինչպէս կ'ենթադրէիր: Ինք ասկէ քանի մը օր առաջ անձամբ ալ գրած է Պրն. [Զայկ] Գալուստեանին: Զետապնդէ դարձեալ: Asiatic Society-ի journal-ը պիտի փնտռէ քիչ յետոյ եւ եթէ բախտաւոր ես կը գտնէ եւ կը ճամբեմ միասին:

Նոյն պանդոկը իջայ երեկ. management-ը փոխուած է եւ մթնոլորտը անհամ: Չհաւնեցայ նաեւ եղած սենեակները: Երեկ Զայր Գիւտին հետ Լաֆայեթի վրայ ուրիշ աւելի լաւ պանդոկ մը գտանք գրեթէ նոյն գիներով եւ հաւանական է որ այսօր անցնիմ այնտեղ:



Հայաստանի Գրողներու Համագումարը, ըստաճներուն համաձայն, այսօր կամ վաղը պիտի բացուի: Ֆրանսայէն հրաւիրուած են միայն Հր[աչ] Չարդարեանն³²⁴ ու... Աւ[ետիս] Ալեքսանեանը:³²⁵ Շաբաթ մը առաջ ասկէ անցած են նաեւ [Անդրանիկ] Ճառուկեանն ու Գ[առնիկ] Ադդարեանը,³²⁶ ըստ երեւոյթին որպէս Լիբանանի ներկայացուցիչներ: Թէ ուրիշ ո՛վ գացած է չեմ գիտեր: *Իշտէ* այսպէս բաներ ... Մարտիկ աղա: Կը տեսնե՞ս ուրեմն որ զուտ գրական մտահոգութիւններ չեն որոշումները կառավարողները: Դարձեալ ըստաճներուն համաձայն այսքան ատեն յետաձգած են անոր համար որ շա՛տ դժուար գտած են որոշել թէ ո՛վքեր պէտք է հրաւիրել արտասահմանէն: Երբ ի վերջոյ կանգ առած են Ալեքսանեանի մը վրայ կը նշանակէ թէ բաւական լուրջ եւ երկա՛ր մտածած են: «Աշխարհ»ի վերջին թիւը «կուռ» խմբագրական մը ունի նուիրուած... Վիեթնամին՝ որուն համար ամերիկեան *իմպերիալիստներուն* դեմ հայ ժողովուրդն ալ իր ձայնը, բողոքի ձայնը պէտք է բարձրացնէ եղեր:

Աչքս բանալու ատեն չեղաւ տակաւին: Այսօր-վաղը հաւանաբար: Ուրբաթ կեսօրին կ'անցնիմ Միլան: Ջերմ բարեկեր Պրն. եւ Տիկ. Ալեքսեաններուն, Վիվիէնին, Սիլվիային [Ալեքսի]³²⁷ եւ մանկտուոց:

Սիրով եւ արդէն ... կարօտով՝
Վահրամ

[Յ.Գ.] 18.11.66 - 6 p.m. գրքոյկդ չգտնուեցաւ տակաւին
19.11.66 - 11 a.m. կը փնտռենք տակաւին
19.11.66 - 2 p.m. փնտռտուքը կը շարունակուի
Վերջին ժամ:- Evreka = «Asiatic Society»ն գտնուեցաւ:

Նոր պանդոկ փոխադրուեցայ երէկ կ.ե.: Աւելի գոհացուցիչ է: Երէկ գտայ նաեւ «Readers Digest»ին մէջ աշխատող բարեկամս, որ հեռաձայնի թիւը ճամբած էր: Չափազանց ուրախացայ: Այս իրիկուն քառաձայն պատարագ կայ... *չաթալ* թագով:



ՆԱՄԱԿ 27

Լիզպոն, 5 Դեկտեմբերի 1966

Սիրելի Ասատուր,

Արդեն ութը օր եղաւ Լիզպոն վերադառնալուս: Ինչպէս գիտես, նախապէս ծրագրած էի առնել Կիրակի օր Մատրիտի վրայով եկող օդանաւը՝ որ Միլանոյէն ճամբայ պիտի ելլէր կէսօրուան մօտ: Միլանոյի մեր բարեկամներուն - [Ստեփան] Սրապեաններ,³²⁸ Տոքթ. [Տիգրան] Ալեքսանեան³²⁹ եւայլն. - երկար պնդումներուն վրայ սակայն, վերջին վայրկեանին քանի մը ժամ եւս երկարեցի այցելութիւնս եւ առի երեկոյեան, Փարիզի ճամբով անցնող օդանաւը: Այդ ձեւով վեց ժամ աւելի մնացած եղայ Միլան եւ ատոր համար ալ վճարած... 30 տոլարի յաւելեալ գումար մը: Ի դեպ, եթէ ականջդ մօտեցնես՝ կրնամ կամացուկ մը ըսել որ Միլան այցելութեանս առիթով եղած ծախսերը բոլոր... մնացին իմ վրայ, գոնէ մինչեւ հիմա:

Փարիզի շաբաթս անցաւ ակնկալածես շատ, շա՛տ աւելի հաճելի: Մեղք որ Լոնտոնի օրերուս ալ մէկ մասը չփոխադրեցի այնտեղ:

Փարիզէն գրած երկտողս ստացած ըլլալու ես մինչեւ հիմա: Բիւզանդը [Թօփալեան] տեսայ ամէն օր գրեթէ: Չինք այս անգամ գտայ աւելի յոգնած եւ ծերացած կարծես: Մեռած եղբոր բացն ալ ինք կը լեցնէ հիմա տպարանին մէջ: Կը պատրաստուեր մօտ օրէն Լիբանան մեկնելու: Նկարները արդէն դրկած երցուցահանդէսի մը համար: Օգտակար փոփոխութիւն մը կ'ըլլայ իրեն համար անկասկած:

Գրողներու Զամագումարին մասին չեմ գիտեր թէ նորութիւններ ունի՞ս: Ըստ երեւոյթին, արտասահմանէն ի վերջոյ 5-6 հոգի հրաւիրած են միայն - [Անդրանիկ] Ծառուկեան, Գ[առնիկ] Ադդարեան, [Սիրան] Սեզա,³³⁰ Զր[աչ] Չարդարեան եւ անշուշտ Ալ[ետիս] Ալեքսանեան - ան ալ կացութիւնը փրկելու համար: Եթէ ճիշդ են ըսուածները, արտասահմանէն հրաւիրուելիք գրողներուն հարցը բաւական սուր վեճերու առիթ տուած է Զայաստանի մէջ: Ինչպէս միշտ, անհաւանական չէ որ դարձեալ քաղաքականութիւն խառնուած ըլլայ խնդիրին մէջ: Վստահաբար այդ պայմաններու տակ ոչ ոք հրաւիրէին արտասահմանէն՝ եթէ ամբողջ տարի մը իրենց յօդուածներուն մէջ յիշած չըլ-



լային որ մեծ թիւով գրողներ պիտի մասնակցին նաեւ արտասահմանէն: Կասկած չկայ թէ մեր մամուլին մէջ քննադատութեան բաւական լայն գետին պիտի տայ եղած *կաֆր*: Կը սպասեն անշուշտ մինչեւ որ քիչ մը անելի մանրամասն տեղեկութիւններ հասնին դուրս: Եթէ կրնաս Սիմոնին [Սիմոնեան] լեզուն բռնէ այլեւս, առատ *սերմայէ* իրեն: Այսօր հասան «Յայրենիքի Ձայն»ի եւ «Գրական Թերթ»ի թիւերը՝ ուր կը խօսուի Համագումարի բացման եւ առաջին օրուան նիստին մասին: «Գրական Թերթ»ը տուած է գրեթէ ամբողջութիւնը Եղ[ուարդ] Թօփճեանին³³¹ կարդացած երկար ճառին՝ «Արդիականութիւնը եւ մեր գրականութեան հիմնական խնդիրները», որուն մէջ ոչ իսկ պարզ յիշատակութիւնը կայ արտասահմանի գրականութեան. կարծես թէ գոյութիւն անգամ ունեցած չըլլար այս վերջինը: Հետաքրքրական պիտի ըլլայ տեսնել մնացեալ զեկոյցները: Յատկանշական է մանաւանդ Հայաստանի Կոմիւնիստական] Կուսակցութեան Կեդրոնական Կոմիտէին խօսքը՝ որ անկասկած որպէս ուղեցոյց պիտի ծառայէ ամբողջ Համագումարին: Նոյն պատմութիւնը դարձեալ սոցիալիստական *ռեալիզմի*. ոչ մէկ ակնարկութիւն հայկականութեան, արուեստի եւլն.: Անշուշտ եթէ այս բոլորը արտայայտութիւնն են ընդհանուր կեցուածքի մը, վախս այն է որ հին քաղաքականութեան պաշտպան մարդիկ կացութեան տեր կը դառնան դարձեալ հետզհետէ: Յամենայնդէպս դժուար է այս հեռուորութենէն, առանց անելի յստակ տուեալներու եզրակացութիւններու յանգիլ:

Միլան այցելութիւնս անցաւ հաճելի: Պրն. [Երուանդ] Հիւսիսեանը³³² անձամբ եկած էր օդակայան: Չինք տեսայ երեւակայածես տարիքոտ ու յոգնած անելի: Երկու անգամ ճաշեցինք միասին եւ ունեցանք 3-4 հանդիպումներ: Գիտես թէ ինչ էր ընդհանուր տրամադրութիւնս իրենց ներկայացնելիք առաջարկին մասին: Չեմ ուզեր անելին գրել այս առթիւ, ըսեմ միայն որ, ինչպէս կ'ակնկալէի, հարցը ներկայացուեցաւ... Բարեգործականեան ոճով:

Փրոֆ. [Տէյվիտ Մարշըլ] Լանկը արդէն գրեց մեզի պաշտօնապէս: Նամակին մէկ պատճենն ալ դրկած էր ինձի: Երեք տարբեր առաջարկներ ներկայացուցած էր.

ա.- 500 սթերլին՝ դէպի Հայաստան եւ Վենետիկ այցելութեան մը համար:





բ.- 500 սթերլին՝ գիրքին մեջ յաւելեալ 10 գունաւոր նկարներու համար:

գ.- 1000 սթերլին՝ հրատարակիչներուն՝ հատորը հանրութեան աւելի մատչելի գինով ներկայացնելու համար:

Ընդամենը ուրեմն 2,000 սթերլին:

Շատ հաւանականութիւն կայ որ բոլորին ալ ընթացք տանք: Ուրախ եմ որ մեր ժողովը կրցայ պետք եղած չափով խանդավառել իրմով: Իրեն մօտերս կը գրենք պաշտօնապէս երբ վերջնական ձեւի մը դնենք հարցը: Դուն, **առանց վերի մանրամասնութիւններէն տեղեակ ըլլալդ զգացնելու իրեն**, կրնաս, եթէ ուզես, առիթով մը տեսնել զինք եւ ըսել՝ թէ վերջերս ինձմէ ստացուած երկտողէ մը կ'իմանաս թէ ստացած ենք իր պաշտօնական նամակը եւ թէ հաւանական է որ ընթացք տանք իր առաջարկներուն: Այսքան միայն, ոչ աւելի ոչ պակաս: Կ'ըսեմ որ ձեռով մը տեղեկացնես իրեն, որովհետեւ ասիկա անուղղակի կերպով զինք պարտական պիտի ձգէ քեզի հանդէպ - մեր հանդիպումը կարգադրած ըլլալուդ համար - եւ բարոյական պարտք մը դնէ իր վրայ համալսարանի խնդիրը կարգադրելու համար՝ եթէ անշուշտ մինչեւ հիմա չէ կարգադրուած արդէն:

Փարիզ գտնուած միջոցիս Սերովբէ Սրբազանին [Մանուկեան] մօտ անձամբ տեսնելու առիթ ունեցայ *Թրասթի*ներուն գրած նամակը՝ որուն բովանդակութիւնը բոլորովին տարբեր է Պսակ Սրբ[ազան]ին [Թումայեան] ներկայացնել ուզածէն: Նամակը, որ յայտնապէս խմբագրուած է իրաւաբանի ոճով, ստորագրուած է [Սարգիս] Զիրքճեանին³³³ կողմէ միայն եւ կ'ըսէ պարզապէս - եւ շատ արդարացիօրէն - թէ իրենք իրաւասութիւն չունին իրենց վստահուած աւանդին հետ կապուած հարցի մը որոշումը ձգելու ուրիշի մը կամ ուրիշներու: Ճիշդ է թէ օրէնքին առջեւ, նման քայլ մը առնելով կրնան նոյնիսկ մեղադրուիլ՝ իրենց վստահուած աւանդը ապօրէն ձեռով մատակարարելու յանցանքով: Աւելցուցած են նաեւ թէ իրենց փափաքն է միշտ համաձայնութեամբ խաղաղ լուծում մը գտնել հարցին: Մինչդեռ Պսակ Սրբ[ազան]ին տարածած լուրը այն էր թէ *Թրասթի*ները բացարձակապէս կը մերժէին ամեն համաձայնութիւն իրենց նամակին մեջ եւ կ'ըսէին թէ հարցը դատարանով պիտի լուծէին միայն եւայլն: Երբ Սերովբէ Սրբ[ազան]ը հեռաձայնով յայտնած է նամակին բովանդակութիւնը Պսակ





Սրբ[ագան]ին, այս վերջինը պնդած է հեռաձայնին վրայ թե Սե-
րովբե Սրբ[ագան]ը... սխալ կարդացած է նամակը եւ կամ չէ
հասկցած անոնց ըսել ուզածը: Կասկած չկայ որ այս մարդը
ամեն զնով կ'ուզէ ձախողեցնել համաձայնութեան համար առն-
ուելիք որեւէ քայլ, գիտէ որովհետեւ շատ լաւ՝ որ համաձայնու-
թիւն մը կողմերուն միջեւ կարելի պիտի ըլլայ մի միայն... զինք
գոհելով, ուշ կամ կանուխ:

Լսած ըլլալու եք մինչեւ հիմա որ վերջ գտաւ նաեւ Փարիզի
Բարեգործականի տագնապը: Իմ Լիզպոն վերադառնալիք օրս
Յիւսիսեանն ալ Փարիզ մեկնեցաւ այնտեղի գրասենեակը
պաշտօնապէս յանձն առնելու համար ըմբոստներէն՝ որոնք
յանձնումի դրօշակը պարզեցին Սօնաքոյի դատէն իրենց կրած
նիւթական մեծ վնասէն ետք:

Մանրանկարներու ալպոմդ կ'իմանամ թէ ողջ հասած է Լիզ-
պոն՝ թէեւ տակաւին կարելի չէ եղած զայն... ազատել մաքսա-
տունէն: Կարծեմ պետք պիտի ըլլայ նոյնիսկ... մաքս վճարել:
Այս ալ մե'ր երկիրը...:

Այսքան ուրեմն այս առթիւ, սիրելի Ասատուր: Գրէ երկար, կը
սպասեմ: Մինչ այդ տուր ջերմագին բարեւներս Տեր եւ Տիկ.
Ալեքսեաններուն, Վիվիէնին, Սիլվիին [Ալեքսի] եւ պաշիկներ
բոլոր պզտիկներուն:

Սիրով՝
Վահրամ Մ.

[3.9.] Եթէ հասցեիդ մէջ փոփոխութիւն ըլլայ պահէ զիս տեղ-
եակ:

ՆԱՄԱԿ 28

Լիզպոն, 5 Փետրուար, 1967

Սիրելի Ասատուր,

Կը տեսնեմ թէ երկու ամիս անցած է արդէն Դեկտ[եմբեր] 8
թուակիր նամակիդ հասնելէն ասդին: Վերջին շաբաթներուն
կրկնապէս բեռնաւորուած էի մեր միւս պաշտօնակիցներուն
գործով կամ արձակուրդով գրասենեակէն բացակայութեան
պատճառաւ: Կիրակի օրուան յարաբերաբար ազատ ժամերէս
օգտուելով կը գրեմ հիմա:





Եթե անակնկալ փոփոխություն մը չըլլայ ծրագրիս մէջ վերջին վայրկեանին՝ յաջորդ շրջապտոյտիս պիտի ելլեմ յառաջիկայ Մարտ 18ին՝ դեպի Յունաստան, Կիպրոս, Լիբանան, Սուրիա եւ Եգիպտոս: Գրե ուրեմն անկէ առաջ: Շատ խորհրդապահաբար ըսեմ նաեւ թէ հաւանականութիւն մը կայ որ 1968ին Պրն. [Ռոպեր] Կիւլպէնկեանին հետ պաշտօնապէս այցելենք նաեւ... Հայաստան: Կրնան այնտեղէն գալիք հրաւերները պահել հետեւաբար... [Յակոբ] Նորունիներուն եւ [Ալետիս] Ալեքսանեաններուն: Ամէն պարագայի տակ այս մասին ոչ մէկ ակնարկութիւն որեւէ տեղ:

[Թորոս] Թորանեանը անշուշտ տեղեկացուց քեզի ալ թէ Փարիզ էր վերջերս: Քանի մը տող գրած էր նաեւ ինծի՝ ըսելու համար թէ ինձմէ լոյս տեսնելիք հատորը խմբագրած էր եւ յանձնած Պետհրատ: Ըստ իրեն՝ նախատեսուած տպաքանակն է 10,000: Ստեփան Սրապեանէն ստացուած երկտողէ մը կ'իմանամ թէ Փարիզէն անցած է նաեւ Միլան: Այս տղուն յաճախակի այս ճամբորդութիւնները իմ խելքիս... չեն պառկիր ԿՈՐ: Նոր Տարուան առիթով Հայաստանէն ստացուած *քարտերուն* մէջ շատ ջերմ մաղթանքներով հատ մը կար Մարո Մարգարեանէն:³³⁴ Թորոսը իր նամակին մէջ ոչ մէկ ակնարկութիւն կ'ըներ Համագումարին ու կը գոհանար պարզապէս յիշելով թէ «շատ բան ուներ ըսելիք»:

Երեկ հասաւ «Սով[ետական] Գրականութիւն»ի այս տարուան 11րդ թիւը՝ ուր երկար ուղեգրութիւն մը ուներ Անահիտ Սահիլեանը:³³⁵ Այնտեղ կը յիշէ նաեւ Լոնտոնի իրենց այցելութիւնը եւ այդ առթիւ նաեւ... քեզ: Ըստ երեւոյթին զիրենք լաւ մը պտտցուցած ես Սօհօ եւ *սթրիփթիզ* ակումբները: Իրենց մարմինները վաճառքի հանող աղջիկներուն մասին տուած բոլոր տեղեկութիւններդ հաւատարմօրէն արձանագրած է այնտեղ: Այդ յօդուածը կարդալէ ետք Լոնտոն այցելող մը առաջին հերթին քեզի պիտի դիմէ անկասկած՝ Լոնտոնը լաւագոյն ձեւով վայելելու համար:

Կարդացի Փափագին մասին գրածներդ: Չ'արժեր աւելի խօսիլ այդ մասին: Ըսեմ միայն թէ իրմէ որեւէ նամակ չեմ ստացած: Վստահաբար ինք ալ գիտէ շատ լաւ թէ ինծի նամակ չէ գրած: Ըրածը ինքնարդարացումի ձախաւեր փորձ մըն է պարզապէս: Յետոյ, այս «իմ աշակերտս եղած է»ի պատմութիւնը





խաշած դդումի համ կու տայ այլեւս: Նախ ճիշդ չէ թէ աշակերտ եղած եմ իրեն: Նախակրթարանի Գ. դասարանը եղած շրջանիս՝ ամավերջի հանդեսի մը առիթով երգ մը սորվեցուցած է ինծի: *Իշտէ պու կատար*, ո՛չ անելի, ո՛չ պակաս: Պահ մը նոյնիսկ ենթադրենք թէ աշակերտած եմ իրեն, ատիկա կը նշանակե՞ թէ երբեք իրաւունք չունիմ «մեծնալու»: Ամէն պարագայի տակ այդ մարդուն հետ իմ հաշիւս մաքրած եմ այլեւս:

Յետաքրքիր եմ գիտնալու թէ ո՞ւր հասաւ համալսարանի ինդիրդ: [Տէյվիտ Մարշըլ] Լանկը կրցա՞ւ ի վերջոյ օգտակար ըլլալ: Յաջորդիւ պահէ զիս տեղեակ անպայման: Մեր առած որոշումը իր ներկայացուցած դիմումին առնչութեամբ ատենին տեղեկացուցինք Լանկին. շատ գոհ մնացած էր: Չեմ գիտեր պատեհութիւն ունեցա՞ր զինք տեսնելու անկէ ետք: Ասկէ քանի մը շաբաթ առաջ [Անդրանիկ] ծառուկեանը - «ծ»ն գլխագիր է գրամեքենայիս համաձայն - «Նայիրի»ին մէջ հրատարակած էր իրեն գրած մէկ նամակիս այն մասը՝ ուր ի մէջ այլոց խօսած էի նաեւ Լանկին հետ ունեցած հանդիպումիս եւ իր պատրաստելիք նոր գործին մասին:

Մանրանկարչական Ալպոմը ազատագրեցինք ի վերջոյ: Կրկին շնորհակալութիւն շատ յարգի այդ նուերիդ համար: Ասկէ շաբաթներ առաջ օրինակ մը ղրկեցի *Յայերը Բիւզանդական Կայսրութեան Մէջ* հատորիկէն՝ առանց վստահ ըլլալու թէ այդ մէկն էր ուզածդ: Գրէ առանց քաշուելու եթէ այստեղէն պէտք ունենաս ուրիշ որեւէ բանի:

Ուրախ եմ որ իրեն հանդէպ ցոյց տուած ազնուութիւնդ գնահատած է Սէսիլը՝ [Քէշիշեան]³³⁶ որ, ի դէպ, գլխուս փորձանք եղաւ Լոնտոն օդակայան հասնելէ ետք: Այնտեղ՝ ի պահ դրած պայուսակը բերելը բաւական ժամանակ առաւ եւ մազ մնաց որ փախցնէինք օդանաւը: Վերջին վայրկեանին, հեւիհեւ վազելով հազիւ կրցանք նետուիլ օդանաւին մէջ՝ վրայ տալով անշուշտ օդակայանէն առնելիք սիկարէթի ու ուխտքի պաշարներս:

Մասնաւոր բարեւեր տնեցիներուն: Ի՞նչ ըրաւ, Պարսկաստան գնա՞ց Վիվիէնը:

Գրէ երկար, կը սպասեմ լուրերուդ:

Ջերմագոյն զգացումներով՝
Վահրամ Մ.



ՆԱՄԱԿ 29

Լիզպոն, 25 Փետրուար, 1967

Սիրելի Ասատուր,

Նամակներդ ստացած եմ. երկրորդդ՝ այս առաւօտ:

Մարտ 14ին տեղի ունենալիք վաճառքէն տեղեակ եմ: Շատ տխուր: Դժբախտաբար յայտնի չէ թէ ո՛վ է մեր ազգային ժառանգութեան մաս կազմող թանկագին այս հաւաքածոն *Մեղադի* դնել տուողը: Գրչագրական աշխարհին ծանօթ եղողներուն համար դժուար պէտք չէ ըլլայ ճշդել ձեռագիրներուն Երուսաղէմի Վանքին պատկանած ըլլալը: Խօսելով միայն Յեթումի Աւետարանին մասին, քեզի պէս շատեր գիտեն թէ անիկա կը գտնուի - ի՞նչ կ'ըսեմ, կը գտնուէ՛ր - Երուսաղէմ: Առիթ ունեցայ տեսնելու նաեւ Սօտըպիզին³³⁷ հրատարակած *Քաթալոկ*: [Չարլզ] Տաուսէթը կասկած չկայ թէ տեղեակ է եղածին առաջին իսկ օրէն, որովհետեւ յառաջաբանին մէջ Սօտըպիզը մասնաւոր շնորհակալութիւն կը յայտնէ իրեն՝ ձեռագիրներու ցուցակին կազմութեան բերած իր աշխատանքին համար:

Հայաստանի մէջ վերջերս լոյս տեսած՝ Լ. Ռ. Ազարեանի³³⁸ *Կիլիկեան Մանրանկարչութիւնը ԺԲ.-ԺԳ. Դարերուն* հատորը կը պրպտէի երէկ: 108րդ էջին վրայ յստակ կերպով յիշուած է *քաթալոկ*ին մէջ երեւցող առաջին երկու - կարեւորագոյն - Աւետարաններուն - որոնցմէ մէկը Յեթումինն է - Երուսաղէմ գտնուիլը որպէս թիւ 2660 եւ թիւ 251 ձեռագիրներ: Լոյս տեսած զանազան ձեռագրաց ցուցակներէն ստուգել դժուար պէտք չէ ըլլայ միւս ալ հատորներուն ինքնութիւնը: Ըստ երեւոյթին կասկած չկայ թէ Երուսաղէմէն եկած ձեռագիրներ են բոլորն ալ, բայց թէ ինչպէ՞ս հասած են այստեղ՝ որոշապէս յայտնի չէ տակաւին, թէեւ մեր հայ ներկայ իրականութեան եւ զայն կազմող մարդերուն ծանօթ եղողի մը համար դժուար պէտք չէ ըլլայ գտնել այդ «ինչպէս»ին պատասխանը:

Լաւ ըրած ես պէտք եղած տեղերը հեռագրելով՝ հեռախօսելով: Կ'արժէ որ հարցը ժամ առաջ հրապարակուի նաեւ մեր մամուլին մէջ: Ինչո՞ւ քանի մը տող չես ճամբեր թերթերուն, ի պահանջել հարկին ծածկանունով: Ի վերջոյ, ժողովուրդին արդար իրաւունքն է տեղեակ ըլլալ կացութենէն:

Վերի տեղեկութիւններուն ինձմէ եկած ըլլալը թող մնայ քե-



զի միայն եւ որեւէ նորութիւն ունենալու պարագային զիս ան-
միջապէս պահէ տեղեակ ԱՆՊԱՅՄԱՆ: Կարելոր է: Քեզի չափ
եւ անելի վրդովուած եմ նաեւ ես: Այսքան սրբապղծութիւն ինչ-
պէ՞ս կրնան գործել ՅԱՅ մարդիկ:

* * *

[Տեյվիտ Մարշըլ] Լանկը ատենին գրած էր մեզի իր դասա-
խօսութեան մասին, իսկ քանի մը օր առաջ «Աշխարհ»ին մէջ
կարդացի թղթակցութիւնդ: Արիսին աղջկան արձանագրած
յաջողութեան մասին ճամբած երկտողիդ ալ հանդիպած էի
արդէն անցեալ շաբաթ... Պոլսոյ «Ժամանակ»ին մէջ: Կը տես-
նե՞ս թէ որքան *ափ թու տէյթ* է հայ կեանքին մասին ունեցած
ծանօթութիւնս:

Առջի շաբաթ Ստ[եփան] Ալաճաճեանէն շատ ջերմ նամակ
մը ստացայ: Ըսելէ ետք թէ գիրքս 10,000 տպաքանակով Յուն-
ուար 25ին արդէն իջած էր տպարան, կը հետաքրքրուէր գիտ-
նալու համար թէ ի՞նչ էին կարելիութիւնները Խորենացիի
Պատմութիւնը Եւրոպական քանի մը լեզուներու թարգմանելու
եւ համապատասխան երկիրներուն մէջ հրատարակելու մին-
չէւ 1970՝ երբ Հայաստանի մէջ պիտի տօնեն իր ծննդեան
1560ամեակը: Չեմ պատասխանած տակաւին:

Մինչէւ Մարտ 18 այստեղ եմ դեռ: Գրէ ուրեմն, կը սպասեմ
լուրերուդ:

Քոյդ՝

Վ. Յ. Մավեան

ՆԱՄԱԿ 30

Լիզպոն, 26 Փետրուար, 1967

Կես գիշեր

Սիրելի Ասատուր,

Ասկէ քանի մը ժամ առաջ քեզի ուղղուած նամակ մը թղթա-
տարին յանձնեցի արդէն: Ասկէ ի վեր դեպքերու դասաւորումը
կը ստիպէ որ այս երկտողն ալ գրեմ հիմա եւ ճամբեմ *էքսքրէս*





խնդրելու համար քեզմէ որ **անմիջապէս** Սօտըպիզի *քաթալոն-կէն* օրինակ մը գնես իմ հաշուոյս եւ **օդային թղթատարով**, *էքս-քրէս*, ճամբես Պրն. Ալէք Մանուկեանին՝ հետեւեալ հասցեով.

Mr. Alex Manoogian

1300 Lafayette East

Apt. 2707

Detroit, Michigan, U.S.A.

Այդ առթիւ ըլլալիք ծախսերը կը ճամբեմ յետոյ:

Մի մոռնար որ այս մասին քեզմէ գատ ՈՉ ՈՔ պէտք է գիտնայ:

Չերկարեմ աւելի որպէսզի իսկոյն իջնեմ քաղաք եւ այս ժամուն բաց միակ նամակատունը յանձնեմ երկտողս:

Ջերմօրէն՝

Վահրամ

[Յ.Գ.] Պահէ գիս տեղեակ երբ ճամբես catalogue-ը: Խնդրեմ ըրէ ասիկա անմիջապէս. կարելոր է շատ:

ՆԱՄԱԿ 31

18 Մարտ [19]67

Փարիզ (Օռլի)

Սիրելի Ասատուր,

Չեմ գիտեր թէ ձայնդ ինչո՞ւ յանկարծ կտրուեցաւ: Վերջին երկու շաբթուան անցուդարձերուն հետեւեցանք մամուլէն որքան որ կարելի էր: Մեր թերթերը տակաւին սուտ-խենդ ձեւացած... գող կը փնտռեն: Երուսաղէմի յայտարարութիւններուն մէջ «1952էն ետք»ի ակնարկութիւնը կամ առարկութիւնը... թուքով կը փակի: Երբ անկէ ետք այդ ձեռագիրները մէկէ աւելի անձեր տեսած են: Ասոնց շարքին պէտք է ըլլայ նաեւ [Charles] Dowsette-ը որ 1963ին բաւական ժամանակ անցուց Երուսաղէմ ձեռագիրներ ուսումնասիրելու, մանրանկարներ լուսանկարելու: Յապա՞ [Լեւոն] Խաչիկեանը որ 1966 Փետրուարին այնտեղ էր: Ինչ որ է, այս բոլորը գիտես հաւանաբար ինձմէ լաւ: Կարելորդ այն է, որ ձեռագիրները վերադարձան իրենց տեղը: Զիչ առաջ օդանաւին մէջ առիթ ունեցայ երեկուան Daily Telegraph-ը տեսնելու: Խորիր-





դաւոր սոր քայլ մըն ալ այս չէքը կեցնելը: Չեմ գիտեր թէ այս սոր քայլերը քիչ մը աւելի կը նեղցնե՞ն արքանին բերանները մեղաւորին շուրջ:

Քառորդ ժամ առաջ հասայ այստեղ եւ տասը վայրկեանէն կ'առնեմ Աթէնք մեկնող օդանաւը: Մարտ 22ին, Չորեքշաբթի օր կ'անցնիմ Կիպրոս, իսկ Մարտ 25ին, Շաբաթ (կարծեմ ճրագալոյց է) կ'ըլլամ Պէյրութ՝ ուր պիտի մնամ մինչեւ Ապրիլ 17-18 նախքան Եգիպտոս անցնիլս: Ապրիլ 25-26ին եթէ կարենամ ձեւի մը բերել հաւանաբար ողջոյն մը ըսեմ նաեւ Փարիզին: Գրէ Պէյրութ հետեւեալ հասցեով՝

Mavian
c/o Calouste Gulbenkian Foundation
Riad Solh Street,
Stephan Building
Beirut

Պէյրութ գտնուած միջոցիս քանի մը օր պիտի հանդիպիմ նաեւ Յալէպ եւ Դամասկոս:

Այսքան սիրելի Ասատուր: Ներողամիտ եղիր նամակի թափթփածութեան: Պէտք է աճապարեմ աղջիկը կը յայտարարէ օդանաւին թիւը:

Կարօտով՝
Վահրամ

ՆԱՄԱԿ 32

(Բացիկ)

[Պէյրութ, 5 Ապրիլ, 1967]

Փարիզի օդակայանէն ճամբած երկտողս ստացած ըլլալու ես: Ս[ու]րբ քաղաքէն հրապարակուած պաշտօնական, պետական հաղորդագրութիւնը տեսար հարկաւ: Հարցը ըստ երեւոյթին հեռու է փակուած ըլլալէ: Ամէն տեղ կատրած է ժողովուրդը եւ միտքերուն մէջ նուազագոյն կասկածը անգամ չկայ գողերուն իսկութեան մասին: Հետեւէ «Նայիրի»ներուն: Մամուլը գրեթէ նոյն ոգիով կը հետապնդէ հարցը եթէ կ'ես ճամբան... «*չամուրը պառկող*» չըլլայ: Չէ՞ որ դրամը ամէն բան կրնայ գոցել տալ:

[Վահրամ]



ՆԱՄԱԿ 33

Լիզայն, 7 Մայիս, 1967

Սիրելի Ասատուր,

Շաբաթ մը եղաւ արքայի վերադառնալուս, եւ տակաւին ինքզինքս չեմ գտած՝ բացակայութեանս հասած 37 նամակներէն գոնէ կարելորդներուն պատասխանելու համար: Վաղուրն է պէտք է սկսիմ նաեւ տեղեկագրիս պատրաստութեան: Նկատի ունենալով սակայն վերջին նամակիդ - ստացած եմ նաեւ Պէյրութ ճամբած երկտողդ - մէջ յիշուած հարցին կարելորդութիւնը, առաջին պատեհութիւնը կ'ուզեմ օգտագործած ըլլալ եւ գրել քեզի:

[Երկրըն] Անտերսընին³³⁹ պատրաստելիք գիրքին համար հաւանական չէ որ Յիմարկութիւնը որեւէ օժանդակութիւն կարենայ ընել, նախ, ինչպէս դուն ալ կ'ենթադրես որովհետեւ գրական գործ մըն է ինդրոյ առարկան, եւ երկրորդ - մեզի համար աւելի կարելորդ - քաղաքական բնոյթ ունեցող գործ մը՝ որմէ, սկզբունքով միշտ հեռու պէտք է մնայ Յիմարկութիւնը: Ինչ կը վերաբերի դասախօսութիւններուն համար ակնկալուած օժանդակութեան, անպատեհութիւն մը չկայ, կը կարծեմ, որ պաշտօնապէս գրէ մեզի Պրն. Ռ[ոպեր] Կիւլպէնկէանին ուղղուած նամակով մը, բացատրէ ծրագիրը կարելի մանրամասնութեամբ, տեղեկութիւններ տայ իր ակադեմական պատրաստութեան, անցեալի գործունեութեան եւ հայերու հետ ունեցած կապին մասին, յիշելով միեւնոյն ատեն յստակ կերպով մեզմէ ունեցած ակնկալութիւնը: Թող ընէ ասիկա առանց վստահութիւնը ունենալու թէ մեր պատասխանը կրնայ դրական ըլլալ անպայման: Ճիշդ պիտի չըլլայ զուգահեռ մը գծել Անտերսընի մը եւ [Տէյվիտ Մարշըլ] Լանկին՝ որուն Լոնտոնի համալսարանին մէջ ունեցած դիրքը բաւարար յանձնարարական մըն էր ինքնին իր գիտնական մարդու կարողութիւններուն: Եթէ որոշ է արդէն Անտերսընին Յայաստանէն հրաւիրուիլը՝ թող այդ եւս յիշէ նամակին մէջ, կրնայ օգտակար ըլլալ: Անշուշտ իր պաշտօնական գիրին մէջ ոչ մէկ ակնարկութիւն իմ կողմէ եղած թելադրութեան մասին: Քանի որ «Յայաստանի բարեկամներու» վրայ ենք, յարմար առիթով մը կամացուկ մը հասկցուր Լանկին որ մեզի գրած պաշտօնական նամակներէն օրինակ մըն ալ ին-



ծի դրկելու պէտք չունի, որովհետեւ բնագիրը կը տեսնեմ արդէն անպայման: Կ'ըսեմ ասիկա, որովհետեւ ամէն պաշտօնական նամակի մէջ կ'ըսէ թէ այդ նամակէն օրինակ մըն ալ ինծի դրկած է առանձին. գիտես թէ որքան դիւրագգաց կ'ըլլայ յաճախ մարդոց - ի շարս որոնց նաեւ մեր պաշտօնակիցներուն - փառասիրութիւնը: Այս վերջին մասը Լանկին յիշելու պէտք չկայ անշուշտ, քեզի համար միայն:

Պէյրուս գտնուած միջոցիս երեք առիթներով ճաշի միասին եղանք Եղիշէին [Պատրիարք Տէրտերեան] եւ Շահէին [Սրբազան Աճեմեան] հետ. ներկայ էին նաեւ Խորէն Կաթողիկոսը [Բարոյեան]³⁴⁰ եւ ուրիշ 3-4 եպիսկոպոսներ: Աւելորդ է ըսել թէ Եղիշէն Անթիլիաս իջած էր: Բայց այս մասին ուրիշ առիթով: Լիբանանի, ինչպէս նաեւ մեր միւս գաղութներուն մէջ ժողովուրդը - հասարակ արհեստաւորէն մինչեւ գիտնականը - կատողած է պարզապէս եղածին համար եւ կը խօսի **ԻՐ** ձեռագիրները ծախողներու մասին: Կը լսեմ թէ Տիկ. Մանտրիկեանը Լոնտոն է արդէն՝ դատական հետապնդումի կարելիութիւնները ուսումնասիրելու համար: Հասկնալի է Վեհափառին [Վազգէն Ա. Պալճեան] մտահոգութիւնը - յառաջ գալիք բարդութիւններու հաշույն - գողերուն փաստերու հիման վրայ երեւան գալու պարագային: Միւս կողմէ դժուար թէ կարելի ըլլայ միջոցներ - դուրսէն ստուգող մարմին կազմել եւայլն - ձեռք առնել նման ուրիշ ալ դէպքերու առաջքը առնելու համար ապագային: Եղիշէն, անշուշտ անպաշտօն կերպով եղած այդ առաջարկները նկատի ունենալով կ'ըսէ թէ դուրսէն ոչ ոք իրաւունք ունի միջամտելու՝ որովհետեւ, իբրեւ թէ Յորդանանի կառավարութիւնը ըսած է թէ Վանքը օրինաւոր տերն է միայն իր ունեցած գանձերուն՝ որոնց իրաւական տերը Յորդանանի կառավարութիւնն է միշտ:

Լոնտոնի եկեղեցական ներքին տագնապին հաւանական լուծումի մը կարելիութիւններուն մասին լսեցի անցեալ շաբաթ Փարիզ գտնուած միջոցիս: Լսեցի նաեւ որ Փափազը պատրաստութիւններ կը տեսնէ Խորէն Կթղկ. [Կաթողիկոս]ը շուքով ընդունելու՝ հակառակ *Թրասթի*ներու փափաքին: Ծի՞շո՞ է: «*Րոյթըր*»ը Վատիկանէն տուած լուրով մը կը հաղորդէր երկէ թէ Յոյն Օրթոտոքս եւ Անկլիքան եկեղեցիներու պետերուն Պապին [Պօղոս Զ.] հետ ունեցած հանդիպումներէն ետք՝ յառաջի-





կայ Երկուշաբթի Պապին պաշտօնական այցելութիւն մը պիտի տայ նաեւ Հայ Օրթոտոքս Եկեղեցիին **ՊԵՏԸ**: Խորէնը Հինգշաբթի Լիզպոն կը հասնի երկու գիշերուան համար նախքան Լոնտոն անցնիլը: Գրէ թէ ինչ է կացութիւնը այդտեղ: Իսկ ձեռագիրներու հարցին առնչութեամբ փորձէ կանոնաւորապէս հետեւիլ «Նայիրի»ին որ կրնայ նոր բան մը ունենալ ըսելիք:

Կը տեսնեմ որ էջս լեցուեցաւ արդէն մինչդեռ ըսելիք բաւական բան եւ մանաւանդ խօսելու ախորժակ ունիմ տակաւին: Մնացեալը յաջորդիւ:

Տնեցիները լաւ են կը յուսամ: Տուր ջերմ բարեւներս բոլորին:
Սիրով՝
Վահրամ

ՆԱՄԱԿ 34

Լիզպոն, 27 Մայիս, 1967

Սիրելի Ասատուր,

Երեք շաբաթ անցաւ վերջին նամակէս ասդին՝ բայց տակաւին ոչ մէկ ձայն քեզմէ: Կը սպասեի մանաւանդ որ այս օրերուն քանի մը տող հասներ քեզմէ անպայման՝ Խորէն Կթկ. [Կաթողիկոս]ին [Բարոյեան] այցելութեան մասին կարգ մը տեղեկութիւններ տալու համար: Պապին [Պօղոս 2.] տուած այցելութիւնը բաւական աղմուկ հանեց իտալական եւ միջազգային մամուլին մէջ: Չարմանալի է որ անգլիական թերթերը չյիշեցին նոյնիսկ թէ Լոնտոն է. ե՛ս գոնէ չհանդիպեցայ իմ տեսած թերթերուս մէջ: Գրէ ինծի թէ ի՛նչ էին ժողովուրդին ընդհանուր տրամադրութիւնները: Ի՞նչ քաղաքականութիւն էր տակաւին՝ Պսակին [Սրբազան Թումայեան] հարցին մէջ մտնելը, մինչեւ օդակայան երթալը, եւայլն: Մեր թերթերուն մէջ ալ բան չերեւաց տակաւին, միայն առջի օր «Յառաջ»ին մէջ քանի մը տող կար Կիրակի օր մատուցած իր պատարագին եւ ի պատիւ իրեն տրուած ճաշկերոյթին մասին՝ որուն իբրեւ թէ անելի քան 400 հոգի ներկայ եղած են: Գիտեմ թէ Վազգէն Վեհափառը [Պալճեան] բաւական վրդովուած էր այս այցելութիւններով: Չարմանալի պիտի չըլլայ եթէ Լոնտոնը Անթիլիասի ամենէն կարեւոր





թիրախը ըլլայ այս օրերուն, մասնաւորաբար երբ վերջնական է այլեւս Փափագին մեկնումը: Գրե՛ նաեւ թէ ի՞նչ կարգադրութիւն եղած է իր յաջորդին մասին: Ի՞նչ դիրք բռնեցին *Թրասթի*-ները Խորէնին հանդէպ: Տուր այս տեղեկութիւնները կարելի մանրամասնութեամբ եւ ճշգրտութեամբ. կարելոր էն եւ կրնան օգտակար ըլլալ: Գրե՛ անմիջապէս այս բոլորին մասին եւ ճամբէ *ԷՔՄՐԵՄ*:

Ի՞նչ լուր քեզմէ. սկսա՞ր համալսարանի դասերուն:

Տնեցիներուն տուր ջերմ բարեկերպ:

Միշտ սիրով՝
Վահրամ

[Յ.Գ.] Նորութիւն կա՞յ ձեռագիրներէն: Շահէն [Սրբազան Աճեմեան] Ապրիլի վերջերը Լոնտոն հանդիպած է կարծեմ Սօտրպիզին հետ տեսակցելու համար դարձեալ: «Անանուն» վաճառողին անունը ձեռք ձգելու աշխատանք կը տարուի՞ տակաւին թէ այդ ճակատի վրայ հարցը փակուած է արդէն:

ՆԱՄԱԿ 35

Լիզպոն, 22 Յուլիս, 1967

Սիրելի Ասատուր,

Երկար ատեն է կ'ուզեմ գրել քեզի, մի՛շտ ալ սակայն արգելք մը կ'ելլէ դիմացս, այս շրջանին մանաւանդ՝ երբ անպակաս են անակնկալ այցելուները՝ որոնմցէ մեկուն համար ըլլալիք ինդրանքի մը առիթով է որ կը գրեմ քանի մը այս տողերը մասնաւորաբար:

Բնիկ լիբանանցի, Պրիւքսէլ հաստատուած, ներկայանալի, [Նշան] Փալանճեան ճեմարանի³⁴¹ շրջանաւարտներէն, դաշնակցական, Լուվէնի համալսարանէն վկայեալ քիմիագետ եւ արդէն քառասունի դներուն մօտեցող օրիորդի մը - Այտա Մաթոսեան - մասին է որ կ'ուզեմ գրել: Իրեն առաջին անգամ ծանօթանալու առիթ ունեցայ այստեղ, երկու տարի առաջ: Մօտիկ բարեկամ է այստեղ պետական շրջանակներու մէջ շատ ծանօթ քանի մը ընտանիքներու - կարծեմ նախկին դասընկերներ եղած են Պելճիքա - որոնց մօտ կու գայ անցընել իր արձակուր-





դին մեկ մասը քանի մը տարին անգամ մը: Ինք լեզուանի, ճաշակի տեր եւ շատ մարդամօտ ու ծառայասեր աղջիկ մըն է... գէթունցի հօր գաւակ: Ծնողքը մեռած են երկուքն ալ: Կը լսեմ թէ Պրիւքսէլի մէջ իր պայմանները լաւ են շատ: Յամենայնդէպս այս ծանօթութիւնը՝ անցնելու համար բուն ըսելիքիս: Երէկ միասին էինք օրիորդին հետ եւ խօսակցութեան ընթացքին ըսաւ թէ «կամչնայ» աւելի քան 12-13 տարի Եւրոպա բնակելով հանդերձ Լոնտոնը տեսած չըլլալուն համար: Յայտնի եղաւ որ գլխաւոր պատճառը Լոնտոնի մէջ ո՛չ մէկ ծանօթ ունենալն է, գոնէ մէկը, ինչպէս ինք կ'ըսեր, որ ուղղութիւն տայ իրեն կարճ այցելութեան մը առիթով ժամանակը ամենէն արդիւնաւոր կերպով գործածելու համար: Աւելորդ է ըսել թէ անմիջապէս դուն ինկար միտքս, մանաւանդ որ տակաւին թարմ է Անահիտ Սահինեանին գրած յօդուածին տպաւորութիւնը: Ըսի իրեն որ շատ մօտիկ բարեկամ մը ունիմ որ վստահ եմ թէ պիտի հաճոյքով ուզէ օգտակար ըլլալ իրեն: Խանդավառուեցաւ: Խոստացայ անմիջապէս գրել քեզի քանի մը տող: Եթէ քեզմէ լսելէս ետք վերջնականապէս որոշէ հանդիպիլ Լոնտոն, ասկէ ճամբայ պիտի ելլէ Յուլիս 31ին կամ Օգոստոս 1ին, Երկուշաբթի կամ Երեքշաբթի օր եւ Լոնտոն պիտի մնայ 48 ժամ միայն ամենէն շատը, որովհետեւ անկէ երկու օր ետք, Յինգզաբթի օր պետք է վերադարձած ըլլայ Պրիւքսէլ:

Արդ, կրնա՞ս այդ երկու գիշերներուն համար տեղի յարմար կարգադրութիւն մը ընել: Անշուշտ նախընտրելի պիտի ըլլար ձեր շէնքերէն մէկուն մէջ սենեակ մը կարգադրել... *փարայով* հարկաւ: Այլ խօսքով... առաջին յաճախորդն է որ կը դրկեմ քեզի՝ գիտնալով հանդերձ որ երկու օրը շատ կարճ ժամանակ է իմ կարգիս... *քովիսին* մը պահանջելու համար: Իսկ այդ անհրաժեշտ կարգադրութենէն ետք եթէ կարենաս իր հասնելէ ետք ալ օգտակար ըլլալ իրեն, կարգ մը ուղղութիւններ, բացատրութիւններ ալ տալ տեղերու մասին եւայլն, մեծապէս շնորհակալ ձգած պիտի ըլլաս զինք եւ զիս: Եթէ քեզմէ գալիք պատասխանը - որ կը յուսամ թէ կը դրկես առաջին հերթին - դրական ըլլայ, քեզի աւելի ետք հեռագրով կը տեղեկացնենք իր ժամանումին մանրամասնութիւնները, այն ատեն կրնաս թերեւս *թերմիսալէն* առնել զինք: Մէյ մը որ զիրար գտնեք մնացեալը կարգադրել դժուար չըլլար վստահաբար: Կը





խնդրեմ ուրեմն որ անմիջապես երկու տող մը ճամբես ինծի՝ նախ յանդորրութիւն մտաց եւ ապա՝ որպէսզի աղջիկն ալ ըստ այնմ ընէ իր *վիզայի* եւ այլ կարգադրութիւններ: Հաւանաբար [Թորոս] Թորանեանն ալ հասած ըլլայ այդ օրերուն արդէն եւ միասին լաւ ժամանակ մը կ'անցընէք... զիս յիշելով: Երեկ ըսի օրհորդին որ վաղն իսկ կը գրեմ բարեկամիս - որուն գովքը արդէն հիւսած եմ - եւ քանի մը օրէն պատասխանը կը ստանանք անպայման: Նայէ որ չխայտառակես զիս ուրեմն:

* * *

Հետեւցնելով Պոլսոյ թերթերէն, Վեհափառին [Վազգէն Ա. Պալճեան] ժընեւ այցելութիւնը բաւական խանդավառութիւն ստեղծած է: Չեմ գիտեր ինչ չափով ճիշդ էր այն տարածայնութիւնը՝ որուն համաձայն ժընեւ կը սպասուէր նաեւ Շահէն [Սրբազան Աճեմեան]: Երեկ Թորգոմ Սրբազանէն [Մանուկեան] երկտող մը ստացայ: Ժընեւէն *փոստ* ձգած է անցեալ Չորեքշաբթի եւ կ'ըսէ թէ կես ժամէն կը մեկնի Թել Ավիւ, վստահաբար Երուսաղէմ հանդիպելու համար: Վերադարձի ճամբուն վրայ յառաջիկայ Երեքշաբթի երկու գիշերուան համար, առիթէն օգտուելով պիտի հանդիպի նաեւ Լիզպոն որպէսզի միասին անցընենք: Կ'ենթադրեմ թէ բաւական նորութիւններ կ'ունենայ տալիք: Չեմ գիտեր թէ Երուսաղէմի իր այցելութիւնը անձնակա՞ն թէ պաշտօնական բնոյթ ունի: Հաւանաբար երկրորդը: Ձեռագիրներու հարցին առջութեամբ փորձէ անպայման աչքէ անցընել «Նայիրի»ի անցեալ՝ բայց մանաւանդ յառաջիկայ շաբթուան թիւերը:

Թորանեանը իր վերջին նամակին մէջ կ'ըսէր թէ Յուլիսի վերջերը Լոնտոն պիտի ըլլայ: Անշուշտ ան ալ բաւական բան պիտի ունենայ պատմելիք: Անցեալ Փետրուարին երբ Փարիզ էր, ինդրեցի իրմէ որ Երեւան վերադարձին բարի ըլլայ ինծի ղրկել կամ ղրկել տալ Կոմիտասի բազմաձայն խմբերգներուն լաւագոյն նմոյշներէն՝ Լիզպոնի ռատիոկայանէն ներկայացուելիք հայկական երաժշտութեան նուիրուած յայտագրի մը համար՝ որ մտադիր էի պատրաստել անմիջապես որ կարենայի ձեռք ձգել... Երեք նալերը եւ ձին, այսինքն հարկ եղած ձայնապնակները: Երեւան վերադարձին Թորանեանը, իրեն յատուկ հաճոյակատարութեամբ մը ինդրանքս իսկոյն կը փոխանցէ Մշակութային Կապի Կոմիտէին: Վերջապէս, անցեալ





ամիս, 5 ամսուան սպասումէ մը ետք Մարո Մարգարեանին ստորագրութեամբ - որպէս արուեստի բաժնի պատասխանատու - *սթէսիլ* եղած, անթուակիր երկտող մը եկաւ ըսելու համար որ իմ անունիս ժողովրդական երգերու ձայնապնակներ ղրկած են: Վերջապէս հասաւ նաեւ ծրարը՝ որուն վրայ առանց անունիս, գոհացած էին միայն Զիմարկութեան հասցէն գրելով, ենթադրելով կ'երեւի որ մեր առաջնորդարաններուն պէս կազմակերպութիւն մըն է Զիմարկութիւնը, առանց անդրադառնալու որ պաշտօնէութեան թիւը 750ն ալ կ'անցնի ներկայիս: Ինչ որ է, ձեռով մը ազատագրեցինք ծրարը, մեծ խանդավառութեամբ եւ անհամբեր բացինք զայն: Բովանդակութիւնը.- 78 թուումով 6 հատ *չարիտուտ* ձայնապնակ, կեսը տաւուլ-գումնա իսկ մնացեալն ալ... *Էսթրատային* կտորներ, իմա՝ թանկօ-մանկօ: Զինգ ամիս սպասելէ ետք երբ պաշտօնական մարմնի մը կողմէ ղրկուածները կ'ըլլան այսքան անհամապատասխան անգամի մը համար ըրած խնդրանքիդ, ըսէ նայիմ ի՞նչ կ'ընես եթէ դուն ըլլաս: Ես՝ գիտես, անմիջապէս... հեռագիր կը քաշեմ: Մեր բարեկամները մեզի վարժեցուցած են ատոր: Այս պարագային չըրի անշուշտ. մէկական նամակ գրեցի սակայն Թորոսին՝ որ եղածին մէջ ոչ մէկ յանցանք ունէր - եւ Մարո Մարգարեանին՝ որ հաւանաբար... լուր չուներ եղածէն: Զիմա միտքեդ կ'ըսես անշուշտ թէ ուր որ *թէրս* բան մը կայ կ'երթայ-կու գայ ինձի կը պատահի: Երկու օր առաջ մէկական նամակ ստացայ Թորանեանէն եւ Մարո Մարգարեանէն: Գործուած սխալը պիտի փորձեն սրբագրել եղեր: Վերջինը, խօսելով *Բեկորներուն* Զայաստանի մէջ գտած ջերմ ընդունելութեան մասին՝ կ'աւելցնէր.- «Ժամանակն է որ այցելէք Զայրենքիս: Զաւանաբար դեռ բոլորը լաւ չեն պատկերացնում թէ որքան ջերմ ու խորը զգացող միջավայր կայ այստեղ հայ գրողի համար»: Կարծես թէ Զայրենիքիս չենք այցելէր ԿՈՐ որովհետեւ չենք կրնար ԿՈՐ պատկերացնել այդ ջերմ միջավայրին գոյութիւնը այնտեղ: Զա, Զայրենիք ըսի միտքս ինկաւ: Անցեալ Ապրիլին, Պէյրութ գտնուած միջոցիս առիթ ունեցայ տեսնելու նաեւ Եղ[ուարդ] Թօփճեանը որ եկած էր Աֆրօ-Ասիական գրողներու համագումարին մասնակցելու: Մէկ քանի պաշտօնական առիթներով մեր ունեցած հանդիպումներէն զատ ժամ մը տեսնուեցանք նաեւ առանձին: Խօսք բացուեցաւ վերջին Գրա-





կան Յամագումարին շուրջ, եւ գիտե՞ս թէ, ըստ Թօփճեանին, ինչո՞ւ չեն հրաւիրած զիս.- որովհետեւ վստահ չեն եղեր թէ ո՛ւր կը մնամ, Լոնտոն, Փարիզ թէ Լիզպոն: Այլ խօսքով հասցես չեն գիտեր եղեր: Ի՞նչ կ'ըսես ասոր: Եւ մտածել որ պաշտօնական մարդ մըն է խօսողը: Գրուածքներուս տակ «Լիզպոն»ը փառաւոր կերպով փոռած կ'ըլլայ ամէն անգամ, Մշակութային Կապի Կոմիտեն Լիզպոնի հասցեովս կը թղթակցի ինծի հետ երբ պետք ըլլայ, կանոնաւոր կերպով «Յայրենիքի Ձայն», եւ «Սովետական Յայաստան» կը դրկեն անձնապէս իմ անունիս, Լիզպոնի հասցեովս, ամէն անգամ որ յօդուածներու մէջ յիշեն անունս կ'աւելցնեն որ այժմ «բնակում է Լիսաբոնում», եւ սակայն չեն գիտեր եղեր թէ... ինչ է հասցես: Այդ պայմաններու տակ բնական է ուրիշ բան չէր մնար իրենց ընել՝ եթէ ոչ հրաժարիլ ամբողջութեամբ՝ զիս հրաւիրելու գաղափարէն:

Ո՛ւր մնացիր դուն, սկսա՞ր համալսարանի դասերուդ: Կրնա՞ս հետեւիլ կանոնաւորութեամբ: Դժուարութիւններ կ'ունենա՞ս: Առիթ կ'ունենա՞ս [Տէյվիտ Մարշըլ] Լանկը տեսնելու: Վիվիէնը եւ պզտիկները գացի՞ն Պարսկաստան: Այժմէն ըսեմ քեզի որ գալ անգամ Լոնտոն այցելութեանս եթէ Կարինէն շարունակէ անգլիերէն պատասխանել հայերէնով ըրած... դարպասումներուս, քեզ ալ կ'անցընեմ զոհերուս ցանկին վրայ: Կը յուսամ հանգիստ են բոլորը, Վիվիէնը, պզտիկները, Պրն. Պետրոսը [Ալեքսեան] եւ Տիկ. [Ֆլորա] Ալեքսեանը, ինչպէս նաեւ Սիլվիայէնք [Ալեքսի]: Բարեւներ բոլորին:

Գրելիք բաւական բան ունիմ կարծես տակաւին բայց կենամ այստեղ՝ որպէսզի կարենամ նամակս ժամ առաջ յանձնել *փոստին*: Պատասխանիդ կը սպասեմ առաջին առիթով:

Կարծեմ կ'ըսեն... կանխայայտ շնորհակալութեամբ եւ

Միշտ սիրով՝

Վահրամ

ՆԱՄԱԿ 36

Լիզպոն, 29 Յուլիս, 1967

Սիրելի Ասատուր,

Երկու տող՝ ըսելու համար թէ շնորհակալութեամբ ստացած





Եմ 24 Յուլիսի նամակդ: Օրդ. Այտա - ոչ Նորա, ինչպես գրած էիր - Մաթոսեանը Լոնտոն կը հասնի յառաջիկայ Երեքշաբթի կեսօրէ ետք՝ Պի. Ի. Էյ.ի BE073 թռիչքով՝ որ այստեղէն ճամբայ կ'ելլէ Կ.Ե. ժամը 2.40ին եւ այդտեղ կ'ըլլայ մօտաւորապէս երկու ժամ եւ 15 վայրկեան ետք՝ այսինքն ժամը 5ի ատենները: Յամենայնդէպս ապահով ըլլալու համար կրնաս ստուգել դարձեալ: Ըսած եմ օրիորդին որ Գրոմուէլ Բօտի *թերմիսալը* պիտի հանդիպիս իրեն: Որպէսզի զիրար ճանչնալու դժուարութիւն չունենաք, ըսեմ որ ինք թելին վրայ պիտի ունենայ բաց կապոյտ *մակթօ* մը, հաւանաբար քանի մը երկար ցօղունով ծաղիկներ եւ ձեռքին պզտիկ սեւ եւ աւելի մեծկակ՝ ճերմակ խսիրէ պայուսակ մը: Ինք թուիս, Մելգոնեանցիի նմանող աղջիկ մըն է: Նոր տանդ հեռաձայնի թիւը չունիմ բայց տուի Էճըրթընի թիւը որ ի պահանջել հարկին կապուի: Այնպէս որ սենեակը կրնաս իրեն համար պահել: Ինչպէս ըսած էի պիտի մայ երկու գիշեր միայն - Օգոստոս 1 եւ 2 - կը մեկնի Յինգզաբթի օր:

Նախորդ եւ աւելի առաջ գրած նամակիս մէջ բաւական հարցումներ ըրած էի որոնցմէ գրեթէ ոչ մէկուն պատասխանած ես: Նամակիդ ոճը՝ ազգային կեանքէն, աշխարհէն հրաժարած մարդու տրամադրութիւն մը կը մատնէ կարծես: *Խեղ* ըլլայ:

Կը ցաւիմ որ [Երկրըն] Անտերսընին մեր պատասխանը մերժողականէն տարբեր չկրցաւ ըլլալ, ինչպէս կ'ենթադրէի: Չեմ ուզեր աւելի գրել այս առթիւ բայց նախորդ նամակներուս մէջ կարծեմ թէ ակնարկութիւն մը ըրած էի նման հարցերու մէջ Յիմնարկութեան որդեգրած ընդհանուր քաղաքականութեան:

Յաջորդ նամակդ գրելէ առաջ մէյ մը կարդայ վերջին երկու նամակներս - անշուշտ եթէ ողջ են տակաւին - եւ պատասխանէ այնտեղ ըրած հարցումներուս: Մինչ այդ առիթ ալ կ'ունենաս անշուշտ ըսելու թէ ինչ չափով... փորձանք եղաւ օրիորդը գլխուդ: Վերջացնելէ առաջ, յանուն արդարութեան, պէտք է սրբագրեմ նախորդ երկտողիս մէջ օրիորդին տարիքին ըրած ակնարկութիւնս: Երեսունը նոր անցած պէտք է ըլլայ, ոչ թէ քառասունին մօտեցած:

Շնորհակալութեամբ եւ սիրով՝
Վահրամ



ՆԱՄԱԿ 37

Լիզպոն, 27 Օգոստոս, 1967

Սիրելի Ասատուր,

Անցնող քանի մը շաբաթներուն պատեհութիւնը չունեցայ քեզի գրելու եւ շնորհակալութիւն յայտնելու Օրդ. [Այտա] Մաթոսեանին հանդէպ ձեր ցոյց տուած սիրալիր ընդունելութեան համար: Օրիորդը՝ Պրիւքսէլ վերադառնալէ ետք գրած իր երկտողին մէջ մեծ համակրանքով կը խօսի «Պրն. Կիւզելեանին, ազնիւ եւ *սեմփաթիկ* իր տիկնոջ, աներիօր եւ անուշիկ գաւակներուն» մասին ու կ'աւելցնէ շատ իրատեսօրէն. «Իսկ եթէ իրենք ալ որոշ չափով համակրեցան ինծի՝ ատիկա վստահաբար իմ անձնական յատկութիւններէս աւելի քեզի ծանօթ ըլլալուս համար էր»: Այս առթիւ պետք է խոստովանիմ թէ զինք որպէս ձեր հիւրը նկատելով իր կողմէ ըլլալիք վճարումը մերժելու անհանգիստ ըրաւ զիս: Ատիկա պատճառ պիտի ըլլայ որ ուրիշ անգամ, եթէ առիթը ներկայանայ դարձեալ, չհամարձակիմ նման խնդրանք ներկայացնել քեզի: Կ'ակնկալէի պարզապէս որ բարի ըլլայիր դիմաւորել զինք, տեղաւորել եւ ուղղութիւն տալ իրեն: Լոնտոնին ծանօթ եղող մը կը գիտնայ թէ այսքան անգամ բաւական զոհողութիւն, ժամանակ եւ հետեւաբար բարեացակամութիւն կը պահանջեն: Օրիորդն ալ այս իրողութեան անդրադառնալով է որ կը գրէ թէ «իրենց ազնուութեամբ պարզապէս ամօթով ձգեցին զիս»:

* * *

Մեր ամենէն զբաղուած շաբաթներուն մէջն ենք սորեն: Համալսարանական կրթաթոշակի համար աւելի քան 800 սոր դիմում ունինք այս տարի: Տարեկան արձակուրդի ծրագիրս որոշ չէ տակաւին: Կ'ուզեմ սոր երկիր եւ ինծի տակաւին անծանօթ գաղութներ ճանչնալ: Այս ուղղութեամբ ամենէն փորձիչը կարծես Ամերիկան է՝ հակառակ նման ճամբորդութեան մը բազմաձախս ըլլալուն: Եղա՞ն՝ լաւ, չեղա՞ն՝ Եւրոպայի թեմերուս ծխական այցելութեան կ'ելլեմ դարձեալ:

[Թորոս] Թորանեանէն ամիս մըն է ձայն չկայ: Վերջին երկտողը ճամբած էր Մոսկուայէն, Յուլիսի վերջը, եւ կ'ըսէր թէ Լոնտոն պիտի ըլլայ Օգոստոս 5ին: Գրած էր մասնաւորաբար



ըսելու՝ թէ Սեպտեմբերի համար Հայաստանէն գալիք հրաւեր մը նկատի ունենամ - [Եղիշէ] Չարենցի ծննդեան 70ամեակի տօնակատարութեան առիթով - եւ ժամանակս դասաւորեմ ըստ այնմ: Կ'աւելցնէր նաեւ թէ տեղեկութիւնը ինծի կը փոխանցէր... Եղ[ուարդ] Թօփճեանին հաւանութեամբ: Եթէ Թորոսը արդէն հանդիպեցաւ Լոնտոն այս մասին կրնայ խօսած ըլլալ աւելի մանրամասնութեամբ:

Պետք է խորհրդապահաբար խոստովանիմ թէ հակառակ Հայրենիք այցելելու շատ ջերմ փափաքիս, այս ձեւով - բարեխօսութիւններու, միջնորդութեան նմանող երկարատեւ աշխատանքներէ ետք - գալիք հրաւեր մը այլեւս բնաւ չի խանդավառեր զիս: Նոյնիսկ վիրաւորական կը գտնեմ այդ յիշեցումներուն անհրաժեշտ նկատուիլը՝ երբ միւս կողմէ մեր երբեմնի ամենէն աննշան գիւղերուն հայրենակցական միութեանց անծանօթ ատենապետներէն մինչեւ... Ասատուր Պետեանն³⁴² ու կինը Պետութեան հրաւերներով *ճայիր-ճայիր* Հայրենիք կ'այցելէն: Հայաստան այցելութիւն մը պիտի չուզէի որ մարդիկ որպէս շնորհք տուած ըլլային ինծի. պիտի սպասեմ մինչեւ որ պայմաններս թոյլատու ըլլան իմ միջոցներովս երթալու: Յամենայնդէպս, տրամադրութեանս մտերմիկ այս խոստովանութիւնը պէտք չկայ փոխանցելու Թորոսին՝ որուն հաճոյակատարութիւնն ու ինծի հանդէպ ունեցած բարեկամական ազնիւ զգացումները կը գնահատեմ անկեղծօրէն:

Սիրալիր ողջոյններ բոլոր տնեցիներուն մեկիկ-մեկիկ:

Սիրով՝

Վ. Յ. Մավեան

ՆԱՄԱԿ 38

Լիզպոն, 13 Սեպտեմբեր, 1967

Սիրելի Ասատուր,

Օգոստոս 27ի նամակէս ասդին ձայնդ չելաւ տակաւին: Թեւեւ մինչեւ մազերուս ծայրերը թաղուած եմ - գլխիվայր չէ անշուշտ - գործի մէջ, քանի մը տող կ'ուզեմ գրած ըլլալ քեզի՝ գոնէ՝ ըսելու համար որ Սեպտեմբեր 22ին ճամբայ կ'ելլեմ դէպի





Փարիզ՝ յաջորդ օրը Մոսկուայի վրայով անցնելու համար Երեւան՝ ուր Սեպտեմբեր 25ին կը սկսին [Եղիշէ] Չարենցի 70ամեակին նուիրուած հանդիսութիւնները: Տասը օր առաջ հասաւ պաշտօնական հրաւերը հեռագրով: Պատասխանեցի հեռագրով՝ թէ պիտի կարենամ երթալ եւ խնդրեցի որ տեղեակ պահեն *վիզայի* կարգադրութիւններէն: Այսօր նամակ մը ստացայ՝ հեռագիրը հաստատող, ուր կ'ըսուեր նաեւ թէ *վիզան* կրնամ ստանալ Փարիզի դեսպանատունէն: Եթէ կարելի ըլլայ, *վիզան* պիտի ուզեմ անցագրէն անջատ ունենալ, ինչպէս կ'ընեն կարծեմ երբ պետք ըլլայ: Նկատելով որ Փարիզ հասնելէս ետք ժամանակ պիտի չունենամ *վիզայի* հարցով զբաղելու, քիչ յետոյ պիտի հեռագրեմ նաեւ Գիւտին՝ [Ծայրագոյն Վարդապետ Նազգաշեան] հասկնալու համար թէ կրնա՞յ նախապէս իմ կողմէ ապահովել *վիզան*՝ որպէսզի հասնելէ ետք առնեմ իրմէ եւ մեկնիմ ուղղակի:

Երկու տող մը գրե ինծի անմիջապէս ըսելու համար թէ կրնա՞մ քեզի որեւէ ձեւով օգտակար ըլլալ Հայաստան: Մի մոռնար որ գիրքս լոյս կը տեսնէ այս ամիս եւ հաւանական է որ բաւական «հարուստ մարդ» ըլլամ այնտեղ եւ հետեւաբար կարենամ դրկել ինչ բանի որ պետք ունիս: Գրե անպայման, առանց քաշուելու: Գրածդ դրկէ *էքսփրես*:

[Թորոս] Թորանեանէն ձայն չելաւ այս անգամ Եւրոպա գալէն ետք: Ինչո՞ւ արդեօք: Խոստացած էր գրել:

Սիրով՝
Վ. Յ. Մավեան

[Յ.Գ.] Հայաստան ինչպէ՞ս կ'ըլլայ օդը այս շրջանին. պետք կա՞յ վերարկու տանելու:

ՆԱՄԱԿ 39

Լիզպոն, 30 Հոկտեմբեր, 1967

Սիրելի Ասատուր,

Շաբաթ մըն է վերադարձած եմ արդէն: Չօրաւոր, խիտ ապրումներու ամիս մը եղաւ: Ինչպէս այնտեղ ալ յիշեցի մեկ-երկու





առիթներով՝ արտասահմանի մէջ մեր դիմադրականութիւնը ուժեղացնելու, երկարաձգելու համար անհրաժեշտ է Յայրենիքի հետ կապերու առաւել եւս սերտացումը: Ի մտի ունիմ մասնաւորաբար գրողներու, արուեստագետներու, ազգային դէկավար տարրերու կապերը: Անբացատրելի զգացում մըն է ամբողջ կեանք մը օտարութեան մէջ ապրելէ ետք Յայրենի հողը ունենալ ոտքիդ տակ՝ եւ Արարատը՝ դիմացդ:

Հանդիպեցայ մեր գրողներէն գրեթէ բոլորին: Տեսայ նաեւ պետական մարդոցմէ ոմանք: Թէեւ հրաւիրուած էի որպէս գրող [Եղիշէ] Չարենցի 70ամեակի տօնակատարութիւններուն մասնակցելու՝ այցելութիւնս այստեղ, մեզի համար ունէր միեւնոյն ատեն կիսապաշտօնական բնոյթ: Այցելեցի հետեւաբար կարելոր բոլոր հաստատութիւնները որոնց հետ գործ ունիւք կամ կրնանք ունենալ զանազան յատկացումներու ճամբով: Ընդհանուր տպաւորութիւններս, աւելորդ է ըսել, դրական են շատ: Բնական է, երբ ինքզինքդ դնես *թուրիստի* տեղ - բան մը որ իրաւունք չունիս ընելու որպէս այդ երկրին զաւակը - քննադատութեան ու մեղադրանքի առիթ տուող երեւոյթներ չեն պակսիր: Այդ բոլորը սակայն, հակառակ տեղ-տեղ ջղայնացնող ըլլալուն, կը մնան երկրորդական եւ սրբագրելի:

Մէկէ աւելի անգամներ սեղաններու շուրջ առիթներ եղան յիշելու քեզ: Ինծի համար նորութիւն էր անշուշտ շրջան մը՝ ուսանելու համար - աւելի մասնագիտանալու, խորանալու պիտի ըսէի - Հայաստան երթալու ծրագիրդ՝ որուն ակնարկեցին Վահագն Դաւթեանը³⁴³ եւ ուրիշներ: Ծի՞շո՛ւ է՝ եւ եթէ այո՛՝ ո՞ր կրցար հասցնել զայն: Լաւ կ'ըլլայ, եթէ մանաւանդ կարելիութիւններ կան վերադարձիդ Լոնտոնի համալսարանի հայագիտական դասընթացքներուն մէջ տեղաւորուելու: Չիս անպայման պահէ տեղեակ մեկնելէդ առաջ:

[Գուրգէն] Մահարիին³⁴⁴ *Այրուող Այգեստանները* բաւական վրդովում յառաջ բերած էր: Չեմ գիտեր որքան ծանօթ ես հարցին արտասահմանի մեր մամուլին մէջ երեւցած հատուկտոր յօդուածներէն: Երկար պատմութիւն է. կը գրեմ աւելի մանրամասնութեամբ երբ քիչ մը խաղաղ ժամանակ ունենամ շրջան մը ետք:

Այնտեղ գտնուած միջոցիս լոյս տեսաւ նաեւ հատորս՝ որ կը պարունակէ *Բեկորները* ամբողջութեամբ ինչպէս նաեւ *Անկապ*





Օրագիրէս մօտաւորապէս 50 էջոց հատուած մը: Ճաշակաւոր տպագրութիւն մը եղած է, թէեւ կարգ մը սխալներ սպրթած են նորէն: Յիսուն օրինակ մը գնեցի եւ [Սփիւռքահայութեան Յետ Մշակութային Կապի] Կոմիտէին յանձնեցի որ հասցէիս ուղարկեն մաս մաս: Երբ հասնի առաջին ծրարը օրինակդ կ'ունենաս անպայման: Յետս մէկ օրինակ բերի միայն՝ աւելորդ ծանրութենէ խուսափելով: Հա, մոռցայ ըսելու որ Մոսկուա որեւէ դժուարութիւն չունեցայ երթ ու դարձի ատեն՝ որովհետեւ երկու պարագային ալ Ստեփան Ալաճաճեանը եւ ուրիշ քանի մը գրողներ գործով այնտեղ կը գտնուէին եւ մինչեւ օդակայան եկան:

Նամակս փակելէ առաջ վերջին երկտողիդ վրայ աչք մը նետեցի հիմա: Մեսրոպին [Վարդապետ Գրիգորեան] եզրակացութիւնը - «կէս օրս պարապ գնաց» - հասկնալի է: Այդ մասին ես ալ ունիմ ի՛մ ըսելիքս որ պիտի չուզեմ գրած ըլլալ: Բնական է որ «պարապ երթան» իր... Նետած ձեռքերէն ոմանք՝ երբ ամենուն եւ ամէն տեղ կ'ընէ ատիկա: Բայց այս մէկը դո՛ւն գիտցած եղիր միայն:

Տնեցիները լաւ են կը յուսամ: Ձերմ բարեւներ բոլորին:

Քոյդ՝

Վ. Յ. Մավեան

ՆԱՄԱԿ 40

(Բացիկ)

Լիզպոն, 3.12.67

Սիրելի Ասատուր,

Ասկէ աւելի քան ամիս մը առաջ գրած նամակիս անպատասխան մնալն ու թելիդ պատմութիւնը՝ որուն ակնարկած էիր վերջին նամակիդ մէջ, ակամայ կարծես կը կապուին իրարու ու կը մտահոգեն զիս: Գրէ քանի մը տող՝ «յանդորրութիւն մտաց» եւ նախքան Դեկտեմբեր 16ը՝ երբ շատ հաւանական է որ ճամբայ ելլեմ դէպի Պոլիս, Սուրիա եւ Լիբանան՝ Հիմնարկութեան վերաբերեալ կարգ մը անմիջական գործերով: Բարեւներ տնեցիներուն:

Սիրով՝

Վ. Յ. Մավեան



ՆԱՄԱԿ 41

[Իսթանպուլ, Դեկտեմբեր 1967]

Սիրելի Ասատուր,

Միջազգային չափանիշով գնահատուած լուսանկարիչ - բառին զուտ արուեստագիտական իմաստով - բարեկամ մը ունիմ այստեղ որ կ'աշխատակցի «Scina»-ի նման համաշխարհային համբաւ վայելող տուներու հրատարակութիւններուն, ինչպէս նաեւ Sunday Times-ին, Architectural Review-ին, Life-ին եւայլն, պատմական վայրերու, յուշարձաններու, կոթողներու լուսանկարներով: Քանի մը անգամ այցելած է Անի եւ Աղթամար, վերջին անգամ ասկէ տարիուկէս առաջ, եւ առած հոյակապ լուսանկարներ՝ իրենց նմանը չունեցող: Ամէն կողմէ փնտռուած եւ հետեւաբար բարձր սակերով professional արուեստագետ է:

Երէկ խօսակցութեան միջոցին յիշեցի [David Marshal] Lang-ին գիրքը - *Cradle of Civilization* - որ պիտի ունենայ նաեւ բազմաթիւ լուսանկարներ: Ենթադրելով որ հատորը պիտի ունենայ նաեւ գլուխ մը կամ քանի մը էջ Անիին ու Աղթամարին մասին, թելադրեցի իրեն որ իր նկարներու հաւաքածոյէն պէտք եղածները տրամադրէ հատորին՝ զայն լաւագոյն ձեւով ներկայացուցած ըլլալու մտահոգութեամբ: Սիրով ընդառաջեց թելադրութեանս եւ անշուշտ առանց որեւէ վճարում պահանջելու:

Նկատի ունենալով որ գիրքը կրնայ մամուլի տակ ըլլալ արդէն եւ հետեւաբար ուշ կ'ըլլայ սպասել մինչեւ Լիզպոն վերադառնալս, պիտի խնդրեմ քեզմէ որ բարի ըլլաս անմիջապէս տեղեակ պահել Lang-ը այս մասին: Ես դժբախտաբար հասցէն չեմ բերած միասին: Եթէ հետաքրքրուի, թող իսկոյն գրէ ուղղակի իրեն - Արա Կիւլէր³⁴⁵ Է անունը - ստորեւ տալիք հասցէիս, չմոռնալով անպայման յիշել թէ կը գրէ իմ թելադրութեամբս: Այս վերջին կէտը Արան ինք յիշեց մասնաւորաբար, որովհետեւ ըսաւ, Երոպայի զանազան կողմերէն ստացած բազմաթիւ թղթակցութիւններուն մէջ կրնայ այլապէս ուշադրութիւն չընել եւ սխալմամբ կամ մէկ կողմ նետել նամակը եւ կամ պատասխանել որպէս սովորական յաճախորդի՝ ինչ որ չէ պարագան: Lang-ը գրելու պարագային թող ըսէ նաեւ թէ ո՞ր կամ ի՞նչ տեսակ նկարներ է որ կ'ուզէ մասնաւորաբար:



Ես այստեղ եմ 10 օր է: Յեւ ի հեւ վազք, այցելութիւններ, հանդիպումներ եւայլն: Տասը վայրկեանէն Պատրիարքը [Շնորհք Գալուստեան]³⁴⁶ պիտի հանդիպի պանդոկ եւ միասին ճաշկերոյթի մը պիտի երթանք դարձեալ: Այստեղ կը կենամ ուրեմն: Նոր Տարուան առթիւ քեզի եւ քուկիսներուդ մաղթելով քաջառողջութիւն եւ երջանիկ օրեր:

Սիրով՝
Վահրամ

Ara Guler
Beyoglu, Galatasaray,
Tosbagi Sokak 10,
Istanbul
Պետք ըլլայ, կրնաս գրել մեր գրասենեակի հասցեով
c/o Calouste Gulbenkian Foundation
Stephan Building
Riad Solh Street
Beirut

ՆԱՄԱԿ 42

Լիզպոն, 7 Մարտ, 1968

Սիրելի Ասատուր,

Մարտ 1 թուակիրդ հաճոյքով ստացայ ատենին: Սենեակիս առանձնութեան մէջ ես ինծի հինգ վայրկեան խնդացի ֆետայի Ղազարի [Պետոյեան]³⁴⁷ կուռ դամբանականին վրայ:

Նախ՝ [Տէյվիտ Մարշըլ] Լանկը: Գիտես հաւանաբար որ Ապրիլի մէջ Յայաստան կը մեկնի: Մեր յատկացումն է անշուշտ որ պիտի օգտագործէ: Արա Կիւլերին գրած նամակին պատճենը դրկուած էր նաեւ ինծի Պէյրութ: Ուրախ եմ որ կարգադրուեր է: Տղան հոյակապ նկարներ ունի Անիէն, Աղթամարէն եւ Վանի բերդէն: Շարք մըն ալ ես վերցուցի իրմէ: Ամերիկեան եւ Անգլիական լաւագոյն թերթերուն աշխատակից է եւ շատ բարձր վարձատրութիւնով: Լաւ բարեկամներ ենք: Հակառակ իր թրքական երկար պեխերուն եւ թրքերէն բուրող - հոտող պէտք էր ըսէի - մականունին, ազգային զօրաւոր զգացում ունեցող -





եւ սոցիալիստ - տղայ է: Երբ խօսեցայ իրեն Լանկին գիրքին մասին, տղան սիրայօժար կերպով պատրաստակամութիւն ցոյց տուաւ նոյնիսկ առանց վճարումի տրամադրելու պէտք եղած նկարները: Հետաքրքրիւ եմ գիտնալու թէ Լանկը գոհ մնա՞ց կարգադրութենէն: Գրէ ինծի այս մասին յաջորդիւ:

[Եորկըն] Անտերսընը իրականութեան մէջ հեռուէն տեսայ Երեւան գտնուած շրջանիս: «Արմենիա»ի ճաշարանը, մեզմէ քանի մը սեղան անդին նստած էր գիշեր մը Ռուբէն Չարեանին եւ քանի մը ուրիշներու հետ: Չարեանը երբ տեսաւ զիս ելաւ եւ պահ մը մեր սեղանը եկաւ: Յիշեց խօսքի մէջ թէ իրենց սեղանակից եղող օտարը Անտերսընն էր՝ առաջարկելով որ միանամ իրենց: Չըրի սակայն, նախ որովհետեւ ուրիշ մարդեր ունէի ինծի հետ եւ ապա՝ չափով մըն ալ խուսափեցայ՝ որովհետեւ հանդիպում մը պատճառ պիտի ըլլար անմիջապէս որ իր մեզմէ ստացած մերժումին խօսքը բացուի զիս՝ երկար բարակ բացատրութիւններ տալու անհաճելի կացութեան մէջ դնելով: Ուրախ եմ որ դասախօսութիւններու իր շարքը հայոց մասին կը շարունակէ յաջողութեամբ: Հա՛, մոռցայ ըսելու որ Լանկին հետ Հայաստան կ'երթայ նաեւ Մանչեսթրի համալսարանէն ուրիշ փրոֆեսոր մը - եթէ ճիշդ կը յիշեմ՝ [Չարլզ] Պըրնի³⁴⁸ - որ կարծեմ Ուրարտական պատմութեան մասնագետ է: Ասոր ալ ճամբու ծախսը մենք պիտի տանք:

Անցեալ տարի Միլանի համալսարանի ճարտարապետական *ֆաքուլթի* իտալացի փրոֆեսորներէն մէկը երկու հայ ճարտարապետներու հետ Հայաստան այցելած էր պատմական կոթողները ուսումնասիրելու: Վերադառնալէ ետք, ճարտարապետական *ֆաքուլթի* կողքին հայկական մշակոյթի ուսումնասիրութեան յատուկ ճիւղ մը հիմներ են հիմա եւ արդէն ձեռնարկած գործնական աշխատանքի: Հայագիտական հրատարակութիւններու գրադարան մը սկսած են կազմել արդէն եւ իրենց ունեցած գիրքերուն ամբողջական մէկ ցանկը կազմելով դրկած են Իտալիոյ բոլոր պատմական եւ արուեստի *ինստիթիւտ*ներուն յայտնելու համար որ հատորները տրամադրելի են պէտք ունեցողներուն: Իսկ ասկէ քանի մը ամիս վերջ մասնաւոր «Հայ մշակոյթի կամ ճարտարապետութեան շաբաթ»ի պէս բան մը կը ծրագրեն կազմակերպել: Այդ առթիւ Հայաստանէն հրաւիրած են նաեւ Մօրուսը [Հասրաթեան], Ռու-





բէն Չարեանը,³⁴⁹ Արմէն Չարեանը եւ ուրիշ երեք հոգի: Պատասխանատու իտալացի փրոֆեսորը - Նովելլօ - ուրկէ ուր չեմ գիտեր, երկար նամակ մը գրած էր ինձի, կցեալ կարելի բոլոր մանրամասնութիւններով, պարզապէս առ ի տեղեկութիւն: Մասնաւոր բան մը ուզած չունէր... առ այժմ:

Առջի օր Ստեփան Ալաճաճեանէն երկար նամակ մը ստացայ: Կարգ մը տեղեկութիւններ կ'ուզէր: Մասնաւոր կերպով կը յիշէր թէ երկար ատեն է լուր չունի քեզմէ եւ կը զարմանար թէ ինչո՞ւ չես գրեր: Կ'ուզէր որ հասցէդ դրկեմ իրեն կամ նախընտրաբար գրեմ քեզի որ վերսկսիս թղթակցութեան անպայման: Հայաստանէն վերադառնալէս անմիջապէս ետք 10,000 տուարի յատկացում մը ըրինք Պետական Համալսարանի գրադարանին՝ արտասահմանէն հազուագիւտ կամ թանկարժէք հատորներ դրկելու համար: Իսկ ատկէ զատ քանի մը ուրիշ հաւանական կարելոր յատկացումներ հասուննալու ճամբու մէջ են: Ալաճաճեանին երկու հասցէները կու տամ քիչ մը վարը: Հաւանաբար տունի հասցէն - Նոր Չէյթուն - աւելի ապահով ըլլայ: «Հայրենիքի Չայն» տեսնելու առիթ կ'ունենա՞ս. եթէ ոչ՝ ըսէ դրկեմ քեզի:

Գրելիք բաւական բաներ ունիմ տակաւին բայց յաջորդիւ, երբ լսեմ քեզմէ: Տուր մասնաւոր բարեւներս տնեցիներուն: Ինչո՞ւ տրամադրութիւնդ տեղը չէ: Գրէ կրնա՞մ օգտակար ըլլալ որեւէ ձեւով:

Միշտ սիրով՝
Վահրամ

[Յ.Գ.] Առջի շաբաթ *Բեկորներուն* հայաստանեան հրատարակութենէն օրինակ մը դրկեցի հասցէիդ:

Stepan Alajajian
Nor Zeitoun 3/13
Erevan
կամ
c/o Writers' Union
Barekamoutyan St. No 3
Erevan



ՆԱՄԱԿ 43

Լիզպոն, 17 Մայիս, 1968

Սիրելի Ասատուր,

Մարտ 5 թուակիրդ ստացած եմ ատենին: Մեջտեղ դրածո, ինչպես դուն ալ կ'ենթադրես, բաւական բարդ հարց մըն է եւ զայն այստեղ, անձնական նամակի մը հիման վրայ անպաշտօն կերպով արծարծելու օգտակար չի կրնար ըլլալ, նոյնիսկ եթէ ատիկա պիտի ըլլայ պարզապէս *սօստած* մը ընելու համար: Նման որեւէ ծրագիր կարելի կ'ըլլայ նկատի ունենալ միայն յարակից բոլոր մանրամասնութիւնները մեր առջեւ ունենալէ ետք, եւ որովհետեւ նախընթաց չունի, դժուար է առանց ատոր, կամ նախքան այդ՝ ենթադրութիւններ ընել մեր տալիք պատասխանին մասին:

Առանց շատ լաւատես ըլլալու, անպատեհութիւն մը չկայ, կը կարծեմ պաշտօնապէս մեջտեղ նետելու խնդիրը, եւ քանի որ Անգլիոյ մէջ տեղի ունենալիք ձեռնարկի մը մասին է, ուղղակի մօտենալով մեր Լոնտոնի գրասենեակին՝ որոնք, ի պահանջել հարկին, զայն կը փոխանցեն մեզի այստեղ, հայկական բաժնին: Յանձնարարելի է անշուշտ որ առաջարկը ներկայացնողը սոսկ անհատ մը չըլլայ, քեզի կամ ինծի պէս, այլ պաշտօնական, պատասխանատու ազգային մարմին մըն է կամ *Էմբրեսսարիօն*: Երկու պարագային ալ առաջարկին կցելով նաեւ ըլլալիք ծախսերուն մէկ նախահաշիւը եւ որոշապէս յիշելով թէ ի՞նչ է Զիմնարկութենէն ակնկալուած օժանդակութիւնը եւ ինչ պայմաններով: Ասիկա կարելոր է, հարցին «սկզբունքային դժուարութիւններուն» վրայէն ցատկէլէ ետք *թէքնիք* երեսը քննել կարենալու համար:

Նախորդ նամակիս մէջ յիշած էի կարծեմ Միլանոյի համալսարանի ճարտարապետական *ֆաքուլթի* կողքին հիմնուած, այսպէս կոչուած, հայագիտական ուսման վերաբերեալ ճիւղի մը մասին: Նման հետաքրքրութիւն մը սկսած է նաեւ Զոմի համալսարանին մէջ՝ ուր մօտ ատենէն կը ծրագրեն հայ մշակոյթի նուիրուած ցուցահանդէս մըն ալ կազմակերպել: Զայաստանէն 5-6 ճարտարապետ-պատմաբաններ հրաւիրուած են ուրեմն նախ ատոր՝ եւ ապա Միլան: Ծախսերուն օժանդակելու համար պաշտօնական դիմում մը ստացանք արդէն եւ հաւանա-



կան է որ յատկացում մը ընենք: Փարիզէն քանի մը արուեստագետ բարեկամներ վերջերս գրած էին այնտեղ կազմուած նոր «Արուեստագետներու՝ Թորոս Ռոսլին Միութեան» մասին: Ասոնք ալ ցուցահանդէսի մը ծրագիրը ունին Մայիսի համար: Տեսնենք թէ ինչպէս կարելի պիտի ըլլայ ձեռք մը բերել ասոնց ալ դիմումը:

Ես առողջ եմ՝ թէեւ անտրամադիր: Առանձնութիւնը երբեմն կը գողնայ ամէն տրամադրութիւն: Յունիս-Յուլիսին քանի մը բարեկամներ կը սպասեմ. հաւանաբար քիչ մը նորոգեն զիս: Եթէ կարենամ դասաւորել, փափաքը եւ տարտամ ծրագիր մը ունիմ այս տարուան արձակուրդս, հաւանաբար Յոկտեմբերի մէջ, անցընել... Ամերիկա: Ալ տեսնենք:

Գրէ անձնական կեանքիդ մասին աւելի: Ի՞նչ եղաւ համալսարանի դասերուն հետեւելու ծրագիրդ: Ձերմ բարեւներ տնեցիներուն:

Սիրով՝
Վահրամ

[Յ.Գ.] Ի՞նչ է ձեր նոր տան հեռաձայնի թիւը:

ՆԱՄԱԿ 44

Լիզպոն, 13 Յունիս, 1968

Սիրելի Ասատուր,

Ապրիլ 17ի նամակէս ասդին ձայնդ չելաւ. կ'ենթադրեմ թէ զբաղումներդ են պատճառը:

Վերջին երկտողիս մէջ գրած էի կարծեմ թէ կը մտածեի տարեկան արձակուրդս անցընել Ամերիկա այս անգամ, հաւանաբար Յոկտեմբերի մէջ: Անկէ ի վեր, գրասենեակային կարգ մը դէպքերու դասաւորումին հետեւանքով որոշեցի առնել զայն աւելի կանուխ, Յուլիսին: Մինչեւ առջի օր տրամադրութիւնս ու կարգադրութիւններս Ամերիկայի ուղղութեամբ էին. նոյնիսկ քանի մը մօտիկ բարեկամներու ալ գրած էի այդ ուղղութեամբ: Բաւական «դնել-վերցնելէ ետք» սակայն, երէկ, ծրագրէն հրաժարեցայ ամբողջութեամբ, գոնէ այս տարուան համար: Անշուշտ նոյն շրջանին պիտի առնեմ արձակուրդս դարձեալ: Արեւելք չեմ ուզեր երթալ՝ նախ որովհետեւ տակաւին չորս ամիս առաջ այն-





տեղ էի, եւ երկրորդ, շատ հաւանական է որ տարին չվերջացած շրջապտոյտի մը ելլեմ դարձեալ: Կը մնայ հետեւաբար Եւրոպան: Կը մտածեմ նախ անցնիլ Լոնտոն՝ Յունիս 29ին, Շաբաթ օր, եւ յետոյ թերեւս նաեւ Փարիզ - եթէ անշուշտ կացութիւնը ձեւի մը մտնէ մինչ այդ - եւ դրացի մէկ երկու այլ քաղաքներ: Ամէն պարագայի տակ քեզ կը պահեմ տեղեակ մանրամասնութիւններէն անմիջապէս որ ըլլան որոշ:

Վեհափառը [Վազգէն Ա. Պալճեան] կը լսեմ անուղղակիօրէն՝ թէ Էջմիածին վերադարձի ճամբուն վրայ պիտի հանդիպի նաեւ շրջան մը Եւրոպա՝ Յուլիսի կեսերուն. գաղափար ունի՞ս կամ կրնա՞ս այդտեղ հասկնալ թէ ճիշդ ե՞րբ եւ ո՞ր քաղաքը կամ քաղաքները պիտի հանդիպի այդ առթիւ: Ի դէպ, Փափագդ Էջմիածի՞ն գացեր է երեք օրուան համար: Այդ մասին հետաքրքրական լուր մը ունիմ տալիք. յիշեցուր երբ հանդիպինք:

Վերջին նամակիդ մէջ չէիր յիշած Արամ Թուլէկեանին հանդիպիլդ: Իրմէ այսօր ստացած նամակիս մէջ կ'ըսէ թէ Լոնտոնի իրենց ենթայանձնախումբին համար նկատի ունին նաեւ քեզ: Այս ամսու 14ին Լոնտոն պիտի ըլլայ եղեր դարձեալ, այս անգամ աղջիկը «Ուէլշ» տղու մը կարգելու: Կ'ըսեր թէ պիտի մնայ Լոնտոն մինչեւ Յունիս 27: Եթէ պատահի որ քեզ գտնելու ըլլայ, ըսէ թէ անկէ երկու օր վերջ, առաւօտուն կանուխ հաւանաբար, արդէն Լոնտոն կ'ըլլամ:

Չերկարեմ աւելի՝ մօտ ատենէն հանդիպելու յոյսով եւ ակնկալութեամբ: Երկու տող մը գրէ անմիջապէս՝ եթէ կրնաս երրորդ պարբերութեան մէջ յիշած տեղեկութիւնս տալ:

Սիրալիր բարեւներ տնեցիներուն:

Ջերմօրէն քոյդ՝
Վահրամ

[Յ.Գ.] Կրնա՞մ խնդրել որ ներփակ երկու պահարանները յանձնեն թղթատարին:

Յուլիսին ինչպէ՞ս կ'ըլլայ օդը այդտեղ. պետք կա՞յ ձմեռուան զգեստներով եւ անձրեւանոցով գիւնուելու: Գրէ խնդրեմ այս մասին ալ:





ՆԱՄԱԿ 45

Լիզպոն, 24 Յունիս, 1968

Սիրելի Ասատուր,
Նամակդ ստացայ երէկ:

Երկու տող՝ ըսելու համար որ այստեղէն ճամբայ կ'ելլեմ 29 Յունիս, Շաբաթ առաւօտեան ժամը 03.45ին - *Նայթ Ֆլայթ* - եւ Լոնտոն կը հասնիմ ժամը 6.15ին: Այս հաշուով *թէրմինալ* կ'ըլլամ ժամը 7.00-7.15ի ատենները, եւ տեղս՝ անկէ կէս ժամ մը վերջ: Չ'ելլես խեղճութիւն ընես այդ ժամուն օդակայան գալու: Ես կը հեռաձայնեմ քեզի անելի ուշ: Կը յուսամ թէ մեր *Պորտիսկ Յաուսին* մէջ պարապ սենեակ կ'ըլլայ: Տակաւին պատեհութիւն չունեցայ ստուգելու: Վաղը առաւօտ այստեղէն *թէլէքս* մը կը դրկեմ մեր գրասենեակը:

Սօտալուտ հանդիպումի մը ակնկալութեամբ:

Կարօտով՝
Վահրամ

[Յ.Գ.] «Flight»իս թիւը՝ BE075

ՆԱՄԱԿ 46

Լիզպոն, 25 Յունիս, 1968

Սիրելի Ասատուր,

Երէկ ճամբած երկտողս հաւանաբար ստացար արդէն:

Այսօր Յիմնարկութեան *թէլէքս*ները Լիզպոն եւ Լոնտոն իմ հաշուոյս աշխատեցան առտուրնէ: Յայտնի եղաւ որ *Պորտիսկ Յաուսը* արձակուրդի մէջ է եւ կանոնաւոր սպասարկութիւնը կը վերսկսի 1 Յուլիսին միայն: Այս բաժնին *քեր թէլքըր* ամուլն ալ արձակուրդի մէջ է ուրեմն եւ կը վերադառնայ Կիրակի օր միայն, ամսուն 30ին: Լոնտոնի մեր գրասենեակին տնօրէնը այս տեղեկութիւնը տալէ ետք կ'ըսեր թէ եթէ յանձն կ'առնէի առանց *սերվիսի* գիշերել այնտեղ Շաբաթ եւ Կիրակի օրերը, կրնայի անշուշտ ընել ասիկա՝ Լոնտոն հասնելէ ետք իրենց բնակարանը հանդիպելով, շէնքին բանալին առնելու համար: Դեռագրեցի թէ այդպէս կ'ընեմ: *Քեր թէլքըրը* իրականութեան





մէջ պիտի վերադառնայ Կիրակի օր, ինչ որ կը նշանակէ թէ միայն մէկ գիշեր է որ շէնքին մէջ պիտի մնամ առանց «հոգատար»ի:

Այս պայմաններու տակ, մինչեւ խնդրոյ առարկայ բանալին ձեռք ձգելս - եւ ասիկա բնական է չեմ կրնար ընել հասնելէս անմիջապէս ետք՝ ժամը 7ի - 8ի ատենները - քանի մը ժամ կ'ունենամ մեռցընելիք:

Ուրեմն.

ա.- Եթէ *օթօ* ունիս ոտքիդ տակ,

բ.- Եթէ ընտանեկան արշալուսային անդորրութիւնդ գէշ կերպով խանգարուած չըլլար,

գ.- Եթէ ՑԷն առաջ արթննալը լուրջ *պրոպլեմ* չէ քեզի համար, եւ

դ.- Եթէ պզտիկներու «բիբի» պատմութիւն չունիս,

Փորձէ ժամը 7.30ի կամ 7.45ի ատենները հանդիպիլ *թերմի-նալ* - կը շեշտեմ՝ ո՛չ օդակայան: Կրնանք ժամ մը երկու ըլլալ միասին՝ մինչեւ որ հասնի պաշտօնական անգլիացիի մը դուռը զարնելու պատշաճ ժամը: Իսկ եթէ անյարմարութիւններ կան՝ երկու ոտքդ մէկ կօշիկի մէջ դնելու պէտք չունիս անշուշտ, հեռաձայնով կը կապուիմ անմիջապէս որ հասնիմ տեղս:

Այստեղ՝ կարգադրութիւններս բոլոր ըրած, կազմ ու պատրաստ կը սպասեմ Շաբաթ առտուան՝ ճամբայ ելլելու համար:

Սիրով՝
Վահրամ

ՆԱՄԱԿ 47

Լիզպոն, 18 Օգոստոս, 1968

Սիրելի Ասատուր,

Աւելի քան երեք շաբաթ է որ վերադարձած եմ առօրեայիս: Գիտես թէ մեր ամենէն գրաւուած ամիսներն են ասոնք՝ երբ կ'ունենանք կրթաթոշակներու բաշխումը: Առաջին տասը օրերուն Պելճիքայէն հիւր մը ունեի. գործես դուրս ժամերս լեցուն էին ուրեմն բոլոր: Գալ շաբթու մէջ ալ Նուարդը Լիզպոն պիտի հանդիպի՝ Անգլիայէն դեպի Պէյրութ վերադարձի իր ճամբուն





վրայ: Այս քանի մը օրերու ազատութենէս օգտուելով կը գրեմ ուրեմն քեզի - ինչպէս կ'ըսեն նման առիթներու - հաստատելու համար հաճոյքը մեր վերջին հանդիպումին, զրոյցներուն ու... վեճերուն: Կ'ուզեմ որ շնորհակալութիւնս յայտնես մանաւանդ Վիվիէնին՝ իր այնքան ջերմ ընդունելութեան համար:

Փարիզը ձգեցի ուրեմն քեզմէ օր մը ետք, Չորեքշաբթի օր: Զեռնածայնային խօսակցութենէդ դատելով շատ գոհ կ'երեւայի մեկնումիդ առաւօտուն Վեհափառին [Վազգէն Ա. Պալճեան] հետ ունեցած տեսակցութենէդ: Ի դէպ, Պէյրութի «Ազդակ»ը³⁵⁰ անցեալ շաբթուան իր թիւերուն մէջ երեւցող քանի մը կարճ նշմարներով սկսած է յարձակիլ Վեհափառին վրայ, Ամերիկա շրջապատոյտին խօսած քանի մը ճառերուն առիթով: Միտքդ է կը յուսամ իրեն հետ ունեցած խօսակցութիւնս - որ յիշեցի քեզի - Աղեքսանդրիոյ մասին: Թերթերէն կը տեղեկանամ թէ վերջերս «անպաշտօն» այցելութիւններ տուած են այնտեղ, նոյն շրջանին, Պէյրութէն Տաճատ [Ուրֆալեան]³⁵¹ եւ Գարեգին [Սարգիսեան] Եպիսկոպոսները եւ ազգային իշխանութեան ջերմ ընդունելութեան արժանացած: Ինչ որ է, ասիկա փակագիծի մէջ:

Ի՞նչ լուր Լոնտոնէն: Զետաքրքիր եմ գիտնալու թէ ի վերջոյ ինչպէս վերջացաւ, կամ աւելի ճիշդ պիտի ըլլար ըսել՝ ի՞նչ ուղղութիւն առաւ ձեզ մտահոգող «հրատապ» հարցը: Կարելի եղա՞ւ իննորոյ առարկայ յօդուածները աւելցնել տալ «*Թրասթ Տիտ*»ին մէջ: Ի՞նչ են ներկայիս [Յարութիւն] Մութաֆեանին³⁵² յարաբերութիւնները Սրբազանին [Պսակ Թումայեան] եւ [Յայկ] Գալուստեանին հետ:

Օքսֆորտի հայագիտական ամպիոնին մասին այդտեղ գանազաններու հետ ունեցած մեր խօսակցութիւնները կը յուսամ թէ օգտակար պիտի ըլլան: Չիս տեղեակ պահէ որեւէ նորութիւն որ ունենաս ամպիոնին կամ պատասխանատու դասախօսին մասին: Ասիկա սակայն՝ խորհրդապահաբար:

[Թորոս] Թորանեանէն քանի մը տող ստացայ առջի շաբաթ: Անցեալ շաբթու մէջ մեկնած պիտի ըլլար կարծեմ: [Վարդգէս] Զամազասպեանը իմ նամակիս - որ այդտեղէն յանձնեցիր թղթատարին - ի պատասխան կ'ըսէ թէ Ֆելիքս Աբրահամեանին³⁵³ պիտի դրկեն Զայաստանի կարգ մը երաժիշտներու գործերէն՝ թելադրութեանս համաձայն: Մաղթենք որ մարդուն՝ քե-





զի ծանօթ թերս մէկ տրամադրութեան չհանդիպի եւ յարգէ խոստումը: Համազասպեանը կ'ըսէ նաեւ թէ պիտի ընեն ինչ որ հնարաւոր է յանձնարարած դաշնակահարուհիս - Փարիզէն Իրէն Բամպուրճեան³⁵⁴ - Հայաստան հրաւիրելու համար: Թէեւ այս մարդոց խոստումներուն իրագործումը տարիներու կը կարօտի երբեմն:

Պահէ զիս տեղեակ եթէ զիս հետաքրքրող որեւէ նորութիւն ունենաս Լոնտոնէն կամ Հայաստանէն: [Եորկըն] Անտերսընիս մասին գրած յօդուածդ արտատպեր էր նաեւ «Յուսաբեր»ը ասկէ քանի մը շաբաթ առաջուան իր թիւերուն մէջ:

Ջերմ բարեւներ Վիվիէնին, Պարոն Պետրոսին [Ալեքսի], Տիկին [Ֆլորա] Ալեքսիին - որ կը յուսամ թէ աւելի լաւ է հիմա - ինչպէս նաեւ Այվընին [Ալեքսի] եւ Սիլվիային [Ալեքսի]: Իսկ Կարինէն ու Արմինէն - շա՛տ անուշիկ երկուքն ալ - զիս տակաւին չեն մոռցած կը յուսամ:

Սիրով՝
Վահրամ

ՆԱՄԱԿ 48

Լիզպոն, 18 Սեպտեմբեր 1968

Սիրելի Ասատուր,

Ասկէ ճիշդ ամիս մը առաջ ճամբած նամակս ստացած ըլլալու ես ատենին: Հիմա երկու տող՝ պզտիկ խնդրանքով մը դարձեալ:

Հայաստանի մէջ այս օրերուն, ըստ երեւոյթին հանդիսաւոր կերպով, կը տօնեն Ստեփան Կուրտիկեանին վաթսունամեակը: Այդ առթիւ երկու ամիս է յօդուածներ կ'երեւին մեր մամուլին մէջ: Պահ մը մտածեցի շնորհաւորական քանի մը տող գրել իրեն՝ բայց յետոյ ծուլացայ եւ ի վերջոյ հրաժարեցայ գաղափարէն: Ասկէ 10-12 օր առաջ «Յոբելինական Յանձնաժողովի» կողմէ քանի մը տող ստացայ, ուր պաշտօնապէս կը յայտնէին թէ «Յանկալի է այդ առթիւ ստանալ ձեր մաղթանքը»: Փախուստ չկայ ուրեմն: Այս օրերուն երկար նամակ գրելու ոչ ժամանակը եւ ոչ ալ տրամադրութիւնը ունիմ: Խորհեցայ թէ հեռագիրը ամենէն յարմար լուծումն է. դիւրին եւ... պատուաւոր ձե-





լը դուրս գալու: Շարադրած եմ զայն ներփակ թուղթին վրայ անգլիատառ հայերենով այսպես.-

ՅԵՌԱԲՈՐ ԱՅՍ ԱՓԵՐԷՆ ՍՐՏԱԳԻՆ ՈՂՋՈՅՆ ՎԱԹՍՈՒՆԱՄԵԱԿԻԴ. ԵՐԿԱՐ ԱՊՐԻՍ ՄԵՐ ՅԱՄԲՈՒՐԵԼԻ ՄՇԱԿՈՅԹԻՆ ԱՐԴԻՆԱԲՈՐ ԿԵՐՊՈՎ ԾԱՌԱՅԱԾ ԸԼԼԱԼՈՒ ԵՐՁԱՆԿՈՒԹԵԱՆ ՆՈՐԱՆՈՐ ԱՌԻԹՆԵՐ ՈՒՆԵՆԱԼՈՒ ՅԱՄԱՐ.

Շնորհակալ կ'ըլլամ ուրեմն եթե առաջին հերթին կարենաս ճամբել զայն պետք եղած թուղթին վրայ - նախընտրաբար գրամեքենայով - արտագրելէ ետք: Այս ձեւով ազգանուէր գործի մը բերած կ'ըլլաս նաեւ քո՛ւ մասնակցութիւնդ:

Սիրով՝
Վահրամ

ՆԱՄԱԿ 49

Լիզպոն, 6 Յոկտեմբեր, 1968

Սիրելի Ասատուր,

Նամակդ ստացայ առջի օր. կը գրեմ իսկոյն՝ նախքան ճամբայ ելլելդ բռնելու համար քեզ:

Ուրախացայ լսելով մօտալուտ ճամբորդութեանդ մասին: Այսքան տարի վերջ ատենն էր որ Յայրենիք այցելէիր դարձեալ: Անձնական փորձառութիւնս ցոյց տուաւ թէ այնտեղ անելի «լիանալու», մարդոց ներկայութիւնը վայելելու, զիրենք անելի մօտէն ճանչնալու, իրենց կեանքին ու մտածումներուն ծանօթանալու համար տօնական առիթներով այցելութիւնները յանձնարարելի չեն երբեք: Խօսքս անշուշտ Ամերիկա մեր հայրենակցական միութիւններուն վարչութեան անդամներուն մասին չէ. ասոնք գոհունակութիւն մը, մասնաւոր կարեւորութիւն մըն ալ կը զգան երբ ոչխարներու հօտի մը պէս՝ *օթօպիւստ* կը տարուին ասդին անդին, մէկ գործարանէն, մէկ հանդեսէն միւսին: Մեր, մեզիպեսներուն փնտռածը սիրտէ սիրտ հաղորդակցութիւնն է՝ որուն հազիւ թէ ժամանակ կը մնայ երբ ստիպուած կ'ըլլաս 5-6 ժամ տեւող հանդեսներու ներկայ ըլլալ: Միւս կողմէ, կ'երեւի տօնական օրերու այս պատրուակներն ալ անհրաժեշտ են իրենց տուած հրաւերները արդարացնելու համար: Ինչ որ է, սրտագին մաղթանքս է որ ողջ-ամողջ երթաս ու





վերադառնա՝ հոգեպէս նորոգուած ու զօրացած, ինչպէս կ'ըլլան Յայրենիք այցելող սիրտի տէր բոլոր լաւ, իրաւ հայերը:

Յանձնարարութիւններ. ահաւասիկ.

1- Ներփակ նամակը բարի եղիր յանձնել Թորոսին [Թորանեան]:

2- Թորոսէն՝ Սայաթ Նովա³⁵⁵ նուագող պզտիկ զարթուցիչ մը ուզած էի: Վերջին նամակով կ'ըսէ թէ Նոր Տարիին պիտի դրկէ, կ'ենթադրեմ *փոստով*: Ինչպէս իրեն ալ գրած եմ - լաւ կ'ըլլայ որ իրեն ուղղուած ներփակ նամակս կարդաս մէյ մը - *փոստով* դրկելու պարագային զայն մաքսատունէն ազատելը փորձանք կ'ըլլայ այստեղ: Թող քեզի տայ եւ միասին բեր: Լոնտոնէն այս կողմ անցընել դժուար չըլլար անկէ ետք:

3- [Ստեփան] Ալաճաճեանին մօտ շուրջ 500 ռուպլի ունիմ: Այնտեղ գտնուած շրջանիդ եթէ պատահի որ դրամի պէտք ունենաս՝ առ իրմէ որքան որ ուզես: Վերադարձիդ, երկրէն դուրս ելլելու ատեն տոլար արած ըլլալդ ապացուցանելու պահանջքին տակ չես ըլլար՝ երբ կ'երթաս որպէս հիւրը Պետութեան՝ որ պիտի հոգայ այնտեղ ունենալիք բոլոր ծախսերդ:

4- Գրող Ռաֆայէլ Արամեանը ինծի համար իւզաներկ Արարատ մը ապահոված էր - ըստ իր ըսածին - Մարտիրոս Սարեանէն³⁵⁶ որուն շատ մօտիկ բարեկամ է: Այնպէս պատահեցաւ որ Երեւանէն մեկնելէս քանի մը օր առաջ ինք Լենինկրատ գնաց [Եղիշէ] Չարենցի հանդիսութեան խօսելու եւ նկարը մնաց ետեւ: Վերադարձի ճամբուս վրայ երբ Մոսկուայ տեսայ զինք, խոստացաւ դրկել անպայման: Նկատի ունենալով *ամանաթին* կարելութիւնը, ըսի որ չընէ ատիկա պատահական մարդոց միջոցաւ: Արդ,

ա- Եթէ ճիշդ է թէ արդէն ապահոված է նկարը՝ որ,

բ- Խոշոր չէ *վալիզի*դ մէջ մտնելու չափ,

կրնամ ինդրել որ յանձն առնես զայն եւ *վալիզի*դ յատակին ինամքով տեղաւորած բերես յայս կողմն աշխարհի: Այս մասին խօսած էի նաեւ Թորոսին, ինդրելով որ նկատի ունենայ զայն իր յաջորդ Փարիզ այցելութեան: Յամենայնդէպս գոհ կ'ըլլամ եթէ հետաքրքրուիս եւ վերադարձիդ պահես զիս տեղեակ կացութենէն: Ինծի համար շատ յարգի յաւելում մը պիտի ըլլայ հեռաւոր այս աքսորիս մէջ, սենեակիս պատերը զարդարող ուրիշ հայ նկարիչներու գործերու կողքին:





5- Ստ[եփան] Կուրտիկեանին տուր ջերմ բարեւներս եւ ստուգէ թէ ստացա՞ծ է ճամբած հեռագիրդ: Ի դեպ, անելի լաւ ձեռով չէիր կրնար գործածած ըլլալ մնացեալ տուլարները: Թէ-եւ խոստովանիմ որ կրկնապէս գոհ ձգած պիտի ըլլայիր զիս եթէ պզտիկ բաժին մըն ալ հանած ըլլայիր... *ճէք փօթի:*

Կարօտալի եւ ջերմ բարեւներ Սիլվային [Կապուտիկեան],³⁵⁷ Մարօ Մարգարեանին, Անահիտ Սահինեանին եւ տղոց, բոլորին: Տերն ընդ քեզ. վերադարձիդ կը սպասեմ լուրերուդ:

Սիրով՝
Վահրամ

[3.Գ.] Մոռցայ յիշելու որ Սարեանի «Արարատ»ը եթէ յաջողիս ձեռք ձգել, պայման է որ զայն առանց շրջանակի տեղաւորես *վալիզիդ* մէջ, որովհետեւ եթէ շրջանակով-մրջանակով ձեռքդ բռնած ըլլաս - բան մը որ ոչ յանձնարարելի եւ ոչ ալ փափաքելի է այլապէս ալ - Մոսկուա դուրս ելած ատենդ խնդիր կ'ունենաս, որովհետեւ կա՛մ ստիպուած «tax» պիտի վճարես կամ նկարը ձգես ետեւ, ինչպէս ստիպուեցաւ ընել [Գառնիկ] Ադդարեանը անցեալ տարի երբ երկու խոշոր նկարներ, շրջանակով, ձեռքը բռնած դուրս կ'ուզէր բերել միասին: Պարագան տարբեր է *վալիզիդ* յատակը տեղաւորուած պաստառին:

ՆԱՄԱԿ 50

Լիզպոն, 27 Դեկտեմբեր, 1968

Սիրելի Ասատուր,

Լուր չունիմ տակաւին թէ Զայրենիք կրցա՞ր երթալ ի վերջոյ: Եթէ այո՝ շատ հաւանական չէ որ վերադարձած ըլլաս արդէն, երբ գիտեմ թէ անգամ մը հոն իյնալէ ետք օձիքդ դիւրաւ «բաց չեն թողնի»: Խնդիր չէ սակայն, ժամանակ շահած ըլլալու համար կը գրեմ այժմէն, նամակս կրնայ սպասել այնտեղ՝ եւ... բարի գալուստ մաղթել քեզի վերադարձիդ:

Ըսեմ թէ հարցը ինչումն է այս անգամ:

Ծանօթ ես անշուշտ որ ասկէ քանի մը տարի առաջ, Երեւանի Պետական Զամալսարանի *Ռեկտոր* Ակադեմիկոս Մկրտիչ





Ներսեսեանը³⁵⁸ ռուսերէն լեզուով եւ վաւերագրային բովանդակութեամբ հատոր մը հրատարակեց. - *ՃԵՆՕՍԻՏ*: Վերջերս ձեռքս անցաւ հատորին մասին լոյս տեսած անգլիերէն գրախօսական մը, ըստ երեւոյթին, անգլիական կամ իրլանտական հանդէսի մը մէջ: Ունեցածս լուսատիպ օրինակն է միայն գրախօսականը պարունակող էջերուն: Ղրկողը դժբախտաբար մոռցած է վրան նշանակելու հանդէսին անունը: Այս վերջինը, ինչպէս կ'երեւի, լուրջ եւ ծաւալուն հրատարակութիւն մըն է, որովհետեւ գրախօսականը գրաւած է 173-176 էջերը: Կարելոր յօդուած մըն է եւ կ'արժէ որ մեր ընթերցողներն ալ տեղեակ ըլլան: Կ'ուզեմ հետեւաբար զայն թարգմանել եւ ղրկել «Նայիրի»ին կամ «Հայրենիքի Ձայն»ին: Ասիկա սակայն առանց անունին չըլլար, կամ կ'ըլլայ... հայկական գործ: Պարագաները այնպէս են որ լուսատիպ օրինակները ղրկողէն չեմ կրնար ուզել: Ներփակ առաջին էջը կը ղրկեմ, խնդրելով որ փորձես գտնել աղբիւրը, այսինքն հանդէսին անունը, տարին եւ թիւը: Թերեւս [Տէյվիտ Մարշըլ] Լանկը կամ *Միս Մորկընը*,³⁵⁹ որոնք գրադարաններու հետ կապ ունին իրենց համալսարաններուն մէջ, կարենան օգտակար ըլլալ: Յամենայնդէպս տեղեկութեան իմ կողմէ ուզուած ըլլալը յիշելու պէտք չկայ: Խորհրդապահաբար ըսեմ նաեւ որ կարելոր հրատարակչական տուն մը կը մտածէ ամբողջ հատորը անգլիերէնի թարգմանելով հրատարակելու մասին: Եթէ փնտռտուրդ արդիւնք տայ, շնորհակալ կ'ըլլամ եթէ 175րդ էջին առաջին 10 տողերն ալ ընդօրինակես եւ ղրկես նամակիդ հետ. ունեցած *Ֆոթոքրփի*ներուս վրայ անընթեռնելի են ասոնք:

Յարմար առիթով մը կը սպասեմ երկար նամակիդ: Ինչպէս կ'ըսեն, կերածդ-խմածդ քեզի, տեսածներդ, լսածներդ պատմէ:

Բարեւներ տնեցիներուն:

Սիրով՝

Վ. Յ. Մավեան

[3.9.] Կրնա՞ս քանի մը տեղեկութիւն քաղել նաեւ յօդուածին հեղինակին «Hubert Evans»ի մասին: Հաւանաբար դասախօս է համալսարանի մը մէջ:



ՆԱՄԱԿ 51

Լիզայն, 2 Դեկտեմբեր, 1968

Սիրելի... Գրական Աշխատող,

Նամակներդ ստացած եմ. երկուքն ալ: Շնորհակալութիւն՝ [Յուպըրթ] Էվընզի յօդուածին մասին տուած տեղեկութիւններուդ համար: Չայն արդէն դրկած եմ «Նայիրի»ին:

Ուրախ եմ որ Յայրենիք այցելութիւնդ անցած է հաճելի. չէր կրնար այլ կերպ ըլլալ: Արամեանին յանձնած նկարը բարի եղիր խնամքով պահել քովդ մինչեւ որ յարմար ձեւ մը գտնենք այս կողմ անցընելու: Եթէ ընթեռնելի է ստորագրութիւնը, յաջորդիւ բարի եղիր ըսել թէ ո՛վ է նկարիչը. Արարա՞տը ներկայացնող գործ մըն է: Ռաֆայել Արամեանը - ինչպէս նաեւ եղբայրը՝ Վալթերը³⁶⁰ - Յայաստանի ամենէն տաղանդաւոր եւ մինչեւ ծուծը հա՛յ արծակագիրներէն է: Երկուքն ալ բուխ սիրտով, պարզ, մինչեւ իսկ անտաշ տղաք են: Վալթերը 15-18 տարի Սիպերիա եղած է: Իսկ [Գեորգ] Էմինը³⁶¹ խալթ է խառներ երբ իրեն կը վերագրէ միայն՝ երգչուհին մեր սեղանը բերելու յաջողութիւնը: Հաւանաբար չիշէ՛ց անգամ որ միասին իջած էինք վար, աղջկան սենեակը, առաքելութիւնը գլուխ հանելու համար, [Ստեփան] Ալաճաճեանին եւ Յրաչեայ Յովհաննիսեանին³⁶² ձախողութենէն վերջ: Վստահաբար տեղեակ ես որ Դեկտ[եմբեր] 7ին գրողներու տաս հոգիւնց խումբ մը Փարիզ կու գայ 9 օրուան համար. խումբին մէջ են Ալաճաճեանը, Պ[արոյր] Սեւակը,³⁶³ [Անահիտ] Սահինեանը եւայլն: Մեղք որ չեմ կրնար յառաջիկայ շրջապտոյտս - որուն հաւանաբար սկսիմ Դեկտ[եմբեր]ի վերջերը - քիչ մը առաջ քաշել եւ քանի մը օրով հանդիպիլ Փարիզ նոյն շրջանին: Լեւոն Միրիճանեանը³⁶⁴ նամակ մը գրած էր եւ կ'ըսէ թէ Փարիզէն պիտի փորձեն անպայման հեռաձայնով գոնէ ողջոյն մը ըսել ինծի:

Նամակներուդ մէջ արծարծուած «լուրջ հարցերուն» պատասխանեմ առանձին առանձին. ուրեմն,

1- **Տպագրական մեքենայ.** Կոմիտէի անդամները այլեւս շատ լաւ գիտեն թէ ինչ տեսակ սարքեր կամ կազմածներ կ'իյնան Յիմնարկութեան ծրագիրներուն մէջ - մամուլը կամ տպագրական մեքենան ՉԵՆ իյնար - եւ կրնան հետեւաբար մեզի ուղղակի ներկայացնել իրենց խնդրանքները, փոխանակ



ասդիէն-անդիէն միջնորդներ ձգելու մեջտեղ: Իսկ եթէ մեզի չեն գրած այդ մասին, կը նշանակէ թէ արդէն ծանօթ են մեր պայմաններուն: Ասկէ քանի մը ամիս առաջ տակաւին նոր 150,000 տոլարի նոր յատկացում մը ըրինք Հայաստանին ի նպաստ եւ գրեցինք [Սփիւռքահայութեան Հետ Մշակութային Կապի] Կոմիտէին որ նախապատուութեան կարգով մեզի ներկայացնեն իրենց կարիքները:

Հայաստանի մեր բարեկամները երբեմն միայն կը խօսին դժբախտաբար.- սրան կարիք ունենք, նրան պէտք ունենք. իսկ երբ պատահի որ կարգադրութիւն մը ըլլայ եւ հարցը գայ գործնականին, մունջ կը կտրին, պէտք եղած տեղեկութիւնները, մանրամասնութիւնները չեն հայթայթեր՝ յաճախ նամակդ ալ անպատասխան ձգելով: Յիշեմ մէկ պարագայ միայն: Քեզի պատմած էի թէ ինչպէս այնտեղ գտնուած միջոցիս պատշաճօրէն միջնորդած էի Պրն. [Երուանդ] Հիւսիսեանին մօտ որ տպագրական մեքենայ մը նուիրէ մամուլի նախարարութեան: Խոստումը տրուած էր ուղղակի մամուլի նախարարին՝ իմ ներկայութեան: Գաղափար չունէին սակայն թէ ինչ տեսակ մեքենայի է որ պէտք ունին: Համաձայնեցանք ի վերջոյ որ իրենք հետաքրքրուին, ընտրեն եւ մանրամասնութիւնները հաղորդեն Պրն. Հիւսիսեանին որպէսզի Միլանէն ուղղակի տայ ապսպրանքը: Ասկէ 8-9 ամիս առաջ Ստեփանը գրեց թէ վերջապէս ձեռք ձգած են մանրամասնութիւնները: Թելադրեցի որ գանոնք ղրկեն ուղղակի Միլան: Կ'ենթադրէի բնականաբար թէ այդպէս ալ ըրին: Երբ անցեալ Յուլիսի սկիզբը Հիւսիսեանին հանդիպեցայ Փարիզ, առաջին առիթով հետաքրքրուեցաւ.- «Գիտե՞ս, ըսաւ, մէկտեղ Հայաստան եղած ատեննիս տպագրական մեքենայ մը խոստացած էի. մարդիկ վա՞զ անցան ինչ է, անկէ ի վեր ձայն ձուն չէլաւ»: Դո՛ւն ըսէ, սիրելի՛ գրական աշխատող, եղա՞ւ ասիկա: Նոյն օրն իսկ քարտ մը ղրկեցի Ստեփանին չեմ գիտեր որեւէ քայլ առի՞ն անկէ ասդին:

2- Աշակերտներէդ [Ռոմիկ] Մարթինի³⁶⁵ մասին առայժմ կրնամ ըսել միայն որ պաշտօնապէս դիմէ մեզի Մարտ 1էն վերջ բայց **Մայիս 31էն առաջ**, պէտք եղած հարցարանները ստանալու համար: Այս վերջինները ամբողջացնելէ ետք մեզի վերադարձնելու ատեն միւս փաստաթուղթերուն հետ լաւ կ'ըլլայ որ անպայման ղրկէ նաեւ Անգլիոյ մէջ յաճախելիք համալ-





սարանէն ընդունուած ըլլալը հաստատող վկայագիր մը: Երբ ընտրութեան ատենը գայ Օգոստոսին՝ ձեւի մը կը բերենք: Լաւ կ'ըլլայ սակայն որ Յուլիսին մէջ երկտողով մը ինծի իր պարագան յիշեցնես դարձեալ՝ որպէսզի այդ օրերու *ղալմաղալին* մէջ ուշադրութենէս չվրիպի:

3- Ռուզան Բարխուդարեանին³⁶⁶ թղթածրարը հիմա չունիմ աչքիս առջեւ, բայց եթէ ճիշդ կը յիշեմ՝ իր դիմումը մերժուեցաւ որովհետեւ, նախ՝ ներկայացուցած թուղթերը լման չէին, երկրորդ՝ որեւէ պաշտօնական վկայութիւն չկար իր երաժշտական, այսպէս կոչուած բացառիկ կարողութեան մասին եւ յետոյ, եթէ չեմ սխալիր, այն տպաւորութեան տակ էինք թէ ծնողքը այնքան ալ կարօտ չէ օժանդակութեան: Ինչպէս ըսի սակայն, յիշողութեամբ է որ կը գրեմ ասոնք եւ, աւելորդ է ըսել՝ խորհրդապահաբար, որովհետեւ սկզբունքով ոչ մէկ պատճառ կու տանք մերժուած ուսանողներու: Ո՞վ է, մօտէն ծանօթ ես իր արժանիքներուն կամ ընտանեկան պայմաններուն: Գրէ:

4- [Յովհաննէս] **ԹՈՒՄԱՆԵԱՆԻ**³⁶⁷ ծննդեան հարիւրամեակի տօնակատարութեան ծրագրէն, ինչպէս նաեւ իր գործերուն անգլիերէն եւ ֆրանսերէն թարգմանութեամբ հատորներ հրատարակելու գաղափարէն տեղեակ եմ: Ինչ կը վերաբերի այդ առթիւ մեր Հիմնարկութենէն եղած ակնկալութիւններուն, ենթադրութիւնդ շատ ճիշդ է.- գրական-գեղարուեստական հրատարակութիւնները մաս չեն կազմեր մեր ծրագիրներուն: Ասիկա կը նշանակէ անշուշտ որ հրատարակութեան ծախսը հոգալու համար ներկայացուած որեւէ դիմումի չեմ կարծեր որ կարելի ըլլայ ընդառաջել: Իսկ միւս կողմէ, եթէ պատահի որ հատորին հրապարակ գալէն վերջ բացառաբար համաձայնութիւն յայտնենք որոշ թիւով օրինակներ գնելու, ասիկա կրնայ շա՛տ շատ ըլլալ քանի մը տասնեակ օրինակի համար: Ասիկա անձնական կարծիք մըն է բնականաբար եւ որեւէ արգելք չկայ որ պաշտօնապէս գրեք այդ մասին: Թէեւ պիտի նախընտրէի որ Կոմիտէն գրած չըլլար պաշտօնապէս՝ մերժումէ մը խուսափած ըլլալու համար: Եթէ այդտեղ յանձնախումբ մը կազմելու ըլլաք, փորձ մը ըրէք եթէ կ'ուզէք՝ առաջարկելով երկու կարելիութիւններն ալ.- ամբողջ ծախսը հոգալու եւ կամ որոշ թիւով օրինակներ գնելու: Նայինք թէ անկէ վերջ ինչ կարելի կ'ըլլայ ընել:





Անկախ այս վերի ըստածներէն, Թումանեանը որպէս բանաստեղծ եւ գրող սիրելով հանդերձ, անկեղծ ըլլալու համար չեմ գիտեր թէ կրնա՞ն զինք անվերապահօրէն ներկայացնել միջազգային հրապարակին: Ի՞նչ մեղքս պահեմ, ես չեմ կարծեր:

Հիմա միտքս ինկաւ որ ասկէ շուրջ երկու տարի առաջ Ալաճաճեանը գրած էր նաեւ [Մովսէս] Խորենացիի հազար չեմ գիտեր քանի հարիւրամեակին առիթով *Հայ ժողովուրդի Պատմութիւնը* տարբեր լեզուներով հրատարակելու մասին: Պատասխանեցի իր հարցումներուն եւ այնտեղ գտնուած միջոցիս ալ խօսեցանք Հիմնարկութենէն այդ առթիւ գալիք օժանդակութեան մը կարելիութիւններուն մասին: Խոստացան առաջին հերթին քանի մը օրինակ դրկել վերամշակուած հայերէն հրատարակութենէն՝ որ լոյս տեսած պիտի ըլլար... անցեալ Յունուար-Փետրուարին: Ոչ մէկ ձայն:

* * *

Ինչպէս վերը յիշեցի, շատ հաւանական է որ Դեկտեմբերի վերջին շաբաթը ճամբայ ելլեմ նոր շրջապտոյտի մը: Գլխաւոր առաքելութիւնս պիտի ըլլայ դէպի Պարսկաստան այս անգամ, ուր կրնամ մինչեւ նոյնիսկ ամիս մը մնալ: Թէեւ տակաւին չեմ կազմած ծրագիրս, հաւանաբար հանդիպիմ նաեւ, Պոլիս եւ Պէրլու: *Անկապ Օրագիր*ս որ մամուլի տակ է ատենէ մը ի վեր, կ'աշխատիմ որ լոյս տեսած ըլլայ այն կողմերը գտնուած շրջանիս՝ որպէսզի գոնէ Հայաստան եւ արաբական երկիրներ նուէր դրկուելիք օրինակները Կիպրոս բերել տամ, քանի մը օր հանդիպիմ այնտեղ, մակագրեմ եւ յանձնեմ *փոստ*ին: Այլապէս ստիպուած պիտի ըլլամ մինչեւ Լիզպոն բերել զանոնք: Այս բոլոր տաղտուկը անշուշտ անոր համար որ գիրքը կը տպուի Իսրայէլի մէջ: Գրէ յաջորդիւ թէ Լոնտոնի համար քանի օրինակ նկատի ունենամ:

Պարտք կը նկատեմ քեզի յիշեցնել, որ Հայաստան մեկնելէ առաջ խոստացած նկարդ - Կարինէին եւ Արմինէին հետ - չդրկեցիր տակաւին: Կը սպասեմ անպայման յաջորդիւ: Գրէ ճամբայ ելլելէս առաջ: Ջերմ բարեւներ Վիվիէնին, ծնողքին եւ պաշիկներ ձագուկներուն:

Սիրով՝
Վահրամ



ՆԱՄԱԿ 52

Լիզպոն, 16 Փետրուար, 1969

Սիրելի Ասատուր,

Շրջապտոյտես վերադարձայ ճիշդ շաբաթ մը առաջ: Եթէ [Յայկ] Գալուստեանը տեսնելու առիթ ունեցար՝ պատմած ըլլալու է Պարսկաստանի մեր հանդիպումներէն: Նոյն պանդոկէն էինք եւ յաճախ առիթներ ունեցանք միասին ըլլալու: Մէկէ աւելի անգամներ խօսեցաւ «Արեգակ»ը վերստին հրատարակելու մասին եւ խնդրեց, պնդեց, հակառակ իմ «լուրջի չ'ամնելուս» որ Պէյրուս վերադարձիս հետաքրքրուիմ անպայման թերթը այնտեղ տպելու կարելիութիւններով: Ըրի ատիկա եւ ասկէ 4-5 օր առաջ իրեն գրեցի մանրամասնութիւնները: Եթէ արդէն ցոյց չէ տուած քեզի՝ ուզէ իրմէ եւ կարդա նամակս: Լաւ կ'ըլլայ որ Լոնտոնը իր ձայնը ունենայ: Տպագրութեան համար յարմարագոյն կարգադրութիւնն է ըրածս: Տպուելէ վերջ թիւերը նոյն օրն իսկ կրնաք այնտեղ ունենալ «Իրան Էր»ով:

Թեհրան գտնուած միջոցիս Տիկին Մարթին Կելլերքեան - ° - մը հեռաձայնեց, ըսաւ որ շատ խօսած էք իրեն իմ մասիս բայց դժբախտաբար առիթ չէ եղած հանդիպելու եւ թէ շատ գոհ պիտի ըլլայ եթէ անգամ մը այցելեմ իրենց: Վերջին օրերս էին Թեհրան եւ չափազանց խճողուած, լեցուն էր յայտագիրս: Փոխադարձաբար ուրախ կ'ըլլամ ըսի, աւելցնելով որ ժամանակ չունեի շատ եւ իրենց այցելել մը կրնար քանի մը ժամ խլել ինծմէ: Խոստացաւ այն ատեն ինք այցելել պանդոկ եւ ըստ այնմ ալ ժամադրուեցանք: Ժամ մը իրեն տրամադրելու համար՝ արդէն ունեցած ժամադրութիւններս հրեցի, հրմրեցի՝ տեղ մը բանալու համար: Եւ յաջորդ օրը որոշեալ ժամուն տիկինը ոչ միայն չէրեւաց՝ այլ հեռաձայն մը անգամ չըրաւ ըսելու համար թէ պիտի չկրնա՛յ գալ: Բաւական զայրացայ այն ատեն, այդ բոլորէն վերջ, կարելոր ժամերես մէկը պարապ տեղ մեռցուցած ըլլալուս համար: Ո՞վ է այս տիկինը, ինծի խօսած էք իր մասին, չեմ յիշեր: Կ'արժէ... ներել իրեն:

Պելֆասթի օրերես բարեկամ գերմանացի աղջիկ մը, որ քանատացիի մը հետ դժբախտ ամուսնութիւն մը կնքեց վերջը, կը լսեմ թէ Լիզպոն պիտի գայ քանի մը օր Լոնտոն հանդիպելէ վերջ: Այսօր երկու տող մը գրեցի իրեն խնդրելով որ հեռաձայն



մը ընէ քեզի որպէսզի Յայաստանէն ինծի համար բերած նկարդ - Ռաֆայէլ Արամեանէն - իրենց յանձնես: Տուած ատենդ ըսէ որ վալիզին մէջ տեղաւորէ, այլապէս այստեղ մաքսատու-նը խնդիր կրնայ ունենալ. որքան ալ անկարելորդ, խիստ են այստեղ մերոնք արուեստի գործերու հանդէպ:

Կրնա՞մ խնդրել նաեւ որ ներփակ նամակները յանձնես *փոստին*. ինչ արած, Լոնտոնի հայոց հիւպատոսը ըլլալը դիրին բան չէ, պիտի դիմանաս այս *անդադրի*յաներուն: Ձագուկներուդ հետ ունեցած լուսանկարս պիտի ղրկե՛ս տակաւին:

Սիրալիր բարեկերտ տնեցիներուն. կը սպասեմ նամակիդ:

Սիրով՝
Վահրամ

ՆԱՄԱԿ 53

Լիզպոն, 24 Ապրիլ, 1969

Սիրելի Ասատուր,

Երկու ամիս առաջ գրած նամակիս պատասխանը ստանալու պատիւին չ'արժանացուցիր մեզ տակաւին: Եթէ որեւէ հաւանականութիւն կայ որ գրես, մի մոռնար անդրադառնալ այնտեղ յիշած կէտերուն: Ո՞ւր մնաց «Արեգակ»ին վերահրատարակութեան խնդիրը: Ի դէպ, կը լսեմ անուղղակիօրէն թէ ծրագիր ունին «Աշխարհ»ը օրաթերթի վերածելու եւ այդ առթիւ բանակցութեան մտած են [Բիւզանդ] Թօփալեանին հետ տպարանը գնելու համար:

Շնորհակալութիւն Յայաստանէն բերած նկարիդ համար. խօսքը մէջերնիս՝ պարապ բան է. կը ցաւիմ որ անտեղի տաղտուկ պատճառած եղայ քեզի: [Ռաֆայէլ] Արամեանին ինծի խոստացածը Մարտիրոս Սարեանի՞ն մէկ նկարն էր: Զանա-տացի բարեկամուհիս շատ խանդավառ էր ձեզմով. «բարեկամներդ շատ համակրելի մարդիկ են» ըսաւ, քիչիկ մըն ալ ցաւելով որ չէր կրցած ձեզ քիչ մը աւելի վայելել:

Կը տեսնես որ գրելու համար *պախալի* հաշիւով հերթի չեմ սպասեր՝ որովհետեւ կ'ուզեմ **խորհրդապահաբար** - լուրը դուրս պետք չէ ելլէ տակաւին - ըսել որ եթէ ամէն բան ընթանայ ակնկալուածին պէս, Մայիս 9-10ի ատենները Փարիզէն... Յայաստան կը մեկնիք Պրն. [Ռոպեր] Կիւլպենկեանին հետ, 12-15





օրուան համար, Հիմնարկութեան կողմէ պաշտօնական այցելութիւնով մը: Երէկ հեռագրեցինք որ *վիզաները* դրկեն իսկոյն: Կը գրեմ ուրեմն հարցնելու մասնաւորաբար թէ կրնա՞մ այնտեղ որեւէ ձեւով օգտակար ըլլալ. քովդ արխիւ-մարխիւ եթէ ունիս՝ տուր տանիմ: Գիտեմ թէ պարագաներու բերումով ստիպուած պիտի ըլլամ ժամանակս գրեթէ ամբողջութեամբ յատկացնել պաշտօնական հանդիպումներու եւ այցելութիւններու, առանց տղոց, գրողներուն հետ կարենալ ըլլալու այն չափով որ կ'ուզեմ:

Օրագիրս լոյս տեսաւ վերջապէս՝ հոգիս ալ հետը հանելով: Այնքան ուշացաւ՝ որ *իշտախս* ալ փախաւ: Իբրեւ թէ անցեալ Դեկտ[եմբեր]ին պատրաստ պիտի ըլլար: Ծրարները անցեալ շաբաթ *փոստի*ն յանձնած է Արան [Գալայճեան]. քանի մը շաբաթէն այստեղ կ'ըլլան ուրեմն: Օրինակդ կ'ունենաս առաջին հերթին: Ատկէ զատ պիտի գրեմ Արային որ 20 օրինակ մը դրկէ հասցէիդ. քովդ ունեցիր... Լոնտոնի շուկային համար: Չանոնք անպայման ծախելու պարտաւորուած մի զգար բնաւ, եթէ նախորդ անգամուան պէս քանի մը օրինակ կարելի եղաւ տեղաւորել՝ լաւ, այլապէս ի վերջոյ անոնք ալ նուէր կը բաժնենք: Բիւզանդին գծած գունաւոր կողքին **տպագրութիւնը միայն** արժեց... 100 սթերլին: Խենթութի՞ւն. թերեւս: Զանի ջուրը մտանք մարդու պէս լողանք ըսի: Թէեւ Ամերիկան նկատի ունենալով հատորին վրայ 3 տուար նշանակած եմ գինը, այդտեղ կրնաք կարծեմ ծախել 12 շիլինի՝ որ հազիւ *ռաս մէլն* է:

Տնեցիները բոլոր լաւ են կը յուսամ. տուր սիրալիք եւ ջերմ բարեւներս բոլորին: Յաջորդիւ տուր նաեւ հեռաձայններուդ թիւերը - տան եւ Էճըրթընի - յիշելով նաեւ թէ ո՞ր ժամերէն ետք է սովորաբար որ տուն կ'ըլլաս: Անմիջական բան մը ըլլալու պարագային կրնամ ի պահանջել հարկին հեռաձայնով կապուիլ իսկոյն: Գրելէ առաջ անպայման ձեռք անցուր եւ կարդայ նաեւ «Նայիրի»ի 13 Ապրիլի թիւը:

Միշտ սիրով՝
Վահրամ





ՆԱՄԱԿ 54

Լիզպոն, 6 Մայիս 1969

Սիրելի Ասատուր,

Ստացած եմ նամակդ: Վաղը առաւօտ ճամբայ կ'ելլեմ դէպի Փարիզ՝ իսկ Շաբաթ օր - Մայիս 10ին - կ'անցնիք Մոսկուա եւ Երեւան: Հաւանական է որ մասնք 10-12 օր միայն: Վերջին վայրկեանին տեղեկացանք որ [Վարդգէս] Համագասպեանը եւ Վահագն Դաւթեանը Փարիզ պիտի ըլլան ամսուն 6-20: Ըսած էի կարծեմ ուրիշ անգամ որ երբ գործով է որ կը ճամբորդենք՝ Հիմնարկութիւնը կ'ապահովագրէ մեզ: Յաճախ անտեսած եմ այդ «պարտականութիւնը»: Այս անգամ պահանջեցին որ ընեմ պետք եղած գործողութիւնները: *Տօրմին* վրայ կ'ուզուէր մօտիկ ազգականի մը անունը: Ի զուր փնտռեցի՝ ես ինծի: Չկար: Չունիմ, ըսի ի վերջոյ: Չ'ըլլար, ըսին: Պետք էր անուն մը դնէի համապատասխան սիւնակին մէջ: Անո՛նդ դրի: Ուրեմն գիտցիր որ... ժառանգորդ ես... ի պահանջել հարկին: Ունեցածս կը փոխանցես Հայրենիքին՝ «յիշատակս անմահացնող» նպատակի մը գործածուելու համար: Միշտ անշուշտ՝ ի պահանջել հարկին: *Իշտէ* ասանկ բաներ՝ ընկեր գրական աշխատող:

Այսօր գրեցի Արային [Գալայճեան] որ 20 օրինակ *Անկապ Օրագիր* դրկէ հասցէիդ: Կը յուսամ դժուարութիւն չես ունենար զանոնք տեղաւորելու:

Վրէժ Ներսէսեանին եւ Ռ[ոնի] Քաջիկի³⁶⁸ պարագաները կ'ունենամ ի մտի Օգոստոսին, ընտրութիւններու ժամանակ, պայմանաւ որ ժամանակին դիմած ըլլան պետք եղած տեղը, այսինքն, եթէ անգլիաբնակ են՝ Լոնտոնի մեր գրասենեակը: Քաջիկի պարագային չես ըսեր թէ ո՞ր երկրէն է որ պիտի դիմէ: Կարելոր է յիշել, որովհետեւ այլապէս ստիպուած պիտի ըլլամ հազարէ աւելի դիմումնագրերուն մէջ մէկիկ մէկիկ փնտռել: Յիշեցնե՛մ դարձեալ որ հարցարանները ստանալու պայմանաժամը Մայիս 31ն է:

Վաղը Փարիզի մէջ կը բացուի նաեւ Բարեգործականի «համաշխարհային», ինչպէս թերթերէն մէկը կոչած էր զայն - խորհրդակցական ժողովը: Առիթ կ'ունենամ ուրեմն հանդիպելու նաեւ Ամերիկայէն եւ այլ երկիրներէ եկած բարեկամ *աղաներուն*: Լոնտոնէ՞ն ով գնաց արդեօք:

Ջերմօրէն բարեւելով տնեցիները,
Միշտ սիրով՝
Վահրամ



ՆԱՄԱԿ 55

Լիզպոն, 16 Օգոստոս 1969

Սիրելի՛ Ասատուր,

Օգոստոս 1 թուակիրդ կարդացի հաճոյքով: Անցած ըլլայ: Ուշադիր եղիր առողջութեանդ՝ առանց որուն աշխարհը տասը *փարայի* արժէք չ'ունենար աչքիդ:

Յանձնարարած ուսանողներդ անպայման կ'ունենամ ի մտի: Լոնտոնի թղթածրարները հասան քանի մը օր առաջ. հագիւ ժամանակ ունեցայ վրան աչք մը նետելու միայն: Ռոնի Քաչիկին ծնողքը սիրապալես լաւ է ըստ երեւոյթին: Յամենայնդէպս կը փորձեմ ձեւ մը գտնել դասաւորելու: Քեզ կը պահեմ տեղեակ արդիւնքէն:

Կ'արժէ որ Լոնտոնն ալ իր մասնակցութիւնը բերէ [Յովհաննէս] Թումանեանի հարիւրամեակին, թէւ տակաւին չեմ համոզուած որ միջազգային գրական հրապարակին ներկայացուելիք՝ միջազգային չափանիշով գրող է Թումանեանը: Հիմնարկութեան հրատարակչական ծրագրին ընդհանուր քաղաքականութեան մասին քեզի գրած եմ ուրիշ առիթով: Այսուհանդերձ ոչինչ կը կորսնցնէք եթէ Յանձնախումբին անունով գրէք պաշտօնապէս - Պրն. [Ռոպեր] Կիւլպէնկեանին ուղղելով ձեր նամակը - ըսէք թէ անգլիերէն հատորը, [Միշա] Գիւտեանին թարգմանութեամբ, պատրաստ է արդէն եւ թէ հրատարակիչը յանձն կ'առնէ գործին հրատարակութիւնը պայմանաւ որ գոնէ 2,000 օրինակ մը Յանձնախումբը ինք գնէ. պայման մը՝ որ դժուար թէ ձեր գաղութին սահմանափակ կարելիութիւնները նկատի ունենալով կարենաք գոհացնել: Կ'առաջարկէք յետոյ ուրեմն որ Հիմնարկութիւնը թեթեւցնէ ձեր բեռը որոշ թիւով օրինակներ գնելով ձեզմէ՝ օտար հաստատութիւններու եւ մտաւորականներու բաժնելու համար: Լաւ կ'ըլլայ որ ձեր նամակին հետ դրկէք նաեւ մէկ օրինակը հրատարակիչին պաշտօնական նամակին՝ ուր կ'երեւին վերոյիշեալ պայմանն ու այլ մանրամասնութիւններ.- տպաքանակ, իւրաքանչիւր հատորի գին, եւայլն: Պաշտօնական ձեր նամակը մեր առջեւ ունենալէ ետք տեսնենք թէ ինչ կարելի կ'ըլլայ ընել: Ըսեմ նաեւ որ եթէ բացառաբար դրական որոշում մը տալու ալ ըլլայ մեր ժողովը մի ակնկալէք որ 500 օրինակ գնենք:

Անձնապէս չեմ կարծեր որ Հայաստանէն կարենան գրողներու



պատուիրակութիւն մը դրկել ձեր կազմակերպելիք հանդիսութեան ներկայ ըլլալու համար, մանաւանդ Քուզնեցովի պարագայէն վերջ: Տարւոյն սկիզբէն [Վարդգէս] Յամազասպեանը խոստացած է Պ[արոյր] Սեւակն ու քանի մը այլ գրողներ Պէյրութ դրկել Կոմիտասի 100ամեակին առիթով. բայց այդքան: Կազմակերպողները - Թէքէեան Մշակութային Միութիւն³⁶⁹ - ստիպուեցան հանդիսութիւնը յետաձգել: Միայն Հայաստանի կառավարութենէն կախում ունեցող հարց մը չէ եղածը դժբախտաբար:

Կը հարցնես յաջորդ Լոնտոն այցելութեանս մասին: Մինչեւ Սեպտեմբերի վերջը զբաղած կ'ըլլանք կրթաթոշակներու բաշխումով, իսկ Հոկտ[եմբեր] 2ին ունինք մեր նոր կեդրոնին պաշտօնական բացումը՝ որուն պետք է ներկայ ըլլանք: Ինչ որ կը նշանակէ թէ տարեկան արձակուրդս կարելի կ'ըլլայ առնել Հոկտ[եմբեր]ի կեսերուն հազիւ: Հայաստան գտնուած միջոցիս ըսին թէ Թումանեանի 100ամեակին առիթով արտասահմանէն հրաւիրուելիք գրողներուն մէջ նկատի ունեին նաեւ զիս: Տակաւին ձայն չկայ, թէեւ հրաւերին հասնելու պարագային ալ, հակառակ Հայրենիքին անդիմադրելի հմայքին, շատ տրամադիր չեմ երթալու, նախ որովհետեւ, ինչպէս ըսի մինչեւ Հոկտ[եմբեր]ի կեսերը չեմ կրնար ճամբորդել, եւ յետոյ կ'ուզեմ մէյ մը Ամերիկա այցելել անպայման: Եթէ յաջողի վերջին ծրագիրը, վերադարձի ճամբուս վրայ 2-3 օր մը կը հանդիպիմ Լոնտոն: Ամէն պարագայի տակ տակաւին որոշ ոչինչ կայ:

Կը լսեմ թէ Հայկազուն [Աբրահամեան] եւ Սերովբէ [Մանուկեան] Սրբազանները Լոնտոն են արդէն: Այցելութեան արդիւնքէն անպայման պահէ զիս տեղեակ կարելի մանրամասնութեամբ: Բարեւներ տնեցիներուն:

Սիրով՝
Վահրամ

ՆԱՄԱԿ 56

Լիզպոն, 19 Օգոստոս, 1969

Սիրելի՛ Ասատուր,
Քանի մը օր առաջ ճամբած երկտողս ստացած ըլլալու ես մինչեւ հիմա:





Կրթաթոշակի համար ներկայացող թեկնածուներու ընտրութեան սկսանք այսօր՝ եւ առաջին հերթին Անգլիայով: Քսան դիմողներէն հազիւ վեցը կրցան բախտաւոր դուրս գալ: Ուրախ եմ որ կարելի եղաւ «դասաւորել» Վրէժ Ներսէսեանին եւ [Ռոնի] Քաջիկին պարագաները: Ներսէսեանին յատկացուցինք տարեկան 600 սթերլին, իսկ Քաջիկին՝ 1,500 տոլար:

Մեր որոշումը հաղորդող ուսանողներուն ուղղուած պաշտօնական նամակները պատրաստ կ'ըլլան եւ կը դրկուին քանի մը օրէն: Մինչեւ այդ պաշտօնական նամակներուն ստացուիլը՝ տեղեկութիւնը նկատեցէք խորհրդապահական:

Սիրով՝
Վահրամ

ՆԱՄԱԿ 57

Լիզպոն, 18 Զոկտ[եմբեր], 1969

Սիրելի Ասատուր,

Քարտեղ ասդին ձայնդ չելաւ՝ հակառակ այստեղ տուած խոստումիդ: Քանի մը ամիս անցած ըլլալու է վերջին, իրարմէ 2-3 օրուան տարբերութեամբ գրուած նամակներու:

Ի՞նչ եղաւ ձեր ծրագրելիք հանդիսութիւնը [Յովհաննէս] Թումանեանի հարիւրամեակին առիթով: Հայաստանէն եկողներ պիտի ըլլա՞ն ի վերջոյ: Պահէ զիս տեղեակ թուականէն՝ եթէ որոշուած է: Հայրենիքէն ստացած հրաւերիս դժբախտաբար չկրցայ ընդառաջել հակառակ երթալու ջերմ փափաքիս: Անցնող ամիսներուն Լիզպոնէն բացակայիլս կարելի չէր պարզապէս:

Յոկտեմբեր 31ին արձակուրդով կ'անցնիմ Պոսթոն եւ անկէ Նիւ Եորք, եւայլն: Հաւանաբար հանդիպիմ նաեւ Տիթթոյթ, տեղի տալով Պրն. Ալլէք Մանուկեանին կրկնուող հրաւերներուն: Մինչեւ Քալիֆորնիա երթալու նպատակ չունիմ շատ: Ըսած էի կարծեմ թէ վերադարձի ճամբուս վրայ, հաւանաբար Նոյեմբեր 26ի ատենները, կ'ուզեմ 2-3 օրով հանդիպիլ նաեւ Լոնտոն... *շօփիկի*:

Թերթերէն կը տեղեկանամ թէ Պրն. [Պետրոս] Ալեքսիս ալ գացած է Միւռնօսիներէ: Վիվիէնն ալ գնա՞ց: Ի՞նչ նորութիւններ կան Լոնտոնէն: Որեւէ արդիւնք տուա՞ւ Հայկազուն-Սերովբէ այցելութիւնը: Էջմիածնի Եպիսկոպոսական ժողովէն վերջ





առնուած խմբանկարին մէջ - որ «Չարթօնք»ը հրատարակած էր քանի մը օր առաջ - Փափազը երկու ոտքերը բացեր նստեր է, ճիշդ... *պօքտրի* պէս:

Առիթ եւ ժամանակ ունեցա՞ր *Օրագիրներով* զբաղելու: Հաւանաբար Սեդա Չիլինկիրեանը³⁷⁰ օգտակար կարենայ ըլլալ զանոնք տարածելու աշխատանքին մէջ:

Հիմնարկութեան Կեդրոնի նոր շէնքին, համերգասրահներուն եւ թանգարանին պաշտօնական բացումը տեղի ունեցաւ առջի շաբաթ, Հոկտեմբեր 2-3ին: Ներկայ եղան պաշտօնական հրահրեալներ միայն - 1500 հոգի - արուեստի հետ կապ ունեցող եւ պետական մարդիկ առաւելաբար: Թանգարանը, իր հոյակապ հաւաքածոյով արդէն բաց է հանրութեան:

Եթէ գրես անմիջապէս՝ քեզ կարդալու հաճոյքը կ'ունենամ նախքան ճամբայ ելլելս:

Սիրով՝
Վահրամ

ՆԱՄԱԿ 58

21 Նոյեմբեր, [19]69
Տիթրոյթ

Սիրելի Ասատուր,

Երեք շաբաթ է ի վեր կը թափառիմ այս ափերուն վրայ: Տիթրոյթ եմ երէկուրն է ի վեր: Վաղը կը վերադառնամ Նիւ Եորք: Չորեքշաբթի, 26 Նոյեմբերի գիշերուան ժամը 10ին BA 506 Y թռիչքը կ'առնեմ դէպի Լոնտոն՝ ուր կը հասնիմ Հինգշաբթի, ձեր ժամով առտուան ժամը 10ի ատենները: Լոնտոն պիտի մնամ երկու գիշեր միայն: Կը յուսամ առիթ կ'ունենանք խօսելու... *շօփիսկ* ըրած միջոցիս: Պատմելիքները այժմէն ցուցակագրէ, որպէսզի հասնելէ վերջ ժամանակ չկորսնցնենք:

Երէկ գիշեր ամբողջ անցուցի Պրն. Ալլէք] Մանուկեանին հետ: Եղած կարգադրութիւններուն նայելով այսօրն ալ պիտի անցնի նոյն ձեւով: Կը յուսամ քանի մը վայրկեան գտնել ուրիշ բարեկամներ եւս տեսնելու համար:

Մնացեալը երբ հանդիպինք: Բարեւներ տնեցիներուն:

Սիրով՝
Վահրամ





ՆԱՄԱԿ 59

(Բացիկ)
13/12 /69
Լիզպոն

Սիրելի Ասատուր,

Տակաւին յանցաւոր կը զգամ ինքզինքս այդ խենթ օդին քեզ մինչեւ օդակայան տարած ըլլալու համար: Ոչինչ, կրցանք գոնէ այդ ձեւով ժամ մը աւելի միասին ըլլալ: Առաջին օրուան քանի մը ժամերու մեր հանդիպումը անաւարտ բան մը ձգեց կարծես տրամադրութեանս մէջ: Չկրցանք պետք եղած ձեւով վայելել գիրար, եթէ անշուշտ նկատի չունենաս... *ճէք փօթին* առջեւ անցուցած մեր քանի մը վայրկեանները: Հապա Վիվիէնին նոյնքան համեղ ճաշերը: Ջերմ բարեկեր տնեցիներուն:

Առիթով մը Օրդ. [Լուիզ] Վարդուկեանին ըստ թէ հարցուցի զինք բայց ժամանակ չեղաւ տեսնելու:

Սիրով՝
Վահրամ

ՆԱՄԱԿ 60

Լիզպոն, 14 Յունիս, 1970

Սիրելի՛ Ասատուր,

Ապրիլ 16ի նամակդ ձեռքս անցաւ Մայիս 17ին՝ երբ վերադարձայ Լիզպոն՝ երկու ամիս տեւող շրջապտոյտէս: Սիմոնը [Սիմոնեան] կ'ըսէր թէ Պէյրութ պիտի ըլլայիր այդ օրերուն: Մեղք որ «չհասցրիր» այնտեղ եղած օրերուս. կրնայինք լաւ ժամանակ մը անցընել միասին:

Մեր սիրելի Բիւզանդին [Թօփալեան] մահուան լուրը լսեցի Պէյրութէն մեկնելէս քանի մը օր առաջ: Տասը օր անցած էր արդէն թաղումէն ալ: Հսկայական Փարիզի մէջ ոչ ոք յանձն առած էր հեռագրով մը տեղեկացնել գոյժը գոնէ Լիբանանի մեր թերթերէն մեկուն. ո՛չ իսկ այսպէս կոչուած, Ֆրանսահայ Գրողներու Միութիւնը՝ որուն նախագահն ալ եղած էր խեղճ Բիւզանդը տարիներով: Աներեւակայելի էր պարզապէս որ 20րդ դարու





70ական թուականներուն, տարիներու վաստակ ունեցող հայ բանաստեղծ-նկարիչի մը մահուան լուրը ստանալինք 10-12 օր վերջ միայն, ան ալ պատահաբար, անձնական նամակէ մը: Կը պարպուի Սփիւռքը: Ամբողջ սերունդի մը մեկնելուն ականատես ըլլալու չափ ապրեցանք նաեւ մենք, ու կարծես նման պահերո՛ւ է միայն որ կը զգաս թէ հերթը կրնայ մերը ըլլալ նաեւ որեւէ ատեն: Յայտնի էր որ Բիւզանդիին վախճանը պիտի գար այսպէս, մէկէն. ես կը վախնայի նոյնիսկ որ ատիկա պատահեր տպարանին մէջ, մամուլին կամ տողաշար մեքենային վրայ՝ ուր անցուցած էր իր կեանքը ամբողջ:

Պէյրութէն դարձի ճամբուս վրայ երկու գիշեր մնացի Միլան՝ ուր այդ օրերուն կը գտնուէին Կաթողիկոսն [Վազգէն Ա. Պալճեան] ու իրենները: Կաթողիկոսը այստեղ էր Յունիս 8-11, Յիմնարկութեան հրաւերով: Առջի Շաբաթ օր, ամսուն 5ին հասաւ նաեւ Ռոպերթ Աթայեանը³⁷¹ որ հրաւիրուած էր մեր տարեկան երաժշտական *Ֆէսթիվալ*ին զեկոյց մը կարդալու հայ հին երաժշտութեան մասին: Հակառակ ամիսներ առաջ սկսած բանակցութեան եւ տրուած ապահովութիւններուն՝ չկրցաւ այստեղ ըլլալ որոշուած ժամանակին: Կարգադրութիւնները բոլոր ջուրը ինկան ուրեմն: *Ֆէսթիվալ*ը փակուեցաւ անցեալ երկուշաբթի. բայց քանի որ ալ մէյ մը եկած էր, կարգադրուեցաւ որ առջի օր, երեկոյեան կարդայ զեկոյցը: Հազիւ 10-15 հոգի ներկայ էր. ատոր ալ կեսը քանի մը հայերս էինք: Մինչդեռ եթէ ժամանակին եկած ըլլար, զինք մտիկ պիտի ընէին միջազգային չափանիշով կարեւոր երաժշտագետներ, քննադատներ եւայլն: Ալ չեմ խօսիր դրկուած մասնաւոր հրաւերներուն եւ բացառիկ կարգադրութիւններուն մասին որոնք եղած էին այդ առթիւ իր գերմաներէնով կարդալիք զեկոյցը տեղւոյն վրայ ֆրանսերէնի եւ փորթուկալերէնի թարգմանելու համար: Մեկնեցաւ Փարիզ երէկ առաւօտ: Մէկէ աւելի անգամներ յիշեցինք քեզ: Կարծեմ ամառը կնոջ հետ պիտի հանդիպի նաեւ Լոնտոն՝ *թուրիստական* խումբով մը:

Անցեալ շաբաթ այստեղ էին նաեւ Լուիզա Պոզապալեանն³⁷² ու Լիլի Զուքասըզեանը³⁷³ որպէս *սօլիսդ* Պեթովէնի «Մեսսա Սօլեմնիս»ին: Լուիզան պիտի վերադառնայ վաղը քանի մը օրուան համար, որու ընթացքին պիտի ձայնագրեն 18րդ դարու փորթուկալցի երաժիշտի մը մէկ գործը:





Ի՞նչ եղաւ, ի վերջոյ կրցա՞ր երթալ Արեւելք: Գրէ, կը սպասեմ լուրերուդ եւ... ձագուկներուդ հետ առնուած լուսանկարին:

Ձերմ բարեւներ Վիվիէնին՝ որուն մասին, ուրիշներու կարգին, Լուիզան եւս խօսեցաւ մեծ - եւ արժանի - գովեստով:

ՆԱՍԱԿ 61

Լիզպոն, 7 Յուլիս, 1970

Սիրելի՛ Ասատուր,

Երեք շաբաթ առաջ գրած էի քեզի՝ խորհելով թէ վերադարձած կ'ըլլաս արդէն Արեւելքի պտոյտեղ: Ինչպէս կ'երեւի սակայն հասնող նամակներէն՝ մինչեւ վերջերս այդ կողմերն էիր տակաւին: Է՛, տարբեր է Արեւելքի մեր գաղութներուն համը, հայկականութիւնը:

Լիզպոն վերադառնալէս ի վեր այցելուները առիթ չտուին աչքս բանալու: Երանի չէ՞ս տար անոնց որոնց... աչքը բաց է միշտ: Այսօր ճամբու դրի նաեւ Ամերիկայէն բարեկամ տիկին մը - Սօֆի Ակապեան - որուն մասին կարծեմ յիշած էի քեզի Ամերիկայի այցելութենէս վերադարձին անցեալ տարի: Բարեգործականի եւ քանի մը այլ կազմակերպութիւններու մէջ գործօն դերեր ունի Նիւ Եորք: *Սօսայէթի* տիկին է, ինչպէս կ'ըսեն: Ասկէ Պոլիս մեկնեցաւ քանի մը օրուան համար. եւ եթէ ծրագիրը չփոխէ վերջին վայրկեանին, յառաջիկայ Կիրակի օր - Յուլիս 12ին - Լոնտոն պիտի անցնի, երկու գիշերուան համար, ՓԱՆ ԱՄԵՐԻԸԸՆով - PA1: Ժամը չորսուկէսի ատենները այդտեղ կ'ըլլայ: Իր առաջին այցելութիւնն է Լոնտոն եւ ծանօթ չունի այդտեղ: Պանդոկի կարգադրութիւնները պիտի ընէ անձամբ, հաւանաբար *Թէրմինալ* հասնելէ ետք: Ըսի սակայն որ պանդոկ հասնելէ ետք հեռաձայնէ քեզի՝ որպէսզի օտարութեան մէջ իրեն ուղղութիւն տուող մը ունենայ: Տուած եմ երկու հեռաձայնի թիւերդ ալ: Ծատ ընկերական տիկին մըն է եւ մեզի պէս հայերէն խօսող՝ հակառակ Ամերիկա մեծցած ըլլալուն: Կրնա՞մ ուրեմն քեզմէ խնդրել որ, առանց գործիդ վնասելու, կարճ պահ մը զբաղիս իրմով: Ինք օրեր տրամադրեց ինծի՝ իր քատիլաքով ասդին-անդին տանելու:

Կը սպասեմ երկար նամակիդ եւ ճամբորդական լուրերուդ:





Ձերմ բարեկեր Վիվիենին եւ պաշիկներ ձագուկներուդ:

Սիրով՝
Վահրամ

ՆԱՄԱԿ 62

Լիզպոն, 15 Յուլիս, 1970

Սիրելի՛ Ասատուր,

Յուլիս 9 թուակիրդ ստացայ 11 ուրիշ նամակներու հետ, բոլորն ալ ուսանող յանձնարարող բարեկամներէ: Սիմոնը [Սիմոնեան] ամբողջ էջ մը յատկացուցած է իր պաշտպանեալ թեկնածուն գովելու, բայց մոռցած է... անունը յիշել: Ալլա Սիմոն գործ:

Ռոմիկի [Մարթին] դիմումնագրին առնչութեամբ ըսեմ որ նախքան Յանձնախումբին առնելիք որոշումը՝ սկզբունքով ոչ մէկ յանձնառութեան տակ կը մտնէ Հիմնարկութիւնը: Շա՛տ շատ համալսարանը կրնայ *փրովիժընը* կերպով ընդունիլ զինք եւ վերջնականացնել զայն աւելի վերջ, եթէ դրական ըլլայ մեր Յանձնախումբին տալիք որոշումը: Ըստ երեւոյթին ինք արդէն ապահովուած կը նկատէ իրեն տրամադրուելիք կրթաթոշակը: Պարզ է որ մինչեւ իր թղթածրարին քննութիւնը ժողովին կողմէ կարելի չըլլար ըսել որոշապէս թէ ինչ կրնայ ըլլալ տրուելիք որոշումը: Ինչպէս ուրիշ առիթով ալ ըսած եմ, երբ 1200 նոր դիմողներէն միայն 300-350ն է որ պիտի ընտրուի, հասկնալի է որ սուր ըլլայ մրցակցութիւնը: Աւելորդ է ըսել թէ իր պարագան կ'ունենամ ի մտի մասնաւոր կերպով:

Տիկին [Սօֆի] Ակապեանը արդէն եկած եւ մեկնած պէտք է ըլլայ մինչեւ հիմա եթէ ծրագիրը չփոխեց վերջին վայրկեանին: Գրէ ինծի երկու տող մը ըսելու համար թէ ինչ չափով կրցար օգտակար ըլլալ իրեն: Ամէն պարագայի տակ՝ շնորհակալութիւն:

Սոռցայ ըսելու որ նախորդ նամակդ հասաւ քանի մը օր առաջ: Հետաքրքրութեամբ կարդացի այնտեղ տուած տեղեկութիւններդ: Պտոյտիդ ամենէն աւելի գնահատելի տեղերէն մէկը Պուկարիան պէտք է եղած ըլլայ, թէեւ վրայէն սահած էիր





բաւական արագ:

Երէկ Բիւզանդին [Թօփալեան] յիշատակին նուիրուած անկապ քանի մը տող դրկեցի «Նայիրի»ին:

Սիրալիր բարեւներ տնեցիներուն:

Սիրով՝
Վահրամ

ՆԱՄԱԿ 63

Լիզպոն, 2 Օգոստոս, 1970

Սիրելի Ասատուր,

Յուլիս 17ի նամակդ եւ ներփակ սիրուն լուսանկարը ստացած եմ հաճոյքով: Շնորհակալութիւն՝ Տիկին [Սօֆի] Ակապեանին հանդէպ Վիվիէնին եւ քու կողմէ ցոյց տրուած ազնիւ ընդունելութեան համար: Տուն վերադառնալէ ետք գրած իր նամակին մէջ ինք ալ ջերմ բառերով կը խօսէր ձեր մասին:

Ռոմիկը [Մարթին] թուղթերը դրկած էր անցեալ շաբաթ: Արագ աչք մը նետեցի վրան, եւ եթէ ճիշդ կը յիշեմ, ոչ մէկ տող կար այնտեղ համալսարանէն իր ընդունման մասին: Վճարելիք թոշակին մասին թուղթ մը կար՝ եւ այդքան: Մեզի համար կարեւորը սակայն միւսն է, նոյնիսկ եթէ *քընտիշընը* *ըքստիթընս* մըն է եղածը:

Աստղիկ Տետեանը կը ճանչնամ անձամբ՝ թէեւ իր երգելը մտիկ ընելու պատեհութիւն չեմ ունեցած բնաւ: Քնքոյշ երգող մըն է ըստ երեւոյթին, բայց թէ միջազգային չափանիշով որքան հեռուները կրնայ երթալ, չեմ գիտեր: Որքա՞ն տեղին է այս առթիւ ինսամիական կապերու ըրած ակնարկութիւնդ: Տարիներ առաջ Օննիկ Ուղուրլեան մը կար որ երաժշտութեան կը հետեւեր Փարիզի մէջ: Այս մէկուն *փրօպականտիսը* իր կեսարացի հայրն էր՝ որմէ, ուրիշներու կարգին ես ալ լսած եմ անձամբ.- «Օր մը, ո՛չ թէ միայն հայ ժողովուրդը՝ այլ ամբողջ մարդկութիւնը հպարտ պիտի ըլլայ Օննիկով: Պէթովէն իր խօսքը ըսած վերջացուցած է. Օննիկը պիտի ըսէ՝ տակաւին»: Նոյն շրջաններուն, այս տղուն մասին 1-2 յօդուած կ'երեւար տարեկան՝ «Չարթօնք»ին մէջ, մեծկակ լուսանկարի մը կողքին, Փարիզի





մէջ իր իբրե՛ւ թէ արձանագրած աննախընթաց յաջողութիւններուն գովքը հիւսող: Օր մը Գերսամին [Ահարոնեան]³⁷⁴ ըսի թէ այդ թղթակցութիւնները տպած միջոցին միտքէն չ'անցընէ՞ր երբեք թէ տղան եւ իր իսկական արժանիքները անձամբ ճանչցողներ ալ կրնան ըլլալ իր ընթերցողներուն մէջ: Ինչ ընեմ, եղաւ իր պատասխանը, հայրը յօդուածն ու լուսանկարին *քլիշէն* պատրաստ կը բերէ՝ ես ալ կը տպեմ: Կուսակցական է մարդը, կրնա՞ս մերժել: Ասիկա քսան տարի առաջ էր: Իսկ Օսնիկը՝ որուն ամբողջ մարդկութիւնը երախտապարտ պիտի ըլլար, հաւատարիմ իր ժառանգած կեսարացիի արիւնին, ձեռքի վրայ *տիսք* կը ծախէ Փարիզ՝ ուր հաստատուած է հիմա վերջնականապէս, օտար կնիկ մը առնելէ ետք:

Հայաստանին կողմէ Լիւսի Իշխանեանին³⁷⁵ հանդէպ ցոյց տրուած մասնաւոր հետաքրքրութիւնն ու յարգանքը իմ ալ ուշադրութիւնս գրաւած էին ժամանակին: Թէեւ չտեսայ զինք՝ բայց Հայաստան էր 1969 Մայիսի մեր պաշտօնական այցելութեան ատեն: Կը լսեմ որ վերջերս Հայաստան այցելող պարի խումբը իր անունով է որ տարուած է: Առջի շաբաթ անգլիերէն լեզուով սոր պարբերաթերթ մը եկաւ Ամերիկայէն - «Արմինիըն Տայճեսթ»:³⁷⁶ Խմբագիրներէն միայն իր անունը կայ վրան. մնացեալներունը իբրեւ թէ պիտի հաղորդուի յաջորդ թիւով: Յայտնի է որ Հայաստանի «հովանաւորութիւնը» վայելող հրատարակութիւն մըն է: Առաջին թիւով իսկ բաւական օրհորդին *փրօպակաստը* եղած էր արդէն: Տեսնեք ինչ դուրս կու գայ յաջորդ թիւերէն:

Պուկարիոյ [Բենիամին] Թիւֆէնքճեանին³⁷⁷ Երեւան հանդիպած էի 1967ի այցելութեանս: *Ֆանաթիկ* կուսակցական գործակատարի տպաւորութիւն ձգած էր վրաս այն ատեն: Զանի մը հաւաքոյթներու միասին ըլլալով հանդերձ առիթ չներկայացաւ երկար խօսելու: Առաջին տպաւորութիւնները կրնան յաճախ խաբուսիկ ըլլալ: *Բեկորներուն* մասին իր գրածը չեմ տեսած: *Օրագիրէն* հատ մը դրկեցի տուած հասցեովդ: Իր թերթը չենք ստանար այստեղ:

Գրէ հետաքրքրական նորութիւններ եթէ ունենաս: Սիրալիր եւ ջերմ բարեւներ Վիվիէնին եւ Ալեքսիներուն: Պաշիկներ Կարինէին եւ Արմինէին:

Սիրով՝
Վ. Յ. Մավեան





ՆԱՄԱԿ 64

Լիզպոն, 15 Օգոստոս, 1970

Սիրելի՛ Ասատուր,

Օգոստոս 2ին գրած էի երկար: Կարճ այս քանի մը տողը՝ հաղորդելու համար պարզապես թե առջի օրուան մեր ժողովին կարելի եղաւ Ռոմիկին [Մարթին] 750 սթերլինի յատկացում մը ընել՝ պայմանաւ որ առաջին հերթին մեզի դրկէ համալսարանէն պաշտօնապես ընդունման վկայագիրը: Ինչպէս կ'ըսէի նախորդ նամակիս մէջ, ամենէն կարելոր փաստաթուղթն է ասիկա՝ որուն հիման վրայ է որ կ'ըլլան մեր յատկացումները: Ռոմիկին մասին այսչափ ուրեմն: Ամերիկայի թեկնածուներուն հերթը չեկաւ տակաւին:

Ես լաւ եմ: Կրթաթոշակներու այս հեւքը մինչեւ Սեպտեմբերի վերջը կը դիմանայ: Արձակուրդս հազիւ Յոկտեմբերին ուրեմն՝ եթէ ուրիշ արգելքներ չելլեն մէջտեղ: Ըսա՞ծ էի թէ ծրագիր ունիմ Պէյրուսը հանդիպելու նորէն: Ա՛լ տեսնենք:

Ձերմօրէն բարեւելով տնեցիները:

Սիրով՝

Վ. Յ. Մավեան

[Յ.Գ. Գեորգ] Պարտագճեանին £700 յատկացուեցաւ: Երկուքին ալ գրած ենք արդէն:

ՆԱՄԱԿ 65

Լիզպոն, 23 Սեպտեմբեր, 1970

Սիրելի Ասատուր,

Վերջին նամակդ ներփակեալներով միասին ստացայ ասկէ քանի մը օր առաջ: Ինծի ծանօթ հարուստներէն չեմ կարծեր թէ ոեւէ մէկը գործնականապէս խանդավառուի ներկայացուցած առաջարկովդ՝ որ, ինչ մեղքս պահեմ, կը կարծեմ թէ շա՛տ ջուր կը վերցնէ: Անհատներէ հաւաքուած դրամով իրագործուելիք ծրագիր չէ եղածը: Յետոյ, դրամի՛ հարց չէ միայն: Իսկ անհրաժեշտ միջոցները կը պակսի՛ն մեզի: Խանդավառութեանդ վրայ





պաղ ջուր լեցնել չէ անշուշտ նպատակս, բայց հարցին իրատես մերձեցում մը ա՛յդ կը թելադրէ դժբախտաբար: Կը խօսիք այս մասին ալ երկար՝ երբ հանդիպինք ի մօտոյ, ինչպէս կը յուսամ:

Անցնող շաբթուան ընթացքին Մերձաւոր Արեւելքի եւ յատկապէս Յորդանանի մէջ տեղի ունեցող դէպքերը պատճառ եղան որ հրաժարիմ Պէյրութ երթալու ծրագրես եւ գոհանամ միայն... Եւրոպայի թեմերս այցելելով: Արձակուրդս կը սկսի Զոկոտմբեր 3ին, Շաբաթ օր, եւ նոյն առաւօտ իսկ միտք ունիմ անցնելու նախ Լոնտոն: Կը պահեմ քեզ տեղեակ մանրամասնութիւններէն երբ վերջնական ըլլան կարգադրութիւններս:

Երէկ երեկոյեան դեմ Ստ[եփան] Ալաճաճեանը հեռաձայնեց Փարիզէն բարեւ մը ըսելու: Մամուլի նախարար [Յայկարամ] Ութմազեանին³⁷⁸ հետ եկեր են երկու շաբթուան համար: Ուզեց որ Փարիզ հանդիպիմ որպէսզի գոնէ մէկ-երկու օր միասին ըլլանք: Տուած տեղեկութեան համաձայն Զոկոտ[եմբեր] 4ին պիտի վերադառնան Յայաստան: Ըսի թէ Զոկոտ[եմբեր] 3ին կը ծրագրէի Լոնտոն անցնիլ: Շատ պնդեց որ նախ Փարիզ երթամ: Ըսի թէ կարելի չէր ատիկա: Առաջարկեցի որ ինք Լոնտոն գայ այդ օրերուն մէկ-երկու օրուան համար: Շատ լաւ կ'ըլլայ ըսաւ, եւ աւելցուց.- «Բայց ինչպէ՞ս կարգադրենք առանց հրաւերի»: Զասկնալի է որ գլխաւոր մտահոգութիւնը նիւթական է: Յետոյ հարցուց քեզ: Ըսի թէ կը կապուիմ քեզի հետ եւ եթէ ձեւ մը գտնենք՝ կը պահենք զինք տեղեակ առաջին հերթին: Ի՞նչ կ'ըսես, կարելիութիւն կա՞յ, օրինակ, զինք դասախօսութեան մը հրաւիրելու Կիրակի օրուան համար: [Յայկ] Գալուստեանը - որ քու միջոցաւ 10 սթերլին յատկացուց առջի տարի Փարիզի մէջ որպէսզի Արեւելքէն եկած մտաւորականներ մօտէն շփում ունենան Արեւմտեան քաղաքակրթութեան հետ - խապատայութիւն մը չընե՞ր գոնէ ճամբու ծախսը հոգալով: Մնացեալը դիւրին է, ի պահանջել հարկին իմ հիւրս կ'ըլլայ Լոնտոն գտնուած երկու օրերու ընթացքին, նկատելով որ ես ալ այդտեղ պիտի ըլլամ: Թերեւս կարելի ըլլայ կարգադրել «Յայ Տան» Մշակութային Յանձնախումբին խողովակով: Ստորեւ կու տամ Ստեփանին Փարիզի հասցէն. կրնաս ուղղակի յարաբերութեան մտնել իրեն հետ: Ատկէ անկախ, զիս երկու տողով պահէ տեղեակ կացութենէն: Զեզմէ լսելէ ետք կը գրեմ կամ կը





հեռախօսեմ իրեն՝ Նոյնիսկ եթէ ատիկա պիտի ըլլայ ըսելու համար որ մինչեւ Յոկտ[եմբեր] 4 Փարիզ երթալս անկարելի է:

Հաւանաբար տեղեակ ես արդէն որ Ամերիկա Ռաֆֆի Օհանեանին³⁷⁹ կարելի եղաւ 1000 տոլարի յատկացում մը ընել յառաջիկայ տարուան համար, թէեւ տակաւին պայման մը ունէր լրացնելիք, եթէ ճիշդ կը յիշեմ:

Կը սպասեմ լուրերուդ: Ձերմ բարեւներ տնեցիներուն:

Սիրով՝
Վահրամ

[Յ.Գ.] Հասցեն՝ ներփակ, առանձին թուղթի վրայ:

ՆԱՄԱԿ 66

Լիզպոն, 28 Սեպտեմբեր, 1970

Սիրելի Ասատուր,

Սեպտեմբեր 23ի *էքսփրես* նամակս ստացած ըլլալու ես մինչեւ հիմա:

Ասկէ ուղղակի դեպի Լոնտոն ճամբայ կ'ելլեմ յառաջիկայ Շաբաթ - Յոկտ[եմբեր] 3 - առաւօտեան ժամը 10.45ին, փորթուկալեան TAP 450 թռիչքով՝ որ, եթէ *հայճէք* չըլլայ ճամբան, պետք է Լոնտոն հասնի կէսօրէ ետք մէկին տասը մնացած:

Այսօր Լոնտոնի մեր գրասենեակին հետ փոխանակուած քանի մը *թելէքս*ներէն յայտնի եղաւ որ Փորթլընտ Փլէյսի մեր *հօսթը*լին սենեակները բոլորն ալ գրաւուած են այս շրջանին: Պետք է մնամ պանդոկ ուրեմն: Կրնա՞ս յարմար *րեզըրվէյշըն* մը ընել ինձի համար, *անտըրկրաունտին* մօտիկ: Իսկ եթէ կը կարծես թէ հասնելու ետք ուշ չըլլար եւ կրնանք կէսօրէ ետք տեղաւորուիլ՝ սպասէ հասնելուս: Մինչեւ օդակայան գալու պետք չունիս - ինչ *զահմէթ* -, կրնանք *թերմիսալ* ալ հանդիպիլ եթէ *օթօ* ունիս ոտքիդ տակ. այլապէս *թերմիսալ*էն կը հեռաձայնեմ հասնելու վերջ՝ գիտնալու համար առ նուազն թէ ինչ կարգադրութիւն ըրած ես:

Իսկ մինչեւ Շաբաթ օր եթէ անակնկալ փոփոխութիւն մը ըլլայ ծրագրիս մէջ՝ կը պահեմ քեզ տեղեակ հեռագրով:

Սիրով՝
Վահրամ



ՆԱՄԱԿ 67

Լիզպոն, 6 Նոյեմբեր, 1970

Սիրելի Ասատուր,

Այստեղ եմ արդեն անցեալ Երկուշաբթի օրուընէ ի վեր, վերադարձած փորթուկալեան աքսորիս: Հիմա որ Ռուբիկն [Յովհաննիստեան]³⁸⁰ ալ մեկնած է՝ խաղաղութիւնդ վերագտած պէտք է ըլլաս:

Ժընեւի երեք օրերս անցան շատ հաճելի եւ... լեցուն, շատ աւելի քան Լոնտոնն ու Փարիզը՝ ուր առաջին քանի մը օրերուն մանաւանդ ամէն բան *թերս* գնաց. իսկ երբ դէպքերը մտան իրենց բնականոն հունին մէջ՝ ուշ էր արդէն: Փարիզ գտնուած միջոցիս գիշեր մըն ալ անցուցինք Շահէին [Սրբազան Աճեմեան] հետ, անցեալին պէս: Եկած էր երկու օրուան համար:

Փոստին յանձնելիք ծրարներդ ի՞նչ եղան, մարդ Աստուծոյ. երկու շաբաթն ալ անցաւ Լոնտոնը ձգելու: Պէտք ունիմ մանաւանդ մեծ ծրարին: Հաւանաբար անկիւն մը նետուած է տակաւին, խցիկիդ մէջ, Հայաստանեան հին թերթերու ծրարի մը տակ: Չըլլայ *Միւսիզ* Կո՛ո՛ո՛մէժը [Կոմեզ]³⁸¹ անպէտ կարծելով նետած ըլլայ:

Երէկ հինգ օրինակ *Օրագիր* արդէն յանձնեցի *փոստին*. իսկ այսօր վաղը *Բեկորներէն* օրինակ մը կը դրկեմ [Միշա] Գիւտեանին: Փարիզ եղած ատենս անուղակիօրէն լսեցի թէ ֆրանսերէնով լոյս տեսնելիք *Հայ Գրականութեան Անտոլոկիային* մէջ ինձմէ եւս թարգմանած են քանի մը քերթուած: Հատորը ամբողջութեամբ բանաստեղծութեան նուիրուած պիտի ըլլայ: Թե՛ *Օրագիրին* եւ թե՛ *Բեկորներուն* մէջ կտորներ կան, որոնք կրնան յաջողութեամբ անգլիերէնի թարգմանուիլ: Յարմար առիթով մը շօշափէ Գիւտեանին տրամադրութիւնը:

Ի՞նչ լուր Տիկին [Ֆլորա] Ալեքսիէն: Ջերմ բարեւներ Պրն. Պետրոսին [Ալեքսի] եւ Վիվիէնին: Փարիզ գտնուած միջոցիս որքա՛ն երազեցի «Լինտա Մաքա՛րեանը»: Վա՛յ էր եկեր խեղճ Լինտային գլխուն եթէ... ճիշդ ըլլար կատակը:

Գրէ եթէ նորութիւններ ունենաս:

Սիրով՝
Վահրամ

[Յ.Գ.] Ինչպե՞ս են «թըրթիթի եճըրթըն»ի գոյնզգոյն բնակիչ-



ները: Սիրալիք բարեւներ թիւ երկուքի քաղցրօրէն չարաճճի Պզտիկին: Կը տեսնե՞ս թէ որքան ներդաշնակ են Պրն. Ալեքսի-ին եւ իմ ճաշակները:

ՆԱՄԱԿ 68

Լիզպոն, 13 Նոյեմբեր, 1970

Սիրելի Ասատուր,

Շաբաթ մը առաջ ճամբած նամակէս ասդին ոչ ձայն եկաւ քեզմէ, ոչ... ծրար: Երեքուկէս շաբթուան մէջ Քամչաթքայէ՛ն անգամ հասած կ'ըլլար մինչեւ հիմա:

[Յովհաննէս] Թումանեանին հատորին մասին Յայր Արսէնին [Պերպերեան]³⁸² կողմէ ստորագրուած նամակը ստացանք քա-նի մը օր առաջ: [Կորիւն] Զէշիշեանը արձակուրդի է արդէն, իսկ Պրն. [Ռոպեր] Կիւլպէնկեանը յաջորդ երկու շաբաթներուն պիտի բացակայի գրասենեակէն: Այսօր մեկնելէն առաջ կարելի եղաւ ուրեմն զբաղիլ հարցով: Որոշուեցաւ բացառաբար գնել 50 օրի-նակ մը: Բացառաբար կ'ըսեմ, որովհետեւ նախապէս մերժած էինք այլ [եզուններով կատարուած թարգմանութիւններու համար եղած նման դիմումներ: [Միշա] Գիւտեանին կատարած աշխա-տանքներուն մասին՝ ալ քիչ մը անելի մօտէն տեղեկութիւններ տուի ժողովին մէջ: Կարելորդ այն է որ նախընթաց մը ստեղծ-ուած եղաւ անգլիերէնով նման թարգմանութիւններու համար:

Մեր պաշտօնական նամակը *փոստին* կը յանձնուի շատ հա-ւանաբար Երկուշաբթի: Այնտեղ յիշած ենք թէ ուր պիտի յանձ-նէք 49 օրինակները եւ ինչ ձեւով պիտի կատարուի փոխարժե-քին վճարումը: Լուրը պաշտօնական նկատելու համար սպա-սեցէք ուրեմն այս նամակին:

Բեկորներէն օրինակ մը դրկած էի անցեալ շաբաթ Տոքթ. Գիւտեանին. իրմէ երեկ հասնող երկտող մը կ'ըսէր թէ արդէն ստացած է: Գիտես թէ ետեւ ձգած ծրարներէս մէկը - որ իբրե՛ւ թէ ճամբած պիտի ըլլայի մինչեւ հիմա - իր Թումանեանն էր. զայն կարդալու համար կը սպասեմ որ հասնի տակաւին:

Ըսի՞ թէ Փարիզը անհամ էր այս անգամ առանց Բիւզանդիին [Թօփալեան]:

Սիրով՝
Վահրամ



ՆԱՄԱԿ 69

Լիզպոն, 18 Մարտ, 1971

Սիրելի Ասատուր,

Դեկտեմբեր 10 թուակիրդ հասաւ ատենին: Կարելի չեղաւ գրել անմիջապէս, իսկ աւելի ետք՝ սպասեցի որ վերահաստատուի թղթատարական կապը:

Յաւով լսեցի Չալըզին [Յովհաննէս Չալըզեան] մահուան լուրը: Մեր վերջին հանդիպումին, տարօրինակ նախազգացումով մը կարծես, հարցուցեր էի իր կտակին մասին: «Չես գիտեր ինչ կ'ըլլայ, ինչ չըլլար, աշխարհի է», ըսած էի այն ատեն: «Նայիրի»ի վերջին երկու թիւերուն մէջ [Անդրանիկ] Ծառուկեանը կը պատմէ իր յուշերը, իր գիտցածը Չալըզին մասին: Այս շաբթուան թիւին մէջ երեւցած հատուածը հասցուցած էր [Դեռնոյ Եպիսկոպոս] Դուրեանի³⁸³ սպանութեան եւ հոն կանգ առած, բուն դէպքին մասին պատմելիքը՝ լրագրական ճարպիկութեամբ մը, ձգելով յաջորդ թիւին:

Նամակիդ մէջ կ'ըսէիր թէ [Տէյվիտ Մարշըլ] Լանկին գիրքը հրապարակի վրայ է արդէն, մինչդեռ մենք այստեղ, մինչեւ վերջերս լուր իսկ չունեինք պաշտօնապէս թէ ինչ է կացութիւնը, թէ գիրքը ի վերջոյ լոյս տեսա՞ւ թէ ոչ: Մերիններուն ես ոչինչ ըսի անշուշտ՝ քեզմէ հասնող անպաշտօն տեղեկութեան մասին: Առջի օր ստացուած նամակով մը Լանկը կ'ըսէր, ի միջի այլոց, թէ գիրքը հրապարակ կ'ելլէ... այս քանի մը օրերուն:

[Միշա] Գիւտեանին [Յովհաննէս] Թումանեանն ալ: Ինչպէս տեղեկացուցած էի քեզի ատենին, Յայր Արսէնին [Պերպերեան] գրեցինք եւ յայտնեցինք մեր որոշումը: Անկէ ի վեր ոչ մէկ ձայն: Եթէ ճիշդ կը յիշեմ, ձեր ամբողջ ընտելիքը պիտի ըլլար օրինակները յանձնել մեր Լոնտոնի գրասենեակը: Ասիկա եղա՞ւ արդեօք մինչեւ հիմա:

Քրիսմըսին, նամակիդ հասած օրերուն, առաւօտ մը Քիցը հեռաձայնեց: Լիզպոն էր՝ ուր իրենց նաւը աւազախրումի նման փորձանքի մը հանդիպած էր: Պիտի մնային ուրեմն՝ 1-2 օր: Անմիջապէս եկաւ գրասենեակ եւ մնաց ժամ մը երկու: Ըսի որ հեռաձայնէ աւելի վերջ - երբ յայտնի ըլլայ նաւուն ճամբորդներուն ճակատագիրը - որպէսզի տեղ մը երթանք գիշերը: Ինք արդէն կապուած էր այստեղ իրենց դեսպանատան հետ, եւ ինչպէս կ'երեւի գիշերը եղաւ անոնց հետ:



Քանի որ կը յիշես Սմբատ Փանոսեանին³⁸⁴ «Սփիւռք»ին տուած «բաց նամակը», այդ մասին խորհրդապահաբար ըսեմ՝ «երկու խօսք ալ իմ կողմէս»... պատմութեան համար:

Այս մարդը մեր սակաւաթիւ այն գրողներէն է որոնց հետ թղթակցութիւն կամ անձնական ծանօթութիւն չեմ ունեցած: Չիկա առաջին անգամ տեսայ ասկէ երկու տարի առաջ, պատահաբար, [Սիմոն] Սիմոնեանին մօտ: Ներկայացուեցանք: Ինք՝ բերանը չբացաւ: Արդիւնք չտուին նաեւ խօսակցութեան սկսելու իմ փորձերս: Յետոյ, անդրադարձայ որ չկայ: Չգիտցայ թէ երբ էր մեկնած, չէի զգացած: Անկէ քանի մը ամիս վերջ Յայաստան էի: Գիշեր մը միասին էինք [Անդրանիկ] Ծառուկեանը, [Թորոս] Թորանեանն ու ես: Թորոսը իր մօտ ունէր Փանոսեանէն խոյն օրը ստացած նամակ մը՝ ուր մարդուկը, դառնութեամբ յորդո՞ւն, կը գանգատեր որ իր գիրքը տակաւին չեն տպէր Յայաստանի մէջ, հակառակ ունեցած գրական իր արժէքին, մինչ անդին, *Բեկորները* կը հրատարակեն՝ ո՛չ թէ գիրքին ունեցած գրական արժէքին համար, այլ հեղինակին գրաւած ընկերային դիրքին: Ամբողջութեամբ թո՛յն:

Գալով իր «բաց նամակին», այնտեղ ներկայացուածը հարցին մէկ մասն է միայն: Հիմնարկութիւնը մերժած է եղեր հայ գրողները քաջալերելու իր առաջարկը:

Ճիշդ է, գրած էր մեզի որ իր վերջին վեպէն գնենք եւ բաժնենք ասդին անդին: Առաջարկած տակաւին՝ որ ընդհանրացնենք պարագան եւ կանոնաւորաբար, լոյս տեսած արժէքաւոր գրական գործերէն գնենք եւ բաժնենք: Այս ընելու համար կը թելադրեր մնայուն պաշտօնեայ մը ունենալ Պէյրութի մեր գրասենեակին մէջ, որպէսզի գնուելիք հատորներուն գնահատումն ու ընտրութիւնը կատարէ եւ ծրագրէ անոնց բաշխումը: Իր ենթադրութեամբ ունեցած արժանիքներն ու գրաւած ընկերային վարկը իրեն իրաւունք կու տային կարծելու թէ ինք յարմարագոյն անձն էր այդ գործին համար, մանաւանդ որ մօտ ատենէն արձակուած պիտի ըլլար ներկայ պաշտօնէն եւ հետեւաբար՝ տրամադրելի: Պարզ ասած՝ գործ կը փնտռէր մարդը:

Պաշտօնական իր իւրաքանչիւր նամակին հետ գրած էր նաեւ ինծի անձնապէս, որպէս գրչեղբայր, շեշտելով իր յարմարութիւնները առաջարկուած պաշտօնին: Նոյն առիթով բաւական թոյն թափած էր Պէյրութի Բարեգործականի վարիչներուն վրայ՝ որովհետեւ, իբրե՛ւ թէ խոստացած են եղեր իրեն գործ մը





տալ եւ սակայն յետոյ զինք խաղի բերած:

Իր պաշտօնական նամակներուն տրուած մերժողական պատասխանէն աւելի զինք զայրացուցած էր ինծի գրածները անպատասխան ձգելս, լռութիւն՝ որ անբացատրելի կը գտներ.- «Ի վերջոյ, այդքան ալ արհամարհելի մէկը չեմ»: Կը հարցնէր թէ արդեօ՞ք «ապահով պաշտօնս եւ ընկերային դիրքս» պատճառ եղած էին որ «դաւաճանեմ» գրական կոչումիս: Այս դաւաճանութեան փաստը կը գտներ Բիւզանդ Թօփալեանի մասին գրած «աւաղագիր»իս - բառը իրն է - մէջ: Մարդուկը վերջին ծայր ամուսներ է ուրեմն՝ որ Բիւզանդին նման անարժէք մարդոց մասին, յիշատակին յօդուած կը գրեմ՝ իսկ իրեն նման կարելոր արժէքներ կ'արհամարհեմ: Իր նամակները ստորագրելէ ետք չի մոռնար, օրինակ, տակը աւելցնել.- գրագետ: Այնքան պիտի ուզէի զինք հրապարակաւ խայտառակած ըլլալ այս առթիւ: Ճիշդ է, առաջ արհամարհած էի զինք պարզապէս. կատղեցայ սակայն՝ երբ ցեխ շարտել ուզեց նաեւ հէք Բիւզանդին յիշատակին, մարդու մը՝ որ քառասունէն աւելի տարիներ անտրտունջ նուիրուեցաւ հայ գիրին ու մշակոյթին, իր ժողովուրդին ու գեղեցիկին: Աշխատեցաւ, ստեղծագործեց, լուռ, զրկանքով, ու ոչինչ պահանջեց: Մինչդէռ Փանոսեաններ, գիրք մը երկու գրելէ ետք, կ'ուզեն, կը սպասեն որ ամբողջ հայ ժողովուրդը գլխու վրայ պտտցնէ զիրենք, երախտապարտ ըլլայ իրենց եւ զիրենք յաջորդող սերունդներուն: Կը տեսնե՞ս ուրեմն թէ ինչպէս մարդիկ, գրող եւ հասարակական գործիչ, իրենց անձնական շահերն ու խնդիրները կը փոխադրեն հասարակական *փլաններու* վրայ եւ կը ներկայանան հայ գրականութիւնն ու գրագետ պաշտպանողի դիրքով: Ինչ որ է, կը տեսնեմ թէ բաւական երկարեցի. կ'ուզեի՛ սիրտս բանալ մէկու մը ամիսներէ ի վեր:

Երկու շաբաթէն, Ապրիլ 3ին, կ'ելլեմ շրջապտոյտիս: Կ'երթամ Վենետիկ, Պոլիս, Կիպրոս, Լիբանան եւ Սուրիա: Վերադարձած կ'ըլլամ Մայիս 23ին: Գրե քանի մը տող նախքան ճամբայ ելլելս:

Սիրալիր բարեւներ Վիվիէնին, Պարոն [Պետրոս] Ալեքսիին եւ տիկնոջ: Ինչպէ՞ս է առողջութիւնը: Պաշիկներ իմ պտըլիկ, անուշիկ բարեկամուհիներուս՝ Կարինէին եւ Արմինէին:

Սիրով՝
Վահրամ



ՆԱՄԱԿ 70

Լիզպոն, 26 Յունիս, 1971

Սիրելի Ասատուր,

Լոնտոնէն վերադառնալուս ամիս մը կ'ըլլայ վաղը չէ միւս օր եւ միայն նոր է որ կամաց կամաց կը կապուիմ առօրեայիս՝ որմէ այնքան կտրուած մնացի անցնող շաբաթներուն: Խենթ հոսանք մըն էր կ'երեւի եւ... կ'անցնի ի վերջոյ:

Երեկուընէ ի վեր Պարոյր Սեւակին մահուան լուրը ցնցած է զիս: Վստահաբար լսեցիր արդէն: Պէյրութէն հասնող թերթերը բերին լուրը երեկ: Խեղճ Պարոյր: Կ'իյնար ճիշդ ստեղծագործական իր հասունութեան տարիքին: Ձայնի չվերածուած ի՛նչ երգեր գացին արդեօք միասին:

Հայաստանի Գրողներու Համագումարին նկարագրութիւնն ու այդ առթիւ խօսուած ճառերը պարունակող թիւերը կը հասնին կամաց կամաց: Լենինով, Մարքսով, կոմունիստական շինարար ուղիով, կուսակցական իրապաշտութեամբ լեցուն են բոլորը: Ո՛չ մէկ խօսք սփիւռքահայ գրականութեան մասին. երբեք գոյութիւն ունեցած չըլլար կարծես: Ստեփանն [Ալաճաճեան] է նորէն որ անցողակի ակնարկութիւն մը ըրած է տեղ մը: Արժէքի հարց չէ որ կը յարուցանեմ: Եթէ կ'ընդունինք որ ամբողջութիւն մըն է հայ գրականութիւնը, ինչո՞ւ այն ատեն այս արհամարհանքը կամ անտարբերութիւնը: Այնքա՛ն «աններկայացուցչական» է սփիւռքահայ գրականութիւնը իբրեւ թէ ներկայացնող... պատուիրակութիւնը.- Սմբատ Փանոսեան, Անդր[անիկ] Արարատ,³⁸⁵ Ամերիկայէն մէկը՝ որուն անո՛ւնն անգամ չեմ լսած ասկէ առաջ եւ չեմ յիշեր հիմա, Լեւոն Շահոյեան,³⁸⁶ Պէպօ Սիմոնեան,³⁸⁷ Արմէն Դարեան, Տիգրան Վարժապետեան,³⁸⁸ եւայլն: Սխալ մի հասկնար, ասոնց գրական շնորհքները չէ որ տարակուսանքի կ'ենթարկեմ: Ինչո՞ւ, յետոյ, գեկուցող մըն ալ չըլլար սփիւռքահայ գրականութեան ներկայ կացութեան եւ մտահոգութիւններուն մասին, նախընտրաբար թերեւս արտասահմանի ներկայացուցիչներէն: Արմէն Դարեանը, օրինակ, կրնար շատ լաւ ընել ատիկա: Գացողներէն մէկերկուքը ելեր եւ սովորական, քաղաքավարական քանի մը խօսք ըսեր են միայն:

Օրերը կը դառնան, իրարու ետեւէ արագօրէն կը սահին



պէտք է ըստի թերեւս: Եւ տեսնես որքա՞ն նման ես անոնք իրարու: Անդիմագիծ: Այս շրջաններուն բաւական այցելուներ կու գան ամէն կողմէ: Յաճելի փոփոխութիւն մը ասիկա՝ երբ ծանօթներ, բարեկամներ կ'երեւին երբեմն ալ:

[Երուանդ] Պարսումեանէն լսեցիր հաւանաբար որ Լոնտոնէն մեկնած օրս, Կիրակի, կ'եսօրին միասին ճաշեցինք այն լիբանանեան ճաշարանը՝ ուր անկէ օր մը առաջ տիրոջ՝ սպասարկող աւստրալիացի կինը լացուցեր էիր երբ պզտիկ շիշ մը լիբանանեան օդին համար 9 ոսկի պահանջած էր:

Յարմար առիթով ծրար մը *Օրագիր* կը դրկեմ դարձեալ. կրնաս պէտք ունենալ բարեկամներու տալու համար:

Բարեւներ Վիվիէին, ծնողքին եւ պաշիկներ ձագուկներուն:

Սիրով՝

Վահրամ

[Յ.Գ.] Շնորհակալութիւն փողկապին համար. հասաւ ապահով: Այսօր անդրադարձայ որ 5 ոսկիդ չէի դրկած: Այս նամակիս հետ երկու տող կը դրկեմ նաեւ Լոնտոնի Ուեսթմինսթըր *պանթըն*՝ որպէսզի... տնօրինեն պարտն ու պատշաճը:

ՆԱՄԱԿ 71

Լիզպոն, 11 Օգոստոս, 1971

Սիրելի Ասատուր,

Օգոստոս 7ի երկտողը հասաւ այսօր: Երեկ երեկոյեան ստացած էի նաեւ... Կարինէին կորսնցուցած նամակը:

Ուրեմն Վիվիէնը Լիզպոն եկաւ, մնաց 18 ժամ եւ մեկնեցաւ առանց բարեւ մը ըսելու, ձայն մը տալու: *Պրա՛վօ:*

Անգլիայէն վերադառնալէս վերջ գրասենեակի սեղանիս օրացոյցին երեկուան էջին վրայ նշանակած էի իրենց ժամանումը.- նամակդ ձեռքս անցաւ երեկոյեան միայն, գործէն վերադարձիս: Առտուան ժամը 9.30ին գրասենեակ հասնելէ ետք երբ անդրադարձայ, փորձեցի իսկոյն կապուիլ նաւուն հետ: Կարելի չէղաւ սակայն. սոսկալի խճողում կար նաւահանգիստը եւ գոյութիւն ունեցող հեռաձայնային քանի մը գիծերը բռնուած





էին բոլոր: Խորհեցայ թէ ձայն մը կու տան անպայման կամ կը հանդիպին Յիմնարկութիւն: Եւ, ենթադրելով տակաւին որ հանդիպելէ ետք միասին կ'ըլլանք Վիվիէնին եւ պզտիկներուն հետ կ'եսորուան ճաշին եւ անելի վերջ *օթոյով* պտոյտի մը, յետաձգել տուի կ'եսորեն վերջ տեղի ունենալիք մեր մէկ ժողովը: Երբ մինչեւ ժամը 12 մեջտեղ չելան, անձամբ իջայ նաւահանգիստ, գտայ նաւը, ելայ վեր, *փըրսըրեն* առի սենեակին թիւը - 131 -, գտայ սենեակը՝ ուր սակայն ոչ ոք կար: Հասկնալի էր որ ելած ըլլային դուրս քաղաքը պտըտելու: Մինչեւ ժամը 5 երբ ձայն չելաւ հեռաձայն մը եւս ըրի. չէին վերադարձած տակաւին: Հեռաձայնեցի դարձեալ երեկոյեան ժամը 8ին: Երթալ ստուգելէ ետք պատասխանեցին թէ միայն պզտիկները *քապիկն* են, պառկած, բայց չեն գիտեր մամային ուր ըլլալը: *Մէսէճ* մը ձգեցի եւ տուի հեռաձայնի թիւս՝ որպէսզի վերադառնալէ ետք գոնէ հեռաձայն մը ընէ: Ոչ մէկ ձայն սակայն:

Հասկնալի է անշուշտ որ Վիվիէնը կրնար իր անձնական ծրագիրները ունեցած ըլլալ եւ նպատակս զինք, ըսել կ'ուզեմ իր ազատութիւնը, կաշկանդել չէր երբեք: Կ'ակնկալէի սակայն որ կապ մը պահէր առաջին հերթին, մանաւանդ երբ գիտեր թէ լուր ունէի իր հասնելէն եւ հետեւաբար կրնայի փնտռել զինք: Աշխարհի չորս կողմերէն հայեր կու գան, յաճախ անծանօթ, եւ առաջին առիթով Յիմնարկութիւն կը հանդիպին նշանաւոր Թանգարանն ու Կեդրոնը տեսնելու: Վիվիէնը անելի պատճառ մը ունէր ընելու ատիկա:

Ամեն պարագայի տակ երբ Վիվիէնը վերադառնայ կ'ըսես իրեն թէ անկեղծ բարեկամութեան մը վայել վերաբերմունք չէր իրը. կ'երեւի կ'ակնկալէ որ նոյնը ընեմ նաեւ ես երբ Լոնտոն հանդիպիմ յաջորդ անգամ:

* * *

Այսօր սկսանք կրթաթոշակի մեր ժողովներուն: Մարդ Աստուծոյ, ուսանողի անուն կը յիշես, չէ՞ս ըսեր թէ ուրկէ դիմած են: Օֆիկին [Մարթին]³⁸⁹ յանձնարարածը, օրինակ, Անգլիայէն դիմողներու ցանկին մէջ չկայ: Յետոյ, Ռոմի՞կը [Մարթին] ուրկէ մեջտեղ ելաւ դարձեալ. անցեալ տարի յատկացում չեղա՞ւ այս տղուն: Կը մոռնաս որ 1,200 թեկնածու կայ 26 տարբեր երկիրներէ:





* * *

[Պարոյր] Սեւակի յիշատակին նուիրուած երեկոյին մասին գրած էր ուրիշ բարեկամ մը: Կ'երեւակայեմ թէ որքան տափակ արտայայտութիւններ եղած կրնան ըլլալ - թէկուզ բարձր բառերով - այդ իրիկուն: Բայց չէ՞ որ ասկէ երկու տարի առաջ Նիկողոսեաններուն տունը [Կարպիս] Եսայեանը³⁹⁰ կը վիճաբաներ մեզի հետ ըսելու համար թէ բանաստեղծութիւն չկայ Յայաստանի մէջ: Ի՞նչ փոխուեցաւ հիմա:

Սիրով՝
Վահրամ

ՆԱՄԱԿ 72

Լիզպոն, 30 Սեպտեմբեր, 1971

Սիրելի՛ Ասատուր,

Սեպտեմբեր 1ի նամակդ կարդացի հաճոյքով:

Վաղը չէ միւս օր, Շաբաթ առաւօտ ճամբայ կ'ելլեմ - մի՛ վախնար, Լոնտոն չէ որ կու գամ այս անգամ - դեպի Պէրլուր: Ըհը՛մ: Յիմա պիտի ըսես՝ մէկուկէս օրուան համար Լոնտոն եկողը անշո՛ւշտ թէ մինչեւ Պէրլուր կ'երթայ դարձեալ՝ հազիւ չորս ամիս վերջ: Բայց վայրկեան մը սպասէ, մտիկ ըրէ նախ՝ յետոյ: Եթէ կարենամ դասաւորել - *վիզա* եւայլն - մտադիր եմ անկէ ալ Յայաստան անցնիլ 10-15 օրուան համար: Երթանք քիչ մը հայօրէն նորուգուինք գանք: Երէկ [Վարդգէս] Յամագասպեանին հեռագրեցի *վիզային* համար: Ա՛լ տեսնենք: Եթէ գործելու իրենց սովորական եղանակով շարժելու ըլլան՝ մինչեւ անհրաժեշտ ձեւակերպութիւններուն աւարտիլը արձակուրդս ալ վերջացած կ'ըլլայ:

Վերադարձի ճամբուս վրայ կ'ուզեմ 2-3 օր մը գոնէ Լոնտոն հանդիպիլ անպայման նախքան Լիզպոն անցնիլս՝ աւելորդ է ըսել, նախ քե՛զ տեսնելու՝ եւ ապա քանի մը... գունաւոր շապիկ եւս գնելու: Եթէ ի վերջոյ գալու ըլլամ՝ ատիկա կ'ըլլայ Յոկտեմբեր] 28ի ատենները: Նոյեմբեր 1ին կը վերադառնամ այստեղ՝ 2ին գործի ըլլալու համար:

Տուած լուրերուդ մէկ մասէն տեղեակ էի: Անթիլիասի պատ-





ուիրակութիւնը գացեր է արդէն եւ, ինծի հասած լուրի մը համաձայն Ամերիկայի դաշնակցականները զայրացեր են որ նման քայլ մը առնուած է առանց իրենց հաւանութեան կամ գիտակցութեան նոյնիսկ: Պէյրութ բոլոր մանրամասնութիւնները կ'իմանամ:

Ասկէ մօտաւորապէս երկու ամիս առաջ Լոնտոնէն Տիկին Քելչիկ մը այստեղ էր: Եկած էր համալսարանական իր աղջիկը տեղաւորելու՝ փորթուկալերէն լեզուի ամառնային դասընթացքի մը համար: Իրենց օգտակար եղայ *հօսթըլ* մը գտնելու: Շատ գոհ մնացին: Ի՞նչ է իրենց «գաղութային աստիճանաչափը»: Տիկինը ըսաւ, իմ մէկ հարցումիս պատասխանելով, թէ ազգային խնդիրներու մէջ չեն մտներ իրենք: Կ'երեւի հարստացած են այլեւս:

Եթէ Պէյրութէն կամ Յայաստանէն որեւէ բան պետք կրնաս ունենալ, կամ այդ առթիւ կ'ուզես կապուիլ ինծի հետ, անմիջապէս քանի մը տող ճամբէ մեր Պէյրութի գրասենեակի հասցեով որ կու տամ վարը: Եթէ Յայաստան երթալու ալ ըլլամ հազիւ Յոկտեմբեր 9ի ատենները կ'ըլլայ ատիկա:

Քոյդ՝
Վահրամ

V[ahram] M[avian]
c/o Calouste Gulbenkian Foundation
Stephan Building
Riad Solh Street
Beirut

ՆԱՄԱԿ 73

Լիզպոն, 7 Նոյեմբեր, 1971

Սիրելի Ասատուր,

Շաբաթ մըն է արդէն վերադարձած եմ արձակուրդէս: Գացի Պէյրութ եւ Յայաստան: Պատմելիք շատ բան: Վերադարձի ճամբուս վրայ Լոնտոն հանդիպելու ծրագրես հրաժարեցայ վերջին վայրկեանին եւ փոխարէն եկայ Պրիւքսելի վրայով:





Շաբաթն ու Կիրակին էին տրամադրելի երկու այդ օրերը՝ երբ, անդրադարձայ թե դուն կ'ըլլաս զբաղած ձերիններով, իսկ խա-
նութենքը կ'ըլլան փակ:

Անթիլիաս-Էջմիածին բանակցութեան մասին մեր ունեցած տեղեկութիւնը, որուն անդրադարձած էի Սեպտեմբերի վերջը գրած նամակիս մէջ, ճիշդ չէր ուրեմն: Մինչեւ իմ Պէյրութը ձգելս, Յոկտեմբեր 31ին, պատուիրակութիւնը տակաւին չէր մեկնած: Անթիլիասցիները զայրացած էին *վիզաներուն* ուշաց-
ման համար: Էջմիածինը անկէ շաբաթ մը առաջ հեռագրած էր թէ *վիզաները* դրկուած են, իսկ Պէյրութի դեսպանատունը կ'ըսէր թէ նման հրահանգ չէ ստացած: Մանրամասնութիւններէն տեղեկ եմ, բայց այդ մասին ուրիշ առիթով: Անձնապէս չեմ կարծեր որ կողմերը գոհացնող լուծում մը գտնուի: Յետոյ ի՞նչ բանակցութիւն: Զեզմէ բան մը գողնամ եւ յետոյ համա-
ձայնիմ բանակցութեան նստիլ քեզի հետ՝ որոշելու համար թէ գողցածիս գոնէ մէկ մասը պէ՞տք է վերադարձնեմ քեզի թէ ոչ: Երեւակայէ, բանակցութեան առաջին կետը Մայր Աթոռին նա-
խամեծարութեան հարցն է: Այլ խօսքով Անթիլիասը զիջու՞մ մը ըրած պիտի ըլլայ ընդունելով ատիկա:

Ճամբուս վրայ, Յայաստան եւ Պէյրութ, քանի մը շատ լաւ բարեկամներու խոստացայ [Տէյվիտ Մարշըլ] Լանկին գիրքէն դրկել մեկական օրինակ: Բայց, մարդ Աստուծոյ, այդ որքան սուղ է: Իբրեւ թէ մեր յատկացումին մէկ մասն ալ ըրած էինք որ գիրքը մատչելի գինով մը վաճառուի: Մէյ մը հետաքրքրուէ նա-
յինք կարելի չէ՞ գոնէ 4 օրինակ մը «մեծաքանակի» գինով ձեռք ձգել: Լոնտոն գտնուած միջոցիս անցեալ Մայիսին՝ տղոցմէ մե-
կը կ'ըսէր թէ ինք - կարծեմ Լանկին միջոցաւ - կ'ընէր ատիկա: Յետաքրքրուէ եւ գրէ այս մասին:

Ալեք Մանուկեանը եկա՞ւ ի վերջոյ: Յայաստան միասին եղանք շաբաթ մը: Գիտեմ թէ Մոսկուայի օդը պատճառ եղաւ որ ժամանակին չհասնի Լոնտոն:

Ի՞նչ նորութիւն ձեր աշխարհէն: Կը սպասեմ լուրերուդ:

Քոյդ՝
Վահրամ

[3.Գ.] Լանկին գիրքը Պէյրութ մինչեւ 80-85 Լիբանանեանի կը վաճառեն: Այսքա՞ն շահագործում: Աւելի քան 10 սթերլին կ'ընէ ատիկա:





ՆԱՄԱԿ 74

[Լիզպոն], 7 Նոյեմբեր, 1971

Սիրելի Ասատուր,

Քիչ առաջ քեզի գրած երկտողս թղթատարին յանձնելէ ետք միայն անդրադարձայ թէ մոռցած էի այնտեղ քեզմէ խնդրել որ բարի ըլլաս անգլիերէն 1972ի *տայըրի* մը ապահովել ինծի համար: Բացատրեմ՝ որովհետեւ ուզածս մասնաւոր *տայըրի* մըն է, փոքրիկ, ետեւը բաւական պարապ էջերով - նօթերու եւ հաշիւներու վերապահուած - ուր ես կ'արձանագրեմ շրջապտոյտներուս համար այնքան կարելոր հեռաձայնի թիւերս: Անգլիերէն այդ *տայըրի*ները այստեղ գտնել կարելի չէ դժբախտաբար: Անցեալ տարի անձամբ գնեցի Զերըտզէն³⁹¹ երբ Լոնտոն էի Զոկտեմբերին, իսկ անոր նախորդող երկու տարիներուն զանոնք գտայ Պէյրուսէն: Այս տարի Պէյրուս չէին հասած տակաւին, Լոնտոն ալ, ինչպէս գիտես, չկրցայ հանդիպիլ:

Կը ներփակեմ չափը նշանակող թղթիկ մը՝ որուն վրայ կ'երեւին նաեւ հարկ եղած մանրամասնութիւնները.- հրատարակիչն ու *տայըրի*ին յատուկ թիւը.- collins/pc363- որուն տակ մանր գիրերով *ին ճէնիուին լետըր* մըն ալ կայ: Կը կարծեմ թէ դիւրաւ կը գտնես Զերըտզէն. Զօլինզի *սթանտար տայըրի*ներէն է: Եթէ օր առաջ ապահովես շնորհակալ կ'ըլլամ՝ այլապէս կրնայ սպառիլ որովհետեւ. այս կողմ ճամբելը հարց չէ անկէ ետք:

Երկար, մանրամասնեալ բացատրութիւնս Եղիշէ Պատրիարքը [Տերտերեան] յիշեցուց նորէն: Զայրիկ Սրբազանին [Արսլանեան] կ'ըսէ յաճախ.- Դուն երկար պէտք է բացատրես որ ես շուտ հասկնամ:

Սիրով՝
Վահրամ

ՆԱՄԱԿ 75

[Լիզպոն], 20 Նոյեմբեր, 1971

Սիրելի Ասատուր,

Շնորհակալութիւն նամակիդ եւ *տայըրի*ին համար: Այս վեր-





չինը ճիշդ ուզածս է.. գրեթէ: Գրեթէ կ'ըսեմ, որովհետեւ collins/pc363p է ճամբածոյ: Այսինքն «p» մը անելի ունի ետելը՝ որ տայրրիին ողնայարն ի վար սողացող մատիտին համար է: Անպետ, անճաշակ, անգործածելի իր մը այս վերջինը՝ որ պարզապէս առանց «p»ի կոկիկ, պտըլիկ տայրրիներուն լայնքը կ'անելցնէ, կը տգեղցնէ զանոնք.- Ա՛խ սա գեղեցկութիւնը, որ քա՛ն կարելոր է նոյնիսկ անկենդան առարկաներու պարագային: Պետք էր ուշադրութեանդ յանձնած ըլլայի պզտիկ այս «սայթաքումին» հաւանականութիւնը: Ի՛նչ սրիկայ են անգլիացիները. իրենց օրէնքներն ալ այդպէս չե՛ն.- մանրատառ ծանօթութիւն մը, աննշան բառ մը, տառ մը... ի վերջոյ յանցաւոր կը հանեն քեզ: Զիմա կրնաս հատ մը եւս անելցնել իմ մասին ունեցած պատմութիւններուդ վրայ:

* * *

Շնորհակալութիւն նաեւ *Քրէյտըլին [Armenia: Cradle of Civilization]* կարգադրութեանդ համար: Կը սպասեմ ուրեմն երբ պատրաստ ըլլան: Ո՞վ կը կատարէ առաքումը այս պարագային. քո՛ւ ուսերուդ կը բեռցուի նորէն: Եթէ իւրաքանչիւր հատոր խաւաքարտէ իր տուփը ունի՝ լա՛ւ, այլապէս պետք է ինամքով ծրարել զանոնք որպէսզի ճամբան չփճանան: Երբ [Տէյվիտ Մարշըլ] Լանկը բերէ հատորները երկու տողով մը պահէ զիս տեղեակ որպէսզի փոխարժէքին առաքումը կատարեմ իսկոյն: Իր նուեր ղրկելիք հատորներէն մէկը չի մոռնար անշուշտ մակագրել:

Գիրքը լաւ է ընդհանրապէս, թէւ Լանկեան *աճելածիութիւն* մը կայ մէջը: Կարծես «ոտքի վրայ» գրուած է: Մէկէ անելի ընթերցողներ դիտել տուին թէ շատ արագ անցած է վերջին շրջանին վրայէն: Այդ առարկութեան, ի՛մ բացատրութիւնս գոնէ այն է որ հատորին «նիւթը» անցեալն է՝ երբ... քաղաքակրթութեան օրրան էր Զայաստան:

Քանի խօսք բացուեցաւ՝ ըսեմ նաեւ թէ բաւական խոցելի են հատորին մէջ երեւցած լուսանկարներէն ոմանք, թէ՛ որպէս ընտրութիւն՝ իսկ գունաւորներու պարագային տպագրութիւնն ալ: Այդ ի՛նչ խեղճ Արարատ է, օրինակ, 32րդ էջին դիմաց տպուածը: Յետոյ, Երեւանի ընդհանուր տեսարանը որ կ'երեւի



113րդ էջին դիմաց: Էջ 256ին վրայ Արշակ Բ.Էն տեսարան մը կայ, քսան տարի առաջ առնուած: Նոյն օփերային նոր պատրաստութիւնը կայ հիմա, շատ աւելի արդիական, գեղեցիկ եւ ճոխ: Տակաւին, ինչո՞ւ Գոհար Գասպարեանին³⁹² նկարը - եթէ անպայման երգչուհի մը պիտի ըլլար՝ [Չարուհի] Տօլուխանեանը³⁹³ պէտք է ըլլար միակ թեկնածուն: Գոհարին ալ 20 տարի առաջուան նկարը: Շատ անհարազատ են գոյները 192րդ էջին դիմացի մանրանկարներուն: Տակաւին, ինչո՞ւ [Գարեգին] Սեւունցին պիտի տրուի նախապատուութիւնը բոլոր գրողներուն մէջ.- թէեւ ես անձնապէս գիտեմ թէ այս վերջինը անձնական բարեկամն էր Լանկին: Մատենադարանի մուտքին դռան երկու կողմը մեր մատենագիրներէն վեցին հսկայ, նոր արձանները կան հիմա. կ'արժէ որ հատորին մէջ երեւցած հին լուսանկարը փոխարինուի նորով մը:

Եզրակացութիւն.- Լանկին ըստ, եթէ երկրորդ տպագրութիւն մը կը նախատեսէ, ես կրնամ հաւանաբար կարգ մը այս հին, անյաշող լուսանկարներուն տեղ աւելի նոր եւ արուեստով առնուածները գտնել եւ տրամադրել իրեն: Ամերիկայէն շատ մօտիկ բարեկամ եւ համբաւի տիրացած արուեստագետ-լուսանկարիչ - Չօլաք³⁹⁴ - անցեալ տարի 6-7 շաբաթ Յայաստան մնաց եւ 1500 *նօլ ֆիլմ* նկարած է: Նպատակ ունի առանձին ալպոմ մը հրատարակելու: Այն տղան է որ առաջին անգամ ըլլալով գետնի վրայ երկու կռունկ նկարած էր, քիթ քիթի: Կը կարծեմ թէ կարելոր է որ *Քրէյտըլին* նման հատորի մը մէջ ներկայացուածները լաւագոյն լուսանկարները ըլլան, այլապէս, օտար ընթերցողը մանաւանդ՝ որ առաջին անգամ անոնցմով կը ծանօթանայ երկրին, ժողովուրդին, կրնայ սխալ տպաւորութիւն ստանալ: Ի դէպ, գիտէի՞ր թէ մեր ծանօթ «Կռունկ»ին հեղինակը... Ֆրի՛կն³⁹⁵ է եղեր - էջ 274:

Չայս եւս հաղորդելով ձեր բարձր սրբազնութեան - իրաւ, Փափազը ի՞նչ ջուրի վրայ է առողջութեամբ եւ այլապէս - կը մնամ

Տիրաւանդ ողջունիւ
Վահրամ





ՆԱՄԱԿ 76

Լիզպոն, 31 Յունուար, 1972

Սիրելի Ասատուր,

Երկտող ստացայ առջի օր: Այս տղան ո՞ւր մնաց, կ'ըսէի ես ինձի: Երկար ատեն է ձայնդ ելած չունի, իսկ ամիսներ առաջ ճամբած վերջին երկտողդ կարճ էր հեռագրի մը չափ:

Արմինիաներէն [Armenia: Cradle of Civilization] երկուքին պէտք ունիմ այստեղ: Մնացեալ երկուքին մէկը՝ Մոսկուա Էգրասին [Յասրաթեան], իսկ միւսն ալ Երեւան՝ Չաւեն Տօլապճեանին³⁹⁶ պիտի դրկեմ: Եթէ քեզի դժուար չէ այս վերջին երկուքը այդտեղէն ուղղակի իրենց տէրերուն *փոստ* ընել, երկար ճամբորդութիւն մը խնայած կ'ըլլանք գիրքերուն: Ստորեւ կու տամ երկուքին ալ հասցէն: Այդտեղէն ուղղակի դրկելու պարագային կը խնդրեմ որ առաքումը կատարես ԱՊԱՅՈՎԱԳՐԵԱԼ ծրարով, հատորներուն առաջին էջերուն ծոցը տեղաւորես ներփակ *քարտերը* եւ ծրարին վրայ որպէս առաքող նշանակես անունս՝ ձեր հասցեով:

Prof. Ezras Asratian

Institute of Higher Nervous Activity & Neurophysiology

Pyatnitskaya No 48

Moscow - U.S.S.R.

Dr. Zaven Dolabdjian

Aygedzor street 19,

Erevan 19

Armenia (U.S.S.R.)

Շատ կը խնդրեմ որ երկու պարագային ալ լաւ ծրարուած ըլլան հատորները որ չփճանան ճամբան: Գիրքերուն հասնելէն ետք կը գրեմ [Տէլփիտ Մարշըլ] Լանկին շնորհակալութիւն յայտնելու համար: Մի մոռնար նուիրած օրինակներէն մէկը մակագրել տալ. ատիկա միւսնայն ատեն ապահովութիւն մը կ'ըլլայ անոնց դէմ՝ որոնք գիրքը տեսնելէ ետք կ'անկնկալեն որ նուէր տաս իրենց: Ներփակ՝ երկու հատորին արժէքը ներկայացնող *չէք* մը:

Ուրեմն Էճըրթընը ոչ ես է: Ձեռով մը լաւ է որ վաճառուեցաւ՝ քեզ անուղղակի պարտադրանքի մը առջեւ դնելով որ աւելի մնա-





յուն գործի մը մասին մտածես: Կը կարծեմ թէ շատ լաւ կ'ըլլայ եթէ [Խաչիկ] Մթըրպեանին տպարանի ծրագիրը իրականանայ: Գրէ որ ուրախանամ՝ երբ դրական կարգադրութիւն մը ըլլայ ի վերջոյ:

[Նիկողոս] Թարայանին³⁹⁷ մահուան պարագաները շատ խելքիս չպառնկեցան: Նոր կասկածներ կամ յայտնութիւններ կա՞ն: Մեղք եղաւ տղուն: Հայր Արսէնը [Պերպերեան] մեկնեցա՞ւ արդէն: Փափագը ի՞նչ ջուրի վրայ է՝ հիմա որ Նուպարն [Կիւլպէնկեան] ալ հրաժեշտ առաւ այս անցաւոր աշխարհէն:

Տնեցիները բոլոր լաւ են կը յուսամ. տուր ջերմ բարեւներս Տեր եւ Տիկին Ալեքսիներուն եւ Վիվիէնին:

Ջերմօրէն՝
Վ. Յ. Մավեան

ՆԱՄԱԿ 77

[Լիզպոն], 19 Փետրուար, 1972

Սիրելի Ասատուր,

Շնորհակալութիւն 8 Փետրուարի նամակիդ եւ *Արմինիան*երու առաքումին առիթով այնքան ազնուօրէն յանձն առած ձանձրոյթիդ համար: [Տէյվիտ Մարշըլ] Լանկին մակագրած օրինակը ստացայ առջի շաբաթ: Կը յուսամ ապահով իրենց տեղերը կը հասնին նաեւ Էգրասին [Հասրաթեան] եւ [Չաւէն] Տօլապճեանին օրինակները: Ներփակ թագուհին - որուն շատ կարելորութիւն տուող չկայ հոս - ... առաքումներու հաշտոյն: Չելլես ետ դրկես զայն դարձեալ: Նոյն ճամբան, Լիզպոն - Լոնտոն - Լիզպոն, անգամ մը կտրած է արդէն:

Ես ինծի բաւական ինդացի քեզ բանախօսութեան հրաւիրող միութեան անունին վրայ: Դարասկիզբի մեր յեղափոխական *ալա* փանջունի կոմիտէները յիշեցնող շունչ մը ունի վրան.- Կա՛յծ:³⁹⁸ Ի՞նչ կազմակերպութիւն է աս որուն գոյութենէն անգամ լուր չունինք: Կասկած չունիմ թէ յաջող եւ հաճելի անցան երեկոյթն ու Փարիզ այցելութիւնդ: Կ'ենթադրեմ թէ ինծի պէս դուն ալ զգացիր մեր սիրելի Բիւզանդին [Թօփալեան] բացակայութիւնը: Թէեւ օրը օրին չենք սկատեր, բայց երբ պահ մը ետ կը նայինք՝ կ'անդրադառնանք թէ բաւական բարեկամներ, ազ-





գային արժեքներ հողին յանձնած ենք վերջին տարիներուն:

Վրեժ Ներսեսեանին կրթաթոշակը նորոգելը Պի. Էյ.Էն անդին անկարելի է: Հարցը սկզբունքային է դժբախտաբար եւ կարելի չէ որեւէ շեղում կատարել: Երբ ուսանող մը երկու կամ ավելի տարիներ օգտուած է Հիմնարկութեան կրթաթոշակներէն եւ տիկրի մը ստացած, ընթացք չի տրուիր ավելի բարձր տիկրի մը եւս ապահովելու համար ներկայացուցած իր դիմումին՝ նախապատուութիւն տալու համար բազմահարիւր այն միւս թեկնածուներուն՝ որոնք ամէն տարի նոր կը սկսին իրենց բարձրագոյն ուսման եւ բնաւ չեն օգտուած Հիմնարկութեան յատկացումներէն: Վրեժը, ինչպէս գիտես, մեր կրթաթոշակներէն 3 տարի նպաստաւորուած է արդէն - 2100 սթերլին] - եւ այս տարի կը ստանայ իր Պի. Էյ.ը: Իր սկզբնական դիմումին մէջ ալ 3 տարուան օժանդակութիւն կ'ուզէր միայն: Դասախօսներէն բերելիք յանձնարարականները որեւէ ձեւով չեն փոխեր կացութիւնը:

Գրե ավելի երկար: Լանկին գիրքին նկարներուն մասին գրած էի քեզի, յիշեցի՞ր: Գրե այդ մասին յաջորդիլ՝ որպէսզի եթէ հետաքրքրութիւն ցոյց չտուաւ՝ հարցին բնաւ չանդրադառնամ իրեն գրելիք շնորհակալական երկտողիս մէջ:

Բարեւներ տնեցիներուն:

Սիրով՝
Վահրամ

ՆԱՄԱԿ 78

[Լիզպոն], 24 Մարտ, 1972

Սիրելի Ասատուր,

Չպատասխանեցիր վերջին նամակիս: Ես ալ կը կարծեի թէ Եճրթընի տաղտուկէն ազատելէդ ետք ավելի ժամանակ պիտի ունենայիր գրելու:

Վաղը, Շաբաթ, առաւօտուն ժընեւի վրայով կը մեկնիմ Պոլիս: Աւելի ետք պիտի հանդիպիմ նաեւ Լիբանան, Սուրիա եւ Պարսկաստան: Ընդամենը 7 շաբաթ: Վերադարձած կ'ըլլամ Մայիս 14ին: Նպատակ ունիմ անկէ քանի մը օր առաջ անցնիլ Լոնտոն կարգ մը գնումներու: Կը պահեմ քեզ տեղեակ երբ





որոշ ըլլայ ծրագիրս: Պարսկաստան պիտի մնամ 17-18 օր: Եթէ պատեհութիւն մը ստեղծուի՝ ուրախ կ'ըլլամ այդ առթիւ ճանչնալու նաեւ ձեր Կորիւնը՝ [Յամազասպ Մարթին] որուն մասին պատմած ես այնքան:

[Տէյվիտ Մարշըլ] Լանկին գրքին երկրորդ օրինակը չհասաւ դեռ: Չեմ գրած իրեն տակաւին՝ ճամբած օրինակին համար շնորհակալութիւն յայտնելու: Այդ առիթով կ'ուզէի անդրադառնալ նաեւ նկարներուն՝ միայն ա'յն պարագային սակայն՝ երբ գիտնայի թէ պիտի հետաքրքրուէր զանոնք օր մը աւելի լաւերով փոխարինելու գաղափարով: Այս մասին ինծի գրած պիտի ըլլայիր դուն: Չըրիր: Նամակներդ ալ թափթփած ես... քեզի պէս: Մարդ Աստուծոյ, երբ նամակի մը կը պատասխանես՝ չե՞ս նայիր մէյ մը թէ ի՞նչ ըսուած է այնտեղ:

Ես ամսուն 31ին Պէյրութ կ'ըլլամ: Այդ թուականէն անդին որեւէ ատեն ինծի կարելի է գրել մեր Պէյրութի գրասենեակին հասցեով՝ այսպէս,

c/o Calouste Gulbenkian Foundation
Stephan Building
Riad Solh Street
Beirut

Կրնաս անշուշտ գրել նաեւ Սիմոնին [Սիմոնեան] հասցեով: Զանի մը տող ճամբէ անպայման, մանաւանդ նախորդ նամակներու մէջ ըրած հարցումներու առնչութեամբ: Լանկին համար նոր նկարները վերցուցած պիտի ըլլայի Պոլսէն կամ Պէյրութէն: Այլապէս ալ, ըսէ նաեւ թէ բանի մը պէտք ունի՞ս Արեւելքէն: Պիտի հանդիպիմ նաեւ Զալէպ, հաւանաբար Ապրիլ 7-8ի ատենները: Մայրդ հո՞ն է տակաւին, կրնա՞մ որեւէ ձեռով օգտակար ըլլալ:

Անցեալ շաբթուան թիւով «Նայիրի»ն սկսաւ հրատարակել *Արձակուրդի Օրագիրս*, վերջին Հայաստան այցելութենէս «ներշնչուած» շարք մը: Եթէ առիթ ունիս «Նայիրի» տեսնելու, կարդա: Կարծեմ 3-4 շաբաթ մը կ'երթայ:

Այսքան, սիրելի Ասատուր, պէտք է աճապարեմ՝ որովհետեւ կարգադրելիք բաւական գործեր ունիմ տակաւին: Հետաքրքիր եմ նաեւ գիտնալու թէ ո՞ր հասաւ տպարանի ծրագիրը:

Սիրալիք բարեւներ տնեցիներուն:

Ջերմօրէն՝
Վահրամ





ՆԱՄԱԿ 79

[Թեհրան], 24 Ապրիլ, 1972

Սիրելի Ասատուր,

Քանի մը օր առաջ միայն լսեցի եղբորդ [Մարտիկ Կիւզելեան] կորուստին մասին: Այսպէս է մահը, միշտ կը կարծենք թէ ուրիշին է որ կը պատահի եւ օր մ'ալ երբ զայն գտնենք մեր սեփական դրան առջեւ՝ կը զարմանանք, կը զայրանանք, կ'ընդվզինք, չենք ուզեր հաւատալ:

Մայիս 5ին վերադարձած կ'ըլլամ Պէյրութ: Եթէ կ'ուզես որեւէ վճարում, եւայլն, ընել Զալեպ ձերիններուն՝ գրէ երկու տող եւ ըստ թէ Պէյրութ որո՞ւն յանձնեմ զայն:

Երէկ Աստղիկը (Պապայեան)⁴⁰⁰ տեսայ: Քեզ յիշեց եւ այստեղ բանախօսութեան հրաւիրելու խօսք մը ըրաւ:

Կը ծրագրեմ Մայիս 10ին Պէյրութէն Լոնտոն անցնիլ ուղղակի, 1-2 օրուան համար:

Կը պահեմ քեզ տեղեակ:

Մինչ այդ՝

Սիրով քոյդ՝
Վահրամ

[Յ.Գ.] Կորիւնն [Յամազասպ Մարթին] ու Օֆիկը [Մարթին] այստե՞ղ եւ. ձայն չե՛լաւ. իսկ զիրենք գտնելու փորձերս արդիւնք չտուին: Այնքան քիչ է ունեցած տեղեկութիւնս:

ՆԱՄԱԿ 80

[Լիզպոն], 6 Յուլիս, 1972

Սիրելի Ասատուր,

Առիթ չեղաւ գրելու վերադառնալէս ի վեր: Մասնաւոր ոչ մէկ նորութիւն: Սովորական առօրեան: Կ'ենթադրեմ թէ դուն ալ մտար այլեւս նոր գործիդ հոսանքին մէջ եւ կը շարունակես զայն առանց առաջին օրերու ճիգին՝ որուն պէտք ունեցար վստահաբար՝ վերջին տարիներու «անկախութենեդ» ետք յանկարծ կաղապարի մտնելով:

Ի՞նչ մեղքս պահեմ, մեր վերջին հանդիպումէն շատ բան





չհասկցայ ես: Գիտեմ թե միտքեդ ինչեր կ'ըսես հիմա. չէ՞ որ մեղքին գլխաւոր բաժինը իմա էր: Ի դեպ, քու այսքան ազնիւ պատրաստակամութենեդ չափազանց տպաւորուած է Կրասան՝ որ քանի մը անգամ ըսաւ որ իր կողմէ շնորհակալութիւն յայտնեմ քեզի:

Էզրաս Յասրաթեանը ապահով ստացեր է [Տէյվիտ Մարշըլ] Լանկին գիրքը եւ գեղեցիկ նամակ մը գրած էր: Քեզմէ լսելէ ետք [Չաւեն] Տօլպաճեանը տեղեակ պահած էի հատորին առաքումէն՝ եւ խնդրած որ երկտողով մը տեղեկացնէ ստացումը: Գիրքը *փոստին* յանձնած էիր Փետրուար 4ին. նայէ թե ինք - Չաւենը - ինչ կը գրէ Յունիս 6ին, այսինքն չորս ամիս վերջ: «... դժբախտաբար մինչեւ հիմա չստացայ գիրքը եւ յուսահատ կը գրեմ այս տողերը: Այնպիսի անհամբերութեամբ եւ յուզումով կը սպասէի. ընկերներու մօտ հպարտացեր էի որ այդ վեց գիրքը պիտի ստանամ, բայց աւաղ, յոյսերս եւ երազներս չիրականացան: Շատ կը ցաւիմ. այսքան ուշացումը վատ նշան է. հաւանաբար ցաւալի բան մը պատահեր է»:

Կ'երեւի Յայաստան *սանտուրճին* կամ նամակատան մէկ այլ պաշտօնեան, գնահատելով հատորը՝ մէկ կողմ դրաւ զայն: Հիմա առաջարկ մը... խնդրելու պէս: Ես կը կարծեմ որ կ'արժէ հարցը արծարծել - նոյնիսկ եթէ ատիկա պիտի ըլլայ պարզ հետաքրքրութեան համար - այդտեղ նամակատան մօտ, պաշտօնական երկտողի մը հետ դրկելով նաեւ ստացագիրքը եւ խնդրելով որ բարի ըլլան հետապնդել հարցը: Տեսնենք թե մինչեւ ո՞ր պիտի կարենան հասցնել հետքը: Նամակատան պատասխանը կրնայ թերեւս... առանձին յօդուածի մը նիւթ ըլլալ: Մինչեւ ե՞րբ արժեքաւոր որեւէ հատոր պիտի չհասնի իր հասցէին... ապահով մինչեւ Յայաստան հասնելէ ետք: Երեւոյթն է որ ընդվզեցուցիչ է: Ինչո՞ւ հրապարակաւ մեր մամուլին մէջ չարծարծուի հարցը: Կարելոր է սակայն ձեռքիդ մէջ փաստացի տուեալ մը ունենալ խօսած ատենդ օդին մէջ չըլլալու համար:

Լանկին գիրքին քովդ գտնուող օրինակս թող մնայ առ այժմ: Նոր օրինակը **եթէ** արդէն չես ապսպրած՝ վազ անցիր. պէտք չունիմ հիմակուհիմա:

Յոկտեմբերին, երբ արձակուրդս առնեմ, տարտամ փափաք մը ունիմ մինչեւ Քալիֆորնիա երթալու այս անգամ: Եթէ միտքս փոխեմ՝ կը մնամ Եւրոպա դարձեալ:





Գրե՛ աւելի յաճախ՝ հիմա որ խելօք տունի տղայ եղար այլեւս:
Ջերմ բարեւներ Վիվիէնին եւ պաջիկներ անուշիկ ձագուկներուդ:

Սիրով՝
Վահրամ

ՆԱՄԱԿ 81

[Լիզպոն], 6 Սեպտեմբեր, 1972

Սիրելի Ասատուր,

Ձայնդ չելաւ վերջին նամակես ասդին՝ հակառակ վրայէն երկու ամիս անցած ըլլալուն:

Յոկտեմբեր 1ին կ'առնեմ տարեկան արձակուրդս.- ամիս մը: Ծրագիր ունիմ այդ առթիւ մինչեւ Քալիֆորնիա երթալու այս անգամ՝ ճամբուս վրայ մէկ-երկու քաղաք ալ հանդիպելով:

Այս երկտողը՝ խնդրելու համար որ բարի ըլլաս առաջին հերթին ապահովագրեալ ծրարով մը - *սըրֆէյս մէյլ* - ինծի ճամբելու [Տէյվիտ Մարշըլ] Լանկին գրքին քու մօտ ունեցած օրինակս: Ամերիկա երթալու պարագային պետք պիտի ունենամ ասոր: Շնորհակալ կ'ըլլամ եթէ զայն իսկոյն յանձնես *փոստին*՝ նկատելով որ գոնէ 8-10 օր մը կրնայ առնել ճամբան:

Չեմ գրեր աւելի երկար՝ սպասելով նամակիդ եւ լուրերուդ:
Ջերմօրէն բարեւելով տնեցիները,

Սիրով՝
Վահրամ

ՆԱՄԱԿ 82

[Լիզպոն], Շաբաթ, 7 Յոկտեմբեր, 1972

Սիրելի Ասատուր,

Լռութիւնդ ենթադրել կու տայ որ կարգին կապուած ես գործիդ: Հասկցանք եղբայր, մենք ալ, աշխարհ ալ կ'աշխատի. ատիկա պատճառն է սակայն որ քաշուիկնք մեր շրջապատէն, խզենք կապերը:





Քանի մը ժամեն օդակայան կը մեկնիմ դեպի Ամերիկա: Եթէ երթի կամ դարձի ճամբուս վրայ զոհ չերթանք տերորիստական *աւանտուրայի* մը՝ Լիզպոն վերադարձած կ'ըլլամ Նոյեմբեր 5ին:

Կրնա՞մ ազնուութեանդ ապաւինելով քեզմէ ինդրել դարձեալ որ բարի ըլլաս 1973ի *տայըրի* մը ապահովել ինձի համար՝ չսպառած: Տեսակը գիտես.- collins pc363 - in genuine leather: Եթէ կայ՝ նախընտրաբար կապոյտ կամ կարմիր գոյն կողքով: Չգոյշ միայն, 363ին ետեւ պետք ՉԷ «p» մը ըլլայ. ասիկա կռակէն վար սահող տգեղ մատիտիկի մը եղած ակնարկութիւնն է: Եթէ յարմար առիթով մը վար դնես - Յերըտզը կ'ունենայ - կրնաս դրկել վերադառնալէս ետք, այս անգամ նամակով մը: Ինչ արած, այս *անդարիյաները* պիտի քաշես. դիւրին չէ Լոնտոն բնակիլը:

Ինչպէս կ'ըսեն, կանխայայտ շնորհակալութեամբ եւ ջերմ բարեւներով տնեցիներուն,

Քոյդ՝
Վահրամ

[Յ.Գ.] Շնորհակալութիւն [Տէյվիտ Մարշըլ] Լանկին գիրքին համար որ ապահով հասաւ ժամանակին: Բան մը ըրի՞ր [Չաւէն] Տօլապճեանին դրկուած եւ տեղ չհասած ծրարին կապակցութեամբ:

ՆԱՄԱԿ 83

Լիզպոն, 24 Մայիս, 1974

Սիրելի՛ Ասատուր,

Երկար ատեն է կ'ուզեմ գրել քեզի, բայց միշտ ալ այս կամ այն պատճառով կարելի չըլլար դասաւորել: Իսկ դուն, ինչպէս կ'ըսեն, մինչեւ մազերուդ ծայրը, թաղուած ես ազգային գործերու մէջ: Անցեալ Յոկտեմբերին Լոնտոն չէիր երբ 10 օրով մը հանդիպեցայ դարձեալ:

Մարտ-Ապրիլ ամիսներուն Արեւելք էի նաեւ ես: Պարսկաստանի կարճատեւ այցելութեանս խճողուած յայտագրին մէջ քանի մը ժամնոց ճեղք մը բացի եւ եղայ Օֆիկէնց [Մարթին]:





Միասին առի նաեւ Ռուբիկը՝ [Յովհաննիստեան] որ պանդոկ իմ մօտ էր երբ Վանուշը [Գեորգեան]⁴⁰¹ եկաւ զիս տանելու: Աւելի ուշ հանդիպեցաւ նաեւ Կորիւնը [Յամազասպ Մարթին]: Յաճելի իրիկուն մըն էր: Յիշեցիք քեզ մէկէ աւելի անգամներ: Կորիւնը մասնաւորապէս, դժգոհ էր «Լոնտոն»էն: Առաջին թիւը տեսած էի Պէյրութ եղած միջոցիս: Չէր դիմացած գաւաթ մը սուրճին անգամ: Փարիզի մեր մտաւորականները այդպէս կ'ընէին ժամանակին.- ժամանակին կ'ըսեմ՝ որովհետեւ խեղճերէն մարդ չմնաց գրեթէ: Չիրար հրապարակաւ կարենալ խայտառակելու համար թերթ կը հրատարակէին, եւ քանի մը թիւի մէջ իրենց ըսելիքը ըսելէ պարպուելէ ետք կը փակէին զայն, մանաւանդ որ ձեռնարկը դրամ կ'ենթադրէր: Դուն աւելի բախտաւոր ես այս պարագային, գոնէ նիւթական մտահոգութիւն չունիս:

«Լոնտոն»իդ մինչեւ հիմա լոյս տեսած առաջին երկու թիւերը, մեղմ ասած, անբովանդակ են: Երանի թէ կարենայիր տանելիք պայքարդ հասարակ վեճերու, անհատական քինախնդրութեամբ սնած մթնոլորտներէ վեր պահել: Աշխարհի ամենէն քաղաքակրթուած մայրաքաղաքներէն մէկուն մէջ ապրելով, ինձմէ լաւ պետք է գիտցած ըլլաս թէ տարակարծութիւններու պարագային՝ իրաւունքը բարձրաձայն խօսողին կամ հայհոյողին կողմը չըլլար անպայման: Կը հասկնամ անշուշտ որ պայքարին կեդրոնը եղողներուդ, ամէն օր անով ապրողներուդ համար մեծ կարեւորութիւն կը ստանան նոյնիսկ մանրութիւնները: Զիջ մը հեռուէն սակայն, աւելի ընդարձակ համայնապատկերի մը մէջ, կը թափին ըսի-ըսաները, բամբասանքները, զրպարտութիւնները, եւ կը մնան հարցերը միայն, այն բոլորը՝ որոնք իսկապէս կապ ունին գաղութիդ բարեկեցութեան, ապագային, ազգային դիմագիծին անաղարտ պահպանման, եւ վերջապէս խաղաղութեան ու միասնականութեան հետ: Եւ կարելորն ալ ասոնք են: Թերթդ պետք է ունենայ առաջնորդողի հանգամանք եւ իր ընթերցողներուն հետ խօսի ա'յդ դիրքերէն: Ուղղութիւն տայ, կարծիք կազմէ, եւ ազգային զանազան խնդիրներու շուրջ միտքերուն մէջ ստեղծուած շփոթը փարատէ տրուած լուսաբանութիւններով՝ եւ ո'չ թէ թատերաբեմ դառնայ անձնական վեճերու: Չեմ գիտեր, շա՞տ անկեղծ կ'ըլլամ ԿՈՐ: Կը յիշես հարկաւ թէ տարիներ առաջ «Արեգակ»ին մէջ «Յաւատամք ի





մի Հայութիւն» յօդուածը գրողը եւ եմ եղած: Սխալ չես հասկնար ուրեմն գիս, ըսել ուզածներս:

Անկախ վերի խորհրդածութիւններէն, ինչ լա՛ւ պիտի ըլլար եթէ կարենայիր առաջին իսկ առիթով փոխել տալ թերթին ծաւալը, տառատեսակներն ու էջադրումը: Մէկ «Սփիւռք» չի՞ բաւեր Սփիւռքին: «Արեգակ»ը շատ աւելի ինքնատիպ էր այս կողմէ՝ հակառակ... տպագրական սխալներուն: Բանաստեղծ ազգականդ ա՛յն օրերուն հասնելու էր որ լուսահոգի Բիւզանդը [Թօփալեան] իր «դարդ»երը բոլոր *թարթ*երու վերածեր:

Ըսի՞ թէ շրջապտոյտիս երկու շաբաթ մըն ալ Հայաստան հանդիպեցայ: Լսեցիր հարկաւ որ Ստեփան Ալաճաճեանը կոկորդի 2-3 ծանր գործողութիւններէ վերջ կրցաւ ի վերջոյ փրկել կեանքը - մաղթենք երկար շրջանի մը համար - վրայ տալով ձայնը սակայն: Վերջերս Փարիզ էր ամիս մը: Վերադարձած պիտի ըլլար քանի մը օր առաջ: Եկած էր մասնագետներ տեսնելու:

Ինչպէ՞ս են տնեցիները: Բարեւներ Վիվիէնին եւ Ալեքսիներուն: Պաշիկներ ձագուկներուն:

Սիրով՝
Վահրամ

ՆԱՄԱԿ 84

Լիզպոն, 16 Սեպտեմբեր, 1974

Սիրելի Ասատուր,

Շնորհակալ կ'ըլլամ եթէ ներփակ պահարանը այդտեղէն *փոստ* ընես **ապահովագրեալ**:

Վաղը առաւօտ կանուխ Պէյրութ կը մեկնիմ՝ անկէ, Շաբաթ օր, Պրն. [Ռոպեր] Կիւլպէնկեանին հետ շաբթուան մը պաշտօնական այցելութիւններով Հայաստան անցնելու համար: Ամիջապէս ետք կ'առնեմ տարեկան արձակուրդս՝ որուն առաջին շաբաթը, եթէ կարելի ըլլայ, կ'ուզեմ անցընել Հայաստան, իսկ մնացեալը՝ Պէյրութ:

Ի՞նչ լուր տնեցիներէն: Սկսա՞ն կամաց-կամաց հաշտուիլ իրենց կրած ծանր կորուստին հետ: Ինծի համար գէշ անակնկալ մըն էր: Դժուար եղաւ հաւատալը: Առ նուազն տասը տա-



րի մը եւս տուած էի իրեն. այնքան առողջ կ'երեւար միշտ: Բախտաւոր էր գոնէ որ սիրելիներով շրջապատուած էր միշտ եւ այդպէս ալ փակեց աչքերը, առանց չարչարանքի: Մեր ծնողները պիտի ըսէին.- «Արդար մարդ է եղեր»:

Ներփակ քեզ հետաքրքրող էջը Էգրաս Յասրաթեանի վերջին նամակէն է՝ որ ստացայ քանի մը օր առաջ: Քանի մը տող գրէ իրեն, գոհ կը մնայ:

Կարօտով՝
Վահրամ

[3.Գ.] Ձերմ բարեւներ Վիվիէնին եւ պաչիկներ ձագուկներուն:

«Ինչեւէ, խորապէս զգացուած եմ Ձեր հոգատարութեան համար: Մի քանի տարի առաջ ստացած Դեվիդ Լէնկի Armeniaն իմ գրադարանի զարդերիցն է ու ինձ այցելող շատ հայրենակիցների հիացքն է առաջացնում:

Ի՞նչ տեղեկութիւններ կան Ասատուրի մասին: Նրան վերջին անգամ հանդիպեցի Լոնտոնում երեք տարի առաջ, առոյգ ու կայտառ էր: Այս տարի աշնան Յնդկաստան եմ գալու՝ Միջագագային Ֆիզիոլոգիական հերթական կոնգրեսին մասնակցելու համար (սիմպոզիումներից մէկի կազմակերպիչն ու ղեկավարն եմ): Պիտի 10 օր ապրեմ այն երկրում, ուր Ասատուրն աշխատել է մի շարք տարիներ:

Ուրախ կը լինեմ, եթէ պատեհ կամ անպատեհ առիթներով նորէն Ձեզ հանդիպելու երջանկութիւնն ունենամ եւ զրուցել կարողանամ երկուսիս էլ յուզող հարցերի մասին:

Յարգանքերով՝ Եգրաս Յասրաթեան»:

ՆԱՄԱԿ 85

[Լիզպոն], 5 Դեկտեմբեր, 1974

Սիրելի՛ Ասատուր,

Չեմ գիտեր թէ «Յայրենիք»ի 5 Յոկտեմբերի թիւին մէջ երեւցած ներփակ «Ակնարկ»ը հանդիպեցա՞ւ աչքիդ: Միամիտ ընթերցողը պահ մը պիտի տարուի մտածել թէ ողջմիտ հայու մը





մտահոգութիւններն է որ կ'արտայայտուին այնտեղ, Ամենայն Յայոց Յայրապետին [Վազգէն Ա. Պալճեան] հեղինակութիւնն է որ կը պաշտպանուի: Շուտով յայտնի կ'ըլլայ սակայն թէ պարոնին նպատակը ո՛չ թէ խաղող ուտել է, այլ այդ պատրուակով այգեպանին, Վազգէն Կաթողիկոսին վրայ յարձակիլ: Յոյակապ օրինակ մը՝ ամէն կացութիւն անպայման իրենց շահերուն ծառայեցնելու միտող մտայնութեան:

Լսեցիր հարկաւ որ [Անտոն] Քոչինեանին⁴⁰² տեղ նոր մէկը նշանակուած է որպէս առաջին քարտուղար: Յայտնի չէ տակաւին թէ ինչ նշանակութիւն ունի կամ հետեւանք կրնայ ունենալ կատարուած փոփոխութիւնը՝ որ, հաւանաբար, ուղղակիօրէն կապ ունի Եղեռնի 60ամեակին հետ: Հոկտեմբերին երբ Յայաստան էի ըսին թէ պաշտօնապէս պիտի տօնեն 60ամեակը: Կասկածելի է սակայն որ Մոսկուան տայ այն ազատութիւնը որ մերոնք կ'ուզեն ունենալ այդ առթիւ: Թիրքքմէն եղբայրական հանրապետութիւնները յաճախ մեղադրած են Մոսկուան որ շատ «երես կու տայ» Յայաստանին: Յետոյ, կայ անշուշտ Թուրքիան «չվշտացնելու» պարագան:

Ներսէս Սրբազանին [Պոզապալեան] հետ քեզ բաւական բամբաստեցիւք հայրենի հողին վրայ: Վեհափառի գահակալութեան տարեդարձի ճաշկերոյթին, Լոնտոնի «պատուիրակութենէն» Փափագեանը այնպիսի զգայացունց ճառ մը խօսեցաւ՝ որ Վեհարանը ամբողջ սասանեցաւ... ի հիմանէ: Լսելիք բան էր: Եւ նաեւ տեսնելիք՝ որովհետեւ խօսեցաւ ճաշասրահին մէկ ծայրէն միւսը երթելեկելով եւ երկու թելերը լայնօրէն ասդին-անդին փարտելէն:

Կրնա՞մ քեզմէ խնդրել որ բարի ըլլաս, մեր աւանդութեան հետքերով, ինձի գրպանի պզտիկ *տայրրի* մը ղրկել նորէն: Հետեւեալ երկու տեսակներէն որեւէ մէկը նախընտրելի պիտի ըլլայ.

COLLINS - PC 363 առանց մատիտի

Letts Diary - 31A

Եթէ անկարելի ըլլայ գտնել ասոնք՝ կարելի է նկատի ունենալ յարմար ուրիշ մը, պայմանաւ որ.

ա- Ներփակ սմոյշներու չափերէն շատ աւելի մեծ չըլլայ:

բ- Վերջաւորութեան գոնէ 10-12 պարապ էջ մը ունենայ հեռաձայնի թիւերուս համար: Ամենէն կարելոր նկատումն է ասի-





կա: Անցեալին Յերըտգէն առած եմ երկուքն ալ:

Չօռի մի դներ ինքզինքդ. եթէ ժամանակ չունենաս՝ մոռցիր պարզապէս: Մեղք որ այս տարի չկրցայ անձամբ գալ: Գիտե՞ս թէ երկար ատեն է «մարդու պէս» տեսնուած չունինք: Կա՛մ հոն չես երբ գամ, եւ կամ հոն ըլլալու պարագային կը վազես ազգին ետեւէն: Ի՛նչ լաւ էին Էճըրթընի օրերը:

Ինչպե՞ս են տնեցիները.- Վիվիէնը, մայրիկը, պզտիկները: Տուր սիրալիր բարեւներս բոլորին:

Յարմար առիթով մը գրէ քանի մը տող:

Կարօտով՝
Վահրամ

ՆԱՄԱԿ 86

Լիզպոն, 17 Օգոստոս, 1975

Սիրելի Ասատուր,

«Լոնտոն»ի վերջին երեք թիւերը ստացայ առջի օր: Ի դէպ, Յիմնարկութեան դրկուած օրինակներէն ոմա՛նք է միայն որ տեղ կը հասնին՝ ան ալ երկար յապաղումներով՝ որովհետեւ, հակառակ եղած յիշեցումին, թերթերը տակաւին կը ճամբուին Յիմնարկութեան 15 տարի առաջուան հասցեով:

Մեր թղթակցութիւնը կ'երեւի ի վերջոյ պիտի վերածուի տարին անգամ մը, տարեվերջին, *տայըրի* մը ապսպրելու համար իմ կողմէ գրուած նամակին: Ո՞ր ես մարդ Աստուծոյ: Եթէ կարգը բացառաբար կը խանգարեմ հիմա՝ ատիկա տիկին [Ֆլորա] Ալեքսիին մահուան առիթով ցաւակցութիւնս յայտնելու համար է, մանաւանդ Վիվիէնին: Ազատեցաւ խեղճ կինը անցնող քանի մը տարիներու չարչարանքէն: Բարեբախտաբար պարագաները պատճառ եղան որ իրեն խնայուի անհուն վիշտը ամուսնին կորուստին: Պատուական զոյգ մըն էին որոնք մեկնեցան այս աշխարհէն՝ իրենց պարտականութիւնը - որպէս մարդ, որպէս ծնողք եւ որպէս հայ - լիուլի կատարելէ ետք: Թող լուս իջնէ իրենց հոգիներուն:

* * *



Թերթիդ նոր տարազն ու անգլիերենի բաժինը գնահատելի փոփոխություններ են: Երանի թե քիչ մը աւելի պակաս տեղ գրաւեն յայտարարություններն ու ծանուցումները: Անշուշտ որքան լայն տեղ գրաւեն ասոնք՝ այնքան դիրքին կ'ըլլայ թերթը «լեցնելը»: Իսկ ասիկա արհամարհելի նկատում մը պետք չէ ըլլայ քեզի համար: Արդար չէ սակայն որ մարդիկ ամիս մը սպասելէ ետք ստանան 4 էջնոց թիւ մը - Յուլիսինը՝ օրինակ - որուն մէջէն եթէ լուսանկարներն ու ծանուցումները վերցնելու ըլլաս՝ կարդացուելիքը հազիւ էջ մը կը բռնէ: Բովանդակալից էր Սեպտեմբերի թիւը, ներսի երկու էջերով մանաւանդ: Լաւ կ'ըլլայ որ մեր պատմութիւնը, մշակոյթը, եւայլն, ամփոփ եւ պարզ ձեւով մը մաս մաս ներկայացուին ընթերցողներուն: Կարելոր բազմաթիւ դէպքեր ու դէմքեր կան, պատմական դարձած անուններ, որոնք զոց գիտէ մեր ժողովուրդը՝ առանց սակայն ճշգրիտ գաղափար մը ունենալու անոնց մասին: Այսպէս օրինակ, Սարտարապատի ճակատամարտը, Էրեբունի, Անի, Աղթամար, Բիրական, Սայաթ Նովա, Սահմանադրութիւն, եւայլն:

* * *

Վստահաբար լուրերէն կը հետեւիք մեր երկրի կացութեան: Լուրջ է շատ: Անցնող 14 ամիսներուն շատ ջուրեր անցան յեղափոխութեան տակէն... ու վրայէն: Համայնավարներուն հետզհետէ յայտնուող քաղաքականութիւնը - փոքրամասնութիւն ըլլալով հանդերձ երկրին իշխանութիւնը ամէն գնով ձեռք անցընելու եւ առաջ քշելու իրենց ծրագիրները - սարսափեցուց ժողովուրդը: Հակազդեցութիւնը զօրավոր եղաւ ուրեմն՝ երբ մարդիկ մէկ օրէն միւսը «Քուպայացնել» ուզեցին պատմական անցեալ, մշակոյթ, անանդութիւն, ազգային բարքեր, Զրիստոնեութեան հետ դարերու կապ ունեցող եւ Եւրոպայի անմիջականօրէն մաս կազմող Փորթուկալը՝ որ դեռ նոր էր ազատագրուած 50 տարուան բռնատիրութենէ մը: Կողմերուն միջեւ պայքարը կը շարունակուի տակաւին: Ահաւոր քաոսի մը մէջ է երկրին տնտեսական վիճակը: Հարուստներ գանազան ապօրինի միջոցներով երկրէն փախցուցին ու կը շարունակեն փախցնել իրենց ունեցածը՝ հակառակ տիրող խիստ սեղմումներուն: Կեանքը անհամեմատօրէն կը սղի օրէ օր, իսկ շուկան մեռած է:



Քիչ չէ թիւը գործաւորներուն կողմէ գրաւուած, սնանկացած կամ ազգայնականացուած հասատութիւններուն: *Թուրիզմը* - գլխաւոր եկամուտի աղբիւրներէն մէկը երկրին - մեռած է. *հօթելիները* պարապ են ամբողջ: Տակաւին, Գերմանիոյ եւ Ֆրանսայի մէջ ապրող շուրջ մէկ միլիոն փորթուկալցի գործաւորները՝ հիմա ետեւ մնացած իրենց ազգականներուն կը դրկեն հազիւ ապրուստի բաւարար գումար մը՝ իսկ խնայած գումարները կը նախընտրեն պահել երկրէն դուրս: Մաղթենք որ երկրին տէր ու տիրական երիտասարդ սպաները - որոնց ընկերային տարբեր *սիսթեմ*ներուն մասին ունեցած ծանօթութիւնը չափազանց սահմանափակ եւ տեսական է միայն - կարենան ի վերջոյ կացութիւնը ըմբռնել, իրողութիւնը տեսնել իրենց ճիշդ *փըրսփէքթիւ*ով եւ ցանկալի յեղաշրջումը իրականացնել առանց կործանարար ցնցումի: Այլապէս շատ ալ հեռու կրնայ չըլլալ քաղաքացիական պատերազմը՝ որուն չարագուշակ նախատեսութիւնը կ'ընեն յաճախ արեւմտեան լրատու աղբիւրները:

* * *

Հետաքրքիր եմ գիտնալու թէ գործնական ի՞նչ արդիւնք տուաւ Վեհափառին [Վազգէն Ա. Պալճեան] Լոնտոն այցելութիւնը: Կրցա՞ւ գաղութին մէջ ստեղծուած կողմերը բերել իրարու: Պսակը [Սրբազան Թումանեան] մասնակցեցա՞ւ հանդիսութիւններուն կամ որեւէ վերջնական կարգադրութիւն եղա՞ւ իր մասին: Սէնթ Ճոնզ Վուտի եկեղեցին⁴⁰³ կը պահուի՞ տակաւին: Թերթերէն տեսայ թէ Պսակը մինչեւ Ամման գացած էր. մասնաւոր նպատակ մը կա՞ր իր Երուսաղէմ այցելութեան մէջ:

* * *

Շատ հաւանական է որ տարեկան արձակուրդս առնեմ Հոկտեմբերին: Նպատակ ունիմ Պէյրուօ հանդիպելու դարձեալ: Պիտի երթա՞ս [Աւետիք] Իսահակեանի⁴⁰⁴ Յոբելեանին: Ես չեմ որոշած տակաւին, թէեւ ըսած էին թէ հրաւիրուելիքներուն մէջ էի: Նման հանդիսութիւններու առիթով Հայաստան այցելողը դժբախտաբար ստիպուած կ'ըլլայ շաբաթ մը ամբողջ պաշտօնականութեանց զոհելու՝ քոյր հանրապետութիւններէն եկած





պատուիրակներուն ռուսերէնով խօսուած ճառերը մտիկ ընելով:
Ուրախ կ'ըլլամ եթէ գրես: Տուր ջերմ բարեւներս Վիվիէին:
Քոյդ՝
Վահրամ

ՆԱՄԱԿ 87

[Լիզպոն], 22 Հոկտեմբեր, 1975

Սիրելի Ասատուր,

Կ'ենթադրեմ թէ արդէն վերադարձած ես արձակուրդէդ:
Գացի՞ր Արեւելք: Չեմ կարծեր թէ Պէյրուսէն անցնելու չափ խի-
զախ եղած ըլլաս: Լուրերը շատ գէշ են: Կը վախնամ որ նոր
արտագաղթ մը այդ գաղութն ալ պարպէ շուտով:

Ես վաղը առաւօտ Փարիզ կ'անցնիմ եւ Մոսկուայի վրայով
Շաբաթ երեկոյեան կ'ըլլամ Երեւան: Արձակուրդս պիտի տես
մինչեւ Նոյ[եմբեր] 16: Չեմ գիտեր թէ այս ժամանակամիջոցին
որքանը կ'անցընեմ Հայաստան՝ եւ կամ թէ ինչ կ'ընեմ մնաց-
եալով: Պէյրուսը, ուր կ'ուզէի հանդիպիլ անպայման, ինքնաբե-
րաբար կը մնայ դուրս: Անհաւանական չէ որ վերադարձի ճամ-
բուն վրայ, եթէ աւելի հետաքրքրական տեղ մը չգտնեմ, երեք
կամ չորսական օրով անցնիմ Փարիզ եւ Լոնտոն... *շօփիսկի*:
Տեսնենք:

Ներփակ կտրօնը՝ առ ի տեղեկութիւն:

Քոյդ՝
Վահրամ

ՆԱՄԱԿ 88

Լիզպոն, 25 Նոյեմբեր, 1975

Սիրելի՛ Ասատուր,

Չգրեցի Սեպտեմբեր 2ի նամակդ ստանալէ ետք՝ որովհետեւ
կ'ըսէիր թէ Արեւելք պիտի երթայիր շուտով... [Համազասպ]
Մարթինին տարեդարձը տօնելու: Ճամբայ ելլելիք շրջաննե-
րուդ Լիբանանի կռիւները բռնկեցան նորէն: Այդ օրերուն





միտքս էիր յաճախ ու չգիտցայ թե ի վերջոյ գացի՞ր թե չէ:

Հայաստանէն վերադառնալուս տասը օր կ'ըլլայ հազիւ: Գացի քիչ մը հայ տեսնելու, նորոգուելու, գիտնալով հանդերձ թէ այնտեղ ժամանակիս կարելոր մասը ստիպուած պիտի ըլլայի մեռցնել «հանդիսաւոր նիստ»երու մէջ: Պիտի հաւատա՞ս եթէ ըսեմ թէ Երեւանի եւ Լենինականի մէջ տեղի ունեցող երկու «հանդիսաւոր նիստ»երու ընթացքին լսեցինք - անդրադարձա՞ր, «մտիկ ըրինք» չեմ ըսեր - 43 բանախօսութիւն՝ որուն 36ը մեր չհասկցած լեզուներով: Վկայ՝ կողքիս նստած Գերսամը՝ [Ահարոնեան] որ ձանձրոյթը փարատելու փորձով մը խօսողները կը հաշուէր... 18, 19, 20... 24:

Մարդ Աստուծոյ, չըսե՞ս որ Մոսկուա բնակող եղբայր ունիս: Արսէնէն [Սրբազան Պերպերեան] իմացայ, անուղղակի կերպով:

Երեւանէն Մոսկուա նոյն օդանաւին մէջ էր նաեւ Եւրի Խօճամիրեանը:⁴⁰⁵ Մոսկուայի հայկական դեսպանատան մեքենաներէն մէկը եկած էր զինք, *Ֆինանսի մինիստրը* եւ զիս օդակայանէն հիւրանոց տանելու: Խօճամիրեանը, հաղորդական մարդ, ներկայացուց ինքզինք եւ ըսաւ թէ հանդիպած էր ինծի Լոնտոն... Եճըրթըն Կարտընզի՝ հիմա պատմական դարձած ձեր յարկին տակ: Անկէ ետք մինչեւ քաղաք մեծ համակրանքով քեզ բամբասեցինք ուրեմն: Ինչպէս միշտ, առաջին առիթով քեզ հարցուց նաեւ մեր սիրելի եւ պատուական Էգրաս Հասրաթեանը՝ որ Երեւան էր [Աւետիք] Իսահակեանի օրերուն: Մոսկուա՝ ժամանակ չունեցայ դժբախտաբար հանդիպելու իրեն: Երեւանէն մեր գրողները եկած էին Մոսկուայի «հանդիսաւոր նիստ»ին համար եւ ժամանակը ամբողջութեամբ գրեթէ անցուցինք միասին: Շատ *փերուշան* էր սփիւռքահայ *տէլէկացիան*՝ այն իմաստով որ այսպէս կոչուած գրողները երեք հոգի էին միայն.- Վահէ Հայկը,⁴⁰⁶ [Չարեհ] Որբունիս⁴⁰⁷ եւ... իբրեւ թէ ես: Միւսները.- Գերսամ, Ժիրայր Նայիրի,⁴⁰⁸ Միհրան Մավեան,⁴⁰⁹ Արամ Արաքս⁴¹⁰ որոնք ոչ մէկ աղերս ունէին գրականութեան հետ. եկած էին, այսպէս կոչուած՝ հասարակական գործիչի հանգամանքով: [Անդրանիկ] Ճառուկեանն ու Աղդարեան եղբայրները [Գառնիկ եւ Ալֆոնս] չէին կրցած գալ Լիբանանի քաղաքական կացութեան պատճառով: Ամէն մարդ հնչակեաններուն քաջութիւնը չունի վերջին հաշուով:





Հայաստան հրատարակուելիք նոր գիրքս արեւելահայ ուղղագրութեաք մեքենագրուած, պատրաստ է արդէն եւ եղած յայտարարութեան համաձայն շուտով տպարան կ'իջնէ՝ Մարտ-Ապրիլին հրապարակ գալու համար: *Ամէն Տեղ Հայ Կայ* խորագիրը որ առաջարկեցի՝ *վեթօ* եղաւ: Տեսնեք:

Քրիսմըսի օրերուն հաւանաբար քանի մը օրով հանդիպիմ Լոնտոն - *շօփիսկի* - եւ Փարիզ: Եւ որպէսզի ուշ չըլլայ մինչ այդ - եղածը այլապէս ալ տարտամ ծրագիր մը, մտադրութիւն մըն է միայն - պիտի խնդրեմ որ բարի ըլլաս, աւանդութիւնը յարգելով *տայըրի* մը ապահովել ինծի համար նորէն. նոյնը՝ Letts Diary 1976-31A:

Բարեւներ Վիվիէնին:

Կարօտով՝
Վահրամ

ՆԱՄԱԿ 89

[Լիզպոն], 13 Դեկտեմբեր, 1975

Սիրելի Ասատուր,

Ուտքի վրայ երկու տող՝ խնդրելու համար որ Պըրնըրզ Հօթելէն, ուր մնացի անցալ ծնունդին, բարի ըլլաս մէկ հոգիսնոց սենեակ մը ապահովել դարձեալ՝ Ուրբաթ, Դեկտեմբեր 19ի երեկոյէն սկսեալ: Գործդ դիւրացնելու համար տամ նաեւ մարդոց հեռախօսի թիւը.- 636-1629: Լոնտոն կը հասնիմ Ուրբաթ երեկոյեան դէմ, ժամը 5-5:30ի ատենները: *Թէրմիսալէն* կը կապուիմ *հօթելին* հետ եւ կը ստուգեմ կացութիւնը՝ լեցուն եղած ըլլալու պարագային տեղւոյն վրայ նոր կարգադրութիւն մը ընելու համար:

Հասնելէս անմիջապէս վերջ *քօլստեռի* ծրագիր մը կայ պէրուրթցի բարեկամներու հետ: *Ճան չըքմատան խույ չըքմագ*: Յամենայնդէպս ձայն մը կու տամ մինչ այդ եւ կամ յաջորդ առաւօտ գործատեղիդ՝ Ենթադրելով անշուշտ հեռախօսի համարդ չէ փոխուած դարձեալ:

Կարօտով՝
Վահրամ





ՆԱՄԱԿ 90

Լիզպոն, 21 Օգոստոս, 1977

Սիրելի Ասատուր,

Մե՛նք ամուսնացանք՝ դո՛ւն լռեցիր: Ո՞ւր ես, մարդ Աստուծոյ: Կը կարծէի թէ հիմա որ ազատ ժամանակ ունէիր՝ պիտի գրէիր աւելի յաճախ: Բայց այսպէս կ'ըլլայ կ'երեւի, պարապ - կը տեսնե՞ս, «ազատ» չեմ ըսեր - մարդիկն են որ ժամանակ չեն գտներ բան մը ընելու: Կ'ենթադրեմ թէ կարգի դրուած գրասենեակիդ մէջ նստած *փայփոդ* կը վայելես՝ պատահականօրէն ներս ինկած *անդարիյա* այցելուներու հետ: Ատեն մը առաջ, ուրկե՞ չեմ յիշեր, ականջիս ինկաւ թէ առեւտրական գործի մըն էիր ձեռնարկած: Ճի՞շդ է: Այ երանելի, առեւտուրը ո՛ւր, դո՛ւն ուր: Ի դէպ, ինչպէ՞ս վերջ գտաւ ձեր դատը, կրցա՞ք ի վերջոյ շօշափելի գումար մը ձեռք ձգել:

Լսեցիր հարկաւ որ անցեալ Նոյեմբերի սկիզբը գլուխնիս դրինք Մաշտոցին տակ ու խառնուեցանք ձեր շարքերուն: Իվօնին ծնողքէն եւ կնքահօրմէն գատ - պետք է «քաւորէն» ըստի - ոչ ոք ներկայ էր խորհուրդին: Ես կը կարգուիմ ուրիշի՞ն ինչ, մտածեցի: Անկէ ետք երկու տարբեր առիթներով եղանք Փարիզ դարձեալ, երկրորդին՝ Իվօնին մայրը հողին յանձնելու: Կը մտածենք յառաջիկայ *Քրիսմըս*ին 8-10 օրով հանդիպիլ Լոնտոն: Գոնէ տարին անգամ մը յագեցուելիք կարօտ մը ասիկա: Գիտեմ թէ յարմարագոյն ժամանակը չէ *Քրիսմըս*ը, բայց ուրիշ ատեն դժուար կ'ըլլայ դասաւորել այստեղ:

Գարեգինն [Սրբազան Սարգիսեան] ալ տեսա՞ր վերջին Լոնտոն այցելութեան: Բաւական աղմուկ հանեցին դաշնակցական թերթերը այդ առթիւ: Ինք անձնապէս սքանչելի *փապլիք րիլէյշըն*զ պահող տղայ է: Ինծի այնպէս կու գայ թէ Վազգէն Կաթողիկոսը [Պալճեան] քիչ մը աճապարեց այսքան բարիկամեցողութեամբ ընդառաջելով ընտրութեան եւ օծման համար եղած հրաւերին: Մաղթենք որ զղջալու պատճառներ չունենայ: Գարեգինին վերջին քանի մը քարոզներուն ոգին շատ լաւատեսութիւն չի ներշնչեր դժբախտաբար: Օրինակ, **Էջմիածնի տօն**ին առիթով խօսած մէկ քարոզին մէջ կ'ընէ պատմականը Էջմիածնին, Լուսաւորիչ, Ուռնակի տեսիլք եւայլն - որոնց հետ խնդիր չունի դաշնակցութիւնը - բայց երբ կը հասնի մեր օրե-





րուն՝ ըսելիքը արեւշատութեան մաղթանք մըն է միայն ուղղուած... երկու Կաթողիկոսներուն: Էջմիածինը այսօր որպէս հաստատութիւն գոյութիւն ունեցած չըլլայ կարծես:

Անցեալ Մայիսին գործով հանդիպեցայ նաեւ Յայաստան: Երկուքուկէս տարի առաջ տպարան իջած գիրքս դեռ պիտի տպուի: Ըսած էի քեզի կարծեմ թէ նոր ժողովածու մը կը տպեն: Անկէ անկախ սակայն, ես Երուսաղէմի մէջ տպել կու տամ *Անկապ Օրագիր*ին յաջորդ հատորը: Տարի մըն է կը քաշքշեն ասոնք ալ: Այնքան ծոյլ են դարձած ու անտարբեր: Խորագիրը դրած եմ *Ամէն Տեղ Յայ Կայ*: Ժողովածուին համար Յայաստանը, «սկզբունքային պատճառներով» մերժեց այս խորագիրը՝ նախընտրութիւնը տալով *Ծիսացող Յոգիներ* տափակութեան:

Ի՞նչ լուր Վիվիէնէն, պզտիկներէն: Իվօնը յաճախ կը հարցնէ ձեր մասին: Իմ պատասխանս նոյնը կ'ըլլայ միշտ.- Ասատուրը *հերկէլէի*ն մէկն է, անկէ նամակ մի սպասեր: Լուրջ ի՞նչ գործ ըրած ունիս՝ [Լորիս] ճգնաւորեանը⁴¹¹ *ինթըրվիու* ընելէ եւ.. գաղութը խառնելէ զատ: Գրէ՛:

Հոկտ[եմբեր]ին ամիս մը Պէյրութ կ'երթանք արձակուրդով: Երթանք քիչ մը նորոգուինք: Ա'լ դժուար կը հանդուրժեմ ընկերութենէ, բարեկամներէ հեռու այս կեանքը: 14 տարի կ'ըլլայ ճիշդ: Արդէն քանի տարուան կեանք մնաց որ:

Ձերմ ողջոյններ Իվօնին եւ իմ կողմէս Վիվիէնին, քեզի եւ ձագուկներուն:

Սիրով՝
Վահրամ Մ.

ՆԱՄԱԿ 91

10 Նոյեմբեր, 1977 - Լիզպոն

Սիրելի Ասատուր,

Երկար լռութենէդ մտահոգուած անցեալ Օգոստոսին գրեցի քեզի: Ձայնդ դարձեալ չելաւ սակայն: Այդքա՞ն զբաղած ես, երանելի: Սիլվա Կապուտիկեանը շատոնց վերադարձած պետք է ըլլայ: Հոկտեմբերին Պէյրութ էինք: [Սիմոն] Սիմոնեանը ըսաւ թէ կրնայիր որեւէ ատեն յայտնուիլ: Ինչ լաւ կ'ըլլար:

Տարեվերջին մի քանի օրով Լոնտոն եւ Փարիզ հանդիպելու





մեր ծրագիրը կը պահենք տակաւին: Բայց որովհետեւ այն ատեն ուշ կ'ըլլայ, պիտի խնդրեմ նորէն որ ինծի համար Letts 31A կամ 310AP տայրրի մը բարի ըլլաս ապահովել չսպառած: Զերոտզը կ'ունենայ: Քովո վար դիր, կը վերցնենք երբ գանք:

Մինչ այդ սակայն գրէ քանի մը տող եւ տուր մեր երկուքին սիրալիր ողջոյնները տնեցիներուն:

Քոյդ՝
Վահրամ Մ.

ՆԱՄԱԿ 92

Լիզպոն, 16 Յուլիս, 1978

Սիրելի՛ Ասատուր,

«Արմինյըն Ռիփորթըր»ի⁴¹² վերջին թիւերէն մեկուն մէջ լուսանկարդ կը փայլեր հայ ժողովուրդի ներկային ու ապագային մասին յայտնած կարծիքներուդ կողքին: Թղթակից տիկինը քեզ ներկայացուցած էր որպէս մեծ առեւտրական: Պատրաստուէ ուրեմն նիւթական օժանդակութեան համար դիմումներու նոր հեղեղի մը:

Կարօտցանք քեզ, մեր հանդիպումները: Զգրելդ մանաւանդ պատճառ կ'ըլլայ, որ շեշտուի այդ զգացումը: Անցեալ տարի Լոնտոն չէիր երբ եկանք: Ինչպէս կ'երելի, առեւտրական գործառնութիւններդ բաւական երկար պահեցին քեզ Արեւելք: Չեմ գիտեր թէ այս տարեվերջին պիտի կրնա՞նք յարգել աւանդութիւնը եւ քանի մը օրով հանդիպիլ դարձեալ: Գիտեմ միտքէդ ինչ կ'անցնի նորէն: Բայց ոչ, շապիկներու ճաշա՛կս ալ որոշ փոփոխութիւններու ենթարկուեցաւ անցնող քանի մը տարիներուն:

Կրնամ քեզի յիշած ըլլալ որ ասկէ շուրջ երկու տարի առաջ նոր հատորի մը *թէքստը* դրկած էի Երուսաղէմ տպագրութեան: Ինծի անձանօթ պատճառներով Արան [Գալայճեան] բաւական քաշքշեց գործը այս անգամ: Ասկէ երկու ամիս առաջ վերջապէս լոյս տեսած է... տպարանին մէջ: Մէկ-երկու օրինակ ձեռքս անցաւ Կիպրոս եղած ատենս Յունիսին: Կ'ուզեմ որ գիրքը կարելի չափով շուտ հասնի ընթերցողին: Այդ ուղղութեամբ վերջերս գրեցի Արային կարգ մը առաքումներու համար: Պիտի





դրկէ նաեւ 20 օրինակ քու անունով եւ հասցէին: Չսարսափիս. Լոնտոնի մէջ նուէր բաժնուելիք օրինակները պիտի ըլլան ասոնք: Վաճառուելիքները պիտի երթան ուղղակի Այգոյին [Մակարեան]⁴¹³: Յիսուն օրինակ ուզեց առ այժմ, թէեւ կը կասկածիմ թէ այդքանն ալ պիտի կարենայ տեղաւորել: Զեզի դրկուելիքներէն վերցուր քու օրինակդ եւ մնացեալը դիր մէկ կողմ. աւելի ետք կը գրեմ թէ որոնց պիտի բաժնուին ասոնք:

Ի՞նչ նորութիւններ ունիս... Կաթողիկոսին [Վազգէն Ա. Պալմեան] այցելութենէն գատ: Թերթերէն տեսայ թէ վերջերս ինչպէ՛ս ճաշկերոյթներով շէնցած էք նորէն: Գաղութներու մէջ մեր հասարակական-մշակութային-գեղարուեստական կեանքը կ'երեւի հետզհետէ պիտի սահմանափակուի ճաշկերոյթներով: Գէշ չէ, բան մըն է, գործունեութիւն՝ որ իրարու միս ուտելէն նախընտրելի է աւելի:

Գո՞րծդ ինչպէս կ'ընթանայ: Լա՞ւ ես տնեցիները.- Վիվիէնը, Կարինէն, Արմինէն: Գրէ:

Սիրով քոյդ՝
Վահրամ

ՆԱՄԱԿ 93

Լիզպոն, 4 Օգոստոս, 1978

Սիրելի Ասատուր,

Ասկէ երեք շաբաթ առաջ երբ Երուսաղէմ Արային [Գալայճեան] հետ խօսեցայ հեռաձայնով, ըսաւ թէ գիրքերը արդէն սկսած էր մաս մաս յանձնել *փոստին*: Թէեւ կարելի չէ երուսաղէմացիներու խօսքին շատ հաւատք ընծայել, այսուհանդերձ կ'ենթադրեմ թէ յառաջիկայ շաբաթներուն կը ստանաս քեզի դրկուելիք 20 օրինակները:

Ստորեւ կու տամ անունները անոնց՝ որոնց պիտի խնդրեմ որ յարմար առիթով մը մէկական օրինակ նուէր տաս իմ կողմէ: Այս ձեւով մակագրելու խնդիր ալ չըլլար: Մէկ գործ պակաս:

Կը յուսամ «բազմագրադ» վիճակիդ մէջ մեծ տաղտուկ մը պատճառած չեմ ըլլար ասով: Եթէ հեռաձայն մը ընես խնդրոյ առարկայ անձերուն՝ ձեւ մը կը գտնեք հաւանաբար կապուելու:

Մնացեալը ի պահ դիր գրասենեակիդ մէկ անկիւնը... մուկե-





րէ հեռու: Կրնամ պետք ունենալ յաջորդ այցելութեանս: Կը տեսնես յանկարծ մոռցուած հին «ծուխեր» կ'ելլեն մէջտեղ: Իսկ եթէ հետաքրքրուողներ ըլլան՝ գինը երկուքուկէս փառնաւ է:

Լսեցի՞ր Յայր Գեորգին - Կարպիսեան - մահուան մասին: Մարդը խեղդուեր է Անթիլիասի կողմերը լողացած ատեն: Կեանքին մէջ ձախաւեր բան մը կար միշտ տարաբախտ այս տղուն վրայ: Տարբեր չեղաւ նաեւ մահուան պարագային:

Քոյդ՝
Վահրամ Մ.

ՆԱՄԱԿ 94

(Բացիկ)

Լիզպոն, 8 Յոկտ[եմբեր] 1979

Սիրելի Ասատուր,

Սաղլամ գործը սիրող մարդ եմ ես, գիտես: Եւ որպէսզի ամսուն 19ին, Ուրբաթ օր Լոնտոն հասնելէ ետք պանդոկին հետ խնդիր չունենանք, լաւ կ'ըլլայ որ անկէ օր մը կամ երկու օր առաջ հեռաձայն մը ընես դարձեալ՝ վստահ ըլլալու համար որ park-ին նայող մեծկակ - մեծագոյնը ըլլալը պայման չէ - սենեակներէն մէկը վերապահած են: Գիտես, այս մարդիկը, վերջին վայրկեանին կրնան ըսել թէ նման կարգադրութիւն չէ եղած, եւայլն, եւ յանցանքը կը նետեն իրարու վրայ: Իսկ եթէ reception-ի աղջկան հետ խօսած միջոցիդ նախ պահ մը հետը ինկար, ինչպէս սովորութիւնդ է, արդէն պատուերդ լուրջի առած չըլլար: Կը տեսնուի՞նք շուտով:

Քոյդ՝
Վահրամ

ՆԱՄԱԿ 95

[Լիզպոն], 16 Նոյեմբեր, 1980

Սիրելի Ասատուր,

Ի՛նչ լաւ էր ատենօք՝ երբ *կապիտալիստական* «տեն-





տենց»ներէ չ'այցուած տակաւին, շարքային համեստ քաղաքացի էիր մեզի պէս, Սովուզ Օլուզի հոտը դեռ վրադ: Տարին մէկ-երկու անգամ կը գրէինք կամ կու գայինք իրարու լոնտոնեան *փապի* մը անկիւնը՝ խօսելու մեր հասարակաց ցաւերէն, երիտասարդական արկածախնդրութիւններէն, գաղութիդ մտահոգութիւններէն ու... գրականութենէն: Ժամանակին երախէն նման պահեր խլելը հիմա պերճանք է այլեւս: Մե՛ղք:

Հոկտ[եմբեր]ի սկիզբը 2-3 շաբաթով Փարիզ եւ Վենետիկ գացինք: Տարեգլխուն կը ծրագրենք երթալ մինչեւ Պէյրութ՝ եթէ քաղաքական կացութիւնը թոյլատու ըլլայ: Հաշուի մէջ այս տարի Լոնտոն չկայ ուրեմն: Ասիկա կը նշանակէ թէ ստիպուած պիտի նորէն մտնենք *միւսեթիդ* տակ՝ որմէ կարելի եղած էր խուսափիլ անցնող երկու տարիներուն:

Հասկցար հարկաւ թէ բանը ինչու՞մն է: Գիտեմ թէ շատ զբաղուած մարդ ես դուն.- գոնէ այդպէս կը կարծես: Այդ պարագային կրնաս ինդրանքս վստահիլ Վիվիէնին բարեացակամութեան: Յաջորդ անգամ որ Հերըտզ հանդիպի տունին համար *քարրի փէյսթ* եւ փրինձ գնելու, թող բարի ըլլայ կողքի սենեակէն ալ ինձի համար վերցնել հետեւեալ յուշատետրէն հատ մը.

LETTS DIARY 1981 - 31A

Վերջինը՝ մասնաւոր տեսակը ճշդող թիւն է:

Իվօնը քովէս կը յուշէ որ չմոռնամ ի՛ր ալ բոլորիդ ուղղուած ջերմագին ողջոյնները միացնել իմինիս:

Համբոյրներով՝
Վահրամ

[3.4.] Երբ տեսաւ որ երկու «կանաչ» կը սահեցնեն նամակիս պահարանին մէջ՝ Իվօնը այնպէ՛ս մը յանդիմանեց զիս - «Չես ամչնար», եւայլն - որ կամացուկ մը վերցուցի զանոնք: Ինչ արած, *ճան չըքմատան խույ չըքմագ*:



ՆԱՄԱԿ 96

[Լիզպոն], 23 Նոյեմբեր, 1981

Սիրելի Ասատուր,

Դժբախտաբար *տայըրին* մեր գործածած առարկաներուն մեջ միակն է թերեւս որ չես կրնար, յառաջիկայ տարիներուն կարիքներդ ալ նկատի առնելով, մեկ անգամէն մեծաքանակ գնել եւ պրծիլ: Իսկ եթէ այս *անդարիյան* քեզի կը վստահիմ միշտ՝ նախ անոր համար է որ նուազագոյն կասկածը չունիմ բարեացակամութեանդ վրայ, եւ ապա, որովհետեւ Յերըտզը ճիշդ դիմացդ է եւ զայն կրնաս ձեռք բերել առանց շատ ժամանակ կորսնցնելու: Տեսա՞կը - *Letts Diary 310AP* կամ **31A**: Եթէ եղաւ՝ նախընտրելի է առաջինը որ կաշեկազմ է: Այլապէս երկրորդն ալ նոյնքան կը ծառայէ նպատակին:

Ստադրած էինք Դեկտ[եմբեր]ի սկիզբը հանդիպիլ շաբաթ մը եւ քեզ ազատել այս տաղտուկէն: Ծրագիրը անակնկալօրէն փոխուեցաւ սակայն երբ Իվօնը ստիպուած եղաւ անմիջապէս Պէյրութ մեկնիլ որովհետեւ հայրը վիրաբուժական գործողութեան մը պիտի ենթարկուէր: Կ'իմանամ թէ ամէն բան անցած է յաջող: Ծնունդի արձակուրդս քիչ մը առաջ բերելով, քանի մը օրէն դեպի Պէյրութ ճամբայ կ'ելլեմ նաեւ ես: Յունուար 2ին վերադարձած կ'ըլլանք: *Տայըրին* դրկելու համար մեր վերադարձին սպասելու պէտք չունիս: Մեր բացակայութեան *քոնսիտրժը* տեր կ'ըլլայ *փոստին*: Ունի ե՛ւ սնտուկին ե՛ւ բնակարանի բանալիները:

Յաջող անցա՞ւ Նայճիրիայի ճամբորդութիւնդ: Վիվիէնին շնորհակալութիւն յայտնէ իմ կողմէ Վրեժին [Ներսէսեան] ձգած *մէսաժին* համար: Ուզած *ֆոթոքրփիս* ազնուօրէն դրկած էր իսկոյն:

Ինչպէ՞ս անցաւ Լիլոյեանին⁴⁴ Լոնտոն այցելութիւնը: Կրցա՞ւ կապուիլ, ձեռք անցընել ձեզ:

Սիրալիր ողջոյններ Վիվիէնին եւ աղջիկներուն:

Քոյդ՝
Վահրամ

ՆԱՄԱԿ 97

Ծանօթ,

Արխիվներուս մէջ գտայ նամակի մը պատճենը, գոր Վահրամը գրած է Սիմոն Սիմոնեանին, 10 Զոկտեմբեր, 1982ին, մամուլին մէջ կարդալէ ետք անոր «սրտիդ կրած հարուածին մասին»: Մավեանը նամակը գրած է իր մահուընէն ճիշդ երեք ամիս առաջ...:

Կ'ուզեմ՝ վստահ եմ պիտի ուզէին նաեւ լուսահոգի երկու սրտակից բարեկաներս, Սիմոնեանն ու Մավեանը որ այս նամակը իր անկիւնը ունենար այս գիրքին մէջ:

Ասատուր Կիւզելեան

[Լիզպոն] 10 Զոկտեմբեր, 1982

Սիրելի Սիմոն,

Սիրտիդ կրած հարուածին մասին կարդացած էի քանի մը շաբաթ առաջ Մայր Կուսակցութեան Զալիֆորնիայի «Մասիս»-ին⁴¹⁵ մէջ: Անկէ ետք այստեղէն եւ Փարիզէն մէկէ անլի անգամներ փորձեցի կապուիլ հեռաձայնով: Չեղաւ. չբռնեց: Իսկ այս օրերուն քեզի գիրով հասնելու միջոցը չկար: Եւ հիմա 11 Օգոստոսի գիրդ՝ որ կու գայ երկար թափառումներէ ետք Երուսաղիմ [Պարսումեան] երկտողով:

Ուրեմն այսպէս, հերթը արդէն հասաւ ձեր, մե'ր սերունդին: Իմ պարագային վայրկեաններու հարց էր եղածը: Կէս գիշեր էր եւ օտար քաղաքի մը մէջ առանձին էի տունը: Իվօնը մէկ-երկու օր առաջ մեկնած էր Փարիզ եւ ես յաջորդ օրը պիտի միանայի իրեն: Փոխարէն, իր ահագանգով - ձայնը ականջիս մէջ է դեռ - գիշերային խաղաղութիւնը ճեղքող *ամպիւլանս* մը զիս հիւանդանոց հասցուց... ծայրը ծայրին: Զիմա քանի մը ամիս է գործի եմ արդէն: Անցնող ամիսներուն յաջողեցայ վրայէս թօթափել 10-11 քիլօ: Սանձած եմ նաեւ, [Լեւոն] Զախվերդեանին բացատրութեամբ, «ուտելու ռընեսանսեան ախորժակ»ս եւ կը փորձեմ օրական գոնէ քանի մը քիլոմէթր քալել: Տագնապի գիշերուան ցնցումը, ցնցումին յիշատակը, բան մը խախտեցին ներքին խաղաղութենէս: Որքան պիտի տեսէ ասիկա չեմ գիտեր: Օշականը - պապան անշուշտ - այդ հալածանքին վախէն «այցուած» մնաց մինչեւ իր վերջնական պարտութիւնը:

Զախվերդեանին մասին ըրած նկատողութիւններդ կը բաժնեմ հարիւր տոկոսով: Զիչ անգամ այդքան սիրտ, անկեղծու-



թիւն, սեր, բարութիւն կարելի կ'ըլլայ գտնել մարդոց մէջ: Եկաւ Պէյրութ, տեսաւ, պահ մը զգաց արտասահմանեան մեր կեանքին բաբախումը անձամբ, յուզուեցաւ, ուրախացաւ, հիացաւ, խանդավառուեցաւ ու մեկնեցաւ «լիցքաւորուած» հայկականութեան նոր շունչով մը որ մինչ այդ անծանօթ էր իրեն: Հաստատութիւնները որ այցելեց, երեւոյթները որոնց ականատես եղաւ, մարդիկը որոնց ձեռքը սեղմեց, բոլորն ալ «չտեսնուած, հրաշք բան»եր էին իրեն համար.- հոյակապ, սքանչելի: Բարեկամաբար թելադրեցի իրեն որ չփորձուի «տպաւորութիւններ» հրատարակել վերադարձին եւ դատումներ ընել գաղութին ու մարդոց մասին՝ որոնց շա՛տ շատ կրցաւ չափով մը ծանօթանալ միայն, առանց սակայն ճանչնալու: Տխուր օրինակները շատ են հայրենական գրողներու՝ որոնք 10-15 օրուան այցելութենէ մը եւ մէկ-երկու հանդիպումներէ ետք թուղթին, «պատմութեան» կը յանձնեն իրենց ասկէ անկէ լսածը որպէս վաւերագրութիւն, անձնական փորձառութիւն, ապրում կամ տպաւորութիւն:

Երեւան վերադարձին առաջարկներու, պնդումներու ընդառաջելով Լեւոնը քանի մը տեղ - Գրողներու Միութիւն, Սփիւռքահայ Կոմիտէ, Ակադեմիա - խօսած է Լիբանանէն կրած տպաւորութիւններէն: Ասոնք սակայն լոյս չտեսան որքան որ գիտեմ: Ամիսներ առաջ, տագնապիս մասին լսելէ ետք, Երեւանէն Լիզպոն հեռաձայնեց առողջութիւնս հարցնելու: Այդ առթիւ խոստացաւ իր ելոյթին գրաւոր մէկ օրինակը դրկել: Չդրկե՞ց թէ դրկածը տեղ չհասաւ, չեմ գիտեր:

Նշանին [Խոշաֆեան]⁴¹⁶ անակնկալ կորուստը մեծ ցաւ պատճառեց նաեւ մեզի: Մեզի՝ կ'ըսեմ, որովհետեւ Իվօսին ալ բարեկամ էր.- միասին Պիքֆայայի Յուշարձանի Յանձնախումբին մէջ եղած են ատենօք: Մեղք եղաւ: Ուրիշին միայն բարի՞ք կամեցող, անկեղծ, ամբասիր նկարագրով հա՛յ այս տղուն պէտք է խնայուէր վերջին 7-8 տարիներու հոգեկան բեկումը, կրած դառնութիւնը ճակատագրին դէմ:

Շուտով տարի մը կ'ըլլայ մեր վերջին Պէյրութ այցելութեան: Պիտի գանք դարձեալ անմիջապէս որ քիչ մը տանելի ըլլան երկրին ապահովութիւնն ու քաղաքական կացութիւնը: Պետք է աւելցնելի... եթէ ողջ մնանք անշուշտ: Այն ատեն պիտի կրնա՞նք հին օրերուն պէս նորէն տպարան հաւաքուիլ առանց վախի, ռումբերու սարսափին, եւ Սուհամետին⁴¹⁷ սուրճ ապսպրել: Հա-





լանաբար: Մեղք սակայն որ երբեմնի այցելուներեն, բարեկամներեն շատեր հոն պիտի չըլլան այլեւս: «Էնդիի կողմ»ն ու Քալիֆորնիան պարպեցին քաղաքը:

Ղայիմ կաց, սիրելի՛դ իմ Սիմոն - արդէն քանի՞ հոգի մնաց որ - եւ ուշադիր եղիր առողջութեանդ: Կեանքի *ռիթմ*ը պետք է յարմարցնենք հիմա մեր նոր կացութեան: Բժիշկ բարեկամ մը վերջերս կը թելադրեր նամակով.- «Ասկէ վերջ պետք է ժուժկալ ըլլաս ամեն բանի մէջ»: Դուն՝ նոյնի՛սկ սասունցիականութեանդ:

Կարօտով՝
Վ. Յ. Մավեան





ԱՍՏՈՒՐ ԿԻՉԵԼԵԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ ՎԱՀՐԱՄ ՄԱՎԵԱՆԻՆ

ՆԱՄԱԿ 1

[Լոնտոն], 31 Դեկտեմբեր, 1964

Սիրելի Վահրամ,

19 Դեկտ[եմբեր] թուակիր նամակովդ հաղորդած տխուր լուրդ շատ ցաւ պատճարեց ինձի, Վիվիէնին եւ Ալեքսեաններուն: Ընդունէ ուրեմն, սիրելի Վահրամ, բոլորիս խորին ցաւակցութիւնները մօրդ անսպասելի մահուան առթիւ: Գիտեմ թէ ինչ կը նշանակէ հարազատ մը կորսնցնել, մանաւանդ երբ կեանքին հրաժեշտ տուած պահուն քովը չես գտնուիր: Չէ՞ որ ես ալ անցեալ տարի հայրս կորսնցուցի նոյն պարագաներու տակ: Միտարողիդ այն գիտակցութեամբ, որ հանգուցեալին հանդէպ որդիական քու պարտականութիւններդ կատարած ես լիովի:

«Արեգակ»ի խմբագրապետութեան հարցին գալով՝ հետեւեալ կարգադրութեան յանգեցանք: Մինչեւ Մարտի վերջը պիտի վարեմ թերթին խմբագրապետութիւնը առանց ամսականի. [Յայկ] Գալուստեան պայմանագիր մը ունի [Գրիշ] Դաւթեանին հետ, ըստ որուն՝ պետք է ամսական վճարէ վերջնոյն մինչեւ յիշեալ թուականը: Այլ հանգամանքներու մէջ չէի համաձայնիր նման առաջարկի մը, բայց այս պարագային, որոշ կարեւոր նկատումներ ի մտի ունենալով՝ հաւանութիւնս տուի: Փետրուարէն սկսեալ թերթը պիտի հրատարակուի իմ պատասխանատուութեանս տակ: Յունուարի թիւին մէջ ձեռքէս եկած... լեզուական սրբագրութիւնները կատարեցի, սակայն որոշ յօդուածներ առանց կարենալ ՅԱՅԵՐԷՆԻ վերածելու: Խնդրին ողբերգական երեսն այն է, որ խմբագիրը ոչ միայն չի նկատեր թերթին լեզուական անճոռնիութիւնը, այլ մանաւանդ «Արեգակ»ի հայերէնը կը համարէ անթերի...:





Յունուարի համարին մեջ գրած խմբագրականն է կը տեսնես, որ «Արեգակ» պիտի ունենայ ոչ հատուածական նկարագիր: Վերջին հաշուով մեր նպատակը խաղող ուտելն է եւ ոչ թէ այգեպանը ծեծել...: Հարցը սակայն հատուածական - ոչ հատուածականէ առաջ՝ թերթը տեղ մը հասցնելն է: Երեւակայէ, թերթ մը որ շուրջ ինը ամսուան կեանք ունի, ոչ մէկ աշխատակից կրցած է ապահովել: Ողբերգական այս կացութեան մէջ ինծի համար շատ դժուար է առանձին եւ կարճ ժամանակուան մը ընթացքին «Արեգակ»ին որոշ նկարագիր մը տալ: Բարեկամ գրողներու եւ մտաւորականներու գրեցի որ իրենց պարբերական աշխատակցութեամբ օգնեն ինծի: Փետրուարի թիւին մէջ *Յամեցող Վերադարձ*էն «Տուն Հայրենի»ն պիտի դնեմ: Կը սպասեմ գրութիւններուդ. շատ գոհ կը մնամ, եթէ Եղեռնի նուիրուելիք Ապրիլի թիւին համար գրութիւն մը հասցնես:

«Արեգակ»ի արտաքին տեսքին առնչութեամբ ըրած դիտողութիւնդ շատ տեղին է. գրեցի Բիւզանդին [Թօփալեան], որ լուսանցքները կրկնապատկէ: Թերթը եթէ Լոնտոն հրատարակուած ըլլար, շատ մը թերութիւններու եւ անպատեհութիւններու առաջքը կարելի կ'ըլլար առնել: Հայերէն եւ անգլերէն բաժիններով տպարան մը հիմնելու խնդիրը քննութեան առարկայ է ներկայիս հոս, քանի մը հոգիներու մէջ, որոնցմէ մէկը աներհայրս է: Կը գրեմ քեզի, եթէ յառաջադրուած ծրագիրը ձեւ ստանայ:

Համերգի մասին կը կարդաս Յունուարի թիւին մէջ Չոհրապ Շամլեանի⁴¹⁸ յօդուածը, որուն մէջ մատնանշուած թերութիւնները անելիով գոյ էին համերգին մէջ: Համերգի ամենէն յաջող երգը, կատարման տեսակետէն, «Տրտում Ես Ինչո՞ւ»ն էր: Երգն ըստ ինքեան ալ գեղեցիկ կարելի է որակել: Համերգին կարելի է հարիւրի վրայ 45 տալ...: Չմոռնամ շեշտելու որ բանաստեղծութեանդ վրայ գրուած երաժշտութիւնը միայն ես չէ որ գեղեցիկ որակեցի, այլ շատեր, որոնց կարգին նաեւ Վիվիէնը, որուն երաժշտական հասկացողութեան վրայ բաւական համարում ունիմ:

Քանի մը օր առաջ Հիլտան [Գալֆայեան] հեռախօսեց... Լոնտոնէն: Արձակուրդով տասն օրուան համար եկած է հոս: Անգամ մը տուն բերի գինք եւ առիթով մըն ալ Գալուստեանին





տարինք զինք մեր հետ: Այս գիշեր ալ հաւանաբար միասին ըլլանք: Երբ հարցուցի թէ ինչո՞ւ ցարդ չէ գրած քեզի... «Փարիզէն գրեցի»... ըսաւ:

Նամակիդ վերջին պարբերութիւնը կը վերաբերի Գ[ալուստ] Կիւլպէնկեան Հաստատութեան Մարդասիրական Ճեմարանին ըրած յատկացումներուն: Թէ Պրն. Պետրոսի [Ալեքսեան] եւ թէ իմ տեսակետս այն է, որ Հնդկաստանի, մասնաւորաբար Կալկաթայի ազգային կրթական հաստատութեան որեւէ յատկացում ընել աւելորդ է, պարզ այն պատճառով, որ այնտեղի եկեղեցին եւ դպրոցը միասնաբար ունին մօտ մէկ միլիոն սթերլին դրամագլուխ մը, որ լիովին կը բաւէ գաղութի բոլոր կարիքներուն: Հսկայ այդ դրամագլուխին ապագան անորոշ է... մանաւանդ անոր համար որ վերջին քանի մը տարիներու ընթացքին շեշտուած արտագաղթ տեղի կ'ունենայ Հնդկաստանէն: Հայեր կը գաղթէն դէպի Աւստրալիա եւ արեւմտեան կարգ մը երկիրներ: Արդ, այս պայմաններու մէջ հարուստ հայ գաղութի մը դրամ յատկացնել ճիշդ չէ: Առ ի գիտութիւն ըսեմ որ միայն եկեղեցւոյ ամսական եկամուտը կը հասնի շուրջ 2500 սթերլինի, իսկ Կալկաթայի մէջ ներկայիս կան միայն շուրջ 450 հայեր:

Կրնա՞ս արդեօք ինծի ղրկել կարգ մը մտաւորականներու անուններն ու հասցէները, որոնց աշխատակցութեամբ «Արեգակ»ի որակը կարելի ըլլայ բարձրացնել: Գոհ կը մնամ նաեւ եթէ արտատպուելու արժանի գրութեանց հանդիպիս եւ գանոնք ինծի ղրկես: Ստիպուած կարգ մը արտատպումներ պիտի ընեմ, մինչեւ որ թերթն իր շուրջ հաւաքէ աշխատակիցներու կոկիկ խումբ մը: Քու օժանդակութեանդ եւ համագործակցութեանդ վրայ մեծ յոյս դրած եմ:

Փարիզի դասախօսութեանս մասին «Խթան»ի գրածէն զատ ուրիշ բան չունիմ ըսելիք: «Աշխարհ»ի գրածը չեմ կարդացած: Խայտառակ Չութիւն պիտի ըսեր Բիւզանդը...:

Օգտուելով առիթէն իմ եւ մերոնց կողմէ կը շնորհաւորեմ Նոր Տարին եւ Ս[ուրբ] Ծնունդը, մաղթելով քեզի առողջութիւն եւ ձեռնարկներուդ կատարեալ յաջողութիւն:

Լաւագոյն զգացումներով եւ սիրով՝
Ասատուր





ՆԱՄԱԿ 2

[Լոնտոն], 20 Յունուար, 1965

Սիրելի Վահրամ,

Շնորհակալութեամբ ստացայ 7.1.[19]65 թուակիր նամակդ, գեղեցիկ քերթուածդ եւ «Արեգակ»ի որդեգրած կեցուածքին լինովին համապատասխանող, «Յաւատամբ Ի Մի Հայութիւն» յօդուածդ, որ լոյս պիտի տեսնէ թերթի Փետրուարի համարին մէջ, Վահրիճ Մանուկեան ստորագրութեամբ: Չէի կրնար գրութիւնդ որպէս խմբագրական հրատարակել, քանի որ նախորդ խմբագրականին տակ ծանօթագրութեամբ մը խոստացած էի անդրադառնալ Փետրուարի համարին մէջ Համահայկական Կեդրոնական Միութեան մը ստեղծման եւ ունենալիք յառաջադրութիւններուն շուրջ: Այս առնչութեամբ կ'ուզեմ դիտել տալ նաեւ այն որ [Գրիշ] Դարեան չհամոզուեցաւ Վահրիճ Մանուկեանի լոնտոնաբնակ ըլլալուն եւ գուշակեց որ գրողը դուն ես. այնպէս որ այսուհետեւ այդ կեղծանունը վերապահէ միայն ՀԱԲՏԱՄՔ...ի նկարագրով ընդհանուր հարցեր շօշափող գրութիւններուդ: «Տուն Հայրենի» քերթուածդ փոխարինեցի «Հայրենիք Մերն Ես Այսօր»ով:

«Արեգակ»ի Մարտ-Ապրիլ թիւերուն միացեալ բացառիկը նուիրուած պիտի ըլլայ Եղեռնի Յիսնամեակին. պիտի ունենայ անգլերէն ճոխ բաժին բազմաթիւ լուսանկարներով եւ մամուլին պիտի յանձնուի Մարտի սկիզբը: Ուրախ եմ յայտնելու որ երկար փնտռուքներէ ետք՝ յաջողեցայ գտնել Տոքթ. Արմին Վեկները⁴¹⁹ (Armin T. Wegner) նամակով, որ խոստացած է «Արեգակ»ին տրամադրել անտիպ լուսանկարներ իր կողմէ առնուած Եղեռնի ընթացքին: Տոքթ. Վեկները գերմանացի գրող մըն է, որ ունի նաեւ անտիպ վէպ մը Հայկական Եղեռնին նուիրուած, որմէ հաւանաբար մասեր հրատարակենք յիշեալ բացառիկին մէջ: Այս նոյն Վեկներն է, որ 1919ին նամակ մը գրեց նախագահ [Վուտրոյ] Ուիլսոնին,⁴²⁰ պահանջելով որ Թրքահայաստանը վերադարձուի Հայոց: Այս առտու իրմէ նամակ մը ստացայ, որով պատրաստակամութիւն կը յայտնէր «Արեգակ»ին օժանդակելու եւ կը գրէր թէ առանձին ծրարով մը ինծի պիտի դրկէր 1933ին Ատուֆ Հիթլերին⁴²¹ գրած իր մէկ նամակը: Ապրիլ-Մարտ միացեալ բացառիկին աշխատակցելու





համար գրած եմ կարգ մը ուրիշ ոչ-հայ գրողներու, ինչպէս Պենկալի Ծերակոյտի նախագահ, Տոքթ. Սունիթի Զ[ումար] Չաթըրճիին, շուետացի բանաստեղծ եւ հայ գրականութենէ թարգմանութիւններ կատարող Զարլ Սվենինկին,⁴²² հնդիկ կարեւոր քանի մը գրողներու, եւայլն: Յոյս ունիմ որ ասոնց գոնէ մէկ մասին պատասխանը դրական պիտի ըլլայ: Այս առնչութեամբ կ'ուզեմ ուշադրութեանդ յանձնել այն որ Տոքթ. Վեկնըրի մասին խօսիս միայն վստահելի մարդոց, քանի որ *ԵՈՒՏԱՇ*-ներու կողմէ փնտռուած անձ մըն է... Իր տրամադրութեան տակ ունի աւելի քան երկու հազար անտիպ լուսանկարներ եւ բազմաթիւ փաստաթուղթեր: Ամէն ճիգ կը թափեմ զանոնք փրկելու համար...:

«Արեգակ»ի Յունուարի թիւէն շատ գոհ չեմ, թէւ ըսողներ եղած են որ նախորդ թիւերու համեմատութեամբ շատ լաւ է: Փետրուարէն սկսեալ կը յուսամ աւելի լաւ հիմերու վրայ կը դրուի թերթը: Մինչեւ Մարտի վերջը նախորդ խմբագիրը պիտի աշխատի [Յայկ] Գալուստեանի քով: Անցեալ օր ըսի իրեն որ այսուհետեւ առանց իմ գիտակցութեան ոչ մէկ գրութիւն պետք է դրկուի Փարիզ: Տպագրական սխալներու համար [Բիւզանդ] Թօփալեանէն աւելի՝ Ժիրայր Միրիճեանն⁴²³ է մեղաւորը, որուն ամէն ամիս հինգ սթերլին կու տայ Գալուստեան, որպէսզի սրբագրութեանց հսկէ: Եթէ փափաքիս կրնամ քեզի դրկել գրութիւններուդ փորձերը: Այս մասին գրէ ինձի:

Ապրիլի համարին համար դրկելիք գրութիւնդ մինչեւ Մարտի առաջին շաբաթը հասցուր ինձի:

Բացի քանի մը պարահանդեսներէ, այլ ձեռնարկներ չեն կազմակերպուած Լոնտոնի մէջ Յունուարի ընթացքին: Սրբագանի [Պսակ Թումայեան] հրաւերով եւ նախագահութեամբ ամսուն 23ին ժողով մը պիտի գումարուի «Յայ Տան» մէջ, Ապրիլեան Սգահանդեսին յայտագիրը կազմելու համար: Եկած օրէս ի վեր իրեն կ'ըսեմ որ անհրաժեշտ է համագաղութային սգահանդես մը կազմակերպել... Լսողը ո՞վ է: Վերջապէս ուրիշներու ալ պնդումին վրայ յանձն առաւ յանձնախումբ մը կազմել:

Այստեղ գոյութիւն ունեցող տարածայնութեանց համաձայն, Փետրուարի մէջ Վեհափառը [Վազգէն Ա. Պալճեան] պիտի այցելէ նաեւ Լոնտոն: Անցեալ օր Յայր Գիւտն [Նագգաշեան] ալ





հեռախօսով յայտնեց թէ Վեհը պիտի այցելէ նաեւ Փարիզ: Որքան գիտեմ ան ներկայիս կը գտնուի Ատիս-Ապեպա, Արեւելեան եկեղեցիներու վեհաժողովին, որուն պիտի մասնակցի նաեւ Խորեն Ա. Կաթողիկոս [Բարոյեան]:

Եթէ Պէյրութի երգի պարի *անսամպլի*ն հետ ձեր ունեցած բանակցութիւնները դրական արդիւնք մը տան, գրէ ինձի, որպէսզի Գալուստեանի միջոցաւ զիրենք Լոնտոն բերելու մասին եւս մտածենք: Արդիւնքը շատ լաւ կրնայ ըլլալ:

Չմոռնամ յիշելու որ եթէ [Աւետիս] Մեսումենցի եղանակաւորած քերթուածներուդ *նօթաները* ունիս՝ դրկէ ինձի, որպէսզի Վիվիէնը սորվի եւ եթէ ձայնին յարմար երգեր ըլլան, երգէ ի պահանջել հարկին:

Շէյքսպիրի հանդիսութեանց նկարներուն համար ըսի Գալուստեանին. կը յուսամ յաջորդ նամակովս դրկել քեզի:

Կը ներես որ նամակս տարտղնուած մտածումներու եւ տեղեկութիւններու հաւաքածոյ մը եղաւ: «Արեգակ»ի մասին բան մը եւս. յատուկ անուններու եւ կարգ մը եւրոպական բառերու - որոնք գոյ են Հայաստանեան գրութիւններու մէջ - տառադարձութիւնը մտածումիս անմիջական առարկան է: Լոնտոնի հայ համայնքը արեւելահայ եւ արեւմտահայ տարրերու խառնուրդ մըն է. արեւելահայ տառաձայնութիւնը ծիծաղելի կը թուի արեւմտահային եւ փոխադարձաբար: Չեմ գիտեր թէ ինչպէ՞ս պիտի լուծեմ այդ առեղծուածը: Մինչեւ հիմա տիրապետած է արեւելահայերէնի տառադարձութիւնը, որ խորքին մէջ աւելի ճիշդ է քան մերը: Կը մտածեմ արեւելահայերէն գրութիւններու մէջ պահել իրենց տառադարձութիւնը, իսկ արեւմտահայերէն յօդուածներու մէջ՝ մերինը: Տեսակետդ գրէ ինձի, գոհ կը մնամ:

Չմոռնամ ըսելու որ այս առտու Բիւզանդէն նամակ մը ստացայ, որուն մէջ ի միջի այլոց գրած էր որ գրքիդ շապիկը պատրաստուելու վրայ է. կը խնդրէր նաեւ որ գրեմ քեզի եւ յիշեցնեմ որ «Անդաստան»ը... լոյս պիտի տեսնէ:

Ուրիշ գրելիք չունիմ: Ալեքսեանները եւ Վիվիէնը կը յղեն քեզի իրենց սրտագին բարեւները, իսկ Կարինէն՝ աղուոր պաչիկներ:

Սիրով՝
Ասատուր





ՆԱՄԱԿ 3

[Լոնտոն], 5. 2. [19]65

Սիրելի Վահրամ,

Շնորհակալութիւն 31.1.[19]65 թուակիրիդ, ինչպէս նաեւ ըրած նկատողութիւններուդ համար: Նամակս կարճ պիտի ըլլայ այս անգամ. շատ բան ունիմ գրելիք, բայց ժամանակ՝... ոչ:

Բանաստեղծութիւնդ տպուած է արդէն, այնպէս որ փոփոխութիւն ընել կարելի չէ. առաջարկած փոփոխութիւնդ անտեղի է, մանաւանդ «Արեգակ»ի մէջ լոյս տեսնելիք քերթուածի պարագային... ընթերցողները դեռ վարժուած չեն անթերի գրութիւններ կարդալու:

Խմբագրականս «քիչ մը շատ... զգացական» գտած ես: Գիտեմ. ուզեցի որ այդպէս ըլլայ, թերթը կարդացողներու ցանկը աչքէ անցնելէ ետք...: Դժբախտաբար քու ակնարկած «համալսարանականներդ» «Արեգակ» չեն կարդար. ընթերցողներու կարելորտ կոսող կը պատկանի հին սերունդին: Ամէն պարագայի տակ մեր նպատակը պղնձահանքն է. հրաբուխ յառաջանայ, տաք լաւան տարածուի սրտերու մէջ, կամաց-կամաց պաղի եւ կայունանայ:

Կը ներես, որ համաձայն չգտնուիմ հետդ մեծ գործերու սկիզբը փոքր գաղութներու մէջ դնելու հարցին առնչութեամբ: Իմ համոզումովս, դժուար է ներկայ պայմաններու մէջ առողջ հիմքերու վրայ դրուած կազմակերպութեան մը ծնունդ տալ գաւազան գարմանազան կուռքերու երկրպագող հայկական կարելոր կեդրոններու մէջ: Մեծ գործերու սկիզբը փոքր համայնքներու մէջ պետք է դրուի, ուր դեռ բաժանումները չեն խորացած ու արմատաւորուած: Պէյրութէն կոչ մը ստացայ անցեալները Ռամկավար եւ Ջնչակեան կուսակցութեանց ներկայացուցիչներու ստորագրութեամբ Յայկական դատի վերաբերեալ: Ո՞ր է Դաշնակցութեան ստորագրութիւնը, ինչո՞ւ անոնք ալ չեն մտած մէջը. այդ մասին ոչ մէկ ակնարկութիւն... կուսակցութիւններէն *խեղ* մի սպասեր: Եթէ ունինք դատ մը (անպայման ունինք) անոր պաշտպանութիւնը կրնայ միայն նոր ու զօրաւոր կազմակերպութիւն մը ստանձնել:

Նորէն շեղեցայ մտադրութենէս, նպատակս այս խնդիրներու մասին խօսիլ չէր, այլ կարգ մը կարելոր լուրեր տալ:

1- Լոնտոնահայ բոլոր կազմակերպութիւններու մասնակ-





ցուրեամբ կազմուեցաւ Մեծ Եղեռնի Յիսնամեակի Կազմակերպիչ Յանձնախումբը, որուն պաշտօնը պիտի ըլլայ 1965ի ընթացքին հայ եւ օտար շրջանակներու համար նախատեսուած ձեռնարկներ կազմակերպել:

2- Վեհափառը [Վազգէն Ա. Պալճեան] Փարիզ Է. վաղը կը հասնի Լոնտոն եւ կը պատարագէ Կիրակի օր: Չորեքշաբթի օր *պանքէթ* մը կը տրուի ի պատիւ իրեն. նոյն օրը կեսօրին կը ճաշէ Քենթրպըրիի Արքեպիսկոպոսին հետ: Մանրամասնութիւնները կը գրեմ Վեհին մեկնումէն ետք: Հաւանաբար կարդացիր Ատիս-Ապեպայի մէջ տեղի ունեցած պատարագ-հոգեհանգիստի մասին: Խորէն [Ա. Կաթողիկոս Բարոյեան] պատարագած է, իսկ Վեհը խօսած Եղեռնի մասին Հայլէ Սելասի⁴²⁴ կայսեր ներկայութեան: [Հայկ] Գալուստեան Փարիզ մեկնեցաւ Վեհին հետ տեսակցելու համար:

3- Ապրիլէն սկսեալ պիտի որդեգրեմ զուտ արեւմտահայ ուղղագրութիւն, վերջ տալու համար այս խայտառակութեան:

4- Պրն. Պասման ըսաւ, որ Շէյքսփիրի նկարները դրկած է քեզի. ճի՞շդ է: Անպայման գրէ, որ կրկնութիւն չըլլայ ունեցած նկարներուդ մէջ:

5- Տպարանի հարցը կարծես թէ վերջնական ձեւ պիտի ստանայ. Գալուստեանի վերադարձին կը սպասուի գործը սկսելու համար: Մեքենաները հազիւ չորս ամիսէն կը ստացուին Գերմանիայէն: Անգամ մը որ տպարանը հաստատուի՝ թերթը կարելի է երկշաբաթաթերթի վերածել ... եւ գիրքերդ հոս տպել... մաքուր հայերէնով եւ թերի... տպագրութեամբ. մահդ փութացնող քանի մը ազդակներ են տուածս:

Յաճախ կը խօսուի քու մասիդ տան մէջ... լաւ բաներ: Վիվիէնը եւ Ալեքսեանները ջերմապէս կը բարեւեն, իսկ Կարինէն «ձեռքդ կը համբուրէ»: Վիվիէնը [Երջանիկ] Միսիրեանի մեկահամերգին պիտի մասնակցի. ըսի որ քերթուածիդ *նոթան* ուզէ: Շուտ գրէ:

Սիրով՝
Ասատուր

Յ.Գ. Դիտողութիւններուդ համար շատ շնորհակալ եմ. առնելիք շատ բան կայ մէջը: Միշտ գրէ. ես «զկայսերն կայսեր՝ Աստծունը՝ Աստուծոյ» կու տամ: Յը:





ՆԱՄԱԿ 4

[Լոնտոն], 16.2.1965

Սիրելի Վահրամ,

Կը յուսամ նախքան Լիզպոնէն մեկնիլդ՝ ձեռքդ կը հասնի երկտողս:

Երէկ Փրոֆ. Ռ[ուբէն] Չարեանէն նամակ ստացայ: Մոսկուայի մէջ դերասան [Յովհաննէս] Աբելեանի⁴²⁵ յոբելեանը նշուեր է մեծ շուքով. ելոյթ ունեցեր է ինք:

Նամակին մէջ երկու անգամ ակնարկութիւն կայ քու մասիդ: *Աղամեանի Շէյքսպիրը* գրքի թարգմանութեան առնչութեամբ գրած է.

«Շատ ուրախ կը լինեմ, եթէ Պրն. Մավեանը յանձն առնի: Զարցը միայն լեզուի իմացութեան մէջ չէ, այլ նաեւ նիւթի: Իսկ նա քաջատեղեակ է:»

Զայաստան հրաւիրուելու կապակցութեամբ գրած է.

«Սփիւռքահայ Կոմիտէի նախագահի՝ ընկեր [Վարդգէս] Զամագասպեանի հետ խօսեցի եւ նա ասաց, թէ Մավեանը Զայաստանի գրողների առաջիկայ համագումարի հրաւիրուածների ցանկումն է»:

Բարի ճանապարհ... Եւ խնդրանք մը. եկուր բարի մանչուկի մը պէս սա գիրքը թարգմանէ: Ես կասկած չունիմ, որ կոկիկ գումար մըն ալ կը շինես գործէն:

Բարեւներ ծանօթներուն: Ճամբէն գրէ:

Սիրով՝

Ա. Կիւզելեան

ՆԱՄԱԿ 5

Լոնտոն, 1 Մայիս, 1967

Սիրելի Վահրամ,

Յուսամ Պէյրութ դրկած նամակս հասաւ ձեռքդ, ուր խօսած էի տանիմարքացի *ժուռնալիսթ*-գրող Եորկըն Աստերսըն Ռոզանտալի մասին:

Այս պատուական մարդը, հայ ժողովուրդի ճշմարիտ բարեկամը (ածական մը գոր այս օրերուն պէտք է մեծ զգուշու-





թեամբ գործածել) Ս.Կ.ի իր դասախօսութիւններուն 9րդ շարքը աւարտելէ ետք երկու ամիս մնաց Egerton Lodge: Այդ ժամանակամիջոցին, ամէն օր քանի մը ժամ աշխատեցանք միասին: Հայկական աղբիւրներէ կատարեցի թարգմանութիւններ Ուրֆայի Հերոսամարտի մասին: Ան կը գրէ պատմական վեպ մը Քարէն Եփփէի⁴²⁶ եւ Ուրֆայի Հերոսամարտի մասին: Վեպը, որուն ծրագիրը ամբողջացած է արդէն, պիտի ըլլայ այնքան տիկամիք, որքան *Մուսա Լեռան 40 Օրերը*: Վեպը ցնցիչ մուտք մը ունի... Թալաաթի⁴²⁷ սպանութիւնը Պերլինի մէջ:

Վեպը մէկ տարիէն կարելի պիտի ըլլայ հրատարակել, եթէ այս պատուական գրողը կարենայ Միջին Արեւելքի մէջ, չընդմիջուած աշխատանքով գործել վեց ամիս: Ան քանի մը անգամ այցելած է արդէն Միջին Արեւելքի հայկական կեդրոնները:

Այս մասին է ահա՝ որ կ'ուզեմ խորհուրդդ առնել:

Նախ ըսեմ որ Անտերսընի կատարելիք աշխատանքը համաշխարհային չափանիշով դրական նպաստ մը պիտի ապահովէ մեր վարկին:

Արդ, իմ կարծիքս է, որ ամէն կերպ պետք է օգնել այս հեղինակին իր ծրագիրը շուտով ի կատար ածելու համար:

Կրնա՞յ ձեր Հիմնարկութիւնը պետք եղած աջակցութիւնը տալ Անտերսընին: Եթէ կը կարծես, որ վեպի կամ գեղարուեստական գրականութեան համար նպաստ չեն տար, այն ատեն պիտի խնդրեմ որ խորհուրդ տաս հետեւեալ առաջարկիս առնչութեամբ:

Ներփակ նամակը կը պարզէ Եորկըն Անտերսընի յառաջիկայ տարի տալիք դասախօսութիւնը եւ անոր կարելորդութիւնը:

Ես անձնապէս խնդրեցի իրմէ, որ «Armenia and the Armenians» դասախօսութիւնը մտցնէ իր յաջորդ տարուան ծրագիրին մէջ: Խոստացայ իրեն, որ այդ դասախօսութեան համար կը դիմեմ քեզի, որպէսզի Կիւլպենկեան Հիմնարկութիւնը վճարէ դեպի Միջին Արեւելք, Պատմական եւ Արդի Հայաստան կատարելիք ճամբորդութեան հետ կապուած ծախսերը:

Այս ձեւով մէկ քարով երկու թռչուն կը զարնենք...:

Այսօր պիտի գրեմ նաեւ Հայաստան, Ներփակելով Foyles-ի⁴²⁸ նամակը, որպէսզի Հայաստանի մէջ տանիմարքացի գրողը ըլլայ Կոմիտէին հիւրը:





Երկրները համեստ մարդ մըն է, մեծ պանդոկներէ հեռու ապրող ճգնաւոր մը, որ իր գրականութենէն ապահոված դրամին մեծ մասը կը տրամադրէ բարեսիրական նպատակներու: Այնպէս որ դասախօսութեան եւ գրքին համար կատարելիք վեցամսեայ աշխատանքը Միջին Արեւելքի, Թուրքիոյ եւ Յայաստանի մէջ 1000-1200 սթերլինի հարց մըն է:

Սիրելի Վահրամ, ներփակ գրութիւնները աչքէ անցուր եւ ինծի անմիջապէս գրէ, թէ նպաստ մը ապահովելու համար լաւագոյն ձեւը ի՞նչ է: Կրնաս վստահ ըլլալ որ այդ մասին ոչ ոք ոչինչ կ'իմանայ:

Կարելիդ, վստահ եմ պիտի ընես, որպէսզի այդ կարելոր երկու ձեռնարկները յաջողցնենք:

Շուտ գրէ: Այժմ Անտերսըն կը գտնուի Քոփենհակըն: Եթէ այս ծրագիրը յաջողի, անմիջապէս ճամբայ պիտի ելլէ դէպի Վան, Էրզրում, եւայլն:

Խորհուրդդ կարելոր է:

Սիրով՝
Ա. Կիւզելեան

ՆԱՄԱԿ 6

[Լոնտոն], 5 Մարտ, 1968

Սիրելի Վահրամ,

Անցեալ Չորեքշաբթի տեսակցութիւն մը ունեցայ Լոնտոնի ծանօթ *իմքրեսարիօ*ներէն Վիկտոր Յուլիսիաուզրի⁴²⁹ հետ, որուն նախաձեռնութեամբ Խ[որհրդային] Միութենէն արուեստագետներու խումբեր համերգներ կու տան եւ ելոյթներ կ'ունենան Անգլիոյ մէջ: Օրինակ՝ վերջին քանի մը տարուան ընթացքին Յուլիսիաուզրի նախաձեռնութեամբ վրացական պարի *անսամայլը* չորս անգամ այցելեց Անգլիա եւ իւրաքանչիւր անգամ տուաւ անելի քան 40 ներկայացում:

Յուլիսիաուզրին հետ տեսակցեցայ Յայաստանի պարի պետական *անսամայլը* Անգլիա բերելու առնչութեամբ:

Երեւանէն յաճախ կը գրեն, թէ **ինչո՞ւ** պարի *անսամայլը* Անգլիա չենք «հրաւիրեր»: Յայրենիքէն Լոնտոն նետարձակուած «ինչո՞ւ»ն սովորական «ինչո՞ւ» մը չէ... ան իր մէջ կը





խտացնե ուրիշ հարցում մըն ալ... «ինչո՞ւ վրացական խումբը չորս անգամ այցելէ Անգլիա, իսկ հայկականը՝ ոչ իսկ մէկ անգամ»:

Ամբողջ ժամ մը աշխատեցայ համոզել Յուսիսհանուզը, որ Անգլիա բերէ նաեւ Հայաստանի պարի պետական *անսամպլը*: Հաւաստիացուցի զինք որ առնուազն 5,000 տոմս կը գնէ հայ համայնքը:

Հուսիսհանուզը հետեւեալ պատկերը ներկայացուց ինծի:

Պարի լրիւ կազմը 65-70 հոգիներէ կը բաղկանայ: **Անպայման** պետք է լրիւ խումբը բերուի Անգլիա: Խումբը պետք է 14 անգամ ելոյթ ունենայ Ալպերթ Յոլի մէջ եւ 4 շաբաթ՝ այլ քաղաքներու մէջ:

Հուսիսհանուզի հաշուով ձեռնարկը կը կարօտի 20-50 հազար սթերլինի, որուն մէկ մասը կ'ապահովուի BBC-ի հետ իր ունեցած պայմանագրէն:

Դարձեալ իր կարծիքով՝ եթէ Ալպերթ Յոլը երեք անգամ լրիւ լեցուի՝ բոլոր ծախսերը կը փակուին:

Հուսիսհանուզը այս տուեալները ներկայացնելէ ետք յայտնեց, որ ինք առանձինն չուզեր ստանձնել նման ձեռնարկի մը նախաձեռնութիւնը: Եթէ, ըսաւ ան, գտնուի անձ մը, կամ կազմակերպութիւն մը, որ յանձն առնէ վճարել խումբին ճանապարհածախսը, ինք պատրաստ է խումբը բերելու Անգլիա՝ յառաջիկայ (1969) գարնան եւ շահը կիսելու տուեալ անձին կամ կազմակերպութեան հետ:

Հարցումիս, թէ նման ձեռնարկ մը ինչքա՞ն կրնայ վնասել, պատասխանեց. «Ես ընդհանրապէս վնասաբեր գործ չեմ ըներ եւ մինչեւ այսօր ուրիշին դրամով վնասաբեր ձեռնարկ չեմ կազմակերպած»:

Այլ խօսքով, մարդը անուղղակի կերպով հասկցուց ինծի, որ ձեռնարկը կրնայ մեծ շահ մը չապահովել, բայց վնասելու կարելիութիւնը աննշան է:

Թելադրութիւնը՝ թէ Կիւլպէնկեան Հիմնարկութեան աջակցութեամբ կարելի է իրագործել ձեռնարկը՝ եկաւ Հուսիսհանուզէն:

Ահա հարցը իր ընդհանուր գիծերով:

Բարեհաճիս, խորհրդակցելէ ետք պաշտօնակիցերուդ հետ, գրէ ինծի այս մասին: Վստահ եմ այսպիսի ձեռնարկ մը ձեր





գործունեության ծիրին մեջ կը մտնէ: Աւելորդ կը սկստեմ կարեւորութիւնը ընդգծել ձեռնարկին: Հաւանաբար Հիմնարկութիւնը մտածէ նաեւ խումբը Լոնտոնէն Լիզպոն տանելու կարելիութեան մասին ալ... գաղափար մըն է պարզապէս:

Այս կապակցութեամբ ըսեմ նաեւ, որ Եորկըն Անտերսըն Ռոզանտալ կարելի կը սկստէ դանիացի շատ մեծ *իմքրեսարիօյի* մը միջոցով խումբը տանիլ նաեւ Քոփենհագըն Լոնտոնէն:

Հիմնարկութիւնը կրնայ անշուշտ հաղորդակցութեան մեջ մտնել ուղղակի Հոլիստաուզի հետ:

Յունիսի մեջ Փարիզ տեղի պիտի ունենայ Հ.Բ.Ը.Մ.ի համագումարը: Այդ առթիւ Փարիզ հրաւիրուած է Հայաստանէն 10 հոգիսոց արուեստագետներու խումբ մը: Երեւանէն կ'ուզեն որ արուեստագետները հրաւիրենք նաեւ Լոնտոն: Քանի մը օրէ ի վեր ինկած եմ այդ գործին ետելը: Դժբախտաբար Լոնտոնի մեջ կեդրոնացեալ մշակութային մարմին մը չկայ, որուն կարելի ըլլայ յանձնել նման ձեռնարկ մը: Դիմեցի Բարեգործակալին, որպէսզի յանձն առնէ համերգի մը կազմակերպումը: Արդիւնքի մասին կը գրեմ քեզի:

Անտերսընի դասախօսութիւնները Անգլիոյ մեջ «Հայաստան եւ Հայերը» նիւթին շուրջ՝ ունեցած են աննախընթաց յաջողութիւն: Ֆոյլզը յայտնած է իրեն, որ յառաջիկայ տարի Նոր դասախօսութիւն մը պատրաստելու կարիք չկայ, քանի որ բազմաթիւ գրական ընկերութիւններ եւ այլ կազմակերպութիւններ հիմակուրնէ book ըրած են (They have booked!) «Armenia and the Armenians» դասախօսութիւնը:

Հետաքրքրական դեպք մը պատահեցաւ անցեալ շաբաթ: Դասախօսական ընկերութիւն մը հրաւիրած էր անուանի Փրոֆ. մը, որ խօսի «Turkey and the Turks» նիւթի շուրջ: Մարդը դասախօսութենէն երկու շաբաթ առաջ կ'որոշէ մեռնիլ...: Կը հրաւիրուի Անտերսըն՝ որ կը խօսի... «Armenia and the Armenians» թեմայով: Հայոց Աստուածը սկսած է զարթիլ: Մինչեւ հիմա ան խօսած է մօտ 50,000 ունկնդիրներու:

Ձերմ ողջոյններով եւ սիրով՝
Ա. Կիւզելեան





ՆԱՄԱԿ 7

[Լոնտոն], 27.11.1968

Սիրելի Վահրամ,

Յուսամ ստացած ես նամակս: Կարելոր հարց մը կը ստիպե գիս որ դարձեալ գրեմ:

Հայաստան գտնուած միջոցիս Կոմիտէն եւ Գրողներու Միութենէն Ստեփանը (Ալաշաշը) [Ալաճաճեան] խնդրեցին, որ 1969ին անպայման անգլերէնով հատոր մը [Յովհաննէս] Թումանեան լոյս ընծայելու միջոցը գտնեմ: Ինչպէս գիտես, 1969ին **ԻԼԵՆՔՈՅԻ** հովանաւորութեամբ պիտի նշուի Թումանեանի ծննդեան 100ամեակը:

Նման ծրագիր մը իրականացնելու համար, բացատրեցի իրենց, երկու գլխաւոր դժուարութիւններ կան.

ա) Գտնել լաւ թարգմանիչ մը

բ) Ապահովել հարկ եղած գումարը

Ստեփանին յայտնեցի նաեւ, որ Լոնտոնի մէջ միայն Տոքթ. Միշա Գիւտեանը կրնայ որակաւոր թարգմանութիւն մը գլուխ հանել: Ըսի նաեւ որ ան արդէն Թումանեանէն կարգ մը թարգմանութիւններ ունի. «Գիքորը» լոյս տեսաւ «Ararat»-ի մէջ:

Քանի մը օր առաջ Տոքթ. Գիւտեան հեռախօսով յայտնեց որ Ստեփան Ալաշաշեանէն ստացած է նամակ մը, որուն մէջ ան շեշտած է անգլերէնով Թումանեանէն հատոր մը ունենալու կարելորութիւնը 1969ին:

Երէկ գիշեր գացի Գիւտեանին քով: Ան պատրաստակամութիւն յայտնեց թարգմանչական աշխատանքը ստանձնել եւ պատրաստել 150 էջնոց հատոր մը, որուն մէջ կը մտնեն հետեւեալ գործերը.

I- Պոեմներ

- 1- Լոռեցի Սագոն
- 2- Անոյշ
- 3- Թմկաբերդի Առումը
- 4- Մարոն

II- Մանկական

- 1- Թռչունի Ստածմունքը
- 2- Մի Բաց Նամակ Ամենքին
- 3- Փիսիկի Գանգատը





- 4- Աշուն
- 5- Կոյրերի Կարծիքը
- 6- Տերեւաթափ

III- Լեզուներ եւ Քալաղներ

- 1- Շունն ու Կատուն
- 2- Անբախտ Վաճառականը
- 3- Ախթամար
- 4- Փարուսայ
- 5- Աղջկայ Սիրտը
- 6- Հոգեհան
- 7- Լուսաւորչի Կանթեղը
- 8- Չարի Վերջը

IV- Պատմութիւններ

- 1- Սովի Ժամանակից
- 2- Աղքատի Պատիւը
- 3- Գիքորը
- 4- Արջորս

V- Հեքիաթներ

- 1- Ճամբորդներ
- 2- Սուտասանը
- 3- Չախչախ Թագաւոր
- 4- Ոսկու Կարասը
- 5- Անբան Հուրին
- 6- Կիկոսի Մահը
- 7- Չախորդ Փանոսի Հեքիաթը

VI.- Յառաջաբան 3 էջ

Գիտեանի կարծիքով նման հատոր մը, գեղեցիկ տպագրութեամբ, կարելի է հրապարակ նետել հատը 18-20 շիլինկի:

Ձեռնարկին յաջողութիւնը կախում ունի Հիմնարկութեան կեցուածքէն: Գիտեմ որ ընդհանրապէս գեղարուեստական գործեր չէք հրատարակեր, հանգամանքները նկատի ունենալով արդեօք Հիմնարկութիւնը (քու կարծիքով...) նկատի կ'ունենա՞յ դիմում մը:

Նման դիմում մը կրնայ գալ՝

ա- Լոնտոնի մէջ կազմուելիք յանձնախումբէն

բ- Սփիւռքահայութեան հետ Մշակութային Կապի Կոմիտէն

գ- Հայաստանի Գրողներու Միութենէն





Անշուշտ գործը գլուխ բերելու ամենէն նպատակայարմար եւ արագ ձեւը պիտի ըլլար ձեռնարկին Կիւլպէնկեան Զիմնարկութենէն յղացուիլը...: Այսինքն Զիմնարկութեան հայկական բաժինը Թումանեանի 100ամեակին կ'որոշէ իր մասնակցութիւնը բերել խնդրոյ առարկայ հատորը լոյս ընծայելով: Եթէ կրնաս (վստահ եմ կրնաս) նման որոշում մը «գողնալ» ձեր ժողովէն՝ Գրողներու Միութիւնը, Սփ. [Սփիւռքահայութեան հետ] Մշկ. [Մշակութային] Կապի Կոմիտէն եւ ամբողջ գրասեր հասարակութիւնը երախտապարտ պիտի ըլլայ քեզի:

Տոքթ. Գիւտեանի կարծիքով՝ որպէսզի գիրք մը Անգլիոյ մէջ լոյս տեսնէ Սեպտեմբեր-Յոկտեմբերին յառաջիկայ տարի՝ ձեռագիրը հրատարակիչներուն յանձնուած պէտք է ըլլայ ամենէն ուշը Մարտին: Եթէ Զիմնարկութիւնը անմիջապէս դրական որոշում մը առնէ, ինք հատորը կ'աւարտէ մինչեւ Մարտ: Ուստի, անհրաժեշտ է արագ շարժիլ, աւելի ճիշդը՝ անմիջապէս շարժիլ: Զաւանաբար սկսար բարձրաձայն հայիոյել... գլխուս: Եթէ մինչեւ հոս չես հայիոյած՝ կրնաս յաջորդ Լոնտոն այցելութեանդ դասախօսութիւն մը կարդալ **գլխուս**...:

Զիմն, Կիւլպէնկեան Զիմնարկութիւնը կրնայ երկու ձեւով օգնել վերոյիշեալ ձեռնարկին.

ա- Կրնայ հրատարակութեան ամբողջական ծախսը հոգալ

բ- Կրնայ համաձայնիլ հրատարակչատան հետ եւ գիրքէն գնել, մեծաքանակ գինով, 1000-1500 օրինակ:

Վստահ եմ որ հրատարակիչները պիտի համաձայնին երկրորդ պայմանին:

Տոքթ. Գիւտեանի կարծիքով այս գործին համար լաւագոյն հրատարակչատունը I.M. Dent & Sons Ltd. է, որոնց խմբագրական գործերու տնօրէնն է

Mr. E. F. Bozman,
Editorial Director,
J. M. DENT AND SONS,
Aldine House 10/13
Bedford Street,
London, W.C.2
Գիւտեանի հասցէն է՝
17, Harley St. W.1

Շնորհակալ կ'ըլլամ, եթէ անմիջապէս պատասխանես նա-





մակիս եւ ընես թելադրութիւններդ: Գրե դարձեալ՝ նոյնիսկ այն պարագային, երբ Հիմնարկութեան նախաձեռնութեամբ ըլլալը նպատակայարմար չգտնես:

Այլ լուրեր

Հայաստանէն վերադարձիս, բարեկամներու խորհուրդով նամակ մը գրեցի Ազգ[ային] եւ Եկեղեցական խորհուրդին որպէսզի լոնտոնահայ կազմակերպութիւններու ներկայացուցիչներէ բաղկացած յանձնախումբ մը կազմուի՝ Երեւանի 2750 եւ Թումանեանի 100ամեակները համագաղութային շուքով նշելու համար:

Ոչ մէկ քայլ առին:

Շաբաթ մը առաջ «Հայ Տուն»ի մշակութային յանձնախումբը նամակով մը ամսոյս 29ին ժողովի հրաւիրեց կազմակերպութիւններու ներկայացուցիչները նոյն նպատակով: Այս լուրը առնելուն պէս, Փափազը անմիջապէս կը սկսի իր պառակտիչ գործունեութեան, իսկոյն կը հեռախօսէ [Տէյվիտ Մարշըլ] Լանկին եւ զայն ճաշի կը հրաւիրէ: Ես արդէն խօսած էի Լանկին եւ զինք հրաւիրած՝ որ անգլերէն գլխաւոր խօսողը ըլլայ: Ազգ[ային] եւ Եկեղեցական խորհուրդը ո՛չ կ'ուզէ 29ին գումարուելիք ժողովին մասնակցիլ, ոչ ալ կը հրաժարի 2750ամեակը նշելու իր մտադրութենէն, հակառակ անոր, որ խորհուրդի նախագահը, [Գեորգ] Թահթան, ի պատասխան նամակիս հեռախօսի վրայ ըսաւ, թէ խորհուրդը մտադիր չէ առաջարկուած յանձնախումբը կազմելու: Մէկ խօսքով անհամ գործ: Իմ անկեղծ համոզումս այն է, որ միայն Փափազի հեռացումով Լոնտոնի մէջ արդիւնաւետ գործ կարելի է ընել:

Տնեցիները ջերմ բարեւներ կը յղեն:

Սիրով՝
Ա. Կիւզելեան:

Յ.Գ. Շուտ գրե...:

ՆԱՄԱԿ 8

[Լոնտոն], 11 Սեպտ[եմբեր], 1970

Սիրելի Վահրամ,

15 Օգոստոս թուակիրդ ատենին ստացած եմ: Շնորհակա-





լութիւններ Ռոմիկին [Մարթին] հանդէպ ցուցաբերուած ուշադրութեան համար:

Լոնտոնահայութեան միապաղաղ կեանքէն ներս միակ խանդավառ իրադարձութիւնը հայ աստղագետներու պատուին տրուած ճաշկերոյթն եղաւ Օգոստոս 23ին: Խ[որհրդային] Յայաստանէն, Ֆրանսայէն, Ամերիկայէն, Մեքսիքոյէն եւ Իրանէն շուրջ 15 աստղագետներ մասնակցեցան Աստղագետներու Միջազգային Համաժողովին, որ կայացաւ Պրայթոնի մէջ: Լոնտոնահայ կազմակերպութիւններու հաւաքական հրաւերով կազմակերպուած ճաշկերոյթէն ետք՝ երեկոյեան Վ[իկտոր] Համբարձումեան⁴³⁰ շուրջ ժամ մը դասախօսեց «Հայ Տան» մէջ, ստեղծելով բացառիկ խանդավառութիւն:

Օգոստոս 27ին, գիտնականներու մեկնումի նախօրեակին, Հայկ Գալուստեան խումբէն քանի մը հոգի հրաւիրեց «Talk of the Town»...: Վստահ եմ՝ «աստղուհիներու» հետ ամէն օր սիրաբանող մեր գիտնականները մեծ արտոճակով դիտեցին կիսամերկ պարուհիներու աստղածոյլ կուրծքերն ու զիստերը...: Տարբերութիւնը երկնային եւ **երկրային** աստղերու՝ տարիքի հարց է հիմնականին մէջ: Լոնտոնի աստղերը 20-22 տարեկան էին, իսկ՝ ըստ գիտնականներու, երիտասարդագոյն աստղը առնուազն քանի մը միլիոն տարեկան է...:

Սիրելի Վահրամ, ամիսէ մը ի վեր կը հետապնդեմ շատ կարեւոր ծրագիր մը: Կը ցաւիմ ըսելու, որ մեզի համար օգտաշատ այդ ծրագիրը պիտի չիրագործուի. հարցը հետեւեալն է:

Ամերիկացի-հրեայ producer մը ներկայացաւ ինծի ամիս մը առաջ վիպագիր Կորտըն Լէնգպորոյի⁴³¹ հետ: Լէնգպորոն սկովտիացի գրող մըն է, որ Լոնտոնի մէջ ունէր Mayfair Publishing Co.-ին: Յիշեալ ընկերութիւնը Անգլիոյ մէջ հրատարակեց *Մուսա Լեռան 40 Օրերը*⁴³² վեպը:

Producer Claude Heilman⁴³³ յայտնեց որ MGM վաճառքի հանած է [Ֆրանց] Վերֆելի⁴³⁴ վեպին *Ֆիլմի* իրաւունքը: Heilman բանակցութեան մէջ մտած է MGM-ի հետ, ապահովելու համար *Ֆիլմի* իրաւունքը:

Հանգամանօրէն բացատրեց ինծի, թէ իրագործելու համար շահաբեր այդ ծրագիրը՝ անհրաժեշտ է ստեղծել ընկերութիւն մը 50,000 սթերլին դրամագլուխով: Յիշեալ գումարին դիմաց ընկերութիւնը պիտի ունենայ *Ֆիլմին* մէջ 15% շահաբաժին:





Այդ գումարը պիտի ծախսուի լրացնելու համար բոլոր այն պայմանները, որմէ ետք միայն **Ֆիլմի մեծ ընկերություններ** կը տրամադրեն հարկ եղած մեծ գումարը, որ այս պարագային պիտի ըլլայ 5 միլիոն 8 հարիւր հազար տոլար:

Heilman-ի ինծի յղած նամակը, որուն պատճենը կը գտնես ներփակ, կը բացատրէ այդ բոլորը:

Heilman բացատրեց ինծի, որ անցեալին նոյն ձեւով ու սկզբունքներով California-ի մէջ պատրաստած է «This Earth is Mine» **Ֆիլմը**, խաղարկութեամբ Ռոք Յաթսընի եւ Ճին Սիմընզի: Ան ըսուածները հաստատեց վաւերագրական տուեալներով:

Heilman-ին ինծի յղած նամակին պատճենը դրկեցի [Խաչիկ] Մթրըպեանին եւ [Յայկ] Գալուստեանին՝ խնդրելով որ տեսակցութիւն մը ունենան անոր հետ: Մթրըպեանի պատասխանը եղաւ այն, ըստ որուն ինք «պետք եղածէն աւելի դրամ կը շահի» եւ չի հետաքրքրուիր ներկայացուած ծրագիրով: Գալուստեանի պատասխանը, ինչպէս այլ առիթներով, այս անգամ ալ եղաւ խուսափողական: Բազմիցս փորձեցի՝ որպէսզի կէս ժամ տեւող տեսակցութիւն մը ունենան մարդուն հետ...: Ի գուր:

Մինչ այդ դիմած էի քանի մը ուրիշներու ալ եւ յաջողած «գոյացնել» շուրջ 15,000 սթերլին (թուղթի վրայ, որպէս խոստում):

Քանի մը օր առաջ հանդիպում մը ունեցայ Սարգիս Քիւրքճեանի հետ. ներկայ էր նաեւ Heilman: Քիւրքճեան խոստացաւ 15,000 սթերլինով մասնակցիլ կազմուելիք ընկերութեան, եթէ... (կարգ մը պայմաններ):

Աւելորդ է ընդգծել «Մուսա Լերան 40 Օրերը» **Ֆիլմին** բերելիք բացառիկ նպաստը հայութեան:

Բացի այդ՝ այս ծրագիրը անձնապէս ինծի համար ունի բազմաթիւ նշանակութիւն: Եթէ ծրագիրը յաջողի, որպէս **ընկերութեան կազմակերպիչ** ես կը ստանամ 5% շահաբաժին **Ֆիլմէն**:

Խնդրանք մը եթէ կը ճանչնաս մարդիկ, որոնք կրնան յիշեալ ծրագիրով հետաքրքրուիլ որպէս շահաբեր ձեռնարկ՝ բարի գտնուիր գրել իրենց՝ ներփակելով ներփակ նամակին պատճենը: Ի գիտութիւն կրնաս նշել, որ 50,000 սթերլինը մէկ մասն է 5,800,000 տոլարին. անմիջապէս որ ծրագիրը ձեւ ստանայ եւ մեծ ընկերություններ տրամադրեն **Ֆիլմին** ընդհանուր դրա-





մագլուխը՝ առաջին հերթին, նախքան *ֆիլմի*ն աւարտիլը, 50,000 կը վճարուի ենթականերուն:

Համաձայն քաղուած տուեալներուն՝ Պրն. Մթորըպեան փուլանտի վրայ 9.6 շիլին income tax կը վճարէ, այդ հաշուով եթէ 50,000 սթերլին կորսնցնէ՝ իր բուն կորուստը միայն 1200 սթերլին է...: Պարոնը իր քարտուղարուհիին ըսեր է, որ եթէ ազգային նպատակի մը համար ուզուէր դրամը, կու տար առանց հարց ու փորձի... Հաւատա՞լ:

Գրած էիր որ կը ծրագրես Պէյրուս երթալ Հոկտեմբերին: *Խեր ինշալլահ*: Վերադարձիդ Oxford Street-էն անցնելու ծրագիր չունի՞ս: Երփներանգ շապիկներու բազմաթիւ սոր խանութներ բացած են Լոնտոնի մէջ...

Միջանկեալ ըսեմ, որ *ֆիլմի* ծրագիրը պէտք է մնայ գաղտնի բազմաթիւ պատճառներով: Գլխաւոր մտավախութիւնս այն է, որ թուրքերը կրնան MGM-էն գնել *ֆիլմի* իրաւունքը, եթէ շուկը հասնի ականջնուն:

Տնեցիները կը յղեն ջերմ բարեւներ: Աներմայրս դեռ անհանգիստ է: Բարին Աստուծմէ:

Սիրով՝
Ասատուր





ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ





Չախեն աջ՝ Յարութին Գեորգեան,
Բիզանդ Կրպոյեան, Սարգիս Իգնատոսեան,
Արամ Մանուկեան,
Սարգիս Գարավարդանեան,
Ասատուր Կիզելեան (նստած՝ ծաղկամանին
վրայ), Հալէպ, 1948, Կիլիկեան Վարժարանը
աւարտելէ ետք ու նախքան Դպրեվանք
մտնելը:



Նստած ձախեն աջ՝ Յովսէփ Ըմատոնեան, Ասատուր Կիզելեան, Մարտիրոս Մոմճեան,
Յովի. Նազգաշեան (հետագային՝ Գիտ Արք.): Կանգնած ձախեն աջ Ա. շարք: Մովսէս
Քիւսպէկեան, Մարտիրոս Սնապեան: Կանգնած ձախեն Բ. շարք: Սարգիս Իգնատոսեան,
Խաչիկ Ճեյլատեան, Սարգիս Գարավարդանեան, Խորէն Շպս. Բարոյեան (հետագային՝
Խորէն Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ), Յակոբ Վրդ. Վարդանեան, Ժիրայր Գորեսեան,
Յակոբ Փափագեան, Նուպար Մանուկեան:





Ուոքի ձախեն աջ՝ Յակոբ Աճնեան (մարզանքի ուսուցիչ), Նուպար Քիսիլեան, Յովհաննէս Կարայիսեան (Գեորգ Վրդ. Կարայիսեան), Նշան Սրկ. Սարգիսեան (Գարեգին Բ. Մեծի Տանն Կիլիկիոյ եւ Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոս), Ալեքսան Գուգույեան (Տ. Մամբրէ Քհն. Գուգույեան): Ծունկի ձախեն աջ՝ Ասատուր Կիզելեան, Նուպար Քէշիշեան (Վազգէն Արք. Քէշիշեան), Օննիկ Պալեան: 1952 Անթիլիաս:



Ձախեն աջ՝ Մովսէս Քիսայէկեան, Ասատուր Կիզելեան, Արշակ Զօպանեան, Միսոն Միսոնեան, Նուպար Քիսիլեան, Նուպար Քէշիշեան (հետազային Վազգէն Արք.), ծունկի Ալեքսան Գուգույեան (հետազային Տ. Մամբրէ Քհն.): 1954 Անթիլիաս:





Չախեն աջ՝ Նուպար Քէշիշեան, Չաւեն Արդ. Արզումանեան
(հետագային Տ. Չաւեն Քհն.), Փրոֆ. Աշոտ Աբրահամեան, Ներսէհ Արդ. Փապունճեան,
Ասատուր Կիւզելեան, Սկրաիչ Մուրատեան: Փետրուար 1955, Անթիլիաս:



Գ.Էորգ Զ. Կաթողիկոսի յուղարկատրութեան մասնակցելու համար Ս. Էջմիածին մեկնող
Կիլիկիոյ Կաթողիկոսութեան պատուիրակութեան անդամներէն՝ Վահէ-Վահեան,
Գնել Վրդ. Ճէրէճեան եւ Սիմոն Սիմոնեան, շրջապատուած դպրեկանցիներով եւ
քարեկամներով Պէյրութի օդանաակայանին մէջ, 1954ին:





Չախեն աջ՝ Ասատուր Կիզելեան, Ալեքսան Գուգույեան (հետագային՝ Մամբրե Քին. Գուգույեան), ուսումնապետ Բիզանդ Եղիայեան, Նուպար Քիփեղեան, Յովհաննէս Նազգաշեան (հետագային Գիտ Արք., առաջնորդ Ֆրանսահայոց բեմի): 1954, Անիլիաս:



Ասատուր եւ Վիվիեն Կիզելեան, Կալկաթա 1957 Դեկտեմբեր 5, Պսակի արարողութենէն անմիջապէս յետոյ:





Ասատուր Կիզելեան ընտանիք: Չախեն աջ՝ Վիվիեն, Կարինե, Արմինե
և Ասատուր Կիզելեան: 2003, Լոնտոն:



Ասատուր Կիզելեան իր թոռներուն՝ Ալեքսանտրի, Ճեյմսի եւ Մայքլի հետ:
Paignton, Devon, 2011, Անգլիա:





Ասատուր Կիզելեան Արամ Խաչատուրեան թանգարանի մէջ,
«Հանոյ եւ Ֆարիկէ» գիրքը մակագրելու ժամանակ: 2009, Երեւան:




ՀՀ Սփիւռքի Նախարար Հրանուշ Յակոբեան 27 Մարտ 2012ին,
Ասատուր Կիզելեանը պարգեատրեց «Ուիլիըմ Սարոյեան» շքանշանով Լոնտոնի մէջ,
իսկ նոյն տարուան Մայիս 23ի հրամանագիրով,
ՀՀ Նախագահը «Մովսէս Խորենացի» շքանշան շնորհեց անոր: Այս նկարին մէջ Սփիւռքի
Նախարար Հ. Յակոբեան 4 Յունիս 2012ին, Ա. Կիզելեանին
կը յանձնէ «Մովսէս Խորենացի» շքանշանը յանուն ՀՀ Նախագահի:





Ասատուր Կիլիզեան ՀՀ նախագահ Սերժ Սարգսեանի հետ,
երբ ան Լոնտոն այցելեց 2012ին, Ռոլիմպիական խաղերու առիթով:





ՀՀ ՍՓՅՈՒՌԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՎԿԱՅԱԿԱՆ № ՎՊ-56

Ասատուր Կիլիզեանը
պարգևատրվում է
ՀՀ սպորտի նախարարության
«ՎԻՆԱՄ ՍԱՐՈՅԱՆ» ՍԵՂԱՆՎ



Նախարար՝ Հ.Հակոբյան



Մարտի
27 2012 թ.
Երևան







Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 23-Ի

«ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅՈՒ ՄԵԴԱԼՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

ՆՀ-120-Ա ՀՐԱՄԱՆԱԳՐԻՑ

Հայ գրաբարության 500-ամյակի կապակցությամբ, գրականության և գրահրա-
վարակցության զարգացման գործում ներդրած ավանդի համար գրող, լրագրող
Ասատուր Կարապետի ԳՅՈՒԶԵԼՅԱՆԻՆ (ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱ) պարգևատրել Մովսես
Խորենացու մեդալով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Ն Ա Մ Ա Գ Ա Հ



Ս. ՍԱՐԳՍՅԱՆ



Տէր և Տիկին Սիմոն և Մարի Սիմոնեան: 1955, Պէյրութ:





Ասատուր Կիզելեան, Մարի Սիմոնեան, Վիվիեն Կիզելեան եւ Սիմոն Սիմոնեան,
Սիմոնեաններու այժմ պատմական դարձած տան առջեւ: 1960, Անթիլիաս:



Ասատուր եւ Վիվիեն
Կիզելեաններ,
Սիմոն Սիմոնեանի եւ
իւր աղջկան Մարալի
հետ:
1960, Անթիլիաս:






Արմեն Յարութիւնեանի տան մէջ Սիմոն Սիմոնեան կը կատակախօսէ:
Կողքին՝ Ասատուր Կիւզելեան: Օգոստոս 1970, Պէյրութ:



Արմեն Յարութիւնեանի տան մէջ Ասատուր Կիւզելեան կը կատակախօսէ:
Կողքին՝ Սիմոն Սիմոնեան: Օգոստոս 1970, Պէյրութ:





Չախեն աջ՝ Ֆյորա Ալեքսեան, Անդրանիկ Կիզելեան (Ա. Կիզելեանի զարմիկը),
Վիվիեն Կիզելեան, Երուանդ Պապայեան, Մարի Սիմոնեան,
Պետրոս Ալեքսեան, Ռոզին Պապայեան, Սիմոն Սիմոնեան, Սիլվա Պապայեան եւ
Ասատուր Կիզելեան: 1960, Պէյրուսի «Քուփոլ» ճաշարանին մէջ:



Չախեն աջ՝ Արմեն Յարութիւնեան, Ասատուր Կիզելեան եւ Սասուն Սիմոնեան
Նոյեմբեր 2011ին, Անթիլիասի Կաթողիկոսարանին կազմակերպած
գիրքերու 33րդ ցուցահանդէսի ժամանակ:





Մինն Միննեան իր ընտանիքին հետ:
Չախեն աջ՝ Վարդան, Տարօն, Մինն, Յովիկ, Մարի, Սասուն եւ Մարալ:
Պէյրուքի օդանավակայանին մէջ, Սեպտեմբեր 1968:



Չախեն աջ՝ Նշան Խոշաֆեան, Գարեգին Եսայ. Սարգիսեան (ապա Գարեգին Բ. Կիլիկիոյ
ու Ամենայն Հայոց Գարեգին Ա.), Վահրամ Մալեան,
Մինն Միննեան, Խորեն Ա. Բարոյեան (Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ), Յակոբ
Կիլոյեան, Տաճատ Արք. Ուրֆալեան (Առաջնորդ Լիբանանի Հայոց), եւ ճարտարապետ
Գեորգ Գարաճրճեան: Նկարուած են Անթիլիասի Այն Նապիի «Ֆաուար» ճաշարանին մէջ,
24 Փետրուար 1966ին:





Նստած Վեհափառ
Գարեգին Յովսէփեանց,
Ետին Սիմոն Սիմոնեան:
Օգոստոս 1947, Երուսաղէմ:



1949 թուականի Անթիլիասի
Միտոնօրհներքի օրը:
Գարեգին Յովսէփեանց Վեհափառի
աջին Հայկասէր Վրդ. Պայրամեան,
իսկ ձախին, հագի տեսանելի,
Կորիւն Վրդ. Մանուէլեան, երկուքն ալ
Միտոնօրհներքի օրը Երուսաղէմի
Պատրիարքութիւնը
կը ներկայացնէին Անթիլիասի մէջ եւ կը
սպասարկէին Վեհափառին: Կռնակը
երեցող անձը Սիմոն Սիմոնեանն է, որ
կ'արձանագրէ Վեհափառին քարոզը, իսկ
իր մօտին Գնէլ Վրդ. Ճերէճեան, որ կը
կատարէ յուշարարի պաշտօն:





Տէր եւ Տիկին
Վահրամ եւ Իվօն Մավեան:
1981, Արժանքին:



Չախէն աջ՝ Յակոբ Պարտազճեան (հետագային՝ Պարգեւ Քհն.), Ասատուր Կիզելեան,
Ներսէս Արդ. Փասպուճեան, Գառնիկ Հալլաճեան (հետագային՝ Գառնիկ Քհն.)
Պօղոս Սնապեան, Վահրամ Մավեան
եւ Ենովք Տէր Գալուստեան, (հետագային՝ Մուշեղ Քհն.):
1954, Ազունիտ, Լիբանան:





Չախեն աջ՝ Ֆրրա եւ
Պետրոս Ալեքսեաններ,
Վիվիեն Կիզելեան եւ
Վահրամ Մավեան: 1960,
Լոնտոն:



Ասատուր Կիզելեան եւ Վահրամ Մավեան: 1960 Լոնտոն:





Ա. Շարք: Պետրոս Ալեքսեան, Մարի Նշանեան, Տիրան Արք. Ներսիսեան,
Պսակ Արք. Թումայեան, Մելգոնեանցի օրիորդ մը:
Բ. Շարք: Ֆլորա Ալեքսեան, Գիտ Վրդ. Նազգաշեան, Վիվիէն Կիզելեան,
Նշան Նշանեան, Խաչատուրեան Քին., Ասատուր Կիզելեան,
Վահրամ Մավեան եւ Վանտա Կիզելեան (Սիմոնեանին կողմէ մկրտուած «Շովինար»,
Դարուի Յակոբեան Վարժարանին մէջ: 1960 Լոնտոն:



Վանտա Կիզելեան, Վահրամ Մավեան, Մելգոնեանցի մը
եւ Տիրան Արք. Ներսիսեան: 1960 Լոնտոն:





Չախեն աջ՝ Գրիգոր Սաքամեան, Ասատուր Կիւզելեան, Հայկ Գալուստեան,
Թորոս Թորանեան եւ Պսակ Եպիսկ. Թումայեան: 1966 Լոնտոն:




Ասատուր Կիւզելեան եւ Թորոս Թորանեան: 1966 Լոնտոն:






Վահրամ Մավեան
Կարինէ եւ Արմինէ
Կիւզելեաններու հետ:
1968, Լոնտոն:



Արմինէ Թորանեան, Ասատուր Կիւզելեան, Թորոս Թորանեան
եւ Բիզանդ Բէլվանեան: 2010 Հալէպ:






2001ին նշուեցաւ Հալէպի Կիւղեան Վարժարանի 80ամեակը: Յոբելինական հանդիսութեան նախագահեց Ա. Կիւղեան: Հանդիսութեան ընթացքին տեղի ունեցաւ Կիւղեանի 75ամեակին առիթով հրատարակուած Յուշամատենին զինեձօնը: Այս երկու նկարները ուր կ'երեւին Թորոս Թորանեան եւ Ասատուր Կիւղեան, առնուած են այդ հանդիսութեան ընթացքին:





Աղաղեմիկոս
Էգրաս Հասրաթեան



Պատմական նկար մը, Մոսկուա, 1960, Արեւելագետներու 25րդ Միջազգային Համագումարի ընթացքին առնուած: Տոքթ. Փրոֆ. Սունիթի Քունար Չաթըրճի (ձախին) կը գրուցէ հայագգի մեծ արեւելագետ, Լենինկրատի Հերմիթաժ քանդաքանի տնօրէն Յովսէփ Օրբելիի հետ (ձախէն վերջինը):





Ասատուր Կիզելեան
ակադեմիկոս
Մանասէ Սեւակի հետ: 1966 Լոնտոն:



Տանիմարացի գրող
Երկրն Անտերսըն եւ
Ասատուր Կիզելեան:
1967 Լոնտոն:





ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Վերջին վաթսուն հինգ տարիներու ընթացքին ստացուած գրեթէ բոլոր նամակները պահպանուած են թղթածրարներու մէջ: Գժբախտաբար, իմ գրած նամակներու պատճենները, քիչ բացառութեամբ, չեն պահած: Բարեբախտաբար, Սիմոն Սիմոնեանին գրած նամակներս պահպանուած են անոր արխիւին մէջ եւ այդ պատճառով կը կարծեմ որ անոնք գրեթէ ամբողջական են:

Նամակներուն մէջ նշուած անուններու մասին տրուած են յաճախ հակիրճ՝ երբեմն ալ՝ ընդարձակ տեղեկութիւններ, ըստ տուեալ անձին կամ տեղանունին ներկայացուցած շահեկանութեան եւ մեր տրամադրութեան տակ գտնուող տեղեկութիւններուն: Այն անունները, որոնց մասին կենսագրական տուեալներ չենք կրցած գտնել, չեն ներառնուած «Ծանօթագրութիւններ»ուն մէջ:

Գիրքին մէջ չեն թուագրուած հանրածանօթ երկիրներու, քաղաքներու եւ վայրերու անունները, ինչպէս Փաքիստան, Փարիզ, եւայլն:

«Տես Wikipedia» բացատրութեամբ բնորոշուած են այն անունները, որոնց մասին յաւելեալ տեղեկութիւններ կարելի է գտնել համացանցի յիշեալ հանրագիտարանին մէջ:

* * *

1. Մովսէս Խորենացի

Ե. դարու հայ պատմիչ, որ ծանօթ է նաեւ որպէս հայոց «Պատմահայր»ը: Յաւելեալ տեղեկութիւններու համար տես՝ Khorenatsi Wikipedia:

2. Թորոս Թորանեան

Հանրաճանաչ անձնատրութիւն մըն է հայ իրականութեան մէջ: Ծնած է Հալէպ, 1928ին: Նախնական ուսումը տեղւոյն Կիւլպէնկեան Վարժարանին մէջ ստանալէ ետք՝ յաճախած է Ալեքսիոս Զոլեն (Aleppo College) եւ Սելզոնեան Կրթական Հաստատութիւն: Սոֆիայի մէջ երեք տարեշրջան հետեւած է տնտեսագիտութեան, ապա մեկնած Հայաստան եւ վկայուած որպէս բժիշկ ԵՊՀ-էն: Վերադառնալով Մուրիա՝ Դամասկոսի մէջ մասնագիտացած է որպէս զգայագրութեան (aesthesis) բժիշկ: Թորանեանին համար բժշկութիւնը եղած է լոկ եկամտի աղբիւր: Դեռ նախակրթարանի Դ. դասարանի ուսանող՝ ան ինքզինք նուիրած է գրականութեան. նուիրում՝ որ եղած է անոր կեանքին ուղեցոյցը մինչեւ այսօր: Կարելի է անվարան ըսել, որ Թ.Թ. եղած է հայերէն լեզուի, հայ գրականութեան եւ հայ ժողովուրդի մշակութային արժէքներուն մեծագոյն փրոփականախատներէն մէկը Սփիւռքի մէջ, վերջին վաթսուն տարիներուն՝ արժանանալով մեր զոյգ կաթողիկոսներու՝ ինչպէս նաեւ հայրենիքի եւ Սփիւռքի մտատրականութեան գնահատանքին: Հանգամանօրէն խօսիլ Թորանեանի եւ իր վաստակին մասին՝ պիտի նշանակէր առնուազն հաստատիոր հատոր մը լեցնել: Պատկերացում մը ունենալու համար Մ. Մաշտոցի այս անխոնջ առաքեալին կատարած աշխատանքին մասին, բաւ է նշել որ ան հրատարակած է բանաստեղծութիւններու տասնէօք հատոր, աւելի քան հարիւր անուն արձակ գործ, որոնց մէջ՝ քսան մենագրութիւն, եօթանասունէ աւելի խմբագրական եւ հրատարակչական աշխատանքներ: Անկախ այդ բոլորէն՝ Թորանեան





արաբերենի թարգմանել տուած՝ յառաջաբան գրած եւ հրատարակած է տասներկու՝ իսկ ինք թարգմանած է չորս գիրք:

3. Եղիշէ Չարենց

Բազմազգաթ հայ գրականության բարձ կատարներն մէկը, որուն «Ես Իմ Անոյշ Հաստանի» քերթուածը դարձած է հայ բանաստեղծության «Հայր Մեր»ը: 1937ին սպանուած է Պերիայի կարգադրութեամբ: Տես՝ Yeghishe Charents Wikipedia:

4. Մելգոնեան Կրթական Հաստատութիւն

Հիմնուած է Նիկոսիա, Կիպրոս, 1926ին Գրիգոր եւ Կարապետ Մելգոնեան եղբայրներու բարերարութեամբ եւ Հ.Բ.Ը.Մ.ի հովանաւորութեամբ: Տես՝ Melkonian Educational Institute Wikipedia:

5. Քիւրտ Տաղը

Աֆրիկի մարզին մէջ, Թուրքիոյ սահմանակից տարածաշրջանը ծանօթ է որպէս Քիւրտ Տաղը (քրտական լեռ), ուր կան 366 քրտական գիւղեր:

6. Սովուզ Օլուզ

Աստուր Կիւզեւեանի ծննդավայրը, Կիլիկիա, Ալեքսանտրէթ նաւահանգիստ քաղաքին ինքնաշարժով կէս ժամ հեռաւորութեան վրայ գտնուող գիւղ մը, Ամանոսեան լեռներու լանջին:

7. Աֆրիկ

Աֆրիկ քաղաքը, որ ունի 37.000 բնակիչ, կը գտնուի Հալէպէն շուրջ 60 ք.մ. հեռաւորութեան վրայ: Աֆրիկի մարզը, որ ենթակայ է Հալէպի նահանգապետութեան, ունի 2033 ք.ք. տարածութիւն եւ 490.000 բնակչութիւն: Աֆրիկի մարզն իր մէջ կ'ընդգրկէ 366 քրտական գիւղեր: Աֆրիկն քրտերէնով կը նշանակէ «օրհնութիւն»:

8. Երուանդ Պապայեան

Բազմավաստակ կրթական մշակ, անխոնջ ազգանուէր գործիչ Ե.Պ. ծնած է 1913ին Այնթապ, մահացած է Միացեալ Նահանգներու մէջ՝ 6 Օգոստոս 2014ին: Կիլիկիոյ պարպումին հետեւանքով Պապայեանները կը հաստատուին Հալէպ, ուր Երուանդ ուսումը Կիլիկեան, Հայկազեան եւ Լիսէ Վէյկան կրթական հաստատութիւններուն մէջ ստանալէ ետք, քսան տարեկանին կը նետուի ուսուցչական ասպարէզ: Մինչեւ 1953 կը պաշտօնավարէ Հալէպի Կիլիկեան Վարժարանին մէջ, մայր որպէս ուսուցիչ, ապա՝ տնօրէն: Նոյն տարին կը տեղափոխուի Պէյրութ եւ 32 տարի կը պաշտօնավարէ որպէս Վահան Թէքեան Վարժարանի տնօրէն, միաժամանակ վարելով միութենական պատասխանատու պաշտօններ Հ.Բ.Ը.Մ.ի եւ Թ.Մ. Միութեան մէջ: 1986ին Ե.Պ. հանդերձ ընտանեօք կը հաստատուի Լոս Անճելըս, ուր կը շարունակէ նոյն եռանդով վարել ազգային-միութենական աշխոյժ աշխատանք: Ե.Պ. ութ տասնամեակ անշահախնդիր նուիրումով ծառայած է իր ժողովուրդին եւ մայր հայրենիքին, որպէս ազգային-միութենական գործիչ, գրող, հրապարակագիր, նշանաւոր ատենախօս ու մանաւանդ կրթական մշակ, որ հայրենասիրական անեղծ ոգիով ու ազգային գիտակցութեամբ դաստիարակած է բազմաթիւ սերունդներ, որոնք այսօր իրենց ստացած հոգեկան հարուստ ժառանգը կը բաշխեն հետագայ սերունդներուն: Ե.Պ. արժանացած է բազմաթիւ գնահատագրերու եւ շքանշաններու, ինչպէս՝ «Ս. Սահակ Մեսրոպ»՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Ա.Էն, «Արժանեաց Կրօնական»՝ Լիբանանի Կրթական Նախարարութենէն, Մփիոքահայութեան Հետ Մշակութային Կապի Կոմիտէէն, Պրն. Ալեք Մանուկեանէն, Քալիֆորնիոյ Կառավարիչ ճորճ Տեօքմէճեանէն, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Արամ Ա.Էն, եւայլն: Ե.Պ.ի հրատարակութիւններէն յիշենք՝ «Աշխարհագրութիւն» դասագիրքերու շարքը, Սիմոն Սիմոնեանի եւ Օննիկ Մարգիսեանի համահեղինակութեամբ (1957-1960), «Ժողովուրդին եւ Հայրենիքին Հեյր» (1983), «Պարմութիւն Հ.Բ.Ը.Մ.ի» (1989), «Նոր Այնթապ» անսաբերք (եօթ տարի), «Պարմութիւն Այնթապի Հայոց» Գ. հատոր (1994), «Յիշատակներու Արահեպներով» (1998), «Յաւերժ Երկրասարդ Լույուն» (2002), «Պէտք Չէ Մոռցուիլն» (2009), «Միրուած Դէմքեր, Գիրքեր, Իրագործումներ, եւայլն» (2010): Խմբագրած է իր հօր, Տ. Ներսէս Աւագ Քահանայ Պապայեանի «Pages from my Diary» գիրքը (2000):





9. Բիւզանդ Եղիայեան

Դաստիարակ, կրթական մշակ, հրապարակագիր, պատմաբան, գրող եւ ազգային գործիչ Բ.Ե. ծնած է Ատանա 1899ին, մահացած Վոթըրթաուն (Watertown)՝ 1995ին: Բարձրագոյն ուսումը ստացած է Աթէնքի Ամերիկեան Կրօնագիտութեան Վարժարանի եւ Պըրմինկ-համի Համալսարանին մէջ (University of Birmingham): 1931-1956 եղած է դասախօս Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի Դպրեվանքի մէջ եւ վարած՝ նոյն հաստատութեան ներքին տեսուչի եւ ուսումնապետի պաշտօնները: Բ.Ե. եղած է անաղարտ նկարագրի տէր անուանի կրթական մշակ մը, որուն շունչին տակ պատրաստուած են բազմաթիւ հոգեւորականներ եւ մտաւորականներ: Բ.Ե. հեղինակ է բազմաթիւ յօդուածներու, մենագրութիւններու, արժէքատր տեղեկագիրներու եւ ուսումնասիրութիւններու, որոնց մեծ մասը լոյս տեսած է աշխարհապիտ հայ մամուլի մէջ, իսկ ուրիշներ հրատարակուած են առանձին հատորով: Իր բազմաթիւ աշխատասիրութիւններէն յիշենք միայն երկուքը, որոնք երկար տարիներու տքնաջան աշխատանքի արդիւնք են. «Արանայի Հայոց Պատմութիւն», 1060 էջ (1970) եւ «Ժամանակակից Պատմութիւն Կաթողիկոսութեան Կիլիկիոյ 1914-1972», 946 էջ (1975):

10. Գարեգին Ա. Կաթողիկոս Յովսէփեանց

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս, Գարեգին Յովսէփեանց ծնած է Արցախի Մաղավուզ գիւղին մէջ, 17-12-1867ին: 1890ին ստարած է Էջիածինի Գէորգեան Դեմարանը: Բարձրագոյն կրթութիւնը ստացած է Լայպցիկի Համալսարանին մէջ (1892-96): 1897ին սկսած է դասախօսել Գէորգեան Դեմարանի մէջ: Նոյն տարին ստացած է փիլիսոփայութեան տոքթորայի աստիճան Լայպցիկի Համալսարանէն: 1898ին ձեռնադրուած է կուսակրօն եկեղեցական: Եղած է Գէորգեան Դեմարանի տեսուչ եւ «Արարատ» ամսագրի խմբագիր: 1918ին մասնակցած է Սարտարապատի Դակատամարտին: Երեսնի Համալսարանին մէջ դասաւանդած է հայ արուեստի պատմութիւն եւ հնագիտութիւն: Դարտարապետ Թամանեանի հետ մասնակցած է Հայաստանի Յուշարձանների Պաշտպանութեան Կոմիտէի ստեղծման աշխատանքներուն: Վարած է Գրիմի եւ Նոր Նախիջեանի (1927-33) ինչպէս նաեւ Ա.Մ.Ն.ու (1938-43) թեմերուն թեմակալ առաջնորդի պաշտօնները: 1943ին ընտրուած իսկ 1945ին օծուած է Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ: Վախճանած է 21-06-1952 թ.ին: Հրատարակած է բազմաթիւ ուսումնասիրութիւններ հայ ժողովուրդի պատմութեան տարբեր ժամանակաշրջաններու եւ խնդիրներու լուսաբանութեան նուիրուած, ինչպէս «Չազավանից Ժողովը», «Տարասիւն Օրբելեանի եւ Մինա Խաթունի Սերունդը», «Ազիզբեկներ եւ Նրանց Շինարարական Գործը», «ԺԳ. Կարի Զարարական եւ Հոգեւոր Վերելքը Արեւելեան Հայաստանում», «Հայ-Արարական Բժշկական եւ Մշակութային Յարաբերութեան Խնդիրները», «Խաղբակեանք կամ Պոռնեանք Հայոց Պատմութեան Մէջ», եւայլն: Գ.Կ. ունի մատենագրական բնոյթի գործեր, նուիրուած Մխիթար Սասնեցիին, Խոսրովիկ Թարգմանիչին, Թումա Մեծփեցիին, Մխիթար Այրիվանեցիին: Ժողովրդական բանասիրութիւնը նկատելով հայ ժողովուրդի պատմութեան կարեւոր աղբիւր՝ հասաքած եւ հրատարակած է զանազան նմոյշներ «Փշրանքներ Ժողովրդական Բանասիրութիւնից» խորագրուած հատորով: Գ.Կ. հայ հնագիտութեան, մանրանկարչութեան, գրչութեան արուեստի եւ ձեռագրաց յիշատակարաններու մեծագոյն մասնագէտներէն մէկը համարուած է: Հրատարակած է «Գրչութեան Արուեստը Հին Հայոց Մէջ», «Մանրանկարչութեան Արուեստը Հայոց Մէջ», «Նիւթեր եւ Ուսումնասիրութիւններ Հայ Արուեստի եւ Մշակոյթի Պատմութեան», «Հեթոն Աի Նկարագրող Աւերարանի Մնացորդները», «Յիշարակարանք Ձեռագրաց», եւայլն: Նշեցինք միայն մէկ մասը այն հսկայ աշխատանքին, զոր հայ եկեղեցոյ եւ ժողովուրդի մեծագոյն զանակներէն մէկը ժառանգ ձգած է հետագայ սերունդներուն:

Ասատուր Կիլեղեանի 9 Յուլիս 1970թ. նամակ 27ին մէջ եղած ակնարկը կը վերաբերի հետեւեալ պատմութեան:

Գաշնակցութիւնը Մովսէս Տէր Գալուստեանի միջոցով ճնշում կը բանեցնէր Գարեգին Կաթողիկոսի վրայ, որպէսզի ան, կարգ մը ուրիշ եկեղեցապետներու հետ յայտարարութիւն մը ստորագրէ այն մասին, ըստ որում, հրեաները իրաւունք չունենին անկախ հայրենիք ունենալու: Գարեգին Կաթողիկոս կը մերժէր, պատճառաբանելով որ ինք հոգեւորական է եւ որ-





պէս այդպիսին՝ չի կրնար նման յայտարարութիւն մը ստորագրել: Այդ օրերուն, Վեհափառը Թեհրանէն, Գրիշա Գալուստեան անունով երիտասարդէ մը նամակ մը կը ստանայ, որով նամակագիրը հետեւեալ խնդրանքով կը դիմէր Նորին Սրբութեան.

«Սիրահարուել եմ Անգլիայի Մարգարեթա իշխանուհու վրայ եւ ուզում եմ ամուսնանալ նրա հետ. ուստի խնդրում եմ, որպէս հայոց հոգետր հայրը, իմ անունից իշխանուհու ձեռք խնդրէք ...»

Գարեգին Կաթողիկոս նամակը Միմոն Միմոնեանին կարդալ տալէ ետք, կը հարցնէ.

«Խորհուրդ տուէք, Պրն. Միմոնեան, երկու Գալուստեաններից որ մէկին լսեմ, Գրիշային թէ Մովսէսին...»

11. Հայոց Մարդասիրական Ծննդարան

Թէև 1798ին Յարութիւն Գալուստեան (Aratoon Kaloost) հիմնած էր անձնական քնոյթ ունեցող առաջին հայկական դպրոցը Կալկաթայի մէջ, բայց ազգային ճննարան մը ունենալու գաղափարը յղացած է Աստուածատուր Մուրատխանեան, որ 30 Յուլիս, 1797 թուականին 8000 հնդկական ռուբլի կտակած է այդ նպատակին: Այդ գաղափարը իրականացած է 1821, Ապրիլ 2ին, երբ հիմնուած է Հայոց Մարդասիրական Ծննդարանը, Մուրատխանեանէն ժառանգուած դրամին վրայ գումարելով Մնացական Վարդանեանի ջանքերով հանգանակուած դրամը: 1825ին, կալկաթահայութեան փափաքին ընդառաջելով Յ. Գալուստեան փակած է իր վարժարանը, որուն հետեւանքով աշակերտութիւնը տեղափոխուած է Հայոց Մարդասիրական Ծննդարան: Իր հիմնադրութեան օրէն մինչեւ այսօր, 193 տարի, Հ.Մ. Ծննդարանն առանց դադարի պահած է իր գոյութիւնը, անվճար հայեցի ուսում ջանքերով հնդկահայ, պարսկահայ, իրաքահայ, ինչպէս նաեւ Հեռուոր Արեւելքի երկիրներէն եկած ուսանողութեան: Ներկայիս Ծննդարանը կը գտնուի Մայր Աթոռ Ս. Էջմիածնի վարչական իրաւասութեան ներքոյ: Ուսանողութեան եւ ուսուցչական կազմի մեծ մասը կու գայ Հայաստանէն: Յիշենք նաեւ որ Դաւիթ Դաւթեան անունով կալկաթաբնակ ջողայեցի մեծահարուստ մը, 1922ին հիմնած է Դաւթեան Օրիորդաց Վարժարանը, հայ աղջիկներուն ձրի հայեցի դաստիարակութիւն տալու նպատակով: 1949ին նպատակայարմար գտնուած է, ֆինանսական նկատառումներէ դրդուած, համատեղ ուսում տալ Դաւթեան Օրիորդաց Վարժարանի եւ Հ. Մ. Ծննդարանի ուսանողութեան: Որպէսզի ուսանողուիները շարունակեն բնակիլ Դաւթեան Օրիորդաց Վարժարանի մէջ՝ դպրոցը պահած է իր սեպիական շէնքը, գիշերօթիկ բոլոր յարմարութիւններով:

12. Ազունիէի թոքախտանոց

Ազունիէի Բուժարանը հիմնուած է Մասնըլթենի մէջ (Լիբանան) 1923ին, հովանաւորութեամբ հայ առաքելական, հայ կաթողիկէ եւ հայ աւետարանական եկեղեցիներու: 1931ին հայ կաթողիկէ եկեղեցին յետս կոչած է իր որոշումը, որուն հետեւանքով բուժարանի խնամակալութիւնը մնացած է Կիլիկիոյ Կաթողիկոսութեան եւ Մերձաւոր Արեւելքի հայ աւետարանական եկեղեցիներու հովանիին տակ: Բուժարանը Ազունիէ փոխադրուած է 1938ին: [Stu` www.armeniansanatorium.org](http://Stu`www.armeniansanatorium.org):

13. Թռչնոց Բոյն

Հիմնուած է Լիբանանի Դիպէյլ քաղաքին մէջ 1928ին տանիմարբացի միսիոնար Մարիա Դեքըպսընի ջանքերով, եղեռնէն փրկուած հայ որբերը պատսպարելու նպատակով: [Stu` Birds Nest Armenian Orphanage Wikipedia](http://Stu`Birds Nest Armenian Orphanage Wikipedia):

14. Անդրանիկ Ծառուկեան

Ծնած է 1913ին, Կիւրիւն: Եղեռնէն վերապրած են ինք եւ մայրը միայն: Մեծցած է Հալէպի որբանոցին մէջ: Յաճախած է Հալէպի Հայկազեան Վարժարանը եւ Պէյրութի Հայ Ծննդարանը: 1941ին Հալէպի մէջ հիմնած է «Նայիրի» ամսաթերթը: 1949էն սկսեալ թերթը, նախ Հալէպ՝ ապա Պէյրութ հրատարակուած է որպէս շաբաթաթերթ: Ծառուկեանի խմբագրութեամբ «Նայիրին» հրատարակուած է մինչեւ 1984: Ան նոյն տարին փոխադրուած է Փարիզ, ուր եւ մահացած է 1989ին: 1933-1987 տարիներուն Ծառուկեան հրատարակած է՝ «Եղեռնաբախտը Քերթողներ», «Մոխրամանը», «Առագասարներ», «Թուղթ Առ Երեւան»,





«Մանկութիւն Չունեցող Մարդիկ», «Հին Երազներ, Նոր Ճամբաներ», «Երազային Հալէպը», «Վերջին Ամենող», «Նոր Հայասարան, Նոր Հայեր», «Մէրը Եղեռնին Մէջ» գիրքերը: Յետ մահու հրատարակուած են՝ «Առկայծող Հայեր Երոսպայի Լոյսերուն Մէջ» եւ «Ամերիկեան Կողմն Աշխարհի» հատորները:

15. «Նայիրի»

Ա. Ծառուկեանի կողմէ Պէյրութ հրատարակուած շաբաթաթերթ, որ նախ լոյս տեսած է Հալէպի մէջ, որպէս ամսաթերթ, 1941-52 տարիներուն:

16. Էդգար Յովհաննիսեան (1930-1998)

Սովետահայ անուանի երաժշտահան (կոմպոզիտոր): Աւարտել է երբ Երեւանի Պետական Երաժշտանոցը՝ աւարտաճառը պատրաստած է Մոսկուա, Արամ Խաչատուրեանի հսկողութեան տակ: Յովհաննիսեանի «Երեւան-Էրեբունի» եւ «Սարտարապատ» երգերը կը վայելեն համազգային ժողովրդականութիւն: Յատկապէս տեղեկութիւններու համար տես՝ Edgar Hovhannisyán Wikipedia:

17. Լեւոն Հախվերդեան

Ակադեմիկոս Լեւոն Հախվերդեան ծնած է Կիրովական, 1924ին: Աւարտած է Երեւանի Թատերական Ինստիտուտը: 1967ին նշանակուած է Գիտութիւններու Ակադեմիայի Թատերական Ինստիտուտի տնօրէն: Ունի բազմաթիւ ուսումնասիրութիւններ նուիրուած հայ գրականութեան, թատրոնին եւ թատերական արուեստին: Հախվերդեան նկատուած է մեր մեծագոյն թումանեանազէտներէն մէկը: Ան բարեկամական սերտ կապեր հաստատած է մեր գրողներէն շատերու հետ: Եղած է Պարոյր Մեակի մտերիմներէն: Կենսագրական մանրամասնութիւններու համար տեսնել Լեւոն Հախվերդեանի եւ Արմէն Յարութիւնեանի նամակագրական երկխօսութիւնը՝ «Կեանքը Նամակագրութեան Մէջ» գիրքը, որ լոյս տեսած է Երեւան, 2008ին:

18. ԱՕՔՄ

Արտասահմանեան Երկիրներու Հետ Բարեկամութեան եւ Մշակութային Կապի Ընկերութիւն, հիմնուած՝ 1944ին: Մինչեւ Սփիւռքահայութեան հետ Մշակութային Կապի Կոմիտէի ստեղծումը (1964), ԱՕՔՄ պատասխանատու էր նաեւ Սովետական Հայաստանի եւ սփիւռքահայութեան մշակութային փոխյարաբերութիւններուն:

19. Գալուստ Կիլպէնկեան Հիմնարկութիւն

Միջազգային բարեսիրական հիմնարկութիւն, որ հիմնադրուած է Լիզպոնի մէջ 1956ին, համաձայն Գալուստ Կիլպէնկեանի կտակին: Տես՝ Gulbenkian Foundation Wikipedia:

20. Բիզանդ Թօփալեան

Ծնած է 1902ին, Այնթապ: Աւարտած է ծննդավայրի Ներսէսեան Վարժարանը: Կիլիկիոյ պարպումին հետեւանքով հաստատուած է Հալէպ, ուր զբաղած է գրաշարութեամբ: 1924ին հիմնած է իր սեպհական «Արաքս» տպարանը: 1930ին տեղափոխուած է Փարիզ, ուր հիմնած է տպարան մը, դարձեալ «Արաքս» անունով եւ շարունակած՝ նոյն գործը: Բիզանդ գրել սկսած է փոքր տարիքէն: Հալէպի մէջ հրատարակած է «Մեղու» թերթը: Տաղանդաւոր բանաստեղծ եւ նկարիչ՝ Փարիզի մէջ հրատարակած է «Անդաստան» հանդէսը: Ծանոթի հետ մասնակցած է «Մենք» գրական խումբի կազմութեան եւ համանուն պարբերականի հրատարակութեան: 1930-1964 տարիներուն հրատարակած է «Այգահանդէս», «Արեւագալ», «Համայնական Մեր», «Հրախաղութիւն», «Արջանագիր», «Լուսածնունդ» բանաստեղծութեանց հատորները, որոնց մեծ մասը նկարագարող է ինք՝ հեղինակը: «Արջանագիր» լոյս տեսած է նաեւ ֆրանսերէն լեզուով, «Jinserit» վերնագիրով: Թօփալեան հեղինակն է նաեւ ֆրանսերէն «Le Jour du Monde» հատորին: Անհատական ցուցահանդէսներ տուած է Փարիզ, Պէյրութ եւ Երեւան: Իր շարք մը գեղանկարները կը գտնուին հայկական եւ օտար թանգարաններու մէջ: Բիզանդ Թօփալեանի «Արաքս» տպարանը ֆրանսահայ ինչպէս նաեւ Ֆրանսա այցելող հայ մտաւորականութեան ժամադրավայրը եղած է: Մահացած է 1970ին, Փարիզի մէջ:

21. «Արեգակ»

Լոնտոն հիմնուած ամսաթերթ (1964-1966): Հիմնադիր տնօրէն՝ պարսկահայ առեւտրա-





կան Հայկ Գալուստեան: Թերթը խմբագրած է նախ Գրիշ Դաթեան, իսկ 1965 Յունուարէն մինչև քերթին փակուիլը, Օգոստոս 1966՝ Ասատուր Կիւզելեան:

22. Իվօն Գասարճեան

Վահրամ Մավեանի տիկինը:

23. Խաչիկ Մթրըպեան կամ Kaye Mtrebian

Բնիկ կիպրահայ: 75 սթերլինով եկած է Լոնտոն եւ հիմնած՝ Brentford Nylons ընկերութիւնը: 70ական թուականներուն ընկերութիւնը ունեցած է աւելի քան 3500 պաշտօնէայ, բազմաթիւ գործարաններ եւ 65 վաճառատուն: Մթրըպեան եղած է չափազանց ազգասէր հայ մը, որ նիթապէս օժանդակած է բրիտանահայ բոլոր կազմակերպութիւններուն: Ան իր գործօն մասնակցութիւնը բերած է համայնքի ազգային, մշակութային եւ եկեղեցական կեանքին: Եղած է անդամ Լոնտոնի Համայնքային Եկեղեցական Խորհուրդի: Խ.Մ. սրտի կաթուածի հետեւանքով երկար ժամանակ մնացած է հիւանդանոց: Հակառակ բժիշկներու ախտաճանաչումին, ըստ որում՝ ան մինչև կեանքին վերջը պիտի գրկուէր քալելու եւ խօսելու կարողութենէն՝ Մթրըպեան մէկ տարուան ընթացքին սկսած է եւ քալել, եւ խօսիլ: Անոր հիւանդութեան շրջանին, Brentford Nylons սնանկ յայտարարուելով՝ յանձնուած է դատարանի տնօրինութեան: Մահացած է 15 Գեկտեմբեր 1976ին, 52 տարեկանին: Լոնտոնի «The Guardian» թերթը ամոր մահուան առիթով գրած է. «Խաչիկ Մթրըպեան, գաղթական աղքատ հայը, որ ոչինչէն կառուցեց Brentford Nylons կայսրութիւնը, որուն տարեկան վաճառքը հասարակական հինգ միլիոն սթերլինի»:

24. Յարութիւն Այվազեան

Սաղիմահայ կրթական մշակ եւ մտաորական: Երկար տարիներ, որպէս ուսուցիչ պաշտօնավարած է Կիպրոսի Մելգոնեան Կրթական Հաստատութեան մէջ: Լոնտոն հաստատուած է եւ շարունակած՝ ուսուցչական պաշտօն վարել անգլիական վարժարանի մը մէջ: Յ.Ա. իր գործօն մասնակցութիւնը բերած է լոնտոնահայութեան կրթական, մշակութային եւ համայնական կեանքին:

25. Վեհանոյշ Թեքեան

Գրող, բանաստեղծուի: Ծնած է Պէյրութ, 1948ին: Վեհանոյշի գրական «կնքահայրը» եղած է Սիմոն Սիմոնեան: Ան աշխատակցած է «Սփիւռք»ին 1966-73 թուականներուն: 1969ին «Մեան» հրատարակչատունը լոյս ընծայած է Թեքեանի «Կասկոյր Ապրիլ» բանաստեղծութիւններու հատորը, իսկ 1974ին, «Համազգայինի Վահէ Սեթեան Հրատարակչութիւնը»՝ «Ուրբէ»ն: Վ.Թ. հրատարակած է նաեւ հետեւեալ երկերը. «Ճեղքուած Մանրակար» (1977), «Կիզակէտ» (1978), «Նշանագիր» (1987), «Բազմածուսի Աշխարհ» (1993) եւ «Տոմար» (1997): Թեքեան այժմ կ'ապրի Ա.Մ.Ն.:

26. Երուանդ Պարսումեան

Ծնած է Այնթապ 1910ին: Ս. Սիմոնեանի մտերիմ ընկերներէն: «Սփիւռք»ի աշխատակից: Իր ճարտարագիտական աշխատանքներուն զուգահեռ՝ զբաղած է գրականութեամբ: Հրատարակած է հետեւեալ գիրքերը. «Ես ինձի Հէտ» քերթուածներ (1944), «Երգ Երգոց» պոէմ (1964), «Պրիսմակ» քերթուածներ (1966), «Մանուկն ու Մարդը» քերթուածներ (1971), «Ծագէ ի Ծագ» պատմուածքներ (1973), «Ծագէ ի Ծագ» Բ. հատոր (1974), «Քառուղի» քերթուածներ (1974), «Գիշերներ» պոէմ (1979), «Ծագէ ի Ծագ» Գ. հատոր (1979), «Արեւորդիներ» վէպ (1994): Մահացած է Պէյրութ 2004ին:

27. Երուանդ Գոչունեան

Ծնած է Դամասկոս: Նախնական եւ երկրորդական կրթութիւնը ստացած է Այնճարի Հայ Աւետարանական Երկրորդական Վարժարանը: Հոն ալ աշխատակցած է ուսանողական «Շիրազ» թերթին: Ուսումը շարունակած է Հայկազեան Քոլէճ եւ աւարտած զայն՝ անգլերէն լեզուի եւ գրականութեան գծով: Գոչունեանի գրական եւ գրադատական առաջին փորձերը հրատարակուած են Սիմոն Սիմոնեանի խմբագրած «Սփիւռք»ին մէջ, Պէյրութ: Գոչունեան 1975էն ի վեր կը բնակի Ա.Մ.Ն., ուր աշխատակցած է «Ապրիլ»ին, «Նոր Հայ»ին եւ Քանատայի «Հորիզոն» գրական յաւելուածին, ինքնագիր գրութիւններով եւ թարգմանու-





քիւններով: Կատարած է նաեւ քանի մը հայերէն եւ անգլերէն հատորներու խմբագրական աշխատանքը:

28. Գեորգ Չ. Կաթողիկոս Չէօրէքճեան

Ծնած է Նոր Նախիջեւան 1868ին, կաթողիկոս օծուած՝ 1945ին, վախճանած՝ 1954ին: Steu` Catholicos George VI of Armenia Wikipedia:

29. «Սեւան»

Տպարան եւ հրատարակչատուն, հիմնուած 1955ին Սիմոն Սիմոնեանի կողմէ, Պէյրութի կեդրոնական շուկայի Ղալոուլ փողոցին մէջ:

30. «Սփիւղ»

1958-1974ին, Սիմոն Սիմոնեանի կողմէ հիմնուած եւ խմբագրուած շաբաթաթերթ, 1975 Յունուարէն սկսեալ մինչեւ 1989 արտօնատէր եւ խմբագիր՝ Գեորգ Աճեմեան:

31. Արմէն Դարեան (Ալֆոնս Աղղաթեան) (1922-1990)

Գրող, հրապարակագիր, խմբագիր, թարգմանիչ, հասարակական գործիչ: Արմէն Դարեան գրած է պատմուածք, վիպակ, վէպ: Իր գործերէն յիշենք՝ «Մեր Հացը», «Կարօր եւ Կեանք», «Խարիսխէն Հեռու», «Չակի Սը Համար», «Լեռը եւ Տունը»: Յետ մահու հրատարակուած են անոր «Նահապետիկն Կօշիկները» վէպն ու վիպակներու հատոր մը՝ «Երկու Եղանակ»:

32. Օննիկ Սարգիսեան

Հայերէն լեզուի մասնագէտ, վաստակաւոր դաստիարակ, մտաւորական, գրող եւ հրապարակագիր: Ծնած է Սասուն, 14 Մայիս 1914ին: Նախնական ուսումը ստացած է Հալէպի Կիլիկեան եւ Հայկազեան վարժարաններուն մէջ, ուր որպէս հայրենակից եւ մտերիմ դասընկեր ունեցած է Սիմոն Սիմոնեանը: 1926-1932ին երկրորդական ուսումը ստացած է Կիպրոսի Հ.Բ.Ը.Մի նորաբաց Մելգոնեան Կրթական Հաստատութեան մէջ, հայերէնի եւ հայ գրականութեան ուսուցիչ ունենալով Յ. Օշականը: Մելգոնեանէն շրջանաւարտ՝ ուսուցչական պաշտօն վարած է նախ Ազգի, ապա՝ Հալէպի հայկական վարժարաններուն մէջ (Կիլիկեան, Սահակեան, Ուսումնասիրաց): Այդ տարիներուն Օ. Սարգիսեան եւ Ս. Սիմոնեան պատրաստած են հայերէն լեզուի «Արագած» դասագիրքերու շարքը: 1948-50 տարիներուն, որպէս ուսուցիչ, պաշտօնավարած է Մելգոնեան Կրթական Հաստատութեան մէջ: 1950ին տեղափոխուած է Պէյրութ, ուր վարած է, բացի Տէմիրճեան Վարժարանի տնօրէնութենէն, նաեւ Յովակիմեան-Մանուկեան Վարժարանի հայերէն լեզուի ուսուցչի պաշտօնը: Երկար տարիներ եղած է Թէքէեան Մշակութային Սիութեան ատենապետ, ինչպէս նաեւ «Շիրակ» գրական ամսագրի խմբագիր: 1985ին Հայաստանի կառավարութիւնը Օ. Սարգիսեանը պարգևատրած է «Մեսրոպ Մաշտոց» շքանշանով: 2007ին լոյս տեսած են Օ. Սարգիսեանի հեղինակած «Գիր եւ Ծանապարհ» եւ «Գրաքննադատական Երկեր» հատորները: Մահացած է 1992ին, Մ. Նահանգներու մէջ:

33. Օշին Գրգեաշարեան

Լիբանանահայ նկարիչ:

34. Միսաք Քեհեայեան

Սիմոնեանի աշակերտներէն: Եղած է տպարան «Սեւան»ի պաշտօնէայ (1957-1958): Արտագաղթած է Ա.Մ.Ն.:

35. Ստեփանոս Գաշտեցի

Ծնած է 1653ին, Նոր Ջուղա: Մահուան վայրն ու թուականն անյայտ են: Բանաստեղծ, հանելուկագիր, ժամանակագիր, հրապարակախօս: Մինչեւ Շահ Աբբասի կազմակերպած բռնագաղթը, նախնիները ապրած են Գողթան գաւառի Գաշտ գիւղը: Սկզբնական կրթութիւնը ստացած է Նոր Ջուղայի Ամենափրկչեան Վանքին մէջ: Չեռնադրուած է սարկաւազ, բայց հրաժարած է կրօնաւոր դառնալ եւ նուիրուած՝ վաճառականութեան: Շրջած է շատ մը երկիրներ: Գաշտեցին գրած է բազմաթիւ երգիծա-պարսաւական եւ խրատական-ինաստասիրական տաղեր, որոնք պատմական, ազգագրական, բարբառագիտական եւ բանահիւսակական արժէք ունին: Գրած է նաեւ աշխարհիկ բովանդակութեամբ քսաներկու հանե-





լուկ, ինչպես նաև գրուքին մը, նոյն գիրքին մէջ, հանելուկներու ստեղծման նոր հնարանքներու մասին: Դաշտեցիի գրչին կը պատկանին՝ «Կարգ Թագաւորաց Հնդկաց», «Մաղախ Փշրանք», «Խնդիր Ուղղութեան» եւ «Կոչնակ Եշմարտութեան» գործերը:

36. Ստեփան Մալխասեանց

Ծնած է Ախալցխա 1857ին, մահացած Երեւան՝ 1947ին: Ակադեմիկոս Մալխասեանց եղած է ՀԳԱ-ի հիմնադիր անդամներէն: Երկրորդական ուսումը ստացած է Էջմիածնի Գէորգեան Դեմարանի՝ իսկ բարձրագոյնը՝ Ս. Փեթրոսպոլիի Համալսարանի Արեւելեան Լեզուներու Ֆակուլտետին մէջ: Աւարտած է նաև նոյն համալսարանի Հայ Սանսկրիտ եւ Հայ Վրացական բաժինները: Մալխասեանցի բանասիրական գործերէն յիշենք՝ «Ուսումնասիրութիւն Փասարոս Բիզանդի Պարմութեան», «Սեբէնոսի Պարմութիւնը եւ Մովսէս Խորենացի», «Խորենացու Առեղծոսածի Շուրջ», «Դասընթաց Հայոց Մարենագրութեան Պարմութեան»: Իր կորոլային գործերէն մէկն է «Հայերէն Բացարարական Բառարան»ը (4 հատոր), հրատարակուած 1943-1945ին եւ արժանացած պետական մրցանակի՝ 1946ին: Մալխասեանց կատարած է նաև թարգմանութիւններ, որոնցմէ յիշենք՝ Շէյքսպիրի «Լիր Թագաւոր»ն ու «Մակբէթ»ը:

37. Վահան Փոլատեան

Ծնած է Քեսապ: Բարձրագոյն ուսումը ստացած է Պէյրոսի Ամերիկեան Համալսարանին մէջ: 1952ին նշանակուած է տնօրէն Հ.Մ. Դեմարանի. պաշտօն մը՝ զոր վարած է մինչեւ 1988, երբ Հայաստանի մէջ անսպասելիօրէն մահացած է կուրաղիքի պայթումով:

38. Ասողիկ Եպս. Ղազարեան (ապա՝ Արք.)

Ծնած է 1909ին: Մեծ Եղեռնին կորսնցուցած է ծնողները: Աւարտել է ետք Պաղտատի Ազգային դպրոցը՝ ընդունուած է Երուսաղէմի Ժառանգաւորաց Վարժարանը: Կուսակրօն քահանայ ձեռնադրուած է 1932ին, իսկ 1937ին նշանակուած՝ հոգեւոր հովիտ՝ Ծայրագոյն Արեւելքի հայ եկեղեցիներուն: Բ. Համաշխարհային Պատերազմին, երբ կը գտնուէր Մանչուրիա, Չինաստան, որպէս հովիտ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցոյ, ձերբակալուած է տարուած է ճարմնական ճամբար, ուր մնացած է մինչեւ պատերազմի աւարտը որպէս զերի:

Ի դէպ է նշել որ Մանչուրիայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին կառուցուած է 1932ին: 1957ին Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Ա. Ասողիկ Եպիսկոպոսը նշանակած է Հնդկաստանի եւ Ծայրագոյն Արեւելքի Առաջնորդ եւ Կաթողիկոսական Պատուիրակ: Այս անբասիր եկեղեցականը, «յորում ոչ զոյ նենգութիւն», բոլորէն սիրուած, բոլորի յարգանքին արժանացած անձ մը՝ զոր Գարեգին Կաթողիկոս Յովսէփեանց բնութագրած է որպէս «Կենդանի Նահատակ»՝ ենթարկուած է Դերենիկ Եպիսկոպոս Փոլատեանի հալածանքներուն: Ընդգծենք որ Դերենիկ Եպիսկոպոս, երբ այցելած է Հնդկաստան եւ Ծայրագոյն Արեւելք, պաշտօնական ոչ մէկ հանգամանք ունեցած է: Դերենիկ Եպիսկոպոսի կամայական արարքներուն որպէս հետեւանք՝ Հնդկաստանի եւ Ծ. Արեւելքի համայնքներն իրենց անդորրն այն աստիճան կորսնցուցած են, որ առաջնորդ սրբազանը ստիպուած հետեւեալ շրջաբերականը դրկած է թեմի հոգեւորականներուն եւ եկեղեցիներու վարչութեանց.

«ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ - ՆԱՄԱԿ

Հեռաւոր Արեւելքի մեր թեմի Արժանապատիւ հարց եւ

Պատուարժան Եկեղեցական խորհուրդներուն,

Ըստ Հայաստանեայց Եկեղեցոյ կարգաց եւ կանոնաց, ոեւէ եկեղեցական իր թեմէն դուրս ուրիշ թեմի մը մէջ պաշտօն չի կարող կատարել: Հիմնուելով վերոյիշեալ կանոնադրութեան վրայ, կը հրահանգենք ձեր սիրելիութեանց, յետ այսու մեր թեմէն ներս չքաջալերել մնան անպաշտօն եկեղեցականները պաշտօն կատարելու, առանց առաջնորդարանի գիտութեան կամ արտօնութեան:

Այդպիսիները իբրեւ դասալիքներ, թողած իրենց եկեղեցիները, զանազան պատճառներով կը շրջին երկրէ երկիր եւ եկեղեցիներէ եկեղեցիներ, պատճառ դառնալով անկարգութեանց եւ տեղի տալով դժգոհութեանց ու պառակտումի:





Չայս տեղեկագրելով, կը յուսամ որ մեր եկեղեցոյ դարաւոր օրէնքներու պաշտպանութեան գորավիզ պիտի հանդիսանաք:

Աստղիկ Եպիսկոպոս, Կաթողիկոսական Պատուիրակ եւ Առաջնորդ Հեռաւոր Արեւելքի Թեմի Հայոց:

Կալկաթա, 20 Յուլիս, 1958»:

39. Նուպար Քէշիշեան Տես՝ Վազգէն Վրդ. Քէշիշեան Ծ. 247:

40. Հրայր Սիմոնեան

Հայոց Մարդասիրական Դեմարանի շրջանաւարտներէն, որ ուսումը շարունակած է Պէյրութի մէջ:

41. Ներսէս Նալպանտեան

Տէր Կարապետ Քին. Նալպանտեանի որդին, որ Հալէպի հանդիսութիւնները ծաղկեցուցած է իր ջութակով:

42. Նարինէ-Վիվիէն Ալեքսեան = Վիվիէն Կիզելեան

Ա. Կիզելեան Հայոց Մարդասիրական Դեմարանի օտար անուն ունեցող իր աշակերտուհիներուն տուած է հայկական անուններ: Օրինակ՝ Մանտրան եղած է Անգինէ, Տորոթին՝ Աստղիկ, Պրենտան՝ Յողիկ, եւայլն: Բնական է իր տիկինը չէր կրնար բացառութիւն կազմել, ուստի անոր ալ տուած է՝ Նարինէ անունը: Արդ, Վիվիէնն ու Նարինէն նոյն անձն են:

43. «ՈՂՈՒՅ»

Երգիծական պատկերազարդ հանդէս, որ սկսած է լոյս տեսնել 1954ին, Երեւան:

44. Յովիկ, Մարալ, Վարդան, Տարօն, Սասնիկ

Աւագութեան կարգով Սիմոնեանի հինգ զաւակները: Յովիկ կ'ապրի Զուիցերիա, Մարալ՝ Մ. Նահանգներ, Վարդան՝ Անգլիա, Տարօն՝ Մեծուտական Արաբիա եւ Յունաստան, Սասնիկ (Սասուն)՝ Լիբանան:

45. Հրաչեայ Աճառեան

Ծնած է Պոլիս 1876ին, վախճանած Երեւան՝ 1953ին: Կը նկատուի մեծագոյն հայ լեզուաբանը: Տես՝ Hrachia Adjarian Wikipedia:

46. Մեսրոպ Գույումճեան

Գահիրէի մէջ 1950ին հրատարակած է «Ընդարշակ Բառարան Հայերէնէ Անգլերէն», իսկ 1961ին՝ «Ընդարշակ Բառարան Անգլերէնէ Հայերէն» բառարանները:

47. Անոյշ Աբրահամեան

Պարսկահայ մտաւորական, մանկավարժ: Հայոց պատմութեան դասագրքի հեղինակ:

48. Խաչիկ Սամուէլեան

Իրաւագէտ, պատմաբան, ազգագրագէտ, մանկավարժ, թարգմանիչ: Ծնած է 1873ին, մահացած՝ 1940ին: Իրաւաբանական կրթութիւնը ստացած է Փեթերսպուրկի Համալսարանին մէջ: Աւարտած է նաեւ Ենայի Համալսարանը: Երկար տարիներ դասախօսած է Երեւանի Պետական Համալսարանի եւ Մանկավարժական Ինստիտուտի մէջ: Ունի բազմաթիւ մեծարժէք աշխատութիւններ, որոնցմէ յիշենք՝ «Հայոց Հին Իրատունքը եւ Նրա Հետազոտութեան Մեթոդը», «Հայոց Ժառանգական Իրատունքը», «Իրատունք եւ Կրօն», «Հայ Նահապետական Գերդասարան», «Միխիթար Գոշի Դասարանագիրքը ու Հայոց Քաղաքական Իրատունքը», «Հայ Հին Իրատունքի Պատմութիւն», «Հին Հայաստանի Կուլտուրան» (եռահատոր) եւ բազմաթիւ այլ աշխատասիրութիւններ:

49. Լէոյ

Բուն անունով՝ Առաքել Բարախանեան, ծնած է 1860ին, Շուշի եւ մահացած Երեւան 1932ին: Գրող, հրապարակագիր, գրականագէտ: Ուսուցչական պաշտօն վարած է Էջմիածինի Գեորգեան Դեմարանին մէջ, ապա մեկնած Թիֆլիս եւ նուիրում՝ զիտական աշխատանքի: 1924ին հրախրուած է Հայաստան եւ Պետական Համալսարանի մէջ դասաւանդած հայագիտական տարբեր առարկաներ, մինչեւ մահը: Լէոն աւելի քան կէս դար աշխատակցած է հայ պարբերական մամուլին («Մշակ», «Արձագանգ», «Արմենիա», «Մուրճ», «Հանդէս Անսօրեայ», «Տարազ», «Հորիզոն», եւայլն): Տպագրած է հարիւրաւոր քննադատական





յօղումներ, վիպակներ, պատմագիտական եւ գրականագիտական ուսումնասիրութիւններ: Բացի «*Հայոց Պայրութիւն*» եռահատոր մեծարժէք աշխատանքէն՝ Լեւոն գրած է բազմաթիւ ուրիշ արժէքատուր աշխատասիրութիւններ, որոնցմէ յիշենք՝ «*Հայկական Տպագրութիւն*», «*Յովսէփ Կաթողիկոս Արղղութեան*», «*Սրեփանոս Նազարեանց*», «*Գրիգոր Արծրունի*», «*Ս. Մեսրոպ*», «*Հայոց Հարցը*», «*Հայ Գրքի Տօնը*», «*Վանի Թագաւորութիւնը*», «*Հայոց Հարցի Վաւերագրերը*», «*Անի*»: Լեւոն գրած է նաեւ գեղարուեստական ստեղծագործութիւններ, որոնցմէ յիշենք՝ «*Մնայապաշտութեան Քուրմը*», «*Արնագին*», «*Այծարածը*», «*Պանդուխտ*», եւայլն:

50. «Սովետական Հայաստան», «Սովետական Գրականութիւն», «Սովետական Արուեստ», «Սովետական Մանկավարժ», «Պիոներ»

Սովետական Հայաստան հրատարակուած թերթեր:

51. Մամբրէ Արք. Սիրունեան

Եգիպտահայոց Թեմի առաջնորդը:

52. «Միականի» Տեա՛ Դերենիկ Եպիսկոպոս Փոլատեանին Ծ. 156:

53. Խաչատուր Աբովեան

Ծնած է 1808ին եւ անյետացած՝ 1948ին: Բանաստեղծ, վիպագիր եւ կրթական մշակ: Կըր նկատուի արեւելահայ աշխարհաբար գրականութեան հիմնադիրը: Տեա՛ Khachatur Abovyan Wikipedia:

54. Յազկերտ

Սասանեան Կայսրութեան 6րդ թագաւորը, որ իշխեց 438-457 տարիներուն: Յազկերտի անունը մեր պատմութեան մէջ առնչուած է Վարդանանց Պատերազմի հետ:

55. Մեսրոպ Թաղիաղեանց (1803-1858)

Ուսումը ստացած է Էջմիածին: 1824ին մեկնած է Հնդկաստան եւ կրթութիւնը շարունակած՝ Կալկաթայի Անգլիկան Եպիսկոպոսական Դեմարանին մէջ: 1831 թուականէն սկսեալ ունեցած է աստանդական կեանք, ուսուցչական պաշտօն վարելով Հայոց Մարդասիրական Դեմարանի, Նոր Ջուղայի Ամենափրկչեան Վանքի, Էջմիածնի, Թաւրիզի եւ Կ. Պոլսոյ վարժարաններուն մէջ: 1839ին Թաղիաղեանց վերադարձած է Կալկաթա, ուր հրատարակած է «*Մեսրոպեան Այբեանարան*», «*Մեսրոպեան Շարադրիչ*», «*Պարմութիւն Հին Հնդկաստանի*», «*Պարմութիւն Պարսից*» գիրքերը: 1846ին Կալկաթայի մէջ հիմնած է Սուրբ Սանդուխտ Երկսեռ Վարժարանը: 1847ին հրատարակած է «*Ճար Դաստիարակութեան Օրհորդաց*», «*Թութակ Թաղիաղեանց*» բանաստեղծութիւններու ժողովածուն եւ «*Սօս եւ Սօնդիպի*» պոէման: Կալկաթայի մէջ խմբագրած է «*Ազգասէր*» եւ «*Ազգասէր Արարարեան*» հանդէսները: 1847ին հրատարակած է «*Ճանապարհորդութիւն ի Հայս*» գիրքը: 1858ին հայրենիք մեկնելու ճամբուն վրայ, հիւանդութեան պատճառով կանգ արած է Պարսկաստանի Շիրազ քաղաքը, ուր եւ մահացած է:

56. Պետրոս Ալեքսեան կամ Փիթրը Ալեքսի

Ջուղայեցի Տէր Բարսեղ Քհն. Ալեքսեանի որդին, ծնած է Նոր Ջուղա 1898ին: Հայրը, երբ նշանակուած է Կալկաթայի Ս. Նազարէթ Եկեղեցոյ հոգեւոր հովիւ, իր հետ տարած է նաեւ Պետրոսը, որ ուսումը ստացած է նախ Հ.Ս. Դեմարանի՝ ապա St. Xaviers College մէջ: Փիթրը Ալեքսին (այսպէս անուանած են զինք հնդկահայերը) երիտասարդ տարիքէն սկսած է առեւտուրի, արտածելով հնդկական զանազան արտադրանքներ Ծայրագոյն եւ Սիջին Արեւելք, Երոպա, Հիւսիսային եւ Հարաւային Ամերիկա: Եղած է հնդկահայ համայնքի ամենէն սիրուած ու յարգուած ազգայիններէն մէկը: Երկար տարիներ ամբողջական նուիրումով ծառայած է եկեղեցիին, որպէս եկեղեցական, իսկ Հ.Ս. Դեմարանին՝ իբրեւ հոգաբարձու: Պ.Ա. կատարած է շատ մը բարերարութիւններ թէ՛ Հնդկաստանի, թէ՛ արտասահմանի, թէ՛ Հայաստանի մէջ: Իր նուիրատուութեամբ նորոգուած եւ որմնանկարներով զարդարուած է Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոցի շիրիմն ու անոր վրայ կառուցուած եկեղեցին: Իր բարերարութեանց՝ ինչպէս նաեւ երկարամեայ ազգանուէր ծառայութեան առ ի գնահատանք, Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսը 1965ին զինք պարգեւատրած է «Ս. Գրիգոր Լուսաւորիչ» շքանշանով: Մահացած է Լոնտոն, 1974ին:





57. Վազգէն Ա. Կաթողիկոս Պաճեան

Վազգէն Ամենայն Հայոց Կաթողիկոս Մալապար Եկեղեցոյ Պատիւոս Կաթողիկոսին հրաւերով, 15 Նոյեմբեր 1963ին այցելած է Հնդկաստան, ուր մնացած է մինչեւ 17 Դեկտեմբեր: Նորին Սրբութիւնը ջերմ ընդունելութեան արժանացած է Հնդկաստանի Նախագահ Տոքթ. Բատաքիշնայի, Վարչապետ Ճավահարլալ Նեհրուի, բազմաթիւ քաղաքական, եկեղեցական եւ մտաւորական երեսելի անձնատրութիւններու կողմէ Հնդկաստանի տարբեր շրջաններուն մէջ, իր շրջապատյոյ ընթացքին: Ի դէպ է նշել, որ հարաւային Հնդկաստանի Քերալա Նահանգին մէջ, ուր կը գտնուի Մալապար Եկեղեցոյ Քոթթայամ կաթողիկոսանիստ քաղաքը, 250,000 հաւատացեալ հնդիկներ դիմաւորած են հայոց Հայրապետը: Վեհափառի շքախումբին մաս կազմած են Երուսաղէմի Հայոց Պատրիարք Եղիշէ Արք. Տէրտերեան, Թիֆլիսի առաջնորդ Կոմիտաս Եպս. Տէր Ստեփանեան, Արսէն Վրդ. Պերպերեան, «Էջմիածին» բերքի խմբագիր Արթուն Հատիտեան եւ որպէս բարգձման՝ Ասատուր Կիւզելեան: Կենսագրական տեղեկութիւններու համար տես՝ Vaghen I Wikipedia:

58. «Քէօր» Տես՝ Դերենիկ Եպիսկոպոս Փոլատեան Ծ.156:

59. Ճավահարլալ Նեհրու (Jawaharlal Nehru)

Եղած է Հնդկաստանի առաջին վարչապետը, Կանտիի օգնականը ազատագրական շարժման մէջ եւ կեդրոնական դէմքը 20րդ դարու հնդկական քաղաքականութեան: Ծնած է 1889ին, մահացած՝ 1964ին: Տես՝ Jawaharlal Nehru Wikipedia:

60. Պոկասն Կենպարսկի

Սիմոն Սիմոնեանի լեռն մտաւորական բարեկամը, որ հայ դատին նուիրուած հրապարակագրական կարեւոր աշխատանք կատարած է:

61. Սունիթի Քումար Չաթթրճի

Տոքթ. Սունիթի Քումար Չաթթրճի (Dr. Chatterjee Suniti Kumar) մեծանուն հնդիկ լեզուաբան, բանասէր, արեւելագէտ եւ պետական գործիչ, Պենկալ Նահանգի Օրէնսդիր Ժողովի նախագահ՝ եղած է մտերիմ բարեկամը աշխարհառշակ գրող Ռապինտրանաթ Թակորի, որ իր գիրքերէն երկուքը ձօնած է անոր: Չաթթրճին եղած է հայ ժողովուրդի անկեղծ բարեկամներէն մէկը, որ ամենուր պաշտպանած է մեր իրաւունքներն ու ծանօթացուցած մեր արժէքները՝ հնդիկ եւ միջազգային շրջանակներուն: Ան, ի միջի այլոց, աշակերտած է Անթուան Մէյլէի (Antoine Meillet) Փարիզի մէջ եւ անկէ տրված՝ իր իսկ խօսքերով, «հայ ժողովուրդի մասին շատ բան»: Անթուան Մէյլէ եղած է նաեւ Հ. Աճառեանի ուսուցիչը: 1960ին, որպէս Հնդկաստանի պատուիրակութեան ղեկավար՝ Չաթթրճին մասնակցած է Արեւելագէտներու 25րդ Սիջազգային Համագումարին Մոսկուայի մէջ, ուր կարդացած է 1500 արեւելագէտներու ներկայութեան, «Հայկական Ժողովրդական Առասպելներն ու Մասունցի Դաւիթ Դիւցազնավէպը» («Armenian Hero Legends and the Epic of David of Sasun») դասախօսութիւնը, որուն պատրաստութեան համար հնդիկ գիտնականը խնդրած է նաեւ Ա.Կ.ի աջակցութիւնը: Յիշեալ ուսումնասիրութեան պատրաստման ժամանակ, իրենց հերթական հանդիպումներէն մէկուն ընթացքին, երբ Ա.Կ. հարցուցած է հնդիկ արեւելագէտին թէ՛ իբրեւ Հնդկաստանի պատուիրակութեան ղեկավար, աւելի նպատակայարմար պիտի չըլլա՞ր ներկայացնել հնդկական բազմաթիւ դիւցազնավէպերէն մէկը. Փրոֆ. Չաթթրճին հետեւեալ պատասխանը տուած է Ա.Կ.ին.

««Հայկական Ժողովրդական Առասպելներն ու Մասունցի Դաւիթ Դիւցազնավէպը» ուսումնասիրութիւնը, տարիներ առաջ տրուած խոստումի մը իրագործումն է, խղճի պարտք մը՝ գոր նախքան մահանալս անպայման պէտք է հատուցեմ: Առաջին Աշխարհամարտէն անմիջապէս առաջ, ուսումնասիրութեան եւ Երուսաղէմ վերադարձայ Հնդկաստան, երբ սկսաւ պատերազմը, որուն կը մասնակցէին նաեւ անգլիական բանակի մէջ ծառայող մեր զինուորները: Պատերազմի աւարտին, երբ թուրքերու կողմէ գերի բռնուած խումբ մը հնդիկ զինուորները վերադարձան Կալկաթա, քաղաքի բնակիչները գացած էին Հաւորա գնացքի կայարանը զիրենք դիմաւորելու: Ես ալ հոն էի: Ներկաները զարմացան, երբ նկատեցին որ մեր զինուորները իրենց հետ բերած էին շուրջ յիսուն փոքրիկ երեխաներ, որոնք հնդիկի տեսք





չունեին: Երբ զինուորներեն բացատրութիւն ուզեցի, պարզուեցաւ որ անոնք հայ որբեր էին: Տեղահանութեան ժամանակ, ուժասպառ հայ մայրեր, իրենց փոքր երեխաները ճամբարներու փշաթելերուն առջեւ ձգած ու փախած էին: Գերի հնդիկ զինուորները թոյլ չէին տուած որ թուրքերը վնաս հասցնեն հայ մանուկներուն: Մեր զինուորները իրենց յատկացուած կերակուրէն բաժին հանելով երեխաներուն՝ ապահոված էին անոնց սնունդը: Ձիւնադադարէն յետոյ, զինուորները չէին ուզած հայ որբերը թուրքերուն ձգել, ուստի իրենց հետ բերած էին Հնդկաստան: Այս դէպքը խոր ազդեցութիւն թողուց վրաս: Ես Փարիզի մէջ եղած էի Անթուան Մէլի աշակերտը եւ ֆրանսացի գիտնականէն արդէն սորված շատ բան հայ ժողովուրդի՝ յատկապէս Սասունցի Դաւիթի մասին: Ես աշխարհի գրեթէ բոլոր դիւցազնավէպերն ուսումնասիրած եմ, բայց Սասունցի Դաւիթի նման մարդկային բարձր սկզբունքներու տէր, անաչառ ու արդարամիտ հերոսի տիպար չեմ գտած: Այդ որբերուն ի տես՝ խոստացայ անպայման միջազգային շրջանակներուն ծանօթացնել այս վեհոգի ժողովուրդը խորհրդանշող՝ Սասունցի Դաւիթը: Տարիքս առած եմ արդէն եւ դժուար թէ անելի յարմար առիթ մը գտնուի ապագային՝ իրագործելու համար քառասուն երկու տարի առաջ տուած խոստումս, քան Մոսկուա կայանալիք Արեւելագետներու 25րդ Միջազգային Համագումարը, որուն պիտի մասնակցին անելի քան երկու հազար գիտնականներ, աշխարհի տարբեր երկիրներէն: Եւ ես՝ խոստումս յարգելով, գերագոյն գոհունակութեամբ պիտի կարդամ դասախօսութիւնս «Հայկական Հերոսական Առասպելները եւ Սասունցի Դաւիթ Դիւցազնավէպը» նիւթին շուրջ»:

62. Սասունցի Դաւիթ

Հայկական ժողովրդական դիւցազնավէպ, գոր առաջին անգամ գրի առած է Գարեգին Տպիսկոպոս Սրուանձտեանց 1873ին: Ս. Դաւիթ դիւցազնավէպը սկսած է կազմաւորուիլ ժողովրդական բանահիւսութեան մէջ ճրդ դարուն, արաբական արշաւանքներու ժամանակ: Ս. Դաւիթը արդարամտութեան եւ քաջութեան խորհրդանիշ է: Սիմոնեան Ս.Գ.ի յիշեալ յատկանիշները նկատի ունի, երբ կը խօսի իր կրտսեր որդոյն, Սասունի մասին: Տես՝ David of Sasun Wikipedia:

63. Ազատ Աճնմեան

Սիմոն Սիմոնեանի աներձագը եւ Գեորգ Աճնմեանի կրտսեր եղբայրը: Ուսումը ստացած է Ալեքսիո Քոլէճի (Aleppo College) մէջ: Ձբաղած է գրավաճառութեամբ նախ Պէյրութ, ապա Աթէնք եւ հուսկ՝ Սիւացեալ Նահանգներ:

64. Ֆլորա Ալեքսի

Պետրոս Ալեքսիի կամ Ալեքսեանի տիկինը եւ Վիվիէն Կիւզելեանի մայրը: Ծնած է Ջուրա: Փոքր տարիքէն ծնողաց հետ հաստատուած է Կալկաթա: Ֆլորա Ալեքսին ունեցած է շատ գեղեցիկ ձայն: Առաջին անգամ «Անոյշ» օփերան ներկայացուած է Կալկաթայի մէջ 1928ին, որուն մէջ Անոյշի դերը կատարած է Ֆլորա Ալեքսին:

65. Մարի Սիմոնեան

Սիմոն Սիմոնեանի տիկինը: Ծնած է Հալէպ 1923ին: Մասնագիտութեամբ հիւանդապահուի, վկայեալ՝ Պէյրութի Ամերիկեան Համալսարանէն 1945ին: Ամուսնացած է Ս. Սիմոնեանի հետ 1946ին: Մահացած է Պէյրութ 2010 Յունիսին:

66. Յարութիւն Երիքեան

Ուսումը ստացած է Անթիլիասի Դպրեվանքին մէջ: Մասնագիտութեամբ լուսանկարիչ՝ «Ֆոթոյ Արթոյ» նկարչատունը բացած է Դամասկոս, ուր եւ կ'ապրի ցայսօր, մեր ունեցած տեղեկութեանց համաձայն:

67. Տէյվիտ Մարշալ Լանկ (Prof. David Marshall Lang) (1924-1991)

Ամուսանի կովկասագէտ, պատմաբան Տէյվիտ Մարշալ Լանկ եղած է հայ ժողովուրդի մեծ բարեկամներէն մէկը: Լանկի մասնագիտութիւնը եղած է Վրաստանի, Հայաստանի եւ Պուլկարիոյ պատմութիւնն ու մշակոյթը: Երկար տարիներ ան վարած է Լոնտոնի Համալսարանի Արեւելեան եւ Ափրիկեան Դպրոցի Կովկասեան Ամպիոնի տնօրէնութիւնը: 1960-1970 տարիներուն, երեք անգամ այցելած է Սովետական Հայաստան: Եղած է պատուակալ





քարտուղարը Լոնտոնի Ասիական Արքայական Ընկերության (Royal Asiatic Society): Եղած է այցելու դասախոս Քոլոմպիա Համալսարանի Ռուսական Ինստիտուտի եւ Քալիֆորնիոյ Համալսարանի Կովկասեան Ուսմանց Բաժնի: Երկար տարիներ կովկասագիտական առարկաներ դասաւանդած է Քեմպրիճի եւ Անգլիոյ այլ համալսարաններուն մէջ: Իր հեղինակած գործերէն յիշենք՝ «*The Last Years of the Georgian Monarchy*» (1957), «*First Russian Radical, Alexander Radischev*» (1959), «*A Modern History of Georgia*» (1962), «*The Georgians*» (1966), «*Armenia: Cradle of Civilization*» (1970), «*Peoples of the Hills: Ancient Ararat and Caucasus*» by Charles Allen Burney and D.M. Lang (1971), «*Bulgarians: From Pagan Times to the Ottoman Conquest*» (1976), «*Lives and Legends of the Georgian Saints*» (1976), «*The Armenians*» (London: Minority Rights Group publication) by D. M. Lang and Christopher J. Walker (1978), «*The Armenians: A People in Exile*» (1981), «*Armenia and Karabagh: the Struggle for Unity*» (London: Minority Rights Group) (1991):

68. Ակսել Բակունց

Ալեքսանտր Թեոտեան, գրական անունով Ակսել Բակունց, ծնած է 1899ին, Գորիս: Սովետահայ գրող, քանասէր եւ թարգմանիչ: Բարձրագոյն ուսումը ստացած է Էջմիածնի Գեորգեան Ծեմարանին մէջ, ուր աշակերտած է յայտնի հայագետներու: 1920-23 թուականներուն յաճախած է Խարքովի Գիտատնտեսութեան հիմնարկը: 1924էն սկսեալ վարած է պատասխանատու պաշտօններ Հայաստանի գիտատնտեսական հաստատութիւններուն մէջ: Բակունց սկսած է գրել Գեորգեան Ծեմարանի ուսանող եղած տարիներուն: Գրական համբաւի արժանացած է 1927ին իր «*Մթնաշոր*» պատմուածքերու հատորով: Նոյն տարին լոյս տեսած է անոր «*Հովնաթան Մարշ*» երգիծական վիպակը: 1933ին հրատարակուած է «*Սեւ Յելեթի Սերմնացանը*», իսկ 1935ին՝ «*Անշրեւը*» եւ «*Եղբայրութեան Ընկոյզները*», որոնք Բակունցը դարձուցած են իր շրջանի լաւագոյն արձակագիրներէն մէկը: Բակունց իր նպաստը բերած է նաեւ հայկական շարժանկարային արուեստին: «Սեւ Թելի Տակ», «Տրագեդիա Արագածի Վրայ» եւ «Չանգեզուր» շարժանկարները հիմնուած են իր գրութիւններուն վրայ: Բակունցի քանասիրական գործերէն յիշենք՝ «*Խաչարուր Աբովեանի Անյայտ Բացակայումը*» աշխատութիւնը: Ան թարգմանութիւններ ունի Կոկլէին: Բակունց աշխարհաբարի վերածած է «*Աղուէսագիրք*»ը: Մահացած է 1937ին:

69. Անի Մանուկեան

Հիմա ծանօթ է Ani King-Underwood անունութեան անունով: Անին՝ մտատրական արժանիքներով օժտուած արուեստագիտուի մը՝ միջազգային շրջանակներուն մէջ ծանօթ է որպէս վաւերագրական շարժանկարներու տաղանդաւոր արտադրիչ:

70. Հայկ Գալուստեան

Անգլիա հաստատուած պարսկահայ վաճառական, որ կարեւոր դեր խաղցած է լոնտոնահայ համայնքի վերակազմակերպման աշխատանքին մէջ: Ընդհինի իր եւ քանի մը ուրիշ ազգանուէր հարուստներու համատեղ ջանքերուն, գնուած եւ համայնքին տրամադրուած է քառայարկ շէնք մը, Լոնտոնի կեդրոնական ամենէն յարգի թաղամասերէն մէկուն՝ Չանըսթըն Կարտընգի մէջ: Համայնքի ցանկութեամբ շէնքն անուանուած է «Հայ Տուն»: 60ական թուականներէն մինչեւ 1991, «Հայ Տուն»ը եղած է լոնտոնահայութեան ազգային, մշակութային եւ ընկերային կեանքի կեդրոնը: Յիշեալ թուականին «Հայ Տուն»ը դարձած է Հ.Հ. Գեսպանատունը: Գնահատանքով պէտք է նշել նաեւ որ Հայկ Գալուստեանի նախաձեռնութեամբ եւ հովանաւորութեամբ Լոնտոնի մէջ հրատարակուած է «Արեգակ» ամսաթերթը, 1964-1966 տարիներուն:

71. Յակոբ Կիլոյեան

Սիմոնեանի եւ Մավեանի մտերիմ բարեկամներէն: Ծնունդով սաղիմահայ: Կ'ապրի Լիբանանի մէջ: Տաղանդաւոր ասմունքող: Մասնագիտութեամբ՝ ոսկերիչ:

72. Դրոյ (Գրաստամատ) Կանայեան

Ծնած է 1884ին: Կուսակցական (Հ.Յ.Գ.), քաղաքական եւ զինուորական գործիչ: Մասնակցած Պաշ Ապարանի կռիւներուն: Ա. Հանրապետութեան մէջ, կարճ ժամանակով վա-





րած է պաշտպանութեան նախարարի պաշտօնը: Բ. Աշխարամարտին եղած է հրամանատարը Գերմանիոյ մէջ կազմուած Հայկական Լեգէոնին, որուն մաս կազմած են նաեւ Գերմանիոյ կողմէ գերի բռնուած Կարմիր Բանակի հայ զինուորները: Պատերազմի ավարտին հաստատուած է Լիբանան: 1956ին բուժուելու համար գացած է Պոսթոն, ուր եւ մահացած է նոյն տարին: Դրոյի աճիւնները 2000 թուականին փոխադրուած են Հայաստան եւ թաղուած՝ Պաշ Ապարան:

73. Փաստոս Բիզանդ

Հայ պատմիչ, որուն ծննդեան եւ մահուան թուականներն անյայտ են: Հայ գիտնականներէն ոմանք զինք կը նկատեն Դ. դարու՝ իսկ ուրիշներ՝ Ե. դարու պատմիչ: Կարգ մը բանասէրներ կը կարծեն որ ան իր «Պարմոնիսի Հայոց»ը գրած է Դ. դարու վերջաւորութեան յունարէնով, որ հայերէնի թարգմանուած է Ե. դարուն: Փ.Բ.ի պատմութիւնը կ'ընդգրկէ համեմատաբար պատմական կարճ ժամանակաշրջան մը:

74. Սֆինքս

Առասպելական էակ մը, որ ունի առիւծի մարմին եւ մարդու գլուխ, երբեմն ալ՝ թռչունի մեծ թերեւ եւ մարդու գլուխ: Տես՝ Sphinx Wikipedia:

75. Նինուէ

Աշխարհի հնագոյն քաղաքներէն մէկը, որ Ն.Ք. VIII-VII դարերուն եղած է Ասորեստանի մայրաքաղաքը: Նինուէի ատերակները կը գտնուին Իրաքի մէջ:

76. Գալիք Էվերէկեան

Լիբանանահայ թատերագէտ եւ դերասան: «Սփիւռք» շաբաթաթերթի աշխատակից: Արտագաղթած է Քանադա: Ունի հրատարակուած երկու գիրք, մին թատերախաղ՝ «Լիս կամ Ծաղկավաճառուհին» (1958), միւսը՝ «Թարերայուշեր եւ Նիւթեր Լիբանանահայ Թարերու Պարմոնեան» (1971):

77. Վանատուր

Հին հայ դիցաբանութեան մէջ նկատուած է հիւրընկալութեան աստուածութիւն, որ հովանաւորած է պանդուխտներն ու օտար ճամբորդները: Վանատուրի օտընը նշուած է հին Հայոց Ամանորի առաջին օրը, Նաւասարդ ամսուան 1ին (Օգոստոս 11):

78. Յակոբ Օշական

Վիպագիր, պատմուածքներու, թատրերգութիւններու հեղինակ եւ ուսուցիչ: Հայ գրականութեան մեծագոյն գրաքննադատներէն մէկը: Ծնած է Պուրսա, 1883ին, մահացած Հալէպ՝ 1948ին: 1913ին Պոլսոյ մէջ կազմած է Մեհեան գրական շրջանակը, մասնակցութեամբ Դանիէլ Վարուժանի, Կոստան Զարեանի, Ահարոն Տատուրեանի եւ Գեղամ Բարսեղեանի, որ հրատարակած է «Մեհեան» ամսաթերթը: Դժբախտաբար «Մեհեան» շատ կարճ կեանք ունեցած է (Յունուար-Յուլիս 1914): 1924էն սկսեալ Օշական ապրած է Եգիպտոս, Կիպրոս, Պաղեստին եւ պաշտօնավարած՝ հայկական կրթական գանազան հաստատութիւններու մէջ: Անոր կարեւոր ստեղծագործութիւններէն յիշենք՝ «Խոնարհները», «Մեհեաններու Խորհուրդը», «Երբ Պարսանի Են», «Ծակ Պարուկ»: Օշականի կոթողային գործերէն մէկն է՝ «Համապարկեր Արեւմտահայ Գրականութեան»ը:

79. Պետրոս Գուրեան

Վաղամեռիկ բանաստեղծ: Ծնած է 1851ին, վախճանած՝ 1972ին: Տես՝ Bedros Tourian Wikipedia:

80. Վիկտոր Չամիչեան

Լիբանանահայ ուսանող: Յովիկ Սիմոնեանի մտերիմ ընկերը:

81. Վաղարշակ Նորենց

Սովետահայ գրող, բանաստեղծ: Ծնած է Սասունի Շէնիկ գիւղը, 1906ին, մահացած Երեւան 1973ին: Մեծ Եղեռնէն փրկուած է եւ ապաստան գտած՝ Անդրկովկասի տարբեր որբանոցներուն մէջ: Ուսումը ստացած է Թիֆլիսի Հայկական Գիմնազիոնի եւ Ներսիսեան Վարժարանի մէջ: Նորենցի առաջին ժողովածուն, «Օրերի Ծաւթիկ», լոյս տեսած է 1925ին: Մասնակցած է Ե. Չարենցի ղեկավարած «Նոյեմբեր» գրական միութեան ստեղծման աշ-





խատանքներուն: Այս միութեան մատենաշարով եւ Չարենցի խմբագրութեամբ, լոյս տեսած է Նորենցի «Իրիկուն» գիրքը, 1926ին: 1930-36 տարիներուն, լոյս տեսած են անոր «Երկրորդ Գիրք», «Լիբիական Ֆրոնտը» եւ «Բանաստեղծութիւններ» հատորները, իսկ 1954-68 թուականներուն՝ «Գիրք Քնարական», «Ճանապարհներ», «Իմ Աշխարհը» եւ «Դարերի Ասանդ» բանաստեղծութեանց հատորները: Վ. Ալազանն ու Նորենցը կազմած են Մ. Մեծաբենցի, Ա. Չօպանեանի եւ Պ. Դուրեանի նուիրուած հաւաքածոներ:

82. Գերմա կամ Աւգերմ

Սիմոն Սիմոնեանի հօր, Օվէի ծննդավայրը, Մասնոյ մէջ:

83. Սալբի Աճեմեան

Մարի Սիմոնեանի եղբոր՝ Յակոբ Աճեմեանի դուստրը, որ իբրեւ հիւրընկալ (air hostess) կ'աշխատէր օդանաւային ընկերութեան մը մէջ: Սիմոնեան յաճախ Սալբիի՝ ինչպէս նաեւ Անգլիա այցելող այլ ճամբորդներու միջոցով, նամակ կը դրկէր Ա. Կիւզելեանին:

84. Գէորգ Պարտագճեան

Ծնած է Պէյրութ: Աւարտած է Երեւանի Պետական Համալսարանը: Անգլիոյ Օքսֆորտ Համալսարանի Հայագիտական Ուսմանց Դպրոցէն ստացած է տոքթորայի աստիճան 1979ին: Հայագիտական առարկաներ դասաւանդած է Հարվըրտի եւ Միչիկընի համալսարաններուն մէջ: Հայկական ուսմանց տնօրէնն է ներկայիս Միչիկընի Համալսարանին մէջ: Գ.Պ.ի հետաքրքրութիւնները կեդրոնացած են գլխաւորաբար գրականութեան, պատմութեան, հայ եկեղեցւոյ, հայկական ինքնութեան եւ ցեղասպանութեան հետ առնչուած խնդիրներու վրայ: Ան հեղինակ է բազմաթիւ յօդուածներու եւ գիրքերու, որոնցմէ յիշենք՝ «Hitler and the Armenian Genocide», «Textbook-of-Modern-Western-Armenian» (1977), «Eastern-Armenian-Textbook» (2005), «The Reference Guide to Modern Armenian Literature, 1500-2000» (1999):

85. Խոր Վիրապ

Տրդատ Գ. քազաւորի հրամանով Գրիգոր Լուսատրիչ նետուած է «Խոր Վիրապ», ուր մնացած է 13 տարի: Սիմոնեան Խոր Վիրապ ըսելով կ'ակնարկէ տպարան «Սեւան»ին: Տես՝ Khor Virap Wikipedia:

86. Յովհաննէս Չալլզեան

Մեծ Եղեռնէն մազապուրծ փրկուած որբ մը, որ պատանի տարիքէն անդամագրուած է Հ.Յ.Դ.ի: Մասնակցած է Դուրեան Սրբազանի սպանութեան: Որպէս անգլիական բանակի զինուոր՝ մասնակցած է Բ. Աշխարհամարտին: Պատերազմի արարտին, հաստատուած է Լոնտոն, ուր վարած է կուսակցական գործունէութիւն: Օժանդակած է դաշնակցական հաստատութիւններուն, յատկապէս՝ Պէյրութի Նշան Փալանճեան Դեմարանին: Մահացած է ինքնաշարժի արկածով:

87. Կարիկ Պասմաճեան

Ծնած է Երուսաղէմ 1947ին: 1966-72 տարիներուն հետեւած է ԵՊՀի Բանասիրական բաժնի դասընթացներուն եւ ստացած՝ մագիստրոս արուեստից աստիճանը: 1969-1971ին եղած է «Սփիւռք»ի աշխատակից: Բացի հայ գրականութենէ՝ արուեստի, յատկապէս նկարչութեան հանդէպ ունեցած սէրն ալ՝ Կարիկ կը պարտի Սիմոնեանին: Ս.Ս.ին գրած 23 Ապրիլ 1977 թուակիր նամակին մէջ ան հետեւեալ խոստովանութիւնը կ'ընէ. «...Ես մասնագէտ դարձած եմ հայկական նկարչութեան (դրոպատոճառը դուն եղար, նորէն)...» Կ.Պ. հրատարակած է բանաստեղծութիւններու չորս հատոր եւ թարգմանած՝ Պարոյր Սեւակի բանաստեղծութիւններն անգլերէնի: Անոր բանաստեղծութիւնները լոյս տեսած են անգլերէն, ֆրանսերէն, ռուսերէն, չեխերէն եւ հունգարերէն լեզուներով: Մոսկուա կատարած այցելութեան մը ընթացքին, 29 Յուլիս 1989ին խորհրդաւոր պայմաններու մէջ Կարիկ անյայտացած է: Կ'ենթադրուի որ սպաննուած է ռուսական մաֆիայի կողմէ:

88. Կարիկն եւ Արմինէ Կիւզելեան

Ա. Կիւզելեանի երկու դուստրերը: Աւագը՝ Կարիկն՝ ծնած է Կալկաթա, իսկ Արմինէն՝ Լոնտոն:





89. Յովհաննէս Ասատուրեան

Սփիւռքահայ տաղանդաւոր նկարիչ: Կիւղեղեաններու փեսայ: Ծնած է Հասանալէյի, Կիլիկիա, 1901ին: 1937-43ին հետեւած է գեղանկարչական մասնաւոր դպրոցի մը դասընթացներուն Պէյրոսի մէջ: 1946ին ներգաղթած է Հայաստան: 1967ին արժանացած է ՀՍՍՀ Վաստակաւոր Նկարիչի կոչումին: Ուշագրաւ են Յ.Ա.ի «Արաք Երեխան» (1932), «Մասունցի Հայր Հալէպուն» (1937), «Զմեռային Բնանկար», «Սանսիինի Վանքը» (1949), «Զմեռ» (1959), «Կապոյր Սահնակով Նարխարոնր» (1962), «Փոքր Աղջկայ Դիմանկար» (1963), «Կապոյր Տներ» (1964): Մահացած է Ա.Մ.Ն.:

90. Ստեփան Ալաճաճեան

Ծնած է Հալէպ, 1924ին: 1946ին ներգաղթած է Հայաստան, ուր 1951ին աւարտած է Երեւանի Պետական Համալսարանի Բանասիրական Ֆակուլտետը: Աւարտած է նաեւ Մոսկուայի Մաքսիմ Կորքիի անուան Գրականութեան Ինստիտուտի երկամեայ դասընթացը: Հայաստանի մէջ վարած է բազմաթիւ պատասխանատու պաշտօններ: 1942ին Հալէպի մէջ լոյս տեսած է Ալաճաճեանի բանաստեղծութիւններուն առաջին եւ վերջին հատորը՝ «Վշտի Ծաղիկներ»ը: Գրած է «Անապարտ», «Պարտութիւն», «Փիւնիկ», «Առանց Հայրենիքի», «Եղեգները Չիտնարիտեցին» վէպերը: Ս.Ա. քսան եօթ հատորներու հեղինակ է: Ան քարգմանած է անգլերէն եւ ֆրանսերէն Շէքսպիրի, Սարոյեանի եւ Ժան Փոլ Մարթի գործերը: Ալաճաճեանի ստեղծագործութիւնները քարգմանուած են արեւի քան տասը լեզուներու: Մահացած է 22 Դեկտեմբեր, 2010ին, Մ. Նահանգներու մէջ:

91. Համազասպ Մարթին

Պարսկահայ առեւտրական Համազասպ կան Կորին Մարթին որդին է Մայր Աթոռի բարերար, Մանուկ Մարթինի, որ պարսիկ վարպետներու ձեռքով պատրաստուած սատաֆէ հրաշալի գահ մը նուիրած է Վազգէն Ա. Ամենայն Հայոց Հայրապետին 60ական թուականներուն: Կորին՝ Պետրոս Ալեքսեանի քեռորդին է, որ եղած է Ա. Կիւղեղեանի մտերիմ ընկերը: Ան եղած է Սով. Հայաստանի բարեկամ, ծայրահեղ հայրենասէր անձ մը, բայց՝ անկուսակցական: Առիթով մը ըսած է Ա. Կիւղեղեանին. «Մեզ մօտ՝ Պարսկաստանում, շատ դաշնակցականներ կան... ունենք նաեւ մի քանի հնչակեան: Ասա տեսնեմ, էս ռամկավարն ի՞նչ բան է», որուն Ա.Կ. պատասխանած է. «Ռամկավարն ընդհանրապէս այն հարուստ հայն է, որ համայնավար չէ, բայց Սով. Հայաստանի բարեկամ է»: Կորինի պատասխանը եղած է՝ «Ուրեմն ուզում ես ասել՝ որ ես յիսուն տարի ռամկավար եմ եղել, բայց նո՞ր եմ հասկանում...»

92. Եղիշէ Վարդերեսեան

Միմոն Միմոնեանի դպրեվանքի դասընկերը: Ներգաղթած է Հայաստան, ապա՝ արտագաղթած Լիբանան եւ աշխատած Կիլիկիոյ Կաթողիկոսութեան տպարանին մէջ իբրեւ հաշերէն լեզուի հմուտ սրբագրիչ: Մահացած է Լիբանան:

93. Վռամշապուհ

Որպէս հայոց արշակունի թագաւոր՝ յաջորդած է եղբորը, Խոսրով Գ.ին 389ին: Թագաւորած է համեմատաբար պատմական խաղաղ շրջանի ընթացքին: Բարեկամական լաւ յարաբերութիւններ ստեղծած է թէ Պարսկաստանի եւ թէ Հռոմի հետ: Վռամշապուհի անունը կապուած է հայոց գիրերու գիտին հետ: Ան նիթաբարոյական մեծ աջակցութիւն ցուցաբերած է Սահակ Պարթեւ Կաթողիկոսին եւ Մեսրոպ Մաշտոցին:

94. Կոստան Զարեան

Գրող, բանաստեղծ, գրաքննադատ, մանկավարժ: Ծնած է 1885ին, վախճանած՝ 1969ին: [Stu` Kostan Zarian Wikipedia:](#)

95. Հրանդ Միմոնեան

«Սփիւռք»ի աշխատակից: Արտագաղթած է Ա.Մ.Ն.:

96. Լիոնի Փիլաճեան

Լիոնի Քիտոյեան-Փիլաճեան, լիբանանահայ արուեստագիտուիին 1957ին աւարտած է Կիպրոսի Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը, ուր աշակերտած է Վահրամ Մավեա-





նին: 1970ին աւարտած է Լիբանանի Academie Libanaise des Beaux Arts-ի նկարչութեան եւ քանդակագործութեան բաժինները: Մասնագիտական ուսումը շարունակած է Պէյրութի John F. Kennedy Art Centre-ի եւ Լոնտոնի City & Guilds Art հաստատութիւններուն մէջ: Լի-
ոնի գործերը ցուցադրուած են բազմաթիւ երկիրներու մէջ, արժանանալով քննադատներու
գնահատանքին: Ան 28 անհատական եւ հաւաքական ցուցահանդէսներ տուած է:

97. Մսրըր Հայտէն Տոքթըր Դեյլ (Dr. Jekyll and Mr. Hyde)

Սկոտլանդի վիպագիր Ռոպերթ Լուիզ Սթիվընսըն 1886ին հրատարակեց վիպակ մը,
«*The Strange Case of Dr. Jekyll and Mr. Hyde*», որուն հերոսը ունի երկու իրարամերժ անհա-
տականութիւն (split personality): Այսօր Dr. Jekyll and Mr. Hyde կը բնութագրէ անձ մը, որուն
խառնուածքը կ'ենթարկուի իրար հակասող, իրարամերժ մեծ փոփոխութիւններու տարբեր
իրավիճակներու մէջ: Յաւելալ տեղեկութեան համար տես՝ Dr. Jekyll and Mr. Hyde
Wikipedia:

98. Ինկրիտ Ալեքսի

Պետրոս Ալեքսեանի աւագ թոռնուհին, Այվըն եւ Սիլվիա Ալեքսիի դուստրը:

99. Անի Բոյ

Անի Մանուկեան, գոր Սիմոն Սիմոնեան «մկրտած» է «Անի Բոյ» առաջին ամուսնոյն
ամուսնով: Տես՝ Անի Մանուկեան Ծ.69:

100. Գէորգ Աճեմեան

Սփիւռքահայ տաղանդաւոր գրող: Ծնած է 1932ին Սուրիոյ Մունայուն գիւղաքաղաքին
մէջ: Յաճախած է Հալէպի Հայկագեան եւ Կիւլպէնկեան վարժարանները: Երկրորդական
ուսումը Ալեքսիոս Զոլեճի (Aleppo College) մէջ ստանալէ յետոյ, յաճախած է Պէյրութի Ամե-
րիկեան Համալսարանը: Երկար տարիներ «Սփիւռք» շաբաթաթերթին աշխատակցելէ ետք՝
եղած է անոր արտօնատէրն ու խմբագիրը 1975էն սկսեալ: Գ.Ա. լոյս ընծայած է բազմաթիւ
վիպակներ, պատմուածքներ, ինչպէս նաեւ ազգային-քաղաքական բնոյթ ունեցող աշխա-
տութիւններ: Ան հայ գրականութիւն մուտք գործած է 1956ին պատմուածքներու «*Անկարե-
լի Պարմութիւն*» հատորով, որուն յաջորդած են 1958, 1959 թուականներուն՝ «*Օրերէն
Երբ*» եւ «*Անորոշութեան եւ Մասամբ Նորին*» գիրքերը: 1962էն 1983 տարիներուն լոյս ըն-
ծայած է «*Տեսական Բննադատական Փորձեր*», գիրք Ա., «*Պիտի Չարչարեմ Բռնորդ*»,
«*Ալիանայ Ծաղրածուն եւ Այլ Դերասաններ*», «*Յանրժական Ծանապարհ*», «*Տեսական
Բննադատական Փորձեր*», գիրք Բ., «*Ապագայի Հեղքերով*» եւ «*Յարդգողի Ժառանգորդնե-
րը*»: 1968ին Երեսնի մէջ հրատարակուած է Գ.Ա.ի «*Անապահովութեան Փողոցներ*»ը:
Հրատարակագրական բնոյթ ունեցող գործերն են՝ «*Միակ Լուծումը*» (1972), «*Քաղաքական
Իրապաշտութիւն*», թէ *Անշնայրութեան Պարասպակամութիւն*» (1992) եւ «*Պիտի Յի-
շե՞նք Երբեւիցէ Արեւմտեան Հայաստանը*» (1998): Գ.Ա. հրատարակած է նաեւ չորս գիրք
անգլերէն լեզուով՝ «*Symphony in Discord*» (1962), «*The Fallacy of Modern Politics*» (1986), «*A
Time for Terror*» (1997), «*Ruling Over the Ruins*» (1998): Մահացած է 27 Գեկտեմբեր 1998ին
Լիոն, Ֆրանսա: Տես նաեւ Ծ. 30:

101. Վահէ Պալատունի

Բանաստեղծ Հմայակ Շեմսի քեռորդին՝ եղած է Նիու Օրլիքնզ (New Orleans) Համալսա-
րանի վաստակաւոր դասախօսներէն: Թարգմանած է, յայտնի գրականագէտ John Gery-ի
հետ, Հ. Շեմսի բանաստեղծութիւնները անգլերէնի, «*A Poet of Pure Spirit*» խորագրով: Հրա-
տարակած է նաեւ «*Armenian Merchants of the Seventeenth and Early Eighteenth Centuries*»
գիրքը:

102. Հայկ Ժամկոչեան

Եգիպտահայ գրող, հրատարակագիր եւ ազգային գործիչ: 1948ին հիմնած է «Ջահա-
կիր» երկշաբաթաթերթը Գահիրէի մէջ: «Ջահակիր»ի հրատարակութեան երկրորդ շրջանը
սկսած է Այտա Մերքեանի եւ Սարգիս Պալայեանի նախաձեռնութեամբ, 1963 Նոյեմբերին:
Թերթին գրական բաժնի խմբագրութիւնը ստանձնած են Հայկ Ժամկոչեան եւ Արմէն Տա-
տուր:





103. Հմայակ Շէմս

Բանաստեղծ Հմայակ Շէմս (Մափրիչեան) ծնած է 1896ին, Գումուշհանէ քաղաքին մէջ: Նախնական եւ երկրորդական կրթութիւնը ստացած է Տրապիզոնի մէջ, իսկ բարձրագոյն ուսման համար յաճախած՝ Էրզրումի Սանասարեան Ակադեմիան եւ Էջմիածինի Գեորգեան Դեմարանը: Երկարամեայ թափառումներէ ետք՝ 1929ին հաստատուած է Ադեքսանդրիա, ուր ապրած է մինչեւ կեանքին վերջը, 1952: Շէմսի քեռորդին, Փրոֆ. Վահէ Պալատունին, անգլերէնի թարգմանած է իր բանաստեղծութիւնները եւ անգլերէնով հատոր մը հրատարակած անոր կեանքին եւ գրական ստեղծագործութիւններուն նուիրուած՝ «*A Poet of Pure Spirit*» խորագրով:

104. Telegraph

Անգլիական յայտնի օրաթերթ:

105. Daily Mail

Անգլիական յայտնի օրաթերթ:

106. Տիրան Եպս. Ներսոյեան (ապա՝ Արք.)

Ծնած է Այնթապ, 1904ին: 1915ին Ներսոյեանները տեղափոխուած են Հալէպ: Նախնական ուսումը ստացած է Հալէպի մէջ: 1921ին ընդունուած է Երուսաղէմի Ժառանգաւորաց Վարժարանը: 1928ին ձեռնադրուած է կուսակրօն եկեղեցական: 1939ին նշանակուած է լոնտոնահայոց հոգեւոր հովիւ: 1944ին ընտրուած է Միացեալ Նահանգներու Արեւելեան Թեմի Առաջնորդ, իսկ տարի մը ետք ձեռնադրուած՝ եպիսկոպոս: Տիրան Սրբազանի առաջնորդութեան տասնամեայ շրջանին կառուցուած են տասնմէկ եկեղեցիներ, ձեռնադրուած են քսանմէկ եկեղեցականներ, կեանքի կոչուած են Հայ Եկեղեցոյ Երիտասարդաց Կազմակերպութիւնը եւ Դպրաց Դասուց Ընկերակցութիւնը: Անոր ջանքերուն շնորհիւ կառուցուած է Ս. Վարդան Տաճարը, Մանհաթընի մէջ: Դարձեալ իր ջանքերով՝ հիմնուած է Ս. Ներսէս Դպրեվանքը, Նիւ Եորքի մէջ: 1957ին ընտրուած է Երուսաղէմի Հայոց Պատրիարք, բայց Յորդանանի կառավարութիւնը աքտրած է զինք երկրէն եւ վաւերացուցած՝ Եղիշէ Տէրտէրեանի ընտրութիւնը: Տիրան Արքեպիսկոպոս, որպէս մասնագէտ եկեղեցական եւ աստուածաբանական հարցերու, երկար տարիներ տուած է դասախօսութիւններ եւ գրած՝ բազմաթիւ յօդուածներ հայերէն եւ անգլերէն լեզուներով: Իր հրատարակութիւններէն յիշենք՝ «*A Christian Approach to Communism*» (1942), «*Armenian Church, Historical Studies: Matters of Doctrine and Administration*» by Tiran Nersoyan and Vrej Nerses Nersessian (1996), «*The Bible in Armenia and Germany*» 1. Armenia by Father T. Nersoyan 2. Germany by Pastor F. Hildebrandt (1945), «*Divine Liturgy of the Armenian Church*» London (1984), «*Christ in East and West*» by Paul R. Fries and Tiran Nersoyan (1987): Վախճանած է 1989ին:

107. Եղիշէ Պատրիարք Տէրտէրեան

Ծնած է Վան, 1910ին: Ընտանիքի բոլոր անդամները գոհ գացած են Մեծ Եղեռնին: Որբահաւաքի շնորհիւ փրկուած է կորուստէ եւ բերուած՝ Երուսաղէմ: Երբ օր մը կատակով Ա. Կիլիզեան իրեն ըսած է՝ «Սրբազան, աւելի լաւ կ'ըլլար որ աշխարհական մնայիք եւ դառնայիք քաղաքական գործիչ», որուն Սրբազանը պատասխանած է. «Դուն կը կարծես որ ես իմ կամքովս եկեղեցական եղայ... ո՛չ: Պաղտատի անապատներուն մէջ, Հայրիկ Սրբազանի եւ Եղեռնէն փրկուած ուրիշ որբերու հետ, թրիքներէն ցորենի հատիկ ուտելով մեր գոյութիւնը կը քաշքշէինք, երբ մեզ հաւաքեցին, Երուսաղէմ բերին, ուսում տուին եւ օրին մէկն ալ՝ վեղար դնելով գլուխնուս՝ մեզ վարդապետ ձեռնադրեցին»: Նախքան Երուսաղէմի Պատրիարք ընտրուիլը, Եղիշէ Վարդապետը, ապա՝ Եղիշէ Եպիսկոպոս զանազան պաշտօններ վարած է Երուսաղէմի Հայոց Պատրիարքարանէն ներս, ի շարս այլոց՝ եղած է Ժառանգաւորաց Վարժարանի տեսուչ: Եղիշէ Պատրիարք յայտնի է որպէս բանաստեղծ, Եղիվարդ գրական ծածկանունով: Ան հրատարակած է քսան երկու գիրքեր, որոնցմէ յիշենք՝ «*Օգտրականը*», «*Հեթանոսաց Առաքեալ*» եւ «*Կարմիր Վարդան*» հատորները: Կենսագրական մանրամասնութիւններու համար տես՝ Yeghishe Derderian Wikipedia:

108. Աշոտ Քին. Տէր Յարութիւնեան

Աշխարհական անունով Սրապիոն Տէր Յարութիւնեան ծնած է 1898ին: Երկար տարի-





ներ վարած է ուսուցչական պաշտոն: Հալեպի Կիլիկեան Վարժարանին մեջ եղած է Ա. Կիլիկեանի ուսուցիչը: Աւարտելով Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի Դպրեվանքի քահանայից դասարանը, ամուսնացեալ եկեղեցական ձեռնադրուած եւ ուղարկուած է Անգլիա, որպէս Մանչեսթրի հայոց հոգեւոր հովիւ: Վախճանած է 1975ին:

109. Անտրէ Գայտան

Լոնտոնաբնակ լիբանանահայ, որ աշխատած է M.E.A.ի Լոնտոնի գրասենեակին մէջ:

110. Հրանդ Շխրամեան

Լոնտոն հաստատուած կիպրահայ, որ վարած է Խ. Մթրըպեանի հիմնած Brentford Nylons ընկերութեան ընդհանուր տնօրէնի պաշտօնը:

111. Կարոյ Բարսեղեան

«Սփիւռք»ի աշխատակից: Եղած է պաշտօնեայ «Քուէյթ էրուէյզ»ի: Արտագաղթած է Քանադա, ուր եւ մահացած է: Գրած է «*Ասոր Հակզի*» պատմութիւններու հատորը:

112. Շանթ Ալեքսանտրեան

Լոնտոնի Հայ Երիտասարդաց Ընկերակցութեան վարչականներէն:

113. Ալեք Մանուկեան

Ազգային մեծ բարերար, Հ.Բ.Ը.Մ.ի ցկեանս նախագահ: Ծնած է 1901ին, վախճանած՝ 1996ին: Տես՝ Alex Manoogian Wikipedia:

114. Արթոյ Տէր Յարութիւնեան

Մասնագիտութեամբ ճարտարապետ՝ Արթոն եղած է Մանչեսթրի եւ Լոնտոնի երկու անուանի Հայկական Դաշարաններուն սեպհականատէրը: Տաղանդատոր նկարիչ, բանաստեղծ, արձակագիր եւ երաժիշտ՝ Ա. Տէր Յարութիւնեան ծնած է Հալեպ: Որդին է Տէր Աշոտ Քին. Տէր Յարութիւնեանի: Որպէս նկարիչ՝ ցուցահանդէսներ տուած է զանազան երկիրներու մէջ, ներառեալ Անգլիա, Լիբստեմպուրկ, Պելճիգա, Լիբանան եւ Հայաստան: Արթոն անսպասելի սրտի կաթուածով մահացած է 1987ին, 45 տարեկանին Մանչեսթրի մէջ: Ի դէպ է նշել, որ Արամ Խաչատուրեան եղած է Արթոյի միակ զաւկին՝ Արամին կնքահայրը 1977ին:

115. Շարլ Ազնաւուր

Աշխարհահռչակ երգահան, երգիչ, դերասան: Սկրտութեան անունով՝ Շահնուր Վաղինակ Ազնաւուրեան: Ծնած է Փարիզ 1924ին: Տես՝ Charles Aznavour Wikipedia:

116. Քէօթահիա

Եղած է նախ Բիզանդական, ապա՝ Օսմանեան Կայսրութեան կարեւոր զինուորական եւ առետրական քաղաքներէն մէկը: Քէօթահիան հռչակաւոր է իր հախճապակեայ սալիկներու արտադրութեամբ: Տես՝ Kutahya Wikipedia:

117. Չարեհ Ճէրէճեան

Լիբանանահայ ազգային գործիչ: Լիբանանի քաղաքացիական պատերազմի տարիներուն հաստատուած է Լոնտոն, ուր՝ նախ բացած է կանանց սափրիչի խանութ մը, ապա վարած՝ ճամբորդական ընկերութեան մը տնօրէնութիւնը: Չ.Ճ. իր գործօն մասնակցութիւնը բերած է լոնտոնահայութեան ազգային, մշակութային եւ ընկերական կեանքին:

118. Սիմոն Ալեքսանեան

Լոնտոն հաստատուած կիպրահայ պատուական ազգային մը, որ Լոնտոնահայ Համայնքային Եկեղեցական Խորհուրդի կազմութեան մէջ կարեւոր աշխատանք կատարած է:

119. Լեւոն Երկաթ

Սիմոն Սիմոնեանի մանկութեան դպրոցական ընկերը: «Սփիւռք»ի աշխատակից: Գուրգէն Եանիկեանի մտերիմ ընկերներէն ու պաշտպաններէն: Արտագաղթած է Ա.Մ.Ն., ուր եւ մահացած է:

120. Գուրգէն Եանիկեան

Ծնած է Էրզրում 1895ին, մահացած 1984ին՝ Ա.Մ.Ն.: 1972ին Միացեալ Նահանգներու մէջ սպանած է երկու թուրք դիւանագէտ: Տես՝ Gourgen Yanikian

121. Ղազարոս Յակոբեան

Լոնտոնաբնակ կիպրահայ կուսակցական գործիչ (Հ.Յ.Դ.):





122. Յովհաննես Շիրազ

Հայ բանաստեղծութեան բարձրագագաթներէն մէկը: Ծնած է Ալեքսանդրապոլ 1915ին, մահացած Երեւան՝ 1984ին: Տես՝ Hovhannes Shiraz Wikipedia:

123. «Արարատ»

Հայաստանի ֆուքպոլի խումբը:

124. Ասատուր Օհանեան

Եգիպտահայ տաղանդաւոր դերասան-բեմադրիչ, որ Լոնտոնի «Հայ Տուն»ի հովանաւորութեամբ կազմած է բատերախումբ, որուն մասնակցած են Գրիգոր Սաքամեան, Վարուժան Խտրշեան, Ասատուր Կիւզելեան եւ կարեւոր թիւով լոնտոնահայ երիտասարդ-երիտասարդուհիներ: Բեմադրութիւններէն յիշենք՝ Սմբատ Բիրատի «Վարդանանք»ը (Սաքամեան՝ Վարդան, Խտրշեան՝ Յակոբ, Կիւզելեան՝ Ղեւոնդ Երեց) եւ Յ. Պարոնեանի «Պաշտասար Աղբար»ը (Պաշտասար Աղբար՝ Կիւզելեան, Օզսէն՝ Ասատուր Օհանեան): Մահացած է 1974ին, Լոնտոնի մէջ:

125. Անահիտ Կորկոտեան

Ատանճաբոյժ Գրիգոր Կորկոտեանի տիկինը, որ մասնակցած է լոնտոնահայ կարգ մը կազմակերպութիւններու՝ յատկապէս եկեղեցոյ Տիկնանց Յանձնախումբի աշխատանքներուն:

126. Ալեքսէյ Կրիկորովիչ Ստախանով

Ռուս հանգազործ մը, որ 1935ին վեց ժամուան ընթացքին 102 թոն քարածուխ արտահանած է, որուն համար արժանացած է սովետական կառավարութեան բարձր գնահատանքին: «Սթախանովեան աշխատանք» բացատրութիւնը դարձած է հոմանիչ ծանր աշխատանքի:

127. Արմէն Յարութիւնեան

Առետուրի ճանքով իր վաստկած դրամին մէկ մասը ծախսած է հայ գիրի եւ գրականութեան զարգացման, հայ դպրոցի բարգաւաճման, ազգին եւ եկեղեցիին պայծառութեան համար: Յարութիւնեան ծնած է Հալէպ, 1930ին: Աւարտած է Հալէպի Կրթասիրաց եւ Ալեքսիոս Քոլէճ (Aleppo College) կրթական հաստատութիւնները, ապա նետուած՝ առեւտրական ասպարէզ: Ազգանունը աշխատանքի սկսած է պատանի տարիքէն: Տարիներով ծառայած է Հ.Բ.Ը.Մ.ին եւ Հ.Ե.Ը.ին, ինչպէս նաեւ Կրթասիրաց Վարժարանի Երջանաւարտից Միութեան: 1961ին տեղափոխուած է Պէյրութ, ուր երկար տարիներ վարած է Այնթապի Հայրենակցական Միութեան Վարչութեան առեւտրականութիւնը: Ա.Յ. մեծ դեր խաղցած է Հայաստանի Նոր Այնթապ աւանի ժամեակի գործարանի հիմնադրութեան աշխատանքներուն մէջ: Ան հաստատած է հիմնադրամ մը, Հ.Բ.Ը.Մ.ի դպրոցներուն մէջ հայագիտական առարկաներ դասաւանդող ուսուցիչներուն ի նպաստ: Ըլլալով հայ գիրքի մեծ բարեկամ՝ Ա.Յ. հիմնած է «Միմի եւ Արմէն Յարութիւնեան Մատենաշարը», որ մինչեւ 2008 թուականը հրատարակած է 27 հատոր գիրք: Դեկտեմբեր 2013ին, Ա.Յ. իր եւ իր տիկոջ, Սալբիի անունով, հաստատած է կրթանպաստի 250,000 տոլարոց անձեռնմխելի ֆոնտ մը Հայկազեան Համալսարանին մէջ: Բարձր գնահատելով Ա.Յ.ի նուիրատուութիւնները, ինչպէս նաեւ անոր ազգանունը ու եկեղեցաշէն գործունէութիւնը, Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Ա. զինք պարգեւատրած է Ս. Գրիգոր Լուսաւորիչ շքանշանով: Գրական ասպարէզի մէջ Ա.Յ. ծանօթ է իր «Նամակ»ներով, որոնք նախ լոյս տեսած են հայ մամուլի մէջ, ապա՝ 2008ին, «Նամակներ Պէյրութէն» խորագրուած հատորով: Նոյն տարին, Երեւանի մէջ լոյս տեսած է «Կեսնքը Նամակագրութեան Մէջ» հատորը, որ կը պարունակէ Լեւոն Հախվերդեանի եւ Ա. Յարութիւնեանի միջեւ փոխանակուած նամակները:

128. Միշա Գիւտեան

Գրող եւ նկարիչ Միշա Գիւտեան ծնած է Եգիպտոս: Ուսումը ստացած է Աղեքսանդրիոյ անգլիական Վիքթորիա Քոլէճին մէջ: Լոնտոնի համալսարանէն վկայուած է որպէս ատանճաբոյժ: Գիւտեան գրած է արձակ գործեր, բանաստեղծութիւններ եւ թատերագրութիւններ: Մ.Գ. անգլերէնի բարգմանած եւ անգլիախօս հասարակութեան ծանօթացուցած է շարք մը





հայ գրողներ: Ռուպէս նկարիչ՝ անոր իդանկարները բազմիցս ցուցադրուած են Լոնտոնի մէջ: Գիտեսանի բարգմանութիւններէն յիշենք՝ «*Scenes from an Armenian Childhood*» (Vahan Totovents), «*The Muse of Sheerak*» (Avetik Issahakian), «*Soviet Armenian Poetry*», «*Three Apples Fell From Heaven*» (a collection of Armenian folk and fairy tales), «*Selected Works: Poetry and Prose*» by Avetik Issahakian, «*Bard of Loree*» (selected works) by Hovhannes Toumanian, «*Tell Me, Bella*» (a selection of stories) by Vahan Totovents, «*Lamentations of Narek, Mystic Soliloquies with God*» by Grigor Narekatsi, «*The Saga of Sassoun*», «*Jonathan, Son of Jeremiah*» by Vahan Totovents, «*The Honourable Beggars*» by Hagop Baronian.

129. Գէորգ Պլքեան

Լոնտոնի «Արարատ» տպարանի սեպհականատէրը: Աշակերտած է Սիմոն Սիմոնեանին, Հալէպի մէջ:

130. Յարութիւն Սիմոնեան

Սիմոն Սիմոնեանի կրտսեր եղբայրը ծնած է Այնթապ, 1921ին: Չաւակն է Այնթապ հաստատուած սասունցի Պեքար Օվէի եւ բնիկ այնթապցի Մենուշի: Այնթապի պարպումով (սկսած 1921 Մարտին, վերջացած՝ 6 Յունուար 1922ին), Սիմոնեաններն ալ՝ շուրջ 18,000 այնթապաբնակ հայերու հետ կը տեղափոխուին ֆրանսական իշխանութեան տակ գտնուող Սուրիոյ խաղաղ շրջանները, գլխատրաբար Հալէպ: Յարութիւն եղած է յաջող առեւտրական, որ եօթանասունական բուսկաններուն Չուիցերիոյ մէջ հիմնած է մեծ տարողութեամբ ժամացոյցի գործարան մը, որուն արտադրութիւնները արտահանուած են գլխատրաբար Միջին Արեւելքի շուկաները: Յ.Ս. եղած է գրասէր անձ մը, որ հովանաւորած է բազմաթիւ գիրքերու հրատարակութիւնը: Իր հօրը յիշատակին պէտքով բնակ սասունցիներու տան մէջ շինել տուած է սրահ մը: Ազգասիրական նոյն ոգիով յանձն առած է բարերարութիւնը հայրենիքի մէջ. Թաւիւնի շրջանի Ռսկեթաս գիւղի դպրոցաշինութեան: Աշխատասիրած է «*Յաւելուած Այնթապի Հայոց Պարմութեան*» գիրքը (1997), խմբագրութեամբ Տոքթ. Վաչէ Ղազարեանի: Մահացած է 2007ին, Քալիֆորնիոյ մէջ:

131. «Յառաջ»

1925ին Փարիզի մէջ Շաւարշ Միսաքեանի կողմէ հիմնուած թերթ: Շ.Մ.ի մահէն յետոյ, թերթին խմբագրութիւնը ստանձնած է դուստրը, Արփիկ Միսաքեան: «Յառաջ» փակուած է 2009ին:

132. Ներսէս Եպս. Պոզապալեան (ապա՝ Արք.)

Ներսէս Արք. Պոզապալեան, մկրտութեան անունով Յակոբ, ծնած է Գրքիսան, Կիլիկիա, 1937ին: 1939ին Սանճաքի պարպումով, Պոզապալեանները տեղափոխուած են Պէյրութ: Յակոբ յաճախած է Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի Դպրեվանքը: 1957ին Պոզապալեանները ներգաղթած են Հայաստան, ուր Յակոբ իր եկեղեցական ուսումը շարունակած է Էջմիածինի Գէորգեան ճեմարանին մէջ: 1961ին ձեռնադրուած է կուսակրօն քահանայ, ձեռամբ Վազգէն Ա. Հայրապետի: Ներսէս Պոզապալեան, որպէս վարդապետ, եպիսկոպոս եւ արքեպիսկոպոս վարած է բազմաթիւ պատասխանատու պաշտօններ թէ՛ Մայր Աթոռի եւ թէ՛ արտասահմանի մէջ: Ան իր աստուածաբանական բարձրագոյն կրթութիւնը ստացած է Անգլիոյ մէջ: Որպէս բրիտանահայոց Առաջնորդ եւ Կաթողիկոսական Պատուիրակ, մեծ ներդրում ունեցած է Համայնքային Եկեղեցական Խորհուրդի ստեղծման աշխատանքին մէջ: Ներսէս Արք. շրջան մը վարած է նաեւ Գէորգեան ճեմարանի տեսչութիւնը: Ան ունեցած է գրական տաղանդ: Ներվարդ գրչանունով հրատարակած է բանաստեղծութիւններ: Առանձին հատորով լոյս տեսած են նաեւ անոր քարոզները: Ներսէս Արք. Պոզապալեան իր հոգեւորական ձեռնադրութեան քառասունամեակին առիթով, Կոտայք մարզի Թեղնիկ գիւղին մէջ կառուցած է եկեղեցի մը, իր ծնողաց յիշատակին, որուն համար Գարեգին Բ. Կաթողիկոսը զինք պարգեատրած է «Ս. Գրիգոր Լուսատրիչ» շքանշանով: Ներսէս Արք. վախճանած է 2009ին, 72 տարեկանին:

133. Կարոյ Արմէնեան

«Սփիւռք»ի աշխատակից: Արտագաղթած է Ա.Մ.Ն.:





134. Վարդգէս Տօնապետեան

Եղած է վարպետ գրաշար Հալվայի, Պէյրոսի ու Պոսթոնի մէջ: Ս. Սիմոնեանի մտերիմ սասունցի հայրենակիցը եւ բարեկամը, որուն երկու մանչ զաւակները, Յովիկն ու Ջոհրապը ուսանած են Լոնտոն: Նամակին մէջ Սիմոնեանի «բացառիկ տղաներ են» գնահատականը հասցեագրուած է Տօնապետեան երկուորեակին: «Յովիկին Master աստիճան շնորհելու անհրաժեշտութիւնը» նախադասութիւնը կը վերաբերի Յովիկ Տօնապետեանին: Վ.Տ. 2000ին Ա.Մ.Ն.ու մէջ հրատարակած է «Մարութաշունչ» պատմուածքներու երկբարբառ հատորը: Մահացած է 2008ին, Պոսթոնի մէջ:

135. Զեփիւռ Օհաննէսեան

Եղած է Սիմոնեանին աշխատակիցը տպարան «Սեւան»ի մէջ, 1972-1975 տարիներուն: Արտագաղթած է Ա.Մ.Ն. եւ ազգային վարժարաններէ ներս պաշտօնավարած՝ որպէս մանկապարտէզպանուհի եւ հայերէն լեզուի դասատու:

136. Արամ Խաչատուրեան

Աշխարհահռչակ երաժշտահան, խմբավար, մանկավարժ: Ծնած է Թիֆլիս 1903 Յունիս 6ին, մահացած Մոսկուա՝ 1 Մայիս 1978ին: Թաղուած է Հայաստան, Կոմիտասի անուան Պանթէոնին մէջ: Տես՝ Aram Khachaturian Wikipedia:

137. Գէորգ Թահթա (1895-1980)

Գէորգ Թահթա (Թահթապուրունեան) եւ իր երկու եղբայրները, որոնք կերպասի վաճառատուն ունեցած են Պոլսոյ մէջ, որոշած են առեւտրական գրասենեակ մը հաստատել Մանչեսթրի մէջ: 1927ին Գէորգ Մանչեսթր հաստատուած է եւ հիմնած՝ «Թահթապուրունեան Եղբայրներ» ընկերութիւնը, որ յետոյ վերանուանուած է՝ «Manchester Textile Exporter»: Հետագային՝ Թահթապուրունեանը կրճատուած ու դարձած է Թահթա: Գէորգ հանգստեան կոչուելով՝ հաստատուած է Լոնտոն, ուր իր գործօն մասնակցութիւնը բերած է համայնքի եկեղեցական, ազգային եւ մշակութային կեանքին: Ան 100,000 սթերլին նուիրած է Համայնքային Եկեղեցական Խորհուրդին, որպէս հիմնադրամ, որով բացուած է Գէորգ Թահթա Կիւրակնօրեայ Վարժարանը, 1975ին:

138. Յովիկ Տօնապետեան Տես՝ Ծ. 134:

139. Պենլեան Հիմնադրամ

Էտուարտ Պենլեան եղած է գորգի յայտնի վաճառական Լոնտոնի մէջ: Հիմնած է «Պենլեան Հիմնադրամ»ը, հայ շքատր ուսանողներուն օժանդակելու եւ հայ մշակոյթին զարկ տալու նպատակով: Կարեւոր նուիրատութեամբ մասնակցած է նաեւ համայնական կեդրոն մը ստեղծելու համար կազմակերպուած հանգանակութեան, որմէ գոյացած գումարով, Լոնտոնի մէջ գնուած է քառայարկ շէնք մը, Ս. Սարգիս Եկեղեցոյ կից թաղի մը մէջ եւ կոչուած՝ «Հայ Տուն»: Ներկայիս «Հայ Տուն»ը կը գործածուի որպէս Հ.Հ. Դեսպանատուն:

140. Աբգար Ֆոնս

Աբգար ընտանիքի կողմէ հաստատուած բարեսիրական հիմնադրամ:

Աբգար ընտանիքի մասին տեղեկութիւն քաղելու համար տես՝ Apcar family Wikipedia:

141. Կարոյ Արեւեան

Լոնտոն հաստատուած լիբանանահայ: Բարեկամներու շրջանակին մէջ ճանչցուած է որպէս՝ «Captain Արեւեան»:

142. Ջոհրապ Աթթարեան

Ս. Սիմոնեանի փեսան, Մարալի մամուսինը, որ օղանաւային ընկերութեան մը մէջ կ'աշխատէր եւ իր պաշտօնին բերումով Անգլիա այցելութեան ժամանակ կը կատարէր նամակաբերի դեր...: Աթթարեանները ներկայիս կ'ապրին Ա.Մ.Ն.:

143. Եղիշէ Եպս. Կիզիբեան (ապա՝ Արք.)

Անթիլիասի Դպրեվանքը աւարտած է 1947ին: Նոյն տարին ձեռնադրուած է կուսակրօն քահանայ եւ նշանակուած՝ Դպրեվանքի ուսուցիչ: Եղած է Ա. Կիզիբեանի հայերէն լեզուի ուսուցիչը 1948-1950 տարիներուն: 1951ին մեկնած է Ա.Մ.Ն., ուր՝ որպէս հոգեւոր հովիւ, երեսուն տարի ծառայած է հայ եկեղեցիին: 1982ին ձեռնադրուած է եպիսկոպոս Ս. Էջմիածինի





մէջ ձեռամբ Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Ա.ի եւ ուղարկուած Լոնտոն՝ որպէս Բրիտանահայոց Թեմի Առաջնորդ եւ Կաթողիկոսական Պատուիրակ: Իր անարատ նկարագրով, անբասիր վարքով եւ օրինակելի կեանքով բոլորէն յարգուած, բոլորէն սիրուած այս ազնիւ ու համեստ եկեղեցականը ամբողջական նուիրումով ծառայած է բրիտանահայութեան աւելի քան քսան տարի, մինչեւ 2003, երբ հանգստեան կոչուելով՝ հաստատուած է Ֆիլատելֆիա:

144. Շահան Պերպերեան

Փիլիսոփայ, երգահան, մանկավարժ, հոգեբան, գեղարուեստագէտ: Պոլսոյ Պերպերեան Վարժարանի հիմնադիր Ռ. Պերպերեանի որդին: Տես՝ Schahan Berberian Wikipedia:

145. Համբարձում Պերպերեան

Հայ անուանի երաժիշտ Համբարձում Պերպերեան ծնած է Ատանա 1905ին:

1930ին աւարտած է Աթէնքի երաժշտանոցը որպէս ջութակահար, խմբավար եւ երգահան: Մինչեւ 1963 ապրած եւ ստեղծագործած է Միջին Արեւելք, ուր որպէս երաժշտութեան ուսուցիչ պաշտօնավարած է հայկական երկրորդական վարժարաններու մէջ: Անթիլիասի Դպրեվանքին մէջ եղած է Ա. Կիւզելեանի երաժշտութեան ուսուցիչը: 1970էն սկսեալ եղած է Ա.Մ. Նահանգներու եւ Քանատայի Հ.Բ.Ը.Մ.ի հովանաւորութեան տակ գործող երաժշտական կազմակերպութիւններու ղեկավարն ու ընդհանուր տնօրէնը: Հ. Պերպերեանի ստեղծագործութիւնները բազմազան են: Իր գործերէն յիշենք՝ «Շողիկ» օփերան, «Արեզնագ», «Մեր Ուխտը» օփերա-քանթատերը (Յովհաննէս Թումանեանի բանաստեղծութիւններու հիման վրայ), «Թիքեռ» մանկական օփերա-պալէն, «Խորհուրդ Վարդանանց», «Աղօթք Վաղուան Մեմին Առջեւ», «Եկեղեցին Հայկական» օրաթորիոնները, «Ռեքվիէմ» (Կոմիտասի յիշատակին), եւ այլն: Հ.Պ. գրած է բազմաթիւ մեներգներ ու խմբերգներ Ե. Չարենցի, Վ. Թէքեանի եւ այլ բանաստեղծներու խօսքերով, ջութակի եւ թաւջութակի քննցերթներ, եւ այլն: Ան երեք առիթներով հրաւիրուած է Հայաստան 1961, 1978 եւ 1982 թուականներուն: Հայաստանի Կոմպոզիտորների Միութիւնն անոր շնորհած է Կոմիտասի անուան մրցանակը:

146. «Լոնտոն»

Ասատուր Կիւզելեանի նախածեռնութեամբ եւ խմբագրութեամբ հրատարակուած ամսաթերթ (1974-1976):

147. Մանուկ Փրեանց

Ծնած է Պարսկաստան: Միջնակարգ ու բարձրագոյն ուսումը ստացած է Կալկաթա: Երկար տարիներ պաշտօնավարած է Կալկաթայի հայոց եկեղեցոյ մէջ, որպէս քարտուղար: Փրեանց եղած է քաջածանօթ հայերէն եւ անգլերէն լեզուներուն, ինչպէս նաեւ հայ եւ անգլիական գրականութեան: Անկուշտ ընթերցող՝ Փրեանց կարդացած է դասական եւ արդի բոլոր հայ գրողներու գործերը եւ կատարած՝ կարգ մը թարգմանութիւններ, որոնք տպուած են Հնդկաստան հրատարակուող անգլերէն պարբերականներու մէջ: Մ.Փ. 1962ին Կալկաթայի մէջ անգլերէնի թարգմանած է Ա. Կիւզելեանի «Համոյ եւ Տարսիլէ» պոէման, որ լոյս տեսած է 47 տարի յետոյ Երեւանի մէջ 2009ին, հայերէն քննադրին հետ համատեղ: Բացի պոէման թարգմանելէ՝ Մ.Փ. գրած է նաեւ գրքոյկ մը, «Իմ նկարողութիւնները Պրն. Ասատուր Կիւզելեանի «Համոյ եւ Տարսիլէ» Բանաստեղծութեան Մասին» խորագրով, որուն ամփոփումը լոյս տեսած է գրքի երեւանեան հրատարակութեան մէջ: Մանուկ Փրեանց մահացած է Կալկաթա 1963ին, 84 տարեկանին:

148. Ալբերտ Փարսաղանեան

Թումանեանական պարզութեամբ եւ բարոյական բարձր նկարագրով օժտուած անձ մը՝ Ալբերտ Փարսաղանեան ծնած է Լոռի, 1930ին: Նախակրթարանական ուսումը ստացած է Ալավերտիի Սպանդարեանի անուան դպրոցը, իսկ բարձրագոյնը՝ Երեւանի Պետական Համալսարանին մէջ, որուն ընթացքը ւարտելով՝ վերադարձած է ծննդավայրը եւ պաշտօնավարած՝ Սպանդարեանի անուան դպրոցէն ներս: Աշխատած է «Պիոներ Կանչ», «Դպրութիւն», «Պղնձի Ֆրոնտում» թերթերու խմբագրական կազմին մէջ: Ալբերտ Փարսաղանեան եղած է Ասատուր Կիւզելեանի մտերիմ ընկերը աւելի քան յիսուն տարի: Այդ բարեկամու-





բեան նուիրում Փարսադանեանի «Յարսարեող Բարեկամութիւն» գիրքը լոյս տեսած է Երեւանի մէջ 2004ին: Նոյն գրքի երկրորդ եւ վերամշակուած տարբերակը՝ ճոխացած բազմաթիւ լուսանկարներով եւ Ա. Կիզելեանի ստեղծագործութիւններով՝ հրատարակուած է Երեւան, 2009ին: Ալլաբեր Փարսադանեան մահացած է 2009 Մարտին, Երեւանի մէջ: 1972-2009 տարիներուն Ա.Փ. հրատարակած է հետեւալ գիրքերը. «*Լենինը Պարկազմում*», «*Ծիրիկի Արկածները*», «*Գիւրեղիքների Ծրեմարան*», «*Ես Սիրում եմ Քեզ*», «*Արարար 73*», «*Յարսարեող Բարեկամութիւն*», «*Անունների Շքահանդէս*», «*Հայր*», «*Հեղինակների Մակագրութեանը*», «*Գիւրեղիքների Ծրեմարան 2*», «*Առանց Խորտի*», «*Թղթապանակ 15*», «*Գիւրեղիքների Ծրեմարան 3*», «*Ղոզանց Անահուրեան*», «*Սրբացած Մատուցներ*», «*Գիւրեղիքների Ծրեմարան 4*», «*Գիւրեղիքների Ծրեմարան 5*», «*Կարոցականի Ուղեկից*», «*Շնորհատր Նոր Տարի*»:

Աստուր Կիզելեան այս մեծ հայրենասերն ու անբասիր մարդը հետեւեալ գնահատական խօսքերով բնութագրած է, անոր մահուան առիթով գրած «Հուսկ Բանք»-ին մէջ.

«Դու հաւատացիր լոյսին, հաւատացիր ճշմարտութեան ու մերժեցիր խաւարը ընդունել որպէս արժէք, այլ պարզապէս՝ լոյսի բացակայութիւն...: Քո հոգու թանգարանում տեղ գրաւեցին մի միայն բարիքի, զեղեցիկի ու ազնիւի նուիրում ոգեղէն արձաններ...: Որպէս քաղաքացի ու գրող, դու երբէք քո արժամապատուութիւնը, սկզբունքները, համոզումները, հոգեկան արժէքներն ու մտատրական պարկեշտութիւնը չվաճառեցիր «վասն երեսուն արծաթի»: Անպարկեշտ մարդկանց դղեակները չհրապուրեցին քեզ. նախընտրեցիր ապրել նրանցից հեռու, պարկեշտութեան աղիւտով քո կառուցած փոքր՝ բայց անաղարտ հիւղակում մինչեւ կեանքիդ վերջը: Բարեկամներով եղար շատ հարուստ, իսկ եթէ՝ պատկերաւոր ասած՝ բշնամիներդ լինէին քո օրավարձը՝ դու վաղուց սովից մահացած կը լինէիր...»

149. Երուանդ Քասունի

Հրապարակագիր, պատմաբան, բանասէր եւ ուսուցիչ: Ծնած է Հալեպ, 1937ին: Համալսարանական ուսումը ստացած է Հայկազեան Քոլեճի մէջ: Հետեւած է նաեւ Մէն Շոզէֆ Համալսարանի Հայագիտական Ամպիոնի դասընթացներուն: 1974ին Երեւանի Պետական Համալսարանէն ստացած է «Տոքթ. Փիլիսոփայութեան եւ Պատմական Գիտութիւններու» տիտղոսը, աւարտաճառ ներկայացնելով «Կիլիկիոյ Հայկական Իշխանութիւնը Մերձաւոր Արեւելքի Քաղաքական Հոլովոյթին Մէջ» ուսումնասիրութիւնը: Ե. Քասունի հեղինակ է բազմաթիւ պատմաբանասիրական աշխատասիրութիւններու, որոնցմէ յիշենք՝ «*Ամիդ (Տիարպէրի) Տիգրանակերպ (Ֆարդին) Շիրոք Հայ Պարմագրութեան Մէջ*» (1968), «*Ռուբէն Ա եւ Ռուբինեան Իշխանութեան Հիմնադրութիւնը*» (1972), «*Հայեր Կիլիկիոյ Մէջ Մինչեւ Ռուբինեան Իշխանութեան Հիմնադրութիւնը*» (1974), «*Ռուբէն Գ. Իշխանապետ (1175-1187) եւ Իր Կրակը*» (1987), «*Արթանէս Զահանայ Եզնակեան եւ «Կրօնափոխութիւնը Բարեկարգութիւն Չէ»*» (2006), «*Հայկական Միւնակ... Անհանդ Ըլլալու Երանութիւնը*» (2009): Այս հատորը նուիրում է «Բանասէր, պատմաբան, արձակագիր եւ յանդուգն հրապարակագիր Միւնոն Միւնեանի սիրելի եւ անմոռանալի յիշատակին», «*Ըննական Տեսութիւն Հայ Անկախարանականութեան Պարմութիւնը Օղակահիտող Դէմքերու եւ Եղելութիւններու*» (2009), «*Ըննական Ակնարկ «Միշրների Հերլըր»ի 1915-1918 թթ. եւ Վերածնունդի Մասին Արշանագրած Վկայութիւններուն*» (2012):

150. Սարա Չըրչիլ

Գերասանուհի, պարուհի, բանաստեղծուհի: Անգլիոյ վարչապետ Ուինսթըն Չըրչիլի դուստրը: Տես՝ Sara Churchill Wikipedia:

151. Կրանտ Հօթէլ (Grand Hotel)

Կալկաթայի լուազոյն պանդոկներէն մէկը: 1870ական թուականներուն Անի Մանք անունով տիկին մը, Կալկաթայի ամենէն նշանաւոր Չաուրիկի փողոցի 13, 14, 15 թիւ տունները համադրելով՝ փոքրիկ պանդոկ մը կառուցած է: Նոյն ժամանակաշրջանին Ջուդայէն Կալկաթա ժամանած է ոսկիի եւ թանկարժէք քարերու առետրական, Յարութիւն Ստեփանեան (Arathoun Stephen) անունով հայ մը, որ շուտով մեծ հարստութեան տէր դարձած է:





Ստեփանեան գնած է Տիկին Մանքի պանդոկն ու նոյն փողոցի թիւ 16-17 տուները, որոնց համադրութեամբ կառուցած է 500 սենեակնոց Grand Hotel-ը: Ստեփանեան կառուցած է նաեւ Stephen Mansions եւ Stephen Court բազմաբնակ հսկայ բնակելի շէնքերը Կալկաթայի՝ իսկ Mount Everest պանդոկը՝ Տարճիլիակ ամառանոցին մէջ:

152. Վիկտոր Վարդանեան

Վիկտոր Վարդան կամ Վարդանեան, ուսանած է Հռոմի Փրոփականտայի Վարժարանին մէջ: Չեռնադրուած է կաթոլիկ վարդապետ: Եկեղեցական կարգը ձգելէ յետոյ, 1930ական թուականներուն պաշտօնավարած է Հ.Մ. Դեմարանին մէջ: Պատերազմի տարիներուն եղած է ֆրանսերէնի ուսուցիչ Հռոմի Համալսարանին մէջ: Երկրորդ անգամ ըլլալով պաշտօնավարած է Հայոց Մարդասիրական Դեմարանին մէջ 1951-1957 տարիներուն:

153. Նազարէք Էլմանեան

1955-1956ին՝ եղած է Ս. Սիմոնեանի գործընկերը տպարան «Սեւան»ի մէջ: Ապա անցած՝ տպարան «Ատլաս»: Մասնագիտութեամբ՝ գրաշար:

154. Կոմա լաքա (goma laca)

Հեռաւոր Արեւելքի երկիրներուն՝ յատկապէս Հնդկաստանի որոշ մարզերուն յատուկ միջատի մը մնացորդացէն պատրաստուած հիւթ, որ գործածուած է որպէս հում նիւթ ձայնապնակներու պատրաստութեան (նախքան plastic-ի գիտը), հակաժանգային ծեփ՝ թնդանօթներու արտադրութեան մէջ, ինչպէս նաեւ՝ կահոյզի ներկ:

155. Շահէ Վրդ. Աճեմեան (ապա՝ Արք.)

Ծնած է Հալէպ, 1926ին: Նախնական կրթութիւնը ստացած է ծննդավայրի Հայկազեան Վարժարանին մէջ: 1937-39 տարիներուն ուսանած է Մխիթարեաններու, ապա՝ Ֆրերներու դպրոցը, ուրկէ շրջանաւարտ եղած է 1943ին: Նոյն տարին ընդունուած է Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի Դպրեվանքը: Կուսակրօն քահանայ ձեռնադրուած է 1947ին: 1947-50ին ուսանած է Պրիքսելի Համալսարանին մէջ, ուրկէ ստացած է գիտական աստիճան փիլիսոփայութեան եւ գրականութեան գծով: Երկար տարիներ դասուանողած է Դպրեվանքի՝ ինչպէս նաեւ Լիբանանի հայ երկրորդական վարժարաններուն մէջ: Եղած է Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Միաբանութեան անդամ (1960-1994): 1965ին եպիսկոպոս ձեռնադրուած է ձեռնամբ Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի: Հետագային Վեհափառը անոր շնորհած է նաեւ Արքութեան աստիճան: Շահէ Արք. Աճեմեան առանձին հատորներով ինչպէս նաեւ «Սիոն» ամսագիրին մէջ հրատարակած է բազմաթիւ ուսումնասիրութիւններ կրօնա-եկեղեցական, պատմական եւ փիլիսոփայական նիւթերու շուրջ: 1982ին Երուսաղէմի մէջ հիմնած է Աստուածաշունչի Հայկական Կեդրոն: 1975-1985 տարիներուն եղած է Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի անդամ: Պատասխանատու վարչական պաշտօններ վարած է նախ Անթիլիասի, ապա՝ Երուսաղէմի եւ Ս. Էջմիածինի մէջ: Դասախօսած է Գեորգեան եւ Վազգէնեան Աստուածաբանական Դեմարաններուն մէջ: Բացի հայերէնէ՝ ան կատարելապէս տիրապետած է արաբերէն, ֆրանսերէն եւ անգլերէն լեզուներուն: 1951ին, դեռ արեղայ՝ լոյս ընծայած է «Քերականութիւն Արաբերէն Լեզուի» դասագիրքը: Շ.Ա. 1994ին հաստատուած է Հայաստան եւ յաջորդ տարի հիմնած՝ Երեւանի Պետական Համալսարանի Աստուածաբանական Ամպլիոնը: Վախճանած է 2005ին:

156. Գերենիկ Եպս. Փոլատեան

Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի միաբան, որ երկար տարիներ եղած է դպրեվանքի տեսուչ: Ա. Կիլիկեան, որ ուսանած է Գերենիկ Եպիսկոպոսի տեսչութեան շրջանին, Սրբազանին հետ առնչուած բազմաթիւ դէպքեր կը յիշէ, որոնց բոլորն ալ բարձրաստիճան հայ հոգեւորականը կը վրձինեն բացասական գոյներով: Նամակ 5ի (27-03-1958) մէջ «Արդար չէք Սրբ., ձեր գործունէութիւնն ու «Էջմիածին»ի մէջ ձեր կողմէ գրուած յօդուածն են», ակնարկութիւնը կը վերաբերի «Էջմիածին» ամսաթերթի 1957 Յուլիս-Օգոստոս թիւին մէջ Գերենիկ Եպս.ի հրատարակած այն յօդուածին, որուն մէջ հնդկահայերու հասցէին խիստ բացասական արտայայտութիւններ ունեցած է Սրբազանը: Յօդուածագիրը համարձակած է հնդկահայերը ներկայացնել որպէս ձրիակերներ. «Ինչպէս այլուրք - գրած է ան - հեռաս-





տանեայ ասիերու այս ժողովուրդն ալ քաջածանօթ է վեճի, կազի ու կռիւի: Պատճառը, մենելները ապահոված են զիրենք միութայե...»:

Տեղին է նշել որ ատենին Ա.Կ. հետեւեալ յօդուածներով անդրադաճած է Գերենիկ Եպկ.ի Ծայրագոյն Արեւելքի մէջ յառաջացուցած տագնապին.

1. «Կալկասիայ Կեանք. Գերենիկ Եպկ.ս. Փոլատեանի Յառաջացուցած Տագնապին Առիթով», «Արարատ» օրաթերթ, Պէյրուս, 21, 22, 24 Օգոստոս 1958:

2. «Բաց Նամակ Գերշ. Տ. Գերենիկ Եպկ.ս. Փոլատեանին», «Նոր Աշխարհ» շաբաթաթերթ, Նիւ Եորք, 15 Նոյեմբեր 1958:

«Նոր Աշխարհ»ը նոյն թիւին մէջ «Հայ Եկեղեցիի Գերեզմանավորերը» խորագրուած խմբագրականով անդրադարձած է Գերենիկ Եպկ.ի նկարագրին եւ անոր ազգավմաս ու եկեղեցաբանդ արարքներուն:

Նոյն նամակ 5ին, (27-03-1958) մէջ՝ «պատմած ես իմ մասին գրուած գրքոյկի մասին» ակնարկն ալ կարօտ է բացատրութեան:

Գերենիկ Եպկ.ի մասին ուր էջնոց գրքոյկ մը հրատարակուեցաւ «Գերենիկ Եպիսկոպոս եւ Իր Մոլորութիւնները (Անթիլիասի Դպրեվանքէն Ներս)» խորագիրով եւ Դպրեվանքի ստորագրութեամբ: Գրքոյկը, որ թրթատարով առաքուած էր Դպրեվանքի բարերարներուն եւ հայ իրակամութեան մէջ կշիռ ունեցող ազգայիններու, կը վերաբերէր Գերենիկ Եպկ.ի միասեռականութեան: Գրքոյկին մէջ տպուած էին հատուածներ յուշատետրերէն ուսանողի մը, որ զոն գացած էր Անթիլիասի Դպրեվանքի տեսուչ Սրբազանին սեռային ախորժակներուն...:

Գերենիկ Եպիսկոպոսի մէկ աչքը սպակի ըլլալուն՝ իր հոգեւորական եղբայրները անոր «Միակամի» եւ «Քէօր» մակդիրները տուած էին: Մոլորութիւններով հարուստ այս եկեղեցականը դաշունահար սպաննուած է իր աշակերտներէն մէկուն կողմէ, 22 Նոյեմբեր, 1963ին, Պէյրուսի իր բնակարանին մէջ:

157. **Ճալտա (Jhalda)**

Հնդկաստանի Պենկլալ Նահանգին մէջ տարածաշրջան մը, ուր եղած է փոքր հայ համայնք մը, որ զբաղած է կոմա լաքայի արտադրութեամբ եւ արտածումով: Յատկեալ տեղեկութեան համար տես Jhalda Wikipedia:

158. **Գիտ Վրդ. Նազգաշեան** (ապա՝ Արք.)

Ծնած է Հալեպ 1932ին: Աւարտած է քաղաքի Կիլիկեան Վարժարանը: 1948ին ընդունուած է Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի Դպրեվանքը, որուն դասընթացքը ւարտած է 1955ին եւ նոյն տարին ձեռնադրուած՝ կուսակրօն եկեղեցական: Երկար տարիներ աշխատած է Փարիզի մէջ, որպէս օգնական Մերովբէ Արք. Սանուկեանի, որուն վախճանումէն ետք, ընտրուած է Առաջնորդ եւ Կաթողիկոսական Պատուիրակ Ֆրանսահայոց Թեմի: Ներկայիս հանգստեան կոչուած՝ կ'ապրի Փարիզի մէջ:

159. **Խաղ Արք. Աջապահեան**

Ծնած է Սիս, 1883ին: Աւարտած է Սիսի Ժառանգաւորաց Վարժարանը: Կուսակրօն եկեղեցական ձեռնադրուած է 1909ին: 1916-22 տարիներուն եղած է Պէյրուսի Ս. Նշան Հոգեւոր տեսուչ, 1923-24ին Հալեպի՝ իսկ 1929-33 Դամասկոսի մէջ Կաթողիկոսական Փոխանորդ: Եղած է Անթիլիասի մէջ տեղապահ, 1943-45ին եւ 1952-1955ին: Վախճանած է 1968ին:

160. «Էջմիածին»

«Էջմիածին» ամսաթերթը Մայր Աթոռի պաշտօնաթերթն է, որ սկսած է լոյս տեսնել 1944ին: «Էջմիածին» շարունակութիւնն է «Արարատ» ամսաթերթի, որ սկսած է հրատարակուիլ 1868ին. Գեորգ Դ. Կաթողիկոսի կողմէ:

161. **Վրքանէս Փափազեան**

Գրող, հասարակական-յեղափոխական գործիչ, գրաքննադատ, խմբագիր, ազգագրագէտ եւ ուսուցիչ: Ծնած է Վան, 1864ին: 1894ին ւարտած է Ժընեւի Համալսարանի Գրականութեան եւ Հասարակական Գիտութիւններու բաժինը: Գրական գործերէն յիշենք՝ «Պարկերներ Թուրքահայոց Կեանքից» (1891), «Պարունուածքներ Թուրքահայերի Կեանքից»





(1904), «*Լուր Դս Լուր*», «*Արշալոյս*», եւ այլն: Վ. Փափագեան առաջինը եղած է որ գրած է հայ գրականութեան ամբողջական պատմութիւնը, «*Պատմութիւն Հայոց Գրականութեան, Սկզբից Մինչև Մեր Օրերը*»: Փափագեան եղած է իր ժամանակի ամենէն զարգացած մտաւորականներէն մէկը. տիրապետած է 14 լեզուներու: Ունի բազմաթիւ թարգմանութիւններ տարբեր լեզուներէ, որոնցմէ յիշենք՝ Լ. Թոլսթոյ, Նարինանով, Նիցշէ: Եղած է յեղափոխական, որուն համար ցարական եւ թրքական պետութիւնները հալածած են զինք:

162. Պօղոս Քին. Պետրոսեան

Պարսկահայ Պօղոս Պետրոսեան չափահաս տարիքին եկած է Անթիլիաս եւ ուսանած՝ Դպրեվանքի քահանայից դասարանին մէջ: Քահանայ ձեռնադրուած է եւ շրջան մը Պարսկաստան քահանայազործել է ետք՝ նշանակուած է կալկաթահայոց հոգեւոր հովիւ:

163. Արամայիս Քին. Միրզայեան

Ծնած է Պարսկաստան: Աւարտած է Հ.Մ. Գեմարանը: Երկու տարի հետեւած է Կալկաթայի Bishops College-ի՝ իսկ երեք տարի ալ՝ Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Ժառանգաւորաց Վարժարանի դասընթացքներուն: 1947ին ամուսնացած է եւ նոյն տարին ձեռնադրուած՝ քահանայ Ջուղայի մէջ: 1948ին հրաւիրուած է Կալկաթա, որպէս հոգեւոր հովիւ: 1958ին Ատոլիկ Եպկ. Դազարեանի կարգադրութեամբ նշանակուած է Սիտնիի նորակառոյց եկեղեցիին հոգեւոր հովիւ: Տէր Արամայիս մեծ ներդրում ունեցած է աստրալահայ գաղութի կազմաւորման աշխատանքին մէջ:

164. «Արարատ»

Պէյրութ հրատարակուող օրաթերթ, հիմնուած՝ 1937ին: Պաշտօնաթերթ՝ Ս.Գ.Հ. Կուսակցութեան:

165. Եղիա Նաճարեան

Ծնած է Պէյրութ 1932ին: 1947-1952ին երկրորդական ուսումը ստացած է Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի Դպրեվանքը: Ե.Ն. եղած է իր շրջանի Դպրեվանքի ամենէն խոստումնալից ուսանողներէն մէկը, օժտուած՝ գրելու բացառիկ տաղանդով: Դպրեվանքէն թերաւարտ՝ շրջան մը ուսուցչութեամբ պարապել է ետք՝ 1953 Օգոստոսին ստանձնած է «Այգ» օրաթերթի խմբագրութիւնը: 1958ին տեղափոխուած է Սով. Հայաստան, ուր բարձրագոյն ուսում ստացած է ԵՊՀ-ի Արեւելագիտութեան Ինստիտուտի Արաբագիտութեան բաժնին մէջ: Ե.Ն. եղած է հիմնադիրը Հայաստանի Ս.Գ.Հ. Կուսակցութեան (1991): Արտագաղթած է Պէյրութ, ուր եւ մահացած՝ 6 Յունուար 2008ին: Եղիան հեղինակ է բազմաթիւ ուսումնասիրութիւններու եւ յօդուածներու: Իր հեղինակած գիրքերէն յիշենք՝ «*Արարական Ազգային-Մշակութային Չարքօնք*» (1988 Երեւան) եւ «*Արցախեան Հարցի Մեւ Թղթածրարը*» (1989 Պէյրութ):

166. Յովհաննէս Միքայէեան

Հնդկահայ վաճառական: Ծնած է Նոր Ջուղա 1900ին: Նախնական ուսումը ծննդավայրի ազգային վարժարանին մէջ ստանալ է ետք, յաճախած է Կալկաթայի Հ.Մ. Գեմարանն ու Սուրբ Ձեպիէն Քոլէճը: Ան եղած է կալկաթահայ համայնքի նուիրեալ ղեկավարներէն մէկը: Երկար տարիներ ծառայած է եկեղեցիին, Հ.Մ. Գեմարանին եւ Հայ Ակումբին, որպէս վարչական ու հոգաբարձու: 1955ին որպէս հնդկահայ գաղութի պատգամատուր, մասնակցած է Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Ա.ի ընտրութեան Պետրոս Ալեքսեանի եւ Հայկ Նաճարեանի հետ:

167. Հայկ Նաճարեան

Ծնած է Նոր Ջուղա 1897ին: Հ.Մ. Գեմարանը ասարտել է ետք՝ երկրաչափական ուսում ստացած է Պրն Ընկերութեան մէջ, ուր եւ աշխատած է մինչեւ հանգստեան կոչուիլը: Նաճարեան եղած է հայ համայնքի ազգանուէր ղեկավարներէն մէկը, որ երկար տարիներ աշխատած է որպէս Հ.Մ. Գեմարանի հոգաբարձու, եկեղեցոյ, Հայկական Ընկերութեան, Հայկազեան Միութեան վարչութեանց անդամ եւ սկաուտապետ: Նաճարեանն ալ՝ Պ. Ալեքսեանի եւ Յ. Միքայէլեանի հետ մասնակցած է Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Ա.ի ընտրութեան: Ան պարապած է նաեւ գրականութեամբ: Հրատարակած է «*Արգար, Հայաստանի Առաջին Քրիստոնիայ Թագաւորը*» եւ «*Էջմիածին*» թատրերգութիւնները:





168. Մաղաքիա Պատրիարք Օրմանեան

Ծնած է 1841ին, վախճանած՝ 1918ին: Եղած է Պոլսոյ պատրիարք 1986-1908ին: Տես՝ Malachia Ormanian Wikipedia:

169. Գասպարեան

Երկար տարիներ ծառայած է Կալկաթայի հայոց եկեղեցիին, որպէս տիրացու:

170. Վահան Եպս. Կոստանեան (ապա՝ Արք.)

Էջմիածինի միաբան: Վահան Արք. Կոստանեան շրջան մը վարած է Իրանա-Հնդկաստանի Թեմի Առաջնորդութիւնը: Գէորգ Զ. Կաթողիկոսի վախճանումէն ետք, ընտրուած է տեղապահ: 1952ին մասնակցած է Գարեգին Կաթողիկոս Յովսէփեանցի յուղարկատրութեան, որպէս Մայր Աթոռի ներկայացուցիչ:

171. Մանուկ Աբեղեան

Անուանի հայագէտ, գրականագէտ, բանասէր: Ծնած է 1865 Նախիջեան, մահացած 1944ին՝ Երեւան: Տես՝ Manouk Abeghian Wikipedia:

172. «Նոր Ազգարար»

Կալկաթաբնակ ջողայեցի Զերեթիա Համանեան հրատարակած է «Նոր Ազգարար» պարբերաբերքը 1950-1956 տարիներուն:

173. Տաքա (Dacca)

Մինչեւ Փաքիստանի եւ Հնդկաստանի բաժանումն անգլիացիներու կողմէ 1947 թուականը, Տաքա մաս կազմած է Հնդկաստանի Պենկալ նահանգին: Յիշեալ բաժանումին հետեւանքով՝ ան տրուած է Փաքիստանին: 1971ին, Տաքան դարձած է նորաստեղծ Պանկլատեշի հանրապետութեան մայրաքաղաքը: Անգլիական տիրապետութեան շրջանին, Տաքան եղած է Արեւելեան Պենկալիայի առետրական կարեւոր կեդրոններէն մէկը, ուր՝ 17րդ դարու սկիզբէն, գոյութիւն ունեցած է հայ համայնք, կեդրոնացած՝ քաղաքի Armanitolla շրջանին մէջ: Տաքայի հայ համայնքը Armanitolla-ի ազգային գերեզմանոցին մէջ կառուցած է մատուռ մը: 18րդ դարու վերջաւորութեան զգալապէս աճած է Տաքայի հայ համայնքը, որուն իրբեւ հետեւանք, գոյութիւն ունեցող մատուռին փոխարէն, կառուցուած է Ս. Յարութիւն եկեղեցին, 1781ին: Եկեղեցիին օծումը կատարած է Եփրեմ Եպս. (հետագային Եփրեմ Ամենայն Հայոց Կաթողիկոս): Ներկայիս Տաքայի մէջ հայ չկայ:

174. Մասեհ Բաբաջանեան (Massy Baba John)

18րդ դարու վերջաւորութեան Կալկաթայի ամենէն յայտնի առետրականներէն մէկը եղած է Մասեհ Բաբաջանեանը, որ ծնած է Պարսկաստանի Համատան քաղաքին մէջ: 1794 թուակիր կտակով, ան իր ամբողջ հարստութիւնը ժառանգ ձգած է հետեւեալ նպատակներու համար.

1. Հարստութեան յիսուն առ հարիւրը՝ Նոր Նախիջեանի հայկական դպրոցներուն, որբանոցին, հիւանդանոցին եւ աղքատախնամին:

2. Մնացեալ կէսին եօթանասուն հինգ առ հարիւրը՝ Կալկաթայի քաղաքական բանտարկեալներուն:

3. Մնացեալը՝ այն աղքատներուն, որոնք Հայաստանէն Հնդկաստան եկած են գործ փնտռելու:

Նշենք որ 1861ին, Նոր Նախիջեանի հայերը անուանի գրող Միքայէլ Նալբանդեանը դրկած են Կալկաթա, Մասեհ Բաբաջանեանի կտակէն զոյացած եկամտով Նոր Նախիջեան առաքելու հարցով: Մասեհ Բաբաջանեան մահացած է 1802ին:

175. Տարճիլինկ (Darjeeling)

ԺԹ՝ դարու կէսերուն, Հիմալայեան լեռներու լանջին անգլիացիներու կողմէ կառուցուած ամարանոց, ուր կալկաթահայերու հարուստ դասակարգն իր ամառնային արձակուրդը անցուցած է:

176. Եղիշէ Պատրիարք Դուրեան

Ծնած է Պոլիս 1860ին, վախճանած Երուսաղէմ՝ 1930ին: Գրող, բանաստեղծ, բանասէր, գրաբառագէտ: Պետրոս Դուրեանի կրտսեր եղբայրը: Եղած է Երուսաղէմի հայոց պատրիարք 1921-1929ին: Տես՝ Yeghishe Tourian Patriarch Wikipedia:





177. Բենիամին Թաշեան

Ծնած է Ատափագար 1896ին: 1923էն ետք ապրած է Եգիպտոս: 1947-1960ին եղած է «Յուսաբեր»ի խմբագիր: 1961ին հրաժարած է պաշտօնէն եւ նուիրում՝ գրական աշխատանքի: Կեանքի վերջին տարիներուն երկրորդ անգամ ըլլալով ստանցնած է նոյն թերթին խմբագրութիւնը: Մահացած է 1971ին: Իր հրատարակած գործերն յիշենք՝ «Ներածութիւն Հայ Գրականութեան Պատմութեան», «Լսարան Հայ Լեզուի», «Լեզուական Հարցեր», «Թիրն ու Թերին»: Հրատարակած է նաեւ «Հայկարան» հայ լեզուի դասագիրքերը շարքը:

178. Յակոբ Նորունի

Լիբանանահայ գրող: Հրատարակած է ոտանատրոներու հատոր մը, «Սահմանագրուի» վերնագրով:

179. Մկրտիչ Պէշիկթաշեան

Ծնած է Պոլիս 1828ին: Նախնական ուսումը Պոլսոյ Մխիթարեան Վարժարանին մէջ ստանալէ ետք՝ ընդունուած է Փատովայի Մուրատ Ռաֆայէլեան Վարժարանը, ուրկէ շրջանաւարտ եղած է 1845ին: Վերադարձած է Պոլիս, ուր պարապած է ուսուցչութեամբ: Բացի հայերէնէ՝ դասաւանդած է նաեւ ֆրանսերէն: Եղած է ուսուցիչը Սրբուհի Վահանեանի, որ միայն ֆրանսերէն կը խօսէր: Շնորհիւ Մ.Պ.ի ջանքերուն, Սրբուհին ոչ միայն սորված է տիրապետած է հայերէնի, այլ դարձած է հանրաձանօթ հայ կին գրող, որ հայ գրականութեան մէջ ծանօթ է Սրբուհի Տիւսափ անունով: Սրբուհին ամուսինը եղած է երաժշտութեան ուսուցիչ, ֆրանսացի Paul Dussapeը: Մ.Պ. կը նկատուի արեւմտահայ թատրոնի հիմնադիրներէն մէկը: Ան 1856ին հիմնած է թատերախումբ մը, որ բեմադրած է աշխարհաբար թատերգութիւններ: Մ.Պ. գրած է շարք մը պատմական բովանդակութեամբ եւ հայրենասիրական ոգիով գործեր, ինչպէս նաեւ թարգմանած՝ կարգ մը թատերգութիւններ իտալերէն եւ ֆրանսերէնէ: Ան գրած է նաեւ երաժշտական կատակերգութիւններ: Մ.Պ.ի արժէքը սակայն, որպէս գրող կը կայանայ իր բանաստեղծութիւններուն մէջ, որոնք թէն քիչ են թիով, ընդամենը վաթսուն հատ, բայց ունին մեր գրականութեան՝ յատկապէս քնարական բանաստեղծութեան պատմութեան մէջ մնայուն արժէք: Ան ունի սիրային, հայրենասիրական եւ բնութեան նուիրում քերթուածներ: Մ.Պ. միշտ ներփողած է հայ ժողովուրդի միասնականութիւնը, որուն գեղեցկագոյն արտայայտութիւնն է «Եղբայրք Եմք Մեք» բանաստեղծութիւնը: Իր «Ոհ Ինչ Անոյշ եւ Ինչպէս Չով» քերթուածը երգի վերածած է Տիգրան Չոխաճեան:

180. Միսաք Մեծարեան

Վաղամեռիկ հայ բանաստեղծ: Ծնած է 1886ին, մահացած՝ 1908ին:

Տես՝ Misak Metsarents Wikipedia:

181. Սիամանթոյ

Նահատակ հայ բանաստեղծ: Տես՝ Siamanto Wikipedia:

182. Գանիէ Վարուժան

Նահատակ հայ բանաստեղծ: Տես՝ Daniel Varoujan Wikipedia:

183. Վահան Թէքէեան

Բանաստեղծ, հրապարակագիր, մանկավարժ, ազգային գործիչ: Ծնած է 1878ին, մահացած՝ 1945ին: Տես՝ Vahan Tekeyan Wikipedia:

184. Հայկազեան Գեղարուեստական Միութիւն

Հիմնադրուած է Կալկաթայի մէջ 1920ին: Դանչցուած է նաեւ «Հայկազեան Միութիւն» եւ «Հայկազեան Մշակութային Միութիւն» անուններով: Միութիւնը մեծ դեր խաղցած է կալկաթահայոց մշակութային եւ գեղարուեստական կեանքին մէջ: Ունեցած է իր երգչախումբն ու թատերախումբը, որոնց գործունէութեան մասնակցած են նաեւ Հայոց Մարդասիրական Դեմարանի եւ Դարբանց Օրիորդաց Վարժարանի ուսանողները:

185. Կոմիտաս Վարդապետ

Սկրտութեան անունով Սողոմոն Սողոմոնեան՝ ծնած է Քէօթահիա 1869ին, վախճանած Փարիզ՝ 1935ին: Կը նկատուի հայ դասական երաժշտութեան հիմնադիրը: Տես՝ Komitas Wikipedia:





186. Անթուան Մէյէ

Ծնած է 1866ին, վախճանած՝ 1936ին: Կը նկատուի 20րդ դարու առաջին յիսնամեակի ամենէն յայտնի ֆրանսացի լեզուաբանը: Մէյէյի արեւելագիտական եւ հայագիտական դասընթացքներուն հետեւած է նաեւ Հ. Աճառեան: Տես՝ Antoine Meillet Wikipedia:

187. «Համոյ եւ Ֆատիլէ»

Ասատուր Կիւզելեանի պոէման, որ լոյս տեսած է Ս. Սիմոնեանի տպարան «Մեւան»էն, 1960ին:

188. Ժիրայր Օրագեան կամ Գերարտոյ Օրագ

Մեծատաղանդ հայ նկարիչ: Ծնած է Պոլիս 1901ին, մահացած Հռոմ՝ 1962ին: 1920ին մեկնած է Իտալիա եւ յաճախած՝ Հռոմի Գեղարուեստական Ակադեմիան: Ժ.Օ. հեղինակ է բազմաթիւ գծանկարներու, իւղաներկ եւ ջրաներկ աշխատանքներու: Յատկապէս Մեծ Եղեռնի թեմայով անոր նկարները լեցուն են հայրենիքէն հեռու ապրող մարդու կեանքի ողբերգութեամբ եւ կարօտի, ինչպէս նաեւ զրկանքներով լեցուն անձնական կեանքի տրամադրութիւններով: Օրագեանի տիպարները արտակարգ արտայայտչականութիւն ունին, մանաւանդ անոնց տխուր ու թախծոտ աչքերը: Օրագեանի նշանաւոր գործերէն յիշենք՝ «Ջարդը», «Յանկութիւն» (1951), «Յիշատակներ Հայաստանէն», «Քաղաքը», «Նահատակներ» (1952), «Պար», «Ջրոյց», «Երեխաներ» (1960), «Սրճարանի Մէջ» (1961): Օրագեանի հարիւրէ ատիկ գործերը կը պահուին Հայաստանի Պետական Պատկերասրահին մէջ:

189. Իտա Քար

Անուանի լուսանկարչուհի Իտա Քար (Քարամեան) ծնած է Ռուսիոյ Թապով քաղաքին մէջ, 1908ին: 1928ին մեկնած է Փարիզ ուսանելու: Աւարտելով ուսումը՝ հաստատուած է Գահիլի, ուր առաջին ամուսինին՝ լուսանկարիչ Էտմոն Պելալիի հետ հիմնած է լուսանկարչական «Իտապել» հաստատութիւնը, 1933ին: 1945ին տեղափոխուած է Լոնտոն, ուր երկրորդ ամուսինին՝ արուեստագէտ Victor Musgrave-ի հետ բացած է լուսանկարչական Musgrave's Gallery պատկերասրահը: Իտա Քար համաշխարհային համբաւի արժանացած է լուսանկարելով նշանաւոր արուեստագէտներ եւ գրողներ: Այդ լուսանկարները ցուցադրած է «Քառատուն Արուեստագէտներ Փարիզէն եւ Լոնտոնէն» խորագրուած ցուցահանդէսին մէջ, Լոնտոն, 1954ին: Իտա Քարի համբաւին զագաթնակէտը եղած է Լոնտոնի Whitechapel Պատկերասրահին կազմակերպած անհատական ցուցահանդէսը, որ արժանացած է քննադատներու բարձր գնահատանքին: Քար մահացած է 1974ին: 2011ին, Լոնտոնի հռչակաւոր National Portrait Gallery-ին «Ida Kar: Bohemian Photographer» հեղինակային ցուցահանդէսով մը ներկայացուցած է հայ մեծ արուեստագիտուհիին գործերը:

190. Գարուն Նաթանեան

Պոլսահայ գրող-հրապարակագիր:

191. Արա Ալիմեան կամ Արա Ալիմօղլու

Պոլսահայ հրապարակագիր: Եղած է Պոլսոյ «Ժամանակ» թերթի աշխատակից եւ խմբագրական կազմի անդամ:

192. Գալուստ Կիւլպէնկեան

Ծնած է Պոլիս 1869ին, մահացած Լիզպոն՝ 1955ին: Մեծ դեր խաղցած է Միջին Արեւելքի քարիւղի արտադրութիւնն ու վաճառքը արեւմտեան ընկերութիւններու տրամադրութեան տակ պահելու ծրագրի իրականացման մէջ: Համաձայն իր կտակին՝ կազմուած է «Գալուստ Կիւլպէնկեան Բարեսիրական Հիմնարկութիւն»ը Լիզպոնի մէջ: Տես՝ Calouste Gulbenkian Wikipedia:

193. Նուպար Կիւլպէնկեան

Բարերար Գալուստ Կիւլպէնկեանի որդին: Ծնած է Պոլիս 1896ին, մահացած հարաւային Ֆրանսա՝ 1972ին: Տես՝ Nubar Gulbenkian Wikipedia:

194. Պսակ Եպս. Թումայեան (ապա՝ Արք.) (1912-1981)

Ուսումը ստացած է Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Ժառանգաւորաց Վարժարանին մէջ: Չեռնադրուած է կուսակրօն քահանայ եւ զանազան պաշտօններ վարած պատրիարքարանէն ներս: Երկար տարիներ պաշտօնավարած է Անգլիոյ մէջ, նախ՝ որպէս Լոնտոնի





Ս. Սարգիս Եկեղեցույ հոգևոր հովի, ապա՝ իբրև Բրիտանահայոց Թեմի Առաջնորդ եւ Կաթողիկոսական Պատուիրակ:

195. Ասատուր Ամատունի

Ս. Սիմոնեանի բարեկամներէն, որ շրջան մը Սուրիա, Լիբանան եւ Կիպրոս ապրելէ ետք՝ հաստատուած է Անգլիա:

196. Ալպերթ Հոլ (Albert Hall)

Շուրջ հինգ հազար հանդիսատեսի համար նախատեսուած բազմամպատակ աշխարհահռչակ սրահ Լոնտոնի մէջ, կառուցուած Մարտ, 1871ին: Ալպերթ Հոլի մէջ բացի համերգներէ՝ տեղի կ'ունենան նաեւ ցուցահանդէսներ, հանրային հաւաքոյթներ եւ մարզական խաղեր: Երաժշտական աշխարհին մէջ մեծ վարկ վայելող այս սրահին մէջ ելոյթ ունեցած են նաեւ կարգ մը հայ արուեստագէտներ, ինչպէս՝ Արամ Խաչատուրեան, Շարլ Ազնաւուր, քաջութակահարուհի Կարինէ Գեորգեան, եւայլն:

197. Գէորգ Ֆերմանեանց

Վաթսունական թուականներուն համաշխարհային մեծ համբաւի տիրացած պարող (պալէ): Մոսկուայի Պոլշոյ Թատրոնի Պալէի Խումբին աստղերէն, որ 1960ին ելոյթ ունեցած է Ալպերթ Հոլի մէջ:

198. Ասիական Ընկերութիւն (The Asiatic Society)

Հիմնուած է Կալկաթա, Հնդկաստան, Ուիլիամ Շոնզի (Sir William Jones) կողմէ 1784ին: [Stu` Asiatic Society Wikipedia:](#)

199. Չարլզ Տաւսէթ (Charles Dowsett)

Անգլիացի հայագէտ: Ծնած Լոնտոն, 1924ին: 1954-65 եղած է Լոնտոնի Համալսարանի Արեւելեան եւ Ափրիկեան Գալոնի Հայագիտական Ամպիոնի վարիչ, իսկ 1965-91 տարիներուն՝ տնօրէն Օքսֆորտ Համալսարանի Գալուստ Կիւլպէնկեան Հայագիտական Ամպիոնի: Իր հեղինակած գործերէն յիշենք՝ «*History of the Caucasian Albanians*» (1961) (translator), «*Penitential of David of Gandzak*» (1961) (translator), «*Kutahya Tiles and Pottery from the Armenian Cathedral of St. James*», Jerusalem, 2 volumes, with John Carswell (1972), «*Sayat Nova: An 18th-century Troubadour: a Biographical and Literary Study*» (1996):

Չարլզ Տաւսէթ Charles Downing գրչամուտով հրատարակած է հետեւեալ հեքիաթներն ու առակները. «*Tales of the Hodja*» (1964), «*Russian Tales and Legends*» (1956), «*Armenian Folktales and Fables*» (1972):

200. «Հայաստանի Կոչնակ»

Լոյս տեսած է 1900-1968 Պոսթոն եւ Նիւ Եորք: 1900-1919 թերթը կոչուած է «Կոչնակ», իսկ 1919-1920՝ «Կոչնակ Հայաստանի»:

201. Լեւոն Վարդան (1925-1997)

Գրող, բանաստեղծ, պատմաբան, հրապարակագիր, խմբագիր, ուսուցիչ: 1962ին Պէյրութի Ամերիկեան Համալսարանէն ստացած է Մագիստրոս Արուեստից աստիճանը, յաջողութեամբ պաշտպանելէ յետոյ «The Republic of Armenia» ասարտանառը: Շուրջ երեսուն տարի դասաւանդած է Հայկագեան Քոլեճի մէջ:

Ծառալուն յօդուածներով աշխատակցած է հայ մամուլին: Լ.Վ.ի պատմագիտական գործերէն են՝ «*Հայկական Տասնհինգր և Հայերու Լքեալ Գոյքերը*», «*Ժամանակագրութիւն Հայկական Տասնհինգր 1915-1923*», «*Թող Թուրքը Խօսի*», «*Հայկական Տասնհինգր Թուրք Մարենագիրութեան և Մամուլին Մէջ*», «*Հարկերը Օսմանեան եւ Պարսկական Կայսրութիւններուն Մէջ ԺԵ.-Բ. Դար*»: Լ.Վ.ի գրական գործերէն են՝ «*Գիրք Մեմուսաի*», «*Փիւնիկեան Ափերուն Վրայ*», «*Ինքներգութիւն*», «*Ի Խորոց Սրբի*», «*Մուշեղ Բշիսան Արշակագիրը*», «*Կրկին Հեծութիւն*», «*Հին Հին Բաներ*», «*Մարդեր Ծանբու Մայրերէն*» եւ «*Վարուժնագիր*»:

202. Ռապինտրանաթ Թակոր

Աշխարհահռչակ հնդիկ գրող: Ծնած է 1861ին, մահացած՝ 1941ին: [Stu` Rabindranath Tagore Wikipedia:](#)





203. Մայտա Քեօմիրճեան

Հայկաի Կիլիկեան Վարժարանի ուսուցիչ Նշան Քեօմիրճեանի դուստրը եւ անուանի երգչուհի Արփինէ Փեհլիվանեանի քոյրը: Քեօմիրճեանները եղած են Ա. Կիլիկեանի մտերիմ բարեկամները: Ներկայիս Մայտան, որուն ամուսինը վերջերս մահացած է, կ'ապրի Ա.Մ.Ն.:

204. Ստեփան Շահապ

Ծնած է Ատանա, 1900ին: Նախնական ուսումը ստացած է ծննդավայրի Արգարեան Վարժարանի՝ իսկ երկրորդականը՝ Պոլսոյ մէջ: 1925ին, որպէս իրաւաբան վկայուած է Փարիզի Համալսարանէն եւ տարի մը յետոյ հաստատուած՝ Աղեքսանդրիա, ուր իր մասնագիտական աշխատանքներուն զուգահեռ ունեցած է կարեւոր ազգային-մշակութային գործունէութիւն: Ս.Շ.ի գրչին կը պատկանին «*Կարագոյրիմ Երեւը*» (1946), «*Օրերուն Հետը*» (1970) վէպերը, «*Մենք Հայերս*» (1959), «*Գրիգոր Զօհրայ*» (1959), «*Եզիպարոսի Հայերը*» (Ֆրանսերէն 1966) ուսումնասիրութիւնները, «*Տողանցք*» (1967), երգիծական պատկերներու ժողովածուն եւ «*Մեր Երկիրը*» հատորները:

205. «Նոր Կեանք»

Սկսած է լոյս տեսնել որպէս շաբաթաթերթ 1950ին, Պուքարեսի մէջ. Ռումանահայ Դեմոկրատական Կոմիտէի կողմէ. պետութեան հովանաւորութեամբ:

206. Պօղոս Մնապեան

Լիբանանահայ գրող: Երուսաղէմի Ժառանգաւորաց Վարժարանին մէջ աշակերտած է Յ. Օշականին: Կարոյ Մասունիի եւ Եղուարդ Պոյաճեանի հետ խմբագրած է «Բագին»ը 1962էն սկսեալ: Մնապեանի գրական գործերէն յիշենք՝ «*Յեղափոխութեան Համար*», «*Վերջին Արար*», «*Ես Այդ Շունն եմ*», «*Աղբարներուն Ասանդութիւնը*», «*Ինչպէս Հայիցիմ*»: Մահացած է 14 Յունիս, 2014ին:

207. Արտաշէս Տէր Խաչատուրեան (1931-1993)

Անթիլիասի Դպրեվանքի մէջ եղած է Գարեգին Կաթողիկոս Սարգիսեանի դասընկերը: Երկար տարիներու կրթական մշակ: Ունեցած է հայերէն գիրքերու, յայտարարութիւններու, օրացոյցերու եւ հայ մշակոյթի հետ կապուած այլ վաւերագրերու բացառիկ հասարածոյ: Հրատարակած գործերէն յիշենք՝ «*Շահան Ռ. Պէրպէրեան, 1891-1956: Կենսագրութիւն եւ Մատենագիտութիւն*», «*Ուղղագրական Ուղեցոյց*», «*Հայ Մամուլի Յուցահանդէս, 1794-1964*», «*Հայ Տպագրութեան Նախակարապետը՝ Մեղապարտ Յակոբ*», «*Հայ Մամուլի Յուցակ*», «*Հայ Մշակութային Գանձերու Փրկութեան եւ Պահպանման Հրամայականը*», «*Մատենագիտութիւն Ռուրէն Զարդարեանի*», «*Տարօն*» (Հաւաքածոյ Ժողովրդական Երգերու), «*Տարօնի Խոհագիրք*»ը:

208. Մեսրոպ Մէթ (Mesrobs J. Seth) կամ Մեսրոպ Յ. Սեթեանց

Մեծանուն պատմաբան, բանասէր, գրաբարագէտ եւ հնագէտ Մեսրոպ Մէթ, կամ՝ ինչպէս ինք նախընտրած է կոչուիլ՝ «*Ջուղայեցի Մեսրոպ Յ. Սեթեանց*», ծնած է Ջուղա, Պարսկաստան, 1871ին: Ուսումը ստացած է Կալկաթայի Հայոց Մարդասիրական Դեմարանին մէջ: Մէթ իր ամբողջ կեանքը նուիրած է հնդկահայոց պատմութեան ուսումնասիրութեան: Շուրջ յիսուն տարի շրջելով ամբողջ Հնդկաստանը, գրի առած է հայկական գերեզմանաբարերու արձանագրութիւնները, հաւաքած՝ արխիւային նիւթեր, պրպտած՝ թանգարաններ, գրադարաններ եւ ձեռք բերած նիւթերու հիման վրայ գրած՝ իր կոթողային գործը, «*Հայերը Հնդկաստանի մէջ*» («*Armenians in India*») 629 էջերէ բաղկացած գիրքը, որ 1937ին լոյս տեսած է Կալկաթայի մէջ: Մեսրոպ Մէթ հրատարակած է բազմաթիւ յօդուածներ հայոց պատմութեան եւ մշակոյթին հետ առնչուող հարցերու շուրջ: Իր «*Republic of Armenia*» գիրքը, հրատարակուած 1924ին՝ նուիրուած է Մովսէսական Հայաստանին: Մ. Մէթ անդամ ընտրուած է բազմաթիւ գիտական հաստատութիւններու, ինչպէս՝ «*Royal Asiatic Society of Bengal*», «*Royal Asiatic Society of Great Britain and Ireland*», «*Historical Records Commission*», «*Calcutta Historical Society*», «*Numismatic Society of India*», «*The American Numismatic Society*», եւայլն: Մէթ եղած է նաեւ Կալկաթայի Համալսարանի գրաբարի եւ հա-





յերէն լեզուի քննիչ: Ի դէպ է նշել, որ Մ. Սեթ շրջան մը պարտաւորուած աշխատած է որպէս քարտուղար, Կալկաթայի հայոց եկեղեցոյ մէջ: Եկեղեցին այդ տարիներուն նամակներ կը ստանար զանազան գաղութներու մէջ ապրող հայերէ, որոնք տեղեկութիւն կ'ուզէին իրենց «հարուստ ազգականներուն ձգած կտակներու մասին...»: Վարչութիւնը պարտականութիւն տուած է Մեթին, որպէսզի տեղեկագիր մը պատրաստէ այդ մասին: «Աւելի քան յիսուն տարի ուսումնասիրած են Հնդկաստանի արխիւները, բայց մինչեւ այսօր որեւէ կտակի չեն հանդիպած...», նշած է ան իր տեղեկագրին մէջ: Չդիմանալով իր նկատմամբ եկեղեցոյ վարչութեան որդեգրած կոշտ վերաբերմունքին, Մեթ ներկայացուցած է իր հրաժարականը, զոր արտած է հետեւեալ նախադասութեամբ. «Բազումք իմաստունք ծառայեն ի դռուն տգիտաց» (շատ մը իմաստուններ կ'աշխատին տգետներու քով):

209. Սարգիս Բալասանեան (1902-1982)

Սովետահայ անուանի երաժիշտ: Ծնած է Աշխապատ: Աւարտած է Մոսկուայի երաժշտանոցը: 1928-30ին եղած է Երեւանի Սունդուկեանի անուան քատրոնի երաժշտական բաժնի ղեկավար: 1936-43ին աշխատած է Տաճիկիստանի ՍՍՀի մէջ: 1963ին ընտրուած է Ռուսաստանի Կոմպոզիտորներու Միութեան քարտուղար: 1948-51 եւ 1955 տարիներուն դասասանդած է Մոսկուայի Երաժշտանոցի մէջ: 1962-71ին վարած է նոյն հաստատութեան Ստեղծագործական Ամպիոնի վարիչի պաշտօնը: Փրոֆ. Ս.Բ. եղած է տաճիկ երաժշտական քատրոնի հիմնադիրներէն մէկը: Բալասանեանի ստեղծագործութեան կարեւոր մէկ մասը առնչուած է արեւելեան ժողովուրդներու երաժշտութեան հետ: Տաճիկ երաժշտական քատրոնին համար ան գրած է օփերաներ, որոնցմէ ամենէն ճանչցուած ու սիրուածը «Լէյլի Մեհնուն»ն է: Ռ. Թակորի 100ամեակին առթիւ գրած է հնդկական թեմայով «Շոքունթալա» օփերան, որ բեմադրուած է առաջին անգամ Ռիկայի մէջ 1963ին: Իր այդ ստեղծագործութեան համար Բալասանեան արժանացած է Ռ. Նեիրու մրցանակին: Ս.Բ. ի ստեղծագործութեան մէջ մեծ տեղ ունին նաեւ հայկական թեմայով գրուած գործերը: Յիշենք «Հայկական Ռապսոդիա», «Եօթ Հայկական Երգ», «Ութ Պիես Հայկական Ժողովրդական Թեմաներով»: Ան գրած է ռոմանսներ Ա. Իսահակեանի, Վ. Տէրեանի, Յովհ. Շիրազի եւ Գ. Էմինի բանաստեղծութիւններուն համար, Կոմիտասի ինը երգերուն մշակումը սիմֆոնիկ նուագախումբի համար, եւ այլն: Ս.Բ. դաշնամուրի համար մշակած է Կոմիտասէն հարիւր երգ, որոնք հրատարակուած են «Հայաստանի Երգերը» խորագրուած հատորով: Ս.Բ. արժանացած է հինգ շքանշաններու: Յատկեալ ծանօթութիւններու համար տես՝ Ա. Կիւզելեանի «Թերթելով Մամուլը» գիրքը, լոյս տեսած Պէյրոս, 2011ին:

210. Մեսրոպ Մաշտոց

Ծնած է 362ին, վախճանած՝ 440ին: Հայերէն տառերու գիտնէն ետք՝ գիրեր հնարած է նաեւ վրացերէնի եւ աղուաներէնի համար: Տես՝ Mesrop Mashtots Wikipedia:

211. Աշոտ Գ. Աբրահամեան (1903-1983)

Գիտութեան վաստակաւոր գործիչ, պատմական գիտութիւններու Տոքթ.-Փրոֆ.:

Ա.Գ. Աբրահամեան արարտած է Երեւանի Պետական Համալսարանի պատմատնտեսագիտական բաժնիը 1933ին: 1937ին Մոսկուայի մէջ պաշտպանած է իր թեկնածուական ատենախօսութիւնը՝ «Հայաստանի Քաղաքները Արշակունեաց, Մասանեան եւ Խալիֆայութեան Ժամանակաշրջանում» թեմայով: Մասնակցած է Հայրենական Պատերազմին: 1943ին վերադառնալով է պատերազմէն եւ ներկայացնելով «Է. Դարի Հայ Գիտնական Անանիա Շիրակացի» ուսումնասիրութիւնը որպէս թէ՛ ստացած է տոքթ.ի գիտատիճան: 1944-49ին եղած է Երեւանի Համալսարանի հայ ժողովուրդի պատմութեան ամպիոնի վարիչ, իսկ 1968էն սկսեալ՝ ղեկավարած է հնագիտութեան եւ աղբիւրագիտութեան ամպիոնը: 1944 եւ 1949-54 տարիներուն խմբագրած է «Էջմիածին» ամսագիրը: Ա.Ա. որպէս աղբիւրագետ, բանասէր եւ պատմաբան վայելած է մեծ հեղինակութիւն:

Անոր գործերէն յիշենք՝ «Անանիա Շիրակացու Մարենագրութիւնը», «Յովհաննէս Ինասարասէրի Մարենագրութիւնը», «Հայ Գրի եւ Գրչութեան Պատմութիւն», «Համառօտ Պարունութիւն Հայ Գաղթավայրերի Պարունութեան», «Մարենադարանի Չեռագիր Գանչե-





րը», եւ այլն: Աշոտ Աբրահամեանի հետաքրքրութիւնները եղած են բազմակողմանի: Անոր գրած աւելի քան 250 ուսումնասիրութիւնները նուիրուած են հայ մատենագրութեան նշանատր դէմքերուն եւ անոնց ստեղծագործութեանց:

Փրոֆ. Ա. Աբրահամեան 1955 Յունուար-Փետրուար ամիսներուն որպէս հիւր մնաց Անթիլիաս եւ տուաւ հետեւեալ եօթ դասախօսութիւնները.

ա. Հայագիտութեան Չարգացումը Մայր Հայրենիքում:

բ. Նախամետրոպէան Նշանագրերի եւ Հայ Մատենագրութեան Առեղծուածը:

գ. Եօթերորդ Դարի Գիտնական Անանիա Շիրակացի:

դ. Հայրենիքի Գիտնականների Կարծիքը Հայ Ժողովրդի Կազմաւորման Մասին:

ե. Յովհաննէս Սարկաւազ Իմաստասերի Գիտական Մատենագրութիւնը:

զ. Վերածննդի Հարցի Մասին Միջնադարեան Հայաստանում:

է. Նոր Տուեալներ Հայ Ազատագրական Ծարժումների Մասին, ԺԸ. Դարի Առաջին Երեք Տասնամեակներում:

Նոյն թուականին վերոյիշեալ դասախօսութիւնները լոյս տեսած են Անթիլիասի մէջ, «Եօթ Դասախօսութիւններ» խորագրուած հատորով:

212. Մահանճատարոյ կամ Մոհենճոտարոյ (Mohenjo-Daro)

Մոհենճոտարոյ քաղաքը կառուցուած է Ն.Ք. 26րդ դարում: 1921ին Հնդկաստանի Indus Valley կոչուած տարածաշրջանի մէջ (այժմ՝ Փաքիստան), անգլիացի անուանի հնագէտ ճոն Մարշալի (John Marshall 1878-1958) ղեկավարութեամբ կատարուած հնագիտական պեղումներու ընթացքին յայտնաբերուեցաւ Մահանճատարոյ կամ Մոհենճոտարոյ քաղաքը: Ճոն Մարշալ իր պեղումներուն մասին հրատարակեց ստուարածաւալ հատոր մը 1931ին, «Մոհենճոտարոյ եւ Հնդիկ Քաղաքակրթութիւնը» («Mohenjo-Daro and Indus Civilization») խորագրով: Փրոֆ. Աշոտ Աբրահամեան մեծ նմանութիւն կը գտնէ ճոն Մարշալի պեղումներէն յայտնաբերուած նշանագրերու եւ մեր ձեռագրերուն մէջ պահպանուած գաղափարագրերուն միջեւ: Ան հաւանական կը նկատէ որ հնդկական նշանագրերը Հայաստան բերած են Ձենոբ Գլակի «Պարմութիւն Տարօնոյ» գիրքին մէջ յիշուած իշխանները: Մոհենճոտարոյի եւ Sir John Marsall-ի մասին յաւելեալ տեղեկութեան համար տես՝ Mohenjo-Daro and Indus Civilization Wikipedia:

213. Ձենոբ Գլակ

Ծննդեան ու մահուան թուականները յայտնի չեն: Դ. դարու ասորի պատմիչ, որ Կապառովկիայէն Հայաստան եկած է Գրիգոր Լուսատրիչի հետ:

Ձենոբադրուած է Մամիկոնեան նախարարութեան Տարօն գաւառի եպիսկոպոս եւ նշանակուած՝ Ս. Կարապետ վանքի վանահայր: Յետոյ վանքն իր անունով կոչուեցաւ Գլակավանք: Իր «Պարմութիւն Տարօնոյ» գիրքը գրած է Գր. Լուսատրիչի յանձնարարութեամբ, ասորերէն կամ յունարէն լեզուով: Գլակի պատմութիւնը թարգմանած է իր գիրքին կցած է Է. դարու պատմիչ Յովհան Մամիկոնեանը: Այդ պատճառով կարգ մը բանասէրներ, ինչպէս Խալաբեան, Չ. Գլակը կը նկատեն Է. դարու պատմիչ: Ասորի պատմիչն իր աշխատութեան մէջ կը պատմէ Հայաստանի մէջ քրիստոնէութեան տարածման, հեթանոսական մեհեաններու կործանման եւ քրիստոնէական եկեղեցիներու հիմնադրման մասին: Որպէս ականատես՝ ան մանրամասն նկարագրած է Տարօնի մէջ Դ. դարու սկիզբը պատահած իրադարձութիւնները: Ձենոբի պատմութիւնը կը պարունակէ կարեւոր տեղեկութիւններ հայ եւ հնդիկ յարաբերութիւններու մասին: Ան կը պատմէ թէ ինչպէս Բ. դարուն Ն.Ք. երկու հնդիկ իշխաններ, Գիսանէ եւ Դեմետրէ կ'ապստամբին իրենց թագաւորին դէմ: Ապստամբութիւնը կը ձայնողի, որուն հետեւանքով անոնք իրենց ընտանիքներով եւ բանակներով կու գան Հայաստան, ուր հայոց թագաւորը զիրենք կ'ընդունի իշխանավայել: Հնդիկները բնակութիւն կը հաստատեն Տարօն գաւառի մէջ, ուր կը կառուցեն իրենց մեհեանները: Հնդիկ իշխանները իրենց հետ բերած էին նաեւ կրօնական մատեններ, որոնք գրուած էին գաղափարագիրերով կամ նշանագիրերով:

214. Գիսանէ եւ Դեմետրէ Տես՝ Ձենոբ Գլակ Ծ. 213





215. Մահաթմա Կանոթի

Ծնած է 1869ին, մահացած՝ 1948ին: Եղած է Հնդկաստանը անգլիական լուծէն խաղաղ միջոցներով ազատագրելու համար տարուող ազատագրական շարժման հիմնադիրն ու ղեկավարը: Տես՝ Mahatma Gandhi Wikipedia:

216. Ղալոոյ Փողոց

Պէյրութի կենդանական շուկայի մէջ փողոց՝ ուր կը գտնուէր Սիմոն Սիմոնեանի տպարան «Մեան»ը:

217. Էտմընտ Հիլլըի (Edmund Hillary)

Ծնած է 1919ին Նոր Զելանտա, մահացած 2008ին՝ նոյն երկրին մէջ: Եղած է առաջին անձը, որ մագլցած է Էվերեսթի գագաթը 1953ին: Տես՝ Edmund Hillary Wikipedia:

218. Սարիբէկ Մանուկեան

Ծնած է 1917ին Երեւան: Սովետահայ գրականագէտ: 1945ին աւարտած է ԵՊՀի Բանասիրական Բաժինը: Իր հրատարակութիւններէն յիշենք հետեւեալ գիրքերը. «*Վահան Թոթովենց*», «*Պերն Պոռնէան*», «*Լեւոն Բաշալեան*», «*Յակոբ Պարոնեան*»:

219. Եղիշէ Մարտիկեան

Սովետահայ արուեստաբան-նկարիչ: Ծնած է Պիթլիս նահանգի Վանիկ գիւղը, 1904ին: Աւարտած է Լենինկրատի Գեղանկարչութեան-քանդակագործութեան եւ ճարտարապետութեան Ինստիտուտը: Դասաւանդած է Երեւանի տարբեր բարձրագոյն հաստատութիւններուն մէջ: Ե.Մ. գրած է շարք մը մենագրութիւններ, ինչպէս՝ «*Սրեպիան Աղայեան*», «*Սովետական Հայաստանի Կերպարուեստը*», «*Ռէմպրանտ*», «*Յակոբ Կոջոյեան*», «*Այծմնիկ Ուրարտու*», «*Փանոս Թերլեմէզեան*»:

220. Հեկտոր Ռշտունի

Սովետահայ գրականագէտ-քննադատ: Ծնած է Աշտարակի շրջանի Ոսկեվազ գիւղը 1915ին: Աւարտած է ԵՊՀ-ը 1937ին: Դասաւանդած Հայաստանի տարբեր բարձրագոյն հաստատութիւններուն մէջ: Իր աշխատասիրութիւններէն յիշենք՝ «*Գեղամ Սարեան*», «*Դանիէլ Վարուժան*», «*Սիամանթոյ*»:

221. Ալեքսանդր Շիրվանզադէ

Անուանի վիպագիր, քատերագիր: Ծնած է 1858ին, մահացած՝ 1935ին:

222. Յովհաննէս Վանալանեան

Սովետահայ գրականագէտ: Ծնած է Ախալցխա 1911ին: Աւարտած է ԵՊՀ-ը: Դասախօսած է Հայաստանի բարձրագոյն հաստատութիւններուն մէջ: Գրած է հետեւեալ գիրքերը. «*Ա. Բասիակեան*», «*Պետրոս Դուրեան*», «*Միսաք Մեծարեւոց*», «*Վահան Տէրեան*», «*Դանիէլ Վարուժան*», «*Սրերիմ Դէմքեր*»:

223. Սմբատ Շահազիզ

Բանաստեղծ, մանկավարժ, հրապարակագիր: Ծնած է Աշտարակ 1840ին, մահացած Մոսկուա՝ 1908ին: Տես՝ Smbat Shahaziz Wikipedia:

224. Վահէ Կիւզելեան

Նամակին մէջ նշուած «ինչպէ՞ս է մանչուկը» խօսքը կը վերաբերի Վահէին, Ա. եւ Վ. Կիւզելեաններու առաջին զակին, որ միայն հինգ ու կէս ամիս ապրած է (1962 Յունուար 28 - 1962 Յուլիս 12): Մահացած է թունաւոր մժեղի մը խաթոցէն:

225. Գէորգ Վրդ. Կարպիսեան

Զէյթունցի ծնողաց զաւակ: Ծնած է Հալէպ: Կրօնական կրթութիւնը ստացած է Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի Գալրեվանքին մէջ: 1954ին ձեռնադրուած է կուսակրօն քահանայ: Դասաւանդած է Պէյրութի հայկական երկրորդական վարժարաններուն մէջ: Դեռ երիտասարդ՝ ծովու մէջ լողացած պահուն, սրտի կաթոածով մահացած է:

226. «Ara»

Կալկաթայի մէջ 1892ին D. J. Melik Beglar անունով դարաբաղցի մը, անգլերէն լեզուով սկսած է հրատարակել «Ara» երկշաբաթաթերթը, նուիրուած հայ գրականութեան, պատմութեան եւ ժամանակակից ազգային խնդիրներու: Մելիք Պեգլար՝ չափազանց զարգացած





անձ մը՝ եղած է Հնդկաստանի հնագիտութիւններու պահպանութեան պատասխանատու պետական հաստատութեան ընդ. տնօրէնը: Դժբախտաբար, այս մեծարժէք թերթը, ուր՝ ի միջի այլոց, անգլերէնի թարգմանուած է Րաֆֆիի գործերուն մէկ մասը, փակուած է 1895ին: Տեղին է նշել, որ «Ara»-ի միակ ամբողջական հաւաքածոն գտնուած է Ա. Կիւզելեանի գրադարանին մէջ: Ան հաւաքածոն գնած է Մելիք Պեզլարի մէկ ազգականէն: Ընդառաջելով Մատենադարանի տնօրէն, Լեւոն Խաչիկեանի խնդրանքին, Ա.Կ. 1963ին, Ասողիկ Եպկ. Ղազարեանի ձեռամբ, հաւաքածոն դրկած է Հայաստան, Մատենադարանին որպէս նուէր :

227. Քոթթայամ (Kottayam)

Կաթողիկոսանիստ քաղաք Մալապար եկեղեցոյ, որ կը գտնուի Քերալա (Kerala) նահանգին մէջ, հարաւային Հնդկաստան, ուր 1963 Նոյեմբերին Վազգէն Ա. Ամենայն Հայոց Հայրապետը, ընկերակցութեամբ Եղիշէ Պատրիարք Տէրտէրեանի եւ եկեղեցականներէ ու աշխարհականներէ բաղկացած պատուիրակութեան մը, այցելած է Մալապար Եկեղեցոյ Պատիլիոս Կաթողիկոսին: Քերալայի մէջ Վազգէն Կաթողիկոսը դիմատրած են շուրջ 250,000 հնդիկ քրիստոնէայ հաւատացեալներ: Ի դէպ է նշել որ Քերալա նահանգի բնակչութեան մեծամասնութիւնը քրիստոնէայ է:

228. Մեսրոպ Վրդ. Գրիգորեան (ապա՝ Արք.)

Ծնած է 1932ին Հալէպ եւ աւարտած՝ տեղոյն Հայկազեան Վարժարանը: Կրօնական ուսումը ստացած է Անթիլիասի մէջ: Կուսակրօն հոգեւորական ձեռնադրուած է 1953ին: Պէյրութի երկրորդական հայ վարժարաններուն մէջ դաստանդած է հայագիտական առարկաներ: 1959-1961 տարիներուն ուսանած է Անգլիոյ Տարիքմ Համալսարանի Արեւելեան Ուսմանց Կաճառին մէջ, սերտելով Միջին Արեւելքի պատմութիւն, ասորերէն, պարսկերէն, թրքերէն եւ արաբերէն: 1962ին նշանակուած է ասորիահայոց հոգեւոր հովի: Սրբազան հայրը հեղինակ է 11 գիրքերու եւ մեծ թիւով հայերէն, գերմաներէն եւ անգլերէն յօդուածներու նուիրուած՝ հայոց պատմութեան, միջնադարեան հայ գրականութեան եւ հայ եկեղեցոյ աստուածաբանութեան:

229. Տիրայր Եպս. Մարտիկեան (ապա՝ Արք.)

Ծնած է Պէյրութ, 1930ին: Յաճախած է Պէյրութի Սահակեան եւ Աբգարեան վարժարանները: Եկեղեցական ուսումը ստացած է Երուսաղէմի Ժառանգատրաց Վարժարանին մէջ 1944-1947 տարիներուն: 1947ին ծնողաց հետ ներգաղթած է Հայաստան, ուր ուսումը շարունակած է Էջմիածինի Գէորգեան Հոգեւոր Դեմարանին մէջ: 1955ին ձեռնադրուած է կուսակրօն հոգեւորական: Որպէս հոգեւոր հովի եւ թեմական խորհուրդի քարտուղար՝ դրկուած է Պաքու: 1960ին ընտրուած է առաջնորդ Ռումանիոյ եւ Պուլկարիոյ Թեմին. պաշտօն մը՝ զոր նուիրումով վարած է մինչեւ մահը, 2010 թ.: 2007ին, Երեւանի մէջ հրատարակուած է իր ինքնակենսագրութիւնը, «Կեսնք Մը Խաչի Նշանին Տակ» խորագրով:

230. Վանոս Կիւզելեան

Ա. Կիւզելեանի հօրեղբօր աղջիկը, զոր Սիմոն Սիմոնեան Ծովինար «մկրտած» է Գարուհի Յակոբեան Վարժարանին մէջ: Վանոսն՝ նախ Հալէպի Աթոնեան հիւանդանոցին մէջ՝ ապա Անգլիա ուսանած է բուժքոյրութիւն: Միացեալ Նահանգներու մէջ աշխատած է իր մասնագիտութեան գծով: Շիքակոյի մէջ վարած է հայկական ռատիոժամեր: Երկար տարիներ աշխատակցած է հայ մամուլին, յատկապէս Լոս Անճելըս հրատարակուող «Նոր Կեսնք» շաբաթաթերթին: Ներկայիս կ'ապրի Palm Springs:

231. Միսաք Թերզեան

Լիբանանահայ նկարիչ: Յովիկ Սիմոնեանի եւ Միսաքի բարեկամութիւնը սկսած է Լոնտոնի մէջ, ուր 1969-1972ին երկուքն ալ հետեւած են London College of Printing-ի դասընթացներուն:

232. Մարտիկ Կիւզելեան

Աւագութեան կարգով Ա. Կիւզելեանի երկրորդ եղբայրը, որ 46 տարեկանին ինքնաշարժի արկածի զոհ զացած է Պէյրութ-Դամասկոս ճամբուն վրայ:

233. Էճըրթըն Կարտընզ + Էճըրթըն Լոճ (Egerton Gardens + Egerton Lodge)

Կեդրոնական Լոնտոնի մէջ քսանհինգ սենեակնոց պանդոկ մը, որուն սեպիականատէ-





ըը եղած է Ա. Կիւզելեանի աներհայրը, Պետրոս Ալեքսեան, որ հնդկահայերու կողմէ ճանչցուած է նաեւ որպէս Փիթըր Ալեքսի: Յաւելեալ տեղեկութեան համար տես՝ Ալեքսեան Պետրոս կամ Փիթըր Ալեքսի Ծ.56: Երբ Ա. Կիւզելեան իր մասնագիտութեան համապատասխան գործ չէ կրցած գտնել Լոնտոնի մէջ, աներիօր առաջարկով ստանձնած է Egerton Lodge պանդոկի տնօրէնութիւնը: Պանդոկին հետ կապուած բազմաթիւ պատմութիւններէն մէկը հետեւեալն է: Պ. Ալեքսեան, օր մը Ասատուրին կը հարցնէ.

- Ասատուր, այսօր վճարովի յաճախորդ ունե՞նք:

Երբ հարցումին պատասխանը շեշտուած ՌՉ մը կ'ըլլայ՝ Պրն. Ալեքսեան կը հարցնէ.

- Չես կարծում որ պէտք է վաճառել հիւրանոցը. վերջին հաշուով, սա բարեսիրական հաստատութիւն չէ...:

- Վաճառած պէտք է լինէիք այն օրը, երբ ինձ տնօրէն նշանակեցիք, կ'ըլլայ Ասատուրին պատասխանը:

Իրողութիւնն այն է, որ Ասատուր բոլոր աղքատ ուսանողներուն ճրի սենեակ կը տրամադրէր պանդոկին մէջ...:

234. Պրենթֆորտ Նէյլոնզ (Brentford Nylons) Տես՝ Մթրըպեան Խաչիկ Ծ. 23:

235. Պեննամիւն Տիզրայէլի (Benjamin Disraeli)

Ծնած է 1804ին, մահացած՝ 1881ին: 1874-1880ին եղած է Մեծն Բրիտանիոյ վարչապետ: Տես՝ Benjamin Disraeli Wikipedia:

236. Թանիա Ալեքսի

Պետրոս Ալեքսեանի կրտսեր թոռնուհին, Այվըն եւ Սիլվիա Ալեքսիներու դուստրը, որ ինքնաշարժի արկածի մը զոհ գացած է 1972ին, տասնվեց ու կէս տարեկանին:

237. Ալան Յովհաննէս (Alan Hovhanness)

Աշխարհառշակ երաժիշտ Ալան Յովհաննէս ծնած է Ա.Մ.Ն. 1911ին, հայ հօրմէ եւ սկովտիացի մօրմէ: Աւելի քան վաթսուն համանուագներու եւ հարիւրաւոր այլ ստեղծագործութիւններու հեղինակ է: Հազիւ տասներեք տարեկան՝ գրած է երկու օփերաներ: Առաջին համանուագը (symphony) 1939ին կատարած է B.B.C. Symphony-ին, Լոնտոնի մէջ: Քառասունական թուականներուն Ա. Յովհաննէս սկսած է ուսումնասիրել հայ եկեղեցական եւ աշխարհիկ երաժշտութիւնը, յատկապէս՝ Կոմիտասի ստեղծագործութիւնները: Նոյն տարիներուն սկսած է երգեհոն նուագել հայ եկեղեցւոյ մէջ եւ հայերէն տրվիլ: Բացի արեւելեան երաժշտութեան ազդեցութեամբ (հնդկական, ճապոնական, քորիական) յօրինած ստեղծագործութիւններէն՝ ան ունի նաեւ հայ երաժշտութեան ակունքներէն քաղուած մեղեդիներու վրայ հիմնուած բազմաթիւ գործեր: 1942ին Ա.Յ. ծանօթացած է անուանի երգիչ Ենովք Տէր Յակոբեանին, որ կը կատարէր հայկական եւ քրտական աշուղական երգեր, որոնք մեծ տպաւորութիւն ձգած են աներիկահայ կոմպոզիտորին վրայ: 1940ական թուականներու երկրորդ կիսուն, «Հայ Երաժշտութեան Բարեկամներու Կոմիտէ»ն բազմաթիւ համերգներ կազմակերպած է Ա.Յ.ի երաժշտութեան նուիրուած: Կ'արժէ նշել, որ այս կազմակերպութիւնը ղեկավարած են Տոքթ. Էլիզապեթ Գրեգորի (Գրիգորեան), աներիկահայ անուանի դաշնակահարուհի եւ ջութակահար Մարոյ եւ Անահիտ Աճեմեաններ եւ Գեորգ Ասազեան, Անահիտին ամուսինը: 1946 Մայիս եւ Յունիս ամիսներուն Ա.Յ. երբ ապրած է հայ ընտանիքի մը քով, գրած է «Էջմիածին» օփերան: Մահացած է 2000 թուականին:

238. Նաւասարդեան Կոմիտէ

Լոնտոնի Հ.Յ.Դ.ի Նաւասարդեան Կոմիտէն:

239. Վահէ-Վահեան

Բանաստեղծ, հրապարակագիր, մանկավարժ: Ծնած է Կիւրիւն 1908ին, մահացած Պէյրոս՝ 1998ին: Տես՝ Vahe-Vahian Wikipedia:

240. Վրէժ Ներսէսեան

Ծնած է Պարսկաստան 1948ին: Աւարտած է Կալկաթայի Հայոց Մարդասիրական Դեմարանը, որ աշակերտած է Ա. Կիւզելեանին: Հոգեւոր կրթութիւնը ստացած է Ս. Էջմիածինի Գեորգեան Դեմարանին մէջ: Վազգէն Կաթողիկոսի կարգադրութեամբ ուսումը շարունակ





կած է Լոնտոնի King's College Համալսարանին մէջ: 1983ին Տոքս. Ներսէսեան ձեռնարկուած է ամուսնացեալ քահանայ: 1975-2011 տարիներուն ան աշխատած է Բրիտանական Գրադարանի մէջ, որպէս Քրիստոնէայ Միջին Արեւելքի Բաժնի տնօրէն: Տոքս. Ներսէսեանի հրատարակած գիրքերէն յիշենք՝ «*A Catalogue of the Armenian Manuscripts in the British Library Acquired since 1913, and of Collections in Other Libraries in the United Kingdom*» (2012), «*Art of the Armenians*» (2005), «*The Bible in the Armenian Tradition*» (2001), «*The Essential Gnostic Gospels: Including the Gospel of Judas, the Gospel of Thomas & the Gospel of Mary*» by Alan Jacobs and Vrej Nersessian» (2006), «*Treasures from the Ark: 1700 Years of Armenian Christian Art*» (2001), «*Armenian Illuminated Gospel-books*» (1987), «*The Tondrakian Movement: Religious Movements in the Armenian Church from the Fourth to the Tenth Centuries*» (1988), «*Essays On Armenian Music*» (1998), «*A Bibliography of Articles on Armenian Studies in Western Journals, 1869-1995*» (1997), «*Armenian Neume System of Notation: Study and Analysis*» by R. A. Atayan, Vrej N. Nersessian (1999), «*Catalogue of Early Armenian Books, 1512-1850*» (1980), «*The Imitation of Christ: The Inspirational Teachings of Thomas A. Kempis (Sacred Wisdom)*» by Vrej Nersessian and Stephen MacKenna (2006), «*Armenia*» (World Bibliographical Series vol. 163) by Vrej Nersessian (compiler) (1993), «*Armenian Church Historical Studies: Matters of Doctrine and Administration*» by Tiran Nersoyan and Rev. Vrej Nersessian (Dec 1996):

241. Դոն Քարսուէլ (John Carswell)

Անգլիացի պատմաբան/արուեստաբան: Դոն Քարսուէլ հրատարակած է հայկական բովանդակութեամբ հետեւեալ երկու գիրքերը. «*New Julfa, The Armenian Churches and Other Buildings*» (Նոր Ջուլա, Հայկական Եկեղեցիներ եւ Այլ Շէնքեր) եւ «*Kutahya Tiles and Pottery From the Armenian Cathedral of St. James, Jerusalem*», երկու հատոր (Երուսաղէմի Հայոց Ս. Յակոբ Տաճարի Բէթրահիական Մալիկներն ու Կաւամանները): Առաջին հատորին աշխատակցած է նաեւ ծանօթ հայագէտ Չարլզ Տաուսեթ:

242. Չաւէն Մարրլեան

Պէյրութի Ամերիկեան Համալսարանէն ստացած է պսակաւոր եւ մագիստրոս արուեստից տիտղոսները: Հեղինակ է բազմաթիւ աշխատասիրութիւններու, որոնց կարեւոր մէկ մասը նուիրուած է հայոց ցեղասպանութեան եւ հայ դատին: Չ.Մ. հանրածանօթ է նաեւ որպէս կրթական մշակ, որ երկար տարիներ է Վեր կը վարէ Պէյրութի Հայ Աւետարանական Քոլեճի տնօրէնի պաշտօնը: Հայաստանի Գիտութիւններու Ազգային Ակադեմիան Չ. Մարրլեանին շնորհած է պատուաւոր տոքթորա, առ ի գնահատանք անոր հայ ժողովուրդի արդի շրջանի պատմագրութեան եւ հայ դպրոցին մատուցած ծառայութեանց: Մարրլեան պարգեւատրուած է նաեւ Լիբանանի կառավարութեան կողմէ, իր կրթական երկարամեայ բերուն գործունէութեան համար:

243. Վարդէն Համազասպեան

Պատմաբան, կրթական մշակ, հասարակական գործիչ: Մինչեւ 1964 եղած է Մ. Արեղեանի Անուան Մանկավարժական Ինստիտուտի տնօրէն: 1964ին նշանակուած է նախագահ՝ «Մփիւքահայութեան Հետ Մշակութային Կապի Կոմիտէ»ի, անոր ստեղծման առաջին օրէն:

244. Թագուհի Մայր Մանուկեան

Հ.Բ.Ը.Մ.ի ցկեանս Նախագահ Ալեք Մանուկեանի մայրը, Թագուհի Մանուկեան, որ մահացած է Փետրուար 1975ին:

245. Քենթրալիի Արքեպիսկոպոս Տոնրլտ Քոկլըն Քենթրալիի 101րդ Արքեպիսկոպոսը ծնած է 1909ին, վախճանած՝ 2000ին: Տ.Ք. ընտրուած է 1974ին, օծուած՝ 1975ին: Մերտ յարաբերութիւններ ունեցած է հայ եկեղեցույց հետ: Տես՝ Donald Coggan Wikipedia:

246. Չաւէն Վրդ. Արզումանեան (ապա՝ Չաւէն Քին. Արզումանեան)

Ծնած է Գահիրէ, 1932ին: Անթիլիասի Դպրեվանքը ասարտած է 1954ին եւ նոյն տարին ձեռնադրուելով կուսակրօն քահանայ մեկնած Ատիս Ապեպա՝ որպէս հոգեւոր հովիւ: Երկու





տարի յետոյ գացած է Լոնտոն ուսումը կատարելագործելու համար: Արգումանեան 1962ին հետեւած է Քոլումբիա Համալսարանի դասընթացներուն եւ ստացած՝ տոքթորական աստիճան: Վազգէն Կաթողիկոսի հաւանութեամբ ձգած է կուսակրօնութիւնը, ամուսնացած եւ ընդունուած՝ ամուսնացեալ քահանայից կարգը: Ան քառասուն տարի, որպէս հոգեւոր հովիւ ծառայած է Մ. Նահանգներու Արեւմտեան եւ Արեւելեան թեմերէն ներս: Չաւէն Արգումանեան հեղինակ է հայերէն եւ անգլերէն լեզուներով բազմաթիւ հրատարակութիւններու: Անոր կարեւոր աշխատանքներէն մէկը եղած է շարունակութիւնը Օրմանեան Պատրիարքի հայ եկեղեցոյ պատմութեան, «Ազգապատում»ին: Տէր Չաւէն ներկայիս հանգստեան կոչուած՝ կ'ապրի Քալիֆորնիա:

247. Վազգէն Վրդ. Քէշիշեան (ապա՝ Արք)

Ծնած է 1933ին Պէլլան, Ատանայի հիւսիսը, Կիլիկիա: Աւագանի անունով՝ Նուպար Քէշիշեան: Ուսումը ստացած է Անթիլիասի Գալեվանքին մէջ 1949-55 տարիներուն: 1956-1968 պարապած է ուսուցչութեամբ: 1959ին կուսակրօն քահանայ ձեռնադրուած է Եզիպտոսի մէջ, ձեռամբ Սամբրէ Արք. Սիրունեանի եւ վերանուանուած Վազգէն: Նոյն տարին ուղարկուած է Եթովպիա, որպէս հոգեւոր հովիւ: 1962-1966ին եղած է Մարսիլիոյ հայոց հոգեւոր հովիւ: 1967-1984 տարիներուն վարած է հովուական պաշտօններ Մ. Նահանգներու մէջ: 1984ին Եպիսկոպոս ձեռնադրուած է Ս. Էջմիածնի մէջ ձեռամբ Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Ա.ի եւ ուղարկուած Քանատա՝ որպէս նորաստեղծ Քանատահայոց Թեմի Առաջնորդ: Վազգէն Եպիսկոպոս նուիրումով ծառայած է քանատահայութեան, որուն համար 1988ին Վազգէն Ա. անոր շնորհած է արքեպիսկոպոսութեան աստիճան: Գժբախտաբար միայն երկու տարի ապրած է որպէս արքեպիսկոպոս: Վախճանած է 1990ին համեմատաբար երիտասարդ տարիքին:

248. «Չարթօնք»

Օրաթերթ՝ հիմնուած Պէլլոս 1937ին, Սիրիան Տամատեանի եւ Փարունակ Թովմասեանի կողմէ: Ռ.Ա.Կ.ի պաշտօնաթերթը, որուն խմբագիրներէն յիշենք Վահան Թէքէեանը, Գերսան Ահարոնեանը, Յակոբ Աւետիքեանն ու Պարոյր Աղապաշեանը:

249. Եոս Կոմիտէի (Youth Society)

«Հայ Երիտասարդաց Ընկերակցութիւն», որ եօթնասունական բուկաններուն իր գործօն մասնակցութիւնը բերած է լոնտոնահայութեան ընկերային եւ մշակութային կեանքին:

250. «Փափագ» Տես՝ Պսակ Եպիսկոպոս Թումայեան Ծ.194:

251. Գարակէօզեան Սեդրակ

Երկար տարիներ պաշտօնավարած է Փարիզի առաջնորդարանին մէջ որպէս քարտուղար:

252. «Յուշամատեան Մեծ Եղեռնի»

Եղեռնի Յիսնամեակին նուիրուած 1120 էջերէ բաղկացած հատոր մը, գոր պատրաստած է Գերսան Ահարոնեան, աջակցութեամբ Նազարէթ Թօփալեանի:

253. Արա Գալայճեան

Ծնած է Երուսաղէմ, 1938ին: Ուսումը ստացած է Երուսաղէմի Թարգմանչաց, Չահլէի Մխիթարեան եւ Կիպրոսի Մելգոնեան վարժարաններուն մէջ: 1957ին, որպէս հայերէն լեզուի ուսուցիչ, աշխատած է Նիկոսիոյ Մելիքեան Վարժարանին մէջ: 1965ին վերադարձած է Երուսաղէմ եւ նշանակուած՝ Եղիշէ Պատրիարքի անձնական քարտուղարը, ինչպէս նաեւ՝ «Միոն» ամսագիրի խմբագիր: Գասաւանդած է հայ գրականութիւն ժառանգաւորաց Վարժարանի մէջ: Երուսաղէմի Հրեական Համալսարանին մէջ աւանդած է հայ արուեստի պատմութիւն: 1978ին հաստատուած է Միացեալ Նահանգներ, ուր ստանձնած է Ռ.Ա.Կ.ի օրկան «Պայքար» թերթի խմբագրութիւնը: Շուրջ տասը տարի վարած է նաեւ «The Armenian Mirror-Spectator» թերթի խմբագրութիւնը: Մահացած է 2012ին:

254. Հիլտա Գալֆայեան

Ծնած է Պոլիս եւ ուսանած՝ տեղւոյն Եսայեան Լիսէին մէջ: Ուսման զուգահեռ՝ հայագի-





տական կրթութիւն ստացած է Փրոֆ. Հրանդ Տէր Անդրիասեանէն, իսկ երաժշտական ուսում Արփիմէ Ալշնեանէն: Աւարտելէ ետք Պոլսոյ Համալսարանի Հոգեբանութեան բաժինը՝ ուսումը շարունակած է Սորպոնի մէջ, ուրկէ 1973ին ստացած է հոգեբանութեան գծով տոքթորայի աստիճան: Աւարտած է նաեւ Փարիզի Արեւելեան Կենդանի Լեզուներու Վարժարանի Հայագիտութեան Բաժինը, 1975ին: Հիլտան հրատարակած է բանաստեղծութիւններու երկու հատոր՝ «Փարիլ Մը» եւ «Լեզուէն Անդին»: Ունի նաեւ գրական, պատմական, գեղարուեստական վերլուծումներ, որոնք հրատարակուած են զանազան հայերէն թերթերու մէջ, ինչպէս՝ «Մարմարա», «Այգ», «Ալիք», «Սփիւռք», «Գարուն», եւայլն:

255. Վարուժան Պետիկեան

Ծնած է Հալէպ, 1927ին: Բանաստեղծ, ուսուցիչ եւ մշակութային գործիչ: Ունի հրատարակուած երկու հատոր՝ «Սիրոյ Եւ Կարօտի Աղանիներ» եւ «Կենսարթեցում»: Եղած է Ռ.Ա.Կ.ի եւ Թ.Մ.Մ.ի գործունեայ անդամ: Մահացած է 1989ին, Նիկոսիոյ մէջ:

256. Ուիլիամ Շէքսպիր (William Shakespeare)

Ծնած է 1564ին, մահացած՝ 1616ին: Բանաստեղծ, քատերագիր, դերասան: Կը նկատուի անգլիագիր գրականութեան մեծագոյն դէմքը: Տես՝ Shakespeare Wikipedia:

257. Շաւարշ Նարդունի (1898-1968)

Ֆրանսահայ գրող: Ծնած է Արմաշ եւ մահացած՝ Մարսիլիա: Աւարտած է Փարիզի բժշկական համալսարանը: Եղած է խմբագիր «Յառաջ»ի, «Հայ-Բոյժ»ի եւ «Երկունք»ի: Ունի քննադատական էջեր, պատմագիտական եւ փիլիսոփայական վերլուծումներ: Իր լոյս ընծայած հատորներն են՝ «Հեքիաթներու Ալպում», «Մեղեդիներ՝ ուր, Մեղեդիներ՝ ուր», «Երուսաղէմ, Երուսաղէմ» եւ «Բաներ, Բաներ, Ի՛նչ Բաներ»:

258. Լուիզ Վարդուկեան

Բնիկ կիպրահայ: Կիպրոսի մէջ վարած է ուսուցչական պաշտօն: Եղած է Լոնտոնի Համալսարանի հայերէն լեզուի քննիչ: Լուիզ Վարդուկեան, որպէս «Հայ Տուն»ի Մշակութային Յանձնախումբի անդամ, մեծ ներդրում ունեցած է լոնտոնահայ համայնքի կրթական-մշակութային կեանքին մէջ:

259. Եղուարդ Կիլպէրեան

Լոնտոնահայ մտաւորական: Ունի անգլերէն լեզուով յօդուածներ նուիրուած հայ մշակոյթին: 1998ին թարգմանած է հրատարակած է Կոմիտասի հայ ժողովրդական եւ եկեղեցական երաժշտութեան նուիրուած ուսումնասիրութիւն մը՝ «Armenian Sacred and Folk Music» խորագրով:

260. Լեւոն Չորմիսեան

Ֆրանսահայ գրող, հրապարակագիր, պատմաբան: Ծնած է 1894ին Պուրսա եւ մահացած Փարիզ՝ 1980ին: Եղած է գլխաւոր խմբագիրը «Ներկայ» ամսագիրին եւ «Բիւրակն» պարբերաթերթին:

261. «Բիւրակն»

Ազգային, գրական պարբերաթերթ՝ տպուած Փարիզ (1961-1967): Խմբագիր՝ Լեւոն Չորմիսեան:

262. Աւետիս Մեսումեան

Ֆրանսահայ երաժիշտ: Սկրտութեան անունով Աւետիս Մեսումեան: Ծնած է 1905ին Արաբկիր: Նախնական երաժշտական ուսումը ստացած է տեղւոյն ազգային վարժարանին մէջ՝ աշակերտելով Սկրտիչ Տէր Պետրոսեանի: 1915ին տարագրուած է Տէր Զօր եւ կորսնցուցած՝ անբողջ ընտանիքը: 1919ին ապաստանած է Ուրֆայի Ամերիկեան Որբանոցը, իսկ 1922ին՝ Պէյրութ, ուրկէ 1924ին մեկնած է Ֆրանսա: Մասնագիտական ուսումը ստացած է Լիւռնի Պետական Երաժշտանոցին մէջ: Գրած է համանուագներ (symphony) եւ գուսաներգութիւններ (opera): Մեսրոպ Մաշտոցին նուիրուած իր քանթաթը, գոր գրած է հայերէն գիրերու գիտի 1600ամեակին առթիւ, արժանացած է Պէյրութի Թէքէեան Մշակութային Միութեան առաջին մրցանակին: Մեսումեան գրի առած է Արաբկիրի, Շապին Գարահիսարի, Եղեսիոյ, Չմշկածագի եւ Տարօնի ժողովրդական երգերէն շուրջ 250 հատ: Յայտնաբերած է Տիգրան





Մեծի մասին 18րդ դարում գրուած 17 գուսաներգութիւններ: Ունի բազմաթիւ մեներգներ, խմբերգներ եւ նուազախումբի համար գրուած ստեղծագործութիւններ:

263. «Աշխարհ» Տես՝ Աւետիս Ալեքսանեան Ծ. 325:

264. «Խթան»

Շարքաթերթ՝ լոյս տեսած է Փարիզ (1955-1967): Խմբագիր Լեւոն Համբարձումեան:

265. Գրիգոր Աղամեան

Փարիզաբնակ հայ դերձակ: Հայ մտաւորականութիւնը զինք մկրտած էր «Ուիլիամ Սարոյեանի Դերձակ Աղամեանը»: Ան եղած է Ուիլիամ Սարոյեանի մտերիմ բարեկամներէն մէկը, որուն հանդիպելու բախտին արժանացած մարդը, չէր կրնար չսիրել զինք: Աղամեանին տունը միշտ բաց էր Փարիզ այցելող հայ մտաւորականներուն առջեւ: Աղամեան ամուսին առասպելական հիւրասիրութիւնը վայելած է նաեւ Ա. Կիւզելեան... մի քանի առիթներով:

266. Վահրիճ Մանուկեան

Վահրամ Մավեանի գրչանուններէն մէկը:

267. «Յուշարար»

Պաշտօնաթերթ Հ.Բ.Ը. Միութեան:

268. Դերենիկ Դեմիրճեան

Անուանի հայ գրող: Ծնած է 1877ին, Ախալքալաք, մահացած Երեւան՝ 1956ին:

Բարձրագոյն ուսումը ստացած է Էջմիածինի Գեորգեան եւ Թիֆլիսի Ներսիսեան ճեմարաններուն մէջ: Երաժշտական կրթութիւն ստացած է Մոսկուայի մէջ, իսկ 1905-1910 տարիներուն հետեւած՝ Ժընեի Համալսարանի Մանկավարժութեան Բաժնի դասընթացքներուն: Վերադարձած է Թիֆլիս եւ զբաղած՝ ուսուցչութեամբ:

1925ին հաստատուած է Երեւան: Դեմիրճեան գրական ասպարէզ մտած է նախ որպէս բանաստեղծ, իսկ 1919էն սկսեալ փորձած՝ գրական բոլոր սեռերը եւ հուսկ՝ որոշած է նուիրուիլ արձակի: Դ. Դեմիրճեանի գլուխ գործոցը կը նկատուի «Վարդանանք» վէպը, որուն Ա. հատորը լոյս տեսած է պատերազմի տարիներուն, 1943ին, իսկ երկրորդը՝ 1946ին: Մեծ է Դ.Դ.ի գրական վաստակը: Անդրադառնալ անոր բոլոր գործերուն՝ նոյնիսկ լոկ թուարկել զանոնք՝ էջեր պիտի խլէր: Յիշենք միայն անոր երկրորդ գլուխ գործոցը՝ «Քաջ Նազար»ը, որ նկարահանուած է նաեւ որպէս շարժանկար:

269. Պետրոս Զարոյեան

Ծնած է Պոլիս, 1903ին: Փարիզաբնակ գրող, կրթական, մշակութային գործիչ: Զարեհ Որբունիի հետ հրատարակած է «Նոր Հաւատք», «Լուսաբաց» եւ «Հայ Միտք» պարբերականները: 1962-64 տարիներուն դասաւանդած է Կիպրոսի Մելգոնեան Կրթական Հաստատութեան մէջ: Հրատարակած է՝ «Մեռնողները», «Ալիսէլ Բակունց եւ Իր «Սեւ Յելերի Մերմնացանը»», «Սեւ ու Ծերմակ» եւ «Մենք Ալ Հայրենիք Ունինք» հատորները:

270. Գրիշ Դաւթեան

Պարսկահայ մտաւորական, որ Ասատուր Կիւզելեանէն առաջ խմբագրած է Լոնտոնի «Արեգակ» ամսաթերթը: Ներկայիս կը բնակի Միացեալ Նահանգներ: Աշխատած է «Հորիզոն» հայկական հեռուստատեսութեան մէջ եւ վարած «Կռունկ» կայքէջի գրական բաժնի խմբագրութիւնը:

271. Գարեգին Եպս. Սարգիսեան

Հետագային Գարեգին Բ. Կիլիկիոյ եւ Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոս: Տես՝ Garegin I Wikipedia:

272. Արտաշէս Առաքելեան

Աշխարհառչակ սովետահայ տնտեսագէտ: Ծնած է Շուշի, Արցախ, 1909ին: 1932ին աւարտած է Պաքուի Համալսարանի Ժողովրդական Տնտեսութեան Ինստիտուտը: Տոքթ.-Փրոֆ. Ա.Ա.1960ին ընտրուած է ՀՍՍՀ Գ-Ա անդամ: Վարած է բազմաթիւ պատասխանատու պաշտօններ Մոսկուայի եւ Երեւանի մէջ: Եղած է Հայաստանի Գ-Աի տնտեսագիտութեան Ինստիտուտի տնօրէն: Ա.Ա.ի մենագրութիւնները հրատարակուած են, բացի խորհրդային հանրապետութիւններէ եւ սոցիալիստական երկիրներէ՝ նաեւ Չինաստանի, Ա.Մ.Ն.ի, Անգլ-





իոյ, Ֆրանսայի, Իտալիոյ, Ճափոնի, Հնդկաստանի եւ այլ երկիրներու մէջ, շուրջ 40 լեզուներով: Ա.Ա.ի պատրաստած դասագիրքերը գործածուած են Սովետ. Միութեան բարձրագոյն ուսումնական հաստատութիւններուն մէջ: Ան 1964 Նոյեմբերին պետական հրատարակչութեամբ է Անգլիա եւ դասախօսած՝ Լոնտոնի, Օքսֆորտի, Պրոմինկիհամի եւ Մանչեսթրի համալսարաններուն մէջ: Այդ առիթով հայ գիտնականը հանդիպում ունեցած է նաեւ Մանչեսթրի եւ Լոնտոնի հայ համայնքներուն հետ եւ տուած դասախօսութիւն՝ «Հայաստանի Ժողովրդական Տնտեսութեան Չարգացումը 1920-1964 Թուականներուն» նիւթի շուրջ:

273. «Անդաստան»

Փարիզ հրատարակուած (1952-1969) գրական-գեղարուեստական պարբերաբերք: Հիմնադիր-խմբագիր՝ Բիւզանդ Թօփալեան:

274. Երջանիկ Միսիրեան

Սեդզոնեան Կրթական Հաստատութեան շրջանաւարտներէն: Երգահան եւ խմբավար, որուն երգչախումբը մեծ ժողովրդականութիւն վայելած է Լոնտոնի մէջ եօթանասունական թուականներուն: Ան եղած է նաեւ Լոնտոնի Ս. Սարգիս Եկեղեցոյ դպրաց դասի խմբավարը:

275. Յասմիկ Թաղէոսեան

Լոնտոն հաստատուած սուտանահայ բժշկուհի: Մասնակցած է Հայ Երիտասարդաց Ընկերակցութեան աշխատանքներուն:

276. Սերովբէ Արք. Մանուկեան

Երուսաղէմի Ս. Յակոբեանց Միաբանութեան անդամ: Պատրիարքարանէն ներս վարած է կարեւոր պաշտօններ: Երկար տարիներ եղած է Ֆրանսայի Հայոց Թեմի Առաջնորդ եւ Արեւմտեան Երոսպայի Կաթողիկոսական Պատուիրակ:

277. Պերճ Թիլպեան

Եղած է Կիւրոսի խորհրդարանի մէջ հայ համայնքի ներկայացուցիչ 1960-1970 տարիներուն:

278. Երուանդ Նիկողոսեան

Լոնտոն հաստատուած կիւրահայ ազգային-կուսակցական գործիչ: Անգլիոյ Ռ.Ա.Կ.ի ղեկավարներէն: Եղած է Լոնտոնի Հ.Բ.Ը.Մ. վարչութեան անդամ: Մովեանի մտերիմ բարեկամներէն:

279. Շահան Շահնուր

Շահան Շահնուր (Շահնուր Քերտսէճեան) ծնած է Պոլիս, 1903ին: Մահացած է Փարիզ՝ 1974ին: 1921ին, արարած է Պոլսոյ Պերպերեան Վարժարանը եւ սկսած է աշխատակցիլ «Ոստան» թերթին: 1923ին, հաստատուած է Փարիզ, ուր աշխատած է որպէս լուսանկարիչ: Աշխատակցած է «Արեւ», «Ապագայ», «Անահիտ» եւ այլ պարբերականներու, ինչպէս նաեւ Թէոդիկի «Ամենուն Տարեցոյց»ին: Իր վեպը՝ «Նահանջը Առանց Երգի», հրատարակուած է 1929ին: 1933ին, լոյս տեսած է Շահնուրի պատմուածքներու հաւաքածոն, «Յարալիզներու Դասանանութիւնը» խորագրով: Ծանր հիւանդութեան պատճառաւ, երեսունական թուականներու վերջատրութենէն մինչեւ մահը, ապրած է հիւանդանոցներու մէջ: 1945ին, առողջութիւնը որոշ չափով վերագտնելով՝ սկսած է գրել ֆրանսերէն, Արմէն Լիւպէն գրչանունով: Իր ֆրանսերէն ստեղծագործութիւններուն համար Շահնուր շահած է բազմաթիւ գրական մրցանակներ: Շահնուրէն հրատարակուած են նաեւ հետեւեալ գործերը, 1958ին՝ «Թերթիս Կիրակնօրեայ Թիւր», 1967ին՝ «Չոյզ Մը Կարմիր Տեղրակներ» 1970ին՝ «Ազարն Կոմիլուս» եւ 1973ին՝ «Կրակը Կողբիս»: Շահնուրի ֆրանսերէն ստեղծագործութիւններէն յիշենք՝ «Գիշերային Փոխադրութիւն», «Պրպրումներ Անրեղի», «Գաղպագողի Անցորդ», «Մուրք Համբերութիւն», «Բարչրավակնակ», եւայլն: Շահնուրի նամակներուն հարուստ հաւաքածոն կը պահուի Չարենցի Անուան Գրականութեան եւ Արուեստի Թանգարանին մէջ, Երեւան:

280. «Պայքար»

Շարքաբերք, հիմնուած 1922ին Պոսթոնի մէջ: Ռ.Ա.Կ.ի պաշտօնաբերքը:





281. Նուպար Ալիշեան

Գրող, հրապարակագիր եւ ազգային գործիչ: Ծնած է Իսկենտերուն 1933ին: Մահացած Ա.Մ.Ն. 1994ին: Հրատարակած գիրքերն յիշենք՝ «*Լեւոն Չաւէն Սիրումէլեան*», «*Հոսանքն ի Վար*», «*Հողի եւ Հացի Մարդիկ*», «*Վերադարձ*», «*Երբ Դաշտերը Կը Մեռնին*», «*Անարգուած Մարդիկ*» եւ «*Փսիտուպ*»:

282. «Շիրակ»

Գրական-գեղարուեստական ամսագիր, հիմնուած Պէյրութ՝ 1956ին, նախածեռնութեամբ Օննիկ Սարգիսեանի եւ Չարեհ Մելքոնեանի, որոնք եղած են նաեւ ամսաթերթի առաջին խմբագիրները: Թերթը վայելած է Թ.Մ. Միութեան հովանաւորութիւնը:

283. «Յուսաբեր»

Օրաթերթ՝ հիմնուած 1915ին Գահիրէի մէջ: 1923ին դարձած է Հ.Յ.Գ.ի պաշտօնաթերթը:

284. «Մշակ»

Սկիզբը որպէս շաբաթաթերթ՝ ապա լոյս տեսած է իբրեւ օրաթերթ, Թիֆլիսի մէջ, 1872-1921 տարիներուն (1885ի ընդմիջումով): Թերթին հիմնադիրն ու մինչեւ 1892 խմբագիրը եղած է Գրիգոր Արծրունին:

285. «Քազին»

Գրական-գեղարուեստական ամսաթերթ, հիմնուած Պէյրութ՝ Համազգայինի կողմէ 1962ին, խմբագրապետութեամբ Կ. Սասունիի:

286. Գէորգ Ներսոյեան

Ծնած է Այնթապ, 1912ին: Հալէպահայ սիրուած ազգային, հասարակական գործիչ: Այնթապցի Տէր Ներսէս Քին. Թաւուքճեանի որդին, Տիրան Արք. եւ Փրոֆ. Յակոբ Ներսոյեաններու եղբայրը: 1934ին, երբ հայրը հայու մը փամփոշտով սպանուած է Հալէպի իր բնակարանին մէջ, Թաւուքճեանները, Գէորգի մեծ հօր՝ Ներսոյին անունը որդեգրած են իբրեւ մականուն եւ կոչուած՝ Ներսոյեան: Գէորգ 1926ին աւարտած է Հալէպի Հայկազեան Վարժարանը: Դեռ պատանի՝ նուիրուած է ազգային, հասարակական եւ եկեղեցանուէր աշխատանքի: Վարած է բազմաթիւ պատասխանատու պաշտօններ Հալէպի մէջ: Մեծ ժողովրդականութիւն վայելելուն համար, ժողովուրդը իրեն «Ազգապետ» տիտղոսը տուած է: Գէորգ երկար տարիներ վարած է Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Կիրակնօրեայ Դպրոցներու ընդհանուր տնօրէնի պաշտօնը: Եղած է նաեւ Գարակեօզեան, Կիւլպէնկեան եւ այլ բարեսիրական հաստատութեանց Սուրիոյ ներկայացուցիչը: Մահացած է 1981ին:

287. Ռուբէն Չարեան

Ծնած է 1909ին, Ալեքսանդրապոլ: Գրականագետ, թատերագետ, մանկավարժ, արուեստագիտութեան տոքս.-փրոֆ., ՀՍՍՀ արուեստի վաստակաւոր գործիչ, ՀՍՍՀ Գ.Ա.-ի թղթակից անդամ: Ռ.Չ. 1936ին աւարտած է ԵՊՀ-ի Բանասիրական Ֆակուլտետը: Վարած է պատասխանատու պաշտօններ, ինչպէս՝ ՀԱՅՊԵՏՀՐԱՏԻ Գեղարուեստական Գրականութեան Բաժնի վարիչ, «Սովետական Գրականութիւն» թերթի խմբագիր, Երեւանի Գեղարուեստական-Թատերական Ինստիտուտի Թատրոնի Պատմութեան Ամպիոնի վարիչ, ՀՍՍՀ ԳԱ Արուեստի Ինստիտուտի տնօրէն: Չարեանի նախածեռնութեամբ Գիտութիւններու Ակադեմեայի Արուեստի Ինստիտուտի մէջ, 1964ին ստեղծուած է Շէյքսպիրագիտութեան Գրադարան եւ Հայկական Շէյքսպիրագիտութեան Կեդրոն: Չարեան հեղինակ է բազմաթիւ ուսումնասիրութիւններու, նուիրուած հայ թատրոնի պատմութեան եւ դերասանական արուեստին: Իր գործերն են՝ «*Պայքար Ռուս Դրամատուրգիայի Համար Հայ Թատրոնում*», «*Թատերական Կիւնսկարներ*», «*Միրանոյշ*», «*Ադամեան Կեանքը*», «*Ադամեանի Շէյքսպիրը*», «*Շէյքսպիր եւ Հայերը*», «*Ադամեան, Արուեստը*», «*Յուշապարտում*», «*Շէյքսպիրի Հեյր*», եւ այլն: 1939ին առանձին հատորով հրատարակած է Խ. Աբովեանին նուիրուած իր մենագրութիւնը:

288. «Հայրենիք»

Շաբաթաթերթ՝ հիմնուած 1899ին, Պոսթոն:

289. Ասողիկ Քիսիէլեան

Մեղգոնեանի մէջ աշակերտած է Մավեանին:





290. Յակոբ Վրդ. Վարդանեան (ապա՝ Արք.)

Երուսաղէմի Ս. Յակոբեանց Միաբանութեան անդամ:

291. Կիւրեղ Վրդ. Գաբիկեան (ապա՝ Արք.)

Երուսաղէմի Ս. Յակոբեանց Միաբանութեան անդամ:

292. Մինաս Թէօլէօլեան (1913-1997)

Սփիւռքահայ գրող, գրաքննադատ, հրապարակագիր: Հեղինակն է «*Դար Մը Հայ Գրականութիւն*» երկհատոր աշխատասիրութեան, որ կը պարփակէ 1850-1980 տարիներու հայ գրականութիւնը:

293. Օսկար Ուայլտ

Իրլանտացի անուանի գրող, թատերագիր, երգիծաբան: Ծնած է 1854ին, մահացած՝ 1900ին: Տես՝ Oscar Wild Wikipedia:

294. Պասման

Պասմաճեան: Լոնտոն բնակութիւն հաստատած սաղիմահայ Պասմանը, Վահրամ Մավեանի «Անկլօ Արմինիքն Գլապը» պատմուածքին հերոսն է: Գրող Կարիկ Պասմաճեանի (Ծ.87) հօրերայրը:

295. «Մարմարա»

Օրաթերթ՝ հիմնուած Իսթանպուլ 1940ին: 1967էն ի վեր թերթը կը խմբագրէ պոլսահայ ծանօթ գրող Ռուպեր Հատտեճեան:

296. Ռուպեր Կիւլպէնկեան (1923-2009)

Գալուստ Կիւլպէնկեանի եղբորորդին, որ մինչեւ 1996 վարած է Կիւլպէնկեան Հիմնարկութեան ընդհանուր տնօրէնի պաշտօնը:

297. Գեղամ Սեւան

Գրող, գրականագէտ, հրապարակագիր: Ծնած է Պոլիս 1926ին: Յաճախած է Պոլսոյ Մխիթարեան Վարժարանը: Պոլսոյ Համալսարանէն վկայուած է որպէս իրաւաբան: Շրջան մը ապրած է ստեղծագործած է Լիբանան: 1962ին ներգաղթած է Հայաստան, ուր աւարտած է Երեւանի Հեռակայ Մանկավարժական Ինստիտուտի Լեզուագրական ֆակուլտետը: Հրատարակած է հետեւեալ գործերը. «*Ազոաները Թառեցան*», «*Մե Շուր Նոյնն Է Միշր*», «*Նահրէն-Ռասայէրութ*», «*Կանաչ Անապար*», «*Ծիծեռնակները Յաճէն Անցան*», «*Հայոց Թաղը*», «*Երեք Սերունդ*», «*Ամէն Մարդ Իր Ծանապարհով*» պատմուածքներու եւ վիպակներու ժողովածուները եւ «*Բիւրեղեայ Դղեակ*», «*Ինչո՞ւ, Ինչի՞ Համար*» վէպերը: Սեւան ունի սփիւռքահայ գրականութեան մոլորուած հետեւեալ գործերը. «*Վազգէն Շուշանեան*», «*Սփիւռքահայ Գրականութեան Ուրուագիծեր*» եւ «*Յակոբ Մնչուրի*»:

298. «Հայրենիքի Չայն»

«Սփիւռքահայութեան Հետ Մշակութային Կապի Կոմիտէ»ի պաշտօնաթերթը, հիմնադրուած Երեւան 1965ին:

299. Միքայէ Էսայեան

Գալուստ Կիւլպէնկեանի թոռը՝ ծնած է 1927ին: Մասնագիտութեամբ իրաւաբան՝ եղած է Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան պատուոյ նախագահը: Եղած է նաեւ Մեծն Բրիտանիոյ Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան հոգաբարձու 1981-2005 տարիներուն: Իր մահէն յետոյ՝ հոգաբարձու նշանակուած է որդին, Մարթին Էսայեանը:

300. Կորիւն Քէշիշեան

Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան Հայկական Բաժնի պաշտօնեաներէն:

301. Գրիգոր Չագմագճեան

Վահրամ Մավեանի մտերիմ ընկերներէն: Լոնտոն հաստատուած սաղիմահայ երաժիշտ, որ եօթանասունական թուականներուն, իր ջութակով ծաղկեցուցած է հայկական հաւաքոյթները:

302. Գաբեգին Սեւունց (1911-1969)

Մովետահայ գրող, ՀՍՍՀ կուլտուրայի վաստակատու գործիչ, աւարտած է Պաքուի Մանկավարժական Ինստիտուտի Բանասիրական Բաժինը: Մասնակցած է Հայրենական





Պատերազմին: 1945ին հաստատուած է Երեւան, ուր 1946-52ին եղած է «Պիոներ» ամսագրի խմբագիր, 1952-54ին՝ Արտասահմանեան Երկրների Հետ Բարեկամութեան եւ Մշակութային Կապի Հայկական Ընկերութեան նախագահ, իսկ 1954-59ին՝ Գրողներու Միութեան քարտուղար: Սեւունց հեղինակ է բազմաթիւ պատմութեան, նորավեպերու, ակնարկներու եւ վեպերու: Իր ամենէն ճանչցուած վեպը «Թեհրան»ն է, որ թարգմանուած է անլի քան քառասուն լեզուներու:

303. «Գրական Թերթ»

Սկսած է հրատարակուիլ 1932ին, Երեւանի մէջ: 1934ին, երբ հիմնուած է Հայաստանի Գրողներու Միութիւնը, «Գրական Թերթ»ը դարձած է անոր պաշտօնաթերթը:

304. Մանատ Սեւակ

Հայ անուանի գիտնական: Ծնած է Միս, 1897ին: Ա. Աշխարամարտին շրջան մը աշխատած է թրքական չորրորդ բանակի միքրոպարանութեան կեդրոնին մէջ: 1918ին, որպէս Ամերիկեան Կարմիր Խաչի պաշտօնեայ, աշխատած է Փոքր Սայիտի մէջ: Ուսանած է Պէյրութի Ամերիկեան Համալսարանը: 1920ին հաստատուած է Մ. Նահանգներ: 1929ին Քոլումբիա Համալսարանէն ստացած է տոքթորայի կոչում organic chemistry-ի գծով: Որպէս դասախօս եւ գիտաշխատող՝ պաշտօններ վարած է ամերիկեան զանազան համալսարաններու եւ գիտական հաստատութիւններու մէջ: Հրատարակած է անլի քան հարիւր քսան գիտական յօդուածներ, իսկ 1945ին հատոր մը՝ «*Immunocatalysis*» խորագրով: Ընտրուած է ԽՍՀՂ ԳԱ-ի ակադեմիկոս: Մ. Սեւակ իր գիտական աշխատանքներուն զուգահեռ՝ մեծ աշխատանք կատարած է հայ դատի պաշտպանութեան եւ ծանօթացման գծով: Ան եղած է Armenian Historical Research Association-ի (Հայկական Պատմական Ուսումնասիրութեան Ընկերակցութիւն) նախագահն ու հիմնադիր անդամներէն մէկը: Ակադեմիկոս Մ. Սեւակ 1961ին հրատարակած է «*Mission to Armenia*» (Առաքելութիւն ի Հայաստան) գիրքը:

305. Էզրաս Հասարթեան (1903-1981)

Սովետական Միութեան եւ աշխարհի մեծագոյն գիտնականներէն մէկը: Ծնած է Խլաք գաւառի (Պիքիլիսի վիլայէթ) Մեծք գիւղին մէջ, 1903ին: ՍՍՀՄ-ի ԳԱ-ի թղթակից անդամ, ՀՍՍՀ գիտութեան վաստակատու գործիչ: Եղած է Ի.Պ. Պավլովի աշակերտ: Էզրաս Հասարթեան իր մասնագիտութեան գծով բազմաթիւ պատասխանատու պաշտօններ վարած է Ս. Միութեան տարբեր շրջաններուն մէջ: Անոր բերած նորութիւնները ֆիզիոլոգիայի բնագաւառէն ներս՝ իրեն տուած են համաշխարհային ճանաչում: Արժանացած է շատ մը մրցանակներու եւ մետալներու, ինչպէս՝ Պավլովի Անուան Մրցանակ (1951), Պավլովի Անուան Ոսկէ Մետալ (1963), Պուրկիինի Մետալ (1975): Պարգևատրուած է Լենինի, Աշխատանքային, Կարմիր Գրօշի եւ այլ շքանշաններով: Եղած է նախագահն ու քարտուղարը Միջազգային Ֆիզիոլոգիական Ընկերութեան: Է. Հասարթեան եղած է Ասատուր Կիլեւեանի եւ Վահրամ Մավեանի բարեկամը: Է. Հ. պատմած է Ասատուրին, որ երբ Մանուկ Աբեղեանի Անուան Գրականութեան Ինստիտուտի ուսանող եղած է, պետութիւնը պարտադրած է իրեն հետեւիլ գիտութեան, առարկելով որ Հայաստան գրողներու պէտք չունի, այլ կարիք ունի գիտնականներու: Է. Հ. եղած է քաջատեղեակ հայ գրականութեան: «Գիտութիւնը ազգութիւն եւ հոգի չունի, իսկ ես հայ եմ, ունեմ ազգութիւն եւ հոգի, որը իր սնունդն ստանում է հայ գրականութիւնից», ըսած է ան Ա.Կ.ին: Իրենց առաջին հանդիպման ժամանակ, Լոնտոնի մէջ, Կիլեւեաններու յարկին տակ, ընդունելութեան մը ընթացքին, մեծ գիտնականն իր ասումը (Միամանթոյ, Վարուժան, Չարենց) հիւրերը հնայելէ ետք՝ ըսած է անոնց որ իր ամբողջ ընտանիքը զոհ գացած է Մեծ Եղեռնին: Այդ կապակցութեամբ պատմած է հետեւեալը:

Խօսքը տանք հայ գիտնականին.

«Սրանից մի քանի տարի առաջ, Ֆիզիոլոգների Համաշխարհային Կազմակերպութեան համագումարը տեղի ունեցաւ Հոլանտիայի Hague քաղաքում: Որպէս այդ կազմակերպութեան վարչութեան գլխատու քարտուղարը, նախագահի եւ երկու փոխ-քարտուղարների հետ, համագումարից երեք օր առաջ գնացինք Հոլանտիա, օրակարգը վերջնական ձեւակերպման ենթարկելու համար: Ժողովի ընթացքում նկատեցի, որ երկու փոխ-քարտուղար-





ները՝ մէկն Անգլիայից, միւրը՝ Ճաբոնից, նայում են ամերիկացի նախագահին, իսկ նախագահը՝ ինձ, ուզում են մի բան ասել, բայց չեն համարձակում:

- Կարծես մի բան ունէք ասելու, միջամտեցի ես:

- Այո, ասաց նախագահը եւ ատկացրեց. Թուրքիան մեր կազմակերպութեան անդամ դառնալու դիմում է ներկայացրել:

- Նոր անդամ ընդունելու մեր նախապայմանները յստակ են. եթէ Թուրքիան ունի ֆիզիոլոգներ, որոնք նպաստել են ֆիզիոլոգիայի զարգացմանը եւ ունեն դա փաստող տուեալներ, այդ դէպքում Թուրքիան իրաւունք կ' ունենայ անդամակցելու Ֆիզիոլոգների Միջազգային Կազմակերպութեան, եզրակացրի ես:

- Այո, ունեն, ասաց անգլիացի քարտուղարը եւ ինձ տուեց մի թղթածրար, որը իր հետ բերել էր Թուրքիայի ներկայացուցիչ, Փրոֆ. Չախմախը: Այդ փաստաթղթերի հիման վրայ, որոշեցինք Թուրքիան ընդունել մեր կազմակերպութեան անդամ: Համազումարի աւարտին Ամերիկայի դեսպանը, դեսպանատան ընդարձակ այգում կազմակերպել էր ընդունելութիւն, մօտ 1500 գիտնականների պատուին: Ամառ էր եւ եղանակը՝ հաճելի: Գիտես, Ասատուր, ես խմող չեմ: Չեռքիս մի բաժակ ուխքի՝ զրուցում էի նախագահի հետ, երբ մեզ մօտեցաւ անգլիացի փոխ-քարտուղարը մի մարդու ընկերակցութեամբ եւ դառնալով ինձ՝ ասաց.

- Փրոֆ. Հասրաբեան, խնդրեմ ծանօթացէք Փրոֆ. Չախմախին:

Քաղաքավարութիւնը պահանջում է որ սեղմէի Չախմախի ձեռքը եւ շնորհատրական մի բանի խօսք ասելի: Հագիւ խօսքս աւարտած՝ Փրոֆ. Չախմախ դարձաւ ինձ եւ ասաց.

- Ակադեմիկոս Հասրաբեան, դուք չգիտէք թէ Թուրքիան եւ թուրք ժողովուրդը ինչքան հպարտ են ձեզնով. երջանիկ եմ որ սեղմում եմ ձեր ձեռքը...:

Չգիտես որտեղից՝ գուցէ Who's Who հանրագիտարանից, անգիր սովորած իմ կենսագրութիւնը, Չախմախ շարունակեց իր շատախօսութիւնը.

- Դուք ծնունդ էք Թուրքիայում, ասաց, տուեց իմ կենսագրութիւնը, ուշելով իմ հրատարակութիւններն ու ստացած մետալները, առանց Հայաստան կամ Սովետ Միութիւն բառերը գործածելու: Յնցուել էի. կարծես մէկը երկաթեայ ծանր մուրճով հուժկու մի հարուած հասցրած լինէր գլխիս: Եթէ Չախմախ խօսքը կարճ կապած լինէր, գուցէ ոչինչ չկարողանայի ասել նրան: Բայց, բարեբախտաբար Չախմախ շատախօս էր, մի հանգամանք՝ որի պատճառով ես ինձ գտայ եւ երբ թուրք գիտնականն աւարտեց իր ասելիքը, հետեւեալ խօսքերով դիմեցի նրան.

- Թոյլ տուէք, Փրոֆ. Չախմախ, անել մի բանի սրբագրութիւն: Ես չեմ ծնունդ Թուրքիայում. ես ծնունդ եմ մի երկրում, որը երեք հազար տարուց ատել կոչուել է Հայաստան, իմ ծնած տարին կոչում էր Հայաստան եւ հիմի էլ կոչում է Հայաստան: Իսկ ձեր ժողովուրդն ինձնով հպարտանալու ոչ մէկ պատճառ ունի, քանի որ դուք իմ աչքի առաջ մորթեցիք հօրս, մորթեցիք մօրս, մորթեցիք եղբայրներիս եւ քոյրերիս, իսկ ինձ թուրք աղջկայ շորեր հագցրած՝ փախցրին Կարս. ձեր բանակները իմ ետեւից եկան մինչեւ Կարս, որտեղից ինձ փախցրին Հայաստան...: Եւ եթէ կայ մի ժողովուրդ, որ պէտք է հպարտ լինի ինձնով, դա իմ ժողովուրդն է, դա հայ ժողովուրդն է, ասացի գրեթէ գռռալով:

So, շունշանորդի, հալա հերիք չէ սպանել ես հօրս, մօրս, եղբայրներիս եւ քոյրերիս, մէկ էլ եկել ես Թուրքիայից մինչեւ Հոլանտիա ինձ ասելու, որ դու եւ թուրք ժողովուրդը հպարտ էք ինձնով...: Մէկ էլ նայեցի շուրջս եւ տեսայ որ ոչ քարտուղար կայ, ոչ էլ նախագահ: Դիմացս մնացել է, լեմոնի պէս դեղնած դէմքով մի Չախմախ... սօ, Չ-ն էլ վերցրու, կը դառնայ ախմախ...:»

Հասրաբեանին խօսքերը, ինչպէս պիտի ըսեր Թէքէեան, ներկաները «լալու չափ» յուզեցին...: Միջանկեալ ըսեմ որ, այս պատմութիւնը տարիներ շարունակ ամենուր պատմելով, զոց սորված եմ: Վերջին անգամ Հասրաբեանին հանդիպեցայ Հայաստան, 1968ին, երբ հրաւիրուած էի Երեւանի 2750ամեակին: Հռչակաւոր գիտնականը, հակառակ իր համբաւին, շատ համեստ՝ նոյնիսկ անչկոտ անձ մըն էր: Այդ օրերուն, 2750ամեակին նուիրուած ընդունելութիւն մըն ալ կազմակերպած էր Սփիւռքահայութեան Հետ Մշակութային Կապի Կոմի-





տէն, որուն հրաւիրուած էր նաեւ Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Երբ Վ. Համազասպեանին առաջարկեցի հրաւիրել նաեւ Էզրաս Հասրաթեանը, որ կանգնած էր քիչ մը անդին, Կոմիտէի նախագահը անձամբ մօտեցաւ գիտնականին եւ զինք եւս հրաւիրեց ընդունելութեան: Չարմացայ, երբ խօսակցութեան ընթացքին Հասրաթեան ինձի յայտնեց, որ ցարդ Կաթողիկոսին հետ անձնապէս ծանօթանալու առիթ չէր ունեցած: Անսահման եղաւ հրճուանքը, երբ զինք ծանօթացուցի Վեհափառին: Պարզուեցաւ որ Վազգէն Կաթողիկոս քաջատեղեակ էր մեծ գիտնականի կենսագրութեան եւ գիտական իրագործումներուն. իրողութիւն մը՝ որ զարմանք եւ ուրախութիւն պատճառեց Հասրաթեանին...:

306. Բարզէն Եպս. Ապատեան (ապա՝ Արք.)

Ծնած է 1917ին Սուրիոյ Համա քաղաքին մէջ: Նախնական ուսումը ստացած է Հալէպի Կրթասիրաց Վարժարանին մէջ, իսկ Եկեղեցական կրթութիւնը՝ Երուսաղէմի Ս. Յակոբեանց Միաբանութեան Ժառանգատրաց Վարժարանէն ներս: Չեռնադրուած է կուսակրօն քահանայ եւ վարած՝ վարչական պաշտօններ պատրիարքարանէն ներս: 1954-55 թուականներուն եղած է հոգեւոր հովիւ կալկաթահայոց: 1959ին եպիսկոպոս ձեռնադրուած է ձեռամբ Վազգէն Ա. Կաթողիկոսի եւ ուղարկուած Արժանքին՝ որպէս Հարաւային Ամերիկայի Հայոց Առաջնորդ եւ Կաթողիկոսական Պատուիրակ: Ապատեանի առաջնորդութեան տարիներուն, ազգային-եկեղեցական կեանքը բացառիկ վերելք ապրած է Արժանքինի մէջ, ուր բացուած են նոր դպրոցներ եւ եկեղեցիներ: Սրբազանը մեծ նուիրումով վարած է իրեն վստահուած պաշտօնը ցմահ: Վախճանած է 24 Ապրիլ, 1978ին:

307. Թորգոմ Եպս. Մանուկեան (ապա՝ Պատրիարք)

Ծնած է 1919ին Պաքուպայի մօտ, Պաղտատի հիւսիսը, գաղթականներու կայանի մը մէջ: Նախնական ուսումը ստացած է Պաղտատի Ս. Թարգմանչաց Վարժարանին մէջ: Աւարտելով Երուսաղէմի Պատրիարքարանի Ժառանգատրաց Վարժարանը՝ կուսակրօն քահանայ ձեռնադրուած է 1939ին: Պատրիարքարանէն ներս վարած է պատասխանատու պաշտօններ: 1946ին նշանակուած է Հիւսիսային Ֆիլատելֆիոյ Ս. Երրորդութիւն եկեղեցոյ հոգեւոր հովիւ: 1954ին վերադարձած է Երուսաղէմ եւ ստանձնած՝ Գպրեվանքի տեսչութիւնը: 1960ին դարձեալ մեկնած է Մ. Նահանգներ եւ երկու տարի հետեւած աստուածաբանական ուսման՝ Episcopal Theological School-ի մէջ: 1962ին ընտրուած է Մ. Նահանգներու Արեւմտեան Թեմի Առաջնորդ եւ նոյն տարուան Հոկտեմբերին ձեռնադրուած՝ եպիսկոպոս՝ ձեռամբ Վազգէն Ա. Հայրապետի, Էջմիածինի մէջ: 1966ին ընտրուած է Մ. Նահանգներու Արեւելեան Թեմի Առաջնորդ. պաշտօն մը՝ զոր վարած է 24 տարի, մինչեւ 1990: 1990ին ընտրուած է Երուսաղէմի Հայոց 96րդ Պատրիարքը: Վախճանած է Հոկտեմբեր 2012ին: Լուսահոգի Թորգոմ Պատրիարք եղած է գրող, երաժիշտ, խմբավար եւ բանաստեղծ: Ան հրատարակած է աւելի քան քսան գիրք, ներառեալ բանաստեղծութեանց երեք հատոր, Շէն Մահ գրական ծածկանունով: Թարգմանած է Շէյքսպիրէն 154 sonnet-ներ: Թորգոմ Պատրիարք եղած է մեր մեծագոյն կոմիտասագետներէն մէկը: Ան հրատարակած է Կոմիտասի ամբողջական հոգեւոր երաժշտութիւնը, ինչպէս նաեւ բազմաթիւ ուսումնասիրութիւններ՝ նուիրուած անոր երաժշտական ժառանգութեան:

308. Մորուս Հասրաթեան (1902-1979)

Պատմաբան-բանասէր, ԳԱ-ի թղթակից անդամ: Վարած է բազմաթիւ պատասխանատու պաշտօններ: 1918-1921 տարիներուն մասնակցած է քաղաքացիական կռիւներուն Պաքուի եւ Հայաստանի մէջ: 1937ին նշանակուած է Պետական Մատենադարանի տնօրէն: 1965-1975ին եղած է Պատմութեան Թանգարանի տնօրէն: Դասախօսած է ԵՊՀ-ի եւ Խ. Աբովեանի Անուան Մանկավարժական Ինստիտուտի, ինչպէս նաեւ Պէյրութի Հայկազեան Քոլեճի մէջ: Հասրաթեանի գրչին կը պատկանին բազմաթիւ ուսումնասիրութիւններ նուիրուած Հայաստանի պատմութեան, հնագիտութեան եւ ճարտարապետութեան: Մ.Հ. հայերէնի թարգմանած է Մայր Նովայի վրացերէն եւ ազրայէջաներէն տաղերը:

309. Պենճամին Պրիթթըն (Benjamin Britten) (1913-1976)

Անգլիացի աշխարհահռչակ կոմպոզիտոր, խմբավար եւ դաշնակահար: Երաժշտական





ուսումը ստացած է Լոնտոնի Արքայական Երաժշտական Քոլեճի մէջ 1930-1933ին: Եղած է 20րդ դարու դասական երաժշտութեան կարեւոր դէմքերէն մէկը: Պրիթըն բարեկամական ջերմ յարաբերութիւններ ունեցած է գրեթէ բոլոր սովետահայ երաժիշտներու՝ յատկապէս Էդ. Սիրոզյեանի, Ալ. Յարութիւնեանի եւ Առնոյ Պապաճանեանի հետ: Ան 1965ին իր ամառնային արձակուրդը՝ ամբողջ ամիս մը անցուցած է Հայաստանի մէջ, որպէս Հայաստանի Երաժիշտներու Միութեան Վարչութեան հիւրը եւ ներկայ գտնուած՝ «Պրիթընեան Օրերը Հայաստանում» փառատօնին, որուն մասնակցած են բազմաթիւ աշխարհառջակ կատարողներ, ինչպէս՝ Փիթըր Փիրս, Ռոսթրափովիչ, Կալինա Վիշնեւսկայա, Եակովենկոյ եւ ուրիշներ: Պրիթըն Դիլիջանի մէջ գրած է հոյակապ երգաշար մը, Պուշկինի բանաստեղծութիւններուն վրայ: Մահացած է 1976ին: Յատելեալ տեղեկութիւններու համար տես՝ Benjamin Britten Wikipedia:

310. Սանտյ Թէլէկրաֆ (Sunday Telegraph)

Անգլիական անուանի շաբաթաթերթ:

311. Վաչէ Սեմերճեան

Հրապարակագիր, կրթական մշակ, կուսակցական գործիչ (Ռ.Ա.Կ.): Ծնած է 1938ին, Պէյրութ: 1956ին ասարտած է Յովակիմեան-Մանուկեան Վարժարանը: 1960ին Պէյրութի Ամերիկեան Համալսարանէն ստացած է պսակաւոր գիտութեանց աստիճանը քիմիագիտութեան գծով: Որպէս գիտութեան ուսուցիչ՝ երեք տարի պաշտօնավարած է Մելգոնեան Կրթական Հաստատութեան մէջ: 1964-66 տարիներուն մասնագիտութիւնը կատարելագործած է Պելճիքայի եւ Անգլիոյ մէջ, կաշեմշակութեան գծով: Որպէս կաշեմշակութեան մասնագետ, շուրջ տասներկու տարի աշխատած է Եթովպիոյ եւ Աֆղանիստանի մէջ: 1976ին ընտանեօք հաստատուած է Լոս Անճելըս, ուր վարած է կաշեգործարանի մը տնօրէնի պաշտօնը: Տարիներով հայերէն առարկաներ դասաւանդած է Լոս Անճելըսի Թ.Մ.Մ.ի Արշակ Տիգրանեան Վարժարանին մէջ: Որպէս հրապարակագիր՝ աշխատակցած է գլխաւորաբար Ռ.Ա.Կ.ի պաշտօնաթերթներուն, ինչպէս՝ «Նոր օր», «Պայքար», «Արեւ» եւ «Զարթօնք»: Վաչէ Սեմերճեան վարած է պատասխանատու պաշտօններ Հ.Բ.Ը.Մ.ի, Հ.Ե.Ը.ի եւ Թ.Մ.Մ.ի մէջ:

312. Մանուկ Բարիքեան

Անուանի ջութակահար: Ծնած է Մերսին 1920ին, մահացած Օքսֆորտ՝ 1987ին: Երաժշտական ուսումը ստացած է Անգլիա: Առաջին համերգը տուած է 1947ին, Լոնտոնի մէջ: Եղած է բազմաթիւ անուանի նուագախումբերու առաջին ջութակահարը, ինչպէս՝ The Liverpool Philharmonic, London Philharmonic Orchestra, The Yorkshire Sinfonia, եւայլն: 1980-1984 տարիներուն եղած է Manchester Camerata-ի երաժշտական տնօրէնը: Բարիքեան եղած է Լոնտոնի Արքայական Երաժշտական Ակադեմիայի սիրուած ուսուցիչներէն: Ժամանակակից կոմպոզիտորներէն ոմանք, ներառեալ Պենճամին Պրիթըն, Բարիքեանի համար գրած են մասնաւոր ստեղծագործութիւններ: Բարիքեան ունեցած է հայերէն եւ հայերու մասին այլ լեզուներով գրուած գիրքերու մեծարժէք հաւաքածոյ, զոր կը ծրագրէր՝ իր իսկ խոստովանութեամբ, նուիրել Հայաստանին: Չեն կարծեր որ անգլիոսիի այրին իրագործած է ամուսնոյն փափաքը...:

313. Շաքէ Վարսեան (1925-1996)

Գրող, հրապարակագիր, հայ մշակոյթի նուիրեալ գործիչ: Ներգաղթած է Հայաստան Կիպրոսէն: Վարած է պատասխանատու պաշտօններ հայաստանեան զանազան մշակութային-հասարակական կազմակերպութիւններէն ներս: Սփիւռքահայութեան Հետ Մշակութային Կապի Կոմիտէի ստեղծման առաջին օրէն աշխատած է այդ կազմակերպութեան մամուլի բաժնին մէջ: Վարած է նաեւ «Հայրենիքի Չայն» շաբաթաթերթի խմբագրութիւնը:

314. Լեւոն Խաչիկեան

Ծնած է Երեւան, 1918ին: Պատմաբան, բանասէր եւ աղբիւրագետ: Աւարտած է ԵՊՀ-ը: Աշխատած է ՀՍՍՀ ԳԱ-ի Պատմութեան Ինստիտուտէն ներս: 1954-1982 տարիներուն եղած է Պետական Մատենադարանի տնօրէն: Ուսումնասիրած է միջնադարեան Հայաստանի պատմութիւնն ու աղբիւրագիտութիւնը: Խաչիկեանի երկարամեայ ուսումնասիրութեան ար-





դիւնքն է ԺԳ. եւ ԺԵ. դարերու հայերէն ձեռագրերու յիշատակարաններուն հրատարակութիւնը: Անոնց շնորհիւ լուսաբանուած են Միւնիքի, Արտագի, Համշէնի աւատական տուներու պատմութեան հետ առնչուած շատ մը հարցեր: Խաչիկեանի կարգ մը աշխատանքները նուիրուած են հայ հնագոյն դարութեան հարցերուն, ինչպէս՝ «Նախաստեղծական Գրի Հարցը եւ Հնայագրերը»: Ան ուսումնասիրած է նաեւ հայ գաղթականութեան եւ վաճառականութեան պատմութեան հետ կապուած կարգ մը հարցեր՝ «Հայկական Գաղթավայրերը Ուկրաինայում ԺԶ. եւ ԺԷ. Դարերում», «Նոր Նիւթեր Կիւսի Հին Հայկական Գաղութի Մասին», «Սարգիս Աբեղայի Ուղեգրութիւնը»: Միջնադարեան հայ կրթական կեդրոններու ուսումնասիրութեան նուիրուած են՝ «Գլաշորեան Համալսարանը եւ Նրա Մասերի Աւարտական Արեւնախօսութիւնները», «Դիսկերչումները Հին Հայաստանում», «Մալթէոս Ջուղայեցու Կեանքը եւ Մարեմագրութիւնը»: Իր միւս աշխատասիրութիւններն են՝ «Էջեր Համշէնահայ Պարսութիւնից», «Յակոբ Մանահնեցի՝ Ժամանակագիր ԺԱ. Դարի», «Օրարալիզու Հայ Գրականութիւնը Չորրորդ Դարում», «Արտագի Հայկական Իշխանութիւնը եւ Ծործորի Դպրոցը», «Le Register d'un Marchand Armenien en Perse, en Inde et au Tibet (1682-1698)»:

315. Սեն Արեւշատեան

Ծնած է 1928ին, Երեւան: 1951ին աւարտած է ԵՊՀ-ի Պատմութեան Ֆակուլտետը: 1955ին սկսած է աշխատիլ Մաշտոցի Անուան Պետական Մատերադարանին մէջ: 1982ին նշանակուած է Մատերադարանի տնօրէն եւ «Բանբեր Մատենադարանի» պարբերաբերքի գլխատը խմբագիր: Արեւշատեանի աշխատանքները կը վերաբերին հայ հին եւ միջնադարեան փիլիսոփայութեան պատմութեան, աղբիւրագիտութեան եւ տեքստաբանութեան հարցերուն: Ունի կարեւոր քիտով աշխատութիւններ նաեւ ռուսերէն լեզուով: Հայերէն հրատարակութիւններէն յիշենք՝ «Նումինալիզմի Առաջացումն ու Չարգացումը Միջնադարեան Հայաստանում», «Պլատոնի Երկերի Հայերէն Թարգմանութեան Ժամանակը», «Դաիթ Անյաղթը՝ Հին Հայաստանի Ականատը Փիլիսոփայ», «Գլաշորի Համալսարանը Միջնադարեան Հայաստանի Լուսատուրութեան Կեդրոն»:

316. Ռաֆայէ Արամեան

Սովետահայ գրող, հրապարակագիր: Ծնած է Երեւան, 1921ին: Աւարտած է ԵՊՀ-ի Բանասիրական Ֆակուլտետը: Առաջին վէպը՝ «Ռոքինեան Եղբայրները», լոյս տեսած է 1954ին: Արամեանի միւս գործերէն յիշենք՝ «Չքանքած Չիեր», «Ով Չարմանայի», «Մեռած Քաղաքի Պարիսպների Տակ»:

317. «Սիոն»

Երուսաղէմի Հայոց Պատրիարքարանի պաշտօնաբերքը: Սկսած է լոյս տեսնել 1866ին: 1877ին դադրած է հրատարակուել: 1927ին վերսկսած է հրատարակուիլ Եղիշէ Պատրիարք Դուրեանի հրամանով եւ մինչեւ այսօր լոյս կը տեսնէ, որոշ ընդմիջումներով:

318. «Ազգարար»

Հայերէն առաջին քերթը, հիմնուած Մատրաս՝ 1794ին, Յարութիւն Քին. Ընտանեանի կողմէ: Թերթը փակուած է 1796ին: Հրատարակուած է 18 թիւ միայն:

319. Կարոյ Մինասեան

Ծնած է Նոր Ջուղա (Իսֆահան): Մասնագիտութեամբ քէն բժիշկ՝ ան անասնաման սէր եւ հետաքրքրութիւն ցուցաբերած է պատմա-բանասիրութեան՝ ինչպէս նաեւ հայ, պարսիկ եւ արաբ մշակոյթներու հանդէպ: 1968ին Քալիֆորնիոյ համալսարանը (UCLA) գնած է Կ. Մինասեանի հարուստ հաւաքածոն, որ իր մէջ կը պարունակէր Ջուղայի եւ հարաւ-արեւելեան Ասիոյ մէջ ապրող հայերու պատմութեան վերաբերեալ թանկարժէք վաւերաթուղթեր, քարտեւներ, հայերէն, պարսկերէն, արաբերէն ձեռագրեր, հնատիպ գիրքեր եւ այլ նիւթեր: Մինասեան թարգմանած է Սարգիս Գիլանեցի «Ժամանակագրութիւն»ը, որ կարեւոր պատմական տեղեկութիւններ կը պարունակէ 1722-1723ին Անդրկովկասի եւ Պարսկաստանի մէջ տեղի ունեցած դէպքերու մասին: Տոքթ. Մինասեան 1971ին, Լոնտոնի մէջ հրատարակած է «Shah Diz of Ismaili Fame, Its Siege and Destruction» գիրքը: Ըստ Տիգրը ամբողջ մըն է, գոր Իսմայիլիները գրաւած են սելճուքեան արշաւանքներու ժամանակ: Գիրքը մոր լոյս կը սփռէ Իսֆահանի հին պատմութեան վրայ:





320. Ստեփան Կուրտիկեան

Մովեստահայ գրող, գրաքննադատ, հրապարակագիր: Ծնած է 1908ին, Պուրսա: Յաճախած է ծննդավայրի Գէորգեան Վարժարանը: Ուսումը շարունակած է Մալմնիկի Ամերիկեան Անաթոլիա Քոլեճը: 1926-27ին խմբագրած է Մալմնիկ հրատարակչուող «Աշխատանք» համայնավարական թերթը: 1927ին հաստատուած է Հայաստան: Եղած է «Աւանգարտ», «Երիտասարդ Բոլշեիկ» եւ «Բանուորական Երեսան» թերթերու խմբագիր: Եղած է նաեւ «Մովեստական Գրականութիւն» ամսագրի գլխաւոր խմբագիր: Իր գրական գործերէն յիշենք՝ «Լեռնաշխարհի Դուարը», «Հայրենի Լեզուններ», «Կոմիտասեան Ղօղանջներ»: Կուրտիկեանի «Եղեռնապարտ»-ը 1965ին Պէյրութի մէջ արժանացած է Թէքէեան Մշակութային Միութեան Ա. մրցանակին:

321. Համբար Քէրիկեան (1899-1983)

Ամերիկահայ անուանի բժիշկ, ոսկորի հիւանդութեանց մասնագէտ, որ ծանօթ է նաեւ ազգային-գրական հարցերու մասին տուած իր դասախօսութիւններով: Մավեստի բարեկամը:

322. Բեգլար Նաւասարդեան

Գրող, հրապարակագիր, քաղաքական գործիչ, կուսակցական ղեկավար, Հ.Յ.Դ.ի օրկան «Յուսաբեր» թերթի խմբագրապետ Վահան Նաւասարդեանի (1888-1956) որդին, որ խորհրդաւոր պայմաններու տակ մահացաւ Երեսանի մէջ, 1966ին:

323. Խաչեր Գալուստեան

Եղած է վարիչ Հայկազեան Քոլեճի Մանկավարժական Գիտութեանց Հիմնարկի, հիմնադիր եւ տնօրէն՝ Գիշերային Քոլեճի եւ Հայ Ուսուցչանոցի (1966-1975): Մասնագիտական ուսումը ստացած է Պէյրութի Ամերիկեան եւ Ֆիլատելֆոյ Թէմբլը համալսարաններուն մէջ: 2010ին Շահէ եւ Մարալ Գալուստեաններ հրատարակած են իրենց հօր՝ Խաչեր Գալուստեանի «Ուրուագիծ Դաստիարակչական Հոգեբանութեան» գիրքը:

324. Հրաչ Զարդարեան

Ֆրանսահայ գրող, Ռուբէն Զարդարեանի որդին եւ «Մեր Կեանքը» վեպին հեղինակը: Հայ գրականութեան պատմութեան մէջ Հ. Զարդարեանի անունը պիտի մնայ առնչուած շատ տիան պատահարի մը հետ: Ը. Շահնուր, 1936ին քննադատած էր Ռ. Զարդարեանի «Գամբըր»: Զարդարեան եղբայրները, Ռաֆայէլն ու Հրաչը, իրենց մահատակ հօր վրէժը լուծելու համար, Փարիզի «Ֆլորիա» ճաշարանին մէջ յարձակած են Շահնուրին վրայ եւ ծեծած զայն: Պատահարը իր ժամանակին մեծ աղմուկ հանած է հայ մամուլին մէջ:

325. Աւետիս Ալեքսանեան

Ֆրանսահայ գրող, հրապարակագիր, հասարակական գործիչ, որ 1960ին Փարիզի մէջ հիմնած է «Աշխարհ» շաբաթաթերթը:

326. Գառնիկ Աղդարեան

Բանաստեղծ, խմբագիր, քաղաքական գործիչ: Ծնած է Հալէպ, 1925ին: 1942ին, տեղափոխուած է Պէյրութ, ուր խմբագրած է «Մեր նշանաբանն է Յառաջ» գրական-հասարակական շաբաթաթերթը եւ «Էջեր Գրականութեան եւ Արուեստի» պարբերականը: Իր ստեղծագործութիւններէն յիշենք՝ «Պարնէշի Վրայ», «Մարեան Յաի եւ Հայրուցան», «Ապրիմ Մեռնիմ»: Մահացած է Պէյրութ, 1986ին:

327. Ալեքսի Սիլվիա կամ Սիլվի

Պետրոս Ալեքսեանի կամ Փիթըր Ալեքսիի հարսը: Վիվիէն Կիւզելեանի եղբօր, Այվրն Ալեքսիի կինը: Ծնած է Ինտոնիզիայի Սուրապայա քաղաքը: Բ. Աշխատանքարտի աւարտին ընտանիքին հետ տեղափոխուած է Ամսթերտամ: Այվրնն ու Սիլվիան ունեցած են երեք զաւակ՝ Ինկրիտ, Թանիա եւ Փիթըր: Սիլվիան ներկայիս կ'ապրի Լոնտոն:

328. Ստեփան Սրապեան

Իտալահայ ազգային գործիչ:

329. Տիգրան Ալեքսանեան

Մասնագիտութեամբ բժիշկ: Միլանահայ համայնքի ղեկավարներէն, որ երկար տարիներ եղած է Հ.Բ.Ը.Մ.ի Միլանի մասնաճիւղի վարչութեան ատենապետ:





330. Սիրան Սեզա (1903-1973)

Ծննդեան անունով Սիրանոյշ Չարիֆեան: Գրող, հրապարակագիր, կանանց իրաւունքներու պաշտպանութեան ակտիւստ, վաղամեռիկ բանաստեղծ Մատթէոս Չարիֆեանի քոյրը: Ծնած է Պոլիս, ուր մինչեւ 1920ի սկիզբը յաճախած է Ամերիկեան Քոլեճի աղջկանց բաժինը: Նոյն տարին հաստատուած է Պէյրոս: Սեզան ուսումը շարունակած է Քոլումպիա Համալսարանը, ուրկէ ստացած է մագիստրոս արուեստից տիտղոսը ժուրնալիզմի եւ գրականութեան գծով: Վերադարձած է Պէյրոս եւ հիմնած՝ «Երիտասարդ Հայտի»-ն, որ լոյս տեսած է 1932-34 եւ 1946-1968 տարիներուն:

331. Եղուարդ Թօփճեան

Սովետահայ գրաքննադատ: Ծնած է 1911ին: Աւարտած է ԵՊՀ-ի Պատմութեան Ֆակուլտետը: 1935-38 տարիներուն ուսանած է Լենինկրատի Արուեստագիտութեան Ինստիտուտին մէջ: Եղած է խմբագիր «Սով. Գրականութիւն եւ Արուեստ» ամսագրի: Երկար տարիներ վարած է Գրողներու Միութեան առաջին քարտուղարի պաշտօնը: Հրատարակած է բազմաթիւ յօդուածներ նուիրուած հայ, ռուս, սովետական եւ եւրոպական գրականութեան հարցերուն: Իր աշխատասիրութիւններէն յիշենք՝ «*Վահան Տէրեան*», «*Սոցիալիստական Ռեալիզմի Պրոբլեմների Շուրջ*», «*Կերենիկ Դեմիրճեան*», «*Հոկտեմբերը եւ Հայ Ժողովրդի Ճակարագիրը*»:

332. Երուանդ Հիւսիսեան

Իտալահայ ազգային բարերար: 1964ին Լիբանանի մէջ, Հ.Բ.Ը.Մ.ի հովանիին տակ, իր բարերարութեամբ հիմնուած է «Երուանդ Հիւսիսեան Հայագիտական Հիմնարկ»ը:

333. Սարգիս Քիրքճեան

Լոնտոնահայ ազգային բարերար: Երկար տարիներ վարած է Հ.Բ.Ը.Մ.ի Լոնտոնի մասնաճիւղի վարչութեան ատենապետութիւնը, ինչպէս նաեւ Ս. Սարգիս Եկեղեցոյ խնամակալութեան նախագահութիւնը: Սարգիս Քիրքճեանի եւ իր զուակներուն՝ Շորճ եւ Դոն Քիրքճեաններու բարերարութեամբ կառուցուած է Երեւանի Ս. Սարգիս եկեղեցին:

334. Մարոյ Մարգարեան

Սովետահայ բանաստեղծուի: Ծնած է 1915ին, մահացած՝ 1999ին: Աւարտած է ԵՊՀ-ի Բանասիրական Բաժինը: 1967ին սկսած է աշխատիլ Սփիւքախայութեան Հետ Մշակութային Կապի Կոմիտէ: «*Միտքնութիւն*» խորագրով անոր բանաստեղծութիւններու առաջին հատորը լոյս տեսած է 1940ին: Իր հետագայ հրատարակութիւններէն յիշենք՝ «*Մօր Ձայնը*», «*Փշարենի*», «*Լիրիկական Լուսարաց*», «*Ձնհալից Յետոյ*», «*Լցուած Լռութիւն*» եւ «*Օրերի Խորքից*»: Մ.Մ.ի բանաստեղծութիւնները թարգմանուած են բազմաթիւ լեզուներու, որոնց կարգին նաեւ անգլերէնի, ֆրանսերէնի եւ ռուսերէնի:

335. Անահիտ Սահինեան

Սովետահայ արձակագիր: Ծնած է 1917ին: Աւարտած է ԵՊՀ-ի Բանասիրական Ֆակուլտետը: Եղած է «Պիոներական Կանչ» ամսաթերթի խմբագիր: Սահինեան հրատարակած է բազմաթիւ պատմուածքներ եւ վէպեր, ինչպէս՝ «*Վայելք, Խաչողիներ*», «*Ծարաւ*», «*Կարօյր*», «*Բարեկամներ*», «*Վերադարձի Արահեպներով*», «*Ուշացած Ժամադրութիւն*», եւ այլն:

336. Սէսիլ Քէշիշեան

Սեսիլն ու ամուսինը, Տոքթ. Գէորգ Քէշիշեան, եղած են Մավեանի մտերիմ բարեկամներէն: Ներկայիս Քէշիշեան ամուլը կ'ապրի Լոս Անճելոս:

337. Սօտրալիզ (Sotheby's)

Աշխարհի մեծագոյն աճուրդի ընկերութիւններէն մէկը, հիմնուած Անգլիոյ մէջ 1744ին: See Sotheby's Wikipedia:

338. Լ. Ռ. Ագարեան

Սովետահայ բանասեր-արուեստարան: Ծանօթ է հայ մանրանկարչութեան պատմութեան նուիրուած իր «*Կիլիկեան Հայկական Մանրանկարչութիւնը ԺԲ-ԺԳ. Դարերուն*» («*Cilician Armenian Miniature Painting- XII-XIII Centuries*») աշխատասիրութեամբ: Յաւել-





եալ տեղեկութեան համար տես հետեւեալ կայքէջը. <http://groong.usc.edu/tcc/tcc-20050627.html>

339. Եորկըն Անտերսըն-Ռոզանտալ (Jorgen Andersen-Rosendal)

Տանիմարքացի գրող: Եղած է հայ ժողովուրդի բարեկամներէն: Աւարտած է Քոփենհա-կընի Համալսարանի Իրաւագիտութեան Բաժինը: Որպէս տանիմարքական կարետը թերթի մը թղթակիցը՝ Անտերսըն այցելած է բազմաթիւ երկիրներ, ներառեալ պատմական եւ Սովե-տական Հայաստան: 1967ին Անտերսըն Մեծն Բրիտանիոյ բազմաթիւ քաղաքներուն մէջ տուած է շուրջ յիսուն դասախօսութիւն, «Հայաստան եւ Հայերը» նիւթին շուրջ: Դասախօ-սութեանց շարքը, որ բացառիկ յաջողութիւն արձանագրած է, կազմակերպած է անգլիական յայտնի Foyles Lecture Agency հաստատութիւնը: Անտերսընի մասին աւելի մանրամասն տե-ղեկութիւն ստանալու համար կարդալ՝ Ա. Կիւզելեանի «Թերթերով Մամուլը» գիրքը:

340. Խորէն Ա. Կաթողիկոս Բարոյեան

Ծնած է 1914ին Նիկոսիա, վախճանած Անթիլիաս՝ 1983ին: Եղած է Մեծի Տանն Կիլիկ-իոյ Կաթողիկոս 1963-1983ին: Տես՝ Khoren I Paroyan Wikipedia:

341. Նշան Փալանճեան Ծննարան

Նշան Փալանճեան Ծննարանը հիմնուած է Պէյրութ 1930ին, Համազգայինի հովանաւո-րութեան տակ: Ունեցած է անուանի դասախօսներ, ինչպէս Նիկոլ Աղբալեան, Սիմոն Վրաց-եան, Գառնիկ Գիւզալեան, եւ այլն:

342. Ասատուր Պետեան

Կրթական մշակ, որ երկար տարիներ աշխատած է որպէս ուսուցիչ եւ տնօրէն Սուրիոյ եւ Կիպրոսի մէջ:

343. Վահագն Գալեան

Սովետահայ բանաստեղծ, թարգմանիչ, հրապարակագիր: Ծնած է Արաբկիր, 1922ին: 1926ին Գալեան ընտանիքը փոխադրուած է Քրասնոտար, Սովետական Ռուսիա, իսկ 1932ին՝ Երեւանի Նոր Արաբկիր արուարձանը: Մասնակցած է Հայրենական Մեծ Պատե-րազմին: 1948ին ասարտած է ԵՊՀ-ի Բանասիրական Բաժինը: Խմբագրած է «Գրական Թերթ»-ն ու «Հայրենիքի Չայն»-ը: 1967ին սկսած է աշխատիլ Սփիւռքահայութեան Հետ Մշակութային Կապի Կոմիտէին մէջ, որպէս նախագահի տեղակալ: Անդրանիկ գիրքը՝ «Առաջին Սէր» լոյս տեսած է 1947ին: Մինչեւ 1972 հրատարակած գործերէն յիշենք՝ «Աշ-խարհի Առաւօրը», «Ճանապարհ Սրբի Միջով», «Լուսաբացը Լեռներում», «Ամառային Ամպրոպ», «Գիւնու Երգը», «Ծովի Ծխանի» եւ «Անկէզ Սորենի»: Գալեան յայտնի է նաեւ որպէս տաղանդաւոր թարգմանիչ: Ի միջի այլոց՝ ան հայերէնի թարգմանած է Ալիսիա Կի-րակոսեանի սպաներէն բանաստեղծութիւնները: Մահացած է Երեւան, 1996ին:

344. Գուրգէն Մահարի

Անուանի հայ գրող, բանաստեղծ: Ծնած է Վան 1903ին, մահացած Երեւան՝ 1969ին: Տես՝ Gurgen Mahari Wikipedia:

345. Արա Կիլեր (Ara Guler)

Ծնած է Իսթանպուլ, 1928ին: Նկատուած է Թուրքիոյ համաշխարհային ճանաչումի ար-ժանացած ամենէն յայտնի լուսանկարիչը, որ ծանօթ է նաեւ «Իսթանպուլի աչքը» կամ «Իս-թանպուլի նկարիչ» մակդիրներով: Ուսումը ստացած է Պոլսոյ Կեդրոնական Վարժարանին մէջ: Որպէս ֆոթոժուրնալիստ, 1950ին սկսած է աշխատակցիլ «Ենի Իսթանպուլ» եւ «Հիւրրիէթ» թերթերուն: Արա Կիլերի մասին մանրամասն տեղեկութիւն ստանալու համար տես՝ Ara Guler Wikipedia:

346. Ծնորիք Պատրիարք Գալուստեան

Ծնած է 1913ին Արեւմտեան Հայաստանի մէջ: Հազիւ երկու տարեկան՝ ծնողները զոհ-ուած են Մեծ Եղեռնին: Ուսումը ստացած է Ամերիկեան Միսիոնարական Որբանոցի մէջ: Աւարտելէ ետք Երուսաղեմի Ս. Յակոբեանց Միաբանութեան Ժառանգաւորաց Վարժարա-նը՝ 1932ին ձեռնադրուած է սարկաւազ, իսկ 1936ին՝ կուսակրօն քահանայ: Եղած է Ժառան-գաւորաց Վարժարանի տեսուչ եւ վարած՝ այլ պատասխանատու պաշտօններ: Եղած է նա-





և Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի Դպրեվանքի տեսուչ: Հովական պաշտօններ վարած է Անգլիա եւ Ա.Մ.Ն: Եպիսկոպոս ձեռնադրուած է 1955ին, իսկ 1961ին ընտրուած՝ Թուրքիոյ Հայոց Պատրիարք. պաշտօն մը՝ զոր վարած է նուիրումով եւ ձեռներեցութեամբ: Վախճանած է 1990ին, Երեւան:

347. Ղազար Պետոյեան

Ծնած է Սասուն 1887ին: Սիմոն Սիմոնեանի «*Լեռ եւ Ճակատագիր*» հատորի «Նա Իր Հօրը Չաւակն է» պատմութեան հերոսը, նոյն ինքն ֆետայի Ղազար Պետոյեանն է, ծանօթ՝ Քեռի Ղազար անունով: Մասնակցած է Փետրուարեան Ապստամբութեան: Կեանքի վերջին տարիներն անցուցած է Լիբանան, Կիլիկիոյ Կաթողիկոսարանին մէջ, զբաղելով մեղուաբուծութեամբ: Մահացած է 1959ին:

348. Չարլզ Պըրնի (Charles Burney)

Մանչեսթրի Համալսարանի Մերձատր Արեւելքի Հնագիտական Պեղումներու Բաժնի դասախօս: Փրոֆ. Պըրնին եւ Փրոֆ. Լանկը 1971ին Լոնտոնի մէջ հրատարակած են «*Peoples of the Hills: Ancient Ararat and Caucasus*» խիստ շահեկան հատորը:

349. Արմէն Չարեան

Կոստան Չարեանի որդին: Մասնագիտութեամբ ճարտարապետ: Ծնած է Պոլիս, 1914ին: Ուսանած է Վենետիկի Մուրատ Ռաֆայելեան Վարժարանին մէջ: Մասնագիտական ուսումը ստացած է Վենետիկի Համալսարանին, Փարիզի Ecole des Beaux Arts-ին եւ Հռոմի Համալսարանին մէջ: Ա. Չարեան Ատրիանոյ Ալփակոյ Նովելլոյի եւ Յ. եւ Ա. Մանուկեաններու հետ, Սիլանի մէջ հիմնած է «Research and Documentation Centre of Armenian Culture» կազմակերպութիւնը: Չարեան հեղինակ է բազմաթիւ ճարտարապետական մախազիծերու, թէ՛ արտասահմանի եւ թէ՛ Հայաստանի մէջ: Ան եղած է Երեւանի Փոլիթեքնիք Համալսարանի ճարտարապետութեան Բաժնի դասախօս եւ ՀՍՍՀ ԳԱ-ի գիտաշխատող: Մահացած է 1994ին:

350. «Ազդակ»

Պաշտօնաբերք ձ.Յ.Գ.Ի: Հիմնուած Պէյրութ՝ 1927ին:

351. Տաճատ Եպս. Ուրֆալեան (ապա՝ Արք.)

Անթիլիասի միաբաններէն: Ծնած է 1920ին, Պէյլան: Անթիլիասի Դպրեվանքը աւարտած է 1942ին: Նոյն տարին ձեռնադրուած է կուսակրօն քահանայ: Եղած է Հիւսիսային Մուրիոյ, Ճեզիրէի շրջանի առաջնորդական փոխանորդ, իսկ 1963ին ընտրուած՝ Լիբանանի Թեմի Առաջնորդ:

352. Յարութիւն Մուրաֆեան

Լոնտոն հաստատուած պոլսահայ վաճառական: Եղած է Համայնքային Եկեղեցական Խորհուրդի անդամ: Մահացած է 1992ին:

353. Ֆելիքս Աբրահամեան

Երաժիշտ, երգեհոնահար, անուանի երաժշտական քննադատ: Ծնած է Լոնտոն, 1914ին: Հազիւ տասնեօթ տարեկան՝ նշանակուած է քարտուղար Organ Music Society-ի: Պատերազմի տարիներուն աշխատած է որպէս Լոնտոն Ֆիլիարմոնիկ Նուագախումբի տնօրէն: Իր կենդանութեան Ֆելիքս Աբրահամեան նկատուած է Անգլիոյ ամենէն յայտնի երաժշտական քննադատը, որուն յօդուածները յափշտակութեամբ կարդացուած են միջազգային երաժշտական շրջանակներու մէջ: Ան եղած է միակ երաժշտական քննադատը, որ 1994ին պատուոյ անդամ ընտրուած է Արքայական Ֆիլիարմոնիկ Ընկերութեան. բացառիկ պատիւ մը՝ որուն արժանացած են միայն մեծ երաժիշտներ, ինչպէս՝ Berlioz, Ravel եւ Sibelius: Աբրահամեան մահացած է 2005ին: Յատկապէս տեղեկութիւններու համար տես՝ Felix Abrahamian Wikipedia:

354. Իրէն Բամպուրճեան

Ֆրանսահայ անուանի դաշնակահարուհի, որ 60ական եւ 70ական թուականներուն տուած է նուագահանդէսներ երոպական քաղաքներու մէջ, արժանանալով քննադատներու բարձր գնահատանքին: Ի. Բամպուրճեան հեղինակած է նաեւ բազմաթիւ ձայնասկաւա-





նակներ, որոնք նուիրում են Պախի, Մոցարթի, Հենդլի, Պեթովեհի եւ դասական այլ երաժիշտներու ստեղծագործութեանց:

355. Մայաթ-Նովա

Հանճարեղ բանաստեղծ, երգիչ, քանանչիստ, աշուղ: Ծնած է Թիֆլիս 1712, 1717 կամ 1722ին, մահացած Հաղբատ՝ 1795ին: Սկրտութեան անունով՝ Յարութիւն Սայադեան: Տես՝ Sayat Nova Wikipedia:

356. Մարտիրոս Սարեան

Մեծահամբաւ նկարիչ: Եղած է հայ ազգային նկարչութեան դպրոցի հիմնադիրը: Ծնած է Նոր Նախիջեան 1880ին, մահացած Երեւան՝ 1972ին: Տես՝ Martiros Saryan Wikipedia:

357. Սիլվա Կապուտիկեան

Ծնած է 1919ին, մահացած՝ 2006ին: Կը նկատուի մեծագոյն հայ բանաստեղծուհին: Տես՝ Silva Kaputikyan Wikipedia:

358. Սկրտիչ Ներսէսեան

Սովետահայ պատմաբան: Ծնած է 1910ին: 1931ին աւարտած է ԵՊՀ-ի Պատմագրական Ֆակուլտետը: 1950ին ընտրուած է ակադեմիկոս ՀՍՍՀ ԳԱ-ի: Դասախօսած է հայկական բարձրագոյն ուսմանց հաստատութիւններու մէջ: Հեղինակ է շուրջ հարիւր ուսումնասիրութիւններու, որոնք նուիրում են հայ-ռուսական յարաբերութիւններու եւ հայ ազատագրական շարժումներու պատմութեան: 1966ին ռուսերէն լեզուով կազմած եւ խմբագրած է «Հայերի Գեղնցիոր Օսմանեան Կայսրութեան Մէջ» փաստաթուղթերու եւ նիւթերու ժողովածուն:

359. Միս Մորկըն (Miss Morgan)

Փրոֆ. Չարլզ Տաուսեթի հայերէն լեզուի դասընթացքներուն հետեւող ամերիկացի ուսանողուհի՝ որ ապրած է Ալեքսեաններու Egerton Lodge պանդոկին մէջ:

360. Վալթեր Արամեան

Սովետահայ գրող: Ռաֆայել Արամեանի եղբայրը: Ծնած է 1909ին, Վաղարշապատի մէջ: Աւարտած է ԵՊՀ-ի Բանասիրական Բաժինը: Աշխատած է Մատենադարանի մէջ: Գրած է վիպակներ եւ պատմուածքներ, որոնցմէ յիշենք՝ «Տայգայի Օրէնքը», «Ռուսա Որդի Արգիշտիի», «Մարդը», «Մարդի Մէրը», «Ընկած Ծառը» եւ «Միթէ Բոլորը Հող Դարչան»: Մահացած է Երեւան, 1994ին:

361. Գեորգ Էմին

Անուանի բանաստեղծ, արձակագիր, թարգմանիչ: Ծնած է 1918ին Աշտարակ, մահացած Երեւան՝ 1998: Տես՝ Gevorg Emin Wikipedia:

362. Հրաչեայ Յովհաննիսեան

Սովետահայ բանաստեղծ: Ծնած է Հայաստան 1919ին: 1941ին Երեւանի Համալսարանի Բանասիրական բաժնի երկրորդ դասարանն աւարտելէ ետք՝ մասնակցած է Հայրենական Պատերազմին: 1944ին զօրացրուելէ ետք, սկսած է աշխատիլ «Արտասահմանեան Երկրների Հետ Բարեկամութեան եւ Մշակութային Կապի Հայկական Ընկերութեան», «Ռատիոհաղորդումների Կոմիտէ»ի եւ «Սովետական Գրականութիւն» ամսագրի մէջ: Եղած է նաեւ «Գրական Թերթ»ի խմբագիր եւ Հայաստանի Գրողներու Միութեան երկրորդ քարտուղար: Յովհաննիսեանի բանաստեղծութիւններու առաջին գիրքը՝ «Իմ Կեանքի Երգը», լոյս տեսած է 1948ին: Այնուհետեւ՝ 1951-1977 տարիներուն հրատարակուած են անոր «Երկրորդ Հանդիպում», «Հրաչայի Այգեպան», «Ծովի Լռութիւնը», «Վայրի Վարդ», «Սուրբ Դաիւնու Վրայ», «Հայրական Երգ» բանաստեղծութիւններու հաւաքածոները: Հ.Յ. ունի նաեւ բազմաթիւ հրապարակագրական յօդուածներ, ճամբորդական տպաւորութիւններ եւ թարգմանութիւններ:

363. Պարոյր Մեակ

Աւագանի անունով՝ Պարոյր Ղազարեան: Ծնած է Չանախչի գիւղին մէջ 1924, Յունուար 24ին: Նախնական ուսումը ստացած է գիւղի դպրոցը, իսկ բարձրագոյն կրթութիւնը՝ ԵՊՀ-ի Բանասիրական Ֆակուլտետին մէջ, ուրկէ շրջանաւարտ եղած է 1945ին: Գրականագիտութեան մէջ խորանալու նպատակով ուսումը շարունակած է Գիտութիւններու Ակադեմիայի





Մանուկ Աբեղեանի Անուան Գրականութեան Ինստիտուտէն ներս: 1951ին Մեակ սկսած է ուսանիլ Մոսկուայի Մ. Կորքիի Անուան Միջազգային Գրականութեան Ինստիտուտին մէջ: 1957-59ին նոյն հաստատութեան մէջ պաշտօնավարած է, որպէս թարգմանչական գրականութեան դասախօս: 1960ին վերադարձած է Երեւան եւ սկսած աշխատիլ Մանուկ Աբեղեանի Անուան Գրականութեան Ինստիտուտին մէջ: 1966-1971 տարիներուն վարած է Գրողներու Միութեան Քարտուղարի պաշտօնը: 1967ին ստացած է տոքթորայի տիտղոս եւ տարի մը ետք ընտրուած՝ Գերագոյն Սովետի անդամ: Պարոյր Մեակ ինքնաշարժի արկածով մահացած է 1971, Յունիս 17ին:

Պ.Ս.ի գործերէն յիշենք՝ «Աննահները Հրամայում են» (1948), «Անհաշը Մրերմութիւն» (1953), «Միրոյ Ծանապարհ» (1954), «Անրեղի Զանգակարուն» (1959), «Մարդը Արի Մէջ» (1964), «Սայաթ Նովա» (1969), «Եղիցի Լոյս» (1969), «Չեր Անօրները» (1971):

364. Լեւոն Միրճանեան

Սովետահայ բանաստեղծ, գրականագէտ: Ծնած է Երեւան, 1933ին: Աւարտած է ԵՊՀ-ի Բանասիրական Ֆակուլտետը: Հրատարակած է «Այգեսրաններ», «Ծովի Կարօյ», «Դէպի Ծով» բանաստեղծութեան հատորները, «Կանաչ Ապրիլ» պոէման, «Հայ Բանաստեղծութեան Ակունքները» եւ «Վերընթերցելով Մովսէս Խորենացու «Հայոց Պատմութիւնը»» աշխատութիւնները: Միրճանեանի Կոմիտասի նուիրում «Երգի Հովիւր» պոէման արժանացած է Թ.Մ. Միութեան Ա. մրցանակին: «Երգի Հովիւր» թարգմանում է նաեւ արաբերէնի եւ լոյս տեսած՝ Պէյրութ:

365. Ռոմիկ Մարթին

Կալկաթայի Հայոց Մարդասիրական Դեմարանի շրջանաւարտներէն: Դարտարապետական ուսումը ստացած է Երեւանի մէջ: Եղած է Կիւլպէնկեան Հիմնարկութեան թոշակառու: Ներկայիս ունի իր սեպիական ընկերութիւնը Մ. Նահանգներու մէջ:

366. Ռուզան Բարխուդարեան

Երգչուհի: Ծնած է Պարսկաստան: Աւարտած է Կալկաթայի Հայոց Մարդասիրական Դեմարանը: Երաժշտական կրթութիւնը ստացած է Երեւան: Ներկայիս կ'ապրի Մ. Նահանգներ:

367. Յովհաննէս Թումանեան

Ծնած է 1869ին, մահացած՝ 1923ին: Բանաստեղծ, արձակագիր, թարգմանիչ, հրապարակախօս, ազգային գործիչ: Տես՝ Hovhannes Toumanian Wikipedia:

368. Ռոնի Քաջիկ

Կիւլպէնկեան Հիմնարկութեան թոշակառու հնդկահայ ուսանող:

369. Թէքեան Մշակութային Միութիւն

Ռ.Ա.Կ.ի հովանաւորութեամբ Պէյրութի մէջ 1947ին հիմնադրուած մշակութային կազմակերպութիւն, որ մասնաճիւղեր ունի աշխարհի գրեթէ բոլոր հայաշատ քաղաքներուն մէջ:

370. Սեդա Չիլինկիրեան

Ծնած է Երուսաղէմ: Թոռնուհին է երգահան Չիլինկիրեանի, քոյրը՝ աշխարհոչակ ջութակահար Լեւոն Չիլինկիրեանի: Սեդան երկար տարիներ պատասխանատու պաշտօն վարած է BBC-ի մէջ:

371. Ռուպերթ Աթայեան

Սովետահայ երաժշտագէտ, կոմպոզիտոր: Ծնած է 1915ին, Թեհրան: Աւարտած է Երեւանի Պետական Երաժշտանոցը, ուր 1944ին սկսած է դասաւանդել երաժշտական-տեսական առարկաներ: 1962ին նշանակուած է Երաժշտութեան Տեսութեան եւ Ստեղծագործութեան Ամպիոնի վարիչ: Ուսումնասիրած է հայկական միջնադարեան երաժշտութիւնը եւ իսլամական ոճագրութիւնը, կազմած է խմբագրած՝ Կոմիտասի աշխատութիւններու ակադեմական հրատարակութիւնը: Յայտնի են Աթայեանի կամերային-գործիքային եւ ձայնային գործերը, ինչպէս նաեւ ժողովրդական ստեղծագործութեան եւ տաղերու մշակումները:

372. Լուիզա Պոզապալեան

Օփերայի անուանի երգչուհի: Ծնած է Լիբանան: Երաժշտական կրթութիւնը ստացած է





Պեյրոսի եւ Վիեննայի երաժշտանոցներուն մէջ: Երգած է գլխատրաբար Տիսելտորֆի եւ Համպտրիկի օփերաներուն մէջ: Մահացած է երիտասարդ տարիքին:

373. Լիլի Չուգասըզեան (1921-2012)

Աշխարհահռչակ ամերիկահայ օփերայի երգչուհի, որ ելոյթ ունեցած է աշխարհի լատինացոյն համերգասրահներուն մէջ հռչակատր նուագախումբերու ընկերակցութեամբ: Յատկապէս տեղեկութիւններու համար տես՝ Lili Chookasian Wikipedia:

374. Գերսամ Ահարոնեան

Ուսուցիչ, ազգային-կուսակցական գործիչ, Ռ.Ա.Կ.ի ղեկավարներէն: Ծնած է 1916ին, Մարաշ: 1937ին՝ աւարտելէ ետք Կիպրոսի Սելզոնեան Կրթական Հաստատութիւնը, նոյն հաստատութեան մէջ աշխատած է որպէս ուսուցիչ: 1946ին ստանձնած է Պեյրոս հրատարակչուող Ռ.Ա.Կ.ի պաշտօնաթերթ, «Ջարթօնք»ի խմբագրութիւնը. պաշտօն մը՝ զոր վարած է մինչեւ մահը, 1981: 1964ին եւ 1966ին հրատարակած է «Մեծ Երազի Ճամբուն Վրայ» եւ «Խոհեր Յիսնամեակի Աւարդին գիրքերը», իսկ 1965ին, արաբերէնով՝ «Հայկական Հարցը Արաբ Բողոքողի Հանրային Կարծիքին Առջեւ» հատորը: Խմբագրած է հրատարակած է «Յուշանարեան Մեծ Եղեռնի, 1915-1965» մեծածաւալ աշխատութիւնը:

375. Լիսի Իշխանեան

Ամերիկահայ դաշնակահարուհի: Նուագահանդէսներ տուած է, բացի Մ. Նահանգներէ՝ նաեւ Հայաստանի եւ զանազան գաղթօճախներու մէջ: Անդամ է Արամ Խաչատուրեան Միջազգային Մրցոյթի հոգաբարձութեան:

376. «Արմինիըն Տայճէս»

Եօթանասունական թուականներուն Յակոբ Թանգեանի եւ դաշնակահարուհի Լիսի Իշխանեանի կողմէ հրատարակուած՝ պարբերաթերթ:

377. Բենիամին Թիֆէնքճեան

Պուլկարահայ լրագրող: Եղած է Սոֆիա հրատարակչուող «Երեւան» շաբաթաթերթի խմբագիր: «Երեւան»ը սկսած է հրատարակուիլ 1944ին: Բացի պուլկարական կառավարութենէն՝ շրջան մը թերթի հրատարակութեան օժանդակած է նաեւ Ալեք եւ Մարի Մանուկեան Բարեփրական Հիմնադրամը՝ տարեկան 2500 տոլար նպաստով:

378. Հայկարամ Ութմազեան (1912-1970)

Եղած է ԽՍՀ-ի մամուլի նախարար:

379. Ռաֆֆի Օհանեան

Կիւլպէնկեան Հաստատութեան թոշակառուներէն:

380. Ռուբիկ Յովհաննիսեան

Պարսկահայ գրող: Մավեանի մտերիմ ընկերներէն:

381. Միսիգ Կոմէզ (Mrs. Gomez)

Egerton Lodge պանդոկի մէջ աշխատող սպանուհի:

382. Արսէն Վրդ. Պերպէրեան (ապա՝ Արք.)

Ծնած է 1937ին Ադերբայճանի: 1947ին ծնողքին հետ ներգաղթած է Հայաստան: 1955ին ընդունուած է Էջմիածինի Գեորգեան ճեմարանը, որուն ընթացքն աւարտած է 1960ին: Երկու տարի ուսանած է Չակոբսի Աստուածաբանական Ակադեմիային մէջ: Ժընեւի մէջ հետեւած է Համաշխարհային Եկեղեցիներու Խորհուրդի դասընթացքներուն: 1968-73ին ուսանած Լոնտոնի Kings College Համալսարանին մէջ: 1972ին ձեռնադրուած է եպիսկոպոս: 1998ին առողջական պատճառներով տեղափոխուած է Քալիֆորնիա: Մահացած է 2013ին, Էջմիածին:

383. Ղեւոնդ Պատրիարք Գուրեան

Ծնած է 1879ին Պոլիս: Որպէս հոգեւոր հովիւ պաշտօններ վարած է զանազան երկիրներու մէջ նախքան Ամերիկայի Հայոց Արեւելեան Թեմի առաջնորդ ընտրուիլը: Հ.Յ.Գ.աշնակցութեան որոշումով սպանուած է Նիւ Եորքի Սուրբ Խաչ եկեղեցիին մէջ 1933ին: Տես՝ Levon Tourian Wikipedia:

384. Սմբատ Փանոսեան

Պարսկահայ ընտանիքի գաւակ՝ ծնած է Թիֆլիս, 1909ին: 1930ին եղած է առաջին շրջա-





նաարտներն Մելգոնեան Կրթական Հաստատության, ուր աշակերտած է Յակոբ Օշականին: Հատորով իր լոյս տեսած գործերն են՝ «Անարչագանգ Քայլեր» (1949), «Որ մրրկա էին Չայրուած» (1953), «Հայկական Վերքը» (1959), «Մերը, որ Գին Չունէր» (1968), «Վարք Կոմիդաս Կոմիդացիի» (1971), «Չանչն Իմ Փառատրեալ» (1989): Մահացած է Լաքաքիա, Սուրիա, 1995ին:

385. Անդրանիկ Արարատ

Հայէպահայ բանաստեղծ եւ հրապարակագիր:

386. Լեւոն Շահոյեան

Արձակագիր եւ հրապարակագիր: Ծնած է 1907ին, Պարսկաստանի հայաշատ Սալմաստ գաւառի Հաֆթուան գիղին մէջ, ապա հաստատուած՝ Իրաք: Շրջան մը Լիբանան ապրել է ետք՝ մեկնած Ա.Մ.Ն.: Աշխատակցած է հետեւեալ թերթերուն եւ պարբերականներուն. «Վերածնունդ», «Ալիք», «Արուսեակ», «Պայքար», «Որբաշխարհի Աստղ», «Պարսկահայ Տարեցոյց», «Նոր Գիր», «Անի», «Սահակ-Մեսրոպ», ինչպէս նաեւ՝ «Նայիրի» եւ «Սփիւռք» շաբաթաթերթերուն: Իր հրատարակած գործերն են «Փունջ Մը Ուրանաւորներ» (1928), «Շողեր» (1934), «Տիգրիսի Ափին» (1967) եւ «Երբ Հրաշքներ Կային» (1973): Կարապետ Մոմճեան անգլերէնի թարգմանած է «Տիգրիսի Ափին»ը, զոր «Կոմիտաս» հրատարակչատունը լոյս ընծայած է 2012ին, Լոնտոնի մէջ:

387. Պեպոյ Միմոնեան

Ծննդեան անունով Պետրոս Գալայճեան: Ծնած է 1937ին Ալեքսանտրեթ, Կիլիկիա: Գրող, բանաստեղծ, հրապարակագիր եւ կրթական մշակ: Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի Գալայճեանքէն թերաւարտ՝ ուսումը շարունակած է Պէյրութի Սէն ժոզէֆ Համալսարանին մէջ եւ աւարտած՝ անոր արեւելագիտութեան բաժինը: 1975-1995 տարիներուն եղած է Պէյրութի Սահակեան-Մկրտիչեան Քոլեճի տնօրէն: Հեղինակ է շուրջ տասներկու հատորներու: Աշխատակցած է «Շիրակ», «Ահեկան», «Խօսնակ», «Հայկազեան Հայագիտական Հանդէս», «Հասկ», «Նայիրի», «Սփիւռք» եւ այլ պարբերականներու: 1965-1975ին եղած է «Նոր Մերմուդ Մշակութային Միութիւն»ի նախագահը: Իր գրական-կրթական երկարամեայ վաստակին համար պարգևատրուած է Ս. Մեսրոպ Մաշտոց շքանշանով, Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսին կողմէ:

388. Տիգրան Վարժապետեան

Լիբանանահայ բժիշկ, հրապարակագիր, գրող: Հեղինակ է պատմութեան հաւաքածոներու, որոնցմէ յիշենք՝ «Արծիւը Կը Սաւառներ», «Կեանքի Քառուղին», «Բժիշկը Կեանքին ու Մահուան Հեռ»:

389. Օֆիկ Մարթին

Վիվիէն Կիւզելեանի զարմուտիկն եւ Վանուշ Գէորգեանի կինը (Ծ. 401):

390. Կարպիս Եսայեան

Բնիկ սաղմնահայ: Որպէս կրթական մշակ՝ պաշտօնավարած է Կիպրոսի Մելիքեան Վարժարանին մէջ: Հաստատուած է Լոնտոն եւ պարապած ուսուցչութեամբ: Եղած է Ռ.Ա.Կ.ի Լոնտոնի մասնաճիւղի ղեկավարներէն: Անդամակցած է Լոնտոնի «Հայ Տուն»ի Մշակութային Յանձնախումբին:

391. Հէրրոզ (Harrods)

Անուանի վաճառատուն, հիմնուած Լոնտոն՝ 1824ին Չարլզ Հէրրի Հէրրոզի կողմէ (Charles Henry Harrod): Յանելեալ տեղեկութիւններու համար տես՝ Harrods Wikipedia:

392. Գոհար Գասպարեան

Հնչակաւոր հայ երգչուհի: Սովետական Միութեան ժողովրդական արտիստ: Ծանօթ է նաեւ որպէս «Հայաստանի Մոխակ»: Ծնած է Գահիրէ 1924ին, մահացած Երեւան՝ 2007ին: Stu՝ Gohar Gasparyan Wikipedia:

393. Զարուհի կամ Զարա Տօրլսանեան

Աշխարհահռչակ երգչուհի: Ծնած է Մոսկուա, 1918ին: Մայրը, Էլենա Մակարեան եղած է փրոֆեսիօնալ երգչուհի, իսկ հայրը՝ Աղասի Մակարեան՝ սրնգահար եւ քլարինեթիս: Զարուհին





նախ տրված է դաշնամուր, ապա՝ ջութակ եւ հուսկ՝ 16 տարեկանին որոշած է ձայնամարզութեան դասեր առնել: Որպէս օփերայի երգչուհի, առաջին անգամ ելոյթ ունեցած է «Երեւան Օփերա»-ի հետ, Կունդի «Ֆաուստ»-ին մէջ, կատարելով Siebel-ի դերը: Տղութեան տարի եւս աշխատած է «Երեւան Օփերա»-ի հետ, ստանձնելով գլխաւորաբար երկրորդական դերեր: «Երեւան Օփերա»-ն ձգելէ յետոյ՝ ամուսնացած է երաժիշտ Ալեքսանտր Տօրիսանեանի հետ եւ այնուհետեւ գործածած՝ Տօրիսանեան մականունը: 1944ին Տօրիսանեանները վերջնականապէս հաստատուած են Մոսկուա, ուր Ջարան նշանակուած է Մոսկուայի Չայքովսքիի Անուան Ռատոյի Ֆիլիարմոնիկ Նուագախումբի մենակատար: 1959ին ան նշանակուած է Մոսկուայի Ֆիլիարմոնիկ Նուագախումբի գլխաւոր մենակատարը եւ վաթսուական թուականներուն յաճախ ելոյթներ ունեցած՝ այդ նուագախումբին հետ: Տօրիսանեան 1963ին սկսած է կատարել գլխաւոր դերեր զանազան յայտնի օփերաներու մէջ: Սովետ Միութենէն դուրս՝ Ջարան երգած է համաշխարհային համբաւ ունեցող բազմաթիւ բեմերու վրայ: 1959ին առաջին անգամ ըլլալով համերգ տուած է Քարնեյի Հոլի մէջ: Համերգներ տուած է նաեւ Մեծն Բրիտանիա, Սկանտինաւեան երկիրներ, Ճաբոն, Նոր Զելանտա եւ Լատին Ամերիկա: Երգչուհին 1970ին հանգստեան կոչուելով՝ նուիրուած է ուսուցչութեան: Քսան հինգ տարի ձայնամարզութեան դասեր տուած է Մոսկուայի Gnessin-ի անուան երաժշտանոցին մէջ: Տօրիսանեան արժանացած է տասնմէկ պետական մրցանակներու, որոնցմէ յիշենք միայն երկուքը՝ Լենինեան Մրցանակ եւ Սովետ. Միութեան Ժողովրդական Արտիստի կոչում: Մահացած է Մոսկուա, 2007ին:

394. Զօլաք

Յայտնի հայ լուսանկարիչ: Մավեանի բարեկամը:

395. Ֆրիկ

Ժ.Գ.-Ժ.Գ. դարու անուանի հայ բանաստեղծ: Ծննդեան ճիշդ թուականը յայտնի չէ: Ըստ Մանուկ Աբեղեանի, Ֆրիկ ծնած է թաթարական արշաւանքներու սկիզբը, Արեւելեան Հայաստանի մէջ, հաւանաբար 1236ին եւ վախճանած՝ Ժ.Գ. դարու առաջին կամ երկրորդ տասնամեակին, խոր ծերութեան մէջ: Ֆրիկի բանաստեղծութիւններուն հիմքը անարդարութեան դէմ բողոքն է: Տանք օրինակ սը՝

«Մէկն ի պապանց պարոնորդի,

Մէկն ի հարանց մուրող լինի.

Մէկին հազար ձի եւ ջորի,

Մէկին ոչ ուլ մի, ոչ մաքի»:

396. Զաւէն Տօլպանեան

Ծնած է Աղեքսանդրիա, 1928ին: Համաշխարհային ճանաչումի արժանացած սրտաբան: Աւարտած է Երեւանի Բժշկական Համալսարանը: Բժշկական գիտութիւններու տոքթ.-փրոֆ.: Եղած է բազմաթիւ միջազգային բժշկական հաստատութիւններու անդամ: Ունի սրտաբանութեան վերաբերեալ ուսումնասիրութիւններ, որոնք բարձր գնահատուած են միջազգային բժշկական շրջանակներու կողմէ: Մաս կազմած է Մ. Նահանգներ հրատարակող «Journal of Electrocardiology» միջազգային հանդէսի խմբագրական կազմին: Զ. Տօլպանեան եղած է Մավեանի մտերիմ ընկերներէն: Հեղինակն է «Անորոր Հողմեր» (1976) եւ «Հետոն Ասրդեր» (1980) հատորներուն: Մահացած է 1983ին, Ա.Մ.Ն.:

397. Նիկողոս Թարայեան

Լոնտոն հաստատուած լիբանանահայ: Եղած է Լոնտոնի հռչակաւոր «Օմար Խայամ» ճաշարանի սեպիականատերը: Խորհրդաւոր պայմաններու մէջ մահացած է իր կառատան (garage) մէջ, ինքնաշարժի ծովսի թունաւորմամբ :

398. «Կայծ»

Փարիզի մէջ հիմնադրուած մշակութային կազմակերպութիւն, որ վայելած է Ս.Գ. Հնչակեան կուսակցութեան հովանաւորութիւնը:

399. Կորին Տեւ՝ Համազասպ Մարթին Ծ. 91:

400. Ասողիկ Պապայեան

Պարսկահայ գրող, կրթական մշակ, մշակութային եւ հասարակական գործիչ: Եղած է





Իրանահայ Ազգային Մշակութային Միության Վարչության անդամ: Նախնական եւ միջնակարգ կրթութիւնը ստացած է Թեհրանի Դանայի, Մանկական Պալատ եւ Մարիամեան վարժարաններուն մէջ: Աւարտած է Պէյրութի Հայկազեան Քոլեճի Հայ Գրականութեան եւ Մանկավարժութեան Մասնաճիւղը: Աւարտած է նաեւ Թեհրանի Համալսարանի Անգլերէն Լեզուի եւ Գրականութեան Բաժինը: 1969ին ստանձնած է Թեհրանի Թովմաս Թովմասեան Վարժարանի տնօրէնութիւնը: Իր հրատարակած գրական գործերէն յիշենք՝ «Իրական Դէպքեր», «Ժամանակը Սահում Է, եւ...», «Ներքին Չայնը, Որ...» եւ «Արծաթէ Գօցու Հեղրով» հատորները, որոնք լոյս տեսած են 2001-2008 տարիներուն:

401. Վանուշ Գէորգեան

Պարսկահայ ճարտարագէտ: Պատասխանատու պաշտօններ վարած է Պարսկաստանի քաղաքաշինութեան նախարարութեան մէջ: Շրջան մը եղած է շինարարութեան նախարարի տեղակալ: Օֆիկ Մարթինի ամուսինը (Ծ. 389):

402. Անտոն Քոչինեան

Ծնած է 1913ին: Աւարտած է Կոմունիստական Գիղատնտեսութեան Բարձրագոյն Վարժարանը: Նուիրուած է կուսակցական աշխատանքի եւ վարած՝ բազմաթիւ պատասխանատու պաշտօններ: 1966-74ին եղած է ՀԿԿ Կենտկոմի Առաջին Քարտուղարը:

403. Ալէնք Դոնգ Վուոթ Եկեղեցի (St. John's Wood Church)

Անգլիկան եկեղեցոյ կողմէ ժամանակատրապէս լոնտոնահայ համայնքին տրամադրուած եկեղեցի: Երբ անգլիկանները յարկաբաժիններ կառուցելու նպատակով որոշած են քանդել եկեղեցին, Վաչէ Մանուկեանի բարերարութեամբ գնուած է Քրէնլի Կարտընգ թաղամասի Ս. Պետրոս անգլիկան եկեղեցին եւ բարերարի հօր անունով վերանուանուած՝ Ս. Եղիշէ: Վաչէ եւ Թամար Մանուկեան Հիմնադրամը Ս. Եղիշէ եկեղեցոյ վերանորոգութեան համար ծախսած է աւելի քան տասը միլիոն սթերլին, գայն վերածելով միաժամանակ հրաշալի համերգասրահի, ուր տեղի կ'ունենան դասական երաժշտութեան նուիրուած համերգներ անուանի արուեստագէտներու կատարմամբ: Ս. Եղիշէի մէջ ելոյթ ունեցած են նաեւ հռչակաւոր հայ արուեստագէտներ, ինչպէս՝ աշխարհահռչակ ջութակահար Սերգէյ Խաչատրեանը, Արամ Խաչատուրեան Եռեակը եւ ուրիշներ:

404. Աւետիք Բահակեան

Հայ անուանի բանաստեղծ: Ծնած է 1875ին, մահացած՝ 1957ին: Տես՝ Avetik Isahakyan Wikipedia:

405. Եւրի Խօճամիրեան

Սովետահայ գիտնական, հասարակական, քաղաքական գործիչ: Սովետ. Միութեան եւ Մեծն Բրիտանիոյ միջեւ գոյութիւն ունեցող գիտնականներու փոխանակման ծրագրի շրջանակներուն մէջ՝ Ե.Խ. շուրջ երեք ամիս աշխատած է Լոնտոնի Imperial College Համալսարանին մէջ: Հայաստանի մէջ վարած է պետական պատասխանատու պաշտօններ:

406. Վահէ Հայկ

Վահէ Տիմեան, գրական անունով՝ Վահէ Հայկ ծնած է Խարբերդ, 1896ին: Մահացած է Ֆրեզոնոյ, 1983ին: Գրող, հրապարակագիր, խմբագիր, կուսակցական գործիչ (Ռ.Ա.Կ.): Աւարտել է ետք ծննդավայրի Եփրատ Քոլեճը, 1915ին գացած է Պոլիս, 1920ին՝ Յունաստան, ապա՝ Ա.Մ.Ն: Հետեւած է Պոսթոնի Համալսարանի մէջ իրաւաբանութեան, քաղաքատնտեսութեան եւ գրականութեան դասընթացքներուն: Խմբագրած է «Յուշարար», «Միութիւն», «Նոր Կեանք», «Արօր» եւ «Նոր Օր» թերթերը: Անոր գրական գործերէն յիշենք՝ «Հայրենի Ծիսակ» պատմուածքներու շարքը, հրատարակուած հինգ հատորներով, 1930-1979 տարիներուն:

407. Զարեհ Որբունի

Ծննդեան անունով Զարեհ Էօքսիդեան, ծնած է Օրսու, Թուրքիա 1902ին, մահացած Փարիզ՝ 1980ին: Երբ հայրը զոհ գացած է Մեծ Եղեռնին, մայրը կրցած է իր չորս զաւակներով փախչիլ Սեաստափոլ: Զինադադարէն ետք վերադարձած է Պոլիս եւ ուսանած՝ Պէրպլեան Վարժարանի մէջ 1919-1922ին: 1922ին փոխադրուած է Փարիզ: Որբունին կը





պատկանի ֆրանսահայ գրողներու այն սերունդին, որ քսանական թուականներէն սկսեալ Ֆրանսայի՝ յատկապէս Փարիզի մէջ ստեղծեց գրական աշխոյժ մթնոլորտ մը: Գրողներու այդ սերունդին կը պատկանին Նիկողոս Սարաֆեան, Վազգէն Շուշանեան, Շահան Շահնուր, Հրաչ Զարդարեան եւ ուրիշներ, մեծաւ մասամբ Մեծ Եղեռնէն փրկուած որբեր, որոնց ստեղծագործութիւններուն մէջ կ'արտացոլայ տուն ու հարազատ կորսնցնելէ ետք՝ ազգային ինքնութիւն ալ կորսնցնելու վտանգին ենթակայ գաղթական հայու կեանքն ու տխուր հոգեվիճակը: Որբունին, Պետրոս Զարոյեանին հետ հրատարակած է «Նոր Հաւատք» (1924) եւ «Լուսաբաց» (1938-39) պարբերականները: Որպէս ֆրանսական բանակի զինուոր, ան մասնակցած է Բ. Աշխարհամարտին, զերի բռնուած եւ բանտարկուած՝ Գերմանիոյ մէջ, ուր մնացած է մինչեւ պատերազմի ւարտը: Որբունիի գործերէն յիշենք՝ «Փորձը», «Ի Խորոց Սրբի», «Թեկնածուն», «Ասֆալթը», «Սովորական Օր Մը»: Իր գրական վաստակին լուսագոյն գործերն են պատմուածքներու երեք հատորները՝ «Վարչու Սենեակ», «Անձրեւոյ Օրեր», «Պարմուածքներ»: 1946ին Որբունին այցելած է Ս. Հայաստան եւ իր տպավորութիւնները հրատարակած՝ «Դէպի Երկիր, Յուշեր Հայրենիքէն» հատորով:

408. Ժիրայր Նայիրի

Ծննդեան անունով Ժիրայր Թօսունեան: Գրող, հրապարակագիր եւ հասարակական-կուսակցական գործիչ: Ժիրայր Նայիրի իր գիտակցական ամբողջ կեանքը նուիրած է Ս.Գ. Հնչակեան Կուսակցութեան, ստանձնելով կարեւոր ազգային պաշտօններ: Երկար տարիներ անդամ եղած է կուսակցութեան Լիբանանի Վարիչ Մարմնին, ապա՝ Կեդրոնական Վարչութեան, եւ 1987-1990՝ նոյն մարմնի ատենապետ: 50 տարի եղած է «Արարատ» օրաթերթի նախ խմբագիր, ապա՝ խմբագրապետ: Հետագային հիմնած է «Նայիրի» ամսաթերթը, որուն խմբագրապետութիւնը վարած է ցմա: Ժ. Նայիրին ստանձնած է բազմաթիւ պարտականութիւններ եւ իր տարիներու ծառայութեան ընթացքին սատարած՝ Սփիւք-Հայրենիք մերձեցման աշխատանքին, որուն համար պարգևատրուած է բազմաթիւ շքանշաններով: Մահացած է 27 Նոյեմբեր, 2013ին:

409. Միրան Մավեան

Ֆրանսահայ հասարակական եւ մշակութային գործիչ:

410. Արամ Արաքս (1900-1989)

Ամերիկահայ գրող, հրապարակագիր եւ հասարակական գործիչ:

411. Լորիս Գզնաւորեան

Ծնած է 1937ին, Պարսկաստան: Երաժշտական ուսումը ստացած է Վիեննա: Թովմաս Թովմասեանի նիթական օժանդակութեամբ Լոնտոնի մէջ հիմնած է Հայ Երաժշտութեան Ինստիտուտը, որ ունեցած է կարճ կեանք: Եղած է Հայաստանի Սինֆոնիկ Նուագախումբի ղեկավար: Ներկայիս կը բնակի Ամերիկա:

412. «Արմինյըն Ռիփորթըր» («The Armenian Reporter»)

Եղուարդ Պօղոսեանի (1927-2006) կողմէ Սիւացեալ Նահանգներու մէջ 1967ին հիմնադրուած անկախ շաբաթաթերթ:

413. Այգոյ Մակարեան

Զէյթունցի քահանայի դուստր՝ Մավեանի հայրենակիցներէն: Այգոն եւ ամուսինը, Պօղոս Մակարեան, եղած են Մավեանի մտերիմ բարեկամները:

414. Լիլոյեան

Սովետահայ դիւանագետ եւ պետական գործիչ:

415. «Մասիս»

Շաբաթաթերթ: Ս.Գ.Հ. Կուսակցութեան պաշտօնաթերթը, որ 1980էն ի վեր կը հրատարակուի Փասատինա, Մ. Նահանգներ:

416. Նշան Խոշաֆեան

Լիբանանահայ սիրուած ազգային: Ծնած է 1915ին, Այնթապ: Արհեստով լուսանկարիչ՝ եղած է Ս. Միմոնեանի Դպրեվանքի դասընկերն ու կեանքի մտերիմ բարեկամը: «Սփիւք» շաբաթաթերթի խմբագրական կազմի արագ անդամ: Գրող եւ հրապարակագիր: Իր «*Shuus* Հայաստանը» գիրքը լոյս տեսած է 1965ին: Մահացած է 1982ին:





417. Մուհամեդ

Տպարան «Մեան»ի սրճեփր:

418. Չոհրապ Շամլեան

Երաժիշտ, երգահան, դաշնակահար: Ուսումը ստացած է Երուսաղեմի Ժառանգատրաց Վարժարանին և Էջմիածինի Գեորգեան Դեմարանին մէջ: Երաժշտական կրթութիւնը ստացած է Լոնտոնի Արքայական Երաժշտանոցին մէջ: Գործօն դեր ունեցած է լոնտոնահայութեան մշակութային և ընկերային կեանքին մէջ վաթսունական և եօթանասունական բուսականներուն:

419. Արմին Թ. Վեկնըր (Armin T. Wegner)

Գերմանացի գրող: Հայ ժողովուրդի անկեղծ բարեկամներէն մէկը: Ա. Աշխարհամարտին, որպէս գերմանացի սպայ, ծառայած է թրքական բանակին: Իր պաշտօնին բերումով Վեկնըր ականատես եղած է հայոց ցեղասպանութեան և գաղտնաբար, ջարդերու ընթացքին շուրջ երկու հազար լուսանկարներ վերցուցած է, որոնց մէկ մասը հրատարակուած է պատերազմի արարին: Արմին Թ. Վեկնըր յայտնի է Մ. Նահանգներու Նախագահ Վուոքոյ Ուիլսոնին գրած իր բաց նամակով (Յունուար 1919): Վեկնըրի մասին յաւելեալ տեղեկութեան համար տես՝ Armin T. Wegner Wikipedia:

420. Վուոքոյ Ուիլսոն (Woodrow Wilson)

Միացեալ Նահանգներու 28րդ նախագահը: Ծնած է 1856ին, մահացած՝ 1924ին: Տես՝ Woodrow Wilson Wikipedia:

421. Ատոլֆ Հիթլեր (Adolf Hitler)

Ծնած է 1889ին Աւստրիա, մահացած 30 Ապրիլ 1945ին՝ Պերլին: 1934-1945 տարիներուն եղած է Գերմանիոյ միառիակական պետութեան ղեկավարը: Տես՝ Adolf Hitler Wikipedia

422. Քարլ Էլոֆ Սվեննինկ (Carl Elof Svenning)

Հայ ժողովուրդի բարեկամ շուտացի գրող, բանաստեղծ, քարգմանիչ, լեզուագէտ: Հիմնադիր՝ Book Club-ի: Տիրապետած է բազմաթիւ լեզուներու: Թարգմանութիւններ կատարած է արաբերէնէ, հայերէնէ, վիէթնամերէնէ և այլ լեզուներէ: Հայ ժողովուրդին նուիրուած անոր «An Openminded, Tenderhearted, Helpful People» խորագրուած բանաստեղծութիւնը, գորբանաստեղծը գրած է յատկապէս «Արեգակ»ի համար, լոյս տեսած է ամսաթերթի Հայոց Տեղապանութեան յիսնամեակին նուիրուած բացառիկին մէջ, Ապրիլ 1965ին:

423. Ժիրայր Միրիճեան

Հրապարակագիր: Փարիզի «Յառաջ» թերթի խմբագրական կազմի անդամ:

424. Հայլե Սելասի Ա. (Haile Selassie I)

Ծնած է 1892ին, մահացած՝ 1975ին: 1930-1974 եղած է Եթովպիոյ կայսրը:

1965 Յունուարին Վազգէն և Խորեն կաթողիկոսներն ու Երուսաղեմի Եղիշէ Պատրիարքը Հայլե Սելասի Կայսեր հրաւերով այցելած են Ատիս-Ապելպա Եթովպական Եկեղեցիին հետ հանդիպումներ ունենալու համար: Տես՝ Haile Selassie I Wikipedia:

425. Յովհաննէս Արեւեան (1865-1936)

Անուանի դերասան, ՀՍՍՀ Ժողովրդական Արտիստ: 1895ին, հիմնած է Թիֆլիսի «Հայոց Գերասանական Ընկերութիւն»ը: 1908ին, դերասան Արմէն Արմէնեանի հետ հիմնած է «Արեւեան Արմէնեան Թատերախումբը»: 1917ին, ընտրուած է Թիֆլիսի «Հայ Գերասաններու Միութեան» նախագահ: 1920ին մեկնած է արտասահման: 1921-25 տարիներուն տեղական խումբերու հետ ներկայացումներ տուած է Պոլիս, Գահիրէ, Ադրբայձան, Փարիզ, Պրիքսել, Լոնտոն և Ա.Մ.Ն.ի տարբեր քաղաքներուն մէջ: Պերլինի մէջ գերմանական թատերախումբին հետ, «Տենթրալ» թատրոնի մէջ «Օթթելոյ» խաղցած է հայերէնով: 1925ին, Մով. Հայաստանի կառավարութեան հրաւերով վերադարձած է հայրենիք: Մեծ ազդեցութիւն ունեցած է թատերական արուեստի, ազգային ոճի ձեւաւորման ու զարգացման մէջ: Իր բեմական գործունէութեան 54 տարիներու ընթացքին կատարած է շուրջ 500 դեր:

426. Քարեն Եփփէ

Տանիմարքացի միսիոնարուի, որ հայ գաղթականներու և եղեռնէն փրկուած որբերու պատասխարման համար կատարած է հսկայ աշխատանք: Տես՝ Karen Jeppe Wikipedia:





427. Թալասթ (Mehmed Talaat Pasha)

Ծանօթ է որպէս «Թալասթ Փաշա»: Ծնած է Պուլկարիա 1874ին, սպանուած Սողոմոն Թեհլիրեանի փամփուշտով 1921ին՝ Պերլին: Ա. Աշխարհամարտին երեք փաշաները, Թալասթ, Էնվեր եւ Ենմալ՝ Թուրքիան կառավարող եւ հայոց ցեղասպանութիւնը կազմակերպող անձերը եղած են: Տես՝ Talaat Pasha Wikipedia:

428. Ֆոյլզ (Foyles)

Աշխարհի մեծագոյն գրախանութներէն մէկը, հիմնուած Լոնտոն 1904ին Ուիլիամ եւ Կիլպըրթ եղբայրներու կողմէ: Տես՝ Foyles Wikipedia:

429. Վիկտոր Հոլխաուզը (Victor Hochhauser)

Երաժշտական եւ թատերական հռչակատը խումբերու՝ ինչպէս նաեւ անհատ արուեստագէտներու համար ելոյթներ կազմակերպող անգլիական անուանի ընկերութիւն: Հայկ Գալուստեան եւ Ա. Կիւզելեան բանակցութիւններ վարած են յիշեալ ընկերութեան հետ Սովետական Հայաստանի «Երգի եւ Պարի Անսամպլ»ը Անգլիա բերելու առնչութեամբ: Տես՝ Victor Hochhauser Wikipedia:

430. Վիկտոր Համբարձումեան

Աշխարհահռչակ հայ գիտնական: Եղած է Բիւրականի Աստղադիտարանի տնօրէն եւ Հայաստանի Ազգային Ակադեմիայի երկարամեայ նախագահը: Ծնած է 1908ին, մահացած՝ 1996ին: Տես՝ Victor Ambartsumian Wikipedia:

431. Կորտըն Լէնզպորոյ (Gordon Landsborough)

Հայասեր անգլիացի գրող, որ իբրեւ ժուրնալիստ աշխատած է Կիպրոս եւ Միջին Արեւելք, ուր եւ ծանօթացած է հայերու: Տես՝ Gordon Landsborough Wikipedia:

432. «Մուսա Լեթան 40 Օրերը»

Աւստրիացի գրող Ֆրանց Վերֆելի վէպը, որ հիմնուած է Ա. Համաշխարհային Պատերազմի եւ հայոց ցեղասպանութեան հետ կապուած իրական դէպքերու վրայ: Տես՝ The Forty Days of Musa Dagh Wikipedia:

433. Քլոս Հէյլման (Claude Heilman)

Ամերիկացի ֆիլմարտադրող: Նկարահանած է «This Earth Is Mine» ժապաւէնը (Այս Հողը Իմն է), որուն զլխատը դերակատարը եղած է՝ Ռոք Հատսըն:

434. Ֆրանց Վերֆել (Franz Werfel)

Աւստրիացի վիպագիր, բանաստեղծ, թատերագիր: Ծնած է 1890ին, մահացած՝ 1945ին: Շնորհիւ Վերֆելի «Մուսա Լեթան 40 Օրերը» վէպին, հայոց ցեղասպանութիւնը լայն ճանաչում գտած է ի սփիւռս աշխարհի: Տես՝ Franz Werfel Wikipedia:





ԲԱՌԱՐԱՆ ՀԱՅԱՏԱՌ ՕՏԱՐ ԲԱՌԵՐՈՒՄ*

Աժանս (*ֆրևս.*) Ներկայացուցիչ:

Ալա (*ֆրևս.*) Բառին սկիզբը դրուելով կը նշանակե պես, նմանութեամբ: Օր. Ալա Յայր Գեորգ = Յայր Գեորգին պես:

Աղա (*թրք.*) Տէր, պարոն, գիւղապետ, կալուածատեր:

Աճելաճի (*թրք.*) Աճապարանքով գործ ընող, անբոյթ աշխատող:

Ամանաթ (*թրք.*) Աւանդ, գրաւ, պահեստի դրուած իր:

Ամպիւլանս (*ֆրևս.*) Շտապ օգնութեան ինքնաշարժ, հիւանդ փոխադրող կառք:

Անդարիյա (*թրք.*) Անվարձ, անշահ, անօգուտ:

Անսամպլ (*ֆրևս.*) Համոյթ: Որեւէ ամբողջութեան բոլոր մասերուն ներդաշնակ միացումը: Հոս կ'ակնարկուի Հայաստանի Երգի եւ Պարի Անսամպլին:

Անտըրկրաունտ (*անգլ.*) Մարդատար ընդհատակեայ ելեքտրական կառք:

Արուս շավէ ավալին ներ քերտ (*պարսկ.*) Չար բախտի հետ կապուած պարսկական ասացուածք: Մարդու բախտը եթէ վատանայ, այն աստիճան կը վատանայ որ «հարսը մեղրալուսնի գիշերը կը կերպարանափոխուի տղամարդու»:

Աւանտուրա (*ֆրևս.*) Արկածախնդրութիւն:

Ափ թու տեյթ (*անգլ.*) Ամենանորը, ամենէն վերջինը, ամենէն արդիականը:

Աֆերիմ (*պարսկ.*) Կեցցես, ապրիս:

Եոլտաշ (*թրք.*) Ընկեր:

Չահմէթ (*արաբ.*) Նեղութիւն:

Չօռ (*պարսկ.*) Դժուարին, ոյժ, բռնութիւն: Չօռով = ոյժով, բռնութեամբ:

Էմբրեսարիօ (*իտալ.*) Արուեստագետներու եւ թատերա-երաժշտական խումբերու համար ելոյթներ կազմակերպող անհատ կամ կազմակերպութիւն:

Էսթրատային կտորներ (*սպեր.*) Թեթեւ երաժշտութեան կտորներ, ի տարբերութիւն դասական երաժշտութեան:

Էքսփրես (*ֆրևս.*) Արագ, ճեպընթաց:

Թանկօ Արժանթիւնեան պարի տեսակ:

Թարթ, դարդ (տարտ) (*պարսկ.*) Յաւ, վիշտ:

Թէլէքս Միջազգային հաղորդակցութեան դրոյթ, որ կը գործածուէր Նախքան ֆաքսի եւ իմէյլի գիտը:

Թերմինալ (*ֆրևս.*) Ծայր, վերջ, վերջակայան:

Թերս (*թրք.*) Ծուռ, անքաղաքավար, տհաճ, յամառ, կռուարար:

Թէքնիք (*յուն.*) Արհեստի հմտութիւն, արհեստավարժութիւն:

Թէքսոլ (*ֆրևս.*) Բնագիր, գրութիւն, գրութեան օրինակ:

Թիրաժ (*ֆրևս.*) Տպաքանակ:

Թուռ (*ֆրևս.*) Երաժշտական սկաւառակի արագութիւն: Նախքան CD-ի գործածութիւնը, կը գործածուէր կոմպլաքայէ շինուած սկաւառակ, որ կ'ունենար երեք արագութիւն՝ 78, 45 եւ 33 *թուռ*, արագութիւնը բնորոշող շարժում:

Թուրիզմ (*ֆրևս.*) Չբօսաշրջիկութիւն:

Թուրիստ (*ֆրևս.*) Չբօսաշրջիկ:

Թրասթի (*անգլ.*) Խնամակալ:

Թրասթ տիտ (*անգլ.*) Խնամակալութեան կանոնագիր:

ժեստ (*լատ.*) Ձեռքի կամ մարմնի շար-

* Կ'ուզենք դիտել տալ որ բառէ մը անմիջապէս յետոյ փակագծի մէջ նշուածը՝ տուեալ բառին արմատական ծագումն է եւ ոչ անոր այս կամ այն լեզուի մէջ գործածուելուն հանգամանքը: Օրինակ՝ «թէքնիք» բառը կը գործածուի եւրոպական շատ մը լեզուներու մէջ, բայց ծագումը յունարէն է:





ժում խօսելու ժամանակ, արարք (լաժեթ մըն էր = Լաւ արարք մըն էր):

Ժուռնալիսթ (*ֆրնս.*) Լրագրող:

Իզ ին տիսքորտ (*անգլ.*) Աններդաշնակ է:

Իմպերիալիստ (*լատ.*) Կայսերական, կայսերապաշտ:

Ինթըրվիու (*անգլ.*) Հարցազրոյց:

Ին ճենուին լետըր (*անգլ.*) Իսկական կաշիէ շինուած:

Ինշալլահ (*արաբ.*) Աստուծոյ կամքով, եթէ Աստուած ուզէ:

Ինսթրումընթ (*անգլ.*) Մասնավճար:

Ինստիթիւտ (*ֆրնս.*) Հաստատութիւն, մասնագիտական ուսմանց դպրոց:

Իշտահ (*թրք.*) Ախորժակ:

Իշտէ (*թրք.*) Ահա:

Իշտէ պոյլէ (*թրք.*) Ահա այսպէս:

Իշտէ պու կատար (*թրք.*) Ահա այսքան:

Իւմուր (**հումոր, իւմոր**) (*ֆրնս.*) Բարի ծիծաղ, զուարճախօսութիւն, մեղմ երգիծանք:

Լինոթայի (*անգլ.*) Գրաշար մեքենայ, որ կը գործածուէր ԺԹ. դարու վերջաւորութենէն մինչեւ Ի. դարու եօթանասունական թուականները:

Լինոթայիիսթ Լինոթայի կամ Լինոթիփ աշխատցնող: Տես՝ **լինոթայի**:

Խաթըր (*արաբ.*) Յարգանք, ակնածանք:

Խալթ կամ **Ղալթ** (*արաբ.*) Սխալ, թերի, անտեղի:

Խայմախ կամ **դայմախ** (*թրք.*) Մեր, կաթի երես:

Խապատայ կամ **դապատայի** (*արաբ.*) Առատածեռն, ազնիւ, քաջ:

Խեր (*արաբ.*) Բարիք, օգուտ, շահ (մեր գործին մէջ խեր չմնաց = Մեր գործին մէջ շահ չմնաց):

Խեր ինշալլահ (*արաբ.*) Աստուծոմով բարի ըլլայ կամ ի՞նչ պատահած է:

Խէյր Տես՝ **խէր**:

Խոճա (*պարսկ.*) Ուսուցիչ:

Կապիտալիստ (*ֆրնս.*) Սեփականատեր, հարուստ, դրամագլուխ ունեցող:

Կաֆ (*ֆրնս.*) Անխոհեմ գործ, սխալ, (մեծ կաֆ մը ըրաւ = մեծ սխալ մը գործեց):

Կոմա լաքա (*լատ.*) Տես՝ ծանօթագրութեան բաժինը:

Կոմպոզիտոր (*լատ.*) Երաժշտահան, երգահան:

Հալալ (*արաբ.*) Արդար, անխարդախ, սուրբ:

Հալն ու խաթըրը (*արաբ.*) Որպիսութիւնը:

Հայճէք (*անգլ.*) Առեւանգում, գողութիւն:

Հէյ Կիտի կամ **հէյ կիտի հէյ** (*թրք.*) Ափսոսանքի հառաչանք, կարօտ արտայայտող բացականչութիւն:

Հերկէլէ (*թրք.*) Վայրի ծի: Փոխաբերական իմաստով կը նշանակէ նաեւ՝ անզգամ, չար, ստահակ, վարնոց, չարագործ: Կը նշանակէ նաեւ՝ անպատասխանատու, ապուշ, անվստահելի անձ:

Հոքի (*անգլ.*) Մարգախաղի տեսակ մը, որ կը խաղցուի երկու հակառակորդ խումբերու միջեւ, որոնցմէ իւրաքանչիւրը կ'ունենայ 11 խաղացող, որոնք փայտէ հարուածիչով մը կ'աշխատին փոքրիկ գնդակ մը անցնել հակառակորդի դարպասէն ներս:

Հօթէլ (*ֆրնս.*) Պանդոկ:

Հօսթըլ (*անգլ.*) Հանրակացարան:

Ղալմաղալ (*պարսկ.*) Աղմուկ, իրարանցում:

Ղայիմ (*արաբ.*) Ամուր, կանգնած, ուղածիզ, պինդ:

Ղաննաս Հրագինահար, դիպուկահար, արձակագէն:

Ղալալ (*թրք.*) Սրինգ:

Ճայիր ճայիր (*թրք.*) Անընդհատ, առատօրէն, յաճախ:

Ճան չըքմատան խոյ չըքմազ (*թրք.*) Ասացուածք, որ կը նշանակէ՝ մինչեւ մահ մարդու բնաւորութիւնը չի փոխուիր:

Ճէնօսիտ (*յուն.*) Ցեղասպանութիւն:

Ճէք փօթ (*անգլ.*) Բախտախաղի մեքենայէն շահուած առաւելագոյն պարգէւը:

Մահալնա մահալքում (*արաբ.*) Մեր տունը նկատեցէք ձեր տունը:

Մանթօ (*ֆրնս.*) Վերարկու:

Մաքթթ (*ֆրնս.*) Զանդակուելիք կամ կառուցուելիք առարկայի մը կամ շէնքի մը փոքրիկ մանրակերտը:

Մէթոտ (*լատ.*) Ոճ, եղանակ, կերպ:

Մէգաղ (*արաբ.*) Աճուրդ:

Մէսած (*ֆրնս.*) Պատգամ, լուր:





Մեսեճ (անգլ.) Պատգամ, լուր:
Միննեթ (թրք.) Երախտագիտություն, երախտապարտություն:
Միս (անգլ.) Օրհորդ:
Միսիզ (անգլ.) Տիկին:
Մոտենիզմ (ֆրնս.) Արդիականություն:
Նայթ ֆլայթ (անգլ.) Գիշերուան (օդանավի) թռիչք:
Նեիլետ (թրք.) Անարգական խօսք, անեծք:
Նիւրոֆիզիոլոճի ինստիթիւտ (ֆրնս.) Կենսաբանութեան, ջղաբանութեան հիմնարկ:
Նոթա (լատ.) Ձայնանիշ:
Շօփինկ (անգլ.) Գնում:
Ուիքենտ (անգլ.) Շաբաթավերջ:
Չաթալ (թրք.) թագ Եպիսկոպոսական թագ, խոյր, որ երկճիւղ եւ սրածայր ըլլալուն՝ ռամկական բառով չաթալ թագ կը կոչուի:
Չամուր (թրք.) Տէխ:
Չամուրը պառկիլ Խոստումնադրուժ ըլլալ, խոստումը չյարգել:
Չարթըրտ (անգլ.) Պայմանգիրով վարձուած: Օրինակ չարթըրտ օդանաւ:
Չարիւտ (թրք.) Հին, կոտորուած, մաշած:
Չէք (անգլ.) Դրամատոմս:
Չորպա (թրք.) Ապուր, ջրոտ կերակուր:
Պախալ (թրք.) Նպարավաճառ:
Պանք (անգլ.) Դրամատուն:
Պանքեթ (ֆրնս.) Ճաշկերոյթ, խրախճանք, տօնախմբութիւն:
Պի. Էյ. (անգլ.) B.A. Պսակաւոր արուեստից, համալսարանական տիտղոս, գիտաստիճան:
Պոնմա (յուն.) Ըբերուած, վիպերգ:
Պորտ (անգլ.) Կազմակերպութեան մը գերագոյն մարմինը, կեդրոնական վարչութիւն:
Պորտինկ հաուս (անգլ.) Պանդոկ, հանրակացարան:
Պուրժուագիա (ֆրնս.) Ըաղքենիութիւն, հարուստ, սեպիականատէր դասակարգ:
Պրալօ (իտալ.) Կեցցե, գովասանական բացականչութիւն:
Պրոլետար (լատ.) Բանուոր, սեպիականութենէ զուրկ մարդ, որ իր ապրուստը

կը հոգայ որպէս վարձու գործաւոր:
Պրոպլեմ (յուն.) Դժուար լուծելի հարց, խնդիր:
Պոքսեր (անգլ.) Կռիւմարտիկ, բռնցքամարտիկ:
Ռակայի (անգլ.) Մարգախաղի տեսակ մը:
Ռասմէլ (արաբ.) Դրամագլուխ:
Ռատիոյ (լատ.) Ձայնասփիւռ:
Ռեկտոր (ֆրնս.) Կրթական հաստատութեան տեսուչ, վերատեսուչ:
Ռեալիզմ (ֆրնս.) Իրապաշտութիւն:
Ռիթմ (յուն.) Չափ, յանգ:
Ռօլ ֆիլմ (անգլ.) Լուսանկարչական շարժաժապաւենի գլան:
Սաղլամ (թրք.) Ամուր, պինդ, առողջ:
Սանտուրճի (ֆրանսերէն սանսիւր բառին թրքերէն տարբերակը) Գրաքննիչ:
Սեմփաթիկ (ֆրնս.) Համակրելի, դուրեկան, գրաւիչ:
Սերմիե (թրք.) Դրամագլուխ:
Սերվիս (ֆրնս.) Ծառայութիւն:
Սըրֆէյս մէյլ (անգլ.) Յամաքային թղթատար:
Սթանտարտ տայըրի (անգլ.) Ընդունուած չափանիշով օրագրութեան տետրակ:
Սթենսիլ (անգլ.) Նկարելու տախտակ, կաղապար:
Սթրիփթիզ (անգլ.) Մերկամարմին պար:
Սիսթեմ (յուն.) Համակարգ, դրութիւն, կանոն, դասաւորում:
Սիֆթահ (արաբ.) Սկիզբ, օրուան առաջին վաճառքը:
Սօլիսո (ֆրնս.) Մենակատար:
Սօստաժ ընել (ֆրնս.) Կարծիք հաւաքել, հասկցնել:
Սօսայթիի տիկին Է (անգլ.) Ընկերութեան մէջ դիրք ունեցող տիկին Է:
Վալիզ (ֆրնս.) Ճամբորդական պայուսակ, ճամպրուկ:
Վեթօ (լատ.) Արքեւք, օրէնքի մը նախագիծը չվաւերացնելու իրաւունք:
Վիզա (լատ.) Անցագիր:
Վիթրին (ֆրնս.) Յուցափեղկ:
Տախլըմ (թրք.) Համազգեստ:
Տայան ապանըմ տայան (թրք.) Թրքական ասացուածք, որ կը գործածուի երբ





մէկը դժուարութիւններ կը դիմագրաւէ: Տառացիօրէն կը նշանակէ՝ «Դիմացիր առիծս, դիմացիր»:

Տայլըրի (*անգլ.*) Օրագրութիւն:

Տեխնիկ (*լատ.*) Արհեստագետ:

Տերորիստ (*ֆրնս.*) Ահաբեկիչ:

Տելէկացիա (*լատ.*) Պատուիրակութիւն:

Տիկրի (*անգլ.*) Գիտաստիճան:

Տիւնափք (*լատ.*) Ուժեղ, զօրաւոր:

Տիսք (*անգլ.*) Սկաւառակ:

Տիսքորտ (*անգլ.*) Աններդաշնակութիւն, անհամաձայնութիւն:

Տիւտիկ (*թրք.*) Սրինգ:

Տուշէշ (*պարսկ.*) Նարտիի խաղին մէջ կը գործածուի եւ կը նշանակէ՝ երկու վեց:

Րեզըրվէշըն (*անգլ.*) Վերապահութիւն: Թատրոնի մէջ կամ օդանաւի վրայ աթոռի ապահովում:

Րեր պուքս (*անգլ.*) Հագուագիւտ գիրքեր:

Րեքլամ (*լատ.*) Յայտարարութիւն:

Րոյթըր (Reuters) Միջազգային լրատուական ընկերութիւն, որուն կեդրոնը կը գտնուի Լոնտոն: Լուրերը կը տրուին անգլերէն, ֆրանսերէն, արաբերէն, սպաներէն, գերմաներէն, իտալերէն, ռուսերէն, չինարէն, ճաբոներէն եւ փորթուկալերէն լեզուներով:

Փայփ (*անգլ.*) Ծխամորճ, ծխափող:

Փանսիոն (*ֆրնս.*) Պանդոկ, հանրակացարան:

Փապ (*անգլ.*) Հանրային խմիչքի վայր, գարեջրատուն:

Փապլիք ռիւէշընզ (*անգլ.*) Հանրային յարաբերութիւններ: Կը բնութագրէ անձ մը, որ ընկերային լաւ յարաբերութիւններ ստեղծելու մասնագետ է:

Փարա (*թրք.*) Դրամ:

Փէրուշան (*թրք.*) Խեղճ, ողորմելի, խեղճուկրակ:

Փըրսըր (*անգլ.*) Գանձապահ, նաու վրայ աշխատող պատասխանատու պաշտօնեայ:

Փըրսփէքթի (*անգլ.*) Հեռանկար, հեռապատկեր:

Փլան (*լատ.*) Ծրագիր, յատակագիծ:

Փոստ (*ֆրնս.*) Նամակատուն:

Փոստա (*թրք.*) Օթօպիւս, մարդատար

մեծ ինքնաշարժ:

Փրօպականտ (*լատ.*) Զարոգ, ընկերային, կրօնական կամ քաղաքական գաղափարի մը տարածում:

Փրօպականտա (*լատ.*) Տես՝ Փրոփականտ:

Փրօպականտիսդ (*լատ.*) Զարոգիչ, գաղափարի մը տարածման նուիրուած անձ:

Փրօվիժնըլ (*անգլ.*) Պայմանական, առժամեայ:

Քաթալոկ (*յուն.*) Յուցակ, գրացուցակ:

Քապին (*անգլ.*) Տնակ, խուց, փոքր սենեակ:

Քասեթ (*անգլ.*) Ձայնաժապաւեն:

Քարտ (*ֆրնս.*) Այցետոմս, բացիկ:

Քարտ-փոստալ (*ֆրնս.*) Բացիկ, զոր ընդհանրապէս զքօսաշրջիկները կը դրկեն իրենց բարեկամներուն ճամբորդութեան մը ընթացքին տարբեր վայրերէ:

Քարրի-փէյսթ (*անգլ.*) Հնդկական կերակուրի տեսակ մը պատրաստելու համեմ, հում նիւթ:

Քէյֆ (*արաբ.*) Հաճոյք, զուարճութիւն, խնճոյք:

Քեր թէյըր (*անգլ.*) Խնամք տանող, պահակ, հոգատար:

Քէօր (*թրք.*) Կոյր:

Քընտիշընըլ ըքսփիթընս (*անգլ.*) Պայմանական ընդունուածութիւն:

Քլիշէ (*ֆրնս.*) Մետաղէ փորագրուած նմանաձոյլ իր, որ կը գործածուէր տպարաններու մէջ տպագրելի նիւթի մը (նկար, գծագրութիւն, ճարտարապետական նախագիծ, եւայլն) նմանատիպը տպագրելու համար: Բազմիցս կրկնուած խօսք, տափակ արտայայտութիւն:

Քոմիսիոն (*ֆրնս.*) Շահաբաժին:

Քոփի (*անգլ.*) Պատճեն, բնագրի օրինակ:

Քոքթէյլ փարթի (*անգլ.*) Յոտնկայս ընդունելութիւն, որու ընթացքին կը հրամցուին ոգելից ըմպելի եւ ուտելիք:

Քրիսմըս (*անգլ.*) Սուրբ Ծնունդ:

Քօնսէռ (*ֆրնս.*) Համերգ, նուագահանդէս:

Քօնսիերթ (*ֆրնս.*) Պանդոկի կամ հան-





րակացարանի պահակ, ինամատար:
Օթոյ (*ֆրևս.*) (**Օթոմօպիլ** բառի կրճատ-
 ուած ձեւն է) Ինքնաշարժ:
Օթոպիւս (*ֆրևս.*) Մարդատար մեծ ինք-
 նաշարժ:
Օթօ Տես՝ Օթոյ:
Ֆալաք (*արաբ.*) Երկինք, երկնային
 շրջան, փոխաբերաբար կը նշանակէ
 կեանքի յարափոփոխ դրութիւն, բախ-
 տի անիւ:
Ֆանաթիկ (*ֆրևս.*) Ծայրահեղ, մոլե-
 ճանդ:
Ֆաքուլթէ (*ֆրևս.*) Համալսարանի բա-
 ժանմունք, ուր կ'աւանդուին նոյն ճիւղին
 վերաբերող նիւթեր:
Ֆելլահ (*արաբ.*) Արաբ գիւղացի:
Ֆէիզմ քոր (*քրտ.*) Հասկցար:
Ֆէսթիվալ (*ֆրևս.*) Փառատօն:
Ֆիզիքապէս Առաջացած է յունարէն **Ֆի-
 զիքա** բառէն: Մարմնապէս:

Ֆիլմ (*յուև.*) Շարժանկար, շարժապատ-
 կեր:
Ֆինանս (*լատ.*) Ելեւմուտ:
Ֆինանսի մինիստր Ելեւմտական նա-
 խարար:
Ֆոթօմեքանիք պատճենահանում (*յուև.*)
 Պատճենահանում լուսապատկերահան
 մեքենայով:
Ֆոթօպատճեն (*յուև.*) Լուսապատկերա-
 հան մեքենայով հանուած պատճեն,
 օրինակ:
Ֆոթօքրօփի (*յուև.*) Լուսանկարահան-
 ուած պատճեն, օրինակ:
Ֆոլկլոր (*ֆրևս.*) Ժողովրդական բանա-
 ւոր ստեղծագործութիւն, բանահիւսու-
 թիւն:
Ֆոնտ (*անգլ.*) Հիմնադրամ:
Ֆօրմ (*ֆրևս.*) Ձեւ, կերպ, դիմումնագրի
 համար պատրաստուած հարցարան:





ԲԱՌԱՐԱՆ ԼԱՏԻՆԱՏԱՌ ԲԱՌԵՐՈՒ

Alia Յորդանանեան օդանավային ընկերություն:

Armenia and the Armenians Հայաստան եւ Հայերը:

Armenians In India Հայերը Հնդկաստանի մէջ: Մետրոպ Սեթի գրած գիրքին խորագիրը:

Aspro Ցաւազերծիչ դեղահատ:

Catalogue Ցանկ, ցուցակ, դասակարգութիւն, գրացուցակ:

Copy Պատճեն, օրինակ:

Coupon Կտրօն:

Do nothing մը դարձած է Դարձած է ամուլ, [գործ] չընող:

Epic of David of Sasoun Հայկական ժողովրդական հերոսավեպերը եւ Սասունցի Դաւիթ Դիցազներգութիւնը: Սունիթի Զումար Չաթըրճիի ուսումնասիրութիւնը, զոր հնդիկ արեւելագետը ներկայացուցած է Արեւելագետներու Միջազգային 25րդ համագումարին Մոսկուայի մէջ, 1960ին:

Exchange control Դրամի արտահանման հակակշիռ, առանց պետութեան արտօնութեան դրամի արտահանման արգելք:

Express Արագ:

Evreka Գտայ: Արքիմետեսի բացականչութիւնը, երբ ան գտած է փաստը այն տեսութեան, թէ որքան մարմինները ջուրի մէջ իրենց ծանրութիւնը կը կորսնցնեն:

Flight Թռիչք, օդանավային թռիչք:

Formalité Ձեւակերպութիւն, ձեւակաւութիւն:

Genuine leather Իսկական կաշի:

Hauteur Américaine Ամերիկեան չափանիշով արտադրուած գրաշար մեքենայի տեսակ:

Home work Տունը սորվելիք դաս, դասարանէն դուրս սորվելիք դպրոցական նիւթ:

Hostel Հանրակացարան:

If you please Եթէ կարելի է, բարեհաճեցէք:

Income tax Եկամտի տուրք, շահատուրք:

International Protection of Human Rights Միջազգային Պաշտպանութիւն Մարդու Իրաւունքներու:

It is too good to be true Անհաւատալի: Տառացիօէն կը նշանակէ՝ շատ լաւ է ճշմարիտ ըլլալու համար:

Journal Ամսագիր, պարբերաթերթ:

K.L.M. Հոլանտական օդանավային ընկերութիւն:

Left luggage Օդանավայաններու եւ կայարաններու մէջ պահեստասրահ, ուր ճամբորդները ժամանակաւորապէս կը թողուն իրենց պայուսակները:

Letts diary Լեթս ընկերութեան կողմէ արտադրուած օրագրութեան տետրակ:

Liner Գրաշար մեքենաներու տողիչ:

Linotype Գրաշար մեքենայ:

Management Տնօրէնութիւն:

Manager Տնօրէն, կառավարիչ:

Matriculation Դպրոցական քննութեան անգլիական դրոյթ:

Mayfair Publishing Co. Մէյ Ֆէր Հրատարակչական ընկերութիւն:

MEA Լիբանանեան օդանավային ընկերութիւն:

MGM Ամերիկեան ֆիլմ արտադրող ընկերութիւն:

Model Օրինակ, նախատիպ, տեսակ:

Nylon Համադրական մետաքս, արուեստական նիւթ պատրաստուած կերպաս:





OXF Street Oxford Street-ի կրճատուած ձեւը: Լոնտոնի անուանի փողոցներէն մէկը:

Park Զանրային պարտեզ:

Party Զաւաքոյթ, խրախճանք:

Post Նամակատուն, թղթատար:

Producer Արտադրող: **Film producer** = Շարժապատկեր արտադրող:

Professional Մասնագետ:

Reception Ընդունելութիւն:

Solo Մեներգ, մենանուագ:

Some Notes on Ancient Armenia Կարգ մը ծանօթութիւններ պատմական Զայաստանի մասին:

Talk of the Town Լոնտոնի թատրոններէն մէկուն անունը, որ տառացիօրէն կը նշանակէ «Քաղաքի խօսակցութեան առարկան»:

TAP Փորթուկալեան օդանաւային ընկերութիւն

Tax Եկամտահարկ:

Telex Զեռատիպի դրոյթ մը, որ հնարուեցաւ Գերմանիոյ մէջ 1926 թ.: **Telex**-ը իմէյլի նախակարապետն է: 1970ական թուականներուն ամենէն շատ գործածուող հաղորդակցութեան միջոցն էր:

That is the question Այդ է ինչիւրը: Շէքսպիրի Զամլեթէն առնուած ասացումը՝ «Լինել թէ չլինել, ահա այս է ինչիւրը»:

The Invention of the Armenian Alphabet Զայերէն գիրերու գիւտը:

They have booked Անոնք վարձած են, անոնք ապահոված են:

Tourist coupon Շքուսաշրջիկի կտրոս:

Trade mark Վաճառանիշ:

Trustee Խնամակալ, հոգաբարձու:

Turkey and the Turks Թուրքիա եւ թուրքերը:

Via Lisbon Լիզպոնի ճամբով, Լիզպոնի վրայով:





ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐՈՒ ՑԱՆԿ

Ա

- Աբգար ընտանիք - 374
 Աբելեան Յովհաննես - 319, 413
 Աբեղեան Մանուկ - 101, 108, 112, 380, 410
 Աբովեան Խաչատուր - 28, 362, 395
 Աբրահամեան Անոյշ - 25, 93, 361
 Աբրահամեան Աշոտ - 119, 334, 385-386
 Աբրահամեան Հայկազուն Եպս. - 257-258
 Աբրահամեան Ֆելիքս - 242, 405
 Ադամեան Գրիգոր - 170, 393
 Ադդարեան Ալֆոնս (տես նաև՝ Դարեան Արմեն) - 299, 359
 Ադդարեան Գառնիկ - 208-209, 246, 299, 402
 Ադդարեան եղբայրներ (Գառնիկ եւ Ալֆոնս) - 299
 Ազարեան Լ. Ռ. - 215, 403
 Ազնաուր Շարլ - 58, 145, 151, 371, 383
 Աթայեան Ռոպերթ - 261, 407
 Աթթարեան Չոհրապ - 74, 374
 Աթթարեան Կայծակ - 18
 Աթթարեաններ - 374
 Ալազան Վահրամ - 367
 Ալաճաճեան Ստեփան (Ալաջաջեան, Ալաջաջ) - 45, 216, 232, 236, 245, 248-249, 251, 267, 274, 292, 324, 368
 Ալեքս Պետրոս, տես՝ Ալեքսի Փիթըր
 Ալեքսանեան Աւետիս - 208-209, 213, 393, 402
 Ալեքսանեան Սիմոն - 59, 371
 Ալեքսանեան Տիգրան - 209, 402
 Ալեքսանտր - 336
 Ալեքսանտրեան Շանթ - 57-59, 371
 Ալեքսեան ընտանիք - 102, 115
 Ալեքսեան Նարինե - Վիվիեն (նաև Կիզելեան Վիվիեն) - 22, 79, 85-86, 361
 Ալեքսեան Պետրոս, տես՝ Ալեքսի Փիթըր
 Ալեքսեան Տ. Բարսեղ Զին. - 362
 Ալեքսեան Տեր եւ Տիկին, տես՝ Ալեքսի Տեր եւ Տիկին
 Ալեքսի Ֆլորա, տես՝ Ալեքսի Ֆլորա
 Ալեքսեաններ (տես նաև՝ Ալեքսիներ) - 123-124, 127, 170, 173, 177, 180, 182, 191, 311, 316, 318, 406
 Ալեքսի Այվըն - 243, 369, 389, 402
 Ալեքսի Թանիա - 140, 389, 402
 Ալեքսի Ինկրիտ - 51, 140, 369, 402
 Ալեքսի Պետրոս, տես՝ Ալեքսի Փիթըր
 Ալեքսի Սիլվիա կամ Սիլվի - 208, 212, 226, 243, 369, 389, 402
 Ալեքսի Տեր եւ Տիկին - 29-30, 41-43, 51, 117, 126, 138, 163, 179, 186, 208, 212, 273, 284
 Ալեքսի Փիթըր - 29, 38, 40, 44, 54-59, 71, 74, 97, 133-135, 140, 142, 149-150, 152, 164, 170, 178, 195, 201, 226, 243, 258, 269-270, 273, 313, 342, 346-347, 362, 364, 368-369, 379, 389, 402
 Ալեքսի Փիթըր (կրտսեր) - 402
 Ալեքսի Ֆլորա - 54, 150, 164, 226, 243, 269, 295, 342, 346-347, 364
 Ալեքսիներ (տես նաև՝ Ալեքսեաններ) - 265, 292
 Ալչճեան Արփինե - 392
 Ակապեան Սօֆի - 262-264
 Ակինեան Արա - 111, 382
 Ակիշեան Նուպար - 183-185, 395
 Ահարոնեան Գերսամ - 265, 299, 391, 408
 Աղբալեան Նիկոլ - 404
 Աղպաշեան Պարոյր - 391
 Աճառեան Հրաչեայ - 25, 361, 363, 382
 Աճեմեան Ազատ - 30, 128, 364
 Աճեմեան Անահիտ - 389
 Աճեմեան Գեորգ - 52, 61, 112, 114-115, 129, 149, 155-156, 158, 359, 364, 369
 Աճեմեան Մարի - (տես նաև՝ Սիմոնեան Մարի) 15
 Աճեմեան Մարոյ - 389
 Աճեմեան Յակոբ - 367
 Աճեմեան Յակոբ (Մարգարի ուսուցիչ) - 333





Աճեմեան Շահէ Վրդ. - 86, 176, 185, 220, 222, 224, 269, 377
 Աճեմեան Սալբի - 41, 44-45, 47, 134, 367
 Ամատունի Ասատուր - 111, 383
 Այվազեան - 111
 Այվազեան Յարութիւն - 12, 72-73, 169, 358
 Անգիւն - 361
 Անի Roy (տես նաեւ՝ Մանուկեան Անի) - 51, 369
 Անոյշ - 364
 Անտերսըն-Ռոզանտալ Եորկըն - 219, 227, 235, 243, 319-321, 323, 352, 404
 Ապատեան Բարգէն Եպս. - 194, 399
 Աշապահեան Խաղ Արք. - 89, 103, 378
 Առաքելեան Արտաշէս - 175, 393-394
 Ասատուրեան Յովհաննէս - 44, 368
 Աստղիկ - 361
 Արամեան Ռաֆայէլ - 201, 245, 248, 253, 401, 406
 Արամեան Վալթեր - 248, 406
 Արարատ Անդրանիկ - 274, 409
 Արաքս Արամ - 299, 412
 Արեւեան Կարոյ - 74, 374
 Արեւշատեան Սեն - 201, 401
 Արզումանեան Չաւեն Վրդ. (ապա՝ Չաւեն Զին.) - 164, 334, 390-391
 Արծրունի Գրիգոր - 395
 Արմէնեան Արմէն - 413
 Արմէնեան Կարոյ - 70, 373
 Արմինէ, տես՝ Կիւզելեան Արմինէ
 Արիս - 216
 Արշակ Բ. - 282
 Արսլանեան Յայրիկ Սրբ. - 280, 370
 Աւագեան Գեորգ - 389
 Աւետիքեան Յակոբ - 391

Բ

Բաբախանեան Առաքել - 361
 Բաբաջանեան Մասեհ - 102, 380
 Բալասանեան Սարգիս - 118, 385
 Բակունց Ակսել - 32, 365
 Բամպուլքեան Իրէն - 243, 405
 Բարիքեան Մանուկ - 198, 400
 Բարխուդարեան Ռուզան - 250, 407
 Բարոյեան Խորէն Կաթողիկոս - 220-222, 316, 318, 332, 343, 404, 413
 Բարսեղեան Գեղամ - 366

Բարսեղեան Կարոյ - 56, 58, 148, 371
 Բիրատ Սմբատ - 372

Գ

Գաբրիէան Կիրեղ Վրդ. - 185, 396
 Գալայճեան Արա - 167, 201, 182, 254-255, 303-304, 391
 Գալուստեան Գրիշա - 134, 356
 Գալուստեան Խաչեր - 207, 402
 Գալուստեան Յայկ - 33, 52, 77, 139, 175, 179-180, 182, 199-200, 207, 242, 252, 267, 311-312, 315-316, 318, 328-329, 348, 358, 365, 414
 Գալուստեան Մարալ - 402
 Գալուստեան Յարութիւն - 356
 Գալուստեան Շահէ - 402
 Գալուստեան Շնորհք Պատրիարք - 110, 234, 404
 Գալուստեաններ - 356
 Գալֆայեան Յիլտա - 167, 170, 172, 189, 196, 312, 391-392
 Գայտան Անտրէ - 145, 371
 Գասարճեան Իվօս (տես նաեւ՝ Մավեան Իվօս) - 12, 160, 358
 Գասպարեան - 99, 380
 Գասպարեան Գոհար - 282, 409
 Գարակէօզեան Սեդրակ - 166, 391
 Գարաճրճեան Գեորգ - 343
 Գարավարդանեան Սարգիս - 332
 Գարիկ - 127
 Գեորգեան Կարինէ - 383
 Գեորգեան Յարութիւն - 332
 Գեորգեան Վանուշ - 291, 409, 411
 Գիսանէ - 119, 386
 Գիւզալեան Գառնիկ - 404
 Գիտեան Միշա - 64, 68, 256, 269-271, 324-326, 372-373
 Գոգաճեան Ռաֆֆի - 18
 Գոչունեան Երուանդ - 14, 358
 Գորեսեան Ժիրայր - 332
 Գուգույեան Ալեքսան (Տ. Մամբրէ Զին.) - 333, 335
 Գույումճեան Մեսրոպ - 25-26, 101, 120, 361
 Գրգեաշարեան Օշին - 18, 359
 Գրեգորի (Գրիգորեան) Էլիզապետ - 389
 Գրիգոր - 98
 Գրիգոր Լուսաւորիչ - 301, 367, 386





Գրիգորեան Ալեք (տես նաեւ՝ Կրեկորի Ալեք) - 124
 Գրիգորեան Մեսրոպ Վրդ. - 127, 133, 164, 232, 388
 Գրիշա - 134

Դ

Դարեան Արմեն (տես նաեւ՝ Ադդարեան Ալֆոնս) - 17, 274, 359
 Դաւթեան Գրիշ - 174, 311, 314, 358, 393
 Դաւթեան Դաւիթ - 356
 Դաւթեան Վահագն - 231, 255, 404
 Դեմետրէ - 119, 386
 Դեմիրճեան Դերենիկ - 172, 392
 Դուրեան Եղիշէ Պատրիարք - 104, 380, 401
 Դուրեան Ղեւոնդ Եպս. - 271, 367, 380, 408
 Դուրեան Պետրոս - 38, 107, 204, 366-367
 Դարեվանքցի - 378

Ե

Եակովենկոյ - 400
 Եանիկեան Գուրգէն - 60, 371
 Եզեկել - 7
 Երրիքեան Յարութիւն - 31, 364
 Երրիքեան Սեզար - 31
 Եղիայեան Բիւզանդ - 7-8, 77, 335, 355
 Եղիվարդ (տես նաեւ՝ Տերտրեան Եղիշէ Պատրիարք) - 370
 Եսայեան Կարպիս - 277, 409
 Երկաթ Լեւոն - 60, 371
 Եփրեմ Կաթողիկոս - 380
 Եփիե Զարեն - 320, 413

Զ

Չարդարեան Յրաչ - 208-209, 402, 412
 Չարդարեան Ռաֆայել - 402
 Չարդարեան Ռուբէն - 402
 Չարեան Արմեն - 236, 405
 Չարեան Կոստան - 50, 366, 368, 405
 Չարեան Ռուբէն - 183-184, 189-191, 193, 196, 201, 235-236, 319, 395
 Չարիֆեան Մատթէոս - 403
 Չարոյեան Պետրոս - 172, 393, 412
 Չենոբ Գլակ - 119, 386
 Չէլթեան Սարգիս - 147

Է

Էլմաճեան Նազարէթ - 85, 377
 Էմին Գեորգ - 248, 385, 406
 Էնվեր Փաշա - 414
 Էսայեան Մարթին - 396
 Էսայեան Միքայել - 191, 396
 Էվերեկլեան Դաւիթ - 37, 366
 Էվընզ Յուպըրթ - 248
 Էքմէքճեան Լեւոն - 104

Թ

Թադէոսեան Յասմիկ - 176, 394
 Թալաաթ Փաշա - 320, 414
 Թակոր Ռապիւնտրանաթ - 114, 121, 363, 383, 385
 Թահթա Գեորգ - 72-73, 327, 374
 Թադիադեանց Մեսրոպ - 28, 362
 Թամանեան Ալեքսանտր - 355
 Թանգեան Յակոբ - 408
 Թաշեան Բենիամին - 105, 381
 Թարայեան Նիկողոս - 284, 410
 Թաւուզճեան Ներսոյ - 395
 Թաւուզճեան Տ. Ներսես Զին. - 395
 Թաւուզճեաններ - 395
 Թեհլիրեան Սողոմոն - 414
 Թերգեան Միսաք - 135, 388
 Թեքեան Վեհանոյշ - 12, 38, 53, 140, 358
 Թողիկ - 394
 Թեքեան Վահան - 107, 143, 375, 381, 391, 398
 Թեօլեօլեան Միւսա - 186-187, 396
 Թիւպեան Պերճ - 179, 394
 Թիւֆէնքճեան Բենիամին - 265, 408
 Թոթովեց Վահան - 121
 Թոլէկեան Արամ - 239
 Թոլսթոյ Լեոյ - 379
 Թոմա Մեծփեցի - 355
 Թովմասեան Թովմաս - 412
 Թովմասեան Փարունակ - 391
 Թորանեան Արմինէ - 349
 Թորանեան Թորոս - 4, 14, 55, 150, 160, 193, 201, 203-204, 206, 213, 224-225, 228-230, 242, 245, 272, 348-350, 353
 Թումայեան Պսակ Եպս. (տես նաեւ՝ Փափազ) - 111, 166, 192, 211, 221, 242, 297, 315, 347-348, 382, 391
 Թումանեան Յովհաննէս - 250-251, 256-258, 270-271, 324, 326-327, 375, 407





Թօփալեան Բիւզանդ - 10-12, 167, 172, 176, 178, 182, 198, 207, 209, 253-254, 260-261, 264, 270, 273, 284, 292, 312-313, 315-316, 357, 394

Թօփալեան Նազարէթ - 391
Թօփճեան Եղուարդ - 210, 225-226, 229, 403

Ժ

Ժամկոչեան Յայկ - 53, 369

Ի

Իգնատոսեան Սարգիս - 332
Իշխանեան Լիւսի - 265, 408
Իսահակեան Աւետիք - 297, 299, 385, 411
Իվօն, տես Մալեան Իվօն

Լ

Լանկ Տեյվիտ Մարշոլ - 32, 156-157, 210, 214, 216, 219-220, 226, 234-235, 247, 271, 279, 281-286, 288-290, 293, 327, 364, 405

Լենին Վլատիմիր - 274
Լենգաորոյ Կորսոլն - 328, 414
Լենկ Դեվիդ, տես Լանկ Տեյվիտ Մարշոլ
Լեոյ - 26-27, 361-362
Լիլոյեան - 307, 412
Լիւպէն Արմէն (տես Նաեւ՝ Շահնուր Շահան) - 394

Խ

Խալաթեան - 386
Խաչատուրեան Արամ - 71-72, 74, 79, 112, 357, 371, 374, 383
Խաչատուրեան Զին. - 347
Խաչատրեան Սերգէյ - 411
Խաչիկեան Լեւոն - 201, 217, 388, 400-401
Խոշաֆեան Նշան - 309, 343, 412
Խոսրով Գ. - 368
Խոսրովիկ Թարգմանիչ - 355
Խուզարկու - 104
Խտրոջեան Վարուժան - 372
Խօճամիրեան Եուրի - 299, 411

Ճ

Ճառուկեան Անդրանիկ - 10, 166, 182,

203-204, 208-209, 214, 271-272, 299, 356-357

Ճովինար - 133, 347, 388

Կ

Կանայեան Դրոյ - 34, 365-366
Կանտի Մահաթմա - 120, 363, 387
Կապուտիկեան Սիլվա - 246, 302, 406
Կարինէ, տես՝ Կիւզելեան Կարինէ
Կարալիսեան Գեորգ Վրդ. - 124, 164, 168, 174, 305, 333, 387

Կեմպարսկի Պոկտան - 29, 125-126, 363
Կելոեքեան Մարթին - 252
Կիզիրեան Եղիշէ Եպս. - 75, 374
Կիրակոսեան Ալիսիա - 404
Կիւզելեան Անդրանիկ - 342

Կիւզելեան Ասատուր - 1-4, 6, 11, 14, 21, 23-35, 37-42, 44-54, 56-57, 59-75, 77-79, 83, 85, 87-88, 92, 95-96, 98-100, 102, 104-105, 109-110, 112-113, 115, 117, 119, 123-124, 127-132, 134-135, 138-142, 144-147, 151-152, 154-158, 163-166, 168, 171, 173, 178-179, 181-182, 184, 186, 190-192, 195, 197, 199-200, 202, 205-207, 209, 212, 215-219, 221-222, 226, 228-230, 232-234, 237-238, 240-241, 243-244, 246, 252-253, 255-260, 262-264, 266, 268-271, 274-275, 277-278, 280, 283-287, 289-290, 292-293, 295, 298, 300-305, 307-308, 311, 313, 316, 318-319, 321, 323, 327, 330, 332-338, 340-342, 345-350, 352, 354-355, 358, 361, 363, 367-368, 370-372, 374-378, 382, 384-385, 387-389, 393, 397-398, 404, 414

Կիւզելեան Արմինէ - 43, 74, 131, 133-135, 138, 141, 150, 154-155, 186, 191, 195, 243, 251, 265, 273, 304, 336, 349, 367

Կիւզելեան Կարապետ - 6, 77
Կիւզելեան Կարինէ - 43, 74, 126-127, 129, 131, 133-135, 138, 141, 150, 154-155, 173, 177, 179-180, 182, 191, 195, 226, 243, 251, 265, 273, 275, 304, 316, 318, 336, 349, 367

Կիւզելեան Մարտիկ - 135, 287, 388
Կիւզելեան Ռահել - 77
Կիւզելեան Վահէ - 122-123, 387
Կիւզելեան Վանտա - 133, 347, 388





Կիւղեղեան Վիվիէն (տես նաեւ՝ Ալեքսեան Վիվիէն-Նարիսէ) - 23, 26, 28, 30, 33, 35, 37-38, 40-41, 42-44, 53, 60, 65-68, 71, 73-75, 92, 102, 107-110, 112-113, 115-117, 123-124, 126, 131, 133-135, 138, 152, 154-155, 163-166, 170, 173, 176-177, 179-180, 182, 186, 191, 208, 212, 214, 226, 242-243, 251, 258, 260, 262-265, 269, 273, 275-276, 284, 289, 292-293, 295, 298, 300, 302, 304, 306-307, 311-312, 316, 318, 335-336, 340, 342, 346-347, 361, 364, 387, 402, 409
 Կիւղեղեաններ - 6, 77, 368, 397
 Կիւլեր Արա - 233-234, 404
 Կիւլոյեան Յակոբ - 34-35, 55, 129, 343, 365
 Կիւլպենկեան Գալուստ - 111, 357, 382, 396
 Կիւլպենկեան Նուպար - 111, 284, 382
 Կիւլպենկեան Ռոպեր - 190-191, 213, 219, 253, 256, 270, 292, 396
 Կիւլպեքեան Եղուարդ - 169, 184, 392
 Կոկոլ - 365
 Կոմեզ Միսիգ - 269, 408
 Կոմիտաս Վարդապետ - 108, 224, 257, 375, 381, 385, 389, 392, 399, 407
 Կոչոյեան Յակոբ - 121
 Կոստանեան Վահան Եպս. - 100, 380
 Կորիւն (տես նաեւ՝ Մարթին Զամազասպ) - 286-287, 291, 368, 410
 Կորկոտեան Անահիտ - 61, 155, 372
 Կորկոտեան Գրիգոր - 372
 Կուրտիկեան Ստեփան - 203, 243, 246, 402
 Կրասա - 288
 Կրեսոս - 28
 Կրէկըրի Ալեք (տես նաեւ՝ Գրիգորեան Ալեք) - 124
 Կրպոյեան Բիւզանդ - 332

Հ

Հաթսըն Ռոք - 329
 Հալլաճեան Գառնիկ (Գառնիկ Քին.) - 345
 Հախվերդեան Լեւոն - 10, 308-309, 357, 372
 Համազասպեան Վարդգէս - 153, 242-243, 255, 257, 277, 319, 390, 399
 Համամճեան Գրիգոր - 17
 Համբարձումեան Լեւոն - 393

Համբարձումեան Վիկտոր - 328, 414
 Հայլէ Սելասի Ա. - 318, 413
 Հայկ Նահապետ - 76
 Հայկ Վահէ - 299, 411
 Հանանեան Չերեթիա - 380
 Հասրաթեան Էգրաս - 194, 197, 283-284, 288, 293, 299, 351, 397-399
 Հասրաթեան Սօրոս - 197, 201, 235, 399
 Հատիտեան Արթուր - 363
 Հատսըն Ռոք - 414
 Հատտեճեան Ռոպեր - 396
 Հեթում - 215
 Հելլման Զլոտ - 414
 Հէնտըլ - 406
 Հերըտ Չարլզ Հենրի - 409
 Հիթլեր Ատոլֆ - 314, 413
 Հիլըրի Էտմընտ - 120, 387
 Հիւսիսեան Երուանդ - 210, 212, 249, 403
 Հովսիսաւուր Վիկտոր - 321-323, 414

Ղ

Ղազարեան Ասողիկ Եպս. - 22, 27, 89-94, 99-100, 102, 105, 124, 360-361, 379, 388
 Ղազարեան Վաչէ - 373
 Ղանալանեան Յովհաննէս - 121, 387
 Ղեւոնդ Երեց - 372

Ճ

Ճգնաւորեան Լորիս - 302, 412
 Ճելլատեան Խաչիկ - 332
 Ճեմալ Փաշա - 414
 Ճեքըպսըն Մարիա - 356
 Ճէյմս - 336
 Ճերեճեան Գնել Վրդ. - 334, 344
 Ճերեճեան Չարեհ - 58, 148-149, 151-152, 371
 Ճմոյ Ապտոյ - 6-7
 Ճոնզ Ուիլիամ - 383

Մ

Մաթոսեան Այտա - 222, 227-228
 Մալխասեանց Ստեփան - 22, 26, 87-88, 100, 103-105, 117, 360
 Մակարեան Աղասի - 409
 Մակարեան Այգոյ - 304, 412
 Մակարեան Էլենա - 409



- Մակարեան Պօղոս - 412
 Մահարի Գուրգեն - 231, 404
 Մամբրելեան - 58
 Մամիկոնեան Յովհան - 386
 Մամիկոնեան Լախարարութիւն - 386
 Մամիկոնեան Վարդան - 372
 Մայքըլ - 336
 Մանուէլեան Կորիւն Վրդ. - 344
 Մանուկեան - 156
 Մանուկեան Ա. - 405
 Մանուկեան Ալեք - 57-58, 64, 75, 217, 258-259, 279, 354, 371, 390
 Մանուկեան Անի (տես նաեւ՝ Անի Roy) - 33, 36, 365, 369
 Մանուկեան Արամ - 332
 Մանուկեան Թորգոմ Եպս. (տես նաեւ՝ Շէն Մահ) - 194, 224, 399
 Մանուկեան Մայր Թագուհի - 156, 390
 Մանուկեան Յ. - 405
 Մանուկեան Նուպար - 332
 Մանուկեան Սարիբեկ - 121, 387
 Մանուկեան Սերոպէ Արք. - 176, 179, 207, 211-212, 257-258, 378, 394
 Մանուկեան Վահրիճ (տես նաեւ՝ Մավեան Վահրամ) - 172, 314, 393
 Մանուկեան Վաչէ - 411
 Մանտրիկեան - 220
 Մանք Անի - 376-377
 Մավեան Եղիսաբէթ Երիցուհի - 159
 Մավեան Իվօն (տես նաեւ՝ Գասարճեան Իվօն) - 301-302, 306-309, 345
 Մավեան Միհրան - 299, 412
 Մավեան Վահրամ (տես նաեւ՝ Մանուկեան Վահրիճ) - 1, 3-6, 9-14, 31, 41, 72, 138, 159-160, 162-163, 165-167, 167, 170, 173, 177-182, 184-185, 191-192, 195, 197, 199-200, 202, 205-206, 208, 212, 214, 216-218, 221-222, 226-227, 229-230, 232, 234, 236, 238-241, 243-244, 246-247, 251, 253-255, 257-260, 263-266, 268-270, 273, 275, 277-280, 282, 284-287, 289-290, 292-293, 295, 298, 300, 302-308, 310, 311, 314, 317, 319, 321, 324, 327-328, 343, 345-347, 349, 358, 365, 368-369, 393-397, 402-403, 408, 410, 412
 Մավեան Տ. Յակոբ Զին. - 159
 Մարալ, տես՝ Սիմոնեան Մարալ
 Մարգարեան Մարոյ - 213, 225, 246, 403
 Մարգարեթա - 134, 356
 Մարթին Յամազասպ (տես նաեւ՝ Կորիւն) - 46, 66, 73, 154, 286-287, 291, 298, 368, 410
 Մարթին Մանուկ - 368
 Մարթին Ռոմիկ - 249, 263-264, 266-267, 328, 407
 Մարթին Օֆիկ - 276, 287, 290, 409, 411
 Մարի, տես՝ Սիմոնեան Մարի
 Մարշալ ճոն - 386
 Մարտիկ աղա - 208
 Մարտիկեան Եղիշէ - 121, 387
 Մարտիկեան Տիրայր Եպս. - 133, 388
 Մարքս - 274
 Մաքարեան Լինտա - 269
 Մելգոնեան Գրիգոր - 354
 Մելգոնեան Կարապետ - 354
 Մելքոնեան Չարեհ - 395
 Մեծարեւոյց Միսաք - 107, 120-121, 367, 381
 Մետումենց Աւետիս - 170, 172, 176, 194, 316, 392
 Մետրոպ Մաշտոց - 118, 121-122, 353, 362, 368, 385, 392
 Մետրոպեան Սեթ - 201
 Մէլէ Անթուան - 108, 363-364, 382
 Մթորպեան Խաչիկ - 12-13, 36, 42-45, 47-49, 52, 54, 56, 60, 63, 129, 133, 136-137, 141, 154, 158, 284, 329-330, 358, 371, 389
 Մթորպեաններ - 51
 «Միականի» (տես նաեւ՝ Փոլատեան Դերենիկ Եպս. եւ «Զեօր») - 27, 86, 93-94, 102, 362, 378
 Մինասեան Կարոյ - 201, 401
 Միսաքեան Արփիկ - 373
 Միսաքեան Շաւարշ - 373
 Միսիրեան Երջանիկ - 176, 318, 394
 Միրզայեան Արամայիս Զին. - 94, 102, 194, 379
 Միրզոյեան Եղուարդ - 400
 Միրիճեանեան Լեւոն - 248, 407
 Միրիճեան Ժիրայր - 315, 413
 Միքայելեան Յովհաննէս - 97, 379
 Մխիթար Այրիվանեցի - 355
 Մխիթար Սասնեցի - 355
 Մոցարթ - 406
 Մոմճեան Կարապետ - 409
 Մոմճեան Մարտիրոս - 332
 Մովսէս - 134
 Մովսէս Խորենացի - 3, 216, 251, 353



Մորկըն Միս - 247, 406
 Մութաֆեան Յարութիւն - 242, 405
 Մուհամետ - 309, 413
 Մուրատեան Սկրտիչ - 334
 Մուրատիանեան Աստուածատուր - 356
 Մսըղլեան Չաւեն - 152-153, 390

Յ

Յագկերտ - 28, 362, 372
 Յակոբեան Հրանուշ - 337
 Յակոբեան Ղազարոս - 60, 371
 Յակոբեան Ն. - 110-111
 Յարութիւնեան Ալեսանտր - 400
 Յարութիւնեան Արմեն - 63, 155-156, 341-342, 357, 372
 Յարութիւնեան Սալբի - 372
 Յովիկ, տես՝ Սիմոնեան Յովիկ
 Յովհաննէս Ալան - 144, 389
 Յովհաննիսեան Էդգար - 10, 357
 Յովհաննիսեան Հրաչեայ - 248, 406
 Յովհաննիսեան Ռուբիկ - 269, 291, 408
 Յովնան Մարգարէ - 163
 Յովսէփեանց Գարեգին Ա. Կաթողիկոս - 7-8, 15, 77, 99, 134, 344, 355-356, 360, 380

Լ

Լազգաշեան Գիւտ Վրդ. - 88, 167, 180, 185, 207, 230, 315, 332, 335, 347, 378
 Լաթանեան Գարուն - 111, 382
 Լալբանդեան Միքայէլ - 380
 Լալպանտեան Կարապետ Բին. - 22, 361
 Լալպանտեան Ներսէս - 22, 361
 Լակովենկոյ - 400
 Լաճարեան Եղիա - 95, 379
 Լաճարեան Հայկ - 97, 379
 Լայիրի Ժիրայր - 299, 412
 Լարդունի Շաւարշ - 169, 391
 Լարիմանով - 379
 Լարինէ, տես՝ Կիւզելեան Վիվիեն
 Լաւասարդեան Բեգլար - 205, 402
 Լաւասարդեան Վահան - 402
 Լեիրու Ճավահարլալ - 29, 125, 363, 385
 Լերսեսեան Սկրտիչ - 246-247, 406
 Լերսեսեան Վրէժ - 151-152, 255, 258, 285, 307, 389-390
 Լերսիսեան Գարեգին Բ. Կաթողիկոս - 373

Ներսոյեան Գեորգ - 183, 395
 Ներսոյեան Յակոբ - 395
 Ներսոյեան Տիրան Եպս. - 55, 57, 146, 148-149, 347, 370, 395
 Ներսոյեաններ - 370
 Ներվարդ (տես նաեւ՝ Պոզապալեան Ներսէս Եպս.) - 143, 373
 Նիկողոսեան Երուանդ - 180, 394
 Նիկողոսեաններ - 277
 Նիցչէ - 379
 Նշանեան Մարի - 347
 Նշանեան Նշան - 347
 Նոյ - 35
 Նովելլոյ - 236, 405
 Նորա - 227
 Նորենց Վաղարշակ - 40, 366-367
 Նորունի Յակոբ - 105, 213, 381
 Նուարդ - 241
 Նուերուի - 89

Շ

Շահ Աբբաս - 359
 Շահազիզ Սմբատ - 122, 387
 Շահնուր Շահան (տես նաեւ՝ Լիւպէն Արմեն) - 183, 357, 394, 402, 412
 Շահոյեան Լեւոն - 274, 409
 Շահպազ Ստեփան - 115, 384
 Շամլեան Չոհրապ - 312, 413
 Շէմս Հմայակ - 53, 369-370
 Շէյքսփիր Ուիլիամ - 169, 173, 176, 183-184, 188-190, 192-193, 196, 316, 318, 360, 368, 392, 399
 Շէն Մահ (տես նաեւ՝ Մանուկեան Թորգոմ Եպս.) - 399
 Շթոքման - 28
 Շիրազ Յովհաննէս - 61, 152, 372, 385
 Շիրվանզադէ Ալեքսանդր - 121, 387
 Շխրտմեան Հրանդ - 55, 371
 Շմաւոնեան Յարութիւն Բին. - 401
 Շմաւոնեան Յովսէփ - 332
 Շուշանեան Վազգէն - 412
 Շուշանիկ - 128

Ո

Որբունի Չարեհ - 299, 393, 411-412
 Ուայլտ Օսկար - 187, 396
 Ութմազեան Հայկարամ - 267, 408





Ուիլսոն Վուտրոյ - 314, 413
 Ուղուրլեան Օննիկ - 264-265
 Ուռնակ - 301
 Ուրֆալեան Տաճատ Եպս. - 242, 343, 405

Չ

Չագմագճեան Գրիգոր - 192, 396
 Չաթըրճի Սունիթի Զումար - 29, 79, 108, 112-115, 122, 125-126, 315, 351, 363
 Չալըզեան Յովհաննէս - 42, 44, 46, 48-49, 129, 133, 164, 166, 271, 367
 Չախմախ - 398
 Չամիչեան Վիկտոր - 39, 366
 Չարեց Եղիշէ - 6, 229-231, 245, 354, 366-367, 375, 397
 Չեօրեքճեան Գեորգ Չ. Կաթողիկոս - 16, 334, 359, 380
 Չըրջիլ Ուինսթըն - 79, 376
 Չըրջիլ Սարա - 79, 376
 Չիլիսկիրեան (Երգահան) - 407
 Չիլիսկիրեան Լեւոն - 407
 Չիլիսկիրեան Սեդա - 259, 407
 Չորմիսեան Լեւոն - 169, 392
 Չուխաճեան Տիգրան - 381
 Չուքասըզեան Լիլի - 261, 408
 Չօլաք - 282, 410
 Չօպանեան Արշակ - 333, 367

Պ

Պալայեան Սարգիս - 369
 Պալատունի Վահէ - 53, 369-370
 Պալեան Սարգիս - 18
 Պալեան Օննիկ - 333
 Պալճեան Վազգէն Ա. Կաթողիկոս - 23, 29, 61, 68, 79, 86, 90-91, 94, 102, 125-126, 150, 173, 176, 178, 220-221, 224, 239, 242, 261, 294, 297, 301, 304, 315, 318, 354, 360, 362-363, 368, 372-373, 375, 377, 379, 388-389, 391, 399, 413
 Պախ - 406
 Պաղտասար Աղբար - 372
 Պայրամեան Զայկասեր Վրդ. - 344
 Պալոյ - 187
 Պապաճանեան Առնոյ - 400
 Պապայեան Աստղիկ - 287, 410
 Պապայեան Երուանդ - 7, 18, 342, 354
 Պապայեան Ռոզին - 342
 Պապայեան Սիլվա - 342

Պապայեան Տ. Ներսէս Ա. Բն. - 354
 Պապայեաններ - 354
 Պասիլիոս Կաթողիկոս - 363, 388
 Պասմաճեան Կարիկ - 43, 45, 66-69, 367, 396
 Պասման (Պասմաճեան) - 187, 318, 396
 Պարոնեան Յակոբ - 372
 Պարսումեան Երուանդ - 12, 34-35, 37, 39-40, 42, 44-50, 54, 131-132, 136, 138, 140-141, 143, 146, 156, 275, 307, 358
 Պարտագճեան Գեորգ - 42-43, 266, 367
 Պարտագճեան Յակոբ (Պարգէն Բն.) - 345
 Պավլով Ի. Պ. - 397
 Պեգլար Մելիք - 387-388
 Պելալի Էսմոն - 382
 Պենլեան Էտուարտ - 374
 Պետեան Ասատուր - 229, 404
 Պետիկեան Վարուժան - 168, 392
 Պետոյեան Ղազար (Բեռի Ղազար) - 234, 405
 Պետրոս, տես՝ Ալեքսեան Պետրոս
 Պետրոսեան Պօղոս Բն. - 94, 100, 379
 Պերիա - 354
 Պէթովէն - 261, 264, 406
 Պէշիկթաշլեան Սկրտիչ - 107, 381
 Պերպերեան Արսէն Վրդ. - 270-271, 284, 299, 363, 408
 Պերպերեան Զամբարձում - 77, 375
 Պերպերեան Շահան - 77, 375
 Պերպերեան Ռեթէս - 375
 Պըրնի Չարլզ - 235, 405
 Պլքեան Գեորգ - 64-65, 157-158, 373
 Պոգապալեան Լուիզա - 261-262, 407
 Պոգապալեան Ներսէս Եպս. (տես նաեւ՝ Ներվարդ) - 68, 73, 294, 373
 Պոգապալեաններ - 373
 Պոյաճեան Եղուարդ - 384
 Պուշկին - 400
 Պրենտա - 361
 Պրիթըն Պենճամին - 198, 399-400
 Պրոմեթէոս - 75
 Պօղոսեան Եղուարդ - 412
 Պօղոս Չ. Պապ - 220-221

Ջ

Ջուղայեցի - 187-188





Ռ

Ռշտունի Չեկտոր - 121, 387
 Ռոսթրափովիչ - 400

Ս

Սաթամեան Գրիգոր - 348, 372
 Սահակ Պարթև Կաթողիկոս - 368
 Սահակեան Յարութիւն - 29, 125
 Սահիկեան Անահիտ - 213, 223, 246, 248, 403
 Սամուէլեան Խաչիկ - 26, 93, 361
 Սայաթ Նովա - 245, 296, 399, 406
 Սանտրա - 361
 Սասնիկ (Սասուն), տես՝ Սիմոնեան Սասուն
 Սասունի Կարոյ - 384, 395
 Սասունցի Դաւիթ - 29, 108, 122, 364
 Սարաֆեան Լիկողոս - 412
 Սարգիս Գիլանենց - 401
 Սարգիսեան Անի - 14, 504
 Սարգիսեան Գարեգին Եպս. (ապա՝ կաթողիկոս) - 175, 242, 301, 333, 343, 384, 393
 Սարգիսեան Սերժ - 338-339
 Սարգիսեան Սոնա - 47
 Սարգիսեան Օննիկ - 18, 47, 88, 115, 129, 135, 168, 354, 359, 395
 Սարգսեան Սերժ - 338
 Սարեան Մարտիրոս - 245-246, 253, 406
 Սարթր ժան Փոլ - 368
 Սարոյեան Ուիլիամ - 368, 393
 Սեզա Սիրան - 209, 403
 Սեթեան (Սեթ) Մեսրոպ - 117-118, 201, 384-385
 Սեմերճեան Վաչէ - 198-199, 203-204, 400
 Սերոբեան Այտա - 369
 Սեւակ Մանասէ - 194, 352, 397
 Սեւակ Պարոյր - 248, 257, 274, 277, 357, 367, 406-407
 Սեւան Գեղամ - 190, 199, 396
 Սեւունց Գարեգին - 193, 282, 396-397
 Սթիվընսըն Ռոպերթ Լուիզ - 369
 Սիամանթոյ - 107, 381, 397
 Սիմընզ Ճին - 329
 Սիմոնեան ընտանիք - 15, 60, 117, 129-130, 133-134, 146, 155
 Սիմոնեան Յրայր - 22, 361
 Սիմոնեան Յրանդ - 50, 368
 Սիմոնեան Մարալ - 24, 29-30, 51, 65, 69,

340, 343, 361, 374
 Սիմոնեան Մարի (տես նաեւ՝ Աճեմեան Մարի) - 30, 41, 43, 69, 88, 92, 100, 102, 104, 109-110, 112-113, 115, 123, 124, 126, 129-130, 133, 140, 339-340, 342-343, 364, 367
 Սիմոնեան Մենուշ - 373
 Սիմոնեան Յարութիւն - 66, 373
 Սիմոնեան Յովիկ, Դաստամատ - 13, 24, 29-30, 34-35, 37-42, 51, 67, 75, 130-133, 135, 138, 140-144, 146, 343, 361, 36, 388
 Սիմոնեան Պեպօ (Պեպոյ) - 274, 409
 Սիմոնեան Սասուն (Սասնիկ) - 3, 29-30, 35, 38, 43, 124, 134, 138, 141, 342-343, 361, 364
 Սիմոնեան Սիմոն - 1-9, 12-18, 20-28, 30-33, 35, 37-54, 56-70, 72-77, 83, 85-88, 93, 95, 99-101, 104-105, 107, 109-110, 112-113, 115, 117, 120, 123, 125, 127-135, 139-148, 151-152, 154-155, 157, 168, 189, 196, 210, 260, 263, 272, 286, 302, 308, 310, 333-334, 339-344, 347, 353-354, 356, 358-359, 361, 363-365, 367-369, 371, 373-374, 376-377, 382-383, 387-388, 405, 412
 Սիմոնեան Վարդան - 24, 29-30, 343, 361
 Սիմոնեան Տարօն - 8, 24, 29-30, 38, 59, 343, 361
 Սիմոնեան Օվէ - 367, 373
 Սիմոնեաններ - 123, 156, 373
 Սիրունեան Մամբրէ Արք. - 27, 362, 391
 Սևապեան Մարտիրոս - 332
 Սևապեան Պողոս - 117, 345, 384
 Սվենինկ Բարլ Էլոֆ - 315, 413
 Ստախանով Ալեքսէյ Կրիկորովիչ - 62, 372
 Ստեփանեան Յարութիւն - 376-377
 Ստեփանոս Դաշտեցի - 21, 28, 359-360
 Սրապեան Ստեփան - 209, 213, 402
 Սրուանձտեանց Գարեգին Եպս. - 364
 Սֆինքս - 35, 366

Վ

Վահէ-Վահեան - 146, 334, 389
 Վանատուր - 37, 366
 Վարդան, տես՝ Սիմոնեան Վարդան
 Վարդան Լեւոն - 114-115, 129, 168, 383
 Վարդանեան Յայաստան - 146
 Վարդանեան Մնացական - 356





Վարդանեան Յակոբ Վրդ. - 185, 332, 396
 Վարդանեան Վիկտոր - 84, 377
 Վարդերեսեան Եղիշէ - 47, 368
 Վարդուկեան Լուիզ - 169, 260, 392
 Վարժապետեան Տիգրան - 274, 409
 Վարուժան Դանիէլ - 107, 121, 143, 366, 381, 397
 Վարսեան Շաքէ - 199, 400
 Վեկկըր Արմին Թ. - 314-315, 413
 Վերֆել Ֆրանց - 328, 414
 Վիշնեսկայա Կալինա - 400
 Վիվի, տես՝ Կիւզելեան Վիվիէ
 Վիվիէն, տես՝ Կիւզելեան Վիվիէն
 Վռամշապուհ - 49, 368
 Վրացեան Սիմոն - 404

S

Տամատեան Միհրան - 391
 Տառսէթ Չարլզ - 112, 122, 196, 215, 383, 390, 406
 Տատուր Արմէն - 369
 Տատուրեան Ահարոն - 366
 Տարօս, տես՝ Սիմոնեան Տարօս
 Տետեան Աստղիկ - 264
 Տէր Անդրիասեան Հրանդ - 392
 Տէր Գալուստեան Ենուք (Մուշեղ Զին.) - 345
 Տէր Գալուստեան Մովսէս - 355-356
 Տէր Խաչատուրեան Արտաշէս - 117, 184, 384
 Տէր Մարտիրոս - 94
 Տէր Յակոբեան Ենուք - 389
 Տէր Յարութիւնեան Աշոտ Զին. - 55-56, 143, 149, 370-371
 Տէր Յարութիւնեան Արթոյ - 57, 151, 371
 Տէր Յարութիւնեան Արամ - 371
 Տէր Պետրոսեան Սկրտիչ - 392
 Տէր Ստեփանեան Կոմիտաս Եպս. - 363
 Տերեան Վահան - 385
 Տերտերեան Եղիշէ Պատրիարք (տես նաեւ՝ Եղիվարդ) - 55, 125, 148, 173, 176, 179, 185, 220, 280, 363, 370, 388, 391, 413
 Տօքսմէնեան Ծորճ - 354
 Տիգրան Մեծ - 392-393
 Տիգրայէլի Պենճամին - 136, 389
 Տիւսաբ Սրբուհի - 381
 Տորոթի - 361
 Տրդատ Գ. - 367

Տօլապճեան Չաւեն - 283-284, 288, 290, 410
 Տօլուխանեան Ալեքսանտր - 410
 Տօլուխանեան Չարուհի կամ Չարա - 282, 409-410
 Տօլուխանեաններ - 410
 Տօնապետեան Չոհրապ - 374
 Տօնապետեան Յովիկ - 72-74, 374
 Տօնապետեան Վարդգէս - 70, 374

Բ

Բատաքրիշևա - 363
 Բաֆֆի - 388

Յ

Յողիկ - 361

Փ

Փանոսեան Սմբատ - 272, 274, 408
 Փանոսեաններ - 273
 Փապուճեան Ներսէս Աբղ. - 334, 345
 Փարսադանեան Ալբերտ - 78, 375-376
 Փաւստոս Բիւզանդ - 34, 366
 Փափազ (տես նաեւ՝ Թումայեան Պսակ Եպս.) - 166, 213, 220, 222, 239, 259, 282, 284, 327, 391
 Փափազեան - 294
 Փափազեան Յակոբ - 332
 Փափազեան Վրթանէս - 94, 378-379
 Փեղիվանեան Արփիկ - 384
 Փիլաւճեան Լիոնի - 50, 368-369
 Փիրս Փիթըր - 400
 Փոլատեան Դերենիկ Եպս. (տես նաեւ՝ «Քէօր» եւ «Միականի») - 86, 89-90, 95-96, 98-99, 102-103, 105, 125, 360, 362-363, 377-378
 Փոլատեան Վահան - 22, 26, 84, 86-87, 116-117, 360
 Փրեանց Մանուկ - 78, 375

Ք

Քաջիկ Ռոնի - 255-256, 258, 407
 Քասունի Երուանդ - 78, 115, 122, 129, 376
 Քար Իտա - 111, 382
 Քարճեան Զարիմ - 145
 Քարսուէլ Ըոն - 151, 390





- Բեհեայեան Միսաք - 21, 359
 Բելչիկ - 278
 Բեյվանեան Բիւզանդ - 349
 Բեշիշեան Արամ Ա. Կաթողիկոս - 354, 409
 Բեշիշեան Գեորգ - 403
 Բեշիշեան Կորիւն - 191, 205, 270, 396
 Բեշիշեան Նուպար (տես նաեւ՝ Բեշիշեան Վազգէն Վրդ.) - 22, 333-334, 361, 391
 Բեշիշեան Սեսիլ - 214, 403
 Բեշիշեան Վազգէն Վրդ. (տես նաեւ՝ Բեշիշեան Նուպար) - 164, 333-334, 361, 391
 Բեպթեանեան Սիմոն - 17
 Բերեսթեան Գեորգ Դ. Կաթողիկոս - 378
 Բեքլիկեան Զամբար - 203, 402
 Բեօմիւրճեան Մայտա - 114, 384
 Բեօմիւրճեան Նշան - 384
 Բեօմիւրճեաններ - 384
 «Բեօր» (տես նաեւ՝ Փոլատեան Դերենիկ Եպս. եւ «Միակակի») - 29, 363, 378
 Բից - 271
 Բիւսայեկեան Մովսէս - 332-333
 Բիւրքճեան ճոն - 403
 Բիւրքճեան ճորճ - 403
 Բիւրքճեան Սարգիս - 211, 329, 403
 Բիւփեյլեան Աստղիկ - 185, 189, 395
 Բիւփեյլեան Նուպար - 333, 335
 Բոկլն Տոնըլտ - 156, 390
 Բոչինեան Անտոն - 294, 411
 Բուզնեցով - 257
- O**
- Օգսէն - 372
 Օհանեան Ասատուր - 61, 153, 372
 Օհանեան Ռաֆֆի - 268, 408
 Օհանեսեան Չեփիւռ - 70, 374
 Օշական Յակոբ - 38, 308, 359, 366, 384, 409
 Օրագեան Ժիրայր - 110, 382
 Օրբելի Յովսէփ - 351
 Օրմանեան Մաղաքիա Պատրիարք - 98, 100, 380, 391
- Ֆ**
- Ֆերմանեան Գեորգ - 111, 383
 Ֆրիկ - 382, 410
 Ֆոյլզ Ուիլիամ - 414
 Ֆոյլզ Կիլպըրթ - 414

ԼԱՏԻՆԱՏԱՌ ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐՈՒ ՅԱՆԿ

- A**
- Abeghian Manouk - 380
 Abovyan Khatchatur - 362
 Adjarian Hrachia - 361
 Alajajian Stepan - 236
 Ampartsumian Victor - 414
 Andersen-Rosendal Jorgen - 404
 Apcar family - 374
 Aprahamian Felix - 405
 Asratian Ezras - 283
 Atayan R.A. - 390
 Aznavour Charles - 371
- B**
- Baba John Massy - 380
 Baldjian Vasgen I - 363
- C**
- Baronian Hagop - 373
 Basmadjian Garig - 67
 Beglar Melik - 387
 Belikian Kevork - 64, 157
 Berberian Schahan - 375
 Berlioz - 405
 Bozman E. F. - 326
 Britten Benjamin - 399-400
 Burney Charles Allen - 365, 405
- C**
- Carswell John - 383, 390
 Charents Yeghishe - 354
 Chatterjee Suniti Kumar - 108, 125, 363
 Churchill Sara - 376
 Chookasian Lili - 408
 Coggan Donald - 390



D

David of Sasun - 364
 Dawsette Charles - 217, 383
 Derderian Yeghishe - 370
 Der Haroutunian Arto - 143
 Disraeli Benjamin - 389
 Dolabdjian Zaven - 283
 Downing Charles - 383
 Dussape Paul - 381
 Dutt Mrs. - 89

E

Emin Gevorg - 406
 Evans Hubert - 247

F

Fries Paul R. - 370

G

Gandhi Mahatma - 387
 Garekin I - 393
 Gasparian Gohar - 409
 Gery John - 369
 Gomez Mrs. - 408
 Grigor Narekatsi - 373
 Gulbenkian Caluste - 382
 Gulbenkian Nubar - 382
 Guler Ara - 234, 404
 Guzelian Assadour - 177

H

Haile Selassie I - 413
 Harrod Charles Henry - 409
 Heilman Claude - 328-329, 414
 Hildebrandt F. - 370
 Hillary Edmund - 387
 Hitler Adolf - 413
 Hochhauser Victor - 414
 Hovhannes Alan - 388
 Hovhannisyan Edgar - 357
 Hyde Mr. - 369

I

Isahakian Avetik - 373, 411

J

Jacobs Alan - 390
 Jekyl Mr. - 369
 Jeppe Karen - 413
 Johns William - 383

K

Kaloost Aratoon - 356
 Karen Jeppe - 413
 Kaputikyan Silva - 406
 Kaydan Andre - 55
 Khatchaturian Aram - 374
 King Underwood Ani - 365
 Komitas - 381

L

Landsborough Gordon - 414
 Lang David Marshal - 233, 365

M

MacKenna Stephen - 390
 Mahari Gourgen - 404
 Manoogian Alex - 217, 371
 Marshal John - 386
 Mavian Vahram - 11, 163, 171, 177, 218, 278
 Meillet Antoine - 363, 382
 Mesrop Mashdots - 385
 Metsarents Misak - 381
 Morgan Miss - 406
 Movses Khorenatsi - 353
 Mtrebian Kaye (Khatchig) - 47, 129, 358
 Musgrave Victor - 382

N

Nehru Jawaharlal - 363
 Nersessian Vrej Nerses - 370, 390
 Nersoyan Tiran - 370, 390

O

Ormanian Malachia - 380

P

Paroyan Khoren I - 404



R

Ravel - 405
Roy (Սօհ-Րոյ) - 51

S

Saryan Martiros - 406
Sayat Nova - 406
Seth Mesrobian J. 384
Shahaziz Smbat - 387
Shakespeare William - 392
Shiraz Hovhannes - 372
Siamanto - 381
Sibelius - 405
Simonian Simon - 69
Sphinx - 366
Stephen Aratoon - 376
Svenning Carl Elof - 413

T

Tagore Rabindranath - 383
Talaat Mehmed Pasha - 414
Tcheorekdjian George VI - 359
Tekeyan Vahan - 381

Topalian Puzant - 11, 177
Totovents Vahan - 373
Toumanian Hovhannes - 373, 407
Tourian Bedros - 366
Tourian Levon - 408
Tourian Yeghishe - 380

V

Vahe-Vahian - 389
Varoujan Daniel - 381

W

Walker Christopher J. - 365
Wegner Armin T. - 314, 413
Werfel Franz - 414
Wild Oscar - 396
Wilson Woodrow - 413

Y

Yanikian Gourgen - 371

Z

Zarian Kostan - 368





ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐՈՒ ՅԱՆԿ

Ա

- Ա.Ս.Ն., տես՝ Ամերիկա
 Ազեզ - 359
 Ազունիե - 9, 159, 345, 356
 Աթենք - 127, 218, 355, 364, 375
 Ալավերտի - 375
 Ալեքսանդրապոլ - 372, 395
 Ալեքսանտրեթ - 6, 77, 354, 384, 409
 Ախալցխա - 360, 387
 Ախալքալաք - 393
 Աղեքսանդրիա - 242, 370, 372, 408, 410, 413
 Աղթամար - 233-234, 296
 Ամանոս - 77, 354
 Ամերիկա (Ա.Ս.Ն., Միացեալ Նահանգներ) - 16, 47, 53, 78, 100, 121, 133, 160, 164, 185, 228, 238, 242, 244, 254-255, 257, 262, 265-266, 268, 274, 278, 282, 289-290, 328, 354-355, 358-359, 361, 364, 368, 370-371, 373-375, 384, 388-389, 391, 393, 395, 397-399, 405, 407-413
 Ամերիկա (Լատին) - 410
 Ամերիկա (Չարաւային) - 191, 362, 399
 Ամերիկա (Յիւսիսային) - 362
 Ամման - 297
 Ամսթերտամ - 402
 Այնթապ - 15, 354, 357-358, 370, 372-373, 395, 412
 Այնճար - 358
 Այն Նապի - 343
 Անգլիա - 10, 33, 36, 43, 45, 52-53, 59, 66, 109, 129-130, 164-166, 177, 196, 237, 241, 249, 258, 275-276, 321-323, 326, 328, 336, 356, 361, 365, 367, 371, 373-374, 376, 383, 388, 393-394, 398, 400, 403, 405, 414
 Անդրկովկաս - 366, 401
 Անթիլիաս - 6-7, 9, 15, 18, 38, 71, 75, 77, 185, 220-221, 277, 279, 305, 334-335, 340, 342-344, 355, 364, 371, 373-375, 377-379, 382, 384, 386-388, 390-391, 404-405, 409
 Անի - 233-234, 296
 Աշխան - 6-7
 Աշխապատ - 385
 Աշտարակ - 387, 406
 Ասիա - 401
 Ատրեստան - 366
 Ատաբազար - 381
 Ատանա - 355, 375, 384, 391
 Ատիս-Ապեպա - 26-27, 120, 176, 203, 316, 318, 390, 413
 Արաբկիր - 392, 404
 Արարատ - 231, 245-246, 281
 Արեւելք - 31, 164, 179, 182, 199, 238, 262, 267, 286, 290, 298, 303
 Արեւմուտք - 198
 Արժանթին - 16, 345, 399
 Արմաշ - 392
 Արտազ - 401
 Արցախ - 355, 393
 Աւգերմ - 367
 Աւստրալիա - 16, 86, 90, 94, 99, 102, 313
 Աւստրիա - 413
 Ափրիկե - 13, 120
 Աքրա - 102-103
 Աֆղանիստան - 103, 400
 Աֆրին - 7, 354

Բ

Բիւրական - 296, 414

Գ

Գահիրե - 26, 28, 361, 369, 382, 390, 395, 409, 413
 Գամիշլի - 179
 Գանկես - 116, 118
 Գերմանիա - 203, 297, 318, 366, 412-413
 Գերմաւ - 40, 367
 Գողթան Գաւառ - 359
 Գորիս - 365





Գումուշհանէ - 370
Գրըզխան - 373

Դ

Դամասկոս - 83, 218, 353, 358, 364, 378, 388
Դաշտ - 359
Դիլիջան - 400

Ե

Եգիպտոս - 16, 160, 213, 218, 366, 372, 381, 391
Եդեսիա - 392
Եթովպիա - 16, 27, 391, 400, 413
Երեւան - 17, 78, 86, 89, 91-92, 96-97, 110, 179, 190, 206, 224, 230, 235, 239, 245-246, 255, 265, 281, 283, 298-299, 309, 321, 323, 327, 337-338, 355, 357, 360-361, 366-369, 372, 375-377, 379-380, 385, 387-388, 393-398, 400-407, 409-410
Երուսաղէմ - 16, 159-160, 167, 176, 179, 181, 183, 185, 194, 215, 217, 224, 297, 302-304, 344, 360, 363, 367, 370, 377, 379-380, 382, 384, 388, 391, 394, 396, 399, 401-402, 404, 407, 413
Երոպա - 31, 71, 160, 223, 228, 230, 233, 239, 267, 288, 296, 362-363, 394

Զ

Չահլէ - 391
Չուիցերիա - 67, 74-75, 361, 373

Է

Էջմիածին - 16, 94, 97, 100, 102, 105, 194-195, 201, 239, 258, 279, 301-302, 334, 355, 360-362, 365, 370, 373-374, 377, 380, 388-389, 391, 393, 399, 408, 413
Էվերեսթ - 102, 120, 387
Էրեբունի - 296
Էրզրում - 321, 370-371

Թ

Թալին - 373
Թապով - 382

Թաւրիզ - 362
Թել Ավիլ - 224
Թեհրան - 28, 46, 123, 154, 199, 252, 287, 356, 407, 411
Թեղնիկ - 373
Թիֆլիս - 361, 363, 366, 374, 393, 395, 406, 408, 413
Թորքի - 129-130
Թուրքիա - 77, 160, 191, 197, 294, 321, 354, 398, 404-405, 411, 414

Ժ

Ժընևե - 224, 269, 285, 378, 393, 408

Ի

Իստոնիզիա - 402
Իսթանպուլ, տես՝ Պոլիս
Իսկենտերուն - 395
Իսրայել - 251
Իսֆահան - 401
Իտալիա - 57, 152, 235, 382, 394
Իրան - 328, 380
Իրաք - 16, 58, 84, 106, 160, 197-198, 200, 366, 409
Իրլանտա (Յիւսիսային) - 159

Լ

Լաթաքիա - 409
Լայփցիկ - 355
Լենինական - 299
Լենինկրատ - 245, 351, 387, 403
Լիբանան - 3, 6, 16, 71, 77, 83, 86, 89, 92, 107, 109, 121, 159-160, 179, 183, 200, 208-209, 213, 220, 232, 260, 273, 285, 298-299, 309, 343, 345, 356, 361, 365-366, 368-369, 371, 377, 383, 390, 396, 403, 405, 407, 409, 412
Լիզպոն (Լիսաբոն) - 9, 12, 138, 159-160, 166, 168, 171, 173, 176-179, 181-182, 184, 186, 191-195, 197, 200, 202-203, 205-206, 209, 212, 215-216, 219, 221-222, 224, 226, 228-230, 232-234, 237-238, 240-241, 243-244, 246, 248, 251-253, 255-258, 260, 262-264, 266, 268-271, 274-275, 277-279, 280, 283-285, 287, 289-290, 292-293, 295, 298, 300-305, 307-309, 319, 323, 357, 382, 409





Լին - 369, 392
 Լիքստեմպուրկ - 371
 Լոզան - 18
 Լոնտոն - 9-10, 31, 34-36, 40, 47-48, 55, 57-59, 61-66, 70-74, 77-78, 86, 102, 110-111, 128-136, 138-148, 150-155, 157-158, 164, 170-172, 174-175, 180-181, 183-185, 191, 193-198, 202, 204-207, 209, 213-214, 219-224, 226, 227-229, 231, 237, 239-240, 242-243, 245, 251-259, 261-262, 267-269, 271, 274-280, 284-285, 287, 290, 293, 297-299, 300-307, 311-312, 314-316, 317-319, 321, 323-328, 330, 336-338, 346-349, 352, 357-358, 362, 364-365, 367, 369, 371-375, 382-383, 388-390, 391-394, 396-397, 400-403, 405, 408-414
 Լոռի - 375
 Լոս Անճելես - 17, 354, 388, 400, 403
 Լուիզիանա - 53
 Լուվեն - 222

Խ

Խարբերդ - 411
 Խարթում - 27, 120
 Խարքով - 365
 Խլաթ - 397
 Խոր Վիրապ - 42, 46, 367
 Խորհրդային Հայաստան, տես՝ Սովետական Հայաստան
 Խորհրդային Միություն, տես՝ Սովետ. Միություն

Ճ

Ճարագոյն Արեւելք - 90, 94, 101, 103-104, 360, 362, 378

Կ

Կալկաթա - 9-10, 22, 26, 31, 77-78, 83-91, 93, 95, 98-99, 101, 103-106, 108, 112-113, 115-118, 120, 123-125, 127, 131, 313, 335, 356, 361-364, 367, 375-377, 379-381, 383-385, 387, 389, 407
 Կապադովկիա - 386
 Կարս - 398
 Կիլիկիա - 15, 77, 354, 357, 368, 373, 391, 409

Կիպրոս - 6, 16, 159, 165, 179, 213, 218, 251, 273, 303, 354, 358-359, 366, 368, 383, 391-394, 400, 403-404, 409, 414
 Կիրովական - 357
 Կիւրին - 356, 389
 Կոտայք - 373

Հ

Հալեպ - 6-9, 15, 71, 77-78, 109-110, 157, 180, 182, 184, 198, 218, 286-287, 332, 349-350, 353-354, 356-357, 359, 361, 364, 366, 368-374, 376-378, 384, 387-388, 392, 395, 399, 402
 Հաղբատ - 406
 Համա - 399
 Համատան - 380
 Համշեն - 401
 Համպուրկ - 408
 Հայաստան (տես նաև՝ Սովետական Հայաստան) - 5, 12, 16, 23, 29, 34, 43, 45, 79, 86, 91-92, 97, 101, 108, 118, 121-122, 126, 153, 160, 176, 190, 201, 204-205, 208-210, 213, 215-216, 219, 225, 229-231, 234-237, 242-243, 248-249, 251, 253, 256-258, 265, 267, 272, 274, 277-279, 281-282, 286, 288, 292, 294, 297-298, 300, 302, 314, 319-325, 327, 353, 355-356, 359-362, 364-366, 368, 371-372, 373-375, 377-380, 382, 386-388, 393, 396-400, 402, 404-406, 408, 411-412, 414
 Հայաստան (Արեւելեան) - 410
 Հայֆա - 159
 Հաուրա - 363
 Հապեշխտան, տես՝ Եթովպիա
 Հասանպէլի - 368
 Հարաւային Բելեռ - 103
 Հարվըրտ - 367
 Հաւայեան Կղզիներ - 90
 Հաֆթուան - 409
 Հելվետիա, տես՝ Չուիցերիա
 Հեռաւոր Արեւելք - 356, 360-361, 377
 Հիմալայա - 102-103, 380
 Հնդկաստան - 5, 9-10, 21, 24, 26, 29, 71, 77, 87, 89, 91, 101-102, 105-107, 118, 120-121, 125, 128, 165, 293, 313, 360, 362-364, 375, 377-378, 380, 383-384-388, 394





Հոլանտա - 397-398	Մուսուլ - 198
Հռոմ - 68, 71, 84, 110, 237, 368, 377, 382, 405	Մոնաքոյ - 212
Հրեաստան - 78	Յ
Ղ	Յորդանան - 16, 220, 267, 370
Ղալղուլ - 120, 359, 387	Յունաստան - 16, 213, 361, 411
Ղրիմ - 355	Լ
Ճ	Լախիջեան - 380
Ճաբոն - 90, 394, 398, 410	Լայճիրիա - 307
Ճալտա - 87	Լեդոս - 32
Ճեզիրե - 181, 405	Լեփալ - 102-103
Ճիպէյլ - 9, 356	Լիկոսիա - 127, 159, 165, 354, 391-392, 404
Ճիպրալթար - 202	Լինուէ - 37, 366
Ս	Լիւ Եորք - 258-259, 262, 370, 383, 408
Մամբըլթեն - 356	Լիւ Օրլինզ - 53, 369
Մահանճատարոյ (Մոհենճոտարոյ) - 119, 386	Լոր Այնթապ - 372
Մանհաթըն - 370	Լոր Արաբկիր - 404
Մանչեսթր - 235, 371, 374, 394, 405	Լոր Չելանտա - 387, 410
Մանչուրիա - 360	Լոր Չէյթուն - 236
Մատրաս - 401	Լոր Նախիջեան - 355, 359, 380, 406
Մատրիտ - 167, 179, 209	Լոր Ջուղա - 201, 359, 362, 379, 401
Մարաշ - 408	Շ
Մարսէլ (Մարսիլիա) - 40, 185, 391-392	Շանգեյիզէ - 10
Մեծն Բրիտանիա - 78, 339, 389, 396, 404, 410-411	Շապին Գարահիսար - 292
Մեծք - 397	Շիքակոյ - 388
Մերձաւոր Արեւելք - 165, 267, 356	Շենիկ - 366
Մերսին - 400	Շիրազ - 362
Մեքսիքոյ - 328	Շուշի - 361, 393
Միացեալ Նահանգներ, տես՝ Ամերիկա	Ո
Միլան (Միլանոյ) - 208-210, 213, 235, 237, 249, 261, 402, 405	Ոսկեթաս - 373
Միչիկըն - 367	Ոսկեվազ - 387
Միջին Արեւելք - 6, 13, 92, 100, 103, 160, 164, 320-321, 362, 373, 375, 382, 388, 390, 414	Ուրմիա - 200
Միւնիխ - 127	Ուրֆա - 320, 392
Մոսկուա - 91-92, 111, 113, 194, 197, 228, 230, 232, 245-246, 255, 279, 283, 294, 298-299, 319, 351, 357, 363-364, 367-368, 374, 233, 383-385, 387, 393, 407, 409-410	Չ
Մունպոլճ - 369	Չանախչի - 406
	Չինաստան - 360, 393
	Չմշկածագ - 392





- Պ**
- Պաղեստին - 16, 366
 Պաղտատ - 46, 198, 200, 360, 370, 399
 Պանկլատեշ - 380
 Պաշ Ապարան - 365-366
 Պասրա - 198
 Պարսկաստան - 71, 84, 87, 106, 160, 191, 197-198, 200, 214, 226, 251-252, 285-286, 290, 362, 368, 375, 379-380, 384, 389, 401, 407, 409, 411-412
 Պաքու - 388, 393, 396, 399, 407, 411-412
 Պաքուպա - 399
 Պելճիքա - 222, 241, 371, 400
 Պելֆասթ - 10, 159, 163, 206, 252
 Պենարես - 102
 Պենկալ (Պենկալիա) - 92, 125, 315, 363, 378, 380
 Պերլին - 320, 413-414
 Պեյլան - 391, 405
 Պեյրուք - 1, 17-18, 21, 23-25, 28-48, 50-54, 56-57, 59-65, 68-71, 78, 83, 88, 98-101, 103-104, 107, 109-110, 115, 124, 127-128, 130-132, 134, 138, 151-154, 160-167, 173, 177, 179, 182, 197-198, 200-201, 218-220, 225, 234, 241-242, 251-252, 257, 260-261, 266-267, 272, 274, 277-280, 286-287, 291-292, 297-298, 302, 306-307, 309, 316-317, 319, 330, 334, 339, 341-343, 354, 356-361, 364, 367-369, 372-374, 378-379, 383, 385, 387-392, 395, 397, 399-400, 402, -405, 407-409, 411
 Պըրմինկիամ - 355, 394
 Պիեն - 67
 Պիթլիս - 387, 397
 Պիքֆայա - 309
 Պոլիս - 110-111, 185, 189, 198, 200-201, 204-205, 216, 224, 232-233, 251, 262, 273, 285-286, 361-362, 366, 374-375, 380-382, 384, 391-394, 396, 403-405, 408, 411, 413
 Պոմպեյ - 125
 Պոսթոն - 184, 258, 366, 374, 383, 394-395, 411
 Պուկարիա - 133, 263, 265, 364, 388, 414
 Պուրճ Բամուտ - 3, 160
 Պուրսա - 366, 392, 402
 Պուքարեսթ - 384
- Պրազիլ** - 16
Պրայթոն - 328
Պրիքսել - 128, 133, 222-223, 228, 278, 377, 413
- Ջ**
- Ջուդա** - 101, 364, 376, 379, 384, 401
- Ռ**
- Ռիկա** - 385
Ռումանիա - 115, 133, 388
Ռուսաստան (Ռուսիա) - 62, 382, 385
- Ս**
- Սալմաստ** - 200, 409
Սալոնիկ - 402
Սաղավուզ - 355
Սանճագ - 6-7, 71, 373
Սասուն - 76, 359, 366-367, 405
Սարտարապատ - 296, 355
Սեւաստափոլ - 411
Սեուտական Արաբիա - 361
Սիպերիա - 248
Սիս - 378, 397
Սիտնի - 100, 102, 379
Սիւնիք - 401
Սկանտինաւեան երկիրներ - 410
Սովետ. Միութիւն - 10, 17, 321, 394, 397-398, 409-411
Սովետական Բայաստան - (տես նաեւ՝ Բայաստան) - 16-17, 126, 328, 357, 362, 364, 368, 379, 384, 404, 412-414
Սովետական Ռուսիա - 404
Սովուզ Օլուզ (Սովուզ Օլուխ) - 7, 77, 150, 306, 354, 404
Սորպոն - 67, 392
Սուտան - 16, 27, 157
Սուր - 51
Սուրապայա - 402
Սուրիա - 3, 6, 16, 77, 95, 107, 160, 179, 183, 200, 213, 232, 273, 285, 353, 369, 373, 383, 395, 399, 404-405, 409
Սոֆիա - 40, 133, 353, 408
Սպանիա - 202





Վ

Վաղարշապատ - 406
 Վան - 234, 321, 370, 378, 404
 Վանիկ - 387
 Վատիկան - 220
 Վենետիկ - 210, 273, 306, 405
 Վիեթնամ - 208
 Վիեննա - 127, 133, 164, 408, 412
 Վոթըրթաուն - 355
 Վրաստան - 364

Տ

Տաճիկիստան - 385
 Տարճիլիսկ - 102, 377, 380
 Տարոն - 386, 392
 Տաքքա - 102-103, 380
 Տելիի - 102-103
 Տեր Չօր - 179, 392
 Տիթթոյթ - 258-259
 Տիսեւտորֆ - 408
 Տրապիզոն - 370

Փ

Փասատիկա - 412
 Փարիզ - 9-12, 64, 66-70, 129, 160, 166-168, 170, 172, 177, 179-180, 191, 197, 202-203, 205-207, 209, 211-213, 217-218, 220, 224, 226, 230, 238-239, 242-243, 245, 248-249, 253, 255, 260-261, 264-265, 267-270, 284, 291-292, 298, 300-302, 306, 308, 313, 315-316, 318, 323, 353, 356-357, 363-364, 371, 373, 378, 381-382, 384, 391-394, 402, 405, 410-413
 Փատովա - 381
 Փաքիստան - 83, 102-103, 353, 380, 386

Փեթերսպուրկ - 360-361
 Փորթուկալ - 296
 Փորթ Սայիտ - 397

Ք

Քալիֆորնիա - 183, 258, 288-289, 308, 310, 354, 365, 373, 391, 401, 408
 Քամչաթքա - 270
 Քանատա - 16, 358, 366, 371, 375, 391
 Քաշմիր - 102
 Քարաչի - 83
 Քեմպրիճ - 365
 Քենթաքդրի - 156, 318
 Քեսապ - 181, 360
 Քերալա - 363, 388
 Քերքուկ - 198
 Քեթսահիա - 58, 371, 381
 Քիւրտ Տաղը - 6, 354
 Քոթթայամ - 125, 363, 388
 Քոլումպիա - 365, 391, 397, 403
 Քուէյթ - 46, 138
 Քոփենհակըն - 321, 323, 404
 Քրասնոտար - 404

Օ

Օշական - 362
 Օռլի - 217
 Օրտու - 411
 Օքսֆորդ - 195, 242, 367, 383, 394, 400

Ֆ

Ֆիլատելֆիա - 375, 399, 402
 Ֆորմոզա - 90
 Ֆրանսա - 16, 77, 208, 297, 328, 357, 369, 382, 392, 394, 412
 Ֆրեզնոյ - 411

ԼԱՏԻՆԱՏԱՌ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐՈՒ ՅԱՆԿ

A

Amman - 69
 Armenia - 283
 Armanitolla - 380

B

Beirut - 218, 234, 278, 286
 Belfast - 163
 Bengal (West) - 125





	C	Kottayam - 388 Kutahya - 371
Calcutta - 125 California - 329 Cyprus - 165		L
	D	Lisbon - 41, 171, 177 London - 35-36, 47, 64-65, 138, 177, 326, 370
Dacca - 380 Darjeeling - 380 Detroit - 217 Devon - 336		M
	E	Michigan - 217 Mohenjo-Daro - 386 Moscow - 283
England - 35, 47, 129 Erevan - 236, 283		N
	F	New Orleans - 369 Nicosia - 165 Nor Zeitoun - 236
France - 67		P
	H	Paignton - 336 Palm Springs - 388 Portugal - 171
Hague - 397		T
	I	Torquay - 130 Tottenham - 137
India - 125 Indus Valley - 386 Ireland (Northern) - 163 Istanbul - 234		U
	J	U.K. - 64, 157, 320 U.S.A - 217 U.S.S.R - 283
Jhalda - 378 Jordan - 69		W
	K	Watertown - 355
Kerala - 388 Khor Virap - 367		







ՅԱԲԵԼՈՒԱԾ





ԵՐԿՈՒ ԽՕՍՔ ՅԱԲԵԼՈՒԱԾԻ ՄԱՍԻՆ

Հատորի սկիզբը, «Կը Խօսին Նամակները» նախաբանիս մէջ նշած էի որ Վահրամին գրած շուրջ հարիւր նամակներէս միայն ութ հատին պատճենները գտած էի արխիւներուս մէջ: Յիշած էի նաեւ որ Վ. Մավեանին արխիւները քանի մը տարի առաջ դրկուած էին Հայաստան, Եղիշէ Չարենցի Անուան Գրականութեան եւ Արուեստի Թանգարան, ուր առիթ ունեցայ այցելելու այս տարուան Հոկտեմբերի սկիզբը: Յայտնաբերուեցան քսան չորս նամակ եւս, զորս կը հրատարակեմ այս հատորի «Յաւելուած» բաժնին մէջ: Յոյս ունիմ որ հետագային ի յայտ կու գան նաեւ Մավեանին գրած միւս նամակներս:

Այսու կ'ուզեմ շնորհակալութիւն յայտնել Չարենցի Անուան Գրականութեան եւ Արուեստի Թանգարանի տնօրէն Կարապետ Վարդանեանին եւ ֆոնտապահ Օֆելիա Ուտումեանին, որոնք ազնուօրէն ամէն աջակցութիւն ցուցաբերեցին նամակները գտնելու եւ պատճենահանելու առնչութեամբ:

ԱՍԱՏՈՒՐ ԿԻՒԶԵԼԵԱՆ





ԱՍՏՈՒՐ ԿԻՔԵԼԵԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ ՎԱՀՐԱՄ ՄԱՎԵԱՆԻՆ

ՆԱՄԱԿ 1

Լոնտոն, 12 Դեկտ[եմբեր], 1964

Սիրելի Վահրամ,

Նոյեմբեր 29 թուակիրդ ստացայ Փարիզէն մեկնելէս մէկ օր առաջ: Յանձնարարութիւնդ կատարեցի գրքիդ շապիկին առնչութեամբ: Բիւզանդը [Թօփալեան] թէեւ չխօսեցաւ, բայց խոստացաւ անմիջապէս գործի սկսիլ... սակաւախօս մեր պատուական բարեկամին ԱՅՈՆ եւ ՈՉՂ պետք է գուշակես դեմքի արտայայտութենէն:

Դեկտեմբեր 5ին, մեր ամուսնութեան 7րդ տարեդարձին հասայ Լոնտոն: Ընտանիքին վերամիացումս նոյնքան ուրախացուց մերինները, ինչքան որ Անառակ Որդիին տուն դարձը հրճուեցուցած էր վերջնոյն հայրը...: Կարիւնէն անհաւատալիօրէն մեծցած գտայ ու անուշիկցած: Հիմակուրնէ սկսած եմ մտածել թէ շունի *ճիւտով* լեցուն սա քաղաքին մէջ ի՞նչ կրնայ ըլլալ սա աղջնակին ապագան:

«Արեգակ»ի խմբագրապետութեան հարցը հաւանաբար քանի մը օրէն վերջնական ձեւ ստանայ: Սրբագանին [Պսակ Թումայեան] եւ [Հայկ] Գալուստեանին հետ խորհրդակցական երկու հանդիպումներ ունեցած եմ արդէն: Գալուստեան երկու առաջարկ ներկայացուց ինծի. ա.- Գործին մէջ մտնել որպէս կէս բաժնետէր եւ վնասին ու շահին ըլլալ ընկեր, բ.- Ստանձնել խմբագրապետութիւնը որպէս պաշտօնեայ: Առաջին առաջարկը բնական է չէի կրնար ընդունիլ, քանի որ թերթը տարեկան կարելոր բաց մը ունի. տնտեսական ներկայ անձուկ վիճակս չի ներեր որ նման քայլ մը առնեմ: Երկու օր առաջ Սրբագանը հեռախօսեց եւ յայտնեց որ երկրորդ առաջարկն եթէ ընդունիմ, Գալուստեան մինչեւ յառաջիկայ Մարտ՝ ամսական պիտի չկա-



րենայ վճարել ինձի, քանի որ նախորդ խմբագրին հետ պայմանագրութիւն ունի եւ ստիպուած է անոր ամսական տալ մինչեւ Մարտ: Տրուած պայմաններու տակ ստիպուած եմ ընդունիլ երկրորդ առաջարկի այս տարբերակը... անվճար ծառայութիւնս տեսակ մը հատուցում պէտք է նկատել Անգլիա մուտքս յաջողցնելուն դիմաց: Մարդը վերջին հաշուով իմ Անգլիա մուտքս յաջողնողը եղաւ: Ամսոյս 14ին ժամադրութիւն մը ունիմ Գալուստեանին հետ իր գրասենեակին մէջ. հարցին վերջնական ձեւ ստանալը կախում պիտի ունենայ այդ հանդիպումէն:

Թերթին խմբագրութիւնը ստանձնելու պարագային պէտք պիտի ունենամ քու աշխատակցութեանդ: Առաջին հերթին, անմիջապէս անտիպ քերթուած մը, կամ որեւէ նպատակայարմար գրութիւն հասցուր հասցէիս: Այս կապակցութեամբ պիտի գրեմ նաեւ կարգ մը այլ գրողներու, թե՛ արտասահմանի եւ թե՛ հայրենիքի մէջ ապրող:

Այս համայնքն ալ, ինչպէս մեր միւս համայնքները, կարիքն ունի վերակազմակերպութեան: Հոս ալ ձգտում մը կայ համայնքի մէջ գոյութիւն ունեցող ուժերը տարբեր կազմակերպութիւններու մէջ ցրուելու, փոխանակ զանոնք ի մի բերելու եւ ստեղծելու համագաղութային կեդրոնական կազմակերպութիւն մը: Այս աշխատանքը յաջողութեամբ գլուխ հանելու բոլոր տուեալները կան Լոնտոնի մէջ:

Անցեալ շաբաթ օր «Հայ Տան» Թատերական Յանձնախումբը Քամընուելթ հաստատութեան [Commonwealth Institute] սրահին մէջ ներկայացուց «ԻՆՉ ՈՐ ԿԻՆԸ ՈՒՉԷ ԱՍՏՈՒՄԾ Կ'ԸՆԾԱՅԷ» զաւեշտը, ղեկավարութեամբ [Ասատուր] Օհանեանի: Հաճելի երեկոյթ մըն էր կազմակերպուածը, հակառակ այն իրողութեան որ ներկայացումը հարիւրի վրայ միայն յիսուն կ'արժէր:

Կիրակի օր ներկայ գտնուեցայ Հ.Բ.Ը.Մ.ի Կանանց Օժանդակ Մարմնի թեյասեղանին: Գեղարուեստական բաժնին իր մասնակցութիւնը բերաւ նաեւ Վիվիէնը հայերէն երեք երգերով: Դատելով ծափահարութիւններէն, կարծես երգերը յայտագրի լաւագոյն բաժինը նկատուեցան:

Այսօր ներկայ պիտի գտնուինք Ե[րջանիկ] Միսիրեանի համերգին: Այս առթիւ արդէն [Աւետիս] Մետումենցը Լոնտոն ժա-





մանած է: Յամերգին մասին կը գրեմ քեզի յաջորդիւ:

Վիվիէնը եւ Ալեքսեանները ջերմ ողջոյններ եւ բարեմաղթութիւններ կը յղեն քեզի, իսկ Կարինէն՝ պաշիկներ: Գրէ ինծի շուտով. չմոռնաս «Արեգակ»ին համար ուզածս:

Լաւագոյն զգացումներով

Քոյդ

Ա. Կիւզելեան

ՆԱՄԱԿ 2

[Լոնտոն] 10. 2. [19]65

Սիրելի Վահրամ,

Բարկութենէս չպայթելու համար է որ այս քանի մը տողը կը գրեմ քեզի: Խօսքը կը վերաբերի «Արեգակ»ի Փետրուարի թիւին: Յակառակ մանրակրկիտ եւ բծախնդիր սրբագրութեանց, զորս կատարեցի Փարիզէն դրկուած փորձերուն վրայ («Արեգակ» Փետր[ուար], [19]65), հակառակ բազմաթիւ նամակներու, զորս գրած եմ շեշտելու համար որ փորձերու սրբագրութիւնը անտես չառնուի՝ մեր բարեկամը թերթը տպած է առանց փորձերուն նայելու, սկզբնական բոլոր սխալները պահելով: Հինգ վայրկեան առաջ միայն հեռախօսի ընկալուչը բարկացած վար դրի, երբ Փարիզէն Բիւզանդիս [Թօփալեան] ձայնը ըսաւ. «Վնաս չունի *ճանքըմ*, ասանկ բաներ կ'ըլլան»:

Յատկապէս ջղայնացուց զիս քու բանաստեղծութեանդ փորձին անտեսումը: Երկու կարեւոր տպագրական սխալ կար՝ մէկը վերնագրին մէջ, միւսը 4րդ տունի 3րդ եւ 4րդ տողերուն տեղափոխութեան մէջ: Յատկապէս քու գրուածքներդ - տեղեակ ըլլալով բծախնդրութեանդ, մեծ զգուշութեամբ սրբագրած էի:

Իսկ գալով անգլերէն բաժնին՝ տպագրական սխալներու բանակ մը կայ հոն: Երեկ գիշեր ջղայնութենէս չկրցայ քնանալ:

Գիտեմ որ բացատրութիւններս անիմաստ են եւ եղած սխալը չեն կրնար սրբագրել: Եթէ կ'ուզես յաջորդ թիւին մէջ դարձեալ հրատարակեմ բանաստեղծութիւնդ: Գրէ այս մասին:

Ապրիլի թիւին համար կարեւոր թիւով անգլիացիք եւ ոչ-հայեր նիւթ դրկել խոստացած են: Վեհը [Վազգէն Ա. Պալճեան] հոս է, երթալէն ետք կը գրեմ: Մի նեղանար... ինծի պէս մատդ





կրծե: Սա տպարանի հարցը շուտով կարգադրուէր **տե՛** մենք ալ ազատեիք սա փորձանքէն:

Համբոյրներով՝
Ասատուր

ՆԱՄԱԿ 3

[Լոնտոն] 15. 7. 1965

Սիրելի Վահրամ,

Քանի մը օր առաջ միայն ստացայ *Հայու Բեկորները*: «Արեգակ»ի յաջորդ թիւով ծանուցում մը պիտի հրատարակեմ, որպէսզի «Ստանալու համար» դիմենին: «Հայ Տուն» 7 օրինակ տարի, կարծեմ բոլորն ալ սպառած են արդէն. ահա թէ ինչ կը նշանակէ ժողովրդականութիւն ունենալ: Երէկ մէկը փողոցին անկիւնը 10 շիլինկ տուաւ ձեռքս եւ ըսաւ որ հատ մը դրկեմ իրեն: «Վահրամին հետ շատ **օղի** խմած ենք...» ըսաւ: Աշակերտ-աշակերտուհիներէդ մինչեւ **օղիի** բարեկամներդ *Հայու Բեկորներ* սկսած են հաւաքել...: Գրախօսական մը պիտի գրեմ անշուշտ, բայց ոչ այս թիւով. գլուխ քերելու ժամանակ չունիմ:

Լոնտոնի տագնապին մասին շատ բան չկայ գրելիք. «Արեգակ»ին մէջ գրուելիքները արդէն գրեցիք: Վաղը նոր գրութիւն մը պիտի դրկուի ժողովուրդին՝ «Արեգակ»ի կողմէ. օրինակ մը կը յղեմ օդանաւով:

Հալէպէն դրկած՝ «Էջը ուղտերը կ'առաջնորդէ» *քարտդ...* ո՞վ գիտէ նոր «գիւտ»դ Հալէպի եւ Պէյրութի մէջ քանի՛-քանիներու պատմեցիր եւ բացակայութեանս զիս «ալալի առնել» փորձեցիր: Բարեբախտաբար դրկած նկարիդ Էջը սուրիական էր եւ կիպրականներուն քով քուռակ անգամ չէր կրնար նկատուիլ...: «Չի ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ»: [Ով որ ականջ ունի լսելու՝ կը լսէ]:

Կարօտցանք քեզ, սրիկայ: Լոնտոն գալու միտք չունի՞ս: Չէիր գրած մատուցած «միաձայն» ու «քառաձայն պատարագ»ներուդ մասին: Կը յուսամ ծուխերուդ հարկ եղած միութարութիւնը տուիր:

Թեւ ժամանակը սուղ է, բայց չեմ ուզեր զրոյցս վերջացնել առանց քանի մը խօսք ըսելու քու այն ենթադրութեանդ մասին,





ըստ որում զիս «թերթին տերն ու տիրականը» կը նկատես: Ոչ, *էֆենտիմ*, ոչ: Թերթին առաջին երեսին վերի անկիւնը կը կարդաս. «Խմբագրապետ՝ Յայկ Գալուստեան»: Իսկ էջ 12ի տակը՝ «հիմնադիր արտօնատեր՝ Յայկ Գալուստեան...» այնպէս որ ես ոչ տերն եմ, ոչ ալ տիրականը, ոչ ալ փափաք ունիմ երկուքը միասին՝ կամ մէկն ու մէկը ըլլալու: Անանկ ենթադրէ, որ գրասենեակի պաշտօնեայ մըն եմ: Ներկայիս զիս ամենէն շատ հետաքրքրողը՝ շաբթականներս են...: Այնպէս որ, թերթին բովանդակութեան Գալուստեանն է պատասխանատուն, իսկ սխալներուն՝ Բ[իւզանդ] Թօփալեանը...:

Հիմա լուրջ հարց մը: Ամիս մը առաջ Լոնտոն եկաւ Ռ[ուբէն] Չարեան, որ ունի գիրք մը՝ *Շէյքսպիրը Յայ Իրականութեան Մէջ* խորագրով: Չարեան յայտնի թատերագետ մըն է: Հոյակապ գործ մըն է այս եւ վստահ եմ շահեկան՝ անգլիացի ընթերցողներուն համար: Եթէ գտնուի մէկը, որ կարենայ լաւ անգլերէնի վերածել գործը, կասկած չունիմ որ Oxford հրատարակչատունը սիրով պիտի հրատարակէ զայն: Այս մասին խօսեցայ հետը. արդէն նոյն խնդրի մասին Տոքթ. [Ռոպեր] Ճեպեճեանը՝ գրած էր ինծի: Կրնա՞ս ստանձնել այս աշխատանքը: Մեծ ծառայութիւն մը մատուցած կ'ըլլաս մեր մշակոյթին: Գրէ այս մասին: Եթէ համաձայն ըլլաս, իսկոյն կը գրեմ Չարեանին, որ օրինակ մը դրկէ քեզի:

Մերիները ջերմ բարեւներ կը դրկեն:

Սիրով՝
Ա. Կիւզելեան

ՆԱՄԱԿ 4

[Լոնտոն] 27. 7. [19]65

Սիրելի Վահրամ,

Անմիջապէս չուզեցի պատասխանել նամակիդ, նախքան *Բեկորներու* մասին հաւաստի տեղեկութիւն մը եւ յստակ պատկեր մը ունենալու...: Պետք է ըսեմ որ կարծուածէն աւելի ժողովրդականութիւն շահած ես Լոնտոնի մէջ: Ապացոյց. աշակերտուիկներէդ երկուքը միայն՝ Լուսի Կոստանեան² ու Ա[ստղիկ] Քիւփելեանը չորսական օրինակ ծախած են եւ որպէս





գնահատանքի արտայայտություն՝ իմ գիրքես մեկական օրինակ՝ նուեր ստացած...: Ըստ երեւոյթին դրկուած 28 օրինակները կարելի պիտի ըլլայ սպառել: Այժմ 5-6 օրինակ միայն մնացած է «Հայ Տուն», Պրն. [Յակոբ] Կիրիւնլեանին³ քով: «Արեգակ»ի Օգոստոս համարով յայտարարութիւն մը՝ իսկ Սեպտ[եմբեր]ի թիւին մէջ գրախօսական մը պիտի գետեղեմ: Այնպես որ կրնաս 10 օրինակ մը եւս դրկել առայժմ:

Բեկորներուն կեսը միայն կրցայ կարդալ, հակառակ մեկ շունչով գիրքը աւարտելու ցանկութեանս: Տպաւորութիւնս շատ լաւ է ընդհանրապէս: Կասկած չունիմ որ գիրքը թե՛ արտասահմանի եւ թե՛ հայրենիքի մէջ լաւ ընդունելութիւն պիտի գտնէ: Միայն «Չարթօնք»ի գրախօսականը կարդալու առիթ ունեցայ: «Պայքար» չեն դրկեր մեզի... Պատճա՞ռ: Չեմ գիտեր:

Պոսթոնի «Հայրենիք»էն դրկած կտրոնդ տեսայ: Խաչատուրեանի գործն է... ան ալ սկսաւ մեզի «ալայի առնել»: Հարցուցած ես թե՛ ունի՞մ ազատութիւն թերթը վարելու ճիշդ եւ յարմար տեսած ձեւովս: Չիս հետաքրքրողը ներկայիս... ամսականս է: Անշուշտ սկզբունքային հարցերու մէջ որեւէ մեկուն տուրք չեմ տար: Հաւանաբար ուշադրութիւնդ գրուած է՝ Լոնտոնի տագնապին շուրջ գրուած յօդուածներուն մէջ շեշտը միշտ կը դրուի Ամենայն Հայոց Հայրապետի [Վազգէն Ա. Պալճեան] հեղինակութեան վրայ: Որոշ մարդոց գործին չի գար այս: Խնդիր հանեցին, թե՛ ինչո՞ւ բացառիկին մէջ միայն Վազգէն Կաթ[ողիկոս]ի կոնդակը դրուած է: Եղիշէն [Պատրիարք Տերտրեան] «էշէկ» պիտի ըսեր: Մեր իրականութեան մէջ թերթ մը կրնայ բացարձակապէս խմբագրինը ըլլալ՝ երբ ինքն է *ֆիւնաս*աւորողը զայն: Այնպէս որ, այս պարագային թերթը կ'աշխատիմ պահել հաւասարակշռուած վիճակի մը մէջ, առանց զայն գործիք դարձնելու այս կամ այն խումբի հեռանկարներուն:

Փրոֆ. [Ռուբէն] Չարեանին գրեցի եւ խնդրեցի որ օրինակ մը դրկէ քեզի իր գիրքէն: Եթէ դասախօսութիւնդ չես դրկած ցարդ իրեն՝ դրկէ. գոհ կը մնայ: Չարեանը շատ ազդեցիկ մարդ է Հայաստանի մէջ եւ կրնայ օգտակար ըլլալ քեզի միւս հարցի կապակցութեամբ:

Տագնապի մասին կարդացածներդ 9% իրականութեան կը համապատասխանեն: Անշուշտ, ինչպէս այլուր, հոս եւս տագ-





Նապին ետեւը կան նաեւ անձնական գոյն ունեցող շարք մը տուեալներ, որոնք սակայն հիմնական ազդակներ չեն: Հիմնականը իմ համոզումովս, Նուպարին [Կիւլպէնկեան] թրքահպատակ ըլլալով՝ թուրքերուն հաճելի երեւալու ցանկութիւնն է: Խնամակալութեան միւս անդամները չեն ուզեր, հաշիւներէ դրդուած՝ անոր բարեկամութիւնը կորսնցնել:

Տնեցիները հանգիստ են եւ ջերմ բարեւներ կը յղեն:

Ներփակ կը գտնես անգլերէն գրութիւն մը տազնապի մասին:

Սիրով՝

Ա. Կիւզելեան

ՆԱՄԱԿ 5

[Լոնտոն] 3. 11. 1965

Սիրելի Վահրամ,

Այսօր երբ անձնական նամակներուս թղթածրարը աչքէ կ'անցնէի, անդրադարձայ, որ 1 Օգոստոս 1965 թուակիրդ ձգած եմ անպատասխանի..., մինչդեռ այն տպաւորութեան տակ էի, որ ատենին պատասխանած եմ այդ նամակիդ: Ամէն պարագայի տակ մի մեղադրեր զիս. վերջին ամիսներուն «Եկեղեցական տազնապ» եւ «ազգային կանոնագրութիւն» խաղցանք. խաղ մը, որուն մէջ հանգամանքներու պարտադրանքով բերդապահի պաշտօն տրուեցաւ ինծի:

*Հայու Բեկորներու*դ մասին գրուած գրախօսականները զանազան թերթերու մէջ կարդացի, բոլորն ալ՝ արդարօրէն դրական էին: Հիլտան [Գալֆայեան] անցեալները գեղեցիկ գրախօսական մը դրկած էր «Արեգակ»ին համար: Դեռ չեմ պատասխանած իրեն, չեմ ալ որոշած, թէ պէ՞տք է լոյս ընծայեմ երկու գրախօսականներ յոյն գիրքին մասին՝ մէկը միւսին ետեւէն յոյն ամսագիրին մէջ՝ ահա հարցը: Դուն ի՞նչ կը խորհիս այս մասին: Գրէ՛:

Հաւանաբար լսեցիր, որ ներկայիս, անելի քան ամիսէ մը ի վեր՝ երկու աղջկայ հայր եմ: Անունը Արմինէ դրինք:

Պրն. [Պետրոս] Ալեքսիս ներկայիս կը գտնուի Հայաստան: Հաւանաբար հոն մնայ մինչեւ ամսոյս 17ը:

Այսօր Փրոֆ. Ռ[ուբէն] Չարեանէն նամակ մը ստացայ, որուն





մէջ կը յիշէ, որ Շէյքսփիրի մասին նոր լոյս տեսած իր գիրքէն օրինակ մը դրկած է նաեւ քեզի: Գրած է նաեւ որ իր նամակին չես պատասխանած: Ինչպէս գիտես, Ռ. Չարեանի նախաձեռնութեամբ Երեւանի մէջ հիմնուած է Շէյքսփիրեան գրադարան մը: Արդեօք կարելիութիւն կա՞յ [Գալուստ] Կիւլպէնկեան Յաստատութեան միջոցաւ տարբեր լեզուներով Շէյքսփիրի գործերէն ապահովել եւ դրկել Երեւան: Այս մասին մտածէ եւ գրէ ինծի: Եթէ պաշտօնական դիմում ներկայացնելու հարկ տեսնուի՝ բան մը կ'ընենք: Խորհուրդ կ'ուզեմ այս մասին:

Լոնտոնի մէջ նորութիւններ չկան: Անցեալ ուրբաթ դասախօսութիւն մը տուի «Յայ Տան» մէջ՝ «Նախամաշտոցեան Յայ Գիրի եւ Գրականութեան Առեղծուածը» նիւթին շուրջ... 15 հոգի ներկայ գտնուեցաւ: Դասախօսութեան նախագահեց բարեկամդ՝ Կլարայիս Եսայեան:

Քիչ մը մտատանջութիւն. - Բարեկամներէդ մէկը, որ կարդացեր է գրքիդ մասին գրած գրախօսականս, անցեալ օր ըսաւ. «Մինչեւ հիմա կարդացած գիրքերուս ամենէն կեղծն է *Յայու Բեկորները*: Ես բոլոր այդ տիպարները գիտեմ»: Մարդուն ըսի որ կարելորդ կեղծ կամ ճիշդ ըլլալը չէ, այլ ճշմարտանման ըլլալն է: Գլուխը չմտաւ:

Սիրով՝
Ա. Կիւզելեան

Յ.Գ. «Արեգակ»ին բաներ մը դրկէ:

ՆԱՄԱԿ 6

[Լոնտոն] 12.1.[19]66

Սիրելի Վահրամ,

Յաճոյքով կարդացի 2.1.66 թուակիրդ, մանաւանդ Շէյքսփիրեան գրադարանին դրկուած հրատարակութեանց շուրջ: Փրոֆ. [Ռուբէն] Չարեան շատ խանդավառ նամակ մը գրած էր այդ մասին... դրկուած ծրարներու ստացման ու հաղորդած լուրիդ՝ թէ Շէյքսփիրեան այլ գիրքեր ալ կրնաք դրկել Յայաստան՝ զինք չափազանց ուրախացուցած են: Մեծ հետաքրքրութեամբ կարդացած է *Բեկորները*, զոր շատ բարձր կը գնահատէ որպէս գրական գործ: Շէյքսփիրեան գիրքերու կապակցութեամբ կա-





րելոր հարց մը կայ, զոր կ'ուզեմ յանձնել ուշադրութեանդ: Չարեան ինծի երեք գիրքերու անուններ դրկած է, որոնք կը պարունակեն Շէյքսպիրի մասին լոյս տեսած հրատարակութիւններու ցանկը: Հակառակ կատարած պրպտումներու՝ չկրցայ գտնել ուզուած գիրքերը: Չարեան կը սպասէ յիշեալ գիրքերուն, որոնց հիման վրայ պիտի գրէ [Գալուստ] Կիւլպէնկեան Հիմնարկութեան: Գիրքերուն անունները կը ներփակեմ: Ինչպէս կ'ըլլայ, եթէ Չարեան առաջին հերթին այս գիրքերը ուզէ Հիմնարկութենէն եւ յետոյ, անոնց ընթերցումէն ետք, դրկէ աւելի ընդարձակ գրացուցակ մը: «Ֆոյլզ»-էն սկսած՝ բոլոր կարելոր գրախանութներուն դիմած եմ: Անշուշտ Հիմնարկութիւնն աւելի լայն հնարաւորութիւն ունի այդ գիրքերը գտնելու:

Գլարեգին] Սեւունցի գրախօսականը կարդացի: Չինք անձնապէս ալ լաւ կը ճանչնամ: Հայաստան գտնուած օրերուս քանի մը առիթներով զիս հրաւիրեց իր բնակարանը (փառաւոր բնակարան... հայրենի ամենէն հարուստ մարդոցմէ մէկն է) ձմեռուկ ուտելու: Կինը, Շողիկ Սաֆեանն⁴ ալ գրող է:

Կստահ եմ «Սփիւռք»ի մէջ Հիլտային [Գալֆայեան] գրախօսականը կարդալու առիթ ունեցար: Այդ մասին չէիր գրած:

Գալով **հրաւերիդ** հարցին՝ դարձեալ գրեցի Չարեանին եւ [Թորոս] Թորանեանին, որպէսզի յիշեցնեն [Սփիւռքահայութեան Հետ Մշակութային Կապի] Կոմիտէի տղոց: Ինծի կը թուի որ այս գարնան կամ աշնան կը ստանաս հրաւեր մը: Այս կողմէն ես իմ կարելիս կ'ընեմ. կրնաս վստահ ըլլալ անոր:

Աշակերտներէս մէկը կ'ուզէ գիտնալ թէ ինչպէ՞ս կարելի է դիմել Կիւլպէնկեան Հիմնարկութեան կրթաթոշակի համար: Եթէ կարելի է *ֆորմ* մը դրկէ ինծի:

Հարցուցած ես Փրոֆ. Է[զրաս] Հասրաթեանի մասին: Որքան գիտեմ պատմաբան է. մանրամասնութիւններ չեմ գիտեր իր մասին:

Շնորհակալութիւն բանաստեղծութեան համար: Պէտք է ըսեմ որ շատ դժուար է Լոնտոն նստած՝ Փարիզի մէջ թերթ լոյս ընծայելը: Այս մարդիկ տարօրինակ են. օր մը կը խանդավառուին տպարանի ծրագրով, յաջորդ օր կը կորսնցնեն ամէն հետաքրքրութիւն: Ես ալ ներկայիս հետաքրքրուած եմ շաբա-կաններս առնելով...: Եթէ Հիմնարկութիւնդ իր Լոնտոնի կեդրոնին մէջ մարդու (պաշտօնեայ) պէտք ունենայ... լուր տուր:





Առանց տպարանի այս թերթն *խեղ* չկայ:

Երկու օր առաջ տեսակցութիւն մը ունեցայ Մեթրոփոլիթըն Օփերայի (No.1) երգչուհի Լուսին Ամարայի⁵ հետ Քարլթըն Թաուըր պանդոկին (Carlton Tower Hotel) մէջ: Վաչէ Սեմերճեանն ալ հետս էր: Ամարան Երեւանի, Թիֆլիսի, Մոսկուայի եւ Լենինկրատի մէջ ելոյթներ ունենալէ ետք՝ կը վերադառնար Ամերիկա: Շատ հաճելի աղջիկ մըն է: Լաւ ընդունելութիւն գտած է հայրենիքի մէջ: Ամարան կը նկատուի աշխարհի լաւագոյն *լիրիկ* սփրանսներէն մէկը: Քովոյ կը դրկէի, եթէ հետը անգլիացի *էմբրեսարիօ* մը չունենար...:

Տնեցիները լաւ են եւ կը դրկեն ջերմ ողջոյններ: Պրն. Պետրոսը [Ալեքսեան] ամսավերջին Յնդկաստան կը մեկնի կարգ մը գործեր կարգի դնելու համար: Մարտին կը փոխադրուինք **Նոր տուն**, Յերըտգի քով: Անհամբեր կը սպասեմ այդ օրուան, որ պէսզի կարենամ գրադարանս օգտագործել: Ներկայիս գիրքերս բլրացած են սենեակի մը մէջ:

Նշանեանները Յայաստանէն Կիպրոս վերադարձի ճամբուն վրայ, ամիս մը մնացին Լոնտոն: Այժմ Փարիզ կը գտնուին, Յայր Գիւտի [Նագգաշեան] ինամքին տակ:

Սիրով՝
Ա. Կիւզելեան

ՆԱՄԱԿ 7

[Լոնտոն] 19. 1. [19]66

Սիրելի Վահրամ,

Ամմիջապէս գրեցի [Ռուբէն] Չարեանին քու թելադրութիւններուդ մասին:

Երկու օր առաջ, գրախանութ մը խոստացաւ ապահովել նշուած 3 գիրքերէն միայն մէկը: Արժէ՞քը՝ 25 փաունտ... Այս մասին այսօր գրեցի նաեւ Չարեանին եւ թելադրեցի որ յառաջիկային [Գալուստ Կիւլպէնկեան] Յիմնարկութեան ներկայացուելիք իր գրացուցակին մէջ մուծէ նաեւ այդ 3 գիրքերուն անունները եւ շրջան մը սպասելէ ետք՝ ներկայացնէ երկրորդ ցուցակ մը: Այդ ձեւով քու նշած անպատեհութեան առաջքը կ'առնուի: Հաւանաբար «հագուագիւտ» գիրքեր ծախող գրա-





խանութ մը կարելի ըլլայ գտնել այդ գիրքերը, բայց ես 50-60 ոսկի տրամադրելու կարողութիւնը չունիմ... Եթէ այդքան դրամ ունենայի՝ պատմուածքներու ժողովածուն կամ վէպս կը հրատարակէի: Արդէն իմ *պիւտճէի* խոտոր համեմատող առատածեռութեամբ՝ կարգ մը գիրքեր ապահովեցի ու դրկեցի Երեւան:

Կրնաս վստահ ըլլալ, որ քեզ Հայաստան հրաւիրել տալու ճիգիս մէջ **ալա [Յայր Գեորգ] Կարպիսեան** «անփափկանկատութիւններ» չեմ ըներ: «Փափկանկատ» ըլլալը միայն անգլիական կրթութիւն ստացած անհատներու մենաշնորհը եղող ապրանք մը չէ...:

Շնորհակալութիւն Անգլիայէն կատարուելիք դիմումներու առնչութեամբ տուած տեղեկութեանդ համար:

Գալով Էզրաս եւ Մօրուս Հասրաթեան անուններուն՝ թիրիմացութեամբ չէ որ գրած եմ նշածներս. Մօրուսը շատ լաւ կը ճանչնամ Հայաստանէն: Պատմաբան, Սայաթ-Նովայագետ, միջնադարեան հայ բանաստեղծութեան մեծ մասնագետ: Շփոթութիւնը գիտնական Էզրասի եւ պատմաբան ուրիշ Հասրաթեանի մը հետ է, որ ըրած եմ: Հիմա ամէն բան պարզ է *Բեկորները* ուզողը գիտնական Հասրաթեանն է, Ս[ովետական] Միութեան մէջ *նիւրոֆիզիոլոճի* խոշորագոյն մասնագետներէն մին՝ որ կը վայելէ նաեւ միջազգային համբաւ: Անշուշտ չէի գիտեր, որ գիտնական Հասրաթեանը կը զբաղէր նաեւ գրականութեամբ, ինչպէս որ մինչեւ 1959թ. (այդ տարին Վ[իկտոր] Համբարձումեան այցելեց Հնդկաստան), չէի գիտեր, որ Համբարձումեանը կ'ուսումնասիրէր նաեւ հնդկական փիլիսոփայութիւնն ու կրօնքները... «Տարօրինակ, բայց իրաւ» պիտի գրէր [Անդրանիկ] Ծառուկեան:

Հիլտային [Գալֆայեան] նկատմամբ շատ մեղաւոր եմ. աղջկան դեռ չեմ գրած, ոչ ալ «Սփիւռք»էն օրինակ մը դրկած եմ... այսքան ալ անազնութիւն կ'ըլլա՞յ: Իր գրախօսականը ես ալ հաւնեցայ: Գրած էր **սրտով**՝ առանց *փրոֆեսիոնալ* գրախօսական «պատրաստող»ներու կեղծ շեշտէն վարակուած ըլլալու: Մինչեւ հիմա դեռ չի գիտեր, որ գրախօսականը լոյս տեսած է:

Արձակուրդիդ մէկ մասը անպայման Լոնտոն անցուր. առանձնութենէն ես ալ մեռայ: Գիտես որ մարդ կրնայ նոյնիսկ ամբոխին մէջ առանձին զգալ ինքզինք, երբ չկան գաղափա-





րակից (բառը գործածեցի նոյն հետաքրքրութիւններն ունեցող անհատ իմաստով) անձեր:

Հաւանաբար նոր տուն փոխադրուիք Մարտի վերջաւորութեան: Հասցեն կը դրկեմ: Տնեցիները ջերմապէս կը բարեւեն:

Սիրով՝
Ա. Կիւզելեան

ՆԱՄԱԿ 8

Լոնտոն, 13 Յուլիս, 1966

Սիրելի Վահրամ,

South Kensington-ի մէջ սրճարանէ մը կը գրեմ քեզի: Երեկ ստացայ «համով հոտով» 9 Յուլիս թուակիրդ: Ատենին ստացած եմ նաեւ ճիւղալթարեան բացիկդ, իսկ աւելի կանուխ՝ պաղտատեան ողջոյններդ:

Նախ կ'ուզեմ գրել կարեւոր **հարցիկ** մասին:

Կը զարմանամ, որ ցարդ հրաւեր չես ստացած համագումարին ներկայ գտնուելու համար: Փրոֆ. Ռ[ուբեն] Չարեանը ատենին գրած էր, որ հրաւիրեալներու ցանկին մէջ է անունդ: Այսուհետեւ սովետահայ մամուլին մէջ լոյս տեսած գրութիւնները... քու մասիդ՝ ա՛լ կասկած չձգեցին, որ համագումարին «սահմանափակ թիւով» հրաւիրուած արտասահմանեան գրողներու ցանկը քեզմով սկսած պէտք էր ըլլար: «Սովետական Գրականութիւն»ը նկարդ, կենսագրութիւնդ, գործերուդ վերլուծումին (հակիրճ կերպով) նուիրուած գրութիւն մը եւ քեզմէ երեք պատմուածք հրատարակած էր:

Ամէն պարագայի տակ, հետեւեալ պարագան նկատի ունեցիր: Համագումարը պիտի սկսի Սեպտեմբերի վերջաւորութեան: Այդ շրջանին համար որեւէ կարգադրութիւն մի ըներ: Ես բացարձակապէս համոզուած եմ, որ հրաւեր-նամակ մը կը ստանաս այս օրերուն: Քանի մը օր առաջ այդ մասին գրեցի Անահիտ Սահինեանին: Յիշեմ թէ ինչո՞ւ Անահիտին գրեցի: Երկու ամիս առաջ խումբ մը հայեր այցելեցին Լոնտոն. անոնց մէջ էր նաեւ Անահիտը: Քու մասիդ խօսեցայ իրեն. ըսաւ որ *Բեկորներու*դ մասին դրական շատ բան կարդացած է, գիրքը սա-





կայն անձնապես ընթերցելու պատեհութիւն չէ ունեցած:

Անահիտէն տասն օր առաջ նամակ մը ստացայ, որով կը յայտնէր թէ Սփիւռքահայութեան Յետ [Մշակութային Կապի] Կոմիտէն գիս Հայաստան կ'ուզէ հրաւիրել համագումարի օրերուն. անշուշտ ոչ որպէս համագումարի պատգամաւոր: Մինչեւ Սոսկուա իմ ծախսովս պիտի ճամբորդէի՝ այնուհետեւ պիտի ըլլայի Կոմիտէին հիւրը: Այս կապակցութեամբ պատասխանեցի իրեն եւ ի միջի այլոց գրեցի որ հետաքրքրուի Փրոֆ. [Ռուբէն] Չարեանի ըրած յայտարարութեամբ՝ քեզ հրաւիրելու գծով: Դեռ պատասխան չեմ ստացած:

Երկու օր առաջ Կոմիտէն պաշտօնական հրաւիրագիր մը ստացայ, որուն այս օրերուն պիտի պատասխանեմ: Ըսեմ նաեւ՝ որ դեռ չեմ որոշած թէ պիտի երթամ՝ հայրենիք Սեպտեմբերին: Քիչ ետք կը պարզեմ թէ ինչո՞ւ:

Անգամ մը եւս կ'ուզեմ շեշտել, որ անպայման քեզ պիտի հրաւիրեն այս աշնան. արդ՝ ըստ այնմ կարգադրութիւններ ըրէ:

Էջմիածինի մէջ գումարուելիք «խմբագիրներու ժողովէն» լուր չունիմ. հաւանաբար կրօնական բնոյթ ունեցող թերթերու խմբագիրները պիտի հաւաքուին Էջմիածին: Հոս կ'արժէ նշել՝ որ «Արեգակ»ն ալ, լոնտոնեան կարգ մը շրջանակներու կողմէ (հրաւամբ) կոչուած է «կրօնական թերթ»:

«Արեգակ»ը հիւանդ է: **Բուն խմբագիրը** որոշեց (որոշում մը որ երկու տարի առաջ առնուած պետք էր ըլլար) Օգոստոսին փակել թերթը: Այս կապակցութեամբ ամբողջ «մեղքը» պիտի նետենք [Բիւզանդ] Թօփալեանին վրայ: «Մենք հակառակ նիւթական գոհողութիւններու՝ պիտի ուզէինք շարունակել «Արեգակ»ը, բայց *թէքնիք* դժուարութիւններու պատճառով...» մնացեալը գիտես:

Ստիպուած նոր գործի մը ետեւէն պիտի իյնամ: Կացութիւնը այնքան փայլուն չէ. անձնական գործ սկսելու կարելիութիւն չկայ ներկայ պայմաններու մէջ: Հաւանաբար գիտես որ Հնդկաստան իր դրամը արժեքագրկեց. անկախ այդ հանգամանքէն՝ մինչեւ հիմա Վիվիէնի դրամներէն դուրուշ մը անգամ չէ եկած Լոնտոն: Պրն. Պետրոսը [Ալեքսեան] իր ունեցածը կապեց նոր տունին (շուրջ 45,000 սթերլին արժեց): Այս պայմաններու մէջ անհրաժեշտ է աշխատիլ եւ ընտանիք պահել: Ոչինչ.





«մօտ է գարունը». մի բան կանենք էլի:

Վերոգրեալ պարագաներու հետեւանքով հայրենիք երթալս թեական է:

Գալով «Ազդարար»ի հարցին՝ կրնամ հետեւեալ վաւերական տեղեկութիւնները հաղորդել քեզի.

Մեսրոպ Սեթի (սխալմամբ Սեթ Մեսրոպեան գրած էիր) արխիւները եւ գիրքերու զգալի մէկ մասը ինչպէս գիտես, որպէս սովորական թուղթ ծախուած են հնավաճառներու: Բայց «Ազդարար»ի հաւաքածոն այդ բարբարոսութեան զոհ չգնաց: Ս. Սեթը զայն նուիրեց Կալկաթայի եկեղեցիին, իսկ այս վերջինն ալ՝ իր հերթին 1947ին (?) հաւաքածոն դրկեց Երեւանի Պետական Մատենադարանին Փրոֆ. Ա[շոտ] Աբրահամեանի միջոցաւ: Այդ հաւաքածոն պակասաւոր չէ: Լրիւ հաւաքածոյ մըն ալ գոյութիւն ունի Ս[ուրբ] Ղազարի մէջ: Գիտէի նաեւ Նոր Զուղայի «Ազդարար»ներուն մասին, սակայն կ'անգիտանայի անոնց պակասաւոր ըլլալու պարագան: Շատ լաւ գաղափար է վերահրատարակելու (*ֆոթոմեքանիք* միջոցներով) առաջադրութիւնը:

Վաչէն [Սեմերճեան] ամսոյս 10ին ձգեց Լոնտոնը: Ատիս-Ապեպա իր ճամբուն վրայ 15 օր պիտի մնայ Գերմանիա՝ նոյնքան օրեր ալ՝ Պէյրութ: Վերջին Ուրբաթը միասին անցուցինք: Ճաշեցինք South Kensington-ի արաբական Serabia ճաշարանը, ուր 1960ին անգամ մը հետո՞ ճաշած ենք, յետոյ West End թափառեցանք: Լաւ երիտասարդ մը եւ բարեկամ մը կորսնցուցի Լոնտոնի մէջ՝ իր մեկնումով: Յաճախ միասին կ'ըլլայինք. մեր խօսակցութեան գրեթէ միշտ «քիթդ կը խոթէիր նաեւ դուն...»:

Կիրակի օր, Տոքթ. [Յամբար] Քէրիկեանը խօսեցաւ «Յայ Տուն»ի մէջ՝ գրականութեան մասին: Գրական հարցերու մէջ (իմ տպաւորութիւնս է այս) մակերեսային է: Դասախօսութենէն ետք երբ կարգը հարց-պատասխանի եկաւ՝ հարցուցի թէ ի՞նչ կը մտածեր սփիւռքահայ գրականութեան ապագայի մասին: Կարծիքը բացասական էր: Ըսաւ որ արժեքաւոր գեղարուեստական ոչ մէկ գիրք լոյս տեսած է արտասահմանի մէջ: Ըսի իրեն՝ որ ըրած ընդհանրացումը ամբողջութեամբ ճիշդ չէր եւ օրինակ բերի *Բեկորները*: Բանից դուրս եկաւ, որ «գիշերային» բարեկամներ եղած էք: «Ես Վահրամը լաւ կը ճանչնամ», ըսաւ.





«միասին cabaret ալ գացած ենք... իր աղջիկներէն ես օգտուած եմ»:

- Վահրամիս գիրքը գրական գործ կարելի չէ սեպել, - ըսաւ:

Անշուշտ ես չհամաձայնեցայ հետը եւ ըսի, որ *Բեկորները* Յայ Սփիւռքի գեղարուեստական արձակի լաւագոյն սմուշներէն է եւ ունի գեղարուեստական մնայուն բնոյթ ու արժէք:

* * *

21. 7. 66

Նամակս ստիպուեցայ ընդհատել 7 օրով. անակնկալօրէն Թորոս Թորանեանը եկաւ Լոնտոն: 4-5 օր միասին անցուցինք: Խօսեցանք նաեւ քու մասին. ըսաւ որ գրած է քեզի: Այժմ Փարիզ կը գտնուի:

Երէկ գիշեր աճապարանքով «Արեգակ»ին դամբանականը գրեցի: Այսօր գացի [Յայկ] Գալուստեանին քով եւ կարդացի: Յիմա միտքը դրած է քանի մը հարուստներով տպարան մը բանալ (հայերէն-անգլերէն): Այդ պարագային կարելի է լաւ շաբաթաթերթ մը հրատարակել, պայմանաւ որ թերթի աշխատանքներուն մէջ քիթերնին չխոթեն...:

Երէկ ստացայ նաեւ [Օմար] *Խայամը*, [Յովսէփ] Միրզայեանի⁶ հոյակապ թարգմանութեամբ. շնորհակալութիւն:

Դեռ նոր տուն չենք փոխադրուած. կը յուսանք Օգոստոսին իրագործել այդ «երազը»:

Եթէ կարենամ գործերը ըստ պատշաճի դասաւորել՝ միասին Յոկտ[եմբեր]ը կ'անցընենք հայրենիքի մէջ... այն ատեն կարելի կ'ըլլայ սլավոնական ծեսով «քառաձայն պատարագ» մըն ալ ընել:

Առ այժմ այսքան:

Նամակներդ շարունակէ գրել մեր տան նախկին հասցեով՝

33, Egerton G[ar]d[en]s.

S.W.3

Եղբայրական սիրով՝
Ասատուր

Յ.Գ. Անկանոն նամակիս համար ներողամիտ գտնուիր:





ՆԱՄԱԿ 9

Telegram [LONDON] 28 FEB[RUARY] [1]967
 MAVIAN GULBENGIAN FOUNDATION LISBON
 KATALOGE GHERGETSI VEHEN SDATSA NOR HERAKIR
 AMEN KAYL GARNOUTI VAJARKE ARKILELOU AYSOR VAGHE
 SHAHEN GE HASNI LONDON [HARTSE] VOSTIGANOUTIAN
 YEV TADARANIN HANTSNVATSE VEHE [SOVEDAGAN] TES-
 BANADAN MITCHOTSOV POGHOKATSE

GUZELIAN

Յեռագիր [Լոնտոն] 28 Փետրուար [1]1967
 Մավեան Կիւլպենկեան Զիմնարկութիւն Լիզպոն
 Զարթալոկը դրկեցի: Վեհէն [Վազգէն Ա. Պալճեան] ստացալ
 նոր հեռագիր:

Ամէն քայլ կ'առնուի վաճառքը արգիլելու: Այսօր վաղը Շա-
 հէն [Աճեմեան] կը հասնի Լոնտոն: Ոստիկանութեան եւ դատա-
 րանին յանձնուած է [հարցը]: Վեհը [Սովետական] դեսպանա-
 տան միջոցով բողոքած է:

Կիւզելեան

ՆԱՄԱԿ 10

[Լոնտոն] 2/3/[19]67

Սիրելի Վահրամ,
 Ստացալ էքսփրէս նամակդ: Անմիջապէս հեռագրեցի քեզի,
 որ կարդաս այսօրուան անգլերէն թերթերը:

Ձեռագիրներու կապակցութեամբ հետեւեալ իրողութիւննե-
 րը կը յանձնեմ ուշադրութեանդ:

1.- Երէկ Սրբազանը [Պսակ Թումայեան], [Զայկ] Գալուստեանը,
 [Տէյվիտ Մարշըլ] Լանկն ու ես ներկայացանք փաստաբանին, որ
 հետեւեալ իմաստով նամակ մը յղեց Sotheby's-ին.- Մինչեւ Ուր-
 բաթ, 3 Մարտ ժամը 10ը պէտք է Sotheby's-ը յայտնէ ձեռագրերը
 վաճառողին անունը եւ միաժամանակ գրաւոր յանձնառու ըլլայ
 Մարտ 14ին չվաճառել ձեռագրերը, քանի որ անոնք սեպիականու-





թիւնն են Երուսաղէմի Հայոց Պատրիարքարանին եւ հեռացուած են հոնկէ առանց Պատրիարքի [Եղիշէ Տէրտէրեան] եւ իրաւագոր մարմնի մը գիտակցութեան եւ հաւանութեան:⁷ Հակառակ պարագային, Ուրբաթ ժամը 12ին Պսակ Արքեպիսկոպոս [Թումայեան], Կաթողիկոսի [Վազգէն Ա. Պալճեան] ներկայացուցիչը եւ Ազգ[ա-յին] Եկեղեցական Խորհուրդը injunction պիտի բերեն դատարանով:

2.- Փաստաբանին թելադրութեամբ Եղիշէ Պատրիարքին յղուեցաւ հետեւեալ իմաստով հեռագիր մը.- «Անմիջապէս սոյն լիազօրագիրը հեռագրել մեր փաստաբաններուն - կը լիազօրեմ ձեզ իմ անունովս անգլիական դատարաններու մէջ injunction բերել Sotheby's-ի դէմ արգիլելու համար 23 հայերէն ձեռագրերու վաճառքը Մարտ 14ին: Ձեռագրերը սեպհականութիւնն են Երուսաղէմի Պատրիարքարանին, ուրկէ գողցուած են»:

Հեռագրի վերջաւորութեան աւելցուեցաւ, **որ ինք անձամբ անմիջապէս գայ Լոնտոն:**

Այս հեռագրին պատճենը յղուեցաւ Վեհին եւ թելադրուեցաւ, որ նոյնիմաստ հեռագիր մըն ալ ինք յէ Պատրիարքին:

3.- Լանկը պատրաստած էր press release մը, որը ներկայացուեցաւ փաստաբաններուն եւ կարգ մը փոփոխութիւններով յղուեցաւ բոլոր լրատու գործակալութիւններուն: Գրեթէ բոլոր անգլիական թերթերը գրեցին այդ մասին: Այս առտու B.B.C.-ին լուրերու բաժնին մէջ անդրադարձաւ նոյն հարցին:

4.- Երէկ գիշեր ժամը 11:30ին գացի Սրբազանին քով, որոշելու համար թէ ի՞նչ քայլ կարելի է առնել՝ եթէ Երուսաղէմէն լուր չգայ: Ժամը 12:30ին խօսեցանք Վեհին հետ, որ տակաւին կը գտնուէր իր գրասենեակը (Երեւանի ժամով առտուան ժամը 4ին): Վեհափառը յայտնեց, որ ամբողջ Երեւանի ժողովուրդը, մանաւանդ մշակութային հիմնարկներու պատասխանատուները սարսափելի յուզումի մէջ են անհաւատալի այդ լուրէն ետք: Վեհը կարդաց այն հեռագիրը, զոր Եղիշէն ղրկած էր իրեն, թէ Շահէն [Աճեմեան] շուտով կը հասնի Լոնտոն:

5.- Այս առտու Գիւտը [Սրբազան Նազգաշեան] հեռախօսեց եւ կարդաց Երուսաղէմէն ստացուած հեռագիր մը, որով Եղիշէն յայտնած է թէ այսօր (2. 3. [19]67) Շահէն փաստաբանի մը ընկերակցութեամբ եւ վաւերական բոլոր փաստաթուղթերով





Եւ լիազօրագրերով կը մեկնի Լոնտոն՝ Փարիզի վրայով: Սերով-բէ Սրբազանին [Մանուկեան] յայտնեցի, որ թէ՛ մեր փաստաբանը եւ թէ Լանկը կարելոր կը նկատեն, որ Փրոֆ. Ս[իրարփի] Տեր-Ներսեսեան⁸ անմիջապէս գայ Լոնտոն: Սերովբէն «հրաւիրեցէք թող գայ», ըսաւ: Յայտնեցի իրեն որ թող անմիջապէս գայ «որպէս իմ անձնական հիւրս»: Այսօր յայտնի կ'ըլլայ՝ ըստ իս այդ հարցը:

Քեզի գրած պահուս կը փորձեմ հեռախօսել Փարիզ եւ որպէս պատասխան ձայնաժապաւէնէն ձայն մը կ'ըսէ. «Lines to Paris are engaged»: [Յեռաձայնի գիծերը դէպի Փարիզ զբաղ են:]

Անմիջապէս որ Շահէն հասնի, կը հեռագրեմ քեզի:

Հարցով մը շատ մտահոգ եմ եւ կ'ուզեմ գիտնալ պատասխանը: Եթէ մեր բոլոր ճիգերէն ետք Sotheby's-ն յաջողի աճուրդով վաճառել ձեռագրերը՝ պիտի կարենա՞նք գնել զանոնք: Այս մասին եւ Շահէն գալէն ետք պիտի հեռագրեմ Վեհին՝ հետեւեալ թելադրութիւնը ընելու համար: Անմիջապէս դիմել մեր բարեսիրական կազմակերպութիւններուն եւ շուրջ 100-150 մեծահարուստներու, որպէսզի գումար մը գոյացուի Լոնտոնի մէջ՝ ի պահանջել հարկին այդ ձեւով փրկելու համար ձեռագրերը: Թերթերու մէջ տրուած ձեռագրերու նիւթական արժէքը շատ չափազանցուած է: Առաջարկս հաւանաբար նկատես շատ երեզային... ուրիշ ելք ունի՞նք: Մեր ժողովուրդի հայրենասիրական բնազդը վտանգներու ժամանակ հրաշքներ գործած է յաճախ...: Յոյս ունիմ որ հարցը «հրաշք գործելու» չի հասնիր: Կրնայ ըլլալ որ հրաշքը այս անգամ չգործուի:

Գալով ամենէն կարելոր ինդրին՝ չամչցար 5 տոլար դրկելու...: Ուրեմն Լիզպոնէն **գիրք-միրք** ուզենք *ՆԷ* հաշուեցո՞յց պիտի դրկես: 5-նոցը ապահով պահած եմ, որպէսզի միւս անգամ գալստեան քում Լոնտոն՝ միասին Սարգիսին քով *քէպաս* ուտենք:

Սիրով՝
Ա. Կիւզելեան

ՆԱՄԱԿ 11

Լոնտոն, 12 Մարտ, 1968

Սիրելի Վահրամ,





Շնորհակալութեամբ ստացայ *Յայու Բեկորներու* հայաստանեան հրատարակութիւնը, ինչպէս նաեւ 7 Մարտ թուակիրդ:

Նախ [Տէյվիտ Մարշըլ] Լանկի մասին: Քիչ առաջ հեռաձայնեցի իրեն. խօսեցանք շուրջ կէս ժամ: [Արա] Կիւլերի նկարներէն չափազանց գոհ է: Միջանկեալ ըսեմ, որ ամսու 5ին «Great Br[ita]in] - U.S.S.R. Society»ի նախաձեռնութեամբ Լանկը դասախօսեց Յայաստանի մասին: Նախորդ դասախօսութիւններուն հետ համեմատած՝ այս լաւ էր: Հակառակ անոր որ ունկնդիրներուն մէջ կային արտաքին գործոց նախարարութեան ներկայացուցիչներ՝ Փրոֆ.ը քանի մը անգամ հարուածեց թուրքերը եւ քննադատեց արեւմտեան պետութիւններու որդեգրած դրական կեցուածքը անոնց հանդէպ: Լուսարձակով ցուցադրեց պատմական Յայաստանէն յուշարձաններ: Աւերակներու մէջ կար նաեւ Փրոֆ. [Charles] Burney-ի լուսանկարը: Վերջինս անգլիացի գիտնական մըն է, (որուն մասին գրած ես արդէն նամակիդ մէջ) ըստ Լանկի վկայութեան, որ հայ ժողովուրդի հանդէպ ունեցած իր համակրանքը չի ծածկեր, որուն հետեւանքով թուրքերը մեծ դժուարութիւններ կու տան իրեն...: Հաւանաբար, դարձեալ ըստ Լանկի, այսուհետեւ թոյլ չտան՝ որ աշխատի Արեւմտեան Յայաստանի ակերակներուն մէջ:

Մարտ 5ի դասախօսութենէն ետք այս բոլորը պատմած էր ինծի հասկնելով որ կ'արժէր Յայաստան այցելելու կարելիութիւններ ստեղծել Փրոֆ. Burney-ի համար: Սրիկան ինծի չըսաւ այն ատեն, որ արդէն [Գալուստ] Կիւլպէնկեան Հիմնարկութեան դիմած է Burney-ն: Այսօր հեռախօսի վրայ ըսի իրեն, որ Հիմնարկութիւնը որոշած է Burney-ի ճամբու ծախսը վճարել ի Յայաստան: Տեղեակ էր եղած կարգադրութենէն:

Փրոֆ.ը Ապրիլ 1ին պիտի մեկնի Յայաստան: Ըսաւ որ իր շնորհակալութիւններուն հետ՝ ջերմ ողջոյնները յղեմ քեզի:

Ի միջի այլոց ըսեմ, որ [Զարլզ] Տաուսէթն ու ան շուն ու կատու եւ: Կիւլպէնկեան Հիմնարկութեան մեծագոյն իրագործումներէն մէկը, ըստ Լանկին, Տաուսէթը Օքսֆորտ տեղափոխելը եղած է...

Տաուսէթի մասին մինչեւ այսօր դրական կարծիք չեմ լսած ո՛չ իր աշակերտներէն, ո՛չ ալ պաշտօնակիցներէն: Miss Morgan, ամերիկացի աղջիկ մը, Օքսֆորտի մէջ կը հետեւի Միջին Արեւելքի պատմութեան: Կը սորվի նաեւ հայերէն: Անցեալ





տարեշրջանին հայերէնի որպէս դաս՝ թարգմանած են վեց էջ... միայն: Օր. Մորկըն ամիսը երկու անգամ Օքսֆորտէն կու գայ քովս, որպէսզի սրբագրեմ իր կատարած թարգմանութիւնները: 15 օր առաջ, երբ դարձեալ եկաւ քովս, խեղճ աղջիկը արտասուեց: Ըստ երեւոյթին, Տաուսէթ ամէն խոչընդոտ կը յարուցէ, որպէսզի աղջիկը ձգէ Օքսֆորտը:

Նոյն դժգոհութիւնները լսեցի նաեւ Կորին Վարդապետէն [Պապեան]:⁹

Վերջին նորութիւնը (Լանկէն եկաւ այս լուրը) այն է, որ անցեալները Տաուսէթ իր առաջին դասախօսութիւնը տուած է Օքսֆորտի մէջ, նիւթ ունենալով՝ «Why Armenia?» ըստ Լանկի՝ he has made a number of uncalled-for remarks! [ան ըրած է կարգ մը անտեղի նկատողութիւններ]:

[Սփիւռքահայութեան Զետ Մշակութային Կապի] Կոմիտէն Զայաստանէն նամակով մը յայտնած է, որ պատրաստ է Պարի կամ Երզնի-պարի անսամպլը դրկել Լոնտոն: Կոմիտէն յանձն կ'առնէ վճարել երթուղարձի ծախսը: Չանազան-զարմանազան խմբաւորումներու բաժնուած այս համայնքը չեմ կարծեր որ կարենայ նման ձեռնարկ մը յաջողցնել: Նամակը յղուած է [Յայկ] Գալուստեանին, որպէս «Յայ Տան» վարչութեան ատենապետ: Շատոնց չեմ տեսած զինք: Վաղը կ'ուզեմ քովը երթալ եւ հետեւեալ առաջարկը ներկայացնել իրեն:

Անսամպլի հիւրանոցի եւ ընթացիկ ծախսերը կը հոգայ ինք: Ելոյթներու կազմակերպումը կը յանձնենք Վիկտոր Զուխ-հաուզրին (հրեայ *Էմբրեսարիօ* մը), որ կը ստանայ իր շահաբաժինը: Գոյացած շահէն ես կը ստանամ 25% իմ աշխատանքիս դիմաց, իսկ մնացեալը կ'ըլլայ իր շահը: Վնասելու պարագային՝ ամբողջ վնասը կը վճարէ ինք՝ Գալուստեանը: Անշուշտ իմ գործս պիտի ըլլայ համոզել զինք, որ նման ձեռնարկ մը չի կրնար շահ չապահովել: Վրացական պարի խումբը մէկ տարուան մէջ երկու անգամ բերուեցաւ Անգլիա եւ ամբողջ ամիս մը Ալպերթ Զոլի մէջ ելոյթ ունեցաւ լեցուն սրահով: Զուխհաուզր առնուազն £25,000 շահեցաւ այդ ձեռնարկէն:

Անշուշտ ձեռնարկը կ'արձանագրէ մեծ վնաս՝ եթէ «հայկական գլուխով» կազմակերպութիւն մը ղեկավարէ զայն:

Արդիւնքի մասին կը գրեմ:

Երեկ գիշեր Արսէն Վ[ա]րդ[ապետ] Պերպերեանը (էջմիածնա-





կան վարդապետ մը՝ Ս[ուրբ] Սարգիս եկեղեցւոյ հովիւը), շուրջ 20 երիտասարդներ հրաւիրած էր երիցատուն, որպէսզի հանդիպին [Եորկըն] Անտերսընին: «Յայկական դատ» հոլովեցիկը մինչեւ կէս գիշեր: **Աման** Աստուած, ի՛նչ կարծիքներ, ի՛նչ գոռում գոչումներ, զէնքով Թուրքիան գրաւելու սպառնալիքներ...: Կային նաեւ դաշնակցականներ, որոնք ոչ միայն կը «պահանջէին» Արեւմտեան Յայաստանը, այլ կը պնդէին որ Ս[ովետական] Յայաստանն ալ «ռուսերէն պետք է ետ առնենք»:

Մարդը ապշած շուրջը կը նայէր անընդհատ: Վերջաւորութեան այն միտքը յայտնեց, թէ ներկաները իրենք իսկ յստակօրէն չէին գիտեր՝ թէ ի՛նչ էր ուզուածը եւ որմէ՞ կ'ուզուէր...

Իտալացի փրոֆ.երու մասին կարդացի «Յառաջ»ին մէջ: Լաւ է:

«Յայրենիքի Ձայն» կը դրկեն ինծի: Թերթը կանոնաւորաբար չեմ ստանար: Անցեալ տարի 35 թիւ միայն ստացայ: Յամարներէն ոմանց մէջ հաճոյքով... երկրորդ անգամ ըլլալով՝ կարդացի արտատպումներ *Բեկորներէն*:

Ստեփանին [Ալաճաճեան] անպայման կը գրեմ: Շնորհակալութիւն հասցէներուն համար:

Ներփակ յայտագիրը թերեւս հետաքրքրէ քեզ: Երեկ գիշեր ժամը մէկին B.B.C. կը լսէի. լուրերու բաժնին մէջ ըսուեցաւ, որ անցեալ տարի Գ[ալուստ] Կիւլ[պէնկեան] Յիմնարութիւնը £5,000,000 ծախսած է:

Ձերմ բարեւներով եւ սիրով՝
Ա. Կիւզելեան

ՆԱՄԱԿ 12

Լոնտոն, 15 Նոյեմբեր [19]68

Սիրելի Վահրամ,

Յայաստանէն վերադարձայ ամսոյս 4ին հրաշալի տպաւորութիւններով: Աւելի կանուխ ուզեցի գրել, սակայն վերջին նամակիդ յանձնառութիւնը երկար ժամանակ խլեց...: Վերջապէս անկարելին կարելի ըրի եւ պահանջուած յօդուածը ապահովեցի, զոր կը գտնես ներփակ: Ներփակ կը գտնես նաեւ Hubert Evans-ի մասին տեղեկութիւններ, զորս ընդօրինակեցի *Who's*





Who-էն: Բարի գտնուիր ձեր գրասենեակի յարմարութիւններէն օգտուելով՝ յօդուածէն օրինակ մը դրկել ինծի (photo copy):

2750ամեակի տօնակատարութիւններու մասին անպայման կարդացած կ'ըլլաս: Անմոռանալի օրեր ապրեցանք: Հոն էին բոլորը՝ Պաւել Լիսիցեան,¹⁰ Էգրաս Հասարթեան, Սուրէն Զոչար,¹¹ [Մարշալ Յովհաննէս] Բաղդամեան,¹² [Մարշալ Համագասայ] Բաբաջանեան¹³...: Ձերմ բարեւեր յղեցին երկու Հասարթեանները:

Ստեփանիս [Ալաճաճեան] հետ քանի մը անգամ տեսուեցայ: Ռուբլիի պէտք չունեցայ, բաւական *հոնորար* ստացայ, զոր մուշտակի վերածեցի ի նպաստ Վիվիէին:

Ժամացոյցը անձնապէս չկրցայ գտնել. քանի մը անգամ յիշեցուցի Ստեփանին... արդիւնք չտուաւ:

Գալով Ռ[աֆայէլ] Արամեանին՝ [Մարտիրոս] Սարեան չբերաւ... տղաքը ըսին արդէն որ Սարեան չի բերեր: Բերաւ ուրիշ նկար մը՝ գործ անձանօթ հեղինակի մը, զոր պահած եմ քովս: Քանի մը անգամ յիշեցուց, որ ընդարձակ յօդուած մը կը պատրաստէ գրքիդ մասին: Յուսամ Սարեանի ճակատագրին չ'արժանանար այս վերջինն ալ: Անկեղծ ըլլալու համար ըսեմ, որ տղան լաւ տպաւորութիւն ձգեց վրաս. թերեւս միակ թերութիւնը խոստումները 100% չյարգելն է: Վեց ամիս [Գալուստ] Կիւլպէնկեան Հիմնարկութեան մէջ աշխատանք՝ եւ այդ թերութիւնը կը շոգիանայ...:

Այնքան բան կայ պատմելիք, զոր միայն կարելի է պատմել...:

Թորոսին [Թորանեան] յանձնեցի նամակդ: Կրցանք միայն երկու անգամ տեսակցիլ: Ձերմ բարեւեր յղեց: Ձերմ բարեւեր յղեցին նաեւ Գեորգ Էմինը, Հրաչեայ Յովհաննիսեանը եւ ուրիշներ ու ուրիշներ, որոնց բոլորին անունը յիշել անհրաժեշտ չեմ գտեր: Գեորգը պատմեց մոսկովեան ձեր արկածախնդրութեան իր ... տարբերակը: «Ճիշդ է, ըսի, որ աղջիկը դուն յաջողեր ես բերել սեղան, բայց Վահրամը հասցուցեր է... տուն»:

«Սեղան բերելն էր դժուար գործը», եզրակացուց:

Ի միջի այլոց ըսեմ, որ բազմաթիւ առիթներով խմեցինք կենացդ եւ «երանի հոս ըլլար»ներ արտասանեցինք բազմիցս:

Վստահ եմ, որ յաջորդ Սեպտեմբերին դարձեալ կը «կանչեն քեզ» [Յովհաննէս] Թումանեանի 100ամեակին առթիւ: Ինծի ըսին որ գիս պիտի «կանչեն», բայց դժուար թէ կարենամ երթալ: Պրն. [Պետրոս] Ալեքսիս կը ծրագրէ ընտանիքի միւս ան-





դամները տանիլ հայրենիք Սեպ[տեմբեր]ին:

Կարենոր հարց մը, որուն շուրջ կարծիքդ կ'ուզեմ: Սփիւռ-քահայութեան Յետ] Մշ[ակութային] Կապի Կոմիտէն շատ խնդրեց ինձմէ, որ աշխատանք տանիմ հոս տպագրական մեքենայ մը ապահովելու համար իրենց: Մեքենան կը տպէ գունաւոր հոյակապ *քարտեր* եւայլն եւ կ'արժէ 30,000 տոլար: Գիտես որ անհատական ջանքերով նման գումար մը ապահովելը անկարելիութիւն է: Կ'ուզէի գիտնալ թէ՛ եթէ դիմեն ձեզի յոյս կա՞յ, որ ուզուած մեքենան Հիմնարկութիւնը նուիրէ իրենց: Անդրանիկ Մարտիրոսեանին¹⁴ ըսի, որ միակ յոյսը դուք էք. խոստացայ, որպէս բարեկամ, խորհրդապահաբար գրել նախ քեզի եւ կացութիւնը հասկնալ: Եթէ այս գործը յաջողցնես, դուն եւ ես առնուազն տարին քանի մը անգամ կ'այցելենք Հայաստան... անշուշտ իբր հիւր:

Աշակերտներու Ռոմիկ Մարթին կամ Մարտիրոսեան գերագանցիկ նիշերով այս տարի աւարտած է Փոլիթեքնիք Ինստիթիւտի ճարտարապետական բաժինը: Վարազդատ Յարութիւնեանի¹⁵ բացատրութեամբ «բացառիկ» ուսանող մըն է: Յաջորդ դպրոցական տարեշրջանին ընդունուած է Լոնտոնի քոլեճներէն մէկուն իբրեւ degree-ի ուսանող մէկ տարուան համար: Պիտի դիմէ ձեզի, այնպէս որ նկատի ունեցիր: Արդէն [Հայոց] Մարդասիրական Ճեմարանի մէջ ձեր սանն էր: Ուրիշ մըն ալ՝ Ռուզան Բարխուդարեան, Վիեննայի երաժշտանոցի ընթացքին կը հետեւի: Դիմեր ու մերժուեր է Հիմնարկութենէն անցեալ տարեշրջանին համար: Եթէ առանց *խաթերի* տակ մնալու եւ առանց ճիգ թափելու կարելի է գործը յաջողցնել յաջորդ տարուան համար՝ բան մը ըրէ, այլապէս *վազ* անցիր:

Նամակդ հիմա երկրորդ անգամ կարդացի եւ անդրադարձայ որ դուն «New Soviet Books» յօդուածին ամբողջութիւնը ունիս, այնպէս որ յօդուածը չեմ դրկեր քեզի, այլ կ'արտագրեմ 175րդ էջին առաջին տասը տողերը միայն: Յօդուածը կը գրաւէ 173-178 էջերը եւ կ'աւարտի «The Kurds were in» նախադասութեամբ:

Էջ 175 առաջին 10 տողերը

«We're really taking steps to tackle the problem. So far from this being so, the editor holds, their conduct merited the name Maxim Gorky gave it: infamous indifference. «Perfide Albion» of course struck her customary sympathetic pose, he adds, but this





actually did the Western Armenians immeasurable harm. Did not Lloyd George himself confess that «British policy with fatal inevitability led to the ghastly carnage of the years 1895-1897 and 1909, and to the appalling butchery of 1915?» Thirdly, Nersisyan finds a tendency to ignore the heroic resistance which the Armenian peasants, with all the odds against them, offered the government executioners. «*New Soviet Books, Middle Eastern Studies, Vol. 4, January 1968, N. 2.*:»

[Թարգմանութիւն] «Խնդիրը լուծելու համար հարկ եղած քայլեր պիտի առնենք: Այս [այտարարութիւնը] իրողութիւն ըլլալէ շատ հեռու էր խմբագրին համոզումով, եւ արժանի՝ Մաքսիմ Կորքիի «տխրահռչակ անտարբերութիւն» բնորոշման: «Փերֆիտ» անշուշտ որդեգրեց իր սովորական համակրական դիրքը, կ'աւելցնէ ան, բայց իրողութեան մէջ այս [կեցուածքը] անսահման վնաս հասցուց Արեւմտահայերուն: Միթէ Լոյս Ճորճ ինք իսկ չխոստովանեցա՞ւ որ «Բրիտանական քաղաքականութիւնը իր ճակատագրական անխուսափելիութեամբ պատճառ դարձաւ 1895-1897 եւ 1909 տարիներու սոսկալի նախճիրին եւ 1915ի ահռելի ջարդին»: Երրորդ՝ Ներսիսեան կը նկատէ ձգտում մը՝ անտեսելու հայ գիւղացիին ցուցաբերած հերոսական դիմադրութիւնը կառավարական դահիճներու դէմ, հակառակ ուժերու անհաւասարութեան:»

Լաւ, Վահրամ սիրելիս, այս անգամ այսքան: Յաջորդիւ ուրիշ հարցերու մասին: Ի միջի այլոց ըսեմ որ [Տէյվիտ Մարշըլ] Լանկը Մոսկուա էր իմ հոն եղած ատենս. չկրցանք տեսնուիլ հոն: Ամսոյս 18ին Յայր Արսէնին [Պերպերեան] քով միասին պիտի ընթրենք: Պիտի աշխատիմ որ 2750ամեակը նշուի նաեւ Լոնտոնի Յամալսարանին մէջ. եթէ յօդուած մըն ալ գրէ Երեւանի մասին՝ գէշ չըլլար:

Տպագրիչ մեքենայի մասին անպայման գրէ:

Տնեցիները ջերմ բարեւներ կը դրկեն իսկ Կարինէն եւ Արմինէն՝ պաշիկներ:

Սիրով
Ա. Կիւզելեան



ՆԱՄԱԿ 13

[Լոնտոն] 1 Օգոստ[ոս] 1969

Սիրելի Վահրամ,

Մտածումներու թուղթին վրայ ամեն օր նամակ գրեցի քեզի: Կրնաս չհաւատալ: Անշուշտ պիտի ուզէի որ հաւատայիր, սակայն չհաւատաս ալ՝ կացութենէն բան չի փոխուիր, քանի որ հաստատումս անկեղծ է եւ ինքնախաբէութեան արուեստական ճիգ մը չէ:

Շնորհակալութեամբ ստացայ մակագրուած *Անկապ Օրագիր*դ. ստացայ նաեւ 20 օրինակ Արայէն [Գալայճեան] քանի մը շաբաթ առաջ: Անկեղծ ըլլալու համար պետք է ըսեմ որ դեռ չեմ կարդացած: Կը կարդամ եւ կը գրախօսեմ... առարկայականօրէն: Ե՞րբ պիտի տաս լայնաշունչ վէպ մը: Տիպարներ կերտելու ունիս անվիճելի տաղանդ, վիպագրէ մը պահանջուած ամենէն կարելոր գիծը: Սպասենք եւ յուսանք: Գրքիդ վերաբերեալ գրախօսական մը տեսայ «Չարթօնք»ի մէջ, բայց չկարդացի. կ'ուզեմ որ իմս ըլլայ ինքնատիպ, հեռու ուրիշներու կարծիքէն ու տպաւորութենէն:

Ինչ կը վերաբերի ինծի՝ հայ գրականութեան համար հանգուցեալ մըն եմ ես: Կարծես կորսնցուցած ըլլամ աշխատելու կամքս եւ գրելու սէրս: Ժամանակս կ'անցնեմ խմելով եւ... հիւանդանալով: Անկողիներէն շաբաթ մը առաջ ելայ միայն 15 օր թոքատապով տառապելէ ետք: Երբ դրութիւնս անտանելի դարձաւ եւ ստիպուեցայ բժիշկ կանչելու՝ մարդը, լեհ-հրեայ մը, ըսաւ.

- Եթէ նպատակդ անձնասպան ըլլալ էր, երկու օր եւս սպասէիր եւ հեռաձայնէիր դագաղագործի մը...:

Ազատեցանք: Աստուած վերջը բարի ընէ:

Վստահ եմ անհամբեր կը սպասես լոնտոնեան կարգ մը լուրերու, որոնց գլուխը միշտ Փափազն է:

Համայնքի եկեղեցական կեանքը կը ներկայացնէ իսկական քառս մը: Ազգային եւ եկեղեցական խորհուրդէն (Փափազին յիմարութեան որպէս հետեւանք) հրաժարած են 2 հոգիներ: Վեհափառը [Վազգէն Ա. Պալճեան] կացութեան մասին ճշգրիտ պատկեր մը ունենալու համար շուտով Լոնտոն կ'առաքէ Հայկազուն [Աբրահամեան] եւ Սերովբէ [Մանուկեան] սրբազաններ:



րը: Փափազը կ'ապրի [Յայկ] Գալուստեանի Palace Gate-ի բնակարանը: Ամիս մը առաջ պաշտօնապէս գրած էր որ պարպէ բնակարանը: Երկու օր առաջ Փափազը գրած էր որ բնակարանէն ելլողը չէ: Գալուստեանը իր աշխատողներուն հրահանգած է, որ երթան եւ Փափազին գոյքերը փողոց նետեն: Մանրամասնութիւնները կարելոր չեն:

Կազմեցինք վերջապէս Յովհ[աննէս] Թումանեանի 100ամեակի Յանձնախումբը, մասնակցութեամբ լոնտոնահայ բոլոր կազմակերպութիւններուն, Գալուստեանի ատենապետութեամբ եւ փոխ-ատենապետութեամբ «սակաւախօս» ու «իմաստուն» բարեկամիդ... Կարպիս Եսայեանին: Խօսքը մեր մէջ մնայ՝ ամէն ժողովի տասը անգամ մեր համբերութիւնը կը բռնաբարէ... այդ մարդը: Գրեցինք Յայաստան որպէսզի Նոյեմբերի վերջը կամ Դեկտեմբերի սկիզբը Լոնտոն դրկեն Թումանեանի հնգօրեակին մասնակցելու համար [Պարոյր] Սեւակը, [Գեորգ] Էմինը, Ս[ուրէն] Զոչարը եւ Յ[ովհաննէս] Բաղալեանը:¹⁶ Այսօր պատասխան ստացանք ըստ որումն պատրաստ են յիշեալ խումբը Լոնտոն դրկելու: Ստորագրութիւնը [Կարդգէս] Յամազասպեանինն է:

Ուրիշ նորութիւն մը, Փետրուարէն ի վեր, ամէն Բշ. [Երկու-շաբթի] օր հայերէնի դաս կու տամ «Յայ Տուն»ի մէջ: Բարեբախտաբար աշակերտ-աշակերտուհիներուս մեծ մասը չափահասներ են՝ գլխաւորաբար հարսնացուներ եւ ամուսնալուծուած կիներ...:

Ի միջի այլոց, չմոռցած ըսեմ, որ [Միշա] Գիւտեանի թարգմանութեամբ (լաւ թարգմանութիւն է) Թումանեանէն անգլերէն հատոր մը հրատարակելու ծրագիր մը կայ: Յանձնախումբը յանձն պիտի առնէ այդ գործը գլուխ հանել: Յայաստանէն անընդհատ կը գրեն, որ անպայման անգլերէն հատոր մը լոյս տեսնէ: Մեր ծրագիրն է հրատարակիչներուն յայտնել, որ Յանձնախումբը պատրաստ է 2,000 օրինակ գնել իրենցմէ. արդեօք կարելիութիւն կա՞ որ [Գալուստ] Կիւլպէնկեան Յիմնարկութիւնը 500 օրինակ մը գնէ մեզմէ եւ նուիրէ զանազան գրադարաններու եւ հիմնարկութիւններու: Եթէ կարելիութիւն կայ՝ Յանձնախումբը պաշտօնապէս անշուշտ կը գրէ: Կը խնդրեմ որ այս հարցը լրջութեամբ նկատառութեան առնես:

Երկու աշակերտ յանձնարարած էի: **Ռոնի Զաչիկ**, հնդկահայ





երիտասարդ մը, որ ներկայիս ծնողաց հետ Լոնտոն կ'ապրի:
Դիմած է **Լոնտոնէն**:

Վրեժ Ներսեսեան, [Յայոց] Մարդասիրական Ճեմարանի սաներէն, որ աւարտելով Էջմիածինի Յոգեւոր Ճեմարանը՝ այժմ ընդունուած է King's College.

4 Օգոստոս

Նամակդ չկրցայ ամբողջացնել: «King's College»-ը հազիւ գրած էի, երբ հեռախօսը հնչեց: 50 տարի ետք, դեռ արեւմտահայերէնի ազդեցութենէն չձերբազատած Էգրաս Յասրաթեանի «ախորժալից» ձայնն էր: Գացի Go-Gotel, ուր իր «սեպիական ճիգերով» կրցած էր սենեակ մը ապահովել: Ըսի իրեն, որ կը գրէի քեզի, երբ հեռախօսեց: Պատմեց որ հեռախօսած ես իրեն Մոսկուա գտնուած միջոցիդ եւ խոստացած՝ վերադարձի ճամբուն վրայ հանդիպիլ իրեն: Ըսաւ, որ չափազանց զբաղուած ըլլալուն միայն կրցած է «աչք մը նետել» գրքիդ վրայ:

Լոնտոն եկած է եւ մասնակցած՝ հոգեբաններու միջազգային congress-ին:

Կիրակի օր, 3 Օգ[ոստոս]ին խօսեցաւ «Յայ Տուն»ի մէջ ստեղծելով խանդավառութիւն: Կը մեկնի Յինգշաբթի: Կը յղէ ջերմ բարեկներ:

«Արեգակ»ի վերհրատարակութիւնը [Յայկ] Գալուստեանի հովանաւորութեամբ թելադրելի ձեռնարկ մը չեմ համարեր, այն պատճառով, որ Յայկը դրական բազմաթիւ գիծերով օժտուած մարդ մը ըլլալով հանդերձ՝ փոփոխամիտ է: Յաւանաբար (այս ալ կախում ունի իր տրամադրութենէն) քանի մը ամիս հրատարակէ թերթը, ապա՝ առանց որեւէ հիմնական պատճառի որոշէ յանկարծ թաղել «սորածինը»: Իսկ ես՝ ա՛լ ձանձրացած եմ նազ-տուզ քաշելէ: Այս համայնքը առ այժմ թերթի կարիք չունի: Եթէ թերթի կարիք ունենար՝ մինչեւ հիմա արդէն տպարան մը ունեցած կ'ըլլար:

Ե՞րբ պիտի գաս այս կողմերը. եկուր որ քիչ մը դրամ քաշենք fruit machine-ներէն: Յաճախ pub-երու մէջ կը խաղամ. անցեալները երկու jack pot հանեցի ետեւ-ետեւի:

Դուռը կը զարնեն. եթէ չվերջացնեմ նամակը՝ հաւանաբար





քանի մը օր եւս մնայ սեղանիս վրայ կիսաւարտ:

Ջերմ բարեւներ մերիններէն. պաշիկներ Կարինէն եւ Արմի-
նէն:

Համբոյրներով՝
Ա. Կիւզելեան

ՆԱՄԱԿ 14

[Լոնտոն] 16 Ապրիլ, 1970

Սիրելի Վահրամ,

Փորձեցի 24 Մարտին սկսուած նամակդ ավարտել Մարտ
27ին, «Աւագ Ուրբաթ» օր...: Գոնէ «Աւագ Ուրբաթ» օրով զիս
հանգիստ կը թողուն, մտածեցի:

Չեղաւ: Այս առտու՝ սկսուած նամակը պատռեցի եւ սկսայ...
նոր էջի մը վրայ «**նոր**» նամակ մը գրել: Կը յուսամ գոնէ ժամ մը
«գլուխ արդուկողներ» չեն խանգարեր սկսուած գործը...:

Քարտդ ատենին ստացած եմ: Ի՛նչ սարսափելի օր էր այդ,
Տեր **Ած** [Աստուած]: Օղանաւակայանէն քաղաք վերադարձը
տեւեց ճիշդ երկու ժամ: Վստահ եմ, Մանշի միւս կողմը, «տա-
քուկ» սենեակի մը հեռանկարը՝ լրիւ յարմարութիւններով՝
ճամբորդութեան տիպարութիւնը մոռցնել տուաւ քեզի...:

Կեանքս ներս նորութիւն մը չկայ: Օրերը կը բարդուին օրե-
րու վրայ պարապ սնտուկներու պէս: Գաղափարակից մարդոց
սով կայ Լոնտոնի մէջ: Առօրեայ աշխատանքիս միօրինակա-
նութիւնը խզելու համար երբեմն pub կ'երթամ եւ... *ճէք փօթ* կը
քաշեմ: Աստուած շատ քաշել չտայ՝ - պիտի ըսեր Ասողիկ
Սրբազանը [Ղազարեան]:

Համայնական-եկեղեցական կեանքէն ներս կը տիրէ կա-
տարեալ քառս՝ շնորհիւ Փափազին հետապնդած «քանդէ որ
քեզ չքանդեն» քաղաքականութեան:

Ամիսներու տքնաջան աշխատանքով վերահաստատուած
միասնականութիւնը Փափազը մէկ հարուածով քանդեց, իրեն
զինակից ունենալով [Յարութիւն] Սուրաֆեանն ու [Երուանդ]
Նիկողոսեանը:





Ներկայիս [Խաչիկ] Մթրղպեանն ու [Յայկ] Գալուստեանը քաշուած են խորհուրդէն: Եթէ օրին մէկը Լոնտոնի մէջ եւս ունենանք անթիլիասական եկեղեցի մը՝ պատասխանատուն սրբազանը, ՍուրբաՖեանն ու ռամկավարները պիտի ըլլան:

Անձնապէս զգուած եմ համայնական-եկեղեցական աղմուկէն: Նիկողոսեանն ու [Կարպիս] Եսայեանը փափաք յայտնեցին որ հանդիպում մը ունենանք եւ խօսինք... ազգային հարցերու մասին: Մերժեցի:

Մարտ 20ին կշեցինք [Յովհաննէս] Թումանեանի 100ամեակը: Լաւ անցաւ: Երեկոյթին եկած էր նաեւ որպէս ունկնդիր Լուիզ Պոզապալեանը: Մարտ 22ին միասին ճաշեցինք. քանի մը անգամ յիշուեցար...: Սկովտիա գնաց 23ին. խոստացաւ վերադարձին քանի մը օր մեր հիւրը ըլլալ: Մինչեւ այսօր լուր չեւաւ իրմէ:

«Սովետական Գրականութիւն», 1970 Յունուարի համարին մէջ կարդացի բանաստեղծութիւններդ: Լաւ են: Լաւ է մանաւանդ բանաստեղծական ապրումը, զոր կեանքը իր աղմուկով ու տաղտուկով չէ կրցած քանդել մէջդ:

*Անկապ Օրագիր*դ գրախօսելու խոստումս չեմ յարգած դեռ, բայց կը յարգեմ: Հաւանաբար գրախօսականը հետս Պէյրութ տանիմ Մայիսի վերջաւորութեան:

Արդարեւ, կը ծրագրեմ այցելել Պէյրութ եւ Հալէպ: Մայրս կ'ուզէ որ զինք «վերջին անգամ մըն ալ տեսնեմ»: Վեց տարի է չեմ տեսած: Մեկնելէս առաջ կը գրեմ:

Վերջերս քովս եկած էր Գեորգ Պարտազճեանը, Դամասկոսի քահանային տղան, որ այս տարի պիտի աւարտէ Երեւանի Համալսարանի Հայագիտական բաժինը: Կը փափաքի Oxf[ord]-էն ալ վկայուիլ: Ըստ իրեն՝ [Զարլզ] Տաուսէթը համաձայն գտնուած է այդ առաջադրանքին...: Կ'ուզէր թոշակի համար դիմել [Գալուստ] Կիւլպենկեան Հաստատութիւն: Եւրոպական վկայականով հայագետներու պետքը զգալի է: Եթէ դիմէ՝ հաճիս նկատի ունեցիր զինք:

Կալկաթայի [Յայոց] Մարդասիրական Ճեմարանի ամենէն խոստումնալից աշակերտը, Ռոմիկ Մարթին՝ գերազանցիկ աւարտած է Պոլիտեկնիկ Ինստիթիւտի ճարտարապետական բաժինը: Երեւանի մէջ իր ուսուցիչները շատ բարձր գնահատական տուին ինծի Ռոմիկի ընդունակութիւններու մասին: Ան





եւս դիմած է ձեզի: Երախտապարտ կ'ըլլամ, եթէ իր դիմումը չմերժեք: Պրն. [Պետրոս] Ալեքսին շատ լաւ յանձնարարական մը տուած է արդէն իր մասին: Ի գիտութիւն կը ներփակեմ [Կորիւն] Քէշիշեանին գրած իր նամակին պատճենը: Եթէ չեմ սխալիր Մարդասիրական Ճեմարանի մէջ Ռոմիկը ձեր սաներէն էր: Կ'արժէ յիշել նաեւ որ Ռոմիկը լաւ անգլերէն գիտէ:

Կարինէին եւ Արմինէին հետ առնուած լուսանկարին negative-ը անցեալ օր պատահմամբ ձեռքս անցաւ. տուի Harrods, որ օրինակ մը հանէն. յաջորդիւ կը դրկեմ:

Նախքան մեկնիլս դարձեալ կը գրեմ: Ձերմ ողջոյններ բոլորէն:

Համբոյրներով՝
Ասատուր

ՆԱՄԱԿ 15

[Լոնտոն] 8 Յուլիս, 1970

Սիրելի Վահրամ,

Լոնտոն վերադարձայ ամսոյս 6ին: Հաճոյքով կարդացի 14 Յունիս թուակիր նամակդ: Մեղք որ գիրար «փախցուցիք» Միջին Արեւելքի մէջ: Հետքերդ հոն էին սակայն - Պէյրութ, Դամասկոս, Հալէպ: Պատմածներուդ արձագանգը բարեկամներու եւ ծանօթներու ականջներուն մէջ դեռ չէր մարած: «Արեգակ»ի մէջ լոյս տեսած (Աստուած մեր սիրելի Բիւզանդիս [Թօփալեան] հոգին լոյսերու մէջ պահէ) **թերատիպ** բանաստեղծութեանդ պատմութիւնը պատմուեցաւ ինծի նոյնիսկ մարդոց կողմէ, որոնք նոյն թերթի խմբագիրն ըլլալուս անտեղեակ էին...: Եթէ Միջին Արեւելքի մէջ միասին ըլլալու վայելքէն զրկուեցանք՝ գոնէ քու այցելութեանդ արձագանքով ես որոշ չափով մխիթարուեցայ...: «Այրած սրտի մխիթարանք»՝ պիտի ըսեր ժողովուրդը:

Այցելեցի Սուրիա, Լիբանան եւ Կիպրոս: Ամենուրեք յիշուեցար, երբեմն մտերմիկ շրջանակներու մէջ, երբեմն բաժակաճառերու մէջ: Բարեկամ ունենալը լաւ բան է:

Մեր սիրելի Բիւզանդիս մահը շատ յուզեց նաեւ զիս: Այսու-



հետեւ Փարիզը նոյն հմայքը պիտի չունենայ՝ վստահ եմ ինչպէս ինծի՝ նոյնպէս ալ քեզի համար: Երբեմն քաղաքներու հմայքը կը պայմանաւորուի հոն ապրող բարեկամներով. աւելի ճիշդ պիտի ըլլար ըսել քաղաքներ իրենց գեղեցկութենէն շատ բան կը կորսնցնեն՝ երբ հոն ապրող սրտակից բարեկամներ յանձնուին հողին: Այո՛, սիրելի Վահրամ, Բիւզանդիս տիտուր ճակատագիրը կրնայ ըլլալ նաեւ մերը որեւէ ատեն: Յարազատի մը մահուան գուժը զարմանալի կերպով մեզ ալ կը դնէ մահուան գաղափարին հետ դեմ-դիմաց: Երբ Սոֆիայէն Պէյրութ կը թռչեր մեր օդանաւը, կը կարդայի Բիւզանդի մասին եւ ինծի այնպէս կը թուէր, որ ես ալ քանի մը վայրկեանէն պիտի մեռնիմ... զոհ երթալով օդանաւային արկածի: Մեռնելու, արկածի մը զոհ երթալու գաղափարը կեանքիս մէջ առաջին անգամ ըլլալով օձիքս չձգեց այս ճամբորդութեանս ընթացքին: Յիմա իսկ, երբ ապահով տուն դարձած եմ, մէջէս սարսուռ մը կ'անցնի այս տողերը գրած պահուս:

Վերադարձիս՝ Պէյրութ - Սոֆիա - Լոնտոն օդանաւի մէջ տեղ չըլլալուն (աժան տոմսով կը ճամբորդէի, երթ ու դարձ 80 սթերլին միայն) ստիպուած Դամասկոսէն օդանաւ առի (Bulgarian Airline), ճիշդ այն պահուն, երբ քիչ մը անդին, 5-7 ք.մ. հեռաւորութեան վրայ, սուրիական եւ հրեական օդանաւեր գիրար կը հալածէին օդի մէջ...: Ու այս բոլորը օդանաւի լուսամուտէն դիտեցիք: Սոֆիա ստիպուած շաբաթ մը մնացի: Օդանաւի մէջ տեղ չկայ, ըսուեցաւ ինծի: Եղածը (յետոյ անդրադարձայ) խաղ մըն էր՝ **տոլար** ծախսել տալու պուլկարական ոճ...:

Ռոպերթ] Աթայեանի պարագային «մեղաւորն» անշուշտ դուք էք: Ինչ ըսել է, պետք էր *ֆէտիվալը* յետաձգէիք անորոշ ժամանակով, մինչեւ որ [Սփիւռքահայութեան Յետ Մշակութային Կապի] Կոմիտէն բարեհաճեր հեռագրով մը կամ ծովային թղթատարով դրկուած նամակով մը յայտնել թէ «զանազան պատճառներով» Աթայեանը չեն կրնար Լիզպոն դրկել:

Այս մարդիկը դեռ չսորվեցան ճշդապահութեան իմաստը: Յուսանք որ 100 տարի ետք այդ ալ սորվին:

Միջանկեալ չմոռնամ յիշելու, որ շատ աղուոր գիշեր մը անցուցիք (աւելի ճիշդը 2 գիշեր) Դամասկոսի մէջ, մէկը՝ Կիրակոսեաններու հետ, միւսը Գոգոյ Երիթեանի եւ եղբօր՝ Յարութիւնին հետ: Գոգոն իսկրեց որ ջերմ ողջոյններ հաղորդեմ քեզի:





Նախորդ նամակիս մէջ գրած էի քեզի Ռոմիկի [Մարթին] մասին: Վստահ եմ կարելիդ պիտի ընես այդ բացառիկ արժանիքներ ունեցող երիտասարդին համար: Վիվիէնի ազգականներէն՝ Րաֆֆի Օհանեանն ալ դիմած է ձեզի Ամերիկայէն, ուր Kansas համալսարանի մէջ կ'ուսանի: Շատ փայլուն տղայ է կ'ըսեն: Եթէ ընտրութիւնները չէք աւարտած եւ կարելիութիւն կայ՝ ան ալ նկատի ունեցիր: Ես թեկնածուն անձամբ չեմ ճանչնար, սակայն շատ դրական տեղեկութիւններ հաղորդուեցան ինծի իր մասին:

Ե՞րբ պիտի գաս այս կողմերը. կարօտցանք քեզ. մանաւանդ կարօտցած են քեզ fruit machine-ներն ու Oxford Street-ի վարդագոյն շապիկ վաճառող խանութներու պաշտօնեաները:

Կարինէին ու Արմինէին հետ առնուած նկարը անպայման կը դրկեմ յաջորդ նամակովս: Դուն ալ գիտես որ երբ ճամբորդութենէ վերադառնայ մէկը, առաջին քանի մը օրերուն անձեռոցին տեղն իսկ կը մոռնայ...

Դուն քեզի լաւ նայիր եւ կեանքը վայելէ: Մի մոռնար որ ուշ կամ կանուխ պիտի հասնինք մեր յաւիտենական ժամադրավայրը, հոն՝ ուր ճշմարիտ հաւասարութիւն, իրական համայնավարութիւն կը տիրէ, հոն՝ ուր սեր, նախանձ, քէն ու ատելութիւն հողը կը համբուրեն...:

Մերոնք բոլորն ալ լաւ են, - բացի աներմօրմէս - եւ կը յղեն ջերմ բարեւներ: Աներմայրս օրէ օր կը նիհարնայ. այսօր Վիվիէնը զինք հիւանդանոց տարաւ. կը յուսանք լուրջ բան մը չէ:

Կարինէն եւ Արմինէն պաշիկներ կը դրկեն:

Յամբոյրներով՝
Ասատուր

ՆԱՄԱԿ 16

[Լոնտոն] 29 Մայիս 1971

Սիրելի Վահրամ,

18 Մարտ թուակիրդ **այսօր** միայն հասաւ: Թեւ թղթատարական գործադուլն աւարտած է, սակայն նամակատան կանոնաւոր ու սահուն գործելակերպը (Սիմոնը [Սիմոնեան] չլսէ այս բառը) տակաւին չէ վերահաստատուած: Կը յուսամ այս քանի





մը տողը ձեռքդ կը հասնի նախքան մեկնումդ:

Չալըզը [Յովհաննես Չալըզեան] մեռաւ: Ոչ ոք անշուշտ զարմացաւ որ Չալըզին վերջը եկաւ մեքենայի արկածով: Իր ապրած փողոցը մինչեւ վերջերս **one-way** էր: Եթէ չեմ սխալիր Դեկտ[եմբեր]ին **dual-way**-ի վերածեցին: Հաւանաբար այդ փոփոխութիւնն ալ պատճառ եղաւ արկածին:

Թաղումը կատարուեցաւ **կուսակցական** շուքով: Կարծես հանգուցեալը մարդ չըլլար, հայ չըլլար, այլ միայն՝ դաշնակցական...: Խեղճ Չալըզ: Մարդը պզտիկցուցին, նեղցուցին, կուսակցականացուցին: Թաղման կարգադրութիւնն ըրին անոնք՝ զորս ամենէն շատ ատեց [հանգուցեալը]: Հայաստան Վարդանեան¹⁷ իր ելոյթին մէջ համարձակեցաւ ըսելու նոյնիսկ, որ անցեալին ներած են հանգուցեալին իր բազմաթիւ սխալներուն համար. հիմա ալ կը ներեն...: «Չալըզին համար, շարունակեց ան, լաւ հայն անպայման դաշնակցական էր, դաշնակցականը՝ լաւ հայ»:

Եւ այսպէս, բոլոր դամբանախօսները գովերգեցին Չալըզը որպէս դաշնակցական...: Միայն հայր սուրբն էր որ անդրադարձաւ նաեւ Չալըզ **հայուն** ու Չալըզ **մարդուն**:

Ի միջի այլոց, հակառակ շատ մը մարդոց փափաքին՝ թոյլ չտուին որ քանի մը խօսք ալ ես ըսեմ:

Փրոֆ. Լ[ուիզ] Նալպանտեանի¹⁸ մասին ոչինչ գրած ես: Օդանաւակայանէն հեռախօսեց Ամերիկա վերադարձի ճամբուն վրայ: Շատ գոհ մնացած էր քեզմէ: Խնդրեց որ երբ գրեմ քեզի, հաղորդեմ իր ողջոյնները:

Փրոֆ. [Տէյվիտ Մարշըլ] Լանկի գրքի մասին գրած էիր: Ըստ երեւոյթին, ինծի բերած տաս օրինակները առաջին նմուշներն էին: Անցեալ օր 8 օրինակ եւս բերաւ: Հրատարակիչները գրքին հրապարակումը յետաձգած են, որովհետեւ քանի մը *թէքնիք* սխալներ յայտնաբերած են, որոնց սրբագրութիւնը կը կարօտի, այս երկրին մէջ... ժամանակի:

Լանկը կարծեմ քանի մը օրէն Պուլկարիա պիտի մեկնի:

[Միշա] Գիւտեանը կարծեմ Թումանեանները յանձնած է ձեր գրասենեակը:

Վստած եմ պիտի համաձայնիս որ air letter-ի մը մէջ տեղի վատնում է **Փանոսեաններով** զբաղիլը:

Լաւ լուր մը. դարձայ անգլիահայատակ քանի մը օր առաջ:

Կարելոր լուր մըն ալ Էճըրթըն Կարտընզէն: 7 շաբաթ հոս





ապրեցաւ Անգլիոյ ամենէն վտանգաւոր ու փնտռուած աւագա-
կը: Ուղղակի Ակաթա Քրիսթիական վեպ է: Միտք ունիմ այդ մա-
սին վեպ մը գրելու: Կեանքի մէջ անհաւատալի շատ բաներ կը
պատահին: Փետրուարին մարդը միայն մէկ բնակարանէ
£22,000 [արժողութեամբ] ադամանդեղէն գողցած է: Տեղ չմնաց:
Բարի ճանապարհ ու բարի... վայելում: Ջերմ ողջոյններ բո-
լորէն: Կարինէն եւ Արմինէն կը համբուրեն քեզ:

Սիրով՝
Ասատուր

ՆԱՄԱԿ 17

[Լոնտոն] 1 Սեպտեմբեր, 1971

Սիրելի Վահրամ,

Առտու կանուխ կը գրեմ քեզի, այն յոյսով որ խանգարող մը
չըլլար եւ օրեր առաջ մտադրուած նամակը կ'աւարտեմ:

Շատ կը ցաւիմ որ Վիվիէնը չկրցաւ կապ հաստատել հետդ:
Անշուշտ իրաց դասաւորումը խաղցած է իր դերը՝ սակայն
մայր յանցանքը կը պատկանի Վիվիէնին: Ըստ երեւոյթին [Գա-
լուստ Կիւլպէնկեան] Հաստատութեան տեղացի պաշտօնեան,
որ հեռախօսին պատասխանած է, տուած է այն տպաւորու-
թիւնը, թէ դուն գործով քաղաքէն կը բացակայիս:

* * *

6 Սեպտ[եմբեր]

Կը նախազգայի որ պիտի չկարենայի նամակդ աւարտել
Սեպտ[եմբեր] 1ին: Սեպտ[եմբեր] 1էն մինչեւ Սեպտ[եմբեր] 4
կարծես խօսքը մէկ ըրած՝ իրարու ետեւէ եկան յաճախորդներ,
ծանօթներ, ծանօթներու կողմէ յանձնարարուած անծանօթ-
ներ, ուսանողներ, հայաստանցիներ, եւայլն:

Հիմա դարձեալ առտու է: Նստած եմ վարը՝ Mrs. Gomez-ին
սենեակը եւ կը գրեմ: Հրահանգած եմ Gomez-ին որ «հոս չէ»
ըսէ բոլոր փնտռողներուն:

Յուսամ Վիվիէնին նամակը ստացած ես, այնպէս որ այդ մա-





սին գրելն ա՛լ աւելորդ է:

Աւելորդ է նաեւ գրել թեկնածուներու մասին. վստահ եմ ընտրուելիքներն արդէն ընտրուեցան:

Իմ կեանքես ներս մասնաւոր նորութիւն մը չկայ. կ'անցնի միօրինակ եւ միապաղաղ:

Լոնտոնահայ կեանքէն ներս ալ նորութիւններ չկան. միակ նորութիւնը «Սարտարապատ»ն է, զոր լոյս կ'ընծայեն հայ երիտասարդները: Ճիգը (ինչպէս մեր իրականութեան մէջ ամէն «ճիգ») միշտ գնահատելի է՝ թերթին որակը սակայն՝ ե՛ւ որպէս լեզուա-քերականական սխալներու շտեմարան՝ ե՛ւ որպէս խորքէ զուրկ «բնակարան»՝ անտանելի է: Խմբագիրը Յայկ Մարըլեանն է: Անցեալ օր ըսի իրեն, որ պատրաստ եմ թերթը մեքենագրուելէ առաջ «աչքէ անցնել հայերէն յօդուածները»... բայց կ'ենթադրեմ որ դիտողութիւնս չդպաւ իր թիրախին: Ոչինչ: (Ասիկա մեր մէջ մնայ):

Յայկ Գալուստեանը դարձեալ բռնուած է «թերթ» հրատարակելու ջերմէ: Իբրեւ թէ [Գեորգ] Պլքեան անունով մի ոմն տպարան մը բացած է Լոնտոնի մէջ ու բերած նաեւ հայերէն գիրեր:

Անգամ մը եւս փորձեցի գտնել Պլքեանը (հիմա) եւ գտայ: Նախկին Մելգոնեանցի մը, որ երկար տարիներ ապրած է նաեւ Սուտան: Տպարան բացած է Harrow: Ամերիկայէն ապսպրած է հայերէն գիրեր: Հաւանաբար երկու շաբաթէն ստանայ զանոնք:

Գալուստեանը ներկայիս կը գտնուի Փարիզ: Վերադարձին հանդիպում մը կ'ունենանք Պլքեանին հետ: Արդիւնքի մասին կը գրեմ քեզի:

Արսէն Վ[ա]րդ[ապետ]ը [Պերպերեան] վերադարձաւ Հայաստանէն, ուր ամսուան մը արձակուրդով գացած էր: Ըստ երեւոյթին շուտով Տաճատ Սրբազանի [Ուրֆալեան] գլխաւորութեամբ պատուիրակութիւն մը կը մեկնի Էջմիածին՝ Խորէնի [Կաթողիկոս Բարոյեան] «մահուանէն» առաջ Էջմիածին-Անթիլիաս թնճուկը լուծելու առաջադրութեամբ: Այսքանը որպէս **top secret** յայտնեց ինծի հեռախօսով: Դեռ զինք չեմ տեսած:

Trustee-ները Արսէնին մինչեւ տարեվերջ ժամանակ տուած են: Կարծեմ իր տեղը կ'ուզեն լեցնել ներսես [Սրբազան] Պողոսապալեանով: Միւս կողմէ՝ ըստ Արսէնին Վեհափառը [Վազգէն Ա.





Պալճեան] Ներսէսը կանչած է Էջմիածին, [Գեորգեան] ճեմարանի որպէս տեսուչ:

Եկեղեցական կեանքը Լոնտոնի մէջ նոյնն է՝ ինչ որ էր: Սրբազանը՝ [Պսակ Թումայեան] ըստ երեւոյթին՝ լուրջ հիւանդ է: Շաբթուան քանի մը օրը հիւանդանոցի մէջ կ'անցնէ: Կարծեմ սրտի հիւանդութիւն է:

Չեմ գիտեր քեզ կը հետաքրքրէ թէ չէ՝ բայց ի գիտութիւն կ'ուզեմ յայտնել՝

ա) Վախճանեցաւ շաբաթ մը առաջ Լեւոն Ապաճեանը, Ապաճեան եղբայրներու երեցը:

բ) Սեպտեմբեր 17ին Սարգիս Քիւրքճեանին տղան, ճոնը, կ'ամուսնանայ Արամ Ապաճեանի աղջկան՝ Քրիսթինի հետ:

գ) Դեկտեմբեր] 12ին Տէր եւ Տիկին Ալեքսիներու ամուսնութեան յիսնամեակն է, զոր Պրն. [Պետրոս] Ալեքսիս պիտի նշէ մեծ հանդիսութեամբ: Եթէ կարենաս «անձնական» գործով Լոնտոն գալ՝ հոյակապ գիշեր մը անցընելու բոլոր տուեալները ապահովուած կրնաս նկատել:

Քանի մը ամիս առաջ Լոնտոնի ձեր գրասենեակը նամակ մը գրած էր ինձի, այն մասին թէ՝ Օր. Ամատունի մը կ'ուզէ հայերէն սորվիլ: Խնդրած էին ինձմէ որ պետք եղած ուղեցոյցը տամ օրհորդին: Ժամադրուեցանք: Պարզուեցաւ որ մեր Ասատուրին դուստրն է օրհորդը:

Ասատուրը անյայտացած է...: Hastings ճաշարան մը բացեր է յոյնի մը հետ: Աղջիկը հօրը հանդիպելու յոյսով կ'երթայ Hastings: Ասատուր չկայ: Արդեօք ճամբորդութիւններուդ ընթացքին իրեն հանդիպելու առիթ ունեցա՞ծ ես վերջին մէկ տարուան ընթացքին: Եթէ այո՝ գրէ ինձի այդ մասին:

Ջերմ բարեւներ Ալեքսի, Կիւզելեան ընտանիքներէն:

Սիրով՝
Ա. Կիւզելեան

ՆԱՄԱԿ 18

Լոնտոն, 15-11-[19]71

Սիրելի Վահրամ,
Շնորհակալութիւն 7 Նոյեմբեր թուակիր 2 նամակներուդ





համար: Ներփակ կը գտնես Collins/pc 363 (in genuine leather) 1972 diary-ն: Կը մաղթեմ որ անոր էջերուն մէջ նշուելիք հանդիպումները ըլլան հաճելի ու մանաւանդ՝ համապատասխան ակնկալութիւններուդ: Վերջին հաշուով Collins/pc 363-ը կեանքի օրահաշին է, այսինքն, **մայրը՝ Մայր Տոմարի...**:

Հա՛, ի միջի այլոց, չկրցայ հասկնալ երկրորդ նամակիդ պահարանին վրայ, անունես անմիջապէս առաջ գրուած «prof»-ին իմաստը... **«եանի սրբազան, մարդ չմնաց՝ դո՛ւն ալ սկսար զիս ալալի առնելու»:** [Սրբազան, մարդ չմնաց՝ դո՛ւն ալ սկսար վրաս խնդալու:]¹⁹ **«Եւ զքոյդ, ի քոյոց քեզ մատուցանեմ»:** [Եւ քուկդ քուկիններէդ քեզի կը հրամցնեմ]:

Ուրախ եմ որ հաճելի ու **«արդիւնաւետ»** արձակուրդ մը ունեցած ես... վստահ եմ զանազան կարմիրներու հետ ունեցած շփումէդ (Հայաստանի մէջ եւ **այլուր մանաւանդ**) կարմրած ես...:

Մանուկեանները եկան ու գացին: Հ.Բ.Ը.Մ.ի 65ամեակին ներկայ չկրցան գտնուիլ: Այս հանդիսութեան, որուն պիտի նախագահէր Ա[լեք] Մ[անուկեան], ինդրած էին որ բարեգործականին նուիրուած բանաստեղծութիւն մը արտասանեմ: Պրն. Կ[արպիս] Եսայեանը, չես գիտեր ուրկէ՞, իր բարդ ու դարձդարցիկ խառնուածքին ու գրական **քիչ** մը տափակ ճաշակին ուղիղ համեմատող քերթուած մը (հեղինակ Չ[արեհ] Մելքոնեան)²⁰ պեղած, գտած ու ինծի դրկած էր [Երուանդ] Նիկողոսեանին խողովակով: Երուանդին յայտնեցի որ ես այդ «բառակոյտ»ը չեմ արտասաներ: Առանց չափազանցութեան՝ ածականներու անվերջ բանակ մը...:

Այս բոլորին հետեւանքն այն եղաւ, որ գիշեր մը նստեցայ ու Բարեգործականի 65ամեակին նուիրուած բանաստեղծութիւն մը գրեցի, մեքենագրեցի, խորագրին տակն ալ, քիչ մը դէպի աջ՝ **«Ձօն Ա[լեք] Մանուկեանին»** մը անելցուցի ու այդ օր՝ ի բացակայութիւն Մանուկեաններու՝ կարդացի...: Բանաստեղծութիւնը բաւական լաւ ընդունելութիւն գտաւ...: Գիտեմ թէ մտքէդ ինչ կ'անցնի: Չէ՛, հասկցողներ ալ կային. [Միշա] Գիւտեանը շատ հաւնեցաւ քերթուածը, բայց դժբախտաբար թարգմանելու առաջարկ չներկայացուց...:

Ղզտր-ղզտր եէ (տաքցուր տաքցուր կեր)....: Երբ կ'եսորուան կերակուրէն բան մը անելնար, անելցուկը մայրիկս գիշերը կը





տաքցներ ու կ'ուտէինք: Կը յիշեմ, երբեմն ամբողջ շաբաթ մը նոյն աւելցուկը կը բերուէր սեղան՝ անշուշտ եօթներորդ անգամ տաքցուելէ յետոյ: Ասոր, ահա, *ղգտր-ղգտր եէ* կ'ըսէն: Այդպէս, մենք ալ «Ձօն Ալլէք] Մանուկեանին»ը տաքցուցինք-տաքցուցինք ժողովուրդին հրամցուցինք, իսկ ի պատիւ հիւրերուն կազմակերպուած ճաշկերոյթին՝ վերջին անգամ կարդալէ ետք՝ տարինք «տիրոջը» յանձնեցինք զայն:

Օդանաւակայանին մէջ, մեկնումէն քիչ մը առաջ, Տիկին [Մարի] Մանուկեան²¹ ինդրեց որ իրեն դրկեմ ճաշկերոյթին պատմած *անեկդոտներ*...:

Գալով *Հայաստան Քաղաքակրթութեան Բնօրրան*ին, այս վայրկեանիս ընկալուչը վար դրի. [Տէյվիտ Մարշըլ] Լանկին հետ կը խօսէի: Անհաւատալի սպառում մը ունեցաւ գիրքը. հինգ ամսուան մէջ մօտ 2,000 օրինակ ծախուած է: Վերջին օրինակը երեք շաբաթ առաջ Ռոմիկը [Մարթին] Լանկէն գներ ու հօրն է դրկեր:

Բարեբախտաբար հրատարակիչները երկու հազար օրինակ եւս սկսած են կազմել: Լանկը ըսաւ որ կը յուսան ամիսէ մը պատրաստել զանոնք:

Ես Լանկին հետ հետեւեալ համաձայնութիւնը ունիմ. իմ կողմէս ապսպրուած իւրաքանչիւր գիրքը կը հաշուէ՝ £4.30: Մինչեւ հիմա շուրջ 30 օրինակ ծախած եմ եւ հինգ օրինակ ալ՝ «**Նուէր**» առած են ինձմէ... հայաստանցիներ: Մարդիկ Egerton [Lodge] կու գան, գիրքը կը տեսնեն ու կ'ուզեն: Չես կրնար չտալ: Ասոր վրայ, եթէ աւելցնես այն, որ ամէն անգամ գիրք բերելուն ճաշի կը տանիմ Լանկը՝ այն ատեն պատկերը կ'ամբողջանայ: Հանգուցեալ հայրս կ'ըսեր՝ «*Ղապա Վանես դավըն սաթիոր, պէշէ ալըիս՝ տորտէ սաթիոր...*» [Ղապա Վանեսը սեխ կը ծախէ, հինգի կ'առնէ, չորսի կը ծախէ...]: Այս մասը քու եւ իմ մէջ մնայ: Մարդիկ կրնան սխալ հասկնալ եղած կարգադրութիւնը:

Վերադառնանք քու ոչխարիդ: Երբ գիրքերը կազմուին ամիսէ մը՝ Լանկը չորս օրինակ պիտի բերէ քեզի համար, երկուքը՝ իր կողմէ նուէր, երկուքը՝ £4.30 իւրաքանչիւրը: «Վերջին հաշուով - ըսաւ Լանկը - եթէ Mr. Mavian-ին միջամտութիւնը չըլլար, կրնար այս գիրքը բնաւ լոյս չտեսնել իր ներկայ վիճակին մէջ»:





Եզրափակելով հարցը՝ կը հաստատեմ որ նորակազմ գիրքերէն չորս օրինակ պիտի բերէ առաջին հերթին £8.60 ընդ[հանուր] գումար:

Դեկտ[եմբեր] 2ին պաշտօնապէս հրապարակ կ'ելլէ Ch[arles] Burney-ի եւ [David Marshal] Lang-ի արժեքաւոր գիրքը *Peoples Of The Hills - Ancient Armenia and Caucasus - History of Civilization* - շարքին մէջ [Լեռներու ժողովուրդները - Յին Հայաստան եւ Կովկաս - Զաղաքակրթութեան Պատմութիւն - շարքին մէջ]: Հրատարակչատունը Weidenfeld and Nicolson-ն է: Գիրքին գինն է £4.25: Հրատարակիչները օրինակ մը նուեր դրկած են ինծի:

Սեր աշխարհէն նորութիւններ չկան: Շաբաթ օր, 20ին, [Յակոբ Պարոնեանի] Պաղտասար Աղբարը պիտի ներկայացնենք. Պաղտասարի դերը ես ստանցնած եմ: Թատերախումբը Յ.Ե.Մ.ի Հրաչեայ Ներսիսեան Թատերախումբն է. ղեկավար՝ Ա[սատուր] Օհանեան:

33 Egerton G[ar]d[en]s ծախուելու վրայ է: Ուրեմն երկու ամիսէն Անգլիոյ 700,000 անգործներուն վրայ հատ մըն ալ պիտի աւելնայ:

[Հայկ] Գալուստեանը տպարանի մը ծրագիր ունի: Կ'աշխատի [Խաչիկ] Մթրըպեանն ալ հետաքրքրել այդ ծրագրով: Եթէ Մթրըպեանը համաձայնի, շատ լաւ ձեռնարկ մը կ'ըլլայ տպարանի գործը թէ որպէս առեւտրական շահաբեր աշխատանք եւ թէ որպէս շաբաթաթերթ մը ունենալու գրաւական: Իր իսկ խոստովանութեամբ՝ Մթրըպեանը տարին £125,000 սթերլինի տպագրական գործ ունի: Եթէ Մթրըպեանը չմտնէ գործին մէջ, Գալուստեանով միայն աշխատանքը գլուխ չի գար:

Հաւանաբար լսած ես որ [Գեորգ] Պլքեան անունով մէկը, նախկին Մելգոնեանցի, տպարան մը բացած է Լոնտոնի մէջ: Ամերիկայէն ալ հայերէն տառերու «անկողիներ» բերել տուած է: Ես առաջարկեցի Գալուստեանին եւ Մթրըպեանին, որ այդ մարդուն հետ գործակցին, փոխանակ նոր տպարան մը սկսելու: Խաչիկը համաձայն է, սակայն Հայկը՝ ոչ:

Եթէ տպարանի ծրագիրը չիրագործուի, ուրիշ գործ մը պիտի փնտռեմ, նախընտրաբար այլուր:

Նորակառոյց Նուարդ Կիւլպէնկեան Սրահին բացումը (21 Նոյեմբեր) յետաձգուած է Տիկին Ռ[իթա] Էսայեանի²² հիւանդու-





թեան պատճառով: Արդիական յարմարութիւններով կոկիկ սրահ մըն է այս, ուր 175-200 [անձ] կրնան տեղաւորուիլ:

Ե[րուանոյ] Պարսումեանը քովս եկած էր երեկ. կը բարեւ: Պէյրութ հանդիպեր է քեզի. կ'ուզէ որ [իր] վերջին գիրքը գրախօսեմ...: Կը նայինք *Ֆիլան* ըսի: Սա գրախօսել բայը սկսած եմ արդէն ատել: Աս ալ կ'անցնի:

Ջերմ ողջոյններ մերիններէն:

Սիրով՝
Ասատուր Կիւզելեան

ՆԱՄԱԿ 19

[Լոնտոն, 25 Յունուար 1972]

Սիրելի Վահրամ,

Ուշ գիշերով քանի մը տող կը գրեմ, ըսելու համար որ *Armenia*-ները [*Armenia Cradle of Civilization*] պատրաստ են: Ինչպէս գրած էի, երկու օրինակը [David Marshal] Lang-ի կողմէ սուեր է քեզի: Կ'ուզեմ գիտնալ թէ գիրքերը քեզի՝ թէ ուրիշ հասցէներու պէտք է դրկուին: Այս մասին երկտող մը գրէ:

Egerton Lodge-ը ծախուեցաւ: Առ այժմ մասնաւոր գործ մը չեմ ըներ: [Խաչիկ] Մթորպեան կը ծրագրէ տպարան մը հիմնել եւ յանձնել ինծի: Դժբախտաբար 5 շաբաթ է ի վեր բացակայ է Լոնտոնէն: Նախքան Չուիցերիա մեկնիլը խնդրեց, որ բոլոր մանրամասնութիւնները հաւաքեմ մինչեւ իր գալը: Այս մասին չեմ կարծեր որ գրած ըլլամ քեզի:

Տնեցիները լաւ են եւ կը յղեն ջերմ ողջոյններ:

Սիրով՝
Ասատուր

Յ.Գ. Գիրքերը քեզի պիտի ծախուին 2/3 գինով, որ կ'ընէ £4.34 իւրաքանչիւրը:



ՆԱՄԱԿ 20

[Լոնտոն] 8 Փետրուար] 1972

Սիրելի Վահրամ,

Armenia-ներէն [*Armenia Cradle of Civilization*] 3 հատ դրկեցի, մէկը քեզի՝ միւս երկուքը՝ [Էգրաս] Հասարթեանին եւ [Չաւէն] Տօլապճեանին, երեքն ալ ապահովագրեալ: Ստացագիրը կը գտնես ներփակ: Չորրորդը [Տէյվիտ Մարշըլ] Լանկը խոստացաւ շաբաթ մը բերել:

Նախորդ նամակիս մէջ չիշեցի կարծեմ թէ Փետր[ուար] 11ին 3 օրով Փարիզ պիտի երթամ: Փետր[ուար] 13ին «Կայծ Երիտասարդաց Միութիւնը» կազմակերպած է Վարդանանց ցերեկոյթ մը եւ հրաւիրած զիս՝ դասախօսելու:

Ներփակ կը գտնես պատճենը յանձնարարական նամակին, զոր Prof. Owen յղած է [Գալուստ] Կիւլպէնկեան Հիմնարկութեան Վրեժ Ներսէսեանի մասին: Վերջին 25 տարուան մէջ առաջին շնորհալի ու համեստ տղան է, որ [Էջմիածնի] Հոգեւոր Ճեմարանէն շրջանաւարտ եղած է: Անշուշտ [Հայոց] Մարդասիրական Ճեմարանի դերը՝ մանաւանդ Վրեժին անխոնջ աշխատանքը՝ արհամարհելի տուեալներ չեն, այնպէս որ վարկը լոկ Հոգեւոր Ճեմարանին բաժին չիյնար:

Խնդրելով կը **խնդրեմ** որ այս տղուն հարցին դրական լուծում տալ յաջողցնես: Վրեժին ծրագիրն է բարձրագոյն ուսում ստանալէ ետք վերադառնալ Էջմիածին: Այս ձեւով գոնէ Էջմիածինն ալ զարգացած անդամ մը կ'ունենայ:

[Խաչիկ] Մթըրպեանէն դեռ լուր չկայ: Զեզ տեղեակ կը պահեմ տպարանի հետ կապուած իրադարձութիւններուն:

Հայր Ներսէս Պոզապալեանն է հիմա Ս[ուրբ] Սարգիս Եկեղեցւոյ հոգեւոր հովիւը: [Հայր] Արսէնը [Պերպերեան] Փետր[ուար]ի վերջին կը վերադառնայ Էջմիածին... ակամայ:

Փարիզէն վերադարձիս կը գրեմ:

Ջերմ ողջոյններ մերիններէն:

Սիրով՝
Ասատուր

ՆԱՄԱԿ 21

[Լոնտոն] 30-4-[19]72

Սիրելի Վահրամ,

Շնորհակալութիւն 24 Ապրիլ թուակիրիդ համար: Ապրած էի զաւկի եւ հօր մահուան բերած վիշտը: Մարտ 16ին ապրեցայ նաեւ եղբոր մը [Մարտիկին] կորուստին ցաւը: 47 տարեկան էր միայն, խենթ սրտով տղայ մը՝ որուն կեանքին գոնէ առաջին 30 տարիները սպառեցան՝ իրմէ առաջ ու իրմէ աւելի՝ ուրիշներուն օգտակար ըլլալու վազքով:

Դուն եղբայր ունենալու հրճուանքէն զուրկ մնացած ես, այնպէս որ եղբոր մը կորուստին վիշտը պիտի չապրիս: Որքան զօրաւոր ըլլայ սերը՝ այնքան ծանր կ'ըլլայ սիրեցեալին կորուստին վիշտը:

Ստածումներս ամէն օր կ'երթան մօրս: Կեանքը յաճախ շատ անգութ է մայրերու հանդէպ: 73 տարեկան է ու կոյր մայրս: Հազար օրուան տառապանքին դիմաց հազիւ թէ մէկ օրուան ուրախութիւն ապրած ըլլայ: Արդեօք ի՞նչ ապրումներ կ'ունենայ հաւատացեալ այդ կինը հիմա: Ինչքա՞ն զօրաւոր է մայրական սերը: Հեռախօսով զիս կը մխիթարէր (իր անչափելի վշտին վրայ քար դրած) ըսելով, թէ փառք տանք Աստուծոյ, որ 3 եղբայրներդ միասին չմեռան...:

Մեծապէս շնորհակալ եմ օգտակար ըլլալու պատրաստակամութեանդ համար: Պետք եղած անմիջական օժանդակութիւնը հասցուցինք Հալէպ Պրն. [Սիմոն] Սիմոնեանի միջոցով:

Երեք ամիս անգործ մնալէ ետք՝ սկսած եմ հիմա գործի Brantford Nylons-ի մէջ: Տպարանի եւ թերթի ծրագիրը յետաձգուեցաւ [Խաչիկ] Մթրըպեանի բազմազբաղ (եւ ըստ ոմանց հիւանդ) ըլլալուն պատճառով: Գալով գործիս՝ առ այժմ Ivan-ին [Alexy] հետ եմ, բայց շուտով, հաւանաբար շաբաթէ մը, ստանցնեմ Brantford-ի կեդրոններէն մէկուն տնօրէնութիւնը (manager): Վճառումը գէշ չէ (տարեկան £2,000) բայց ծանր է աշխատանքն ու ժամերը՝ երկար: Առտուան ժամը 8.00ին կը ձգեմ տունը եւ կը վերադառնամ ժամը 7.30ին կամ 8.00ին:

Ներկայ պայմաններու մէջ, երբ եղբոր մը որբեւայրիին եւ 3 անչափահաս զաւակներուն ձեռք երկարելու խնդիրը կայ՝ կարելորդ գոհացուցիչ ամսականն է գործի բնոյթէն առաջ:



Սիրելի Վահրամ, տեղեակ պահե՛ գիս Լոնտոն հասնելու մանրամասնություններուդ մասին: Եթե ցերեկին գաս, դժբախտաբար (առաջին անգամ ըլլալով) քեզ դիմաւորելու բախտը պիտի չկրնամ ունենալ: Այդ մասին անհոգ եղիր. կը դրկեմ Ներսէսը Վ[ա]րդ[ապետ] Պոզապալեանը, որ Ս[ուրբ] Սարգիսի հոգ[եւոր] հովին է հիմա: Արսէնը [Վարդապետ Պերպերեան] հանեցին: Ներսէսը լաւ տղայ է եւ ազգական ինծի:

Եթե առանց լուր տալու գաս, անմիջապէս կը հեռախօսես տուն կամ կու գաս ուղղակի 20, Hans Crescent: Մտերիմի մը հետ ըլլալու, խօսելու, նոյնիսկ «վիճելու» մեծ պահանջք ունիմ...: Եթե ցերեկին միասին չըլլանք՝ գոնէ գիշերները միասին կ'ըլլանք:

Ձերմ ողջոյններով եւ սիրով՝
Ասատուր

ՆԱՄԱԿ 22

[Լոնտոն] 31 Մայիս, 1974

Սիրելի Վահրամ,

Ստացայ նամակդ այս առտու: Հոն արժարծուած հարցերուն կ'անդրադառնամ հետագային: Այս անգամ կը բաւականանամ տխուր լուրը հաղորդելով:

Մայիս 18ի գիշերը Պրն. Պետրոսը [Ալեքսեան] (աներհայրս) յանկարծամահ եղաւ: Թաղումը կատարուեցաւ Մայիս 28ին:

Շատ բան կայ գրելիք հանգուցեալի կեանքին ու մահուան հետ առնչուած: Այդ մասին յետոյ:

Կորինը [Համազասպ Մարթին] թաղման ներկայ գտնուեցաւ: Տակաւին հոս է:

Այս քանի մը տողերը, ի գիտութիւն գրեցի, գիտնալով որ հանգուցեալն ու դուն կը համակրէիք իրարու:

Պզտիկ խնդրանք մը: [Մելքոն] եղբօրս տղան, [Ասատուրը]²³ որուն հասցէն կը գտնես ստորեւ, կը փափաքի դիմել ձեզի կրթաթոշակի համար: Բարի գտնուիր հարկ եղած *ֆորմերը* դրկել իրեն:





Assadour [Melkon] Guzelian
 Melafold
 Haws Bank
 Conistan, Lancashire
 LA218AR
 Ամմիջապէս որ ընտանեկան սուգէն գլուխս քիչ մը հանգստանայ՝ կը գրեմ:

Սիրով՝
 Ասատուր

Յ.Գ. Կորիւնը կը յղէ ջերմ ողջոյններ:

Նոյն

ՆԱՄԱԿ 23

[Լոնտոն] 2 Սեպտեմբեր, 1975

Սիրելի Վահրամ,

Նամակդ նոր ստացայ: Հաւանաբար յապաղման պատճառը ձեր երկրին վիճակն է:

Վիվիէնն ու ես շնորհակալութիւն կը յայտնենք վշտակցական խօսքերուդ համար: Այս պարագային մահը իսկապէս որ տառապանքէ ազատում եղաւ: Երբ վիշտը ընտանիքի մը օձիքէն բռնէ՝ ալ չձգէր: Սիլվիային [Ալեքսի] առողջութիւնը շատ գէշ է: Խեղճը աւելի քան տարի մըն է որ կը տառապի: Աստուած վերջը բարի ընէ:

Ես այն տպաւորութեան տակն եմ, որ մեր վերջին հանդիպումէն յետոյ առաջին նամակն է որ կը ստանամ քեզմէ: Եթէ ենթադրութիւնս ճիշդ չէ՝ ներողամիտ գտնուիր:

«Լոնտոն»ի մասին ըրած թելադրութիւններուդ համար շնորհակալ եմ: Ճիշդն ասած՝ սկսած եմ մտածել թէ ինչո՞ւ այս ժողովուրդին համար սկսայ թերթ հրատարակել... թէեւ կը հաւատամ որ ամէն համայնք գէշ աղէկ թերթ մը պետք է ունենայ, սակայն միւս կողմէ, երբ մարդիկ չեն ուզեր նուազագոյն զոհողութիւնը ընել թերթի մը գոյութիւնը ապահովելու համար, այն ատեն կը տարուիս մտածելու թէ թափած ճիգդ ժամանակի բացարձակ վատնում է:





Անցեալ տարի մօտ 100 բաժանորդ ունէի, հակառակ անոր որ տարի մը ամբողջ թերթ դրկեցի աւելի քան 800 հասցէի: Այս տարի միայն 50 հոգի բաժանորդագին վճարած է...: Թերթն անցեալ տարի շուրջ £400 վնաս արձանագրեց:

Վեհը [Վազգէն Կաթողիկոս Պալճեան] Պսակ Սրբազանին [Թումայեան] եւ վերջնոյն կողմնակիցներուն յստակ դարձուց, թէ՛ առաջին տեսակցութիւններու ընթացքին եւ թէ հրապարակային իր ելոյթներով, որ Լոնտոնի մէջ կը ճանչնայ, որպէս եկեղեցական համայնական հեղինակութիւն միայն Ներսէս Եպիսկոպոսն [Պոզապալեան] ու Յ[ամայնքային] Եկեղեցական] Խորհուրդը: Միւս կողմէ թէ՛ Քենթրպըրիի Արքեպիսկոպոսին [Տոնըլտ Քոկան] եւ թէ Լոնտոնի Եպիսկոպոսին [Ճերըլտ Էլիսըն] յստակ դարձուց որ Լոնտոնի մէջ համայնքը երրորդ եկեղեցիի մը պէտք չունի եւ թէ ինք իր հաւանութիւնը տուած է միայն Ս[ուրբ] Պետրոս Եկեղեցւոյ ստանձման համար:

Վեհը Պսակ Սրբազանին երկու ամսուան պայմանաժամ տուած է եւ առաջարկած՝

- ա. Երթալ Ժընեւ
- բ. Երթալ Էջմիածին
- գ. Երթալ Երուսաղէմ

Սրբազանը ցարդ ոչ միայն տեղէն շարժելու տրամադրութիւն չունի, այլ՝ հաւաստի աղբիւրներէ կ'իմանամ, որ կ'աշխատի մեթոտիստներէն եկեղեցի մը ապահովել եւ գործածել իբրեւ հայ եկեղեցի...:

Մանչեսթրի Տէր Աշոտ Բ[ա]հ[ա]յն[այ Տէր Յարութիւնեան] կեանքը քեզի երկու շաբաթ առաջ վախճանեցաւ: Մահը անոր համար ալ փրկութիւն եղաւ:

Ես Սեպտեմբեր 25ին արձակուրդով կը մեկնիմ Պէյրութ, Յալէպ, Թեհրան. վերադարձ՝ Պէյրութ, Յալէպ: Հոկտեմբեր 5ին կ'ըլլամ Թեհրան, Հոկտեմբեր 6ին [Համազասպ] Մարթինին տարեդարձը տօնելու համար: Միջանկեալ ըսեմ որ Վեհին Լոնտոն գտնուած շրջանին Մարթինն ալ հոս էր: Առտու մը Վեհին ներկայացանք եւ որպէս աջահամբոյր Մարթինը £1000 նուիրեց Վեհին «Լոնտոնում մանր-մուկ ծախսերի համար»: Ոմանց համար 1000 սթերլինը «մանր-մուկ ծախսերի համար» է ...:

Հաւանաբար Պէյրութ հանդիպինք, թէեւ Լիբանանի կացութիւնն այնքան ալ լաւ չէ:





Ամուսնական խնդիրն ի՞նչ եղաւ: Մարդ Աստուծոյ, որոշէ եւ ըրէ: Բաւական թիւով ամուսնացած բարեկամներ ունիս, այնպէս որ լաւն ու վատը՝ գոնէ դուրսէն՝ գիտես:

[Աւետիք] Իսահակեանի 100ամեակին երթալու տրամադրութիւն չունիմ, ոչ ալ պատրաստ եմ 4 ժամ տեւող ռուսերէն ճառեր լսելու:

[Յամայնքային Եկեղեցական] Խորհուրդի վերջին ժողովին որոշեցինք Մարոյ Մարգարեանը [Սփիւռքահայութեան Հետ Մշակութային Կապի Կոմիտէի] (Եւրոպական բաժնի վարիչ) Լոնտոն հրաւիրել: Թուականը ձգեցինք իրեն: Լոնտոն այցելելու ցանկութիւնն անշուշտ Մարոյէն եկած է:

Գալով ինծի՝ շատ յոգնած եմ *ֆիզիք*ապէս: Անձկութեամբ կը սպասեմ Սեպտեմբեր 25ին...: Հաւանաբար միակ հանգիստ շաբաթն անցնի Կասպից Ծովու ափին, մանաւանդ եթէ Մարթինը կուսակցութեան գործերը պարսկական հողի վրայ լաւ փլանաւորէ...: Երկու տարի առաջ հոն գործերը լաւ չդասաւորուեցան: «Ձիւն կու գայ»ի պատմութիւնն անպայման պատմած եմ քեզի:

Լաւ, այսքանով պիտի բաւականանամ, քանի որ դուրսը երկու գեղանի օրհորդներ կը սպասեն. գործ կը փնտռեն:

Սիրով՝
Ասատուր

[Յ.Գ.] Վիվիէնը, Կարինէն եւ Արմինէն պաչիկ կը դրկեն:

Նոյն

ՆԱՄԱԿ 24

[Լոնտոն] 24.11.77

Սիրելի Վահրամ,

Քանի մը տող աճապարանքով կը գրեմ, ըսելու համար որ ժամ մը ետք (12ին) կը մեկնիմ Դամասկոս, ապա Հալէպ՝ մօրս մահուան քառասունքին ներկայ ըլլալու համար: Այո, Հոկտեմբեր [24ին յանկարծամահ եղաւ մայրիկը: Միակ ցաւս այն է, որ Սեպտեմբերին արդէն գացած պէտք է ըլլայի քովը եւ չկրցայ:





Մարտէն ի վեր կը փորձեմ առեւտուրով զբաղիլ: Վերոգրեալ [TEVGLOW LTD.] Ընկերութիւնը հիմնեցինք: Ընկերութեան գործերով Անգլիայէն շուրջ 2 ամիս պիտի բացակայիմ: Պիտի այցելեմ նաեւ Լիբանան, Կիպրոս, Երուսաղէմ, Յորդանան եւ Պարսկաստան:

Հասկնալի պատճառներով լրատու նամակ գրելու տրամադրութեան մէջ չեմ այս պահուս. կը ներես:

Ձերմ ողջոյններ Իվօնին [Մավեան] եւ քեզի մեր բոլորէն:

Սիրով՝
Ասատուր





ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Տոքս. Ռուպեր Ճեպեճեան

Ծնած է Այնթապ 1909ին, մահացած Հալեպ՝ 2000ին: Անուանի ակնաբոյժ, ազգային գործիչ, նկարիչ: Աւարտելով Պէյրութի Ամերիկեան Համալսարանի բժշկական բաժինը, Հալեպի մէջ հիմնած է Ճեպեճեան ակնաբուժարանը: 1948ին Հալեպի մէջ եղած է հիմնադիրը Աչազրկութեան Կանխարգիլման Սուրիական Ընկերութեան, որու նախաձեռնութեամբ, 1955ին Սուրիոյ մէջ բացուած է կոյրերու առաջին դպրոցը: 1955ին, դարձեալ Հալեպի մէջ Զարեհ Գաբլանի հետ հիմնած է Մարտիրոս Սարեան նկարչական ակադեմիան: Ճեպեճեանի նախաձեռնութեամբ Հայաստան տեղափոխուած են նկարիչներ Արմիսի եւ Ժիրայր Օրագեանի կարգ մը գործերը, բազմաթիւ ձեռագրեր, հնատիպ գիրքեր եւ հայկական ժանտակներու հաւաքածոներ: Վարած է պատասխանատու պաշտօններ Հ.Բ.Ը.Մ.ի Սուրիոյ մասնաճիւղէն ներս: 1968ին հիմնած է Հ.Բ.Ը.Մ.ի «Մատենագիտական Յանձնախումբ»ը: Հրատարակած է ցեղասպանութեան եւ փախստականներու նուիրուած նիւթեր եւ *ալպոմներ*: Որպէս նկարիչ՝ տուած է շարք մը ցուցահանդէսներ: Պարգևատրուած է բազմաթիւ պարգևագրերով եւ շքանշաններով:

2. Կոստանեան Լուսի

Մելգոնեան Կրթական Հաստատութեան մէջ աշակերտած է Վ. Մավեանին: Մասնակցած է լոնտոնահայութեան ընկերային եւ մշակութային կեանքին Հ.Ե.Մ.ի խողովակով:

3. Կիսիւնկեան Յակոբ

Երկար տախներ եղած է Լոնտոնի «Հայ Տուն»ի պատասխանատու քարտուղարն ու մատակարարը:

4. Շողիկ Սաֆեան

Բանաստեղծուի, արձակագիր, թարգմանիչ: Ծնած է Խնձորեսկ 1916ին, մահացած Երեւան՝ 1995ին: Գարեգին Սեւունցի կինը: Աւարտած է Պաքուի Մանկավարժական Ինստիտուտի պատմութեան բաժինը: Սաֆեանի բանաստեղծութիւնները համակուած են ընարականութեամբ: Իր գործերէն յիշենք՝ «Կարօյի Երգեր» (բանաստեղծութիւններ), «Ամենալաւ Նուէրը» (պատմուածքներ), «Մեր Երգը» (բանաստեղծութիւններ), «Մի Հին Հեքիաթ է Սա» (արձակ բանաստեղծութիւններ):

5. Լուսին Ամարա (Արմաղանեան)

Աշխարհահռչակ հայ երգչուի:

Տես՝ Lucine Amara Wikipedia:

6. Միրզայեան Յովսէփ

Ծնած է Պարսկաստանի Համաստան քաղաքը 1868ին, մահացած Թեհրան՝ 1935ին: Յայտնի է որպէս թարգմանիչ: Հայերէնի թարգմանած է Պայրընի, Լոնկֆելտի, Սքոթի, Վիկտոր Հիլոյի ստեղծագործութիւններէն: Բարձր գնահատուած են Միրզայեանի Օմար Խայամէն կատարած թարգմանութիւնները: Հայրն է պարսկահայ անուանի գրող եւ թարգմանիչ Զորայր Միրզայեանի:

7. 1967 Մարտ 14ին Լոնտոնի Sotheby's ընկերութիւնը կը ծրագրէր աճուրդով վաճառել 23 հայերէն ձեռագրեր: Տեղին կը նկատենք հակիրճ կերպով պատմել թէ ինչպէ՞ս արգիլուեցաւ այդ ձեռագրերուն վաճառքը:





1967 Փետրուարին (ճիշդ օրը չեն յիշեր) տիկինն եւ ես (Ա.Կ.) հրափրուած էինք ընթրիքի Փրոֆ. Տէյվիտ Մարշլը եւ Տիկին Լանկի կողմէ, որոնք յարկաբաժին մը ունէին Լոնտոնի Համալսարանի Արեւելեան եւ Ափրիկեան Ուսմանց Դպրոցի դասախօսներուն համար նախատեսուած շէնքին մէջ: Փրոֆ. Լանկ այդ տարիներուն Լոնտոնի Համալսարանի Կովկասեան Ամպիոնի վարիչն էր: Ընթրիքէն յետոյ Փրոֆ. Լանկ յայտնեց որ Sotheby's-ը Մարտ 14ին աճուրդով քսան երեք հայերէն ձեռագրեր պիտի վաճառէ: Sotheby's-ը նախատեսուած աճուրդի *քարթալի* վորձը դրկած էր իրեն սրբագրելու համար, տրուած ըլլալով որ *քարթալի* հեղինակը, հայագէտ Փրոֆ. Չարլզ Տաուսէթ «կամքէ անկախ» պատճառներով չէր կրցած ստանձնել այդ աշխատանքը: Երբ *քարթալի* աչքէ անցուցի, ուշադրութիւնս գրաւեցին քանի մը ձեռագրեր, որոնք կը պատկանէին Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան:

«Յիշողութեամբ գիտեմ, որ այս ձեռագրերուն գոնէ մէկ մասը կը պատկանի Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան», ըսի Լանկին:

Փրոֆ. Լանկ անհաւատալի գտաւ հաստատումս:

«Sotheby's-ը մեծ վարկ ունեցող կազմակերպութիւն է եւ մման բան չըներ», ըսաւ ան:

Տուն վերադարձանք կէս գիշերին: Առտուան ժամը մէկին հեռագիր մը դրկեցի Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Ա.ին եւ յայտնեցի եղելութիւնը: Հեռագրին մէջ ըսի որ յիշողութեամբ գիտեմ որ ձեռագրերուն մէկ մասը գոնէ Ս. Յակոբեանց Միաբանութեան կը պատկանի: Թելադրեցի Վեհափառին անմիջապէս կապուիլ Եղիշէ Պատրիարք Տէրտէրեանի հետ եւ հրահանգել անոր կատարել ձեռագրերու վաճառքը:

Յաջորդ առտու Վեհափառէն ստացայ հեռագիր մը, որով ան կը հաստատէր որ ձեռագրերը գողցուած են Երուսաղէմէն եւ կը թելադրէր որ ամէն միջոց ձեռք առնենք վաճառքը արգիլելու համար: Հեռախօսով Վեհի հեռագրին բովանդակութիւնը յայտնեցի «Թայմզ» թերթի խմբագրին, որ թղթակից մը դրկեց հարցին մօտէն ծանօթանալու համար: Մինչ այդ, կապուեցայ Կաթողիկոսական Պատուիրակ Պսակ Եպիսկոպոս Թումայեանին եւ Համայնական Եկեղեցական Խորհուրդին հետ եւ խնդրեցի որ հարկ եղած քայլերն առնուին անմիջապէս:

Յաջորդ առտու «Թայմզ» թերթը հրատարակեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի հեռագիրը, որուն անդրադարձան անգլիական բոլոր թերթերը: Ձեռագրերու գողութիւնը շուտով դարձաւ միջազգային մամուլի ճիւղ:

Վահրամին գրած նամակներու մէջ տրուած են կարգ մը տեղեկութիւններ ձեռագրերը փրկելու առնչութեամբ առնուած քայլերու մասին: Իմ առաջադրանքս չէ հոս տալ ձեռագրերու գողութեան ամբողջական պատմութիւնը, այլ պատմել միայն՝ թէ ինչպէ՞ս արգիլուեցաւ անոնց վաճառքն ու Շահէ Եպիսկոպոս Աճեմեանի ձեռամբ անոնք տարուեցան Երուսաղէմ:

Փրոֆ. Միրարփի Տէր Ներսէսեան, որ ուսումնասիրած էր Երուսաղէմի Պատրիարքութեան ձեռագրերը եւ ծանօթ էր միջազգային շրջանակներու մէջ որպէս մեծ մասնագէտ, Փարիզէն Լոնտոն եկաւ, որպէս աներհօրս, Պետրոս Ալեքսեանի հիւրը եւ շաբաթ մը մնաց մեր պանդոկը, Egerton Lodge: Ս. Ներսէսեանի ներկայութիւնը խիստ կարեւոր էր այն պարագային յատկապէս՝ երբ հարցը դատարան տարուէր: Լոնտոն հասան նաեւ Շահէ Եպիսկոպոս Աճեմեան, Ալեք Մանուկեան եւ Հ.Բ.Ը.Մ.ի Չուիցերիոյ ներկայացուցիչ, իրաւաբան Շաւարշ Մելոյեան, որոնք հանդիպում ունեցան Sotheby's-ի տնօրէնութեան հետ եւ համոզեցին զայն որ ձեռագրերը գողցուած են Երուսաղէմի Հայոց Պատրիարքարանէն: Ստեղծուած միջազգային աղմուկը բացասական անդրադարձ կ'ունենար Sotheby's-ի վրայ, որ ամէն գնով տհաճ կացութեան կ'ուզէր դուրս գալ անվնաս...:

Ուստի Sotheby's-ը հետեւեալ առաջարկը ներկայացուց: Եթէ Երուսաղէմի Պատրիարքարանը վճարէ աճուրդի կազմակերպման հաշտն մինչեւ հիմա Sotheby's-ի ըրած ծախսը եւ վաճառքէն ստանալիք շահը, 50,000 սթերլին, ձեռագրերը կը վերադարձուին տիրոջ:

Շաւարշ Մելոյեան հետեւեալ առաջարկը ներկայացուց Ալեք Մանուկեանին:

Sotheby's-ին դրամատոմսով մը վճարել 50,000 սթերլին, որպէսզի Շահէ Եպիսկոպոսը





կարենայ ձեռագրերը տանիլ Երուսաղէմ: Օրը ուրբաթ էր. Sotheby's-ը դրամատոմսը գանձելու համար պէտք ունէր առնուազն երեք օրուան: Անմիջապէս որ ձեռագրերը յանձնուէին Շահէ Եպիսկոպոսին՝ Ալէք Մանուկեան կը հրահանգէր դրամատան որ իր տուած դրամատոմսը չեղեալ նկատէ...:

Ըստ Սեւյօնքեանի, Sotheby's-ը երբ կատարուած իրողութեան տեղեկանար, հետեւեալ երկու քայլերէն մէկը պիտի առնէր.

ա. Դիմել դատարան,

բ. Հարցը փակուած համարել:

Դատարան դիմելու պարագային՝ ձեռագրերը վաճառել փորձողներուն ինքնութիւնն ի յայտ պիտի գար, որուն իբրեւ հետեւանք՝ Sotheby's-ը հետագային կարետր քիտլ յաճախողներու վստահութիւնը պիտի կորսնցնէր. հանգամանք մը՝ որ պատճառ պիտի դառնար նիւթական մեծ վնասներու:

Սեւյօնքեանի նախատեսութիւնը ճիշտ ելլաւ: Sotheby's-ը հարցը փակուած համարեց:

Պարզուեցաւ որ Sotheby's-ը իր պաշտօնեաներէն մէկը ուրբաթ օր դրկած էր Ամերիկա, երկուշաբթի առտու դրամատոմսը գանձելու համար:

Իր վարկը չկորսնցնելու համար Sotheby's-ը երկու օր յետոյ հրատարակեց հաղորդագրութիւն մը, որ ըստած էր որ ստացուած 50,000 սթերլինը կը նուիրէր Երուսաղէմի հայ որբերուն...:

8. Տէր Ներսէսեան Սիրարփի Փրոֆ.

Անուանի արուեստաբան, քիզանդագէտ, հայագէտ:

Տես՝ Sirarpie Der Nersessian Wikipedia

9. Պապեան Կորին Վրդ. (ապա՝ Արք.)

Յաճախած է Նշան Փալանճեան ճեմարանը: 1957ին ընդունուած է Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի Դպրեվանքը: 1963-1967 վարած է Ճեզիրէի Թեմի առաջնորդական փոխանորդի պաշտօնը: 1967ին ընդունուած է Օքսֆորտի Համալսարանը, ուրկէ ստացած է տոքթորական աստիճան, պաշտպանելով «Հայ-Վրացական Եկեղեցիներու Յարաբերութիւնները» աւարտաճառը: Շուրջ քսանհինգ տարի եղած է Ջուղայի Հայոց Թեմի Առաջնորդ, ապա՝ մօտ տասը տարի վարած է Քուէթի եւ Արաբական Ծոցի երկիրներու կաթողիկոսական փոխանորդի պաշտօնը: 2012ին վերադարձած է Անթիլիաս: Հեղինակ է գրական եւ պատմաբանասիրական բազմաթիւ յօդուածներու:

10. Լիսիցեան Պաւել

Աշխարհահռչակ պարիթոն:

Տես՝ Pavel Gerasimovich Lisitsian Wikipedia:

11. Սուրէն Քոչար

Ծնած է 1904ին Թիֆլիս, մահացած Մոսկուա 1979ին, քաղուած՝ Երեւան: Անուանի դերասան, որ 1932էն սկսեալ զբաղած է ասմունքով, արժանանալով «մի դերասանի թատրոն» կոչումին: Սուրէն Քոչար կամ Քոչարեան կը նկատուի մեծագոյն հայ ասմունքողը: Ես (Ա.Կ.) առիթ ունեցած եմ կախարդուած լսելու Քոչարի ասմունքի երեկոյթները երկու առիթներով Երեւանի մէջ 1963ին եւ 1968ին:

12. Բաղրամեան Մարշալ Յովհաննէս

Սովետական բանակի անուանի հրամանատար:

Տես՝ Ivan Khristoforovich Bagramyan Wikipedia:

13. Բաբաջանեան Մարշալ Համազասպ

Սովետական Միութեան Թանկային ուժերու ընդհանուր հրամանատար:

Տես՝ Marshal Hamazasp Khachaturi Babadzhanian Wikipedia:

14. Մարտիրոսեան Անդրանիկ

Սփիւռքահայութեան Հետ Մշակութային Կապի Կոմիտէի առաջին փոխ-նախագահը:

15. Յարութիւնեան Վարազդատ

Ճարտարապետութեան պատմաբան-տեսաբան: Տոքթ.-Փրոֆ., ՀՀԳԱ անդամ, Արուես-





տի վաստակատու գործիչ: Ծնած է Վան 1909ին, մահացած 2008-ին, Երեւան: Աւարտած է Երեւանի Պետական Համալսարանը (1937), ուր եւ դասաւանդած է 1937-1999 տարիներուն: Վարած է բազմաթիւ պատասխանատու պաշտօններ: Եղած է «Յուշարձանների Պահպանութեան Կոմիտէ»-ի նախագահ, Հայաստանի կառավարութեան խորհրդատու ճարտարապետութեան գծով, Հայաստանի ճարտարապետներու Միութեան նախագահ: Իր հրատարակած գործերէն յիշենք՝ «Հայկական ճարտարապետութեան Յուշարձաններ» (1951), «Սովետական Հայաստանի ճարտարապետութիւնը» (1955), «Երեւան» (1968), «Հայկական ճարտարապետութեան Պարմութեան Մի Զանի Հարցեր» 1969), «Հայաստանի Յուշարձանները» (1975), «Հին Աշխարհի ճարտարապետութիւնը» (1978), «Մակարավանք» (1994): Վ. Յ. ի «ճարտարապետական Յուշարձանների Վերականգնումը» (2003) աշխատութիւնն արժանացած է Վահան Թէքեան մրցանակի 2005ին: Վերոյիշեալ գիրքերէն շատեր հրատարակուած են նաեւ օտար լեզուներով, ինչպէս ռուսերէն, իտալերէն, եսպան: Վ. Յ. ի գլուխ գործողը կը նկատուի «Հայկական ճարտարապետութեան Պարմութիւն» (1992) կորողային գործը: Վ. Յ. եղած է նաեւ Հայկական Հանրագիտարանի Գիտահրատարակչական Խորհուրդի անդամ, Մայր Աթոռի ճարտարապետաշինական Յանձնաժողովի նախագահ, եսպան: Պարգևատրուած է ՀՀԳԱԱ Թորոս Թորամանեանի անուան մրցանակով, Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմէ՝ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ շքանշանով, ՀՀ Անամիա Շիրակացի եւ Ա. Թամանեան ոսկէ մետալներով:

16. Բաղայեան Յովհաննէս

Անուանի հայ երգիչ:

Տես՝ Hovhannes Badalyan Wikipedia:

17. Վարդանեան Հայաստան

Լոնտոն հաստատուած իրաքահայ: Հ. Յ. Գ. ի Լոնտոնի դեկավարներէն:

18. Նալպանտեան Լուիզ Փրոֆ.

Ծնած է Սան Ֆրանսիսքոյ 1926ին, մահացած Ա.Մ.Ն՝ 1974ին: Աւարտած է Սան Ֆրանսիսքոյի Համալսարանը: Հայագիտութեան ամպիոն հիմնած է Ֆրեզնոյի Համալսարանին մէջ, ուր եւ դասաւանդած է: Լ. Ն. ի աշխատութիւնները կը վերաբերին ԺԹ. դարու վերջատարութեան հայ զատագրական շարժումներու, մշակոյթի եւ քաղաքական կուսակցութիւններու պատմութեան:

19. Այս արտայայտութեան հեղինակը տասնչորս տարեկան կիպրահայ Յակոբը եղած է, որ ունեցած է շատ անոյշ բնատրութիւն, բայց 6-7 տարեկանի ուշիմութիւն...: Մելգոնեանցիներու քաշքշուքը Յակոբ միշտ ընդունած է իրեն յատուկ մանկական ժպիտով: Այդ տարիներուն Ղեւոնդ Եպիսկոպոս Չէպէեան, որուն ժողովուրդը «ողորմելի» տիտղոսը տուած էր, եղած է կիպրահայոց թեմի առաջնորդը: Դէպքը ինծի պատմած է Վահրամ Մավեանը:

Կիրակի օր մը Մելգոնեանի տղաքը *վոլիպոլ* կը խաղան հաստատութեան մարզադաշտին մէջ: Հանիսականներու մէջ կը գտնուի նաեւ Ղեւոնդ Սրբազան, որ սովորութիւն ունէր ձեռքը ձեռքին վրայ այնպիսի ձեռով մը դնելու, ըստ որում անկարելի էր որ իրեն նայողը մատնեմատի մեծկակ մատանին չնշմարէր...: Այդ օր Սրբազանին քով կանգնած կ'ըլլայ վերոյիշեալ տասնչորս տարեկան Յակոբը: Սրբազանը կ'որոշէ ինք ալ ձեռք առնել տղան: Դէմքը քնծիծաղով շարուած՝ կը դառնայ տղեկին եւ կը հարցնէ.

«Տղաս Յակոբ, դուն ալ *ֆոլիպոլ* կը խաղաս»: (Ղեւոնդ Սրբազան վ-ին միշտ **Ֆ** տառի ձայնային արժէքը կու տար):

Արիամարիական ժպիտով մը Յակոբ Սրբազանին կը նայի եւ կ'ըստ.

«*Եսնի* Սրբազան, հիմա մարդ չմնաց, դո՛ւն ալ սկսար զիս *ալայի* առնելու»:

20. Մելքոնեան Զարեհ

Բանաստեղծ, հրապարակագիր, մանկավարժ: Ծնած է Հալէպ 1923ին, մահացած Ա.Մ.Ն.՝ 2012ին: Աւարտած է Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը: 1956-64ին եղած է Թ.Մ.Մ. ի ատենապետ, միաժամանակ խմբագրած՝ «*Շիրակ*» ամսաթերթը: 1968ին հաստատուած է Ա.Մ.Ն.: Իր ստեղծագործութիւններէն յիշենք՝ «*Ես եւ Մարդիկ*» (1943), «*Չրիհեղէն Յեպոյ*»





(1947), «Երջանկություն» (1950), «Քերթնածներ» (1962), «Մինչև Ափերը Անկարելիին» (1967), «Լեռներ Վիհերուն Մէջ» (1978), «Ծնծղաները Ոչինչին» (1982): Գրած է նաև թատրերգություններ, որոնցմէ յիշենք՝ «Միրոյ Յանցին Մէջ», «Անգոյ Հեղբեր», «Ահա Այսպէս Ապրեցանք», «Արդասագողին Հայրը»: Կազմած է նաև հայերէն դասագիրքեր:

21. Մանուկեան Մարի

Ալեք Մանուկեանի կինը:

22. Էսայեան Ռիթա

Գալուստ Կիւլպէնկեանի դուստրը, որուն ամուսինը, Մայքըլ Էսայեան, եղած է Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան տնօրէններու խորհուրդի անդամ:

23. Կիւզելեան Ասատուր Մելքոնի

Անուանի լուսանկարիչ: Գրող Ասատուր Կիւզելեանի եղբօր՝ Մելքոն Կիւզելեանի որդին: Ծնած է Լոնտոն եւ հասակ առած Անգլիոյ գեղատեսիլ հիւսիսը, «Լիճերու Մարզ»ին մէջ (Lake District): Վեց տարի աշխատելէ ետք Պրետֆրըտ քաղաքի Barry Wilkinson նկարչական կազմակերպութեան մէջ՝ հիմնած է իր սեպիական՝ «GUZELIAN» *ֆոթոթուրնալիստական* ընկերութիւնը: Տուած է լուսանկարչական բազմաթիւ ցուցահանդէսներ եւ շահած՝ մրցանակներ: Կ'արժէ յիշել որ Ասատուր 80ական թուականներուն երկու տարի յաջորդաբար շահած է Եորքշայր Հեռուստատեսութեան «Տարուան Լուսանկարիչ» մրցանակը (Yorkshire Television Photographer of the Year): Ասատուր Հայաստանի ահաւոր երկրաշարժէն երկու օր անց՝ այցելած է հայրենիք, նկարած հարիւրաւոր լուսանկարներ, զորս ցուցադրած է Մեծն Բրիտանիոյ բազմաթիւ քաղաքներուն մէջ, իր իսկ կազմակերպած ցուցահանդէսներու ընթացքին: Ներկայիս ան կ'ապրի ու կը շարունակէ աշխատիլ Անգլիոյ Պրետֆրըտ քաղաքին մէջ: Յատելալ տեղեկութիւններու համար տես՝ <http://www.guzelian.co.uk>:





ԲԱՌԱՐԱՆ ՀԱՅԱՏԱՌ ՕՏԱՐ ԲԱՌԵՐՈՒ

Ալյալի (*թրք.*) առնել վրան խնդալ:

Աման (*թրք.*) Չարմանք արտայայտող բացականչություն. օր. աման Աստուած (Աստուած իմ...):

Անեկդոտ Չուարճախօսություն, կատակ, ծիծաղելի պատմություն:

Էշեկ (*թրք.*) Էշ:

Էֆենտի (*թրք.*) Պատուանուն, որ կը տրուի բարձրաստիճան պաշտօնեաներու եւ զարգացած մարդոց:

Լիրիկ Քնարական, քնարերգակ:

Յոնորար (*լատ.*) Վարձատրություն, հրատարակուած յօդուածի մը կամ գրքի մը համար եղած վճարում:

Ճինս (*թրք.*) Տեղ, սերունդ, տոհմ, կենդանիի տեսակ:

Ճանըմ Սիրելիս, հոգիս:

Նազ տուզ ընել (*թրք.*) Ինքզինք բանի մը շուտով համաձայնիլ չուզել ձեւացնող:

Նէ Մասնիկ՝ որ բայի մը ետեւ դրուելով

կը նշանակէ եթէ. օր. ուզեք *նէ* (եթէ ուզեք):

Պիւտճէ (*անգ.*) Ելք ու մուտքի նախահաշիւ ճշդուած ժամանակաշրջանի մը համար: Օր. տարեկան պիւտճէ:

Վազ (*թրք.*) Դրուելով բայէ մը առաջ կը նշանակէ հրաժարիլ, չգործադրել. օր. վազ անցիր (հրաժարիր, մի գործադրեր):

Տէ Բայէն ետք գործածուած մասնիկ, որ կը նշանակէ՝ ալ. օր. այս գործը կարգադրուէր *տէ* (այս գործը կարգադրուէր *ալ*):

Փերֆիտէ (*լատ.*) Դաւանան, ուխտադրութ:

Փրոֆեսիոնալ (*լատ.*) Մասնագիտական:

Քեպապ Մանրացուած միսով պատրաստուած խորոված:

Ֆիլան (*թրք.*) Եւայլն:

Ֆինանսաւորել (*լատ.*) Ծրագրի մը կամ գործարքի մը իրականացման հաշւոյն դրամ վճարել:

Ֆորթըրփի (*յուն.*) Պատճեն:

ԲԱՌԱՐԱՆ ԼԱՏԻՆԱՏԱՌ ԲԱՌԵՐՈՒ

Air letter Նամակատան կողմէ օդային թղթաւորի համար նախատեսուած նամակի թուղթ:

BBC [British Broadcasting Corporation] Չայնասփիւռի եւ հեռուստատեսութեան անգլիական ընկերություն:

Congress Համաժողով, ծերակոյտի եւ երեսփոխաններու ժողով:

Degree Գիտաստիճան:

Diary Օրագրություն, Օրագրութեան տետրակ:

Dual-way Երկկողմանի ճամբայ:

Fruit machine Բաղտախաղի մեքենայ:

Injunction Իրաւական քայլ մը՝ ըստ որում դատարանի միջոցով ժամանակաւորապէս կ'արգիլուի գործադրուելիք արարք մը:

Jack pot Բախտախաղի մեքենայէ շահուած առաւելագոյն պարգեւը:

Negative Լուսանկարի մը մայր օրինակը նախքան տպուիլը:

One-way Միակողմանի ճամբայ:

Photo copy Լուսանկարուած պատճեն, օրինակ:

Press release Մամուլի հաղորդագրություն:

Pub Պար, խմիչքի անգլիական հանրատուն:

Top secret Մեծագոյն գաղտնիք:

Who's Who Ով Ո՞վ Է: Հանրագիտարան՝ ուր դրուած է միջազգային արժեք ունեցող անձերու կենսագրությունը:





ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐՈՒ ՑԱՆԿ «ՅԱԲԵԼՈՒԱԾ»Ի

Ա

Աբրահամեան Աշոտ - 458
 Աբրահամեան Հայկազուն Եպս. - 469
 Աթայեան Ռոպերթ - 475
 Ալաճաճեան Ստեփան - 465-466
 Ալեքսեան Պետրոս, տես՝ Ալեքսի Փիթըր
 Ալեքսեաններ - 447
 Ալեքսի ընտանիք - 480
 Ալեքսի Պետրոս, տես՝ Ալեքսի Փիթըր
 Ալեքսի Սիլվիա - 488
 Ալեքսի Փիթըր - 451, 454, 457, 466, 474, 480, 487, 493
 Ալեքսիներ Տեր եւ Տիկին - 480
 Աճեմեան Շահե - 460-462, 493-494
 Ամատունի Ասատուր - 480
 Ամատունի Օր. - 480
 Ամարա Լուսին - 454, 492
 Անտերսըն Եորկըն - 465
 Ապաճեան Արամ - 480
 Ապաճեան եղբայրներ - 480
 Ապաճեան Լեւոն - 480
 Ապաճեան Զրիսթին - 480
 Արամեան Ռաֆայել - 466
 Արմինե, տես՝ Կիզելեան Արմինե
 Արմիս - 492

Բ

Բաբաջանեան Մարշալ Համազասպ - 466, 494
 Բադալեան Յովհաննես - 470, 495
 Բաղդամեան Մարշալ Յովհաննես - 466, 494
 Բարխուդարեան Ռուզան - 467
 Բարոյեան Խորեն Կաթողիկոս - 479

Գ

Գաբլան Չարեհ - 492

Գալայճեան Արա - 469
 Գալուստեան Հայկ - 445-446, 449, 459-460, 464, 470-471, 473, 479, 483
 Գալֆայեան Լինտա - 451, 453, 455
 Գիւտեան Միշա - 470, 477, 481

Ե

Եիրիքեան Գոգոյ - 475
 Եիրիքեան Յարութիւն - 475
 Եսայեան Կարպիս - 452, 470, 473, 481

Զ

Չարեան Ռուբէն - 449-454, 456-457

Է

Էլիսըն Ճերըլտ - 489
 Էմին Գեորգ - 466, 470
 Էսայեան Մայքըլ - 496
 Էսայեան Ռիթա - 483, 496

Թ

Թորամանեան Թորոս - 495
 Թորանեան Թորոս - 453, 459, 466
 Թումայեան Պսակ Եպս. (տես նաեւ՝ Փափագ) - 445, 460-461, 473, 480, 489, 493
 Թումանեան Յովհաննես - 466, 470, 473
 Թօփալեան Բիւզանդ - 445, 447, 449, 457, 474-475

Ի

Իսահակեան Աւետիք - 490

Լ

Լանկ Տէյվիտ Մարշալ - 460-464, 468, 477, 482, 485, 493





Լիսիցեան Պաւել - 466, 494
 Լոյս ճորճ - 468
 Լոնկֆելդ - 492

Խ

Խաչատուրեան - 450

Ճ

Ճառուկեան Անդրանիկ - 455

Կ

Կարինէ, տես՝ Կիւզելեան Կարինէ
 Կարապետեան Գեորգ Վրդ. - 455
 Կիրակոսեաններ - 475
 Կիւզելեան Ասատուր - 444-445, 447-449
 451-452, 454, 456, 459-460, 462, 465-
 466, 468, 472, 474, 476, 478, 480, 484-
 485, 487-488, 490-491, 493-494, 496
 Կիւզելեան Ասատուր Մելքոնի - 487, 496
 Կիւզելեան Արմինէ - 451, 468, 472-473,
 476, 478, 490
 Կիւզելեան ընտանիք - 480
 Կիւզելեան Կարինէ - 445, 447, 468, 472-
 473, 476, 478, 490
 Կիւզելեան Մարտիկ - 486
 Կիւզելեան Մելքոն - 487, 496
 Կիւզելեան Վիվիէն - 446-447, 457, 466,
 476, 478, 488, 490
 Կիւլեր Արա - 463
 Կիւլպենկեան Գալուստ - 496
 Կիւլպենկեան Նուպար - 451
 Կիրիւնլեան Յակոբ - 450, 492
 Կոստանեան Լուսի - 449, 492
 Կորքի Մաքսիմ - 468

Ղ

Համազասպեան Վարդգէս - 470
 Համբարձումեան Վիկտոր - 455
 Հասրաթեան Էգրաս - 453, 455, 466, 471,
 485
 Հասրաթեան Սօրոս - 455
 Հասրաթեաններ - 466
 Հիւկոյ Վիկտոր - 492
 Հովսիաուզր Վիկտոր - 464

Ղ

Ղազարեան Ասողիկ Եպս. - 472
 Ղապա Վանես - 482

Ճ

Ճեպեճեան Ռոպեր - 449, 492

Մ

Մանուկեան Ալեք - 481-482, 493-494, 496
 Մանուկեան Մարի - 482, 496
 Մանուկեաններ - 481
 Մանուկեան Սերովբէ Արք. - 462, 469
 Մավեան Իվոն - 491
 Մավեան Վահրամ - 444, 445, 447-449,
 451-452, 454, 456, 458-460, 462, 465-
 466, 468-469, 472-476, 478,
 480, 484-488, 490, 492-493, 495
 Մարգարեան Մարոյ - 490
 Մարթին Համազասպ - 487-490
 Մարթին Ռոմիկ (Մարտիրոսեան) - 467,
 473-474, 476, 482
 Մարտիրոսեան Անդրանիկ - 467, 494
 Մելքոնեան Չարեհ - 481, 495
 Մետումեց Աւետիս - 446
 Մեսրոպեան Սեթ - 458
 Մթորպեան Խաչիկ - 473, 483-486
 Միսիրեան Երջանիկ - 446
 Միրզայեան Չորայր - 492
 Միրզայեան Յովսէփ - 459, 492
 Մորկըն Օր. - 464
 Մութաֆեան Յարութիւն - 472-473
 Մսըրլեան Հայկ - 479

Յ

Յակոբ - 495
 Յարութիւնեան Վարազդատ - 467, 494
 Յովհաննիսեան Հրաչեայ - 466

Ն

Նազգաշեան Գիւտ Վրդ. - 454, 461
 Նալպանտեան Լուիզ - 477, 495
 Ներսեսեան Վրէժ - 471, 485
 Ներսիսեան - 468
 Նիկողոսեան Երուանդ - 472-473, 481
 Նշանեաններ - 454





Շ
Շէյքսպիր Ուիլեամ - 452-453

Ո
Ուտումեան Օֆելիա - 444
Ուրֆալեան Տաճատ Եպս. - 479

Չ
Չալըզեան Յովհաննես - 477
Չեպեան Ղեոնղ Եպս. - 495

Պ
Պալճեան Վազգէն Ա. Կաթողիկոս - 447, 450, 460-461, 469, 479-480, 489, 493
Պաղտասար Աղբար - 483
Պայրըն - 492
Պապեան Կորին Վրդ. - 464, 494
Պարոնեան Յակոբ - 483
Պարսումեան Երուանդ - 484
Պարտագճեան Գեորգ - 473
Պերպերեան Արսէն Վրդ. - 464, 468, 479, 485, 487
Պլքեան Գեորգ - 479, 483
Պոզապալեան Լուիզ - 473
Պոզապալեան Ներսէ Եպս. - 479-480, 485, 487, 489

Ս
Սահինեան Անահիտ - 456-457
Սարգիս - 462
Սարեան Մարտիրոս - 466
Սաֆեան Շողիկ - 453, 492
Սեթ Մեսրոպ - 458
Սեմերճեան Վաչէ - 454, 458
Սեակ Պարոյր - 470
Սեյժնքեան Շաւարշ - 493-494

Սեւունց Գարեգին - 453, 492
Սիմոնեան Սիմոն - 476, 486
Սքոթ - 492

Վ
Վարդանեան Կարապետ - 444
Վարդանեան Հայաստան - 477, 495
Վիվիեն, տես՝ Կիւզելեան Վիվիեն

Տ
Տաուլեթ Չարլզ - 463-464, 473, 493
Տէր Յարութիւնեան Աշոտ Քին. - 489
Տէր Ներսէսեան Սիրարփի - 462, 493-494
Տերտերեան Եղիշէ Պատրիարք - 450, 461, 493
Տօլապճեան Չաւեն - 485

Փ
Փանոսեաններ - 477
Փափազ (տես նաեւ՝ Թումայեան Պսակ Եպս.) - 469-470, 472

Ք
Քաչիկ Ռոնի - 470
Քէշիշեան Կորին - 474
Քէլիկեան Համբար - 458
Քիւրքճեան Ծոն - 480
Քիւրքճեան Սարգիս - 480
Քիւփելեան Աստղիկ - 449
Քոկըն Տոնըլտ - 489
Քոչար Սուրեն - 466, 470, 494

Օ
Օհանեան Ասատուր - 446, 483
Օհանեան Րաֆֆի - 476
Օմար Խայեամ - 492
Օրագեան Ժիրայր - 492

ԼԱՏԻՆԱՏԱՌ ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐՈՒ ՅԱՆԿ

A
Adjemian Shahe - 460
Alexy Ivan - 486
Amara Lucine - 492

B
Babadzhanian Hamazasp Khachadouri - 494
Badalyan Hovhannes - 495





Bagramyan Ivan Khristoforovich - 494
Burney Charles - 463, 483

D

Der Nersessian Sirarpie - 494

E

Evans Hubert - 465

G

Guzelian Assadour - 460, 504
Guzelian Assadour Melkon - 488
Gomez Mrs. - 478
Gorky Maxim - 467

L

Lang David Marshal - 483-484
Lisitsian Pavel Gerasimovich - 494
Lloyd George - 468

M

Mavian Vahram - 460, 482
Morgan Miss - 463

N

Nersisyan - 468

O

Owen Prof. - 485

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐՈՒ ՑԱՆԿ «ՅԱԻԵԼՈՒԱԾ»Ի

Ա

Ամերիկա - 454, 476-477, 479, 483, 494-495
Այնթապ - 492
Անգլիա - 446, 455, 464, 478, 491, 496
Անթիլիաս - 479, 494
Ատիս-Ապեպա - 458
Արաբական Ծոց - 494

Գ

Գերմանիա - 458

Դ

Դամասկոս - 473-475, 490

Ե

Երեւան - 452, 454-455, 458, 461, 468, 473, 492, 494-495
Երուսաղէմ - 461, 489, 491, 493-494

Զ

Զուլիգերիա - 484, 493

Է

Էջմիածին - 457, 471, 479-480, 485, 489

Թ

Թեհրան - 489, 492
Թիֆլիս - 454, 494
Թուրքիա - 465

Ժ

Ժընև - 489

Լ

Լենինկրատ - 454
Լիբանան - 474, 489, 491
Լիզպոն - 462, 475
Լիճերու Մարզ - 496
Լոնտոն - 445-462, 464-465, 467-468, 469-476, 478-480, 483-490, 492-493, 495-496

Խ

Խնձորեսկ - 492

Կ

Կալկաթա - 458, 473
Կասպոց Ծով - 490
Կիպրոս - 454, 467, 474, 491

Ղ

Ղալեպ - 448, 473-474, 486, 489-490, 492, 495





Համատան - 492	Ջ
Հայաստան (տես նաև՝ Սովետական Հայաստան) - 450-455, 457, 463-465, 467, 470, 479, 481, 492, 496	Ջուղա - 494
Հնդկաստան - 454-455, 457	Ս
Ծ	Սան Ֆրանսիսքոյ - 495
Ճեզիրե - 494	Սկովտիա - 473
Մ	Սովետական Հայաստան (տես նաև՝ Հայաստան) - 465
Մանչ - 472	Սուտան - 479
Մանչեսթր - 489	Սուրբ Ղազար - 458
Մեծն Բրիտանիա - 496	Սուրիա - 474, 492
Միջին Արեւելք - 463, 474	Սոֆիա - 475
Մոսկուա - 454, 457, 468, 471, 494	Վ
Յ	Վան - 495
Յորդանան - 491	Վիեննա - 467
Ն	Փ
Նոր Ջուղա - 458	Փարիզ - 445, 447, 453-454, 459, 462, 475, 479, 485, 493
Պ	Ք
Պարսկաստան - 491-492	Քուէյթ - 494
Պաքու - 492	Օ
Պեյրուզ - 448, 458, 473-475, 484, 489, 492	Օքսֆորդ - 463-464, 494
Պոսթոն - 450	Ֆ
Պուլկարիա - 477	Ֆրեզկոյ - 495
Պրետֆլորտ - 496	

ԼԱՏԻՆԱՏԱՌ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐՈՒ ՑԱՆԿ

C	Lancashire - 488
Conistan - 488	Lisbon - 460
	London - 460, 504
H	O
Harrow - 479	Oxford - 449, 473
Hastings - 480	S
K	South Kensington - 456, 458
Kansas - 476	W
L	West End - 458
Lake District - 496	





ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՅԱՌԱՋԱԲԱՆ	<i>ԹՈՐՈՍ ԹՈՐԱՆԵԱՆ</i>	3
ԿԸ ԽՕՍԻՆ ՆԱՍԱԿՆԵՐԸ	<i>ԱՍԱՏՈՒՐ ԿԻՉԵԼԵԱՆ</i>	5
ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ ՍԻՄՈՆ ՍԻՄՈՆԵԱՆԻ		15
ՍԻՄՈՆ ՍԻՄՈՆԵԱՆԻ ՆԱՍԱԿՆԵՐԸ ԱՍԱՏՈՒՐ ԿԻՉԵԼԵԱՆԻՆ		21
ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՍԱՏՈՒՐ ԿԻՉԵԼԵԱՆԻ		77
ԱՍԱՏՈՒՐ ԿԻՉԵԼԵԱՆԻ ՆԱՍԱԿՆԵՐԸ ՍԻՄՈՆ ՍԻՄՈՆԵԱՆԻՆ		83
ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ ՎԱՀՐԱՄ ՍԱՎԵԱՆԻ		159
ՎԱՀՐԱՄ ՍԱՎԵԱՆԻ ՆԱՍԱԿՆԵՐԸ ԱՍԱՏՈՒՐ ԿԻՉԵԼԵԱՆԻՆ		163
ԱՍԱՏՈՒՐ ԿԻՉԵԼԵԱՆԻ ՆԱՍԱԿՆԵՐԸ ՎԱՀՐԱՄ ՍԱՎԵԱՆԻՆ		311
ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ		331
ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ		353
ԲԱՌԱՐԱՆ		
ՀԱՅԱՏԱՌ ՕՏԱՐ ԲԱՌԵՐՈՒ		415
ԼԱՏԻՆԱՏԱՌ ԲԱՌԵՐՈՒ		420
ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐՈՒ ՑԱՆԿ		422
ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐՈՒ ՑԱՆԿ		435

ՅԱԻԵԼՈՒԱԾ

ԵՐԿՈՒ ԽՕՍԶ ՅԱԻԵԼՈՒԱԾԻ ՄԱՍԻՆ	444
ԱՍԱՏՈՒՐ ԿԻՉԵԼԵԱՆԻ ՆԱՍԱԿՆԵՐԸ ՎԱՀՐԱՄ ՍԱՎԵԱՆԻՆ	445
ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ	492
ԲԱՌԱՐԱՆ	497
ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐՈՒ ՑԱՆԿ «ՅԱԻԵԼՈՒԱԾ»Ի	498
ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐՈՒ ՑԱՆԿ «ՅԱԻԵԼՈՒԱԾ»Ի	501





Համակարգիչի վրայ տողաշարում,
ծեւաւորում եւ էջադրում՝
ԱՆԻ ՍԱՐԳԻՍԵԱՆԻ

Տպաքանակ՝ 1000

Հասցէ՝ Assadour Guzelian
45, Exeter House
Putney Heath
London SW15 3SX
Email: agguzelian@gmail.com

